3723

ԿԱՐԳԱԽՕՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՐԱՐԵԱԼ

Ս. ՍԱՀԱԿԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՒ ԳԻՏԱՑ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԳԱԿՈՒՆԻՈՑ

ԵՒ ԱՅԼՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ· ՏՆ· ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ Ժ· ԱԶԱՐԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1898

Արհիապատիւ և Գերապայծառ Տէր

ԱՋՄԱԾՈԳ տեսչութիւն հոգւոց, զոր առանձնեալ է մեր ղոյգ ընդ պաշտամանս, յորդորէ զմեզ, ի մէջ բազմապատիկ պարտուցս, մի՛ առնել զանց զինդրովք Արհի. Եղբօրդ, որովք քրթմնջելոյ պատճառաք և խոչընդոտիք խաղաղութեան բարձցին ի միջոյ, և պայծառասցի առ մեզ հաւատն սուրբ: Աւելորդ է մեզ գրել Ձեզ, Պատ. Եղբայր, թէ քանի՞ն իցէ կարևոր առ այդ ընծայել ի լոյս զՇարականս և զկարգաւորութիւնս հաւատարիմաց աղօթից Եկեղեցւոյս, ըստ միաբան ընթերցուածոյ ընտրելագունից ի դրչագիրս, զոր օրինակ առաջի առնէիք մեզ: Նա՛ ի լուէին այդու խէթք կամ թիւր կարծիք ոմանց, որպէս թէ դժօղ կամ անտեսօղ հայրենասէրք ծխից և արարողութեանց իցէ ուղղափառ Կրօնն. և որ մեծն է, հարթէր դովին անձկալի միութեանն գործ համօրէն ազգիս ընդ Կեփայեան Վիմի, այնչափ տենչացեալն յԱրևելսաէր և ի Գերդգօն Սրբազան Քահանայապետս Լևոնէ ԺԳէ, որպէս էրն առ Սրբով Հայրապետաւք մերով, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Եւ զի հարկ էր մեզ զգուշութեամբ ընթանալ ի կատարումն գործոյս, նախ քան զամենայն արժան համարեցաք դիմել առ Հայրն լուսոյ, և ի խորհուրդս Հմտագունից՝ առ ի գիտել զարժանն գործելոյ յիւրս յայս, և զառաջս առնուլ կամայական մեկնութեանց:

Եւ առ այս պարտ և պատշաճ թուեցաւ մեզ կարգել Ջեկոշոռումն ի գլուխ հրատարակութեանդ, ի մեկնութիւն դըժուարիմաց և մթին բանից Սրբոց Հարց մերոց, որպէս

Ա. Արհիապատիւ և Գերապայծառ Տէր
Հ. Ղևոնդեան Վ. Կիւրեղեան Արքեպիսկոպոս
Տրապիզոնի
Ընդհանրական Աթոռ Մխիթարեան Մխիթարեան
Վենետիկ

նոյնօրինակ դժուարիմաց բանք գտանին և ի գիրս Սրբոց Հայրապետացն Արևելեան և Արևմտեան Եկեղեցեաց, և ոչ ոք յանդգնի դատապարտել զնոսա, յանուղղայ միտս մեկնելով զբանս նոցին: Նա՛ զի և Հարքն մեր Սուրբք, իբր ի բազումս, ի Սրբոց Հայրապետացն Յունաց քաղեալ են զվարդապետական ձև բանից և ասացուածոց: Վասն որոյ բաւ է յառաջ բերել զվկայութիւնս Սրբոց Հայրապետաց մերոց, և ցուցանել այնու զինաւ իսկ համաձայնութիւն նոցա ընդ վարդապետութիւնս Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ: Սովին բերկրեսցին ոսկերք Հարցս Սրբոց, և պանծալիք ընծայեսցին անուանք նոցա. այսպէս և չինեսցին որք ի խոտոր միտս խմացան երբեմն ինչ ինչ ի մթին ասացուածոց նոցա, և միանգամայն լիցի մեզ պատսպարել զհօտս փոքրիկ յոչ ուղիղ մեկնութեանց՝ որոց մարթ էր զսրբութիւն կրօնիցս ապարատել:

Դարձեալ, Պատուական Եղբայր, առ ի գործել անթերի զմատեանս, և յառաւել ապահովութիւն, ի դէպ է, յայն բանս և յասացուածս, զորոց յուզիցին ինչ խնդիրք, ի ձեռն ծանօթութեանց կարգելոց ի տորև՝ յղել զընթերցանելիս ի Զեկուցումն. իսկ ի չորեսին յայդորդ ասացուածս, որք են. 1°. Մխացեալ բնութեամբ ի յերկուց. 2°. Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի թողութիւն մեղաց. 3°. Սա եղև գլուխ առաքելոց սրբոց. 4°. Որ բոլորից ես պատճառ, դնել համառօտիւ ի ծանօթութեան զմեկնութիւնս, նշանակելով առընթեր զէջս Զեկուցման, յորում գտանին ընդարձակ բացատրութիւնք. օրինակ զայս. «Մխացեալ բնութեամբ» (էջ 940), այս է անձնաւորապէս, տես ի Զեկուցման, էջ...

Այսպէս ընդ մերով առանձինն պատասխանատուութեամբ և հովանաւորութեամբ՝ հաւանիմք ընդ առաջակայ հրատարակութիւնդ, և մաղթեմք սրտագին լինել պտղաբեր և շահեկան յօգուտ հոգւոց հասարակաց, ի պայծառութիւն Սրբոյ Կրօնիս և ի փառս Ամենասուրբ Երրորդութեան:

Ի կաթողիկոսարանէս, ի Բերա Կոստանդնուպօլսոյ, ի Տօնի Սրբոյ Յարութեան Տեառն, ի 5դ աւուր ամսեանն Ապրիլի հ.տ. 1898դ ամի, և յԵօթնեւտասաներորդ ամի կաթողիկոսութեան մերոյ:

Աղօթաւար Ձեր

ՍՏԵՓ. ՊԵՏՐՈՍ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ–ՊԱՏՐԻԱՐՔ ԿԻԼԻԿԻՈՑ:

ՋԵԿՈՒՑՈՒՄՆ

Զկարգաւորութիւն հաստարակաց աղօթից և զՇարականաց Հայաստանեայց Եկեղեցւոյս, զառաջինն արդ ի մի հաւաոր ամփոփեալ, ըստ նախնի և հարազատ դրչագրաց վոյ՛ կալաք հաւանութեամբ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ Ծ· ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ընծայել ի լոյս, որում ակն ունիմք՝ յետ կրկին և կրկին յայտարարութեանց Հայրապետացն Հռովմայ՝ սակս անթերի պահպանութեան հայրենաւանդ ծիսից և դրութեանց Առաքելեան Եկեղեցւոյ՝ բարւոյ և կամակար ընդունելութեան պատահել ի մերազնեայսս։

Առաւնօր հարկ է մեզ յիշեցուցանել՝ դի ամենեցուն պարտք են գոն դնել զողջամիտ բանս Հարց մերոց Սրբոց և զԱրդապետացս, ոչ ի թիւր այլ յօգուտ միտս խմանալ՝ եթէ ըստ գիպաց բանք ինչ պատահեսցեն գժուարիմացք· քանզի ոմ մարթ իցէ երկմտել զհամաձայնութենէ վարդապետութեան Հարցն մերոց ընդ կաթողիկէ հաւատոյս։ Որոյ ի հաւատիս կարգեմք առանձն քաղուածոյ սակաւ ինչ օրինակս յերդոց առաջակայ ժամակարգութեանս և համառօտ մեկնութիւնս։ Իսկ եթէ ոմանց զառաւել ձախագոյն վկայութիւնս և զհաւատիս՝ քան զորս ի յաջորդն ամփոփեմք՝ կամ իցէ գտանել, մարթ է նոցա ընդել զկնճռ փափաքանաց իւրեանց ի կրկին Տեառական Աստուածաբանութեան և յայլ մտաւնից ի ապարանէ վանացս ընծայելոց ի լոյս։

1. Սկսցուք նախ մեկնել համառօտիւ զբառն աւիւրևանալի և աւտեւսանելի, զոր Հարքն մեր, որպէս և Լատինք և Յոյնք, ուղղափառ մտօք ի կիր առնուն զԱստուածոյ. քանզի պնդա-գոյնս ըստ ուղղափառ վարդապետութեան խոստովանին և մերքս զԱստուած տեսանելի և իմանալի: Ա. որ չատ լեցին յաջորդ առղքն Նիր. Շնորհալւոյն. « Խաբուհօրէն բացատրեացուք, զծածկեալ խորհուրդն ծանիցուք, զի լոյսն անտես իմանալի, մտքուք հոգւոց տեսանելի »: Ժմդ. էջ 158: Ի կիր առնուն զբառդ աւիւրևանալի իբր աւերտւանդակելի յատարածական մտաց. զի ի մեր լեզու՝ իմանալ ոչ միայն զպարզ ձանալելին, այլ և յաճախ զնոօք բովանդակելն նշանակէ, որպէս յայտ է ի բանէն « Իմացարուք զայս ամենայն ». Մտթ. ԺԳ, 51: — Դարձեալ՝ ի կիր արկանեն զբառն աւտեւսանելի՝ իբր զի ոչ կարեմք տեսանել զԱստուածոյ էութիւնն, նախ՝ տարատածական զօրութեամբ, եր-կրորդ՝ մարմնաւոր աչօք, երրորդ՝ բովանդակապէս, չորրորդ՝ ամենն յաչխարհի:

2. Այնպուհանակ զՀայր անձին և անսկիզբն՝ կոչեն եր-բեմն պատճառ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Բայց որպէս վկայէ և սուրբն Թովմաս Ագուինացի (Մասն Ա. Խնդ. 33. յօդ. ա.), Յոյնք բառիւն պատճառ յատուկ ածայինս՝ զայն իմա-նան, զոր ինչ Լատինք ասելով սկիզբն, որպէս ակներև ցու-ցաւ ի Փլորէնտեան Տիեզերական Սիւնհոդոսի: — Նմին իրի և սուրբ Հայրն մեր Ներսէս Շնորհալի յուղղափառ վիսս, և յայժ վայելուչս երդէ ի դէմս Հօր Աստուածոյ յառաջին անգ տան Հարցին երրորդի աւուր Պենտակոստէի. « Որ բո-լորիս ես պատճառ էից անպատճառից և որոց պատճառաւս, Հայր անձին և անսկիզբն, Որդւոյ պատճառ անժամանակ ծննդեամբ, և Հոգւոյ բղխման անքննաբար ». էջ 784: — Ախնքան չքնաղ է յօրինուածս, որ չատ տեղի որոյ և իցէ անդէպ իմացուածոյ. քանզի ակն յայտնի երևի անդէն միտք երդողին, որ յատուկն անպատճառից՝ իմանայ զՈր-դին և զՍ. Հոգին, որք են անսկիզբն, — և որոց պատճա-ռաւս, իմանայ զարատածոյ՝ զի պատճառելք են: Ուստի ի նմին տան բառն պատճառ՝ կրկին իմաստիւք վարի, իբրև սկիզբն՝ Որդւոյ և Ս. Հոգւոյն, և պատճառ՝ արարածոյ:

Երկրորդ՝ պատճառ նշանակէ զարտադրող սկիզբն այլոց ընդհանրապէս, առանց ինչ դնելոյ խոխը բնութեան, անկախ և առանց սկսուածոյ դոյութեան, և յայս միտս կոչէ զՀայր պատճառ Որդւոյ և Հոգւոյն, և առքա ասին պատճառաւորք, կամ ըստ Յունաց՝ պատճառեալք: (Տես. Ածաւիքեան Բացատր. շարակ. էջ 390, յօդ. 252):

3. Ջյաւիտենական ծնունդն Որդւոյ ի Հօրէ՝ սուրբ Հարքն միր և վարդապետք կոչեն երբեմն և բղխուն. զոր օրինակ և սուրբ Հարքն Աղեքսեան և Աղեքսանդրեան եկեղեցեաց: Ըստ այսմ Շնորհալին ի դէմս Որդւոյն Աստուծոյ երգէ. « Բղխուն ի Հօրէ՝ բղխեա ի Հոգւոյս, բան քեզ ի Հաճոյս »: Ժամագիրք էջ 11:

4. Իսկ ի խորհուրդն Մարդեղութեան Բանին Աստուծոյ՝ յայտնապէս ուսուցին սուրբ Հարքն միր և վարդապետք ընդ կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ մի անձն աստուածային ի Քրիստոս, ընդդէմ Նեստորի, — և երկուս բնութիւնս, աստուածային և մարդկային, ընդդէմ Եւտիքեայ. այս է, մի և նոյն Քրիստոս՝ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ:

Զգիտեմք եթէ ի գիրս եկեղեցական պաշտամանց այլոց ազգաց քրիստոնէից գտանիցի՞ն արդեօք այնքան վկայութիւնք, որովք Հոխակեալ առաստանան միրքս:

Ո՞չ ապաքէն ի խորոց սրտէ քահանայն պատարագիչ ըօրհնանապազ գոչէ առ Հայրն գԴատ. « Ո՛վ որ պանծասցի բանդակել բանիւ ..... եռուր միզ զՈրդիդ քո միածին՝ պարտապան և պարտս..... վասն զի եղեալ հաւասարեաւ և առանց ցնորից մարդ, և անչփոթ միութեամբ մարմնացեալ յԱստուածածին և ի սուրբ կոյսին Մարիամայ, ձանձնապարհորդեաց ընդ ամենայն կերս մարդկային կենցաղոյս առանց միզոյց»....:

Ի հաստատութիւն Հմարտութեանն՝ շատ լիցի միզ աստանօր ընծայել քաղուածոյ վկայութիւնս ի շարականացս:

— Մանուկ՝ անժամանակ ի Հօրէ, և ժամանակաւ գոյացեալ ծնեալ լինի Աստուած և մարդ: էջ 1145:

— Յառաջ քան զյաւիտեանս Որդի՝ նախայաւիտեան, այսօր յերկրի երևեալ Աստուած և մարդ կատարեալ: ԷՀ 1166:

— Իսկապես Բանն Աստուած միացաւ ի մարմնի, անփոփոխ գոլով յեութեան: ԷՀ 1130:

— Կենդանութեանց բաշխող Քրիստոս.... անօրինաբար արտասուելով.... որպէս մարդ հարցանէր, ո՞ւր եդիք զՆազարոս, — և որպէս զԱստուած՝ բարբառով յարուցանէր ի մեռելոց զչորեքօրեայն: ԷՀ 299:

— Անսկզբնակից Հօր Որդի, որ այսօր նախասահմանեցեր բնութեամբ ի կուսէն ծնար, Աստուած և մարդ, ողորմեա: ԷՀ 1161:

— Չի կատարեալ էառ զբնութիւն Աստուածն Բան մարդկութեան: ԷՀ 167:

— Հուրն կենդանի որ ի մորենին վառեցաւ, զոր անվնաս յարգանդի քումդ կրեցեր և ծնար Աստուած և մարդ: ԷՀ 1157:

— Առ քեզ պաղատիմք հակիկ Հօր Որդի, որ այսօր ի մուսր եղար և ի հրեշտակաց պատուեցար, Աստուած և մարդ, ողորմեա: ԷՀ 1161:

— Անեղանելիդ Աստուած Բանդ անմեկնելիդ ի Հօրէ՝ ընդ ժամանակաւ լինել հաճեցար և մարմնացար ի սուրբ Կուսէն՝ Աստուած և մարդ յայտնեալ: ՃՀ. Մննդ. Ը. օր:

— Անսկիզբն Բանն յանսկզբնական ի Հօրէ, և սկզբնաւորեալ ի Կուսէն մարմնոյ զգեցմամբ, բովանդակելով յորովայնի և ընդ Հօր գոլով, և սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած և մարդ: ԷՀ 1215:

— Մտեալ ընդ օրինաց անհիւթականն հոգանիւթ գոլով, զի կհոգածնեալքս՝ Հօրն ընծայեսցէ, Աստուածորդին որ ի ծոց Հօր, ողջոյ քառասնօրեայ բառնի ի գերկս ծերուհւոյն, և յայտնապէս ծանուցանի Աստուած և մարդ: ԷՀ 1215:

— Որ առաւել քան զմարգարէս մեծ ի ծնունդս կանանց՝ որ ղքեզ մեզ յայտնեաց Աստուած և մարդ յերկրի երևեալ: ԷՀ 557:

— Բանն անսկիզբն՝ ի Կուսէն սկզբնաւորեալ ի յերկրի մարմնով երևեցաւ, զոր տեսին քարոզք բանին Աչմարտութեան՝ և ծանուցին տիեզերաց Աստուած և մարդ: ԷՀ 1130:

— Ծանուցար սիեզերաց Աստուած և մարդ գոլով, մարմնացար ի սուրբ Կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան: Էջ 7:

— Բարձոյ ի աքանչելեաց Աստուած մարմնով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբս մեռանիլ, Աստուած անմահ խոստովանիմ: Էջ 167:

— Ծածկեալ խորհուրդն յաւիտենից լուեցեալ և անճառելին, ի հասանել ժամանակին պարգևեցաւ մարդկան ազին, հայկաւ բնութիւն Բանիւն՝ իառնելով անշփոթ ի մեր բնութիւն: Էջ 963:

Ի գիշերային ժամասացութեան երգեմք. «Զհակիցդ Հօր զՈրդի փառաւորեմք անլռելի, որ ի քէն յարգանդ Կուսին զաղաւնային առեր մարմին»: Ժամագիրք էջ 67:

Եւ ի ճաշու ժամու. «Երկնաւորացն անքննելի՝ երեր մարդկան տեսանելի, զհեցար պատկեր հողեղինի՝ պատկերդ Հօր անփոխելի»: Ժամագիրք էջ 187:

5. Ի վերայ այսքանեաց բացայայտ վկայութեանց կարեմք յաւելուլ զևս բացայայտագոյնն՝ որ քաջ իսկ հաստատէ զնոյն Աշմարտութիւն ցայսվայր բացատրեալ, ուր ասէ. Միացեալ բնութեամբ (այսինքն, իսկապես, անձնաւորապես, ձշմարտապես) ի յերկուց (բնութեանց)[1]. (էջ 940) և առ ի խելամուտ լինել՝ շատ է թէ ոք միտ դիցէ ասացեալ ուղիղ նմանութիւն բառիդ բնութեամբ՝ ի լեզու հայկական, և Աշխարհաբար հոլով. (Տես. Հայկազ. Բառ. Ա. Հատ. էջ 499.): Գանդի այսու վարեցան Հարքն մեր ի Հառնել զանճառ խորհրդոյ Մարդեղութեանն Քրիստոսի, և ըմբռնային՝ Միացեալ անձնաւորապես, իսկապես ի յերկուց (բնութեանց): Եւ այս յայտ անտի է, զի բովանդակ տունն այն ուղղակի հակառակ է նեստորի, ուր իսկ և իսկ յաւելու. Նզովեցին զնեստոր և զաղանդն իւր պիղծ: Գանդի նեստոր զնեմբ ի Քրիստոս բարոյական եւեթ միաւորութիւն, իսկ յօրինող շարականիս հերքէ զայն յաստէն, ոչ բարոյապես, այլ բնութեամբ, այս է՝ իսկապես, ձշմարտապես, անձնաւորապես, ի կեր

1. Զայդ բացատրութիւն առեալ է մերոցս ի Ս. Կիւրղէ ազեքսանդրացւոյ, Գիրք պատմանց. Եւս և Թէոդ որ Նիւսիոյ, յէջսն 465, 466, և այլն:

արկեալ ընդդէմ Նեստորի զբացատրութիւն Ա. Կիւրղի ա-
ղեքսանդրացւոյ։

Քանի՛ գեղեցիկ և սուրբ Հայրապետն մեր Ներսէս Շնոր-
հալի զոյն դաւանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ա-
ռաւաձաւան բանիւքն վարդապետեալ ուսուցանէ՝ գրելով առ
մեծ Թագաւորն Հռոմոյ Կիւ Մանուէլ, յամին 1170։

« Արդ և մեք ըստ ուղղափառաց Հարցն աւանդութեան
նզովեմք զայնոսիկ՝ որք վասն յեղման և այլայլութեան՝ մի
բնութիւն ասեն Բանին մարմնացելոյ, կամ թէ՝ ոչ ի մերմէ
զանգուածոյս առ զինութիւն մարդկային, և միացոյց ընդ
աստուածութեանն. այլ ինքն իւր առեղծ մարմին յորովայնի
Կուսին, կամ թէ յերկնից բերեալ, և կամ թէ առ աչօք
երևեալ մարդ և ոչ ճշմարտութեամբ։ Եւ որք այլ այսպիսի
ինչ պատճառանօք ասեն զմի բնութիւնն ի Քրիստոս, և ՛չ
վասն անբաժանելի և անշփոթ միաւորութեանն։

Նոյնպէս նզովեմք և զայնոսիկ՝ որք ի յերկուս բնու-
թիւնս բաժանեն զմի Քրիստոսն՝ ըստ Նեստորի, այլ ասելով զԱ-
ստուած, և այլ զմարդն։ Զմարդն չարչարելի և մեռեալ, և
զԱստուածն անչարչարելի և անմահ, և ոչ միաւորութեանն
ասի զերկաքանչիւրսն, զչարչարանսն և զանչարչարու-
թիւնն, զմահն և զանմահութիւնն։

Այլ մեք հաւատամք այսպէս, եթէ Աստուածն Բան՝ որ
ի Հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս, անառ-
անելին, անչարչարելին, անմահն, էառ զմեր բնութիւնս
կատարեալսպէս ի Կուսէն, և միացոյց ընդ իւր աստուա-
ծային բնութիւնն, անշփոթ և անբաժանելի միաւորու-
թեամբ. և եղև անառանելին ըստ աստուածութեանն՝ առ-
անելի ըստ մարդկային բնութեանս, և անչօշափելին՝ շօ-
շափելի, և անչարչարելին և անմահն՝ ըստ աստուածային
բնութեանն, չարչարեալ և մեռեալ մերով բնութեամբս, ոչ
բաժանմամբ՝ որպէս թէ այն չարչարելի և այն անչարչա-
րելի, այն անմահ և այն մեռեալ։ Այլ որ չարչարելի և
մեռեալ, մարդկայինն առեալ բնութեամբ, նոյն անչարչարելի
և անմահ՝ աստուածային իւրով բնութեամբ։ Վասն այնո-
րիկ՝ և արիւն Աստուծոյ ասի, և չարչարանք և մահ, և Ա-
ստուած խաչեալ և որ այսպիսիքն. զորս՝ ոչ առանձին բնու-
թեանն Աստուծոյ ասեմք, այլ՝ անձնաւոր միաւորութեան։

Եւ զոր օրինակ՝ յաստուկ Աստուածոյ բնութեանն՝ անհնարին է չարչարանս ընդունել և մեռանել, նոյնպէս և մարդոյ բնութեան առանձին՝ անկարելի է մահուամբ կեանս տալ մարդկան։ Սակայն՝ միաւորելովն Բանին Աստուածոյ ընդ մարդոյ բանականի բնութեան, անհնարելին՝ հնարաւոր եղև, և անկարելին՝ կարելի։

Բանզի՝ չարչարեցաւ անչարչարելին՝ չարչարելեաւն, և մեռաւ անմահն՝ մահկանացուաւն, որով կենդանացաք մարմին նորա և անդամքս, յոդեալք ի կենդանի և կենդանարար գլուխն մեր Քրիստոս, որ է օրհնեալ յաւիտեանս. Ամէն»։ (Տես Սահմանք Հաւատոյ Հայոցս. Եկեղ. գրեալ Ներս. կաթ. Հայոց, ի խնգրոյ ատենաւածասէր Թագ. Հոռոմոց Էմ. մանուէլի։ Տպ. Ս. Պետերբուրգ. 1788, էջ 143)։

Այսպէս յիշեցուցանեմք և զոր գիտէ ղէնաչխարհիկ բանս նորին սրբոյ Հայրապետին՝ խօսելով զհանէն մարմնացելոյ։

«Եւ որ արարիչ գոլով էիցս ըստ Աստուածութեանն ընդ Հօր, նոյն արարած յալագս մարդկութեանն՝ ըստ մեզ։ Զոր և քարոզիչք Բանին՝ քարոզեն Աստուած և մարդ կատարեալ, գերագոյն միաւթեամբ միաւորեալ՝ քան զհոգի և զմարմին։ Զի մարդկային ոգի ի չեռս Հօր աւանդեալ՝ բաժանեցաւ ի մարմնոյն, բայց աստուածութիւնն՝ անբաժանելի մնաց յերկոցունցն, քանզի էր միացեալ ընդ բանական հոգւոյն, յորժամ էջն առ հոգիսն որ ի դժոխս, և էր անմեկնելի ի մեռեալ մարմնոյն՝ որ ի գերեզման անդ, ոչ մանաւանդ, այլ՝ բոլորն առ երկուսեան։

Վասն զի նոյն որ ի ծոց Հօր՝ և յորովայնի Կուսին, յաթոռ փառաց՝ և ի մուռս, ընդ աջմէ Հօր՝ և ի խաչին, ի քրովբէս՝ և ի գերեզմանի, զի լիեն երկինք և երկիր՝ փառաք նորա, յարուցեալ յերրորդ յաւուր՝ յարութիւն մեր և կեանք, եւ յերկինս ուսաւ ոչ երթիք պակասեաց»։ Անդ էջ 122։

6. Ի պարզաբանել մեր զուղղափառական միտս բանիցդ շատականաց մերոց, և ի ցուցանել զուղիղ վարդապետութիւնս բովանդակեալս ի նմանին, խոստովանելով ընդ սրբոյ Եկեղեցւոյ զԿիւրեղոս՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, մի ուրեքրդ Թուեցի յիշատակել մեր ատենաւոր որպէս ի հարեանցին, զի Թէպէտ յաւելուածն յերեքսրբեան փա-

ռատրուԹեան «Որ խաչեցար՝» ոչ ի նախնեաց սրբոց Հարց մերոց մուծեալ էին, այլ՝ ըստ հաստարակաց կարծեաց, առաԹիւ չիմԹուԹեանց և տարաձայնուԹեանց, սակայն ուղղադաւան Հայրապետք մեր և համագումար Սիւնհոդոսք՝ յայտ արարեալ են ԹէԹ Եկեղեցի Հայաստանեայց երգէ զՈռոգայ Աստուածն ի դէմս Որդւոյն Աստուծոյ, յորում նախ խոստովանի զհանն Աստուած՝ Աստուած սուրբ, Աստուած հզօր, Աստուած անմահ, ըստ աստուածաբանուԹեանն. և ի յաւելուածն Որ խաչեցար[1], յայտնի քարոզէ զնոյն Բանն Աստուած՝ ըստ մարդկային բնուԹեանն խաչեալ, ըստ Հոգեբոգոզի բանիդ Շնորհալւոյն.

« Սոսկալիդ սերովբէից
Եւ աշաւորըդ քրովբէից՝
Խոնարհեցար ի չարչարանս,
Զարչարելի բնուԹեամբ մարդկան.

Դարձեալ.

« Մերով բնուԹեամբըս մեռանիլ,
Աստուած անմահ խոստովանիլ »:

Ուստի Հայաստանեայց Եկեղեցի յերգէն զՈռոգայ Աստուած ի դէմս Որդւոյն Աստուծոյ՝ դաստապարակ մնանդամային զնեստոր և զԵւտիքէս և զԱստուածաչարչար ազանդաւորս: Ապա և զՈր խաչեցարն երգել՝ ոչ միայն ոչինչ օտար յուղիչ վարդապետուԹենէ Եկեղեցւոյ, այլ և հարկ անհրաժեշտ համարեալ է մերոց Հարց՝ առնել Հանապազօր զդաւանուԹիւնս զայս՝ ի հաստատուԹիւն վարդապետուԹեան երկուց բնուԹեանցն ի Քրիստոս, և ի հերքումն ա-

1. Ա՛ ի լաւ ևս յայտ առնել ԹէԹ՝ Եկեղեցի Հայաստանեայց ոչ երբէք զերկեքարեան փառատրուԹիւնն ի դէմս ամենասուրբ ԵրրորդուԹեան, ի չորեքտասանեբորդի դարուն մուծեալ է սովորուԹիւն՝ փոխանակ ԹԷ Ե-ԼԷՅՏ երգել զխորհուրդ հանդիսի աւուրցն ըստ պատշաճի, զոր օրինակ. — Որ ծնար և յայտնեցար. — Որ հկիր և գալոց ես. — Որ մատնեցար. — Որ խաչեցար. — Որ Թաղեցար. — Որ յարեար ի մեռելոց. — Որ համբարձար փառօք առ Հայր. — Որ յայտնեցար ի Թաթոր լերինն. — Որ հկիր ի փոխուիլն մեր քո և կուսին. — Մինչև յաւուր Պենտակոստէի երգել ի դէմս Հոգւոյն Սրբոյ. — Որ հկիր և հանգեար յառաքեալսն:

զանգաւորացն յիշատակելոց, Թող և զազգի ազգի գեղեցիկ խորհրդական մեկնութիւնս, զոր օրինակ և ի Ժողովն Տարսոնի, Սոյ և Ամանայ՝ արարին ի պատասխանի ամբաստանութեանցն զինդրոյս. արժանի արդարև խոհական և առաւածաբան մտաց նախնեացս:

Ի գեղեցկագունից սոսի մեկնութեանց գիտուք զսրբոյ Հայրապետին Ներսիսի Շնորհալւոյ, որ ի գրչէն առ Ալեքս Պրօսարտաւոր փեսայ կայսեր Մանուէլի Կոմնենոսի, ասէ. «Վասն հրից սրբատացութեանցն գրեալ էր՝ զի խաչեցար ասեմք: Եթէ մեք զսրբատացութիւնս զայս ի գէմս Երրորդութեան երգեաք՝ որպէս և դուք, չար և խորին մոլորութիւն էր ասել Թէ խաչեցար, այլ զի առ մի անձնաւորութիւնն Որդւոյ բարբառիմք զայսոսիկ, վասն այնորիկ՝ զիծագոյն երախտիսն՝ որ ի նմանէ առ մեզ եղեալ, դնեմք առաջի նորա, Թէ Աստուած և հզօր և անմահ որ մարմնով խաչեցար վասն մեր, ողորմեացի մեզ: Առ ընթերն նմին և զՄայր Բանին Աստուծոյ բարեխօս և միջնորդ ունիմք առ Միածինն իւր՝ ասելով Թէ մտաց զաղաչանս մեր Որդւոյ քոյ և Աստուծոյ մերոյ: Վասն որոյ՝ եթէ ի գէմս Երրորդութեանն ոք ասիցէ՝ որպէս դուք, և եթէ ի գէմս Որդւոյ միայն՝ որպէս մեք, երկոքեան հաճոյք են Աստուծոյ, յորժամ առանց հակառակութեան լինին ասացեալքն. այլ Թէ և յայսմ վայրի ի գէմս Որդւոյ ասեմք զսրբատացութիւնան, բայց ի սուրբ Պատարագին առ երիս անձնաւորութիւնան զսրօքեին երգեմք զերգս»: (Տպգր. Ս. Պետերբուրգ. 1788. էջ 93):*

Եւ առ կայսրն Մանուէլ Կոմնենոս զայս օրինակ խօսի. «Որպէս և երէքսրբեան փառաբանութիւնն՝ զոր Եկեղեցիք ձեր երից անձնաւորութեանցն մատուցանեն, և մեք ի գէմս Որդւոյ միայն, և երկոքին խորհրդականք և գեղեցիկք, յորժամ առանց հակառակութեան ոք տեսցէ. խակ հակառակութեամբն՝ հայհոյութեան եղեալ պատճառ՝ փոխանակ փառաբանութեան: Զի ձերոցդ զմեզ զրպարտելով ասեն՝ զԵրրորդութիւնն ասէք խաչեալ. և մերքս ընդդիմաբանելով Թէ՝ պիտի խաչեալն վասն մեր՝ ոչ ասէք Աստուած՝ և հզօր՝ և անմահ ի մահուն, այլ մարդ սոսկ: Եւ երկոքին փութան յաղթել՝ ոչ բարւոք յաղթութեամբն միմեանց»: (Տպգր. Ս. Պետրբուրգ. 1788 էջ 130):

7. Ս. Հոգի առհասարակ արևելեան և արևմտեան Եկեղեցւոց, որպէս և մերքս, ի կիր առնուն երբեմն զբառն խառնել, խառնուրդ, խառնարան, առատութիւնք մարմնի, և ձառնէն զմիաւորութենէ Բանին ընդ մարմնոյ. և այն՝ առ ի ցուցանել զանբաժանելի, չխակական, չանձնաւորական, չձրզմարիտ, և որպէս Ս. Կիւրեղ ասէ, չծայրագոյն միաւորութիւն Բանին ընդ մարդկային բնութեան. և զայդ ընդդէմ Նեստորի, որ, որպէս ասացաք, բարոյական եւթ դնէր միաւորութիւն ի Քրիստոս: Բանզի բառս խառնիլ ոչ է նոյն ընդ խառնակիլ կամ շփոթիլ, այլ յաձախ ևս նշանակէ զօդել, միաւորել, որպէս ի Ս. Գիրս և առ նախնիս մեր աւանդի, ձեռն ընդ ձեռն խառնիլ. — Որ ընդ հողեղէն բնութեան մերոյ խառնեցեր զբանական հոգիս: Լշ 884: Վասն որոյ և առ ի զգուշութիւն չխմանալոյ զայն՝ խառնուակոտրիւն կամ շփոթոտրիւն, յաձախ առ նմին եդին Ս. Հարքն մեր զբառն սքանչելի, նոր, հրաշալի, անձառ, անշփոթ և այլն, ի Գրիգորէ Աստուածաբանէ առեալ զբացատրութիւնքս զայսոսիկ, յորմէ ոչ ինչ ընդ հատ համարձակագոյնս ասաց և Ս. Աթոռս մերոս. «Յայսմ անձին (ի Քրիստոս) խառնուրդն Աստուծոյ և մարդոյ», և Լևոն Մեծն «Բնութիւն ընդ բնութեան խառնեցաւ»:

8. Յասել Տնորհալւոյն ՀԱյսօր անձառն՝ զմարմին Քրիստոսի երկնաւոր և հոգևոր՝ հայել ի բան առաքելոյն. «Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն, իսկ երկրորդ մարդն՝ տէր յերկնից (Ա. Կորն. ԺԵ. 47): Եւ յերկնից կամ երկնային, ոչ ըստ գոյացութեան մարմնոյն է խմանալ՝ իբր զի մարմին երկնաւոր ընկալեալ Քրիստոսի և ոչ զպատմեալին. այլ զի նախ՝ մարմին նորա կազմեցաւ երկնային զօրութեամբ ի Հոգւոյն Սրբոյ. — երկրորդ՝ ըստ երկնաւոր և անմեղանչական սրբութեանն, որպէս խմանայ Անկեքեան. — երրորդ՝ իբրև միաւորեալ ընդ երկնաւորին, այսինքն ընդ աստուածային բնութեանն:

Եւ կոչի հոգևոր, զի միաւորեալ է ընդ աստուածային խմանալի բնութեանն, և է բնակարան Հոգւոյն Սրբոյ, և յղացաւ նա յարգանդի սրբոյ Կուսին, սեփական իմն ներ-գործութեամբ նորին Հոգւոյ՝ և նովին զօրութեամբ զօր

ամենայն յղանայ ինն և ծնանի ի վերայ Սկզանոյ Ս. Խորհըրդեան Հաղորդութեան. և զի Ճշմարիտ զայն հոգևոր ինն եղանակաւ Թէպէտ խորհրդաւոր, սակայն Ճշմարտապէս և իսկապէս հաղորդակցելով մարմնոյ և արեան Քրիստոսի, և ոչ մարմնապէս ըստ օրինի այլոց կերակրոց:

Յայսմ ամենայնի միաձայն վարդապետեան մեր քան, որպէս և Ս. Ոսկեբերան, Գրիգոր Աստուածաբան, Ս. Հերոնիմոս, Ս. Թովմաս Աքուինացի և այլք բազումք:

9. *Իսկ զմիաս շարականին, զոր երգեմք յաւագ հինգշաբաթիոյ ասելով՝ « Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի Թողութիւն մեղաց մերոց », էջ 393, ի յաջորդ տանն արդէն բացայայտ յուշանէ՝ Թէ անդէն բանք են զոտնատեղւոյն, զի իսկ և իսկ յարէ. « Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս »: Եւ արդարև ինքն հրամայեաց ասելովն. « Եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ: Զի օրինակ մի եատու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի և դուք առնիջիք »: (Յովհ. ԺԳ. 14, 15): Որոյ առաքելական իմանի առաջն յուշացարան կամ կոնք՝ որ անդ առընթեր կայ, յորում ոչ եթէ անդնուք երախայքն մկրտեին, այլ մկրտեալքն լուացեալ լինէին, ի նշանակ խոնարհութեան և սիրոյ, և մաքրութեան ի մարմնական ախտից: Եւ եթէ ի հնումն լուանային զոտս երախայիցն ի պատրաստութիւն ընդունելոյ զմկրտութիւնն, այն իսկ հաւատոյ յուշանէ՝ զի միշտ լուացումն ասէից որոշէր ի խորհրդոյ մկրտութեան: — Թող և զայն՝ զի ի մեր լեզուս մկրտութիւն նշանակէ և յուշացումն, որպէս յայտ է ի բանից. Մկրտութիւնս առանձնաց.... » (Մարկոս Ի. 4): Որով ոչ են անդ բանք զխորհրդոյ կամ զաւազանէ մկրտութեան և ոչ զթողութենէ սկզբնական մեղաց: Եւ արդարև ոչ ոք մինչև յայժմ համարեցաւ երբեք Թէ Ոանալուայիս յաւագ հինգշաբաթիոյ պաշտեացն խորհուրդն մկրտութեան, և այնու լուացմամբ ասէին՝ լեալ Թողութիւն սկզբնական մեղաց: Նա զի և ի մատակարարութեան սրբոյ խորհրդոյ Մկրտութեան՝ բնաւ ոչ երգի այս տուն շարականիս:

Իսկ Թէ զինքդ լուացումն ասէից լինիցի ի թողութիւն մե-

դաց, Համառօտիւ ասացուք. զի Թէ լուացումն ոսկոյն հա-
մարեսցի արարեալ Եկեղեցւոյ ըստ օրինակին Քրիստոսի,
որպէս արբազան ինչ արարողութիւն պաշտամունքը աղօթից
և ընթերցուածոց, մկրթի սովին մաքը ևս Թողուլ զնոյն
ներելիս. քանզի յարարողութեան անդ կատարի խոնար-
հութիւն, սէր, միաբանական հաշտութիւն, և յարդու-
թիւն ասառւածային պաշտամանն. և առքա ներդործութիւնք
գալով առաքինականք, ընդունին ինքնին զԹողութիւն մե-
ղաց, ոչ ի գործոյ գործեցելոյ՝ այլ գործողին, այսինքն՝ ա-
րարողութիւնս որ սրբի աղօթիւք Եկեղեցւոյ, ածէ ի գութ
զմարդասէրն Աստուած՝ Թողութիւն մեղաց շնորհել այնո-
ցիկ, որք հաւատով և երկիւղած մտօք յայն լուացումն մտա-
հիցեն. (Տես Ա. Լեւոնեան Բացատր. շարակ. էջ 232–238):
Զսոյն զայս վարդապետութիւն ասկս այլոց Խորհրդակա-
նաց առ հասարակ ուսուցանեն ուղղափառ վարդապետք:
(Տես Ս. Ալփոնսոս, Բարոյական աստուածաբանութիւն,
գիրք Զ. §. 90. եւն). — Եւ Ս. Բեռնարդոս ի բանն Յա-
զագս ընթերեայ Տէառն՝ ասէ. «Զի մի ընդ Թողութիւն
օր ըստ օրէ յանցմանցն երկբայիցիմք, ունիմք զխորհուրդ
նորա, զոսկեղն լուացումն»: (Տես Համար 4):

10. Վարդապետէ Եկեղեցի զՀոգին Սուրբ բղխեալ ի Հօրէ և յՈրդւոյ ի յաւիտենից, միակ փչմամբ յերկոցունց՝ իբր ի միոջէ սկզբանէ:

Երգեն նոյնպէս և Հարքն մեր զՀոգին Սուրբ բղխեալ ի Հօրէ և յՈրդւոյ:

— Նոյն և նման Հօր և Որդւոյ, Հոգիդ անեղ և հա-
մագոյ, բղխումն Հօր անքննաբար առող յՈրդւոյ անճառա-
բար: Էջ 775:

— Ելեր Տէր առ Հայր փառաց ի յերկինս, և մխիթարիչ առաքելոց առաքեցեր Սուրբ զՀոգիդ: Էջ 800:

— Ակբիւր կենաց և փրկութեան մերոյ, Հոգի Հօր և Որդւոյ: Էջ 983:

— Ի հարաշարժ ալեբերէն անհատատհոգ վտակ՝ կենդա-
նատար Սուրբ Հոգի: Էջ 811:

— Որ ի հարաշարժ ի յալեբերէն յառաջ բղխեալ անհատա-
բար ի յՈրդւոյ սերատեաս սուրբ Հոգին: Ճաշ. Պենտակոստէի,

— Որ ես պատճառ Որդւոյ ծննդեամբ, Հայր, յառաջ քան զյաւիտեանս, յորմէ Հոգիդ Ճառագայթեալ անորիչ բաժանմամբ: Էջ 792:

— Աստուած անեղ անժամանակ, Հայր անսկիզբն և անքանակ, Որդւոյ պատճառ ծննդեամբ անճառ՝ Հոգւոյ բղխուն աղբերաբար: Ժամագիրք էջ 66:

Որպէս յայտ է, ի Տարակնոյն սակաւ ե յոյժ թիւ շարականաց Հոգւոյն Սրբոյ, յոր սակս և վկայութիւնքս սակաւք են թուով: Սակայն ի հանապազօրեայ ի ժամասացութեան բաղում աղօթք են առ Որդին, զորս կրկնեմք քառնիցս և երեքնիցս յաւուր՝ ասելով. « Որում (Որդւոյդ) վայելէ փառք, իշխանութիւն... ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ »: Զօր ամենայն պաշտեմք ի ժամասացութեան վերջաւորի աղօթս առ Որդին. « Աստուած մշանչենաւոր, Աստուած յաւիտենական, որ ի սաղմին աշխարհս լոյս ծագեցար, և լուսաւորեցեր զմէզ ի խաւարային մեղաց մերոց, որ վասն մեր ի չափաւորութիւն եկիր անչափդ Աստուած, և հեղեալ ծաւալեցեր զշնորհս Հոգւոյդ Սրբոյ յարարածս քո, այժմ և յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես, ամենամեծդ Աստուած, ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ » Ժմ. էջ 177: Արդ չմարթէր ասել առ Որդին՝ Հոգւոյդ Սրբոյ, և ոչ լինէր Հոգի Որդւոյ, եթէ ոչ Հոգին բղխէր և յՈրդւոյ:

Իսկ պատուական շարականաց բաղումք են անժխտելի և բացայայտ վկայութիւնք ի գիրս Հարց մերոց՝ ի հաստատութիւն ուղղափառ վարդապետութեանս. զի նախնիքս մեր քարոզեն բարձրաբարբառ զնոյն ընդ Եկեղեցւոյ, որպէս Ս. Լուսաւորիչ՝ յԱգաթանգեղեայ գիրսն, Եղիշէ՝ ի Մեկնութիւնսն, Մամբրէ՝ ի ճառն Յարութեան Ղազարու, Խոսրով Անձևացի՝ ի Մեկն. Ժամագրոց, Աղօթք Պենաւակոստէի ի Ճաշոց գիրսն, — Ժողովք Շիրակավանու Ր. յամին 862, — Սոյ՝ յամին 1251, յաւուրս Ինոսվկենտեայ Գ. — Մխիթարայ Կաթողիկոսի՝ յաւուրս Բենեդիկտոսի ԺԲ. զոր մանրապատում առնէ Կիրակոս պատմիչ, և այլն:

Յաւել և զայս՝ զի ղանգի ոչ միշտ ուրանալ կամ ժխտել նշանակէ. նմին իրի յասել Հարց՝ որ (Ս. Հոգին) ի Հօրէ բղխի, ոչ միշտ այդու զբղխումն Հոգւոյն և յՈրդւոյ, զոր ի նախակարգեալ օրինակս բացայայտ ուսուցանեն. զի

բազումք յերգոց մերոց չափաւ յօրինեալ գոլով, ընդէրն յոլով ուրեք զյաւելուածն և յՈրդոյ, որպէս յԱբեագարն։

11. Վասն բառին Ա՛նհարսնացեալ՝ հաւս լիցի ասել այսչափ միայն, զի Հարք Ցուցաց և մերքս սահել Ա՛նհարսնացեալ կոչեն զՍ. Կոյսն, առ ի մերժելոյ ի բաց ի նմանէ զամենայն սուտեր աւետարանական կամ հարսանեաց։ Զի առ մեզ ա՛նհարսնութիւն և հարսանիք հոմանիշք են, որպէս զի զբան Աստքէլոյն, «Պատուական է ամուսնութիւն», թարգմանել նախնեաց մերոց «Պատուական են հարսանիք». (Ոսկ. Մեկն. Մատթ. — Կիւր. Կոչ. ընծ.)։ Քանզի կոյսն Մարիամ պահակեալ եւթ էր ընդ Յովսէփայ, և ոչ ամուսնացեալ ընդ նմա. նմին իրի որպէս կոչեն զնա յոյն սուրբ Հարք՝ ἀνύμφευτος, և լատինք innupta, նոյնպէս և առ մեզ սակ անհարսնացեալ. — և ի կոչել իսկ հարսն զՏիրամայրն, յաւելուն միշտ մեզքն զբառն անփորձ, այսինքն միշտ կոյս։

12. Ձառելով զԵկեղեցւոյն Քրիստոսի՝ չիք երկբայել զՀամաձայնութենէ վարդապետութեան Ս. Հարցն մերոց և Վարդապետացդ ընդ կաթողիկէ ուղղափառ Եկեղեցւոյ։ Վարդապետ Եկեղեցի՝ Քրիստոսի Տեառն մերոյ հաստատեալ զԵկեղեցի իւր ի վերայ Պետրոսի առաքելապետի և տուեալ նմին զփականս արքայութեան երկնից, և նովաւ յաջորդացն՝ Քահանայապետացդ Հռոմայ՝ իշխանութիւն արձակելոյ զՀօտ իւր բանիգակ, զկաթողիկէ Եկեղեցի համօրէն։

Երկին Հարքն մեր և հաստատեն լինել զՊետրոս գլուխ առաքելոց, գլուխ առաքելոց, գերագոյն առաքելոց, հիմն եկեղեցւոյ, վէմ եկեղեցւոյ, վէմ հաստատող, վէմ անվաանելի, փակող արքայութենէ երկնից, ոչնչող զփականս արքայութենէ երկնից։

— Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեալ լինել զբանեղէնն զՊետրոս, գլուխ առաքելոց հիմն եկեղեցւոյ։ Լ. 888։

— Որ գալստեամբ քո վերածէր զմէզ յաշխարհական մեզոյ ծովէս, ապաւորեալ լամամբ ուռկանի վիմիւն հաստատոյ։ Լ. 207։

— Գլխոյն ընտրեալ հօտին փորձ՝ սատակէր զխորհուրդն ոչ գիտէլոյ, որով դառնայր և հնազանդէր: Էջ 164:

— Շնորհեալ վիմին եկեղեցւոյ, զոր պահեցեր ի հոսելոյ, և կանգնեցեր ի գլորելոյ: Էջ 168:

— Վիմն հաւատոյ զմայլեալ անմահական բաժակաւն այսօր՝ բաշխեր ծարաւեցաց: Էջ 793:

— Այսօր վիմին հաւատոյ և Յովհաննու սիրելւոյ, ընդ հակառակս ընթացեալ: Էջ 833:

— Այսօր զվիմն հաւատոյ շարժեալ փորձողին խաբէութեան մարտս առ ի քէն Թողացուցեալ, զմարդկային ակաբուքիւնս յանպխմանելով: Էջ 436:

— Որ խոստացար տալ զփականս արքայութեան երկնից երանելւոյն Պետրոսի, որ հրաւիրեաց զմեզ ի յոյս կենացն յաւիտենից: Էջ 891:

— Փակողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն Պետրոս, արուեստիւք ժուժկալեալ քեզ խաչակցեցաւ: Էջ 891:

— Որ զկուսութիւն անձառելւոյ Միածնին յայտնութեամբ Հոր ի վերուստ գաւանեալ, և երանական արժանացեալ շնորհի, վիմ անվաանելի ի գրանց գԺոխոց: Էջ 887:

— Որ զանձառելի խորհուրդ Սուրբ Երրորդութեանդ՝ Սիմոնի վիմի ծանուցեր: (Մկ. Վարդավառի Ա. օր):

— Այսօր վիմին հաւատոյ յայտնեալ զխորհուրդ Երրորդութեան՝ երրակի յօրինմամբ առաքաւարացն խորհրդոյ: Էջ 917:

— Կեցո զորդի ծառայի քո, զոր ի Հռովմայ գահէյն վերապատուեցեր, ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ: Էջ 847:

13. Ցեա այսքանի բացայայտ վկայութեանց ի Շարականէ՝ ղգլխաւորութենէ առաքելապետին Պետրոսի, ինքնին պարզին խմաստք Կանոնի առաքելոյն Յակովբայ, « Սա եղև գլուխ առաքելոց սրբոց ». (Էջ 1117): Այլ թէ՝ չէ պարտ խմանալ գովին բանիւք՝ որպէս թէ իւրք Յակովբայ (եղբօր Տեառն) իրաւասութիւն ի վերայ առաքելոց, ապա և ոչ ի միասն և հակառակ գլխաւորութեան առաքելապետին Պետրոսի. բանզի և ժամանակք Հայաստանեայց եկեղեցւոյ, առանց հակասելոյ ինքեան, ընդունել և ընծայել առաքելոց կրկին գլուխս

միանգամայն: Ա՛յլ զբաղն առաքելոց՝ պարտ է խմանալ անդանօր աշակերտաց. որպէս խմանայ և Ս. Եփրեմ, որ ի Թղթ. Պաւղ. առ Կորնթ. Ա. Գլ. ԺԵ. 7. ի բանն. « Եւ ապա երևեցաւ Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն » այսպէս ասէ. « Եւ յետ երևելոյ Յակոբայ և ամենայն առաքելոց, այսինքն հօրաքրոջն և երկոցին ». (Մատենագր. Հա. Գ): Եւ զդուռն խմանալի է առաջին կամ երևելի և գաղ աշակերտաց, և գնդուռն նոցին: Քանզի գոլով նորա արդար և հզրայր Տէառն կոչեցեալ, որպէս Հաւատամք և երգս ասելոյն « Եւ կոչեցաւ հզրայր Տէառն ի տանէ Դաւթի », և պատուական յաչս Առաքելոցն՝ առաջին եպիսկոպոս կարգի Երուսաղէմի, իբր երևելի ի նոսա, զոր և Ս. Պաւղոս « սիւն » կոչէ. և զի գտանէին բազումք յաշակերտաց Քրիստոսի յԵրուսաղէմ, որք հպատակք էին Յակովբայ առաքելոյն՝ իբրև վիճակաւորի՝ յայն ատեն կոչէ զնա գլուխ նոցա: Զայս այսպէս խմանայ և Ս. Թովմաս Ագուինացի ի մեկնելն զՑ տուն Բ. Գլխոյ Թղթ. Պաւղոսի առ Գաղատացիս, և դիտէ Թէ կարգի Յակովբոս յառաջագոյն, զի եպիսկոպոս էր Երուսաղէմի: Որպէս և Հարք մեր ոչ միայն զեօթանասունսն և վերից աշակերտան կոչեն առաքեալս, այլ և զաշակերտս Պաւղոսի, որպէս զՏիմոթէոս և զՏիտոս, ևն: Եւ զի Յակովբոս զայս՝ արդար և հզրայր Տէառն կոչեցեալ՝ և ոչ իակ ի համարի երկոտասան առաքելոց կարգէ մերս եկեղեցի, ընդ որևէ լեան Հարս և ընդ նախնիս ունիմս յարևմտեայս, այլ առաջին եօթանասունսն և երկուց աշակերտացն Քրիստոսի. որով չկարէին զաշակերտ մի յեօթանասնից անուն՝ համարել գլուխ երկոտասան առաքելոյն:

ԺԱ. Յօրինող շարականի Թէոդոսի Թագաւորին՝ ասէ զամենէ, հիմնիցոյց զեկեղեցի, հիմնադիր սուրբ հաւատոյ, որ ոչ նշանակէ՝ Թէ աշխարհական Թագաւորն հիմնէ զեկեղեցի կամ զհաւատս ուղղակի և անմիջապար: Ա՛յլ խմատ բանիցն է, իբր զի բարեպաշտ Թագաւորք յայնմ ամենայնի՝ յոր ինչ կարող էր աշխարհական իշխանութիւնն, ջանացին այնու ձեռնտու լինել սրբոց Հարց՝ ի վանել զմոլորութիւն հերձուածողաց և հաստատել զեկեղեցի կամ զհաւատս, որպէս նոյն շարական գնէ: Եւ այս յայտ անուամ է՝ զի շարականս

Հաճ պարզաբար հիմնիլ, այլ Հափաւորէ յաւելուածոյն աղօթիւք կամ բարեպաշտոնքեամբ հիմնեցոյց։ — Եւ այլ ուր շարականքն բացայայտ քարոզեն թէ ո՞ հիմն ևկեղեցւոյ կամ հաւատոյ։

15. *Ըստ վարդապետութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ, եթէ յետ մահու խակ և խակ լինի հաւատացումն արդար գտաւսանանաւ, այսինքն, զի հոգիք արդարոց՝ մտանեն պատժմայն յերկինս՝ ի դէմ յանդիման տեսութիւն Աստուծոյ, — և որոց կատարեցին մաքրութեան՝ արբին ի Քաւարանի, — և մեղաւորք մեռեալք ի մահուշափ մեղս՝ ինձանեն ի դժոխս, երգեն և Հարքն մեր և հաստատեն զդէմ յանդիման տեսութիւն Սրբոց Նոյնհետայն զինի մահուն, և միանգամայն քարոզեն ըստ Կաթողիկէ Եկեղեցւոյ զվարդապետութիւն Բարեխօսութեան արդոց և զՔարոզութիւն ևշխատութեաց նոցին, ընդդէմ բողոքական աղանդոյ։*

— Որ անպարագրելի տառապանքն տեսող և քարեխօս իւր ոչխատաւորաց։ ԷՀ 1127։

— Որք ի մահուն իւրեանց կենդանացան էլին ի կամարն երկնից, խառնեցան ի գունդ զօրութեանցն, տոչա բարեխոսութեամբ ողորմեա։ ԷՀ 93։

— Այսօր հրաւիրեցաւ յերկինս արքայութիւնն տուրբն Հռիփսիմէ։ ԷՀ 288։

— Որ զտիկնութեանն քո Թողեր զփառս, և տառապանսն զարդարեցար, այսօր գտանիցեալ ընդ զօրութեանս երկնից, վասն մեր առ Տէր բարեխոսեա։ ԷՀ 929։

— Զօրութեանց և տէրութեանց, իշխանութեանց և պետութեանց և ամենայն անուանելոց՝ որք ի յերկինս՝ պաշտաւնեք, ընկալ Քրիստոս ուրախութեամբ զմեզ յօր սահոռ և յարտուքեան, ընդ նոսին օրհնել Հոգւով զքեզ՝ ընդ Հօր փառաւորելով։ Ժամագիրք ԷՀ 168։

— Աչ Տէառն ի վերայ սրբոց իւրոց և փառք իւր հանդուցեալ է յոսկերս սուրբ, և Հոգիք սուրբ դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս։ ԷՀ 104։

— Զայն բարբառոյ յանապատի գլխատեալ այսօր ի Հերովդեայ, վերափոխեցաւ ի դասս անմարմնոց, աղօթիւք սուրբ լուր մեզ։ ԷՀ 557։

— Խիւթական մարմնով յերկրի յաշակերտաց քոյ պատրաստակեալ, և աննիւթական հոգւով ընդ Քրիստոսի յարքայութիւնն երկնից վերափոխեցար, առ Քրիստոս բարեխոսեա: Ի 1191:

— Ա՛յսօր բացեալ եղեն դրունք վերին Երուսաղէմի, կոչէլով սուրբդ ղքառասունսն յանձնառ ի փառսն և յանդաստուտ ի կեանս: (Ճաշ. Քառասունք մանկանց):

— Աձմռայ յիշմամբ առաջի Քրիստոսի՝ օգնական լեր ծնողացս ղյիշատակս քո: Ի 1195:

— Որ ընկալաւ ի կեանս անապականս վերջանիկ սուրբդ զառաքեալսն և գասեցոյց ի խորանս լուսեղէնս: Ի 1134:

— Որ քոյին առաքինասէր ճգնութեամբդ վերափոխեցար ի լուսեղէն յերկնային խորանսն, Տէր սուրբդ Գրիգոր, անդադար բարեխոսեա վասն անձանց մերոց: Ի 838:

— Վեհագոյն սերովբէից և բարձրագոյն քերովբէից վերհամբարձար ի բարձունս յերկականաց անհպելին, փառաւորեալ ընդ Միածնին հրճուողական ձայնիւ երգոյ: Ի 965:

— Աղդ եկայք հաւատացեալք, կատարեսցուք ղյիշատակ սոցա, քանզի սոքա են մեզ բարեխոս յարքայութեան: Ի 104:

Իսկ որ զկնի օրինակին՝ քարոզեն յայտնապէս, թէ հոգիք ննջեցելոց ի Վաւարանի կամ ի Մաքրարանի՝ կարօտին աղօթից մերոց, և յետ սրբելոյն անդէն՝ սլացեալ խառնին ի գունդս զուարթնոց և սրբոց յարքայութեան: Յայն սակս և եկեղեցի Հայաստանեայց, բաց ի պաշտամանց ննջեցելոյ՝ զորս յաձախ կատարէ, նա և զամենայն ուրբաթս նուիրեալ է յիշատակի նոցին և աղօթէ վասն նոցա:

— Որ անձառ մեծութենութեամբ ի փրկութիւն ազգի մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած, այսօր հանդո և զմեր ննջեցեալսն ընդ սուրբս քո: Ի 132:

— Որ Թագաւորդ ես Թագաւորաց... այսօր մարդասիրութեամբդ քո ննջեցեալսն մեր ընկալ, և հանդո ընդ սուրբս քո: Ի 134:

— Քրիստոս, բանաւորաց զաղաչանս առաջի քո հեղեալ մաղթեմք, հանդո զհոգիս ննջեցելոց ընդ սուրբս քո: Ի 137:

— Ի քաղաք Տեառն զօրութեանց և ի քաղաք Թագաւո-

ըին մեծի, ուր ժողովք սրբոցն են և խաղաղութեան, գնաս-
ցես յաւսավ և հանգիցես ընդ հրեշտակաց դասս՝ տեսանել
զլոյսն յաւիտենից։ Ննջեցելոց ԲԿ։

— Միսքան հայցեմք ի քէն Սուրբ Հոգիդ կենդանաբար,
սղաչանօք սուրբ Աստուածածնին, որա արժանի և վեր
ննջեցեալսն մտանել ի յերկնային քո սուրբ առագաստ, և
ընդ վերին զօրսն օրհնել սուրբ զԵրրորդութիւնդ։ էջ 146։

— Թագաւոր փառաց... Թող զմեզս մեր ննջեցելոցն, և
հանգո ի խորանի քումմ ի յարքայական ի հանգստեան։
էջ 147։

— Ի հանգիստ քո Տէր, ուր ամենայն սուրբքդ քո հանգ-
չին, հանգո զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո, մար-
գարեսբ։ էջ 148։

— Զորս հաւատարեցեր ընդ սուրբս քո՝ հաղորդիլ մար-
մնոյ և արեան քո, Տէր, այսօր ընկալեալ հանգո զհոգիս նո-
ցա կենագործելով ի կեանդ յաւիտենից։ էջ 154։

— Ա՛ր ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայց-
մամբ՝ շնորհել զԹողութիւն մեր ննջեցելոցն։ էջ 144։

— Անէծ խորհուրդ քահանային բազկատարած կայր ի
բեմին առաջի սուրբ սեղանոյն, հուր չիշանի, խաւար մերժի,
արամեալ հոգիքն ուրախանան, զի Թողութիւն մեզաց լինի,
ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։ Ժամ. 72։
(Տես և Աստուած անվեղ երդն՝ ժողովեալքս ի հրաժա-
րուին... Ժամագիրք էջ 68)։

Զնոյն վարդապետին բայ ի Շարականաց, Ս. Լուսաւո-
րիչն ի Յաճախապատառաժ գիրն, Խոսրով Անձևացի ի Մեկին.
Պատարագի, ժողով Մխիթարայ կաթողիկոսի և նորին
պատասխանի առ Բենեդիկտոս ԺԲ։

Եւ եթէ երբեք ազօթք մեր կամ Շարականք վասն ննջե-
ցելոց՝ ակնարկեն ի վերջին ընդհանրական դատաստան, զվե-
րսին դատաստանն զայն առաջի աչաց դնեն հաւատացելոց՝
առ ի յիշատակաւ նորին յորդորել զնոսա ի ջանս արժանի
լինելոյ զուարթերես կալ յաջմէ Քրիստոսի ընդ սուրբս։
Պարձեալ, ինդրեն յԱստուծոյ զողորմական հատուցումն
բարի՝ վասն ննջեցելոց, այսինքն, ըստ հոգւոյ և ըստ մար-
մնոյ, որ լինելոց է յընդհանրական գատաստանին։

Իսկ յաղագս գեհենի շատ լիցին օրինակք ինչ քաղեալք։

— Դողան երկինք և երկիր յահէ փառաց Քրիստոսի, հուր բորբոքեալ ընդ առաջ բազակիզէ զվհղաւորան։ Էջ 139։

— Ջընկղմեալքս յահագին ձկոյ ծովուս, ապրեցո ի գեհենոյն։ Էջ 138։

— Բարեաց գործողքն պսակին, չարեացն ի հուր անշէջ մատնին։ Ժամագիրք էջ 71։

— Աղաչանօք Աստուածածնին շիջո ի մէնջ զբազ հնոցին։ Ժամագիրք էջ 170։

— Հաւատացեալքն ի քէզ բերկրին և ուրացողքն կոծեցին։ Ժամագիրք էջ 70։

— Իմաք մինչ ի դժոխս ընկղմեալք յանօրէնութեան մերում, Տէր, յիշեա զգինս արեան Որդւոյ քո և ողորմեա։ Էջ 116։

— Զի մի ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին՝ ծագիւ մատին ջուր ի զովացուիս։ Էջ 239։

Թէպէտև յիշատակեալ երեքին վիճակքն, յորոց ի մին կամ ի միւսն կայ մտանել մարդոյ խակ և խակ ղկնի մահուն, ցուցանեն յայտ յանդիման զդատաւորութիւն առանձնական դատաստանի, քանզի առանց այնր ոչ զոք ընդունի Աստուած յարքայութիւն, կամ արկանէ ի քաւարան, և կամ ի հուրն անշէջ, սակայն հանդերձ այսու՝ ի հատուցումն և այդր դատաստանի՝ շատ իցէ մեզ բերել ի մէջ զբանս, զոր ուսոյց մեզ Ս. Ներսէս Հայրապետն մեր երգել ի գիշերային ժամասացութեան (էջ 14). « Փութացիր անձն իմ փախչել ի չարեաց, փափաքել բարեաց։ Ինչ միշտ մերձ ծանիր քուն մահու եկեալ, քնեցող դատաւոր, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։ Աստուածածնին բարեխոսութեամբն յիշեա Տէր և ողորմեա »։

Ինորոգ տպագրութեան Շարակաւոց և կարգաւորութեան հատարակաց աղօթից, ի Հարց մերոց սրբոց և ի Վարդապետաց յօրինելոց, սակս ի նախկին տպագիրս ինչ ինչ քննութեան գոլոյ կարօտք, հարկ էր առնուլ անդրէն ի քնին և ձգել խնամով. առ որ ոչ սակաւ աշխատ եղեաք, հա-

մեմաուելով զապագիրս ընդ հին և ընաիր գրչագիրս Ե՛ռա-
կանաց, Ժամագրոց և Տ՛նտացուցիչ՝ որ ի մատենադարանի
վանացս. և ի զանազան ընթերցուածոց անտի ընտրեալ
եդաք զայնս աւելի ի մերոյն ապագրութեան, յորս միա-
բանք էին գրչագիրքն ամենայն, կամ յոլովագոյնք և ըն-
տրելագոյնք ի նոցանէ: Գտաբձեալ, զնորութիւնս ինչ մու-
ծեալս ի ապագիր Տ՛նտացոյցս ի վերջս անցեալոյ գարուն, ան-
միաբանս կարգաւորութեան սրբազան պաշտամանցս, ի բաց
Թողաք, նշանակելով ի գիտելիս. յոր սակս և գտանին ի
սմա տարբերութիւնք ինչ մանուանք յայնցանէ:

Յաւելցուք զկուցանել և զայս, զի սակս առձեան գոր-
ծելոյ և ամիսոփելոյ ի մի հատոր, ոմանք ի մեծ ապօթիցն
աւուրց տէրունականաց և օրհնութիւնք գերկմանաց, զորս
գնեմք ի ցուցակին, և զարգիս չիք սովորութիւն պաշտել
ի ժամասացութեան, Թողեալք են ի բաց, զորս թէ ոք
կամիցի ասել՝ գոցէ ի Ճաշոցի:

Գտաբձեալ. Թէ խաղիցն շարականաց՝ բազմապատիկ առա-
ւել է քան զոր ցայսմայր գտանին ի ապագիր շարականս, յի-
ռեալ ի մեզ նորութիւնս ոչ սակաւս, ըստ նմանութեան
ձեռագրոց, զոր է տեսանել ակնբեւ ի ցանկի անդ. Թ՛ղ
և գայլ անթիւ ընդդ միմեանս յարմարութիւնս՝ զորովք
զանց արարաք կարգել ի ցուցակիս, և զտեղափոխութիւն
նոցին այսր անդր, հետևելով Հ՛գրիա համեմատութեան
հնագունիցն ընտիր ձեռագրաց և Հ՛երմոյ Բ. արքայի շա-
րականիսն մանաւանդ, որ Թէրևս բնաւից ընտրելագոյնն է՛
և ըստ Հարատար գրչութեան և ըստ արուեստի երգեցողու-
թեան, որ և հրաշալի ի համացն ասացաւ:

Յընծայել մեր զսրբազանս մատեան ի պէտս ուխտի ման-
կանց Նկիզեցւոյ, համակ զուշ և զակն կառուցեալ է մեր
ի փառս միոյն Աստուծոյ, ի պայծառութիւն ուղղափառ
կրօնիցս, և ի պարծանս Հարց սրբոց և աստուածաշնորհ
Վարդապետացս:

Գիտելիք ի Ժամագիրս

Էջ	ի տպագիրս դմի	Ըստ գրչագրաց
20.	Աբարի իրաւանն և արդա- րութիւն։	Աբարիչ իրաւանց և արդարու- թեան։
77.	Վանն քաւիչ և ներող լի- նելոյ Աստուծոյ ի վերայ մեզաց մերոց։	Վանն քաւիչ և ներող լինելոյ ի վերայ մեզաց մերոց։
77.	Վանն զի մի ընդ խռամանս գտանիցիմք յաւուրն։	Վանն զի մի ընդ խռամանս գտա- նել մեզ յաւուրն։
78.	Յաղեալ մեզ։	Ազդեալ մեզ։
80.	Աստուած ողորմութեանց։	Աստուած ողորմութեան։
80.	փառաւորի յամենեցունց։	փառաւորեսցի յամենեցունց։
81.	Եւ ընդ սրբոյ Հոգւոյն։	Եւ սուրբ Հոգւոյդ։
100.	Մատենագոյ. Աղաղակեցի։	Մարտեան. Հաւուցին։
107.	փխ. Որ պատկէ էք։	փխ. Ա. Որ պատկէ էք՝ ըստ ձեռ- օրինակի։
122.	Հզօր, յաղթող, աքանչելա- գործ, սուրբ, մեծի։	Հզօր, յաղթող, աքանչելագործ, մեծի, սուրբ։
149.	Եւ զմեծ խոստովանողն Քրիստոսի զՀայրապետն մեր զսուրբն Գրիգորիոս լու- սաւորիչն հայոցառաքեալ աչխարհի։	Եւ զսուրբ խոստովանողն Քրիս- տոսի զՀայրապետն մեր զտէր Գրիգ- որիոս լուսաւորիչն Հայոց- առաքեալ աչխարհի։
153.	Ջմոդովուրդս իւր ասուա- ծային զօրութեամբն։	Ջմոդովուրդս իւր ընդ աստուա- ծային զօրութեամբն։
153.	Պատուիրանաց քոց ի տու- ընչեանս յայսմիկ։	Պատուիրանաց քոց ի տուընչե- նես յայսմիկ։
159.	Ջյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։	Ջյարութիւնդ քո փառաւորեմք։
161.	Ընդ ծագել լուսոյ տուըն- չեանս։	Ընդ ծագել լուսոյ տուընչենիս։
163.	Անուամբ քով սրբով. ամե- նակալ։	Անուամբ քով. ամենակալ։
163.	Դու Տէր, բարձրեալ, զթած, երկայնամիտ։	Դու Տէր բարձրեալ, երկայնամիտ։
163.	Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ։	Աբրահամու, Սահակայ, Յակովբայ։

164· Եւ արդ Տէր խոնարհեցուցանեմ։	Եւ արդ խոնարհեցուցանեմ։
164· Բարկանար ինձ Տէր, և մի։	Բարկանար ինձ, և մի։
173· Քրիստոս Աստուած մեր։	Այս բառս ոչ գոն, այլ ուրանի. Վասն խաչի քո պատուականի։
174 Վասն սրբոյն Գրիգորի մեծի լուսաւորչին, քարեխօսութեամբ և աղօթիւք սրբոցն.. որոց այսօր է յիշատակ։	Վասն սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, քարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակովբոյ հայրապետին և Մաշտոցի ճրագնաւորին և սրբոց վկայիցն... որոց այսօր է յիշատակ։
174· Երկնային անթառամ պսակ կացն։	Երկնային պսակացն։
174 Պսակիչ սրբոց Քրիստոս, որ։	Պսակիչ սրբոց, որ։
174· Ամենայն սրբոց քոց և որոց այսօր է յիշատակ։ Լուր։	Ամենայն սրբոց քոց։ Լուր։
175 Ջամենայն հաւատացեալս։	Ջամենայն հաւատացեալքս։
184· Արդարութեամբ. և խաղաղութեամբ։	Արդարութեամբ. խաղաղութեամբ։
195· Փարատեա զցաւս։	փարատեցո զցաւս։
228· Վասնակնցոյ։	Վասնակնցի։
252· Ծածկագրիվիդ Աստուծոյ։	Ծածկագրիվին Քրիստոսի։

Ա. Ի վկայութիւն պատմողացն չէ Օրինակ Տէր մեր. Հայր մեր է ընդհանրապէս։

Բ. Յերջն Յիշեսցուք յոտն գնի դար ընդունի զԱնգամանելին զՏէր ժողովրդապետաք։

Գ. Աչխարհ ամենայնի բազում գանազանութիւն են ի ընդհանրս, որոց գիտութիւն ընկալաւ ընթերցուածս։

Դ. Զի որդի ՈՂ ուխտ. Հոմ. Գալոտեան, և կերպի իւր ինկեցեալ։

Ե. Թագաւորի Պողոս. կերպս կերպս գանա բազմանալ են, որոց պէտ հան պատճին գիտի զկերպանութիւնս։

Զ. Զի ի ընդհանրս ասացօղս երջ մարդ. Յակոբոցիկ քարեբանեցէք. Եւ զՏէր յաղերացն։ Թերեւս ընդ այս երջիւն է Ոյ հն քանզ, որպես է Թագ. Մարդ. ԴՉ։

Է. Յորդորեն Աբեղափալ երջոց ընդունի ի ընդհանրս նախ գան պէտ դար։

Ը. Ոչինչ գանձ հանգուցեան՝ հնարեցաւ ի ժի գարս, և պատեր է վանականաց Աբեղ ասացնին է ինեալ երեսանց, և հաճաս յեկեցեալ է ժի գարան։ Իսկ Հաւատով խոստովանիմ և Որդի Աստուծոյ յոտնն է նա ժի գարան։

Գիտելիք ի Ժաւնականգուբեան

Ա. ՅԵՐԵԿՈՑԻ ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԱԹԻՆ. է յԵթր Սղ. Ա« քեզ Տէր՝ ղէեց-ցոնէն ժ. ւահանայս (լոմ՛ ռանկառա ըոտ պոպէրոց) և պոն ռոգելէն է յԵ-, և ոչնդէս կորդան զ-ե-ե-ցոնն:

Բ. ՅԵՐԵԿՈՑՍ ԱՒԱԳ ԵՐԿՇԻ. ԵՐԵՔՇԻ. ՉՈՐԵՔՇԻ. ոչ կորէ է էրչ-էրց. «ի պոն ժոն խոնարհեցո և Ազգեցո. Ընդէրց. Սղ. Ա-Ե. փառք քեզ Տէր Աստուած մեր. ոչ պիղեցին. Աղաչեացուք. Լուր ձայնից. Սուրբ Աստուած. Հմր. Վասն խաղ. Հայր գթած. Տէր ա-մէնակալ. Եկեղեցո. Տէր Աստուած. Որ բնակեալ. Զքարձրեալն. Ցոյս կենաց. Հայր մեր»:

Գ. ՀՍԿՄՈՒՆՔ Լինի է էրէր- ժէ պօնէն ե-զ-ե-ե+ և ընդերց-ոմբ էրց, և պոն ոբբ-ընկոն է վերց բ-ղ-ոյ յ-ե-ե-ն. է Ծ-ւն-ղ-ըրդին, Մեծի Ո-բբ-ե-, Զ-ե-ին, Նոր Կէ-ր-ւկէն, Պենե-ւ-ե-ին, Վ-ըր-վ-ե, Փ-խ-ն Ա-ե-ե-ժ-ն, Խ-ւղէր-ցին և Ա-ե-ե-ժ-յ-ե-ե-ր-ե:

Դ. Ի ՊԱՆՏԱԿՈՍՏԻՆ. յԵրեւոյէ յԵս վերջին Ա-ե-ը. կորդան զ-ղօր Ո-ւկերեր-ն՝ Ամենակալ արարիչդ. էջ է ձ-ւցոյն: Բայց ներբ-ղ Ս. Նեբ. Լ-ր. վէ է հին էրչ-էրբ:

Ե. Ի ՎԱՐԴԱՎԱՌԻ. յԵրեւոյէն յԵս վերջնոյ ե-ե-ր-ոնէն ընկե-ն-ե-ն զ-ղօր ոբբոյն Բ-ր-ղ, Օրհնեալ ես Տէր ամենակալ. պես է ձ-ւցոյն:

Զ. ՅԵՐԵՒՄԱՆ ԹԱԶԻՆ. յ-ե-ե-օ-ե- յԵլ-ն-ն է գ-ր՝ յԵս Սղ. ընկե-ն-ե- զ-ե-ղ կէ-ր-ւղ, Թագաւորի Աստուածասիրդ. պես է ձ-ւցոյն: ՑԵս ոբբն՝ ս-ն է էրչ-էրց պոնէ և զ-ե-ո-ե-ն. Գ-ե-ղ. Զ. 14–18:

Է. Ի ՏՕՆՍ ՆՂ յ-ե-ե-օ-ե-ն նոր ե- զ-ղ-ոսակ-ծ-ն-ն փոն է էբ-ե-ղ-ն պ-ւղ-ե ե-ն-ղ. ոբդես է Ծ-ւն-ղ-ըրդին, է Զ-ե-ին, և յԵրեւոյէ նոբ-ե յԵլ-ն-ն է գ-ր, է Պենե-ւ-ե-ին, է Տ-ն էւէղէց-ց կորէ-ւ է կ-ե-ե-ր-ւղ-ն, և է փ-խ-ն Ա-ե-ե-ժ-ն:

Ը. ՓԱՒԻԼ, երբ-վ, զր պոնէ էրչ-էրբ է ւկ-ր-ւ-ե-ր պ-ն է ւկերեն Լոյս զաւրթին.

ԾԱՂԿԱԶ. ՆՈՐ ԿԻԻՐ. և Բ. ԾԱՂԿԱԶ. *Բարեբանեալ որ եկիր և գալոցդ ես ի յիրկնէ ասուածային քո փառաք՝ չնորհել ամենեցուն գ-ղ-ոթ-ւն, Քրիստոս, որպէս մարգասէր:*

ՊԱՆՏԱԿՈՍՏ. Երկրպագելով և մեք հ-ղմարիտ սուրբ Հոգւոյն, գո-չեացաք՝ *Աստուած փառք քեզ:*

ԵԿԵՂԵՑԻՈՑ. Ա-ե-ե-ն լիր և ցնծա եկեղեցի սուրբ. Քրիստոս գքեզ պսակեաց խաչիւն իւրով. և երգեա հանդերձ ժողովրդեամբ ասելով Ալէլուիա:

ՎԱՐԴԱՎԱՌ. Եկայք ժողովուրդք՝ ի առաքել փառաց Քրիստոսի երկրպագեցուք պարգեւողին աշխարհի զհեծ զողորմութիւնն:

ԱՍՏՈՒԱԾԱԾ. Վասն որոյ բարեխօսութեամբ մեր քո և կուսի աղաչեմք, մի՛ տար զառ ի ձեռս նեղչաց, զի զինք արեան քո համք Տէր· այլ պահեա ի խաղաղութեան որպէս մարգասէր:

ԽԱԶՎԵՐ. Բանզի լուսաւորեաց զքեզ Հոգեառուր քո Քրիստոս՝ պատուական խաչիւ և մկրտութեամբ աւազանին. վասն որոյ երկրպագելով զոչեմք, Փրկիչ՝ փառք քեզ:

Ի ԱՒՈՒՐ ԽԱԶՎԵՐ. Բարձրանալով քո ի խաչին՝ դիանելով ընդհարաւ, և ի յաւանդել զհոգիդ առ Հայր՝ եղև խաւար ի վերայ երկրի: Եւ իջանելով քո ի գերեզման՝ նորոգեցան արարածք ամենայն: Եւ ի յերրորդ աւուր յարեար՝ երևեցար խնկաբերիցն: Որ ամենայնի համբերեցեր վասն մերոյ փրկութեան, Տէր փառք քեզ:

Ի ՆՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏ. Մարդաբէութեանց մայր եղև Եւթզհէմ և օթեվան կուսին Մարիամու: Անդ ջերմեռանդ ծնանել յայրին տեսաք՝ քաղմեալ ի մսուր, և յառաջեալ մոգուցն երկրպագելով նմա պատարագաք՝ առակղեն զուշակելով· ընդ նոսին և հովիւքն փառաք փառաւորէին՝ զայս ասելով. Օրհնեալ է քո յայտնութիւնդ: (Թէ լոր օր է, Օրհնեալ աէր ի՛ սուր ընդ սկն):

Գան և այլ ֆարիր պօնէց սրբոց ի Մանրաւոտան, այլ անլեզուաւ է պօնացոյցս:

Թ. ԱՅՍՕՐ ԱՆՃԱՒ և ՆՈՐՈԳՈՂ. վան ձեզ Ո՜րբ Ուրբաթն յօրինեցան և պլըտեին ի նախնեաց. իսկ և յայլ աւուրս հանեալ չին փարս:

Ժ. Ի ՄԵՆԻ ՇԱԲԱԹՈՒՆ ՅԱՌԱՋՈՏՈՒ վէ խալհաթայ է հին էրէփէր, սրպես և ի ձեր պոպէրնեան:

ԺԱ. ՃԱՇՈՑ ԺԱՄԻՑ է Ճրփլայս Ինձ. և Զաւկն և յերեկոյ ձեզ Հինգշաբ. լսելոաւն է էրէփէր նախ քան զմեզ պարս:

ԺԲ. ՉԱՆԴԱՍՏԱՆՍ կէսրալեցց չիանց երբ ընդ հայոցն ուրեան էրէփէրց:

ԺԳ. Ի բաց թողաք վՄանկունք Ա. Տրտոմ՝ սրպես անպակաս նմին:

ԺԴ. Ի կէսրալես ձեզ պահց պոպէրս պօնացոյցն 1774 ամին հանեալ նորոգ կարգ, Չկաղբերցց ասեբարանն վՄաղմանն գան կարգալ. և ո՛ի գիշերին է ընդ. և Նորաստեղծեալք վասն երկու պահն գան երգել. և այլն. զոր ոչ ընկալաւ: Թող և զերեփեսուրեան սրբոց և վասելացոյց չելոաւ՝ Սմփոնի, Յերկրայց, Բարոյ, Գերեհանի, Գոհարինոյ, Մարգեի, Տասիկոս, Ուռիկոս, Յովհաննու Օյնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տարեացւոյն:

ԺԵ. Ի լսելոան ընդ գան և անասնոց յօրինողաց նոցին ասացին. այլ գանդի բազմ սրբոց հակառակ են գրեանդ և այլոց պարսից, և կարօտ հանդ գնալոսին, ոչ երգ ասացին: Յանկարծակի ընթերցողին զուցաւ. լսելոանց է Հօրդն Գաբրիէլ վ. Ասեղեան:

ԺԶ. Ըստ յիշատակութեանց ինչ ԺԲ և ԺԳ դարուց՝ ու ինչն փալատաց օրհնութիւն սա նախնւոյ. այլ գիտի է ծօն պերճանիանս. վկնիսակ լըրայնն երգին յետ օրհնութիւն։ Նոյն է հատու ժէ դարս ինչպէս յիշատակեալ պատմութեան. այլ է պահս պատուին բնաւ վկայ օրհնութիւն գնալ է ԺԶ ի՛ ժէ դարս։ Նոյ և պարգին սմանէ լսին փալատաց ընդ օրհնութիւն, բայց գիտի է գեղ ծօն։

ԺԷ. Ասէր ինն նախնի պօրհնութիւնն, պիտոյն և պայլ ամենայն լըրայնս խառն ընդ խրատուկիսր ինոյ նատուկել գիտ, որպէս սրանիմն յիշեալ Ծովպաղարդին, և ու պերալր գոնան գիտիս երգել։

Տպագիր խազք		Ձառևկևալ խազք ի ժաւևակարգուշբևանս
Շեշտ	՛	
Փուչ	՚	
Բութ	՝	
Պարոյկ	՞	
Երկար	՟	
Ստուլ	ՠ	
Ստուր	ա	
Թուր	բ	
Թաշտ	գ	
Ոլորակ	դ	
Խունճ	ե	
Վերնա- խազ	զ	

Ցպագիր խազք		Ձայնական խազք ի ժամանակակից հնչեղությամբ
Ներքնա-խազ	ա	ա ա ա ու ու ա ա ա ա
	ա ա ա ա ա ա ու ու ու ու	
Գարգաշ	ա	
Խոսրո-վային	ա	
Ծունկ	ը	ը ը ը ը
Ծնկներ	ըը	ը ը ը ը ը ը ը ը ը ը
Բենկորդ	ի	ի ի ի ի ի ի ի
Զակորդ	ը	ը ը ը ը ը ը ը ը ը
	ը ը ը ը ը ը ը ը	
Էկորդ	ե	ե ե ե
Խաւամ	է	է է
Հուհայ	ա	ա ա ա ա ա ա ա ա ա
	ա ա ա ա ա ա ա ա ա ա	
Փաթաւթ	ը	ը ը ը ը ը ը ը ը ը ը
Ձարկ	ի	ի ի ի ի ի ի ի
	ը	ը ը ը ը ը ը ը
	ա	ա
	խ	խ խ խ խ խ խ խ խ
	խ խ խ խ ա խ խ խ	

Ցաշելեալ խոյզ ի ժամախաղոչխեանս

A. Maurer pinx. sc. A. Fickel sc.

Eigenthum u. Verlag v. Gebr. C. u. N. Benziger in Einsiedeln

ԿԱՐԳԱԽՕՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ՄԻՋ ԳԻՇԵՐԻ Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՑ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եւ կեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Տէր ևթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Տէր ևթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Օրհնեալ համագոյ և միաանական անբաժանելի սուրբ Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ. և բազումք յարեան ի վերայ իմ:

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր:

Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ:

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:

Ես ննջեցի և ի քուն եղէ. զարթեայ և Տէր ընդունելի իմ է:

Ոչ երկեայց ես ի բիւրուց զօրաց նոցա, որք չուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի Տէր և փրկեա զիս Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան որք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց, և զատամունս մեղաւորաց փշրեացես:

Տեառնդ է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո:

Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որ իջանեն ի գուբ:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ:

Որպէս վիրաւորս որ ննջեն ի գերեզմանի:

Զորս դու ոչ յիշեցեր, նորա ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի սուեր մահու:

Ցիս հասուսուեցաւ սրտմտութիւն քո, զամենայն ըզօսանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց:

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Միթէ մեռելո՞ց առնիցես զսքանչելիս քո, կամ բժիշկք յարուցանիցեն և խոստովան առնիցին առ քեզ:

Միթէ պատմեսցէ՞ քո երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Միթէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Եա առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ և ամչեցայ։

Ձիս հասուսեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։

Օրհնեա անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա։

Օրհնեա անձն իմ զՏէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա։

Ո քաւէ զմեզս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։

Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։

Ո լնու ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոցդ։

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսիսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր։

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։

Ոչ ի սպառ բարկանայ մեզ Տէր, և ոչ յաւիտեան պահէ ոխս։

Ոչ ըստ մեղացս մերոց արար մեզ Տէր, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացաւ Տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զառնզծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ։

Շնչէ ի նմա հոգի՛ և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն Տեառն յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս։

Ոյք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ՝ ոյք առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա։

Օրհնեցէք զՏէր ամենայն գործք նորա, ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա անձն իմ զՏէր։

Տէր լոյր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մոռանիր ի պատասխան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Զիշեցի զաւուրսն պառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

ԱՊ. Հաւմբառնամ առ քեզ Տէր զաչս իմ նայեաւ յինս զբթնաթեամբըզ քո եւ ողո՞րմեաւ։ Զաւ ես յոյս և ապաւէն իմ զերծո՛ զիս յորոգայթէ՛ մեզաց եւ ողո՞րմեաւ։ Ա՛պրեցո՛ւցէ՛ իմ եւ փըրկէ՛ զ իմ ապրեցո՛ զիս յորոգայթէ՛ մեզա՛ց եւ ողո՞րմեաւ։

ՂԶ. Զգալուստ քո Քրիստոս այսօր. յԵ՛րուսաղէմ նո՛ր եկեղեցի՛ առըր. յաղթանա՛կ երգով բարե՛բանեմք ‖ ծրհնեա՛լ եկեալ ա՛նուա՛մ Տեառն։ Որ վանըն մերոյ փըրկութեան յաւանակի՛ նըստա՛լ յանձն ա՛ռեր. ընդ մանկա՛նըն բարե՛բանեմք ծրհնեալ։ Թագաւո՛ր երկնաւո՛ր. զեկեղեցի՛ քո անչարժ պա՛հեա. եւ զերկըրպագուս ա՛նուա՛նըդ քո պա՛հեա՛ ի խաղաղութեան։

ՅԱՐ. Զյարութիւն Աստուածորդւոյն. հրեշտակապե՛ան այսօր ա՛ւետէր կանա՛նցն ասե՛լով. յարուցեալ է Տէ՛՛ր՝ն ի գերեզմանէ՛ն։ Ընթացեա՛լ կանա՛նցըն խընդա՛թեամբ. պատմէ՛ին աշակերտացն ասե՛լով. յարուցեալ է Տէ՛՛ր՝ն ի գերեզմանէ՛ն։ Վա՛ան որոյ ե՛ւ մե՛ք ընդ հրեշտակի՛ն գո՛չեսցո՛ւք զյարութիւնըն Քրիստոսի՛. ո՛ր փըրկեացն ըզմե՛՛զ ի ձեռաց մահո՛ւ։

ՀԳ. Կենդանարար Աստուա՛՛ծ մարդանէր Հո՛գի՛. ըզժողովեալսըն միաբա՛նեա՛ կա՛ն սիրով. լուսաւորեցե՛՛ր հրեղի՛ն նո՛ք լեզուա՛՛ք։ ‖ վա՛ան որոյ եւ մե՛ք այսօր ասնե՛՛մք ըզգալուստ քո ասըր։ Զուարճացա՛ն քո՛ գա՛՛լստեան՛՛մըն ա՛ռաքեալքն. կա՛ենլով ի միա՛՛ն ընդըդուեանըն ի՛՛ միում՛՛նոյ բանմա՛՛ձայն լեզուա՛՛ք. վա՛ան։ Հո՛գի՛ սո՛րեակա՛՛ն ասըր մըկըրտութեամբ. զարդարեցեր նոքօք ըզսիրեզեր բա՛ ղեներս լուսաւոր՛՛յս եւ նո՛րափեսո՛՛ւս. վա՛ան որոյ եւ մե՛ք այսօր ասնե՛՛մք ըզգալուստ քո ասըր։

ՄԾ. Ծանո՛ւցանն հրաշալի՛ ո՛ր անյայտ էր ի մե՛նջ. եւ

բանդն հայրական անըմբռնելի. հոր վայելանացեալ և ի մարմնի բնակեցաւ. անվընաս պահելով զարարածս ամենայն: Ճաշումըն հրաշագործ ար ի կուսէն ծագեցաւ. ճառագայթելով զարարածս ամենայն. երկինըք ցընծային և երկիրս ուրախանային. և Քրիստոս Աստուած ընդ մարդկան չերկեցաւ: Ահա քեզ ապաւինիմք Ամենասրբուհի. գերադոյն և հրաշալի և բաշխող բարութեանցն. աղերսեա ես ծարաւեաց և հանդիսատ աչխատելոց. և եղեր վերընկալ աստուածամայրն Բանին:

Ի2. Զջրութիւն աւուրս խաչի քո Քրիստոս. ար կանգնեցեր ի փրկութիւն աչխարհի. ‖ սա՝ պահեսցէ զոմեզ յամենայն փորձութենէ: Քանզի ի սմա բարձրացաւ Աստուած. և ի սմա հեղեր ընդպատուական սուրբ պարիսնդ. սա՝

Փառք Հօր և:

Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստըդ. նըշանաւ խաչի քո ցուցեր աչխարհի. սա՝

Ամէն և միշտ:

Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց և զհոգիս ծառայից քոց ընդ սուրբսդ քո հանգո մարդասէր:

ՎԵՐՋ ՁԱՅՆ

Հայր անըսկիզբն բարեխնամ մարդասէր. որ ստեղծիր և հոգւոց և մարմնոց. յիշեա զընկերացեալսըն մեր ‖ և հանգո ընդ սուրբսդ քո՝ Որդիդ միածին ար զքեզ ածդ և առ ամենեսեան. և խաչիւ և արեամբ զնեցեր ըզքո ժողովուրդս. յիշեա զքրիստ աբեան քո տէր և հան: Հոգիդ ճըշմարիտ. ար աղերսիւդ ես անըպատաւելի. և լըսուցիչ ամենայն բարութեանց. յիշեա զընկերացեալսըն մեր և հանգո:

Խը՛նդրեմք ի քե՛ն թագաւոր փառաց փառաւո՛րեալդ ի զատ՛կէնից. ‖ ըզկնընջե՛ցեալսըն մեր ը՛նկալ մանրամա՛ս ՏԷր. եւ հանդո՛ն ը՛նդ սո՛ւրբըս քո՛։ Յո՛րժամ գա՛ս փըսո՛ք Հո՛ր դատե՛լ զերկի՛ր արդարո՛ւթեամ՛ն արեգա՛կն. ըզկնընջե՛ցեալսըն։ Ի՛ նըսաեա՛լ քո յա՛տեանի՛ դատաւո՛ր անհե՛ղ ՓրկուԹա՛ս փըրկի՛չ մեր եւ՛ յոյս. ըզկնընջե՛ցեալսըն։

Ո՞՛ր արարի՛չդ ես արդարո՛ց հա՛նգուցեալդ ի հրեշտակ՛ն կա՛ս. ‖ յիշեա՛ զհո՛գին նընջեցեա՛լոց մերոց՛ եւ հանդո՛ն ը՛նդ սո՛ւրբըս քո՛։ Ո՞՛ր երկայնամի՛տ ես մա՛ ամենեսեա՛ն. եւ ներո՛ղ յանցա՛նաց մերոց. յիշեա՛։

Ա՛Պ. ԿԻՐ. Բա՛ն՝ն ո՛ր ը՛նդ Հո՛ր յիւ՛ԹեանԹ. եւ համա՛զոյ սո՛ւրբ Հոգո՛ւն. ը՛զպատակեա՛լն իւ՛րական խառնեա՛լ ընդ հո՛գանի՛ւթ բընո՛ւԹեանն. զո՛ր զարդարեա՛լ փառո՛ք եղ ի դրախտի՛ն վանի՛կո՛ւԹեա՛ն։ Յո՛րմէ ը՛նծայը զատ՛ճանչեա՛լ. անաբիծական խընդո՛ւԹեամբ. քա՛նզի զԱ՛ստուա՛ծ սեռանէր մի՛չա խո՛նարհեա՛լ ի դրախտի՛ն. յո՛րմէ զլուսո՛յն ճառագայի՛թ տըղայո՛ւրըդ ի յի՛նքեա՛ն։ Վա՛ն ո՛րոյ ա՛ղաչեա. մա՛յր Ա՛ստուա՛ծոյ Մարիամ. զմխաձի՛ն քո զՈՐդին զի չնո՛րհեսցէ սա սո՛ւազակին. ժա՛ռանգել վը՛ըսո՛ւն մեզ ը՛զդրախտի՛ն վայե՛լչո՛ւԹիւն։

Ա՛Պ. Ո՞՛րի՛ սո՛ւս Ա՛ստըւա՛ծ յոյս անպա՛շխարհոյց. չնո՛րհեա՛ զԹո՛ղուԹիւն բազո՛ւմ յանցա՛նաց իմոց։ Ո՞՛ւ քե՛զ բազմագո՛ւԹ ապաւի՛նեանալ կա՛րգամըք մի՛ մե՛ծիւ ըզմե՛զ յո՛ղոմնա՛ւԹեա՛նէ քո՛ւմէ։ Ո՞՛րպէս գանագա՛ն սա զանգա՛կեմ ա՛ռ քե՛զ յիշեա եւ զիս ՏԷ՛ր. ի քո՛ւմ յո՛ղքայո՛ւԹեա՛նդ։

Ղ.Ջ. Ո՞՛յա՛ւ ես մի՛ածի՛ն անմա՛հուԹեանց պարգե՛ւատո՛ւն երի՛ւցեա՛ւ ը՛մե՛ն՝ս՝ո՛ց. խափա՛նեա՛ց զգո՛ւԹիւն մահո՛ւ։ Ո՞՛ղջմա՛ն՝ս՝ո՛ւ ա՛րտասո՛ւաց Մարիամու եւ ՄարԹայի ա՛նկեա՛լ սո՛ւ ո՛ստըն Տեա՛ն՝ս՝ո՛ւն. խընդրե՛ի՛ն

պնդրաւման եղբօրն։ «Բանի՞ւ» ու Բանն Աստուած կենդանագործեաց ընդ արգարսն ի թագաւորե՞ւ. և եկեալ արտաքս անդադարեա՞ն։

ՑԱՐ. Յո՞րժամ եկին ի գերեզմանն ի՞ւղարբեր կանայքն և բերին ըզխունկան ի խընկել. զո՞նադարեան մնալոյ են։ Յո՞րժամ հրեշտակն աւետարաներ. յա՞յ բնաւ փրկուտոս պատմեցեք աշակերտացն զյարութիւնըն Տեառն։ Ի՞նչ նոցա զարհուրեալ վասն ահագին տեսլեանն. պա՞տմէին աշակերտացն զահագին տեսլե՞ն։

ՀԳ. Ի՞ համբառնալ Բանին յերկինս և ի նըստել ընդ աջմէ Հօր. զուարճացեալ առաքելոցն երկրպագէին. ‖ օրհնելով ըզՀայր զառաքող Հոգւո՞յն։ Հա՞մահաւասքեալ զունդըք սըրբոցն ի վերնատունըն խարհըրդոյ. համբարձմամբ աչաց ապաւէին Հոգւոյն. օրհնելով։ Յո՞նկարծանան հընչմամբ հեզեալ կենդանարար աղբիւր լսոյ. անմահական կենաց լսոյ զարդարեալ. որք օրհնէին ըզՀայր զառաքող Հոգւո՞յն։

ՄԾ. Ա՞ստուածածնէն մայր և՞ կոյս. ծանգող արհ-դականն արդարութեա՞ն որ լուսաւորեացն ըզմե՞զ. ‖ հոգեւոր երդո՞վ զքե՞զ բարեբանե՞մք եւ փառաւորեմք ըզմիածի՞ն քո զո՞րդի՞ն։ Ե՞լոյծ զօրէ՞նըս բընութեանն մարդկան. հրաշափառ քո ծընանդ. եւ զէութիւն բնութեանն ամբողջ պահեալ և՞ կուսութեանըզ քո ոչ խախտե՞ցան կընիք. հոգեւոր։ Ջքե՞զ մարենի անկէ՞զ. լեառն վիմածի՞ն զոհըն փակեալ և՞ աղբիւր կընքեա՞լ. նա՞խատանցըն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր։

ԽԶ. Խա՞չն քո փրկուտոս երկրպագեն արարածք ամենայն. որ ի փըրկութիւն մեզ կանգնեցա՞ւ. սա՞տ ե՞ղեցի մեզ պահապան յաղթող ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թըշնամւոյն։ Ի՞ սմա բարձրացար բարձողդ

ան[illegible]թ[illegible]ց. ՝որ փառաւորեա՛ր եմ ընդ Հօր. ժողովել զհետացեալսըն կենսաբեր փայտիւն. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն։

Փառք Հօր և։

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սակայն սպանեին արդելեալքն ի մեղսամէր բանսին ՝որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն։

Ադամ և Միւա։

Ո՞ր միւսանգամ գալոց ես հայրենի՛ փառո՛ք. նոր բնակել զնախասահմանեալն ծընունդ. յիշեսա՛ զհնգին նըշխեցն լոց մերոյց եւ հանդո՛ ընդ սուրբս քո՛։

Սաղմոս ըստ Յայնիցն նախ քան զաւետարանն հանգոպեան։

ԱՋ

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմանես զիս, և մի բարկութեամբ քով խրատես զիս։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր մինչև յե՞րբ։

Դարձ Տէր, և փրկեա զանձն իմ, կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժոխս խոստովան առնի ում քեզ։

Վաստակեցի ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուաք իմով զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց, և Տէր զաղօթս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Ա.Կ

Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որ ի՛ջանեն ի գուբ։

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա, խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու ելիցի ուրախութիւն։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո հաւուր զեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ։

Ես առ քեզ Տէր կարդացի, առ Աստուածդ իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ ի՛ջանեմ ես յապականութիւն։

Միթէ հո՞ղ խոստովան առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղև ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զգուրձ և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի՛ ես զղջացայց. Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ։

Բ.Զ

Աստուած յանուան քումմէ կեցո զիս, և ի զօրութեան քումմէ իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունելի հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քո վաստակեա զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է:

Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եհաս աչն իմ:

ԲԿ

Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յամենայն ազգս փրկութիւնս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն:

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազգք, զի դու դատիս զժողովուրդս յուղղութիւն, և ազգաց երկրի դու առաջնորդես:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, դոհասցին դքէն ժողովուրդք ամենայն:

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած, Աստուած մեր:

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամենայն ազգք երկրի:

ԳՁ

Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո:

Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո զսրտմտութիւնս քո ի մէնջ:

Մի յաւիտեան բարկանայր մեզ Տէր, և մի ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչև յազգ:

Աստուած դու դարձեալ կեցուացես զմեզ, ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ։

Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։

Լուաք զինչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ որ դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսցի, արդարութիւն յերկինից երևեսցի։

Տէր տացէ զքաղցրութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի գգնացս իւր։

ԳԿ

Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո, յորում աւուր կարգամ առ քեզ՝ վազվազակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոխ չորացան։

Հարաւ որպէս խոտ և ցամաքեաց սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւատլոան յանապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և զովիչք իմ ինձ երդնուին։

Զմոխիր որպէս հաց կերայ, և զըմպելի իմ արտասուաւք խառնեցի,

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

ԴՋ

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում խնամատուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն չրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս դոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

ԴԿ

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն ի գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեմ այնոցիկ որ իջանեն ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քո, զի ես ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով ամայակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Չէի ապշասցս ընդ երեցեալ լինել աչերաբան ըստ յայնմ։

ԱԻԵՏԱՐԱՆԻՔ ՀԱՆԳԱՏԵԱՆ

ԲԿ. ԴԿ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի. ԺԳ. 36։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Յայնժամ թողեալ (Յիսուս) զժողովուրդսն եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն և ասեն. մեկնեա մեզ զառակ արմանցն ագարակի։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ սերմանէ սերմն բարի՝ է որդի մարդոյ, և ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ արմունն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է, և հունձքն կատարած աշխարհիս է, և հնձողքն հրեշտակք են։ Որպէս ժողովի արմունն և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս. առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն, և արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել

առաքանց: Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգական յարքայութիւնն երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ նման է արքայութիւն երկնից դանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ թաքուցց. և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն: Դարձեալ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս. և գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով, և յամենայն ազգաց ժողովելոյ. զոր՝ իբրև լցաւ՝ հանեալ ի ցամաք, և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս. ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել առաքանց: Ասէ ցնոսա Յիսուս. խնայարո՞ւք զայս ամենայն: Ասեն ցնա. այո Տէր: Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ամենայն գրիչ աշակերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին: 52:

ԲՂ. ԴՂ.

Սբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի. Գ. 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն, և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա ցորեան ստոր ի հասկին. այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա: Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի, և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամենայն բան-

Ջար և արձակէ ոսոս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ այնպիսի առակաւ խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն: 34:

Ա.Կ. Գ.Կ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, և հրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեացս, զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եւ կեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա. և եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եւ կեացէ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր թոյլ ական հասանել ի տան իւրում: Եւ դուք եղերբուք պատրաստաք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ: Ասէ Պետրոս. Տէր, առ մեզ առացեր զառակդ գայդ՝ թէ առ ամենեսեան: Եւ ասէ Տէր. ո՞վ իցէ հաւատարիմ անառես և խնամառուն, զոր կացուցցէ տէր իւր ի վերայ զերդաստանի իւրոց տալ ի ժամու զկերակուրս: Երանի իցէ ծառայիցն այնմիկ՝ զոր եւ կեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Ամրարեւ ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ զնա: Ապա թէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. յապաւէ տէր իմ ի գալ, և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայսն, ուտել և ըմպել և արբենալ, եկեսցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և ի

ժամու յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կարեացէ գնա, և զմնան նորա ընդ անհաւատս դիցէ: Եւ ծառայ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ պատրաստիցէ քան կամս նորա, արբցէ զան բազում: Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի զանի ինչ գործիցէ, արբցէ զան սակաւ: Ամենայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ՝ առաւել ևս պահանջեսցեն ի նմանէ: 48:

ԱՋ· ԳՋ·

Սրբոյ Աբեսաբանիա որ ըստ Յովհաննու. Ե. 19:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Պատասխանի եաս (Յիսուս) և ասէ ցնոսա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ: Զի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս Որդի զորս կամի կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստանն եաս Որդւոյ իւրոյ. զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանան յաւիտենականս. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ՝ և արդէն խակ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, և որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եաս և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում: Եւ իշխանութիւն եաս նմա զատաստան առնել. և զի որդի մարդոյ է, ընդ այն զի զարմանայք: Զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն, լսիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց: Ոչ կարեմ ես

յանձնէ առնել և ոչ ինչ. այլ որպէս լսեմ զառիմ, և զառաքեանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս: 30:

ԱՒԵՏԱՐԱՆԳՔ ՏԱՃԱՐԻ

ԲԿ. ԴԿ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի. ԻԴ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ելեալ արտաքս (Յիսուս) ի տաճարէն՝ գնայր, և մա-
տեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին: Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. տեսանէք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ, ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի: Եւ մինչ դեռ նստէր ի լերինն Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն և վախճանի աշխարհիս: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. զգոյշ լերուք՝ զուցէ ոք զձեզ խաբիցէ. զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոս, և զբազումս մոլորեցուցանիցեն: Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. զգոյշ լերուք՝ մի խռովիջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չէ կատարած: Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան. և եղիցին սով և սրածութիւնք և սաստնութիւնք ի տեղիս տեղիս. սակայն և այն ամենայն՝ սկիզբն է երկանց: Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ատելիք յամենայն ազգաց վասն անուան իմոյ: Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք, և զմիմեանս մատնեսցեն և ատեսցեն զմիմեանս. և բազում սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն: Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն՝ ցամաքեսցի սէր բազմաց. բայց որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ: Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն աշխարհս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա

ևկեսցէ կատարած։ Արդ յորժամ տեսանիցէք զպղծու-
թիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի
մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան, որ ըն-
թերցուն՝ ի միտ առցէ։ Յայնժամ որ ի Հրէաստանի
իցեն՝ փախիցեն ի լերինս, և որ ի տանիս կայցէ, մի
իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ. և որ յանդի իցէ՝ մի
դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վայ իցէ յղեաց
և ծծուցուց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի
մի լինիցի փախուստն ձեր ձմերանի և մի ի շաբաթու։
Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ի
սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ
լինի։ Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր
ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին ա-
ւուրքն այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ
աստ է Քրիստոս կամ անդ, մի հաւատայցէք։ Զի յա-
րիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տայցեն
նշանս մեծամեծս և արուեստս, մինչ մոլորեցուցանել՝ թէ
հնար ինչ իցէ՝ և զընտրեալսն. ահա յառաջագոյն ասացի
ձեզ։ Ապա թէ ասիցեն ձեզ, ահաւանիկ յանապատի է,
մի ելանիցէք. և թէ ահա յշտեմարանս է, մի հաւա-
տայցէք։ Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից և ե-
րևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ
մարդոյ։ Զի ուր դիւն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։
Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն
խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք
անկցին յերկինից և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ
ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ
կոծեսցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զորդի մար-
դոյ ևկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փա-
ռօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մե-
ծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝
ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։ Ի թզենւոյ
անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակ-
ղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։
Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գի-
տասջիք թէ մերձ է ի դուռս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ
անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք
և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ Բայց վասն
աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք

երկնից և ոչ Որդի, բայց միայն Հայր: Այլ որպես ա-
ւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ:
Զի որպէս էին յաւուրն որ յառաջ քան զԼրհեղեղն, ու-
տէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին մինչև
յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն, և ոչ գիտացին՝
մինչև եկն Լրհեղեղն և երարձ զամենեսին, այնպէս և-
ղիցի և գալուստն որդւոյ մարդոյ: Յայնժամ թէ իցեն
երկու յագարակի, մին առնուցու և միւսն Թողուցու. և
եթէ երկու աղայցեն ի մի երկանս, մին առնուցու և
միւսն Թողուցու: Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում
ժամու Տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք. եթէ գիտէր
տանուտէր՝ յորում պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր
սկան հատանել զտանն իւրոյ: Վասն այսորիկ և դուք
եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ սկն ունիցէք՝
գայ որդի մարդոյ: Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և
խմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւ-
րոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու: Երանի է ծառային
այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս.
ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կա-
ցուսցէ զնա: Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւ-
րում, տէր իմ յամէ դգալ, և սկսանիցի հարկանել զծա-
ռայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս, գայցէ
տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ սկն ունիցի,
և ի ժամու յորում ոչ գիտիցէ. և կտրեսցէ զնա ընդ
մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի
լալ և կրճել առամանց: 51:

ԲՂ. ԴՂ.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի. ԺԳ. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ յելանելն (նորա) ի տաճարէ անտի, ասէ ցնա մի
յաշակերտացն նորա. վարդապետ, տես որպիսի են քա-
րինք և որպիսի շինուածք: Պատասխանի եւ նմա Յի-
սուս և ասէ. տեսանե՞ս զայդ ամենայն շինուածս, ամէն
ասեմ ձեզ՝ եթէ ոչ Թողցի այդր քար ի քարի վերայ որ
ոչ քակտեսցի: Եւ մինչ նստէր նա ի լերինն ձիթենեաց
յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պե-

տրտս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս. ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և ինչ նշան է՝ յորժամ կատարիլոց իցէ այդ ամենայն: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ. զի բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոս, և զբազումս մոլորեցուսցեն: Այլ յորժամ լսիցէք պատերազմունս, և համբաւս պատերազմաց՝ մի խռովիցէք, զի պարտ է լինել. բայց չէ կատարած: Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս, սովք և սրածութիւնք և խռովութիւնք. այլ այն ամենայն սկիզբն է երկանց: Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ, ի վկայութիւն նոցա և ամենայն հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել: Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին սուրբ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա. և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն ի սպառ՝ նա կեցցէ: Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին՝ զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն ի միտ առցէ: Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս. և որ ի վերայ տանեացն իցէ՝ մի իջցէ ի տուն, և մի՛ մտցէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ. և որ յագարակին իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր: Բայց վայ իցէ յղեաց և առնուսուց յաւուրն յայնոսիկ: Յաղօթս կացէք՝ զի մի ձմերանի լինիցի այն: Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի ոչ եղեն երբեք այնպիսիք ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի այլ լիցին: Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ՝ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ: Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ՝ եթէ ահաւասիկ է Քրիստոս կամ աստանիկ, մի հաւատայցէք: Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս և

պատեսաս՝ առ ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն: Բայց դուք զգոյշ եղերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն: Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք յերկինս՝ շարժեսցին: Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ և փառաւք բազմաւք: Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից հողմոց՝ ի ծագաց երկրի մինչև ի ծագս երկնից: Բայց դուք ի թզենւոյ առեալ առակ ասացէք. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն, և տերև արձակիցի ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն. նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն: Այլ վասն աւուրն այնորիկ և ժամուս ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի, բայց միայն Հայր: Զգոյշ եղերուք, սկեցէք և կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ: Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ, թողուցու զտունն իւր, և տացէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր զործ իւր. և դռնապանին պատուէր տացէ՝ զի արթուն լինիցի: Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ աէր տանն գայցէ, յերեկորեայ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս. գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն: Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք: 37:

Ա.Կ. Գ.Կ.

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. ԻԱ. 5:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ. գայդ ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի: Հարցին ցնա և ասեն. վարդապետ, երբ լինիցի այդ, և զինչ նշան իցէ՝ յորժամ

այդ լինելոց իցէ: Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի խաբիցիք. զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ, և մերձեցաւ ժամանակ. մի երթայցէք զկնի նոցա: Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք, զի պարտ է նախ այնմ լինել, այլ ոչ առ ժամայնն կատարած: Յայնժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և շարժմունք մեծամեծք, և ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք եղիցին, արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից: Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեացեն ըզձեռս իւրեանց ի ձեզ և հալածեացեն. մատնեացեն ի ժողովուրդս և ի բանտս, և տանիցեն առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ. և լինիցի ձեզ այն ի վկայութիւն: Արդ դիք ի սիրտս ձեր, մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի. զի ես տայց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր: Ատենեսջիք և ի ծնողաց և յեղբարց և յազգականաց և ի բարեկամաց, և սպանանիցեն ի ձէնջ. և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. և մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. և համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր: Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա: Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս, և որ ի միջի նորա իցեն՝ խուսեացեն, և որ ի գաւառան իցեն՝ մի մտցեն ի նա. զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ, առ ի կատարել ամենայն գրեցոց: Բայց վայ իցէ յղեաց և առնուաւոց յաւուրան յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ ի վերայ երկրի, և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ: Եւ անկցին ի սուր սուսերի, և գերեացին յամենայն հեթանոսաց. և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց, մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց: Եւ եղիցին նշանք յարեգակն և ի լուսին և յաստեղս, և յերկրի տագնապ հեթանոսաց ի յահիճ բարբառոյ իրրև ծովու և խռովութեան, յելանելոյ ոգւոց մարդկան յերկիւղ՝ և ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժեացին: Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք զօրութեամբ և փառաք բազմաք: Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամ-

բարձիք և բարձրացուսիք զգլուխս ձեր, զի մերձ է փըրկութիւն ձեր: Եւ ասաց առակ մի նոցա. տեսէք զթզենի և զամենայն ծառ. յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝ և ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն: Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն լինիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն: Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերծանել յայնմ ամենայնէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ: Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս եղեալ ապանէր ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց: Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն՝ լսել ի նմանէ: 38:

ԱՋ· ԳՋ·

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու. ժ. 22:

Ա՛ս տէրամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ

Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, և ձմեռն էր. և շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և ասեն. մինչև յերբ թափես զոգիս մեր, եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ. այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց: Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան. և ես տամ նոցա կեանսն յաւիտենական, և մի կորիցեն ի յաւիտեան, և մի ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց: Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան զամենայն, և ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ. ես և Հայր

իմ մի եմք: Վէմս առին Հրեայքն՝ զի քարկած արասցեն զնա: Պատասխանի եւ նոցա Յիսուս. բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ, վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քարկած առնէք զիս: Պատասխանի եւուն նմա Հրեայքն. վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկած, այլ վասն հայհոյութեան. եւ զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես: Պատասխանի եւ նոցա Յիսուս. ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցէք. իսկ եթէ զնոսա աստուածս ասէ՝ առ որս բանն Աստուծոյ եղեւ, և չէ մարթի եղծանել գրոյն, իսկ զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝ թէ հայհոյես, զի ասացի թէ Որդի Աստուծոյ եմ: Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ Հայր յիս և ես ի Հայր: Խորհեալ խնդրէին զնա առնել, և էլ ի ձեռաց նոցա: Եւ գնաց միւսանգամ յայն կոյս Յորդանանու, ի տեղին ուր էր Յովհաննէս զառաջինն և մկրտէր, և անդ լինէր: Եկին բազումք առ նա և ասեն. զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար. բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր. և բազումք հաւատացին ի նա անդ: 42:

Զինչ առեալ էին ասէ ինձ ի Աստուածանեղէն և պառաւ ի Աւարտիչէն կամ այս ասացիէն:

Երբ Տէառն ներքսեալ կամուրջիսն՝ ասացեալ վասն առ ի Քրիստոս ննջեցելոց:

ԲԿ. ԴԿ.

Աստուած անեղ անժամանակ Հայր անըսկիզբն և անքանակ. Որդւոյ պատճառ ծնընդեամբ անճառ Հոգւոյ բըղխումն ապրեցարար. ամպակիզք ըղձի զքիմած երկայնամիտ և ողորմած. ‖ ընդորմեան քո առեղծուածոյս ի քեզ յուսով ներընկճեցեալս:

Բանեղ որ ի ծոց Հօր միածին և կենսատուն ակըղբնա-

տըպին. որով երկինըք գոյացան աշխարհըն լրիւ հաստատեցան. հայցեմք ի քէն Տէր և փըրկիչ ամենազօրդ և կեցուցիչ. ողորմեա:

Դէ՛րագոյն չնորհաց բաշխող երկնաւորաց և երկրայնոց. կեանք և կենաց տըւող Հոգի Հօր և Որդւոյ սբարշակից. խընդրեմք ի քէն ազբիւր բարեաց սբբեալ ցանազդ ծարաւեանց. ողորմեա:

Դա՛ւանե՛մք ընդ սրտվրէից զկենդանաբարբղ համայնից. էրկբսըրբեան մի՝ աէ՛րութիւն Հայր և Որդի և սուրբ Հոգի. յոր հանգուցեալըս մրկըբառեալ և հաւատով խոստովանեալ. ողորմեա:

Ե՞րբակի՛ թիւ կատարեալ յերի՛ն անձինըս բաժանեալ. Աստուածութեամբ միաւորեալ միով բնո՛ւթեամբ հաւասարեալ. յորմէ՛ կապեաքը և արձակիմք և վերըստին անլոյծ կապի՛մք. ո՛ղորմեա:

Զէ՞ակի՛ցըդ Հօր զՈ՛րդի փառաւո՛րեմք անլռելի. որ ինըր յարգանդ կուսին զաղամայինն առեր մարմին. աշղահանօք Աստուածածնին անապական քամ ծընողին. ո՛ղորմեա:

Ն՞բեւեցար մարմնով յերկրի որ ի՛ Հօրէ անմեկնելի. ընդ հողեղենըս բնակեցար ի հրեղինաց երկըրպադելդ. պաղատանօք երկնաւորաց փառաբանիչ քոց հրեշտակաց. ո՛ղորմեա:

Ը՞սա օրինացըն Մովսէսի ընծայեցար ի տաճարին. զի ըզրնութիւնըս մարդկային ընծայեսցես Հօր ի յերկինս. խընդրըտածովք սուրբ ծերունւոյն քեւ ի կարկից արձակելոյն. ո՛ղորմեա:

Թա՛զաւորըդ հրեղինաց որ ընդ մարդկան հողեղինաց. չըրժեցար անօրինաբար կրեցեր ըզկիրըս մարդկաբար. որ վասըն մե՛ր զայս ամենայն ի յանձն առեր խոնարհութեամբ. ո՛ղորմեա:

ԲՂ. ԴՂ.

Ա՞ղովեա՛ղբս ի հրաժարումըն ծառայի քո յաշխարհէ. հայցեմք ի քէն արտասուելով և պաղատիմք զայս ասելով. ճանապարհ ընդ քեզ եղիցի հանգուցեալոյս լեր ուղեկից. ‖ Ի յօթևանս Հօր քո լուսոյ ընդունելեացըս մեր հանգո՛ւ։

Ի՞նչ փըրկութեան մերոյ սկզբան մըկըրտեցար ի Յորդանան. զոր շնորհեցեր նոր ա՛ւազան ի մանըրմկիւն մեղայ մարդկան. հայցմամբ կըրկին կատարեա՛ն մեծին ի ծնունդըս Մկըրտչին. Ի յօթևանս։

Լո՛սաւոր ձայնի՛ւ յերկնից գթով դառնեաց Հայր էակից. ազատնակերպ Հոգին ի քէն առ հանգոյդ իւր հանգուցանել. ըզմըկըրտեա՛լս նովին շնորհով յորդիգրմա՛ւթիւն Հօր հաւատով. Ի յօթևանս։

Խա՛չար մեղաց հալածեցաւ լոյս պիտո՛ւթեան քեւ ծածկեցա՛ւ. խայթուած օձին բըժըշկեցաւ հիւանդութիւն մեր ո՛ղջացա՛ւ. կենդանարարըդ մեռելոց և լուսատուդ խաւարելոց. Ի յօթևանս։

Ծա՛ղումն անո՛ւն առ ի Հօրէ որ ընտրեցեր ի յաշխարհէ. լուսաւորիչ տիեզերաց ըզդառս ընտրեալ աշակերտանց. աղա՛չանօք առաքելոց փոխ յաւրո՛ւթեան մեր եղիցի. Ի յօթևանս։

Կեա՛նք ի կենաց լոյս ի լո՛ւսոյ որ ընտրեցեր զմեզ ի հողոյ. նորոգեցեր զարձեալ կըրկին ծնընդեամբ սըրբոյ աւազանին. զոր կենցուցեր չնորհի՛ւ քովին ի մանհատանէն այն առաջին. Ի յօթևանս։

Հո՛գւով լըցե՛ր զմարդն առաջին զոր կնքա՛ւեալ խաւարամբ չարին. ըզնոյն հոգի բանի՛ւ քոյին հեղեր յոգին մեր վերըլսաին. նա՛ւիլն հոգւո՛յ սուրբ ն՛ւ բարի առաջնորդեա հոգւոյ սորին. Ի յօթևանս։

Զա՞յնեցե՛ր առ Ղազարոս որով ե՛տուր մեռելոց յոյս. կե՛նդանութեամբ չորեքօրեայն կենդանացան որք յԱդամայն. կե՛նաց ձայնին վերկի՛ն փո՛ղոյ կոչեա՛ ընդա յայսըմ հողո՛յ. ի՛ յօթեվանս։

Ո՛չ զեալ սարսեա՛ց պահակ մահու ի կենարար ձայնին ասրոյ. արագապէս զոյգ ընդ բանին ետ ընդմեռեալն ըստ հրամանին. ի՛շխանք օգո՛յս այս անթեւոցեն զհոգի՛ սո՛րա մի արգելցե՛ն. ի՛ յօթեվանս։

Ա.Կ. Գ.Կ.

Ձա՞նապա՛րհ մոլո՛րելոց և ճանա՛չօղ խաւարելո՛ց. հրաւիրեցեր զո՛րդին լուսոյ ի յե՛րկնային հարսնի՛սն քո՛. ընդ զուարճալից անդ ժո՛ղովոց արժանացո՛ ըզսա դասո՛ւց. ‖ ևի՛ լապտերօք մոյծ յո՛ռոգասատ ընդ ի՛մաստուն սուրբ կո՛ւսանսն։

Մե՛րով բնութեա՛մբ զոր ընդգե՛ցար ի փայտ խաչին բեւեռեցա՛ր. լուծանելով զմեզ ի՛ մեղաց ի նախահօրըն կապանաց. ըզի՛ և՝ ըզսա՛ ի յանցանաց վասըն քո՛ սուրբ չարչարանաց. ևի՛ լապտերօք։

Ցնո՛ր կամաւո՛ր մահո՛ւ խաչի եղար ի՛ նոր գերեզմանի՛. երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ընտրեցե՛ր զմեզ կենդանի՛. զի՛ չեռաս ընդ քե՛զ ի հնո՛ղ մահու վերանկո՛չեա ձայնիւ փողո՛յ. ևի՛ լապտերօք։

Նը՛ոտեալ կանո՛նցն խղաւերե՛րից և՝ ողբայ՛ին արտասուալի՛ց. ի՛ր ըզմեռեալ անյո՛ւսալից ըզկենդանիզ յաւիտե՛նից. վասըն նոցի՛ն սուրբ ա՛րտասուաց մաքրեա՛ ընդա ի յանցանաց. ևի՛ լապտերօք։

Ե՛ւ զժեալ հիմանցըն դըժո՛խոց ի տե՛ւտե՛նէն ըզքեզ ներքնո՛յ. հաներ զհոգի՛ան նո՛ր ի՛ բանտին կապեա՛լ զի՛շ-

խանըն մահածին. ընդ հանդուցեալ հոգին սըրբոց հանգո՛ղ զհո՛գի նընջեցելոյս. լէ լապտերօք։

Ո՞րպահուքեամբ զօրք երկնային յերկնից յերկիր խ-ջանէին. յորժամ յարեար ի մեռելոց լոյս ծա՛գեցար ա-րարածոց. սո՛ւրբ յարուքեամբ քո կենա՛րար յարո՛ ընդա՛ ի կեա՛նս անմահ. լէ լապտերօք։

Զհաղնդուրժեալ պահապա՛նացն ի յերկիւղէ երկնա-ւորացն. որք աւետիս տային կանանց թէ մահ լուծաւ մահկանացուաց. սա՛ ո՛ր մահո՛ւ քո տընկակից լեսի կե՛-նացդ հաղորդակից. լէ լապտերօք։

Պաշրակցեալ անմանրամասնականքն առ կենսատու սուրբ գերեզմանն. տա՛ն աւետիս անգիր մարդկան վասըն կե՛-նացն յաւիժական. դա՛սաւորեա՛ պարուց նո՛ցին ընդընդ-ձեցեալս յօրըն վերջին. լէ լապտերօք։

Զաշհաւորեալ նըչան խաչին յարեւելից վայրեալ ծա-դին. հաւատացեալքն ի քո՛զ բերկրին և ուրացողքըն կոծեացին. գերկընքապատո՛ւս սըրբոյ խաչին պայծառացո՛ լուսով նորին. լէ լապտերօք։

ԱՋ. ԳՋ.

Ախո՛հ գործեալ երկնաւորաց զան անառո՛ղի քո նախընթաց. զընտրեալըս քո ժողովելով քեզ ընդանառո՛ղ բերին ամպով. ընդ ազատեանց օդանապա՛րհից խառնեա՛ ընդա՛ սուրբ երամից. ‖ դա՛սաւորեա՛ ընդա՛ վերնոց երգել ըզփառս ընդ զրւարթնոց։

Աշբառիւ՛ն տարերք երկրի յորժամ վաղաք զաս հայ-բենի. արեգական լոյս խաւարի լուսին՛ն ամառեղբըքն նըւազին. ընդա՛ յաւուրն անե՛րեկի լուսաւո՛րեա լուսով քոյին. դա՛սաւորեա։

Վէ՛րնակա՛ն զօրացը՛ն պէտ փողէ՛ բա՛րբառ աւետա-
բե՛ր. ա՛րիք մեռեալք ո՛րք յԱ՛դամայ քանզի ա՛հա եկե՛ն
փեսայ. ը՛նդ հարանացեալ մաքո՛ւր հո՛գւոց կարգեա՛ ըզսա
ի թիւ սրբո՛ց. դա՛շաւորեա՛:

Տէ՛րակա՛ն յաթո՛ռ նըստեա՛ս յարարածո՛ց երկրպագի՛ս.
ա՛րդարութեամբ դա՛տիս զամե՛ս վարձ ըստ գո՛րծոց
հատուցանե՛ս. յա՛յնժամ չնորհեա՛ ողո՛րմութեամբ նըստե-
ցե՛լոյս մեր թողութի՛ւն. դա՛շաւորեա՛:

Բա՛ժակ մարդկա՛ն ապ ժողո՛վին որք յԱ՛դամայ ծը-
նեալք լինի՛ն. ե՛ւ հրեղինաց դասք երկնայի՛ն համանգա՛-
մայն վայրաբերի՛ն. ի՛ յա՛յնմ ահե՛ղ հրապարակի՛ն յիշեա՛
ըզսա յօրն ահագի՛ն. դա՛շաւորեա՛:

Ցո՛ւցանի՛ն զաղտնի՛ք մարդկան իւրաքա՛նչիւր որ զոր-
ծեցա՛ն. բարեաց գործողքըն պըճնակի՛ն չարեացն ի՛ հուրն
անչէ՛ջ մատնի՛ն. յա՛յնժամ յիշեա՛ զսոքա բարի՛ն գործ ըք
մե՛ղացըն ջընջեացի՛ն. դա՛շաւորեա՛:

Խո՛սքն պըճնակ զանազա՛նեալք և պատմո՛ւճանք լու-
սափայլեալք. սո՛ւրբ վըկայիցն ի գլո՛ւխ եղեալ և ա՛րդա՛-
րոցըն զարդարեալ. հա՛ղորդս արա՛ հայցմամբ նո՛ցին
ըզսա լո՛ւսոյ փառաց նոցի՛ն. դա՛շաւորեա՛:

Փա՛ռաց ի վե՛ռըս բարձրա՛նան ա՛ջակո՛ղմանքըն վերա-
նա՛ն. յո՛րժամ լսե՛ն զերա՛նական ձայն օ՛րհնո՛ւթեան ի
քէ՛ն կոչմա՛ն. նըստեցե՛լոյս մեր լսե՛ցո զաղաւաւածա՛յին
բարբառըդ քո՛. դա՛շաւորեա՛:

Քա՛հանայք և ժողո՛վուրդք հայցե՛մք ի՛ քէն Տէ՛ր բարե-
դո՛ւթ. ը՛նդ նըստեցեալսըն հա՛ւատով ընկալ ը՛զմեզ նովի՛ն
յուսո՛վ. յե՛րեսաղէ՛մ քաղա՛ք վե՛րին յորո՛ւմ ա՛րդարքըն
ժողովի՛ն. փառս վերերգել մի՛շտ ը՛նդ նոսին երբո՛ղու-
թեանդ երբանո՛ր անձի՛ն:

ԴԶ.

Ա՛րաբե՛ւ եւ մա՛րգահե՛ր ա՛նձնիակալ եւ բա՛րեգութ. ո՛ր գո՛վե՛ստ ի սրտ՛վբե՛ի՛ց տէր գանաւո՛ր աշ֊դարձեանն. ընդ սքօրո՛ց առա՛քելո՛ց տէր պըտակեա՛ զմե՛ր նը՛նջեցեալն. ‖ ո՛ղորմա՛ծ տէր ո՛ղորմեա՛ հո՛գւոց ը՛ մեր նը՛նջե՛ցեալոց։

Յո՛րժամ գըրեա՛լքըն կա՛տարի՛ն ո՛ր գայնմ ա՛ւուր մե՛զ պա՛տմեցին. մա՛րգարէ՛ց բա՛նքը՛ն յա՛րգի՛ն առաքե՛լոցը՛ն վը՛ճարին. ո՛ղորմա՛ծ։

Ի՛ վե՛րո՛ւն ե՛րեսակե՛ա՛մ ի բնակարա՛նը՛ս հրե՛շտակաց. ո՛ւր կնո՛ւք եւ չե՛դիա՛ կա՛ն ծերացեալ ա՛զա՛տնակերպ ի դրախտ՛ն ե՛դե՛մական պայծառացեալ ա՛րժա՛նապէս. ո՛ղորմա՛ծ։

Թա՛գաւո՛ր փառա՛ց Քրիստո՛ս ո՛ր ժամա՛նեալ գա՛ս ի՛ յերկինից ի վերա՛յ Թեւո՛ց հոգմա՛ց քո հայրենի կերպա՛րա՛նքո եւ ա՛ռնե՛ս հրաժարձութեա՛մբ ըզքընաւթիւն որդւո՛ց մարդկան. ո՛ղորմա՛ծ։

Ի՛ դնել բեմի՛ն բա՛զմի՛ վեհապա՛յն. եւ ա՛ռաքա֊տը՛ն գա՛՛ւրսի. գաւրութիւնքն փո՛ղը՛ն գոչէ՛՛ւ սուրբ ա՛մենայն ա՛նդր հա՛՛ւտքին արդարո՛՛ց գա՛նքը՛ն բերկրե՛՛ն իսկ մեղաւորքըն թո՛՛խանձի՛ն. ո՛ղոր։

Յո՛րժամ հընչե՛՛ն փողո՛՛ն լինի՛՛ եւ զևտակա՛ն գիրըն յայտնի ճառագա՛՛յթ սըրբո՛՛յ խաչի՛՛ն յա՛րեւելից փառո՛՛ք ծագի հրեշտակաց գո՛՛նդըք ծա՛՛ւալի՛՛ն հրեշտակապետք պա՛րհնակին. ո՛ղորմա՛՛ծ։

Ա՛հեղ խորհո՛՛ւրդ քահա՛՛նայի՛՛ն բազկատարա՛՛ծ կայր ի՛՛ բեմին առա՛՛ջի՛՛ սուրբ ա՛՛ռաքելո՛՛յն հա՛՛ւր չիջանի խաւա՛՛ր մերժի աչքսամեալ հոգի՛՛ն ուրա՛՛խանա՛՛ն զի Թողութիւն մե՛՛ղա՛՛ց լինի. ո՛ղորմա՛՛ծ։

Աօվսէ՛ս առաուա՛ծախօ՛ն և Աէհարան ը՛զև՛ տայլին մա՛րգարէ՛քն Խրա՛յելո՛ւ եւ քահանայք հին օ՛րինին յառաջագո՛յն մեզ ծա՛նուցո՛ւն ըզգալո՛ւստ սուրբ Մի՛ածնին. ի փըրկութիւն մեզ յա՛յտնեցո՛ւն. յանապատե՛ն կոչա՛կրէին. ողորմա՛ծ:

Տըրամա՛հագո՛րդ չարչա՛րանօ՛ք ի յանձն առեր ընդմի՛ս խաչին եւ փայտե՛ն բարձո՛ղ եղե՛ր վասն Ադամա՛յ նախատա՛ւեղծին. ողորմա՛ծ:

Զաւրհո՛ւրեցա՛ն զծրք երկնայի՛նդ յո՛րժամ տեսե՛ն զՏէրդ ի՛խաչին աւրեգակա՛ն լոյս քո՛ղարկեա՛լ և լո՛յս լո՛ւսնէ նըւա՛ղեցաւ յաՀնդ փառա՛ց Աստուա՛ծածրդուհո՛յն խաւա՛ր եղեւ ընդ ամի՛ս եգերս. ողորմա՛ծ:

Ո՛ւրախացա՛ն ազգը՛ք մարդկա՛յն յորժամ լըւա՛ն զքո՛ յա՛րութիւնդ Նո՛րափեսա՛ւր զարդա՛րեցաւ ի յարութիւնդ սո՛ւրբ Մի՛ածնիդ. ողորմա՛ծ:

Ա՛զաչանո՛ք սըրբո՛յ խաչի՛ն և անբաւրուն բանի՛խօսին. եւ սըրբո՛յ Աստուա՛ծածնի՛ն և Յովհաննու կա՛րապետին և սըրբո՛ցն Առաքա՛ւոսի՛. և առաջի՛ն մարտի՛րոսին եւ սըրբո՛յ Լուսա՛ւորչի՛ն Հայաստանեայց հայրապե՛տին. և սըրբո՛ց առա՛քելո՛ց և համօրէ՛ն մարտի՛րոսաց. ողորմա՛ծ:

Ա՛ս ասացի՛ Տի՛ւ ի վերանալ յինէ՛ն աւուրց իմոց. յո՛Տի՛ւ երթայցեմ ես այսօր, յառաջին օթևանին զո՛ր ո՛չ գիտէ՛ք. ‖ օգնեա՛ Տի՛ւ և ինձ գրիտասս այսօր. յառաջին ճանապարհին և ի վերատանգամ գալըստեանըդ քո՛ օգնեա՛ Տի՛ւ ինձ:

Ա՛կն եհա՛ Տի՛ւ յօր վախճանի իմոյ լալո՛ Տի՛ւն. ողբուսն և աշխարհսն. սո՛ Տի՛ւ իմ խոռվեցաւ յիս և ո՛ակնդ իմ ցամաքեցան. օգնեա՛ Տի՛ւ:

Ի մանկ֊ության իմ զարթուցի՛ն զիս պահանջ֊ությա՛մբ հոգւոյ իմոյ տա՛նէր֊ությա՛ն զիս ի ճա՛նապարհ հնազանդո՛ւ զո՛ր ոչ գիտե՛մ. օգնեա՛֊ության։

Նայեցա՛֊ության և ոչ ոք էր որ օգնէր ինձ մա՛սամբ֊ությա՛ն յԱստուած վերկութեա՛ն իմոյ ըղձա՛ցեալ֊ությա՛ն հո՛գի իմ յարքայութեա՛ն քում. օգնեա՛֊ության։

Գրե՛ցա՛֊ության ես ի զո՛ր կենդանութեան և մեռնե՛֊ցա՛֊ության երթալ առ ա՛րարիչն երկնի՛ և երկրի՛. օգնեա՛։

Յանդգնաւե՛֊ությա՛ր և յանձ՛ղ լուսոյն հեռացա՛֊ության խաւա֊մամբ խաւարին ճաշակեցե՛֊ության զմա՛հաւութ պղտուցն հո՛գ֊ւոյ ա՛նա՛֊ության պա՛տկեր առեղծո՛ղիդ. օգնեա՛֊ության։

Յա՛նձնառա՛֊ության հոգւոյս ի մարմնոյս. ի քա՛կտե՛֊ության զեղեցիկ շինուածո՛յս զարհուրե՛֊ության մ ի սպառնալեաց թա՛գաւորին թէ պահա՛նջէ՛֊ության կինէն զտա՛ղանդ պա֊տուիրա՛նին. օգնեա՛֊ության։

Կո՛ւսածէ՛֊ության մարդացեալ Աստուած իմ ցիրուս յա՛յնմ աւե՛֊ության յա՛հեղ առե՛նին զգինո՛ս ա՛րեա՛֊ության քո մի դատապա՛րտեր. օգնեա՛֊ության։

Ա՛ծկալե՛֊ության ծո՛ր վախճա՛նին և ահե՛֊ության է օր դա֊տաստա՛նին. յա՛յնըմ աւե՛֊ության յահեղ առե՛նին ըզգինս արեա՛֊ության քո մի ա՛նառս առներ. զի պատկե՛֊ության իմ բարերար առեղծողիդ. օգնեա՛֊ության։

Ջահաւե՛֊ության դատաստան դատաւորիդ տեսի և զար֊հուրեցա՛֊ության. զի անպա՛տրաստ եգիտ զիս ի հրամա֊նա՛֊ության քոց թագաւո՛ր յա՛ւիտե՛նից. օգնեա՛֊ության։

Ա՛ստուածա՛ծէ՛֊ության անա՛րատ մայր Տեառն և կո՛յս առաբ. բարեխո՛սեա՛֊ության առ Որդի՛դ քո միա՛ծին. զի փըր֊կեսցէ՛֊ության զմեզ ի սպառնալեաց գեհե՛նոյն. և պա՛րգե֊ւեսցէ՛֊ության մեզ գերկնից արքայութիւնն և հա՛նդուսցէ՛֊ության զհոգիս մեր նընջեցեալսն. օգնեա՛֊ության։

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոյն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանդիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս չնորհեա զթողութիւն յանցանաց:

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք:

Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեսցուք զիրկիչն մեր Քրիստոս, զի զնոսա ընդ արդարան դասեսցէ. և զմեզ կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

ԱՂՕԹՔ

Քրիստոս Որդի Աստուծոյ անճառակալ և բարեգութ, զքեզ քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայիդ քոյ: Զիշեա յաւուր մեծի դալստեան արքայութեան քոյ. արա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քոյ յամենակողմեան դասուն: Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ յերկինս:

Եւ ապա ասէ օրհնաբանեան քահանայապետն առաքն, կամ ի յայնկին. և զինի հաղորդեանն և փարոցն և ապօրինն:

ՄԱՂԹԱՆՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻ

Փառք հրաշափառ (ծննդեան) քոյ Տէր. զօրհնեալ և զփառաւորեալ զհրաշալի և զյաղթող (ծնունդ) քո օրհնեմք և փառաւորեմք:

Մարդասէր Տէր, վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի, և վասն խաչի քոյ պատուականի ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

Այնպէս առաքն և յաջնայն գօնս պերճառնակեանս քահանայապետն առաքն, ըստ յայգնաբանեան, ըստ գալոստեան, ըստ գնօրհնաբանեան,

ըէ խաչելոըէան, ըէ ըաղման, ըէ յարուըէան, ըէ համբարձման, ըէ գալստեան հոգւոյն սրբոյ, ըէ պայծառակերպուըէան, և ըէ ի ծոնս խաչի և եկեղեցոյ:

ՄԱՂԹԱՆՔ Ի ՏՕՆՍ ՍՐԲՈՑ

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և ՅովՀաննու մկրտչին, սրբոյն Ստեփանոսի նախավկային և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, յիշատակաւ և աղօթիւք սրբոց այս անուն, որոց այսօր է յիշատակ, և վանն խաչի քոյ պատուականի Տէր ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ:

ՄԱՂԹԱՆՔ ՊԱՀՈՑ

Երանեալքն:

Դկ· Քրիստոս է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զայս· Աստուած հօր իմոյ, և բարձր արարիչ զայս: Մարդասէր Տէր, վանն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի, և վանն խաչի քոյ պատուականի ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ:

Երկինք պատմեն:

Ա.Զ· Տուք փառս Աստուծոյ, տուք օրհնութիւն մարդասիրին՝ թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ: Մարդասէր Տէր, և այլն:

Մի՛ նախանձիլքն:

Ա.Կ· Դու ես Տէր մեր, դու ես Քրիստոս փրկիչ մեր· զքեզ օրհնեն անձինք մեր: Մարդասէր Տէր, և այլն:

Ողորմեայն:

Բ.Զ· Բարձրացաւ հղկիւր իմ յԱստուած փրկիչ իմ, հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր Տէրամբ և հաւատով: Մարդասէր Տէր, և այլն:

Խրիմն:

Բ.Կ· Խաղաղութեանց տուող Քրիստոս, զխաղաղութիւն և զողորմութիւն քո պարգեւեա մեզ: Մարդասէր Տէր, և այլն:

Տէր ապաւէնն

Գ.Զ· Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան Տէր Յիսուս, փրկեա և փարատեցո զցասս անձին իմոյ: Մարդասէր Տէր, և այլն:

Խոստովանին։

ԴԿ. Եկեսցեն աղօթք մեր ի տաճար սուրբ քո, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս մեր։ Մարդասէր Տէր, և այլն։

Ի նեղութեանն։

ԴՉ. Լուր մեզ Տէր, լուր մեզ աստուածային ողորմութեամբ, և գթութեամբ քով խնայեա յարարածս քո։ Մարդասէր Տէր, և այլն։

Քարոզ երանելոյ և իբրև կանոնաց։

ԴԿ. ԲԿ.

Վասն ի՞նչ վերջին ասաց խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցո՛ւք։

Տէր ողորմեա՛ր ո՞ւմ ասէ։ զոր ի՞մաս ունի զորը ի մահ։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց զՏէր աղաչեսցուք։

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց զՏէր աղաչեսցուք։

Վասն Թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ զՏէր աղաչեսցուք։

Վասն զի մի ընդ խոստանս զանխիղճիմք յաւուրն պատասխանատուութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի քրիստոս ննջեցին զՏէր աղաչեսցուք։

Ցի՞չեա՛ տէր ի՞մ ու ո՞ւմ ասէ։ ցաղք։ զոր՞ի՞մահ։

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք։

Ցանձնին մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քէզ Տեա՛ւ։ ընդ քո յա՛ւ։ ժա՛ նձն ի՞ղիցո՛ւք։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ո՞ղորմեա՛. Տէր ո՞ղորմեա՛. Տէր ասէ՝ ո՞ղորմեա՛։ զոր՞ի՞մահ։

ԱՂՕՔՔ

Տէր տուընջեան և գոյացուցիչ գիշերոյ, որ արարեր զտիւ ի զբօսանս բարեգործութեան ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեանս մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քումմ սրբոյ: Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յամրեցեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ի նոյն պաշտօն քո կանխել միշտ: Եւ նովին կանոնիւս անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Ձքեզ՝ որ յամենայնի զթած և մարդասէր Տէրդ ես, աղաչեմք հանապազ, զի զօրացուցես զմեզ օր ըստ օրէ կալ ի կարգի կրօնաւորութեան մերում. թեթևացո Տէր զբաղդըդ լուծ քո՝ զոր եդեր ի վերայ մեր. զի կարասցուք կալ ի պատուիրանի քումմ, և զհաճոյն առնել առաջի քոյ յամենայն ժամ ի տուէ և ի գիշերի: Հրեշտակային երգակցութեամբ զքեզ օրհնել, զքեզ գովել, քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր սէրութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ երկինք պատմեն և Տէր ապաւէն կանանցն:

ԱՂ. ԳՁ.

Վասն ի գիշերիս և ի տուընջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբան Տեառն զՏէր աղաչեսցո՛ւք:

Տէր ողորմեա՛:

Վասն չանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել զՏէր աղաչեսցուք:

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ աստենին Քրիստոսի զՏէր աղաչեսցուք:

Վասն առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստ կենացն անվախճանից զՏէր աղաչեսցուք:

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն, և երկնից արքայութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զՏէր աղաչեսցուք։

Ցիշեա՛ Տէ՛ր զհոգիսն ծառայից քոց։ Ամէն։

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք։

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ — Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա՛։ Տէր ո՛ղորմեա՛։ Տէր ո՛ղորմեա՛։

Ա Ղ Օ Թ Ք

Ի գիշերի և ի տուընջեան և յամենայն ժամու զքեզ աղաչեմք, և ի քէն խնդրեմք մարդասէր Տէր։ Լսո մեզ Աստուած փրկիչ մեր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս մեր. զի ի ունայն լիցին վաստակք ծառայից քոց։ Այլ համարեա զաշխատութիւնս մեր ի գործ արդարութեան և ի պատուղ աստուածպաշտութեան։ Ընկալ Տէր զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հասո մեզ զողորմութիւն քո առատապէս։ Ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ։ Զօրացո զմեզ Տէր՝ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ։ Պահեա զմեզ որպէս բիբ ականի, և արա առ մեզ նշան բարի ի գովեստ և ի փառաբանութիւն անունիդ քում սրբոյ։ Զի ի քո փառս կատարի ամենայն արարածոց մշանջենաւոր փառաբանութիւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հովիւ քաջ, հովիւ բարի և յաւիտենական, նայեա և այց արա բանաւոր հօտի քոյ, զոր ժողովեցեր առ քեզ զթութեամբ քո։ Զի քո առաջի կամք Տէր, և առ ի քէն ողորմութեանցդ և զթութեանցդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա, զամենեսեան խնամանացո, զամենեսեան լուսաւորեա, ամենեցուն պարգեւեա զերկնից արքայութիւնդ։ Վասն զի դու ես Տէր կենաց, և Աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գ.ոլոս. Մի նախանձիր և խաստովան կանոնացն։

Ա.Կ· Գ.Կ.

Վասն ուղղելոյ զ[illegible] զնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Տէր ո[illegible] զրկմեաւ։

Վասն երեցոյ ի մինչ գամենայն խորհուրդս չարին զՏէր աղաչեսցուք։

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս զՏէր աղաչեսցուք։

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր ձեռին իւրոյ զՏէր աղաչեսցուք։

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք զՏէր աղաչեսցուք։

Վասն հոգւոցն հանգուցելոյ սրբ ճշմարիտ և ուղիղ հաւատով ի փրկառս ննջեցին զՏէր աղաչեսցուք։

Յե[illegible]։ Տէր ե՛ւ ո[illegible]։

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս։

Ջանձինս մեր և զմիմեանս։ Ողորմեաց մեզ Տէր։

Ա.Ղ.Օ.Թ.Ք.

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամենայն արարածոց՝ երևելեաց և աներևութից. առ քեզ կարդամք յամենայն ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն սիրէ։ Ընդունելո՛վ մեզ երկիւղիս ի պաշտօն քո կանխել հանապազ. սիրել զքեզ ի բոլոր սրտէ, ի բովանդակ մտաց, և յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո. համբառնալ առ քեզ ըզձեռս մեր ի սրբութիւն առանց բարկութեան և երկմտութեան, և գոհանալ ի քէն զչնորհս և զողորմութիւն, և զառաքինաբեր գործոց յաջողութիւն։ Վասն զի դու ևս Տէր կենաց և Աստուած ողորմութեանց. և քեզ վայելեն փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Զամ ամենազօր և յաղթող տէրութեանդ կրկնի ամենայն ծունր յերկրպագութիւն, և փառաւորի յամենեցունց

թագաւորութիւն քո։ Եւ եղիցի կերկրպագութիւնս մեր, և ուսս մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան։ Վասն զի քո ես Աստուած խաղաղութեան՝ որ բարձեր զթշնամութիւն ի միջոյ և արարեր խաղաղութիւն կերկինս և կերկրի։ Հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ։ Որում և զմեզ մեծի չնորհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Աստուած մեր և Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քարոզ Ողորմիա Ա ի նեղութեան կանանցն։

ԲՋ. ԴՋ.

Վասըն գլուխն ցաւոյ։ Տէր ողորմեա։ Քրիստոս ողորմեա։ Տէր ողորմեա։ Հայր մեր չնորհս և զօրութիւն ի բարեբար Տեառնէ մերմէ ըզՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։ Քրիստոս ողորմեա։ Տէր ողորմեա։ Հայր մեր ամէնսն ըզՏէր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան և յօրոգայթից սատանայի զՏէր աղաչեսցուք։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց զՏէր աղաչեսցուք։

Վասն որք ի լերինս՝ յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր զՏէր աղաչեսցուք։

Վասն որք սազմոսիք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց զՏէր աղաչեսցուք։

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զՏէր աղաչեսցուք։

Չի ոչ գոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են:

Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա, և լեզուաք իւրեանց նենգաւորք եղեն:

Դատեա զնոսա Աստուած, զի անկցին ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամպարշտութեան նոցա մերժեա զնոսա՝ զի դառնացուցին զքեզ:

Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ի քեզ, յաւիտեան ցնծացեն, և բնակեսցես դու ի նոսա:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քո, զի օրհնեսցես դու զարդարն. Տէր, որպէս զինու հաճութեամբ քո պսակեցեր զմեզ:

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս:

Հայեաց Տէր ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՝ որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ:

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում,

Եղիցին ականջք քո ի լսել ձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես, Տէր, Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր, համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, ի նմանէ է փըր-
կութիւն. և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց
նորա։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի
ես ի քեզ Տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ Տէր
համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ա-
պաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել կամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեացէ ինձ յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս արդարու-
թեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և
կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ
քո եմ։

Աստուած յանուան քումմ կեցո զիս, և ի զօրութեան
քումմ իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բե-
րանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն
իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել դշար ի թշնամիս իմ, ճշմարտու-
թեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոս-
տովան եղէց անուան քումմ Տէր, զի բարի է։

Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թըշ-
նամիս իմ եառես աչն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Այժմ և միշտ։

Երէ Տեառն ոչ էրնէի վասն էրիտրէի մեռոյ մարդոյ-
ցըն, և վասն էրկնայնոց ըզրաց։

Ա՞րարչական բանի՞ն հրամա՞ն ի յե՛րկրորդումն աւուր
սկզբան. ընդէ՞ր ոչ ասացաւ ի ներքոյ ընդ ամենայն
թեամբ պարո՛ւնակեաց. ա՞րդ զաչխարհս հոգեղինաց
անջըրպետեաց ի հրեղինայ. ընդ նմա՞ն որդիք լու-
սոյ տուք ծրշնութիւն երբեմն լո՞ւսոյն։

Բազմաչեայ հոյլք քրմվրէից երիքսըրբեանըդ սրմվբէից. աթոռք անե՛ղ աստուածծութեանըն հանճագոյ երբրդութեանն. բարեխօս լերո՛ւք առ Տէր վասըն մանկանց եկեղեցւոյ. ‖ ընդ նոսի՛ն որդիք լուսոյ տուք ծնո՛ւթիւն երրեակ լո՛՛ւսո՛յն։

Գծրագոյն իշխանութի՛ւնք և անեփոխ միշտ տէրութի՛ւնք. ա՛նյապթելի՛ սուրբ գծրութի՛ւնք ի յաւրաչին վառաստրութի՛ւն. ազաչեցէ՛ք զՏէրն ողորմած անառն չա՛ռնել զգործըս ձեռացն. ընդ նոսի՛ն։

Գաթաք անմարմնոցըն պերճութեա՛նց հրեշտականպետըք բարձրութեանց. հօգիք հրեղե՛նք և սպասաւորըք հրե՛շտակաց գինուորութի՛ւնք. մաղթեցէ՛ք զՏէրըն տերա՛նց վասըն մարդկան երկրաւորաց. ընդ նոսի՛ն։

Ե՛րինաւորաց գասուց վերնոց օրհնաբա՛նից քոց գըլաւրթնոց. քաղցրասցի՛ն առ քեզ գըթած որ վանըզ ձեր ձայն մաղթանաց. գօրա և տացե՛ս մեզ պահապա՛ն յայսըմ հեռուէ մինչ ի վախճան. ընդ նոսի՛ն։

Ջօրութեանց և տէրութեա՛նց իշխանութեանց և պերճութեանց. եւ ամենայն անուա՛նելոց որ ի յերկինս պաղատանըք. ընկալ Քրիստոս ուրա՛խութեամբ զմեզ յօր մա՛հու և յարութեան. ընդ նոսին օրհնել Հոգւո՛վ ըգբե՛զ ընդ Հօր փառաւո՛՛՛

Ը՞նդ ծառոց երկրի զգալեաց տընկեանց եւ զառնկս խմո՛նալեանց. զհնդեզ մեղացըն ցածուցեա՛լ զգաստ առ դա՛րոց բազմացուցեալ. յօրոց և մեծն ի ծնո՛ւնդս կա՛նանց մխինդր չնո՛րհաց և ծրինաց. տո՛ւք օրհնութի՛ւն:

Թաղաւորի՛ն երկնից զինուո՛ր արքայո՛ւթեանն աւետաւո՛ր. խընդրեա զընե՛լ ելս ի՛ սըրտի՛ առ ի հո՛վտէս պըրտմականէ. յո՛խտեալ տեղի՛ն տէրո՛ւնական ի խնամացեալն որդւո՛ց մարդկան. տո՛ւք օրհնութի՛ւն:

Ժառանգի՛ն Հո՛ր ապտաւո՛ր և յարգա՛նդէ երկըրպագո՛ղ. կա՛րապետ և մըկըրտի՛չ այնմ նո՛ր մեղաց մերո՛ց քաւի՛չ. լո՛ր բարեխո՛ս առ նո՛ն զբթած ջընջի՛լ ըզգիր մեր յա՛նցեանց. տո՛ւք օրհնութի՛ւն:

Ի՞ Հօրէ՛ լոյս ծա՛գեցար մեռանա՛լ բնո՛ւթեանս կենդանա՛նարթ. ա՛ռաքեցե՛ր յառա՛ջընթաց սուրբ զՅովհա՛ննէս քարո՛զ կենաց. տո՛ւր հայցմանըն ամե՛նակալ ըզպաղատանըս մեր ընկալ. տո՛ւք օրհնութի՛ւն:

Լո՛ւսաչուա՛ղ յերկինս ելի՛ն հոգանո՛ւթեամբ սուրբ հրեշտակի՛ն. աղաչանացո՛ ըզմեզ նորի՛ն նեղ և՛ ա՛նձուկ ձանձապարհի՛ն. զի՛ հետեւող գոլով նորի՛ն Հօր քո՛ վերին օթեվանին. և՛ երգեցո՛ւք ընդ երջանկացն որդւո՛ց լո՛ւսոյ քեզ եւ՛ մ՛ր վա՛՛՛՛ռա՛՛՛՛ց:

Եւէ վան չուրուրդ ասուր արուզուլեան, և վան չուրուրդ դարուն, և վան ասեղաց Աստուածածնին:

Խա՛ւարն անգո՛յ և սկըզբնաժի՛ն հալածեցա՛ւ յօրն ա՛ռաջին. լո՛յսն այն պայծա՛ռ յօր չո՛րրորդի՛ն. յարե՛ գա՛կան նիւթ հա՛ւաքեալ. լո՛ւսինն ի տի՛պ լուսոյ առեղծեա՛լ և աստե՛ղաց պարք յօրինեալ. ո՛րով օրհնի՛ առեղծո՛ղն էի՛ց ի բանա՛ւոր պաշտօնե՛ի՛ից:

Ծածկեալ խորհո՛ւրդըն ծա՛նուցա՛ւ չորրո՛րդ դա՛րուն հա՛ճակաւ. ի՛ չորրորդ օ՛ր դարձեա՛լ հրեշտակի՛ն ետ զա՛-

ւեմխաբն կո՛ւսական. Թէ՞ լոյն որ ոչ բուա՛նեդակի՛ ի քէ՛ն մարմնով պարո՛ւնակի՛. ‖ յո՛ր օրհնեցա՛յք ազգ մերկրա-ծի՛նք տուք ո՛րհնո՛ւթիւն պըտղո՛յ կո՛ւսին՝ն։

Կո՛ւսին նախնո՛յ մօրն Ե՛ւայի՛ յորմէ՛ Ա՛զգամըն հի՛ն պարտի՛. բարձան անէ՛ծքըն տըրտմակա՛ն քո սո՛ւրբ ծնը՛նդեամբ կոյս Մարիամ. ազատեա զքո մխածի՛ն Թո-ղո՛ւլ ըզմեզս որպո՛ւէս նոքի՛ն. յո՛ր օրհնեցա՛յք։

Հաւրան ընծայեա՛լ յերկրէ՛ յերկի՛նս յոր հանբարո՛ւնամբ առ քե՛զ զհոգի՛ս. յո՛ր լըսելո՛յ քո զա՛ւետի՛ս խընդրեա լի՛նել մեզ լսելիս. զձայն աւետեա՛ց քո մխածնէ՛ն եթէ՛ ե՛կայք օրհնեա՛լք Հօր իմ. յո՛ր օրհնեցա՛յք։

Զայնիւ առ քե՛զ Տէր պա՛զատի՛մք և ա՛ռա՛ջի քո ա՛ն-կանի՛մք. ազատեանո՛ք Աստուածածնի՛ն չիջո՛ւս ի՛ միջ ըզ-բո՛ց հնոցի՛ն. տո՛ւր արտասուա՛ւք զմեզըս ջընջե՛լ և վերըս-տին զմեզ նո՛րոգե՛լ. յո՛ր օրհնեցա՛յք։

Ղեկաւո՛ր հարտա՛րապետ անցո՛ւր ընդ ծով կենցաղո՛ս անհե՛ա. վերթաբերեա ընդ Պետրոսի՛ զմեզ ի յա՛յլեայ մե-ղաց ծովէ՛ս. պա՛զատանո՛ք զերա՛զուն-ի՛ն անապա՛կան քում ծո՛ւնդին. յո՛ր օրհնեցա՛յք։

Երբ ված հինգերորդէ տուր պրըչո՛ւնեանն, և ված հինգերորդէ դարոն, և է տուբը Աստեղան Բլեսոսէ։

Ճաշատպայթեա՛լ բանն ի՛ Հօրէ՛ յոր հի՛նգհերորդըն հրա՛-մայէ. բըղխեալ ի ջրոց սեռք կայտառաց և թեւաւորս օդակառաց. ինք ի զարհո՛ւն հինգ մըկըրտի՛ն յամեն ե՛ւ ի ծովն խարհե՛լ հի՛ն. ‖ տա՛ւուք հրաշի՛ք նեղըմբռնո-ղի՛ն պատե՛ւ եւ փառք անե՛ղ բա՛՛նի՛՛ն։

Մաքրապե՛ս օրի՛նակի՛ առաքելոյըն Քրիստոսի. ո՛րք ի ծովէ՛ն տիրե՛րակա՛ն ի յերկինս յիներնա՛յինսըն կո՛չեցան. ա՛ն-ցին ընդ ծո՛վ աշխարհակա՛ն և ի՛ Հո՛գին մըկըրտեցա՛ն. տա՛ւուք հրաշի՛ք։

Յո՞րպիսութի՞ւնն անզրա՞կան ի հանրա՞ճնիան անա՞պական. զձե՞զ առաքեա՞ց Հայրբ՞ն փառա՞ց հրաւի՞ր բա՞ռուք սրբամանկանաց. սո՞ւրբ հարսանեա՞ցն այն հա՞յցեցէ՞ք ընդ ձե՞զ լի՞նել մեզ պա՞րակի՞ց. տա՞ցուք հրաչի՞ց:

Ն՞որագո՞ղք սիեզերա՞ց ի նախահօրըն յա՞նցանա՞ց. նո՞բ պիեառո՞ւր զարդա՞րեցէ՞ք զեկեղեցիս հեթա՞նոսաց. պա՞ղատեցէ՞ք առ նո՞ն զբիա՞ծ զմեզ նո՞րոգել ի հնո՞ յմեղա՞ց. տա՞ցուք հրաչի՞ց:

Ե՞ինազ էի՞ցրս համայնի՞ց արտաքա՞ծոց ի յա՞նեզոյի՞ց. նո՞յն չինեցե՞ր զեկեղեցի՞ վէմդ ի վե՞րայ վիմի՞ն բանի՞. ընդ եղեալ հիմո՞ւնս ի նո՞ր Սիոնի ըզմե՞զ յօ՞գեա չինամբք ի նո՞ն. տա՞ցուք հրաչի՞ց:

Ո՞րպիսացա՞ւ գնացի՞ւք զեառ՞ց քաղա՞ք ի՞ քէն չինեալ Յիսո՞ւս. յո՞րմէ վրա՞կք չնորհա՞ց հոսե՞ն զոգի՞ս մարդկան առ՞գանե՞ն. աՀրբս և մեզ ի ջրո՞յն կենա՞ց հայցմամբ Հո՞գւոյն մատրո՞ւակաց. զի՞ բանաւո՞ր երկի՞րըս քո՞ պըտղաբերի ի՞ փա՞ռս՝՝՝ըս քո՞ր:

Եւէ վասն վէցերորդի աւուր արարչութիանն, և վասն վէցերորդի գործոյն, և ի խաչելութիանն Քրիստոսի:

Զհա՞նդուրժեալ բնութիամբ բարւո՞յն ունի՞լ վհա՞յն պանճա՞ռ բարի՞ն. այլ ատելոյեալ զմա՞րդ յիւր պա՞տկերի՞ն ի վի՞ժեբորդն առա՞ւօտին. եւ ի յերրո՞րդ ժամ զկո՞ղոտիչն ի յօգնա՞կութիւն եա հո՞ղոտիչին. զո՞րս ի դրախտի՞ն եղ վայելել բայց ի պըտղոյն մահա՞ւ ա՞՛՛՛րգել՛՛՛:

Պա՞պանձեալ առ գառոզի՞ն յետ յա՞նցա՞նացն Ադա՞մն հի՞ն. զկի՞նըն պատճա՞ռ եղեալ խաբմանն և կի՞նըն զոձըն գա՞ւառան. ո՞րով երկի՞ր այս ա՞նիծաւ վուշ և՛ տա՞տասակ ի սա՞ր բուսա՞ւ. վըճի՞ռ մահո՞ւ մարդո՞ն տըւա՞ւ գառնալ ի՞ հող ուստի՞ առե՞՛՛՛ղծա՞՛՛՛ւ:

Զե՞նջել փութայր Հայրե՛ն փառաց ըզգե՛ր պարտեաց մեր յանցանաց. օրով գթացաւ Որդի՛ն զբթած ի վեց դարուն զմարմի՛ն մեզաց. Հօր հաճութեամբ ի մահ խաչի՛ն եկը՛ն կամաւ ի յե՛րբաթին. գաւազն գենաւ ի հի՛ն զաւակի՛ն փոխան գառանցն օրի՛նակ կի՛ն։

Ո՞հիւ լուսոյ պատուի՛րանի՛ն արդարութեան ճանապարհի՛ն. բո՛ր ձրանալով քո ի՛ խաչի՛ն բարձրացո՛ւցեր զմեզ ի՛ յերկի՛նս. քո՛ անպատում խոնարհութեամբդ և կամաւոր խաչելութեամբն. ‖ հաշտեաց ընդ մե՛զ Տէր զբթութեամբ և թող ըզմեզս ողորմութեամբ։

Սո՛կալի՛ զ սերմվրէ՛ից և անհաւորըզ քրմվրէ՛ից. խո՛նարհեցար ի չարչարա՛նս չարչարելի բնութեամբ մարդկան. ի՛ խաչի՛ն զմեզը՛ սպանե՛ր և զդատաւո՛րիք մահո՛ւ լուծե՛ր. հաշտեաց։

Վ՛ՀՀայո՛ց բնութեանց էից և ա՛րարիչըզ բո՛լորից. յո՛րժամ ծագե՛ս զխաչի՛դ նըշանն ի գալո՛ստեան քո մի՛ւսանգամ. զե՛րկըրպագո՛ւս այժմ հաւատո՛վ լուսաւորեա նորի՛ն լուսո՛վ. զի՛ համաճա՛յն խաչազգեցի՛ն ըզքե՛զ ա՛րհնեմք յաւի՛տե՛ան՝՝՝ր՛նի՛ց։

Եւէ՛ վան եօ՛ննեբոըդէ տոտոր ապաբչուա՛ննան, և վան եօ՛ննեբոըդէ դաբոտո՛ն, և է խոբհոտոբդ հանէ՛պոննան։

Տէ՛րն յետ առեղծմա՛ն արարածո՛ց հանգեաւ յեօ՛թն օրն ի՛ գործո՛ց. այն որ հանգի՛ստ աշխատելո՛ց և կամքը՛ն գործ է՛ եղելոց. ա՛ստի և մե՛զ յայս հանդստեան՛ն հետ հանդըստեամբըն չարաթո՛ն. թէ՛ աստ գործե՛լ զգործ Աստուծո՛յ անդ է՛ հա՛նգչել ընդ Աստո՛ւծո՛յ։

Բո՛բունարա՛ր վարդապետո՛մք յօրի՛նակէ Տեառը՛ն խրատո՛մք. ո՛ր ի յերկրո՛րդ արարչութեա՛ն յետ կատարման անօրէ՛նութեանն. յեօ՛թնեբո՛րդ օր հանգըս-

տեան՝ իջեալ մարմնով ի գերեզման. զկապեալ հոգի՞սն վերածեաց զանանց համեմատըն պատրաստեա՞ց։

Ցօղդ որ ի քոյդ կողէ ցօղեալ բժժըն չկենացե ըզհան-դուցեալսն. իջցե ի հող մահու նոցին և բուսուցե յօրըն վերջին. կէնդանարար ձայնիւըդ քո կոչեա զնոսա ի կեանըս քո. և՛ դասեցո ընդ արդարոյն երգել քեզ փառս ընդ զբա՞րթնո՞ղն։

Խփեծեալ զրնութի՞նս կենաց ունող դարձոյց յանդանդն ի մահու հող. թող անմահի՞դ մեռելութիւն չնորհեաց դարձեալ զանմահութիւն. զնա են ընդ քեզ թագեալ մահուամբ աւազանին մկրըտութեամբ. յորս ընդ քե՞զ քոյն՞ն փառօք արե՞գ կան նըման՞ն լո՞ւսո՞վ։

Փայլեն արդարքն յարքայութեանն և ճըգնաւորքն ի հանդըստեանն. մարտիրոսքըն պըսակին և կուսանացս լապտերք վառին. զո՞րեցո՞ Տէր ընդ նոսին որ զքե՞զ Աստուած խոստո՞վանեին. արդարութեամբ մի զահեացին այլ գըթութեամբ քո քաւե՞ցո՞ւն։

Ա՞ն անպատում խոնարհութեամբդ որ թանձեցար մեռելութեամբ. և՛ յարուցե՞ր յորդւոյ մարդկան որք հաւատով ի քեզ անկան. յորս և զմե՞զ արդարութեամբ և ընդունելութեան ողորմութեամբ. զի՞ կենդանեացըս բերա-նե՞վ տացին քեզ փառս ընդ Հո՞ր Հո՞ւ՞ր։

ՄԱՂԹԱՆՔ Ի ՏՕՆԻ ԱՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ

Քրիստոս Աստուած մեր, վասն խաչի քո պատուական պիսպասութիւն քո տուր մեզ Տէր։

Վասն սրբուհւոյ Աստուածածնին և Յովհաննու Կարապետին և սրբոյն Առաքեալսն նախավկային վիսպասութիւն քո տուր մեզ Տէր։

Վասն սրբոց քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց և երկնային զօրացն վիսպասութիւն քո տուր մեզ Տէր։

Վասն սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոցն այս անուն, որոց այսօր է յիշատակ, զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն քո պարգեւեա մեզ մարդասէր Տէր:

ՔԱՐՈԶ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ԱՄՆՆԱՑՆ ՍՐԲՈՑ

Սուրբ հղնաւորքն ազաչեսցուք զՏէր, որք զչարն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

ԱՂՕԹՔ Ի ՏՕՆԻ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի զվկայսն քո այս անուն Քրիստոս Աստուած մեր, և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չարչարանաց քոց, արդ բարեխօս առ քեզ ունելիք որք աստ և ընդ ամենայն տիեզերս սուրբք իցեն. որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ խաղաղացուսցես զկենցաղավարութիւնս մեր, փրկելով զմեզ յերեւելի և յաներեւոյթ թշնամեացն: Շնորհեա մեզ Տէր ըստ օրինակի նոցա կեալ, և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ ի յոյս կենացն յաւիտենից: Զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանն լուսոյ, և ժառանգել զպատրաստեալսն ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ: Եւ ընդ նոսին զոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ:

ԱՂՕԹՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ, ՃԳՆԱԻՈՐԱՑ ԵՒ ԿՈՒՍԱՆԱՑ

Պսակիչ սրբոց Քրիստոս, որ պսակես զսուրբս քո, և առնես զկամս երկիւղածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութեամբ յարտասուս քո, լուր մեզ յերկնից ի սրբուիւնէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ազաչանօք ամենայն սրբոց քոց և որոց այսօր է յիշատակ: Լուր մեզ Տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեզս մեր: Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ:

Ի Սբ[illegible] վրդ[illegible] ասացեալ ։

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողսն մեր, զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զխոստովանողս, զապաշխարողս, զդերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարաչարս, զբարերարս, զթշնամիս, զաւելիս, և որք պատուիրեցին մեզ Հաւատով ։

Յիշեա Տէր և ողորմեա ։

Բարերար և բազումողորմ Աստուած քո անմոռաց գիտութեամբդ և անբաւ մարդասիրութեամբդ՝ յիշեա զաւետեանն հաւատացեալս ի քեզ, և ողորմեա ամենեցուն. օգնեա և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ի փորձութենէ ։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի, այժմ և միշտ և ։

ՄԱՂԹԱՆՔ ՊԱՏՈՑ ՅԵՏ ԱՐԱՐՋԱԿԱՆԻՆ

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէր Յիսուս. յորժամ երևիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս, յայնժամ մեք մի՛ ամաչեցուք յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեցուք ընդ ամէն քումմէ, որպէս որդիս լուսոյ և որդիս տուընչեան ։

ՔԱՐՈԶ

Աղաչեցուք զամենակալն Աստուած, զի պահպանեցէ զժողովուրդս իւր ընդ Հովանեաւ սուրբ և պատուական խաչին իւրով ի խաղաղութեան ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա ։

ԱՂՕԹՔ ՊԱՏՈՑ

Օգնեա մեզ Տէր, օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր վասն մեծի փառացդ անուան քո. Տէր փրկեա զմեզ, և քաւեա զմեղս մեր վասն անուան քո սրբոյ ։ Պարապեալ պահեա զաս ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո, ընդ Հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քով ի խաղաղութեան ։ Փրկեա յերկնելի և յանեղբևոյթ թշնամւոյն ։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և ։

Յիշեա Տէր զպաշտօնեայս ։ Բարերար և բազումողորմ Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ։ Հայր մեր որ ։

ԿԱՐԳԱԽՕՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ԱՐԵԻԱԳԱԼԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԷՄՍ ՀՈԳԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ
ԱՅԼ ԵՒ Ի ԴԷՄՍ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԵՐԵՒՄԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

Ի նա օրհնեցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանեացեն նմա։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառաք նորա ամենայն երկիր. եղիցի, եղիցի՝

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Այժմ և միշտ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր ապաչեցուք ընկալ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։

ՆՐԳ ԱՐՆԻԱԳԱԼԻՆ

Դէ. Յարեւելից՞ ո՞վ ինչ լսեաս. լո՛ւր հիւսիսոյ եւ լո՛ւր հարաւոյ. ամենայն ազգ եւ ազի՛նք. յօրհնութիւնն նոր օրհնեցէ՛ք զաւրութի՛ւն աւրաւանո՞ց նր. ծագեա՛ց ընկոյց արեգակն այսօ՞ր յաւիտեան։

Եկեղեցի՛ս աւրհնե՛ց. փառաբանի՛չք ամենայնի՛ւր եկրնդութեանն. յանանցանե՛ս լո՛ւսոյ. զանազա՞ն խաղաղութեանն փրիսաւն գնվեցէ՛ք ընդ Հօր եւ Հո՛գւոյն նր. ծագեա՛ց ընկոյց զինուածեա՞ն լուսո՛յ ի՞ւմ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարեւելից յարեւմուտս մատեսանէ՛ք Սիոնի՛. օրհնեցէ՛ք միշտ անդադա՛ր զծագողը՝ն լուսոյ։

Եկեղեցէ՛ք արդարո՛ց եւ փառաբանի՛չք. բա՛րեբանեցէ՛ք ո՛ր եմ զինուածոյն լուսոյ։

ՔԱՐՈԶ

Յարևելից մինչև ի մուտս արևու ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան, ուր և կարդան զանուն Տեառն սբր-բութեամբ, Տէր ողորմեացի : Ուխտիւք զԱստուած աղաչեսցուք, զի նա փրկեսցէ զմեզ ի մեղաց և ի ցանկութենէ աչխարհի. ընկալցի զուխտս և զինդրուածս սրտից մերոց, և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր : Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա :

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք :

Չհրեշտակ խաղաղ : Չքաւութիւն : Չսրբոյ խաչին : Եւ ևս միտան : Չանձինս մեր : Ողորմեայ մեզ :

ԱՂՕԹՔ

Յարևելից մինչև ի մուտս արևու օրհնեալ ես Տէր, վասն զի թագաւոր քաղցր ես, և անուն քո աչխղ ընդ ամենայն տիեզերս : Քաղցրացին սաղմոսերգութիւնք մեր առաջի քո. ելցեն իրաւունք յարդարութենէ քումմէ ի տկարութիւնս մեր, և փառաւորեսցի ամենասուրբ անուն քո : Եւ մեք արժանի եղիցուք կալ ի պատուիրանի քում, և քեզ երգել զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Աստուած մշանչենաւոր, Աստուած յաւիտենական, որ ի սաղմին աչխարհս լոյս ծագեցար, և լուսաւորեցեր զմեզ ի խաւարային մեղաց մերոց, որ վասն մեր ի չափա-տրութիւն եկիր անչափ Աստուած, և հեղեալ ծաւալե-ցեր զինարհս Հոգւոյդ սրբոյ յարարածս քո, այժմ և յաւիտեանս ժամանակաց բարերանեալ ես, ամենամեծդ Աստուած, ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ :

ՍԱՂՄՈՍ Ղ

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանեարուք զի նա է Տէր Աստուած մեր :

Նա արար զմեզ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք և խաչն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Ա. յժմ և միշտ։

ԵՐԳ

Դպ. Ձընգնաւո՛ր ըք Աստուա՛ծոյ. եւ ժառանգաւորք երկնի՛ց աքրքայո՛ւթեանն. ա՛ռ ւ՛րմէ ը. ըք փափա՛ղակեալքդ զանցաւորս առէ՛ք զա՛նանց ընդ բա՛րւոյ մ՛ւնան. ‖ բարեխո՛սեցէ՛ք սո՛ւրբ Տէր վասն մա՛ռնալոց էակե՛ցս։

Նահատա՛կք պա՛տճա՛ռ լինք. եւ սիրեցեա՛լք ի յի՛րհնաւոր Հօ՛րն. ա՛ռ ւ՛րմէ ը. ըք մըկըրտա՛ւ ցա՛յք ընդ Քրիստոսի՛ սրեցա՛ք ձե՛րով ի մա՛հ խա՛չին. բարեխո՛սեք։

Մարտիրո՛ս ա՛ք ցա՛նկալի՛ք. եւ օ՛թեվա՛նք Հո՛գւոյն ճըշմարտա՛ւթեանն. ա՛ռ ւ՛րմէ ը. ըք յաղթե՛ցէ՛ք հոգւո՛վ կարեա՛ց եւ ցա՛նկո՛ւթեան. բարեխո՛սեցէ՛ք։

Գա՛ւազի՛ք աչխա՛րհի. եւ բաղձալի՛ք վերնա՛ւոցն պեսո՛ւթեանց. ա՛ռ ւ՛րմէ ը. ըք երանելո՛ւթեան մասի՛ն հա՛ւք քան զամե՛նայն աշխարհս մա՛րդկան. բարեխո՛սեք։

Կամաւո՛ր պաշտա՛բաղք. մա՛նկամո՛ւք ոխով և կա՛տարեա՛լ իմաստա՛ւթեամբ. ա՛ռ ւ՛րմէ ը. ըք փա՛խանակ կաթին արեա՛ւք զդի՛նի՛ն զմայլե՛ցո՛ւցի՛չ. բարեխո՛սեք։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ձընգնաւո՛ր ըք ճըշմարի՛տք վի՛կայք Քրիստոսի՛. բարեխո՛սեցէ՛ք սո՛ւրբ Տէ՛ր վասն անձա՛նց մերոց։

Նահատակքդ կենդա՛նի՛ք սիրտք Քրիստոսի՛. որք չարչարեցա՛ք մարմնո՛վ վասն անուա՛նն Տեառն։

Մարտիրո՛սք ցանկալի՛ք մարդկան ըղձալի՛ք. հայցեցէք ի սո՛ւրբ Հո՛գւոյն տալ մեզ ընդարձա՛կ։

Գայլելիք վերնոց զամուց. պաճծանք աչխարհի՝. խլնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք հաճակաւ մատկանք. հայցեցէք լինել ես ու մի՞գ ձեզ պըսակ կաճկից:

ՄԱՂԹԱՆՔ

Աղաչեմք ողորմեա, Տէր բարերար աղաչեմք ողորմեա, վասն ազօթից սրբոց ճգնաւորացն աղաչեմք ողորմեա մեզ:

ՔԱՐՈԶ

Սուրբ ճգնաւորքն ազաչեցուք զՏէր, որք զչարան պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լսանելն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն, ազօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Աւետեակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

ԱՂՕՔՔ

Սուրբ ես Տէր, և ի սուրբս հանգուցեալ. և մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ և ազաչանօք ամենայն սրբոց քոց մի մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ, այլ կեցո զմեզ ազօթիւք սոցին. զի դու ես բազումողորմ Աստուած. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ:

Ցիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողսն մեր: 175:

Բարերար և բազումողորմ Աստուած, քո անմոռաց:

ՍԱՂՄՈՍ ԿԲ

Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ, քանիպատիկ ևս և մարմին իմ:

Որպէս երկիր անապատ և անջուր, ուր ոչ գոյ ի նմա ճանապարհ:

Այսպէս ի սուրբս երևեցայց քեզ, տեսանել ինձ զզօրութիւն քո և զփառս քո:

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, և շրթունք իմ գովեսցեն զքեզ:

Այսպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ, և յանուն քո համբարձից զձեռս իմ:

Որպէս ի ձարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ, շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ ։

Զի եղեր իմ օգնական. ի հովանի թևուց քոց ցնծացայց ։

Եկն ոգին քո անձն իմ, և զիս ընկալաւ աջ քո. իսկ նոքա ի նանիր խնդրեցին զանձն իմ ։

Մտցեն ի ներքոյ անդնդոց երկրի. մատնեսցին ի ձեռս սրոյ, և բաժինք աղուէսաց եղիցին ։

Թագաւոր յուսացաւ ի Տէր, գովեսցին ամենեքեան, որ երդնուն նովաւ, խցցին բերանք այնոցիկ՝ որ խօսին զանիրաւութիւն ։

Լուր Աստուած ազօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն փրկեա զանձն իմ ։

Ծածկեսցես զիս ի ժողովոյ չարաց, ի բազմութենէ ոյք գործեն զանօրէնութիւն ։

Ոյք սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, լարեցին զաղեղունս իւրեանց յիրս դառնութեան ։

Ձգել ի գաղտնիս այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք· յանկարծակի ձգեսցեն ի նոսա և մի երկիցեն ։

Ոյք զօրացուցին յանձինս իւրեանց զբանս չարութեան, խորհեցան թաքուցանել զինձ որոգայթ, և ասացին՝ ոչ տեսանէ զայս Տէր ։

Քննեցին զանօրէնութիւն, պարտասեցան ի քննել զքննութիւն ։

Մատիցէ այր ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի Աստուած ։

Նետք տղայոց եղեն վէրք նոցա, տկարացան ի նոսա լեզուք իւրեանց. և խռովեցան ամենեքեան ոյք հայէին ընդ նոսա ։

Երկեաւ ամենայն մարդ և պատմեցին զգործս Աստուծոյ, և զարարածս նորա ի միտ առին ։

Ուրախ եղիցի արդար ի Տէր, և յուսասցի ի նա. նովաւ գովեսցին ամենեքեան ոյք ուղիղ են սրտիւք ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ։ Ամէն և միշտ ։

ՆՐԳ

Լոյս ամբարիչ լուսոյ առաջինն լոյս. բնակեալ լո՛ւ ի լոյս յանմատոյց. Հայր երկնաւոր ի դասուց լսեա՛ն-

պինաձին օրհնեալ. ‖ ի ծագել լուսոյ. առաւօտուս ծագեա՛ ի հոգիս մեր. ըղլոյս քո ի մեզ ի՛մանալի:

Լոյս ի լուսոյ ծագումն արեգա՛կին արդար. անճառ բ.ո ծընո՛ւնդ հօր Որդի՛. յառա՛ջ քան զարեւ առնէն քո՛ գո՛վեսցի ընդ հօր. ի ծագել:

Լոյս ի հօրէ բըղխումն աղբիւր բա՛րութեան. հո՛գի սո՛ւրբ Աստուծոյ. մանկո՛ւնք եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզքե՛զ բարեբա՛նեն. ի ծագել:

Լոյս երրեակ ե՛ւ միւ ա՛նբաժա՛նելի. սո՛ւրբ Ե՛րբ բա՛րդութիւն. զքե՛զ ընդ երկնայնո՛ցն երկրաժինքըս մի՛շտ փառաւորե՛մք. ի ծագել:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ա՛ռնեզա՛ նեալ Աստուա՛ծ Հա՛յր ամե՛նակալ. ընկալ զաղաչա՛նըս մե՛ր քո՛ց պաշտո՛նէից:

Ի՛ հօրէ ծագումն ա՛նճառ արեգա՛կն արդար. ծաղկեա՛ ի յանձի՛նըս մե՛ր զլոյսդ ողորմութեա՛ն:

Ի՛ հօրէ բըղխանալ հո՛գի սո՛ւրբ բա՛րութեան. լուսով քո՛վ լեցո՛ ընդ մե՛զ յայսմ առաւօտուս:

Երէ՛ք անձի՛նք և մի՛ բնութիւն. մի՛ ապստա՛ծութի՛ւն. զքե՛զ խոստովանի՛մք յաւէ՛տ սո՛ւրբ երրո՛րդութիւն:

ՄԱՂԹԱՆՔ

Լուսով զբ Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք, և ի սուրբ խաչ քո փրկիչ հաւատացեալքս ապաւինեցաք: Լո՛ւր մեզ Աստուած փրկիչ մեր, տուր մեզ զխաղաղութիւն քո, և արա առ մեզ զողորմութիւն քո, մարդասէր Տէր:

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Փառաւորեսցուք զամենակալն Աստուած, որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր. ծագեսցէ և այժմ զաստ ողորմութիւն իւր ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

[1] Տես ի Ջեկուցումն, էջ ԺԶ:

Ա Ղ Օ Թ Ք

Ջառաւօտու զաղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ա-մէնակալ ամենամեծդ Աստուած ի քո անապական և յեր-կնային խոստանդ : Ծագեա առ մեզ զարդարութեան և զիմաստութեան զլոյս քո , արա զմեզ որդիս լուսոյ և որ-դիս տուընջեան, որպէս զի ի գալ աւուրս՝ երկիւղածու-թեամբ վարեսցուք զկեանս մեր, և առանց գայթակ-ղութեան կատարեսցուք : Զի դու ես օգնական և փրկիչ մեր . և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ :

Ս Ա Ղ Մ Ո Ս Ի Բ

Տէր հոլովեսցէ զիս , և ինձ ինչ ոչ պակասեսցէ :

Ի վայրի դալարազ անդ բնակեցոյց զիս , և առ ջուր հանդստեան սնոյց զիս :

Դարձոյց զանձն իմ առ իս , և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ :

Թէպէտ և գնացից ես ի միջ սուրբերաց մահու, ոչ երկնայց ի չարէ՝ զի դու Տէր ընդ իս ես :

Յուզ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս :

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդի-ման նեղչաց իմոց :

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս :

Ողորմութիւն քո Տէր գհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս :

Յոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ :

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց , Տէր, զի զքեզ ա-պաւէն ինձ արարի :

Ուս ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ :

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ :

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս արդարու-թեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ :

Ողորմութեամբ քով աւասակեսցես զթշնամիս իմ , և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ :

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն, օգնական ի վը-բաց նեղութեանց որ գտին զմեզ յոյժ :

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ի խառվել երկրէ, ի փոփոխել լերանց ի սիրտս ծովու :

Գոչեցին և խառվեցան ջուրք նոցա, խառվեցան լերինք ի զօրութենէ նորա :

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն :

Աստուած ի մէջ նոցա՝ և նոքա մի սասանեսցին. օգնեսցէ նոցա Աստուած ի վաղորդայնէ մինչև ի վաղորդայն :

Խառվեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք. եհաս ձայն իւր Բարձրեալն՝ և խառվեցաւ երկիր :

Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է մեր Աստուած Յակովբայ :

Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ սարսր զինչ առնէ և զարուեստս ի վերայ երկրի :

Եհար զպատերազմ ի ծագաց մինչև ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց և զասպարս սրեաց հրով :

Կանխեցէք և ծանեարուք զի ես եմ Աստուած. բարձր եղէց ի հեթանոսս, և բարձրացայց ի վերայ երկրի :

Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է մեր Աստուած Յակովբայ :

Աստուած յօգնել ինձ նայեա, և Տէր յընկերել ինձ փութա :

Ամաչեցին և յամօթ լիցին որք խնդրէին զանձն իմ, դարձցին յետս և ամաչեսցին որք խորհէին ինձ չար :

Դարձցին առժամայն ամաչեցեալ՝ որ ասէին ինձ վաշ վաշ :

Ցնծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան որ խնդրեն զքեզ Տէր :

Ասասցեն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, որք սիրեն զփրկութիւնս քո :

Ես աղքատ և անանկ եմ, Աստուած օգնեա ինձ. օգնական և փրկիչ իմ ես դու, Տէր իմ մի յամենար :

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան :

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

ՆՐԳ

Ձա՛նա՛ս՝ ա՛յ՝ ի՛մ պարկ. և՛ւ ճըշմարի՛տ՝ ա՛ւ թի՛ւն եա՛ կա՝ ի՛՞նչ քրի՛՞ստո՞ս. ա՛ռա՛՝ ի՛՞նչ դեա՛՞ հո՛՞գւո՞յ մե՛ռո՞յ յե՛րկրէ. եւ յի՛նչ՝ ե՛ւ յե՛րկի՞նս:

Գա՛՞ս՝ ա՛՞յ՝ ա՛՞ռն. կե՛՞նա՛՞ ի՛՞ր ա՛՞՝ ի՛՞ց մե՛՞ա՝ ի՛՞՝ ո՛՞ց Յի՛՞սո՞ւս. մա՛՞յ՞ծ ե՛ւ ըզմե՛զ առ Հա՛՞յր քո՝ ե՛ւ Հո՛՞գի՝ ե՛րգե՛՞լ մի՛՞շտ ը՛՞զ քա՛՞ռս:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ձա՛՞նապարհ բարի՛ քրի՛՞ստո՞ս ե՛ւ ճըշմարտութի՛՞ւն. ա՛ռաջնո՛՞րդ հոգւո՛՞ց մե՛՞ռո՞ց յե՛րկրէ ի՛՞ յե՛րկի՞նս:

Դուռըն կենա՛՞ց մըտի՛՞ց Յիսո՛՞ւս Ա՛՞ստուած ճըշմարի՛՞տ. մո՛՞յ՞ծ և զմեզ առ Հա՛՞յրըզ քո՛՞. Հո՛՞գւովըզ սը՛՞րբո՛՞վ:

ՄԱՂԹԱՆՔ

Տէր ուղղեա՛՞ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. Տէր ուղղեա և առաջնորդեա հոգւոց մերոց և ամենայն հաւատացելոց գնալ յարդարութեան ճանապարհն և ի կեանսդ յաւիտենից:

ՔԱՐՈԶ

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ի բարի և ի խաղաղութիւն: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

ԱՂՕԹՔ

Առաջնորդ կենաց և պարգեւիչ խաղաղութեան Քրիստոս Աստուած մեր, առաջնորդեա մեզ գնալ ի ճանապարհս քո արդարութեամբ. և խաղաղութեամբ ժամանել ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ չնորհօք ողորմութեան քո: Զի դու ես օգնական և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթ տուրբ պահոց, յորս պէտ ոչ լինի :

Օրհնեալ ես Տէր Աստուած փրկիչ մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես և ոչ երբեք թողուս ի ձեռանէ քումմէ պայծառիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ : Աղաչեմք և խնդրեմք ի քէն Տէր , ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբդ պահելով ի խաղաղութեան. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութեամբ և խնդութեամբ հասանել յիւրաքանչիւր ի բնակութիւնս ի փրկառոս Յիսուս ի Տէր մեր, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն :
Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո. եկեա :

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ԵՐԲՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՑԱՐԻ Ի ԴԷՄ�originՍ ԻՋՄԱՆ ՀՈԳԻՈՑՆ ՍՐԲՈՑ ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՆԱԽԱՄՕՐՆ ՁԱՇԱԿՄԱՆ ԵՒ ԱՋԱՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն:

ՍԱՂՄՈՍ Ը

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս քո, և յաղթեսցես ի դատին քո:

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա յիս մշտակաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ ցնծութիւն և զուարթութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զՀոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետու-
թեան քո հաստատեա զիս :

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամպարիշտք
առ քեզ դարձցին :

Փրկեա զիս յարենէ Աստուած, Աստուած փրկութեան
իմոյ . ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քումմ :

Տէր երես զշրթունս իմ բանասա, բերան իմ երգեսցէ
զօրհնութիւնս քո :

Թէ կամեցեալ էիր՝ պատարագս մատուցանէաք . բայց
դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ . զսիրտ առբր և
զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ :

Բարի արա Տէր կամօք քովք Սիովնի, և շինեսցին
պարիսպքն Երուսաղեմի :

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան,
ուխտիւ պատարագս հանցին ի սեղան քո զուարակս :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

Երէ երբորդ ժամս առաքն չինի ոչորհեալին :

Դպ. Օ՞րհնեմք ըզքե՞զ Հայր անբռնկելիդն էից էակ ի
յանդոյից . բարձեր ձեռօք նի՛ւթ իւ՛ հոգւոյ և սա՛ղծեր
մարդ ի պատկեր քո՛. ղւրւին ոտից խոնարհեցաւ զի
զպա՛տուիրան քո մոռացա՛ւ. դա՛րձեալ սաեմք սա անա՛-
տակին թէ հայր մեզոյ քեզ ի՛ յերկի՛նս :

Ե՞րկնաւորեցին անքննելի եղե՛ր մարդկան տեսանելի .
զղե՛ցար պատկեր հնդեղինի պատկերըդ Հօր անփոխելի .
երե՛ր յերրո՛րդ ժամ ի՛ խա՛չին վասն Ադամայ նախատա-
տեղծին . ըզ՞նդ աւազակին քո՛մ խա՛չակցին արժա՛նացս
ըզմե՛զ դրախտե՛ն :

Թա՛գաւոր թագաւո՛րաց առա՛ւտուրս Հոգի՛ չնորհա՛ց .
ժո՛ղովելոցն ի վերնատունն առաքե՛լոցն երկոտասա՛ն .
ի՛ հրո՛յ լեզո՛ւս երե՛ւեցար յոգիս նո՛ցա վերաներսա՛ր .
լե՛ր յանուն քո ժո՛ղովելոցս էլ ե՛ւ առ մեզ յերրո՛րդ
ժամո՛ւս :

ՄԱՂԹԱՆՔ

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր, և յօտարէն պահեա զծառայս քո մարդասէր Տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեացուք. ընկալ կեցո և ողորմեա:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ՔԱՐՈՋ ՄԵԾԻ ՊԱՀՈՑՆ

Ի Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ:

Միաբան ամենեքեան զոհացարուք զմարդասիրէն Աստուծոյ և զփրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ աղաչանաց զազգս մարդկան ի դատապարտութենէ անիծից, և եբարձ զմեզս աշխարհի ի ժամուս յայսմիկ խաչին իւրով սրբով և շնորհեաց առատապէս զպարգեւս Հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն: Խնդրեացուք հաւատով, զի զմեզ զամենեսեան արասցէ հաղորդս մեծամեծաց և աստուածային բարեացն այնոցիկ, ազօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոյ՝ որք աստ և ընդ ամենայն տիեզերս: Որպէս զի անաբասո վարուք և հշմարիտ առաքինութեամբ կացեալք ըստ կամաց նորա յայսմ աշխարհի, մասն և վիճակ ժառանգութեան ընկալցուք ընդ ամենայն սուրբս նորա՝ զբնակութիւն յաւիտենական և երկնային խորանացն. զոր խոստացաւ սիրելեաց իւրոց հշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս: Տէր մեր կեցո և ողորմեա:

Զժամն և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեացուք:

Զհրեշտակ խաղաղ: Զքաւութիւն: Զսրբոյ խաչին:
Եւ ևս միասն: Զանձինս մեր: Ողորմեաց մեզ:

ԱՂՕԹՔ

Որ ի քրովբէական և յանեպատում հանդուցեալ ես աթոռ, և այցելու ես միշտ արարածոց քոց, որ և ի ժամուս յայսմիկ հեղեր յերանելի առաքեալսն զնորհս Հոգւոյդ սրբոյ. դու Տէր յառաջակայ ժամուս, և յաւէտ մինչև ի կենցաղոյս աւարտումն տպաւորեալ միացո զմեզ

ընդ ամենայն բարեգործութեան յորդորմունս, և խոստացեալոց բարեացդ հաղորդս լինել զմեզ արժանի արա Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս Բանդ Աստուած էակից Հօր և սրբակից սուրբ Հոգւոյդ. որ և զնախաւեղծին պատուիրանազանցութիւն պղծոյն ճաշակմանն՝ նշանաւ ամենայաղթ խաչիւ քո ի ժամուս յայտմիկ ենթադրեալ ի կենդանութիւն փոխեցեր, և զանօրէնութիւնս մեր ի նմա բևեռեալ՝ կեանք անապական և նորոգումն կենաց յաւուցելոց ի քեզ խոստացար։ Որոց մասնաւորիլ և զմեզ արժանի արա Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ։

ՍԱՂՄՈՍ

Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ Տէր զօրհանապազ։ Աստուած մեր Աստուած կենարար, և նա փրկեսցէ զմեզ։ Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ Տէր զօրհանապազ, առաջնորդեսցէ մեզ Աստուած փրկիչ մեր։

ՔԱՐՈԶ

Խնդրեսցուք հաւատով ի Տեառնէ վասն ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց, որք ընդ ծով և ընդ ցամաք գնացեն. որպէս զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութեամբ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր աեղիս Տէր Աստուած մեր։ Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց և յոյս փրկութեան, որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանել ի նաւահանգիստն կենաց և փրկութեան։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

ԱՂՕՔՔ

Առաջնորդեա մեզ Տէր Աստուած մեր, և ուսո մեզ գնալ ի ճանապարհս քո արդարութեամբ, պահեա ի խաղաղութեան զկեանս մեր և զդնացս ի հաճոյս քո. ժառանգս զհոգեաւոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւոյ յաւիտենական ի կեանսդ։ Շնորհ-

հաք միածնի քո Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղև մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան: Ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողան մեր: 175:
Բարեբար և բազումողորմ Աստուած, քո անմոռաց:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեացէ:
Ի վայրի դալարոջ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան անոյց զիս:
Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:
Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու Տէր ընդ իս ես:
Յուպ քո և գաւազան, նոքա մխիթարեացեն զիս:
Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց:
Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո արբեցոյց զիս:
Ողորմութիւն քո Տէր զկեա իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:
Յոյց ինձ ճանապարհ՝ յոր գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:
Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:
Ուսո ինձ առնել կամս քո, զի դու ես Աստուած իմ:
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ:
Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ:
Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոց, զի ես ծառայ քո եմ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն: Այժմ և միշտ:

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Գոհասանելով աղաչեսցուք զբարեբար Հոգին Աստուած

և խնդրեացուք զողորմութիւն ի նմանէ, զի անցուցէ ի միջնէ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

ԱՂՕԹՔ

Խաղաղութեամբ քով, Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ, որ ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս, մխիթարեա զանձինս ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր. անցո ի միջնէ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով: Ներեա և լուր մեզ, քաւեա և թող զմեզս մեր. արժանաւորեա զհոգութեամբ պատարագել զքեզ ընդ Հօր և ընդ Որդւոյ միածնի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Հայր մեր:

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՎԵՑԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԻՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՑ, ԱՅԼ ԵԻ Ի ԴԻՄՍ ՁԱՐՁԱՐԱՆԱՑ ԵԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՈՐԴՒՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն:

ՍԱՂՄՈՍ Ծ

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան: 186:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

Դդ. Խաչարեցաւ լոյն արեւուն ի վեցերորդ ժամ աւրբաթիսն. ծանոյց թէ լոյն արարչական նըսեմնացոյց պոյն եղականն. կամեցաւ ըզքեզ մերկ ի խաչին քողոքել սուէրբաւրն ծածկելին. հէրբեա ի միջնէ ընծաներուն չըլլող դիւին միջօրէի:

Զա՞նձրութիւն մաքրա այսուն՝ չարի որ յայս ժամու պատերազմի. զօղեալ յոգւոց մեր հերքեացի քո նըշանաւ սրբոյ խաչին. ճըշմարտութեա՞ն քո ճանաչեալք զառ ի յերկինից անկեալ փայլակն. մերժեալ ի մէնջ հալածեացե՛ և զմեզ լուսով քո վառեացե՛:

Ցա՞յս միջօրեայ տուընջեան ժամուս վայելչական աչաց մարմնոյս. նեփութք զաղանեաց մի խոցեացուք ի խաւարչին որ ի ծածուկ. չարջանակի բանակեցան ըզմեզ բանակըք հրեշտականց. որք պարակից մեզ լինելով ըզքե՛զ ընդ Հօր փառաւորելո՛վ:

ՄԱՂԹԱՆՔ

Ցամենայն ժամ աղաչանք իմ այս են, ի մեղաց խոց առըր արա զիս Տէր, և յօտարէն պահեա զծառայս քո մարդասէր Տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեացուք ընկալ կեցո: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն:

ՔԱՐՈԶ ՄՆԹԻ ՊԱՀՈՑՆ

Արթուն մնօք և անդրօս խորհրդով կացցուք միաբան յաղօթս առաջի Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: Հաւատով խնդրեացուք ի նմանէ զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, որ եկեալ բանակեացէ շուրջ զմեզ և անեղկիւղ պահեացէ զմեզ յամենայն հրեղէն նետից սատանայի, որ թռչի ի տուէ, յիրաց խաւարային գնացից՝ ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր: Յորմէ զգուշութեամբ պահելով աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց, չնորհեացէ մեզ մարդասէրն Աստուած կեալ առաքինութեամբ ի փրկութիւն անձանց մերոց՝ ի պատիւ և ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ: Յոյս հաղորդութեան ընկալեացուք ի յայտնութեան միածնի Որդւոյն Աստուծոյ, կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց: Ո՛ւստի զի զայս խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս: Տէր մեր, կեցո և ողորմեա:

Ջժամս և զառաջիկայ օրս խաղ: Ջհրեշտակ խաղ: Ջքաւութիւն: Ջսրբոյ: Եւ ևս: Ջանձինս: Ողորմեաց:

Ա. Ղ Օ Թ Ք

Չգեցո մեզ Տէր Աստուած մեր զէն արդարութեան՝ զօրաւոր և յաղթող լինել ընդդէմ սատանայական պատերազմաց. և զամենայն հրեղէն նետս նորա չիջուցանելով անկասկած լիցուք յիւրաց խաւարային գնացից՝ ի զայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր: Եւ զգաստացեալք վայելչական տուընջեամբս, առաքինութեամբ կացցուք ի փրկութիւն անձանց մերոց՝ ի պատիւ և ի փառս սրբոյ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Երկնաւոր խաղաղութեամբդ քով պարապեալ պահեա զանձինս մեր Տէր զօրութեանց: Վասն զի դու ես Աստուած խաղաղութեան, և քաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո ամենազօր կարդամք յօդնականութիւն անձանց մերոց: Նայեաց յերկրպագութիւնս մեր, և ուս մեզ առնել զարդարութիւն հնազանդութեան: Եւ զոհութեամբ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս:

Ս Ա Ղ Մ Ո Ս

Տէր մի յիշեր զմեզս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո Տէր, զի աղքատացաք յոյժ:
Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր վասն մեծի փառացդ անուան քո:
Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քո:

Ք Ա Ր Ո Զ

Վասն հիւանդացդ և ամենայն վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց, և կատարեալ առողջութեամբ հաստատեսցէ զամենեսեան ի մշտնջենաւոր և յանախտ կեանս: Որ առաքեցաւ ի Հօրէ ի բժշկութիւն ազգի մարդկան միածին Որդին Աստուծոյ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս: Կեցո և ողորմեա:

Ա. Ղ Օ Թ Ք

Փարատեա զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ Տէր Աստուած մեր, և չնորհեա ամենեցուն

զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչիդ քո՛վ որով բարձեր զոկարծութիւն ազգի մարդկան, և զառապարանսդ զքշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Դու ես կեանք մեր և փրկութիւն, բարերար և բազմոզորմ Աստուած, որ միայն կարող ես թողուլ զմեղս և մերժել զախտս և զհիւանդութիւնս ի մէնջ, որոմ յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգևիչդ բարեաց պարգևես զառատ ողորմութիւն քո ի վերայ աղաչածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից, յորոց հանապազ փառաւորեալ զովի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ և միշտ։

Ցիշես Տէր զպաշտօն։ — Բարերար և բազումող։ 175։

ՍԱՂՄՈՍ Խ

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր։

Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա։

Ես ասացի Տէր ողորմեա ինձ, և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։

Որ բնակեալ է յօգնութիւն Բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասացէ Տեառն, ընդունելի իմ ես, ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ սրսողին, և ի բանից խռովութենէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զնո՛ շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ որ թռչի ի տուէ։

Ցերկ որ շրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ ա՛ջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեացիս դու, և դհատու-
ցումն մեղաւորաց տեսցես. դի դու Տէր յոյս իմ ես:
Չբարձրեալն արարիր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ
քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո:
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել
զքեզ յամենայն ճանապարհս քո:
Ի բազուկս իւրեանց ընկալցեն զքեզ, դի մի՛ երբեք
հարցես զքարի զոտն քո:
Ի վերայ իժից և քարիւից գնասցես դու, առ ոտն կո-
խեսցես զառիւծն և զվիշապն:
Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի եղէց
նմա, դի ծանեաւ զանուն իմ:
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա ե-
ղէց ի նեղութեան:
Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայնաւուրբք
լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն: Այժմ և միշտ:

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան գՏէր աղաչեցուք:
Թնդրեսցուք Հաւատով ի Հօրէ վասն քաւութեան մե-
ղաց, և թողութեան յանցանաց, փրկելոյ զմեզ ի վըշ-
ռաց և ի նեղութենանց, խնայելոյ ի վերայ մեր ողոր-
մութեան և գթութեան Տեառն Աստուծոյ ամենակալին:
Կեցո և ողորմեա:

ԱՂՕԹՔ

Հայր գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարու-
թեանց՝ որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մե-
ծում, լուր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց
ընդունելով զաղաչանս մեր. անցո ի մէնջ զցասումն պա-
տուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով: Ան-
րնա և լուր մեզ, քաւեա և թող զմեզս մեր. արժանա-
տրեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ
սրբոյ Հոգւոյդ, այժմ:
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:
Հայր մեր որ յերկինս:

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԻՄ�originՅ ՈՐԴԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ԱՑԻ, ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԲՈՆԱԿԱՆ ՀՈԳԻՈՑՆ ԱՒԱՆԴՄԱՆՆ

Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած հչմարիտ. ամէն:

ՍԱՂՄՈՍ Ը

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան: 186:

ՆՐԳ

Դկ. Զաւրչարակցեալ քեզ ախ՛ւ լռեայ երկիր ժամու խաւարելոյ. պայծառացեալ յինեներորդին ի ախոյ լերման մահու ստուերին. Յահէնդ լուռն մեծապայծառ աւանդեցեր զհոգիդ առ Հայր. ահա՛ կըսպրդ քեզ իւ յերկինս ընդունել ուղղեա Հոգւով քոյ ն:

Աւնդարամե՛տըք սանրեցին զկապեալ հոգիդն արձակեցին. վէմք ի վիժէդ պատահեցան ի տապանաց մեռեալք յարեան. տարերք երկրի՛ տատանէցին և աշխարհի սիւնք դողային. բա՛ժեալքս առ քեզ պաղատեացուք զի՛ ընդ արդարսըն դասեացո՛ւք:

Ցո՛ւցեր յայնժամ ըսքանչելիս և այժըմ մեզ ողորմեցի՛ս. ւրիծեալ բնութիւնս քո՛ւ ո՛ղջացաւ չնորհեա՛ և մեզ լինել անցաւ. փո՛խան մահո՛ւ քո կենա՛րար կեցո ըզմեզ Տէր բարերա՛ր. քեզ պաղատիմք ՚սա աւա՛զակին յիշեա՛ ըզմեզ յո՛րն ա՛հագի՛ն:

ՄԱՂԹԱՆՔ

Յամենայն ժամ ապաչանք իմ այս են՝ ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր, և յօտարէն պահեա զծառայս քո մարդասէր Տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր ապաչեցուք ընկալ կեցո: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

ՔԱՐՈՋ ՄՆԾԻ ՊԱՀՈՑՆ

Սուրբ սրտիւ և հառաչանօք հաւատով կացցուք միաբան յաղօթս առաջի Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ յիշելով զմեծամեծս նորա զանչափ չնորհսն, զհամբերութիւն կենսատու խաչին և զհեղումն ապատաւցուիչ արեան նորա, և զսոցին նմանս, որ յայսմ ժամու վասն մեր մեղաւորացս կրեաց նա: Եւ մեք զայս ամենայն զմտաւ ածելով՝ սրբեսցուք ի մեղաց զխորհուրդս՝ զբանս և զգործս մեր. կատարեսցուք զորբութիւն անձանց մերոց ահիւն Աստուծոյ: Մի՛ յապաղեսցուք խոստովան լինել նմա զմեղս մեր, և խնդրել զթողութիւն մեղաց մերոց, զի մի՛ կորիցուք անապաշխար՝ զյաւիտենական կորուստն: Այլ մինչ դեռ ժամանակս ի ձեռս է, զործեսցուք զբարիս ի կեանս յաւիտեան՝ օրինակ վաստուց մերոց ունելով զամենայն սուրբս և զյաղթող նահատակսն, որք միանգամ ի սկզբանէ հաճոյ եղեն Տեառն և փրկչին բոլորեցանց: Որոց ազօթիւք և բարեխօսութեամբ չնորհեսցէ մեզ մարդասէրն Աստուած զհաճոյն իւր և զօգուտն մեր խորհել միշտ և առնել, և անպատում պարգեւացն հաղորդս գտանել, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս: Տէր մեր կեցո և ողորմեա:

Զժամս և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցա: Չհրեշտակ խաղաղ: Չքաւութիւն: Չսրբոյ խաչին: Եւ ևս միաբան: Չանձինս մեր: Ողորմեաց մեզ:

ԱՂՕՔՔ

Տէր զօրութեանց, որ կամաւոր մահուամբ քո ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ի մահկանացուէ մեղաց մերոց, և բեւեռեցեր զկնիք զատապարտութեան մերոյ ի խաչին, և չնորհեցեր ազատութիւն ազգի մարդկան ի ծառայութենէ սպանանութեան յազատութիւն

փառաց հեղմամբ արեանդ քոյ սրբոյ, ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք կալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինել յաւիտենական և երկնային ուրախութեանցն ընդ ամենայն սուրբս քո, և գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ, այժմ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Բաղումողորմ Աստուած և հաստիչ խաղաղութեան, հաստատեա զանձինս մեր քոյով խաղաղութեամբդ որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամենայն արարածս քո՝ ուղիղ հրամանաւդ մատակարարելով. զոմն դի այդ իսկ են կամք քո՝ խաղաղական և հոգւոյ սիրով կալ մեզ առ միմեանս, և սպասել արիւն մուրք յայտնութեան միածնիդ Աստուծոյ և փրկչիդ մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որում արժանաւորք եղիցուք հանդիպել ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. զուարթութիւնս կացցուք յաջմէ քումմէ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուանդ քում սրբոյ. և ժառանգեցուք զպատրաստեալն ի սկզբանէ աշխարհի սքրբոց քոց զարքայութիւնդ: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեցուք զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ

Տէր մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուանդ քում սրբոյ. մի՛ ցրեր զսխաս քո, և մի՛ ի բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ:

Վասն Աբրահամու սիրելւոյ քոյ, Իսահակայ ծառայի քոյ և Իսրայելի սրբոյ քոյ:

Տէր մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուանդ քում սրբոյ. մի՛ ցրեր զսխաս քո, և մի՛ ի բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ:

ԵՐԳ

Նահապետին Աբրահամու հայցմամբ ընկալ Տէր զաղաչանս. Եւ ծառայիդն քում Սահակայ խնդրուածովք ի մեզ գործ. Թոռնատեսին Իսրայելի Աստուած սքրբոյն ի մեզ խնայեա. Երկնաբերձեալն երկիւղ սոցին Աբրահամ զհոգի զմիտս եւ զմարմին:

ՔԱՐՈԶ

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր Քրիստոս, որ կամաւոր խաչելութեամբն իւրով զարարածս փրկեաց, և հեղմամբ արեան իւրոյ թողութիւն շնորհեաց յուսացելոց իւրոց: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

ՍԱՂՕՔ

Անկեալ առաջի քոյ բարեբար և բազումողորմ Աստուած, ապաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զթութիւն ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր, զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ ի Հօրէ՝ տացի ձեզ, շնորհեա և այժմ հաստատացելոցս ի քեզ, և կատարեա ի բարի զխնդրուածս մեր, զի ի քեզ եմք ապաւինեալ. և քո առատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ ի կեանս յաւուսիկ, և առաջնորդեալ հասո յանճառ երկնից արքայութիւնդ, ի փառաբանութիւն և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս:

Ցիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողսն մեր: 175:

Բարեբար և բազումողորմ Աստուած, քո անմոռաց:

ՍԱՂՄՈՍ ՃԹԴ

Ակնկալ զի լուիցէ Տէր ձայն ազօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդասցի առ նա:

Շրջեցան զինև երկունք մահու, և վիշաք դժոխոց գտին զիս:

Չնեղութիւն և դանձկութիւն գտի, և զանուն Տեառն կարդացի:

Ո՛ Տէր փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած ողորմի և պահէ զտղայս Տէր:

Ես խոնարհ եղէ և Տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ի հանգիստ քո՝ զի Տէր օգնեաց քեզ:

Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց:

Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ:

Ես ասացի ի զարմանալ իմում՝ թէ ամենայն մարդ սուտ է:

Զինչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի որ ետ ինձ։ Բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տեառն տացի՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց։ Ո՛ Տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ։

Հատեր զկապանս իմ, քեզ մատուսից պատարագս օրհնութեան, և զանուն Տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տեառն տացի առաջի ամենայն ժողովրդեան նորա, ի գաւիթս տան Տեառն, և ի մէջ քո երուսաղէմ։

Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Զօրացի ողորմութիւն նորա ի վերայ մեր, և ճշմարտութիւն Տեառն մնայէ յաւիտեան։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Ամէն և միշտ։

ՇԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԸՍՏ ՉԱՑՆԻՆ

ԱՁ

Ո՛ր առեղծմանդ ընտ պատկերի քո՛ Տէր պատուեցեր ըզմեզ. ընկալ և այժմ ըդնընդհանցեալն ի քեզ ուղիղ հաւատովն։ ‖ ընտ մեծի՛ քոմ ողորմութեանդ։ Ո՛ր չնորհօք սուրբ Հոգւոյդ լուսաւորեցեր. յիշատակի իւրեանց զհոգիս նոցա ընկալ մարդասէր. ընտ։ Ո՛րք հաղորդեցան մարմնոյ և արեանդ քո՛ Տէր. հանդո զհոգիս նոցա ընդ սուրբսդ քո ի բրնտոնս Աստուածդ. քանզի գիտէ՞ք այլ աւրբ արեան քո՛ ևն։ Ամէն։ Օրհնեալդ ի կա՛նանց մայր և միշտ կոյս և իմանալի լոյս. ծընող արարչին մերոյ անդադար բարեխնդացուք։

ԱԿ

°Ա՛րարիչ Աստուած և ընտեղծիչ ազգի մարդկա՛ն, ‖ մի՛ անտես առներ ըզնընդհանցեալսն մե՛ր. այլ հանդո զհոգիս նոցա ընդ սուրբսդ քո։ Ո՛րպէս մխածեր ն յա-

բութիւն տիեզերաւ՛ք՛ց. մի՛: Հոգիդ ընչմարիտ մըխիթարիչ սրգաւորաւ՛ք՛ց. մի՛: Հնգւոյն ըզքև հովանացեալ վիրայն Սըրբուհի ծընաւր ըզհաւն Աստուած պանճաւելոյ Հօր ծընունդ. և յայտնեցաւ մուրթիւն երբորդութեան:

ԲՁ

Ո՛ր կոչեցեր առքեզ Տէր ըզտիեզերս ամենայն. ընկալ ըզմեր ընդունելութեան ի գոգ ողորմածին Աբրահամու. ‖ ողորմած Տէր փըրկիչ և բարերար: Ո՛ր թողութեանց ես արժող Աստուած թող ըզմեզըս մեր ընդունելութիւնըն կարող յամենայնի և հըզօր. ողորմած: Ո՛ր լուսաւոր ես տիեզերաց Քրիստոս Աստուած լուսաւորեա և զմեր ընդունելութիւնըն լուսով երանելոյդ զբարթենոյն. ողորմած: Քո՛յ մեր և անպարէն մայր Տեառն և կոյս սուրբ. որ հոր առաւածութեանն ոչ բոցակիզեաց զքո սուրբ զորովայն. բարեխոսեա՛ ած Տէր վասըն մերոյ փըրկութեան:

ԲԿ

Ո՛ր որդիդ ես և բանդ Աստո՛ւած հաւատարակից ընդ Հօր յէութեան ած քեզ կարդամբ մարդասէր. ‖ հանդո՛ղ գնացիր ընդունելոյդ մեր ընդ սուրբըս քո: Ո՛ր ինքեր յերկնից վասըն մեր զառաքինեն առեր զյանցանան Ադամայ. մերով բնութեամբ բարձեր ի վերայ խաչին անանցա ձեռօք. հանդո՛ղ: Ո՛ր լուծեր զիշխանութիւնն մահուան. կամաւորակա՛ն մահուամբ քո փրկեաս. բանեալոցդ զազատեա առանձին քո հեղեալ մարդեմիք. հանդո՛ղ: Տիրուհի անարատ մայր Տեառն և կոյս Մարիամ. քրմվեսական աթոռ ըզքեզ առնաք ի յերկրի. բարեխոսեա ած Տէր վասըն մերոյ փըրկութեան:

ԳԶ

Հայր բարեգութ. ար զքեզ ընդ յաղագս սրտից մաքրկանն. առաքեցեր ըզՄիածին ընդ փըրկութիւն ‖ յիշեա՞ զհնգից նըշխեցելոց մերոց և հանգո՛ ընդ սուրբըդ: Որդիդ միածին ն՛ր յարեարդ ի մեռելոց. ի միւսանգամ գալըստեանն քո յաթոռ խոստացար. յիշեա՞: Հո՛գիդ ճըշմարիտ մըխիթարիչ սրգաւորանց. աղաչանո՛ք սուրբ Աստուածածնին եւ ամենայն քոց սրբոց. յիշեա՞: Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ Աստուածածին. ա՛ռ ի փըրկել ըզժողովուրդս ի մեղաց եւ յապականութենէ:

ԳԷ

Յաղերսակըրնականն ծոցոյ Հօր խոնարհեա՛ բանըզ. մարմնացար ի կո՛ւսէն վանդն փըրկութեան մերոյ ‖ ա՛դաչեմք ըզքե՛զ. զնըշխեցեալսըն մեր ի քե՛զ ուղիղ հաւատով. յիշեա՞ տէ՛ր ո՛ր յորժամ գան թագաւորութեամբըդ քո: Անո՛խակալ քաղցրութեամբ որդի Աստուծոյ. հա՛ճեցար բանանալ ըզմեզս աչխարհի՛ քո խաչելութեամբն. աղաչեմք: Կամաւորակա՛ն մահուամբ քո լուծե՛ր զերկունըս մահու. եւ աթոյնի աթարե՛ր քո՛ղութեան յանցանացդ քաւիչ քո արեամբ. աղաչեմք: Ո՛ր փրկանա՛կ մեզաւորաց ընդմե՛ռանիլ յանձն առե՛ր. ի լքանելսն ի դժոխըս փըրկեցեր ի մե՛ռամբ բանտէն ըզգերեալսն. աղաչեմք: Բարե՛բանեմք զանչափ քո զմարդանիրութիւնդ. ո՛ր ելեւթորնայ յարուցեալ զկենդա՛նութիւն պարգեւեցեր աչխարհի. աղաչեմք: Մա՛քուր եւ ա՛նբիծ կոյս յետ ծընընդեան. ար մարմնով ծընար զարձակողն ի կապից մահու. բարեխօս լեր վանն անձանց մերոց. փըրկել ի սպառնալեաց գեհենին:

ԴՋ

Յորժամ հարկանի ով՛ղ զալըտաեան քո Տէր. յայնըժամ զարհուրեսցի զոգան ա՛րարածք իւ յահէ քումէ. ‖ ա՛զահնմք ըզգե՛ղ Փըրկիչ. հա՛նգո՛ և ըզմեր ըզնընջեցեալսն ընդ սուրբըս քո. ո՛ր միա՛ւ յեղ եմ բա՛զմոզրմ։ Յահաբեկ լո՛ռոյ ծա՛գմանն քո Տէ՛ր. ցըն՛ծա՛ն զոգք առաքե՛լ նեանցն ի վե՛րոյ լո՛ւսեղէն ամպո՛յն. ա՛ղ։ Ա՛նճախակալ բանմանդո՛ւթ ո՛զորմած Տէ՛ր. ով՛ ա՛նտեա՛ն անձինս ընդմեզուցեա՛քըս յահաչգի՛ն աւուրն. ո՛ր միա՛ւ։ Ո՛ր լցե՛ր ի յերկնից և մա՛րմնացար իւ սուրբ կուսէ՛ն. անճառե՛լի քոյի՛ն ծնընդեամբդ եւ դի՛ս ով անտե՛ս սո՛ղնեը. այլ պահեա՛ պատուակա՛ն և սո՛ւրբ խաչիւ քո՛։

ԴԿ

Ո՞ր թագաւորդ ես յաւիտենից Փրիստո՛ս Ա՛ստըւած ընկալ ընծա՛ռայս քո՛ ի բարի՛. ‖ ե՛ւ՛ չնո՛րհեա՛. ի յաչակոզմա՛՛՛ն քո՛մ դասի՛լ։ Ո՞ր ունի՛ս իշխանո՛ւթիւն մահո՛ւ և կե՛նաց հանգո՛ղ զհո՛գիս քո՛ ծառայի՛ց. ե՛ւ՛։ Յո՞րժամ կարգի՛ սթո՛ռ տէ՛րութեանըդ քո և հաստա՛տի՛ առեան դասատասանե՛ն. յայնըժամ խո՛նեայեա՛ ի ծա՛՛ռայս քո՛. ե՛ւ՛։ Ա՛մէնօրհնեալ ա՛ստուածամա՛՛յր Ա՛ստուած. քո՛նվրէական սթո՛ռ ա՛րարչին մե՛րոյ ա՛ընծո՛ւթեան. զո՛՛՛ր երանե՛՛՛լ ն ամենայն ապի՛նըք հանապազ։

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Հոգւոյն հանդուցելոց Փրիստոս Աստուած՝ արա հանգիստ և ողորմութիւն, և մեզ մեղաւորացս չնորհեա թողութիւն յանցանաց։

Ք Ա Ր Ո Զ

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեցուք։
Ա՛ստո հանդուցեալ հոգւոցն աղաչեցուք զփրկիչն մեր

Քրիստոս, զի զնոսա ընդ արդարան դասեսցէ, և զմեզ կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ : Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա :

Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա :

Ա Ղ Օ Թ Ք

Քրիստոս Որդի Աստուծոյ անեղական և բարեգութ՝ զքեա ես արարչական սիրովդ ի հոգիս հանդուցեալ ծառայից քոց : Յիշեա յաւուր մեծի դատաստան արքայութեան քո. արա արժանի ողորմութեան՝ քաւութեան և թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն . զի զու ես Տէր և արարիչ ամենեցուն , դասաւոր կենդանեաց և մեռելոց : Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն :

Հայր մեր որ յերկինս :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Չաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն Աստուած . մեր մեղաց և յանցանացն թողութիւն չնորհեսցէ , ի չարեաց փրկեսցէ , ի մեղաց պահեսցէ. և նմա փառք յաւիտեանս. ամէն :

Եւ ասէն սկսանի պատարագն :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՑ

ՎԱՍՆ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԿԵՐԱԿՐՈՑ ԵՒ ՀՄՊԵԼԵԱՑ

Պարտասուն ընկերանն հայիւ և ընդդարձն կերակրոյ. և կանգնեն իրարու նեղէր ոտ է պեղէս իրենց. և գոյ եղեռնասարն կոտ տոհանայն, և ասէ տալմս ։

ԿՅ

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու ։

ԴՊԻՐՔՆ

Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Զօրհնասպաց օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութեան նորա ոչ գոյ չափ ։

Ազգ և ազգ գովեսցեն զգործս քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն ։

Զմեծավայելչութիւն փառաց սրբութեան քոյ խօսեսցեն, և զքաջագործս քո պատմեսցեն ։

Զզօրութիւն ահի քոյ ասասցեն, և զմեծութիւնս քո պատմեսցեն ։

Զյիշատակ բազում քաղցրութեան քո բղխեսցեն, և արդարութեամբ քով ցնծասցեն ։

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։

Քաղցր է Տէր առ ամենեսեան, և գթութիւն նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց ։

Խոստովան եղիցին առ քեզ Տէր ամենայն գործք քո, և սուրբք քո օրհնեսցեն զքեզ ։

Զփառս արքայութեան քոյ ասասցեն, և զզօրութիւնս քո պատմեսցեն ։

Ճանաչել որդւոց մարդկան զզօրութիւնս քո, և զփառս մեծավայելչութեան արքայութեան քոյ ։

Արքայութիւն քոյ արքայութիւն ամենայն յաւիտենից, և տէրութիւն քոյ ազգէ ազգ ։

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր, և արդար է յամենայն գործս իւր:

Հաստատէ Տէր զամենայն գայթակղեալս, և կանգնէ զամենայն գլորեալս:

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու:

Բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քո:

Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր, և սուրբ է յամենայն գործս իւր:

Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա, առ ամենեսեան որ կարդան առ նա ճշմարտութեամբ:

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա:

Պահէ Տէր զամենեսեան որք սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ Տէր:

Զօրհնութիւնս Տեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամենայն մարմին զանուն սուրբ նորա յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն: Այժմ և միշտ:

ՔԱՀԱՆԱՑՆ

Ողորմած գթած է Տէր. կերակուր տայ երկիւղածաց իւրոց:

ՍԱՐԿԱԽԱԳՆ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած, զի պարգևեսցէ մեզ կերակուր ուրախութեան, և լցուսցէ զսիրտս մեր ի լուսեղէն արտասուաց իւրոց: Ամենակալ Տէր Աստուած մեր կեաց և ողորմեա:

ՔԱՀԱՆԱՑՆ

Օրհնեա զբիւտաս Աստուած մեր հոգևոր օրհնութեամբ զկերակուրս և զմսկելիս ծառայից քոց, և չնորհեա յառողջութիւն հոգւոց և մարմնոց: Որպէս զի կրօնաւորական պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյից՝ անանց բարեացդ և երկնից արքայութեանդ հաղորդս լիցուք ընդ ամենայն սուրբս քո: Եւ զոհութեամբ վառաուրեսցուք զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Ե՞ օրինող սեղանոյն կալով կանգնուն՝ և առեալ գինւոյն բեւ կանէ ընդ պատառաւորացն, որ առքինիքն կոն. կամ գինեպ այնո՞ր ոչ որ պատրաստողն է ծաշոյն. և նուէս առ ամենեսեան, և առէ ձայնակիցք խաղաղութեամբ. և նոքին է ծաշն ։

Իսկ երիք վանականէ էցեն կամ անապատաւորէ, նոցայն տինն սեղբեւոց է բարձրագոյն տեղւոջ, և առեալ ընդնեանոցս գինբս պատուհանչէն. և ամենեսեան առնէն գինեցն ընդնեցմանն անմեռանել ճաշակմաբ : Ե՞ երիք ոչ կնդրեսցէ զգուշանալ ինչ պատրուհասանաց, լուացեն որ կատարէն էցեն. և գարձեալ ճաշեսցեն ընթերցան և ոչ պղպեխա ։

Ե՞ չեպ յառնելոյ ի սեղանոյն գարձեալ կացցեն ի տեղիս երեքանց ։

Ե՞ առացէ փառանոյն ։

Տէր ցխոստս լցաք ի բարութեանց քոց ։

ԴՊԻՐՔՆ

Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ ։

Արդ Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց, և ոյք յուսան յողորմութիւն նորա ։

Փրկել ի մահուանէ զանձինս նոցա, և կերակրել զնոսա ի սովի ։

Անձինք մեր համբերեսցեն Տեառն, զի օգնական և պաշտպան մեր է ։

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և յանուն սուրբ նորա յուսացաք ։

Եղիցի ողորմութիւն քո Տէր ի վերայ մեր, որպէս յուսացաք ի քեզ ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ։ Այժմ և միշտ ։

ՔԱՀԱՆԱՑՆ

Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ · լցուցանող զրիաոս գոհանամք զքէն ։

ՍԱՐԿԱՒԱԳՆ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Գոհացարուք ի վերայ լուսթեանց պարգևաց Տեառն Աստուծոյ մերոյ, որ կերակրէ զմեզ օր ըստ օրէ առա-

տապէս քաղցրութեամբ կամաք իւրովք : Զի հոգևոր բարութեան և երկնից արքայութեան հաղորդս արասցէ զծառայս իւր ըստ ակնկալութեան յուսոյն մերոյ : Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա :

ԱՂՕՔՔ

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ կերակրես զմեզ ի մանկութենէ և տաս կերակուր ամենայն մսեղեաց. լցո ուրախութեամբ և բերկրութեամբ զսիրտս մեր, որպէս զի զամենայն բաւականութիւն ունիցիմք, առատելով ի գործս բարութեան ի փրկառս Յիսուս ի Տէր մեր. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Փառք քեզ Տէր, փառք քեզ Թագաւոր փառաց, որ եառուր մեզ կերակուր ուրախութեան, և լցուցեր զսիրտս մեր ի լիութենէ ամենաբաւական ողորմութեան քոյ. լցո և զմեզ Հոգւովդ քով սրբով, որպէս զի գոցուք առաջի քոյ հաճոյք, և մի ամաչեցեալք. զի դու դաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Փրկառս. ամէն :
Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո. եկեա :

Զկերպարս Աստուած օրհնեսցէ. սպասաւորացն և երախտաւորացն վարձս բարեաց պարգևեսցէ, և օրհնեսցէ զամենեսեան Փրկառս Աստուած մեր որ զմեզ կերակրեաց և լեսցոյց. նմա փառք յաւիտեանս. ամէն :

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ԵՐԵԿՈՑԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԻՄՍ ՈՐԴՒՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՈՐ ԷԶ Ի ԹԱԶԷՆ ԵԻ ՊԱՏԵԱԼ ՊԱՍՏԱՌԱԿԱԼԱԻ ԵԴԱԻ Ի ԴԵՐԵԶՄԱՆԻ

Եա առ Աստուած կարդացի, և Տէր լուաւ ինձ յերեկոյս, ի վաղորդայն և ի հասարակ աւուր :

Սպասէի Աստուծոյ իմոյ, և ակն ունէի կենարարին, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո :

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Խաղաղութիւն ամենեցուն :

ՍԱԿՄՈՍ ՁԲ

Խոնարհեցո Տէր զունկն քո և լուր ինձ , զի աղքատ և անանկ եմ ես :

Պահեա զանձն իմ սուրբ. Տէր, փրկեա զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ :

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհնաբեր, ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես , բազումողորմ առ ամենեսեան որ կարդան առ քեզ :

Ունկն դիր Տէր աղօթից իմոց, և նայեա ի ձայն խընդրուածոց իմոց :

Ցաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ:

Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տէր , և ոչ ոք է որպէս գործս քո :

Ամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո , փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան :

Մեծ ես դու Տէր, և առնես պանչելիս, և դու միայն ես Աստուած :

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ քումմէ :

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով, փառաւոր արարից զանուն քո յաւիտեան :

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո , և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքինոց :

Աստուած անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի երեսաց իւրեանց :

Այլ դու Տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ, նայեաց առ իս և ողորմեա ինձ :

Տուր զօրութիւն ծառայի քոյ , կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս նշան բարութեան :

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

ՄԱՂԹԱՆՔ

Փառք քեզ Աստուած՝ փառք քեզ յաղագս ամենայնի, Տէր փառք քեզ :

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք , ընկալ :

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն :

Խաղաղութիւն ամենեցուն :

ՍԱՂՄՈՍ ՃԺ

Ապրեցո զիս Տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս :

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց , զօր ամենայն պատերազմեցան ի պատերազմ :

Արեցին զլեզուս իւրեանց օրպէս զօձի , և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա :

Պահեա զիս Տէր ի ձեռաց մեղաւորի , և ի մարդոյ չարէ փրկեա զիս :

Խորհեցան խափանել զգնացս իմ, թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ :

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւղօք ի-մովք եդին ինձ գայթակղութիւն :

Աչացի Տէր Աստուած իմ ես դու, ունկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց :

Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի :

Մի մատներ դիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց՝ որք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել դիս :

Չի մի երբեք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի կատարեսցին. վախճան կատարած նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա :

Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ, և կործա-նեսցես զնոսա. ի տառապանաց մի կարասցեն կեալ :

Արդոյ լեզուանուոյ մի յաջողեսցի ի վերայ երկրի, զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ :

Ծանեայ դի առնես Տէր դատաստան աղքատի և իրա-ւունս անանկի :

Արդարք դոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց :

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ, նայեա ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ :

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր, համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի :

Դիր Տէր պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չա-րութեան :

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս որ գոր-ծեն զանօրէնութիւն, և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա :

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ և յանդիման արասցէ, իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա :

Արձկան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին :

Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի՝ ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս :

Աչք քեզ Տէր Տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի հանիր զհոգի յինէն :

Պահեա զիս յորոգայթէ որ թակուցաւ ինձ, ի գայ-թակղութենէ գործողին զանօրէնութիւն :

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչև անցից։

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուազել յինէն հոգւոյ իմոյ, դու Տէր ծանեար զշաւիղս իմ. ի ճանապարհ յոր և գնայի թագուցաւ ինձ որոգայթ։

Հայեի յաջմէ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գոյաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ Տէր և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա Տէր յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօր եղեն քան զիս։

Տէր հան ի բանտէ զանձն իմ, դոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք, մինչև հատուցես։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Այժմ և միշտ։

ՆՐԳ

Ա՛լէլուիա. ա՛լէլո՛ւիա։

Լոյս զքո՛ւթիւն առ՛ր զիս փառաւո՛ր ես։ ա՛ի՛ր. ա՛ր՛նո՛ւմ հա՛ղի՛ Հօ՛ր ես ձօ՛ղ եւ ո՛ր՛ի՛կնաւո՛ր՛ի՛. սո՛ր՛ո՛ն՛ կե՛նա՛ր՛ո՛ւ՛թ՛ի՛ւն ո՛ր՛ի՛ւ՛ն ես։ ի՛ն՛ձ՛ո՛։ ա՛ի՛ր։ Յի՛ս՛ո՛ւ՛ս՛ո՛։ ի՛ր՛ ք՛ր՛ի՛ս՛տո՛ս՛ի՛ ի՛ր ես։ ա՛ի՛ն՛։

Եկեսցէ ի մէնտանէ արեգակն ամենայն ընդ ոյ եւրեկոյին. օրհնեմք ընդհայր եւ զՈրդի եւ ընդսուրբ Հոգին Աստուած։ Եւ ամէնեքեան ասեմք ամէն։

Աւրժանաւորեա ընդիս յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեան Տեառնդ։

Որ տայ զկենդանութիւն վասն սրոյ եւ աշխարհս ընդեզ փառաւորէ՛ ի՛ր ես ի՛ն՛։

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեալ Տէր՝ որ բնակեալդ ես ի բարձունս, և օրհնեալ են փառք մեծութեան քոյ. որ հաստատեցեր զերկնաւորս ի բարձունս, ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս, արարեր զարեգակն լուսաւոր տուընջեան, զլուսինն և զաստեղս լուսաւոր գիշերոյ, և զլոյս ճրագի. դու ես լոյս գովելի, սուրբ և առաջին լոյսն. ի քէն փախնու խաւարն, և զլոյս քո կենդանի Տէր ծագեա ի սիրտս մեր: Եւ մեք միաբան ասացուք օրհնեալ է անուն սուրբ փառացդ քոց, Եւ քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Հասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ Տէր Աստուած մեր, որ չնորհեցեր մեզ զոխս խաղաղութեամբ անցուցանել, և հասանել ի ժամ երեկոյիս: Աւրժանաւորեա զմեզ Տէր սուրբ սրտիւ, հրեշտակային երգով զոհարանութիւն մատուցանել Եռաւն Աստուծոյ ամենակալիդ. կեցո և ողորմեա: Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր քան մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

ՄԱՂԹԱՆՔ

Հասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԵՍԵՓԻՔ

ՇՆՈՐՀԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՒԵՏԱՒԱՑ ԵՒ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵՒ ԱՑԱՂՈՑ ՏՕՆԻՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԻՆ

Ա.

Տէր ասաց ցիս, Որդի իմ ես դու և ես այսօր ծնայ զքեզ: Ընդէր խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

Բ

Ելեալ յուսաց անձն իմ զՏէր, և ցնծացեալ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Չի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. ահա յայսմ հետէ երանեացեն ինձ ամենայն ազգք :

Գ

Ինչէ որպէս զանձրև ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր :

Աստուած զիրաւունս քո արքային տուր, և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի :

ՄՆՍՆԴԻՋ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԱՋ

Տէր կարող և հզօր, Տէր կարող ի պատերազմի :

Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ և ամենայն բնակիչք նորա :

ԱԿ

Ամուր քո Աստուած, յաւիտեանս յաւիտենից, զաւազան ուղղութեան՝ զաւազան արքայութեան քո :

Բղխեաց սիրտ իմ զբան բարի, և ասեմ զգործս իմ թագաւորի :

ԲՋ

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք :

Երևեցան փայլատակունք նորա սիեզերաց, եռաց և սասանեցաւ երկիր :

ԲԿ

Երգեցէք Տեառն երգ նոր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանեարուք զի նա է Տէր Աստուած մեր :

ԳՋ

Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ արար զնշանս և զսքանչելս ի վերայ երկրի :

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն, օգնական ի վերայ նեղութեանց որ գտին զմեզ յոյժ :

ԳԿ

Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար :

Ցնծանիցեն Իսրայէլի յեգիպտոսէ, տանն Յակովբայ ի ժողովրդենէն այլազգեաց :

ԴՋ

Եղիցի ձեռն քո ի վերայ առն, աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ :

Որ հովուեսդ Իսրայելի՝ նայեաց որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու ։

ԴԿ

Աստուած աստուածոց Տէր խօսեցաւ, կոչեաց զերկիր ։ Ցելիցն արեգական մինչև ի մուտս . ի Սիովնէ վայելչութիւն գեղեցկութեան նորա ։

ՄՆՍՆԴԻՔ ԳԱԼՍՏՆԱՆ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գալոց ես ։ Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ ։

Ի ՄՆԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քո Տէր ։

Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քոյ, և զառեղի յարկի փառաց քոց ։

Ի ՄՆԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ

Եառն ի կերակուր ինձ լեզի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն և ի գայթակղութիւն ։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ

Եառուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան ։

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո ամենայն քո և լուր մեզ ։

ՆԿՆՂՆՑԻՈՑ

Այս օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր ։

Ո կայք ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ։

ԿԻՐԱԿԱՄՑԻ

Սիրեցի՝ զի լսիցէ Տէր զձայն աղօթից իմոց ։

Չի խնարհեցոյց զունկն իւր առ իս. և ես յաւուրս իմ կարդացի առ նա ։

ՄՆՍՆԴԻՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

ԱՋ

Եղիցի ողորմութիւն քո Տէր ի վերայ մեր, որպէս յուսացաք ի քեզ ։

Ցնծացէք արդարք ի Տէր , ուղղոց վայելէ օրհնութիւն ։

Ա.Կ

Տէր սիրէ դիրաւունս, և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբսն իւր։

Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է, վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան։

Բ.Զ

Աքանչելի է Աստուած ի վերայ սրբոց իւրոց, Աստուած Իսրայելի։

Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ Տէր զօրհանապազ։

Բ.Կ

Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Գ.Զ

Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ և ահաւոր ի վերայ այնոցիկ, որ շուրջ են զնովաւ։

Խոստովան եղիցին երկինք զքանչելեացդ քոց Տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

Գ.Կ

Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ, Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։

Աստուած օգնական իմ, և ես յուսամ ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ ընդունելի իմ է։

Դ.Զ

Արձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա. առ ամենեսեան որ կարդան առ նա ճշմարտութեամբ։

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, ազօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։

Դ.Կ

Աչք տարբերն որպէս զարմանայնիս ծագկեսցին, որպէս զմայրն Լիբանանու բազմաւք եղիցին։

Տնկեալք եղիցին ի տան Տեառն, և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծագկեսցին։

ՄՆՄՆԴԻՋ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ա.Զ

Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա։

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան իմոյ։

Ա.Կ

Մի՛ առասցէ Թշնամին իմ թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես առասնեցայց ։

Մինչև յե՛րբ դարձուցանես զերեսս քո յինէն, մինչև ցե՛րբ բարձրանայ Թշնամին ի վերայ իմ. նայեա և լուր ինձ Տէր Աստուած իմ ։

Բ.Զ

Ներան արդարոյ պատմէ զիմաստութիւն, և լեզու նո֊ ր խօսեսցի դիրաւունս ։

Մի՛ նախանձիր ընդ չարս , և մի՛ ընդ այնոսիկ՝ որ գործեն զանօրէնութիւն ։

Բ.Կ

Քաղցրութիւն արարիր ընդ ծառայի քում Տէր, ըստ բանի քում ։

Քաղցր ես դու Տէր, և քաղցրութեամբ քով խրատեա զիս։

Գ.Զ

Նայեա և լուր ինձ Տէր Աստուած իմ ։

Մինչև յե՛րբ Տէր մոռանաս զիս ի ապառ, մինչև յե՛րբ դարձուցանես զերեսս քո յինէն ։

Գ.Կ

Գթութիւնք քո բազում են Տէր, և ըստ իրաւանց քոց կենդո զիս ։

Տես զխոնարհութիւն իմ և զվրկեա զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։

Դ.Զ

Աստուած յօգնել ինձ նայեա , և Տէր յընկերել ինձ փութա ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին որ խնդրէին զանձն իմ ։

Դ.Կ

Լուր Աստուած ազօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ , յերկիւղէ Թշնամւոյն վրկեա զանձն իմ ։

Ծածկեսցես զիս ի ժողովոյ չարաց , ի բազմութենէ գործեն զանօրէնութիւն ։

ԿԱՐԳ ՈՒՂՂՂՂՂՑԵԱՑ

Ողիպ եղիցին ազօթք իմ , Որպէս խունկ առաջիդ Տէր ։
Համբարձումն ձեռաց իմոց , Պատարագ երեկոյի ։

Յաւուր առաջիկոչեանն :

Ողիւղ եղիցին ազօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր: Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի :

Տէր աղաղակեցի առ քեզ լուր ինձ : Ընկալ ի ձայն խնդրուածոց իմոց յաղաղակել իմում առ քեզ :

Ի ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹՈՒ

Ողիւղ եղիցին ազօթք իմ. Որպէս խունկ առաջի քոյ Տէր: Զերեկոյի ազօթս մեր ընկալ Տէր. եւ զտարածումն ձեռաց մերոց :

Ի ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ

Ողիւղ եղիցին աղաչանք մեր. Որպէս խունկ առաջի քոյ Տէր : Համբարձումն ձեռաց մերոց . Պատարագ եւ երեկոյի :

ՔԱՐՈՋ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԱՒՈՒՐՑ ՏԻՐՈՒՆՆԱՑ

Աստուածամեծեքեան միաբանութեամբ Տէր ողոր: 148:

ՔԱՐՈՋ Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԵՒ ՊԱՀՈՑ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք :

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զԹագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան եւ վասն միայնոյ , սուրբ, կատարելոյ եւ առաքելական եկեղեցւոյ . զի զբազում ամս խաղաղութեամբ տացէ մեզ Տէր Աստուած մեր , եւ զԹագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ վասն մեծի՝ սուրբ եւ ահաւոր անուան իւրոյ. զպետս գաւառաց, զքաղաքավարս, զդատաւորս, զժողովուրդս , զմեւոս եւ զկիս մեր խաղաղութեամբ պահեսցէ, եւ զամենայն պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ ի մէնջ. Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի :

Զերեկս մերձեալ , եւ զառաջակայ գիշերս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք :

Ձհրեշտակ խաղաղ : Ձքաւութիւն : Ձսրբոյ խաչին :

Եւ ևս միաբան : Ձանձինս մեր : Ողորմեաց մեզ :

ԱՂՕԹՔ

Լուր ձայնիւ մերոյ Տէր Աստուած մեր, ընկալ զաղաչանս մեր, զհամբարձումն ձեռաց մերոց եւ զբանս ա-

ղօթից՝ արբելով զերեկոյի պատարագս մեր ի հոտ անուշից՝ ի հաճոյս քեզ պատրաստել : Յաւել ի մեզ Տէր ա-մենակալ զհաւատս, զյոյս, զսէր և զամենայն գործս ա-ռաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց բարեխրատ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ ի տուէ և ի գիշերի, և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութեան և վասն հոգևոր կենացդ ազաչել զքեզ Տէր, և գոհանել ի քէն զչնորհս և զողորմութիւն. և զոհանալով փառաւորեցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Քեզ երկիր պագանելով Տէր Աստուած մեր՝ գոհանամք զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի վէնջ զերկարութիւն տուընջեանս : Տուր մեզ, Տէր, աղաչեմք զքեզ զերեկս և զառաջիկայ գիշերս առանց մեղաց և առանց գայթակղութեան անցուցանել, հաստատուն կալ և ճնալ ի հաւատս, ի յոյս, ի սէր և ի պատուիրանապահութեան քոյ : Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի, եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, և անձանց մերոց զփրկութիւն : Որպէս զի ընդունելով ի քէն զհայցուածս մեր, և զմեծ վայելչական փառաբանութիւն միշտ ի բարձունս առաքեսցուք ամենապօր տէրութեանդ Քրիստոս Աստուած մեր, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ ապա ասէ

Ա՛ղ. Աստ՛ուածդ՛ սուրբ Աստուա՛ծ : աստ՛ուածդ՛ սուրբ եւ հզո՛ր : աստ՛ուածդ՛ եւ անմահ : ողո՛ւ մեզ : Ընդ մե՛զ : Երէց՝ կրկնէ և ընդ թաղմայն ասացեալ ասացեալ : Փա՛ռս ստուերեալ և օրհնեալ միշտ աստ՛ուած կո՛ժ յԱստուա՛ծածին Մարի՛ամ մայ՛ր Քրիստո՛սի՛ մա՛տո՛ զաղաչա՛նքս մե՛ր ի՛նքս : Ո՛րդուդ քո եւ Աստուծդ ը՛ մերոյ :

ՄԱՂԹԱՆՔ

Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք ։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և ի ջանալոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

ՍԱՂՄՈՍ ՃԻ

Համբարձի զաչս իմ ի լերինս , ուստի եկեսցէ ինձ օգնութիւն ։

Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ , որ արար զերկինս և զերկիր ։

Մի տար ի սասանութիւն զոտն քո , և մի ննջեսցէ պահապան քո ։

Արդեօ ոչ ննջէ և ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայէլի ։

Տէր պահեսցէ զքեզ , և Տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով ։

Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ , և մի՛ լուսինն ի գիշերի ։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ , պահեսցէ Տէր զանձն քո ։

Տէր պահեսցէ զմուտս և զել քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ։ Այժմ և միշտ ։

Աւե՛ հաճեալն չարչարեաց ընդ պատուհաս ։

ՔԱՐՈԶ

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի , և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ գՏէր աղաչեսցուք ։ Աստատութեան ամենեքեան միաբանութեամբ ։

Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա ։

ԱՂՕԹՔ

Հայր գթած՝ բարեխնամով՝ արարիչ ամենայն արարածոց , ընկալ զպատառանս ծառայից քոց ի ժամ երե-

կոչիս, որ առաջ ես առ ամենեսեան պարզեաք բա-
րեբարութեան քո: Ողորմեա Տէր ամենայն աշխարհի և
նկեղեցւոյ քում սրբոյ, հիւանդաց, վշտացելոց, ճանա-
պարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխա-
րողաց և հոգւոցն հանգուցելոց. զի դու Տէր ամենակալ
կեաս զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խընդ-
րեմք և իմանամք: Եւ քեզ ընդ Որդւոյ և ամենասուրբ
Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցառաջ աղաղակեցէք առ այն Տէր ամենակալն, և խոր-
տակեալ և աղքատ. 163: Եւ չեք նորա Որ բնակեալ: Ի-
նչ յոյս առաջ պահոց և ի ծոմս սրբոց այն Որ բնակեալ.
և ի ներկայութեան Աստ օրհնեցէք: 223:

ԱՐՁԱԿՄԱՆ ՓՈԽ

Որ բնակեալ է յօգնութիւն Բարձրելոյն, ընդ հովա-
նեաւ Աստուծոյ յերկինս հանդիպիցէ:

Ասացէ Տէառն, ընդունելի իմ ես, ապաւէն իմ Աս-
տուած, և ես յուսամ ի նա:

Նա փրկեացէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից
խռովութենէ:

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, ի հովանի թևոց
նորա յուսասցիս:

Որպէս զէն՝ շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ որ
թռչի ի տուէ:

Ցիրէ որ շրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին
ի հասարակ աւուր:

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ
աջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և գՀատու-
ցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես:

ԶԲարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ
քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել
զքեզ յամենայն ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցեն զքեզ, զի մի՛ երբեք
հարցես զքարի զոտն քո:

Ի վիշապ լիժից և քարից գնասցես դու, առ ոտն կո-
խեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա , հովանի եղէց նմա , զի ծանեաւ զանուն իմ :

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա , և առ նմա եղէց ի նեղութեան :

Փրկեցից և փառաւոր արարից զնա , երկայնաւուրիւք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ :

Ա՛ռ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս :

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ , և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր , մինչև ողորմեսցիս ի վերայ մեր :

Ողորմեաց մեզ Տէր , ողորմեաց մեզ , զի բազում լցաք արհամարհանօք :

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք՝ որ նախատէին զմեզ , և արհամարհանօք ամբարտաւանից :

Աստուած յանուան քում կեցո զիս , և ի զօրութեան քում իրաւ արա ինձ :

Աստուած լուր աղօթից իմոց , ունկն դիր բանից բերանոյ իմոյ :

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց :

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունելի հոգւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա :

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ , և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է :

Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս , և ի թշնամիս իմ եառես աչն իմ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

ՄԱՂԹԱՆՔ

Զբարձրեալն զԲրիառոս արասցուք մեզ ապաւէն , զի ոչ հասցեն առ մեզ չարք , և տանջանք մի մերձեսցին ի յարկս մեր :

ՔԱՐՈԶ

Եւ մեք միաբան զաղօթս ի Տեառնէ խնդրելով առասցուք ամենեքեան միաբանութեամբ :

Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա :

Ա Ղ Օ Թ Ք

Ցոյս կենաց, ընդունող ապօթից, քաւիչ մեղաց և կատարիչ խնդրուածոց Քրիստոս Աստուած մեր, ընկալ զպաղատանս մեր ի ժամ երեկոյիս բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ազաչանօք ամենայն սրբոց քոց։ Լուր մեզ Տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեղս մեր, արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ։

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողան մեր։ 175։

Բարեբար և բազմողորմ Աստուած, քո անմոռաց։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո. եկեա։

Փ Ո Խ Կ Ի Ր Ա Կ Ա Մ Տ Ի Ց

Ասա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր, ո կայք ի տուն Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր։

Օրհնեսցէ զմեզ Տէր ի Սիոնէ, որ արար զերկինս և զերկիր։

Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։

Չի լուար զբանս բերանոյ իմոյ, երկիր պագից ի տաճար սուրբ քո, և խոստովան եղէց անուան քում վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ, և բազում արասցես զօրութիւնս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի, չի լուան զբանս բերանոյ քոյ, և օրհնեսցեն զճանապարհս քո։

Մեծ են փառք Տեառն, բարձր է Տէր՝ վերնարհս տեսանէ, և զբարձունս ի հեռատեսանէ ճանաչէ։

Թէպէտ և գնացից ես ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ի բարկութենէ թշնամւոյն։

Ձգեսցէ զձեռն քո և փրկեսց զիս աջ քո, և Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առնէր։

Աստուած յանուան քումմ կեցո զիս, և ի զօրութեան քումմ իրաւ արա ինձ :

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ :

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց :

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունելի հոգւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա :

Եւ կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քումմ Տէր, զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եառես աչն իմ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն : Այժմ և միշտ :

ՔԱՐՈԶ

Խնդրեցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զօրզորմութեան զչնորհս իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ, կեցուցէ և ողորմեսցի :

Կե՞ր՞ց՞ո՞ւ՞ Տէ՞ր : Տէ՞ր ո՞ղ՞որմեա՞ւ՞ : Եւեթ :

ԱՂՕՔՔ

Թագաւոր խաղաղութեան օգնական և փրկիչ անձանց մերոց Քրիստոս Աստուած մեր, պարապեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քո ի խաղաղութեան : Փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և :

ՔԱՐՈԶ ԽԱՉԻ

Սուրբ խաչիս պաշտեցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ : Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա :

ԱՂՕՔՔ

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քով ի խաղա-

ղութեան . փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն : Ա֊ժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս :

ՔԱՐՈՋ ԵԿԵՂԵՑԱՒ

Սուրբ եկեղեցեաւս աղաչեացուք զՏէր , զի սուաւ փըրկեացէ զմեզ ի մեղաց և կեցուացէ չնորհիւ ողորմութեան իւրոյ : Ա֊մենակալ Տէր Աստուած մեր , կեցո և ողորմեա :

ԱՂՕԹՔ

Ա֊ դրան սուրբ եկեղեցւոյս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք . զսուրբ , զհրաշալի և զյաղթող զէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք , և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԱՂՕԹՔ

Ի մէջ տաճարիս , և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք . զսուրբ , զհրաշալի և զյաղթող զէրութիւնդ քո փառաւորեմք , և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեան :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն :
Հայր մեր որ յերկինս :

ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ԹԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԻՄՍ ՀՈԳԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ԱՑԼ ԵՒ Ի ԴԻՄՍ ԲԱՆԻՒ ԱՍՏՈՒԾՈՑ ՈՐ ԵԳԱՒ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ ԵՒ ԷԶ Ի ԴԺՈՒԽՍ ԵՒ ԹՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐ ՀՈԳԻՈՑՆ

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Ի Տէր պարծեսցի անձն իմ, լսեցեն հեզք և ուրախ եղիցին։

Մեծ արարէք զՏէր ինձ, և բարձր արասցուք զանուն նորա ի միասին։

Խնդրեցի ի Տեառնէ և լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ Տէր և առէք զլոյս, և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն։

Ա՛յս աղքատ կարդաց առ Տէր, և Տէր լուաւ սմա, յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա։

Բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Ա՛յժմ և միշտ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Երէ ասիցեն՝

Ի նեղութեան իմում ևս առ Տէր կարդացի և լուաւ ինձ. Տէր փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց և ի լեզուէ չարէ։

Զկնանն բովանդակ ասա։ Բայց սմանէ ալէլո չասէն, զի երէ ասիցեն է։

ՍԱՂՄՈՍ ՁԷ

Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քոյ:
Մտցեն աղօթք իմ առաջի քոյ Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն: Այժմ և միշտ:
Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:
Խաղաղութիւն ամենեցուն:

ՍԱՂՄՈՍ Դ

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած, ըստ արդարութեան ինեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց:
Որդիք մարդկան, մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէր սիրէք դնանրութիւն, և խնդրէք զստութիւն:
Ծաներ ուք զի արանչելիս արար Տէր սրբոյ իւրում. և Տէր լսիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:
Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:
Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի Տէր:
Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց:
Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւրեանց լցուցեր նոսա:
Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:
Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս:
Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ևս, բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ:
Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր մինչև յե՞րբ:
Դարձ Տէր և փրկեա զանձն իմ, կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:
Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ:

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուացի զա-
մենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանո-
կողինս իմ թացի։

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, և մաշեցայ ես
ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զա-
նօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից ի-
մոց, և Տէր զկնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեցան և խռովեցան յոյժ ամենայն թշնամիք իմ,
դարձցին յետս և ամաչեցան յոյժ վաղվաղակի և խռո-
վեցան։

Մինչև յե՞րբ Տէր մոռանաս զիս ի ապառ, մինչև յե՞րբ
դարձուցանես զերեսս քո յինէն։

Մինչև յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, և ցաւք
սրտի իմոյ զաւուրս։

Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին ի վերայ իմ, նա-
յեա և լուր ինձ Տէր Աստուած իմ։

Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից
ի մահ։

Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նե-
ղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց։

Ես յոյսս եդի քո Տէր յուսացայ, և ցնծասցաւ սիրտ
իմ ի փրկութեան քում. օրհնեցից զՏէր զբարերարդ իմ։

Պահեա զիս Աստուած իմ, զի ես ի քեզ յուսացայ։
ասացի Տեառն, Տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ ի
քէն են։

Սրբոց քոց որ են յերկրի քում, սքանչելի արարեր
զամենայն կամս իմ ի նոսա։

Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ
ապա վաղվաղեսցին։

Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա արեանց, և ոչ յիշե-
ցից զանուանս նոցա ի շրթունս իմ։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ,
դու ես որ այսօրէն զարձուցանես զժառանգութիւն իմ յիս։

Վիճակք եղեն ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն
իմ հաճոյ եղև ինձ։

Օրհնեցից զՏէր որ խնաստուն արար զիս. մինչ ի գի-
շերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմում զի մի սասանեցայց։

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով։

Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քումդ տեսանել զապականութիւն։

Յուցեր ինձ զճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց, ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քոյ միշտ ի սպառ։

Լուր Տէր արդարութեան, և նայեա ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց, զի ոչ չրթամբք նենգաւորաց։

Ներեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր ի գիշերի, փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Մի խօսեցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա զշաւիղս իմ ի ճանապարհի քումմ, զի մի դողմակղեսցին գնացք իմ։

Ես առ քեզ Տէր կարդացի՝ զի լուսաւ ինձ Աստուած. խնամարհեցո առ իս զունկն քո, և լուր բանից իմոց։

Աքանչելի արարեր զողորմութիւնս քո, ո փրկես զայնոսիկ որք յուսացեալ են ի քեզ՝ յայնցանէ որք հակառակ կան աջոյ քո։

Պահեա զիս որպէս բիբ ականն, ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեացես զիս յերեսաց անպարշտաց, որք տառապեցուցին զիս։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին, ի ճարպս իւրեանց արգելան, և բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութիւն։

Անդրէկցին զիս և այժմ դարձեալ պատեցան զինեւ, աչք եղին խոնարհեցուցանել զիս յերկիր։

Համաբեցան ինձ որպէս առիւծ զի պատրաստի յոտս, և որպէս կորիւն առիւծու՝ զի նստի դարանեալ։

Արի Տէր, ժամանեա նոցա և խափանեա գնոսա, փրկեա զանձն իմ յամպարշտաց ի սրոյ և ի ձեռաց թըշնամւոյն։

Տէր , կորո զնոսա յերկրէ , բաժանեա և խափանեա զնոսա ի կեանս իւրեանց ։

Գաղանեօք քովք լցան որովայնք նոցա , յագեցան կեր-բակրովք և թողին զմնացուածս տղայոց իւրեանց ։

Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց , և յագեցայց յերևել փառաց քոց ։

Դատ արա ինձ Աստուած , և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում ։

Յագդէ որ ոչ է սուրբ , ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս ։

Դու Աստուած հզօրիչ իմ ես , ընդէ՞ր մոռացար զիս , ընդէ՞ր արտաւմ գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ ։

Առաքեա Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո , զի առաջնորդեսցեն ինձ , և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո ։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած , որ ուրախ առնէ զմանկութիւն իմ ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ , Աստուած Աստուած իմ ։

Արդ ընդէ՞ր արտաւմ ես անձն իմ , կամ ընդէ՞ր խռովես զիս . յուսա առ Աստուած , խոստովանեա նմա , փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։

Աստուած յօգնել ինձ նայեա , և Տէր յընկերել ինձ փութա ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդրէին զանձն իմ , դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար ։

Դարձցին առժամայն ամաչեցեալ՝ որ ասէին ինձ վաշ վաշ ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան որ խնդրեն զքեզ Տէր ։

Ասասցեն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած , որք սիրեն զփրկութիւնս քո ։

Ես աղքատ և անանկ եմ , Աստուած օգնեա ինձ . օգնական և փրկիչ իմ ես դու , Տէր իմ մի յամենար ։

Տուր զօրութիւն ծառայի քո , կեցո զորդի աղախնոյ քո , և արա առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն , զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ։ Այժմ և միշտ ։

ՆՐԳ

Շնո՛րհեա՛ մե՛զ Տէ՛ր ի գիշերի՛ զերկնային ըղեաղա-
ղութիւն քո՛. և պահեա՛ զմե՛զ ի՛ պատրանաց թըշնամւոյն
ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի՛ քո՛ոյ : Տէր Աս-
տուա՛ծ փըրկութեան իմո՛յ ի տուէ կարզացի՛ և գիշերի
առաջի՛ քո՛ոյ :

Մըտցեն աղօթք իմ առաջի քո՛ոյ Տէ՛ր խո՛նարհեսցի
ունկըն քո ի խնդըրուածս իմ : Եկեսցէ առ մե՛զ Տէր
պահապան ի քե՛ն ո՛ր պահեսցէ զմե՛զ յամենայն ժամ :
Առաքեա՛ ի մե՛զ Տէ՛ր ըղզօրութիւն սըրբոյ խաչին ո՛ր
պահեսցէ զմե՛զ յամենայն ժամ : Աւրհնեալ արա՛ Տէր
զերեկս զայս խաղաղութեամ՛ր և առանց փորձութեան
անցո՛ զմե՛զ :

Աւրհնաւորեա՛ Տէր ըղգիշերըս զայս խաղաղութեամ՛ր
և առանց մեղաց պահելով ըզմե՛զ : Ո՛նդ մե՛զ Տէր Աս-
տուա՛ծ գիտասցի՛ք հեթանոսք և պարտեցարո՛ւք զի Աս-
տուա՛ծ ընդ մե՛զ է՛ :

Եւ լըւարուք զայս ի ծագաց մինչև ի ծա՛գս երկրի՛. զի :
Եւ հըզօրացեալքըդ պարտեցարո՛ւք. զի :

Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանա՛յք դարձեալ ի
պարտութիւն մա՛տնեսցի՛ք . զի : Եւ ըզխորհուրդըն զոր
խորհի՛ք խափանի՛ Տէր . զի :

Եւ ըզրանըն զոր խօսի՛ք մի՛ ձեռացէ ա՛ռ ձե՛զ . զի :
Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցո՛ւք եւ ո՛չ խռո-
վեացո՛ւք . զի՛ :

Եւ ըզՏէր Աստուա՛ծ մեր փառաւոր արասցո՛ւք եւ նա
եղիցի մե՛զ յերկիւղ . զի : Եւ յուսացեալ եղիցուք մեք
ի նա՛ եւ նա եղիցի մե՛զ ի սրբութիւն . զի :

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա՛ եւ նա եղիցի մե՛զ
ի փրկութիւն . զի : Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ
զո՛ր ետ ինձ Աստուա՛ծ . զի :

Եւ ժողովուրդ որ նըստէր ի խաւարի՝ մեծ լոյս մի՛ տես. զի՛։ Եւ որ բնակեալդ էք ի խաւարի՝ եւ ի սուրբ մահու. լոյս ծագեսցի ա՛ռ ձեզ. զի։

Եւ քանզի մանուկ ծընա՛ւ որդի՛ եւ տըւա՛ւ մեզ. զի։ Եւ սրոյ իշխանութիւն իւր ի վերայ ո՛ւսոց իւրոց. զի։

Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհըրդոյ հրեշտա՛կ. զի։ Եւ ըսքանչելի խորհըրդակից. զի՛։

Եւ Աստուած հըզօր իշխա՛ն. զի։ Եւ իշխան խաղաղութեան Հա՛յր հանդերձելոյ յաւիտե՛նի՛ն. Տէր Աստուած ընդ մե՛զ է՛։

Ե՛ւ փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ա՛յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե՛նից. ա՛մե՛ն։

ՄԱՂԹԱՆՔ

Ի մերձենալ երեկոյիս համբառնամբ զձեռս մեր ի սրբութիւն. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով բանիւ կամ գործով, ի յանկողինս մեր զղջանալով, խոստովան լինելով զգաղանիս սրտից մերոց ծածկագիտիդ Աստուծոյ, յուսալով յողորմութիւնդ քո։ Եւ մեք միաբան գոչեսցուք, յիշեա զմեզ Տէր՝ յորժամ գաս արքայութեամբդ քով, և ողորմեա մեզ։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Գոհացարուք զՏեառնէ, որ իւրով ողորմութեամբն առաքնորդեաց մեզ ի գործս տուընջեան, և չնորհեաց մեզ միաբան գալ հասանել ի հանդիսս դիշերիս։ Եւ մեք յամենայն ժամ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած լինել պահապան անձանց մերոց, և նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ, և առաքնորդեալ հասուցէ յիւր բարութեան հանդիսան, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Չհանդիսս դիշերիս խաղաղութեամբ անցուցանել հասուսով ի Տեառնէ խնդրեսցուք։

Չհրեշտակ խաղաղ։ Չքաւութիւն։ Չսրբոյ խաչին։ Եւ ևս միաբան։ Չանձինս մեր։ Ողորմեաց մեզ։

Ա. Ղ. Օ Թ. Ք

Տէր բարեբար, որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատելոցն, և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զառաժանեալսն մեզաք, հանգիստ նոցա խոստանալով։ Շնորհեա և մեզ Տէր՝ անխոով խաղաղութեամբ զգիչերս անցուցանել. և ի ծանրութենէ մեզաց զաչխատեալքս ապահովեա ողորմութեամբ քո, և արժանաւորեա մշանջենաւոր հանգստեան ընդ ամենայն սուրբս քո։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Պարգեւատու բարեաց և ազբիւր խաղաղութեան Տէր Աստուած մեր, յամենայն աստանդական խռովութենանց խաղաղացո զմիտս մեր և զխորհուրդս ի զիչերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս, ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո, զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և։

Ս Ա Ղ Մ Ո Ս Ի Զ

Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողայց։

Ի մերձենալ առ իս չարսդ ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ՝ նոքա սկսան և անկան։

Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ի քեզ Տէր յուսացայ։

Զմի խնդրեցի ի Տեառնէ և զսոյն ազաչեմ, բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն և հրամայել ի տաճարի նորա։

Ծածկեաց զիս ի խորանի իւրում յաւուր չարի, ընդ յարկաւ սրբոյ զիս ի ծածկոյթ խորանի իւրում։

Ի վեմ բարձր սրարեր զիս, և այժմ բարձր սրա զգլուխս իմ ի վերայ թշնամեաց իմոց։

Շուրջ եղէց և մատուցից ի խորանի նորա պատարագ օրհնութեան, օրհնեցից և սաղմոս ասացից Տեառն։

Լաւ Տէր ձայնի իմում, զի կարգացի առ քեզ. ողորմեա ինձ և լաւ ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո Տէր խնդրեցին:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի խոտորիր բարկութեամբ ի ծառայէ քումմէ:

Օգնական իմ լեր Տէր, մի անարգեր զիս, և մի թողուր զիս Աստուած փրկիչ իմ:

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և Տէր ընկալաւ զիս:

Օրէնագէտ արա զիս Տէր ի ճանապարհի քում, և առաջնորդեա ինձ ի շաւիղս քո ուղիղս:

Վասն թշնամեաց իմոց, մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:

Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց, և ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց:

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց. համբեր Տեառն և քաջալերեաց, զօրասցի սիրտ քո և համբեր Տեառն:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն: Այժմ և միշտ:

ԵՐԳ ՏՆԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

ԲՋ. Նայեա սիրով Հայրդ գթած ի քո ստեղծեալ գործըս ձեռաց. եւ ըզբանակըս հրեշտակաց տուր պահապան մեզ տրկարացս. փըրկեա զանձինս ի փորձանաց ի խաւարի չըրջող դիւաց. ‖ զի՞ իբ տուընջեան և զի՞ շերմ տացուք քեզ փառս անլռելի:

Էնին անեղ անըսկըզբան ծընունդ անճառ Որդի և բան. որ արարեր ըզտիւ և ըզգիշեր իբ հանգիստ քնոյ. տուր իբ նրինջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ. զի՞:

Բարձուն հոգւոց բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց. իբ փակել դրանց բնութեանց մարմնոց լոյս տուր աչաց սըրտից մերոց. իբ զիշերացս առ քեզ կանխել ընդ հրեղինաց օրհնաբանել. զի՞:

Ամբրըղ սըրբոց երրորդութիւն ըզմեզ մաքրեա քեզ բնակութիւն. շնորհեա ընդ մանկանեն առաքեալսի հանդ-

չել ընդ քեզ ի յանկողնի. տո՛ւր ըզհայցուած բարեկա՛մին ըզփա՛խ երից նըշ կանակին. զի՞:

Երեւելի լոյս ընտրեղծեր զտիւ և զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ Տէր ի գիշերի ըզճառագայթս ի՛մա՛նալի. տո՛ւր յամենայն ժամանակի զպահպանող սի՛ր քո հոգւանի. զի՞:

Մերոյ քո հո՛ւր արկեա՛լ յերկիր բորբոքեսցի՛ ի հոգիս մե՛ր. զհո՛րհուրդ սըրտից մեր մաքրեսցէ զլոյս գիտութեան քո՛ փայլեսցէ. ի քնոյ մահու զմեզ զարթո՛ւսցէ զմիտս բոցո՛վ քո՛ վառեսցէ. զի՞:

Ի՛ քեզ նայիմք լոյսդ անմա՛տոյց ի զգայական՛ն ծածկեալ լուսոյ. ո՛ր վասըն մեր եղա՛ր ի՛ գրի և նըշնշեցեր ի տապանի՛. տո՛ւ մեզ նըշնշեա արթնո՛ւն բնութիւն հերքեա զչարին ներգործութի՛ւն. զի՞:

Ե՛ր լուսոյ անընտրելի պարզատանո՛ք կամք առա՛ջի. ո՛ր փակեալ դրամբք յերեկոյին երեւեցա՛ր մեռա՛նելին. ընդ թովմայի առ քե՛զ գո՛չեմք Տէր և Աստուա՛ծ զքեզ դաւանեմք. է՞լ և առ մեզ յերեկոյիս և տո՛ւր զողջոյն քո՛ ի հոգիս:

Բամեա՛լքս ընդքեզ Տէր աղաչեմք մեզ յօգնութի՛ւն նայեա հայցեմք պա՛հապա՛նդ Իսրայե՛լի անձանց մերոց լե՛ր հովանի. ծթեա առ մեզ խաղաղարար և նըշնշնացո՛ւք անխռովարար. զի՞ ընդ առաւօտս կանխեսցուք ծրհնել ըզքեզ ընդ Հօր Հո՛գւով:

Գո՛չմանն փողոյն Գաբրիե՛լի ո՛ր ի վերընո՛ւմըն գիշերի. լսեալ ա՛րա զմեզ աղաժանի և ա՛ջակողմն ծագեաց դասի. ա՛նդէնջ վառեալ լոյս լապտե՛րաց ըստ խնամատո՛ւն հինգ կուսանաց. զի՞ ընդ փեսայի՛դ ի յառա՛ջասա հանդի՛ւնք հոգւով մըտցուք ի փառս:

Հա՛լածեա ի մե՛նջ Տէր նըշա՛նաւ խաչի քո՛. զընդ-

դիմամարտ և պանծրուհիի գազանն. և մի՛ տար յա՛պականուիթիւն զքո՛ ժառանգութիւնս :

Բարեխօսեա՛ վասն՛ն մեր Աստուածածնի՛ն Մարիամ. ո՛ր ծընա՛ր զՏէր Աստուած ո՛ր հովուէրըն զխոյսել. ա՛ժնաւոր ըզքա՛նչելի փառաւքն իւրովք :

ՄԱՂԹԱՆՔ

Տէր մի՛ զարձուցաներ զերեսս քո յինէն. Տէր բարեբար, աղաչեմ զքեզ՝ օգնական իմ լեր Տէր. մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս Աստուած փրկիչ իմ:

ՔԱՐՈՋ

Աղաչեսցուք զամենակալն Աստուած և խնդրեսցուք ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս և գիւրական խառնութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ի կատարումն ժամանակի ամաց մերոց: Ա՛ժնակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա :

ԱՂՕԹՔ

Շնորհատու բարեաց՝ յամենայնի առատ անմահ Տէր, աղաչեմք զքեզ, փարատեա յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս: Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ, և շնորհեա մեզ հաւատով ապաւինել յամենասուրբ Երրորդութիւնդ՝ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգիդ, այժմ և միշտ :

Յ[illegible] ապահոցէց [illegible]. [illegible]՝
Հայր մեր որ յերկինս:

ՍԱՂՄՈՍ ՃԺԸ

Երանեալ են անբիծք ի ճանապարհի, և այք գնան յօրէնս Տեառն :

Երանի այք քննեն զվկայութիւն նորա, բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա :

Ոչ թէ այք զործեն զանօրէնութիւն ի ճանապարհս նորա գնացին :

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, ի պահել ինձ յոյժ :

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ի պահել ինձ զարդարութիւնս քո։

Քանզի ամենեւին ես ոչ ամաչէի ի զգուշանալ ինձ ի պատուիրանս քո։

Խոստովան եղէց քեզ ՏԷր յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քոյ։

Զիրաւունս քո պահեցի, մի թողուր զիս մինչ ի սպառ։

Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ի պահել զբանս քո։

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ, մի մերժեր զիս ի պատուիրանաց քոց։

Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ։

Օրհնեալ ես դու ՏԷր, ուսո ինձ զարդարութիւնս քո։

Երթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քո։

Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ, որպէս յամենայն ի մեծութեան։

Ի պատուիրանս քո հոգացայ, և զգուշացայ ի ճանապարհս քո։

Զիրաւունս քո խոսեցայ, և ոչ մոռացայ զբանս քո։

Հատո ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զարթո զաչս իմ, և նայեցայց ի սքանչելիս օրինացդ քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի, մի թագուցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափաքեաց անձն իմ, ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամենայն ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից, անիծեալ այք խոտորեցան ի պատուիրանաց քոց։

Ի բաց արա յինէն զնախատինս և զարհամարհանս, զի զվկայութիւնս քո խնդրեցի։

Քանզի նստան իշխանք և չարախոսէին զինէն, այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութիւնք քո խոսք իմ էին, և խորհուրդք իմ յարդարութիւն քո։

Մերձեցաւ անձն իմ ի հող, ՏԷր կեցո զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ, ուսո ինձ զարդարութիւնս քո։

Ի ճանապարհս արդարութեանց քոց խնամատուն արա զիս, և քննեցիլ զոքանչելիս քո։

Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձրանալ, հաստատեա զիս ի բանս քո։

Զճանապարհս սուտից ի բաց արա յինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։

Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի, և դիրաւունս քո ես ոչ մոռացայ։

Մերձեցայ ես ի վկայութիւնս քո, Տէր՝ մի՛ յամօթ առներ զիս։

Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ։

Օրէնսդէտ արա զիս Տէր ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցիլ զնա յամենայն ժամ։

Խնամատուն արա զիս Տէր, և քննեցիլ զօրէնս քո, և պահեցիլ զնա բոլորով սրտիւ իմով։

Առաջնորդեա ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։

Խոնարհեցո զսիրտ իմ ի վկայութիւնս քո, և մի՛ յաղահութիւն։

Դարձո զաչս իմ զի մի՛ տեսից զնանրութիւն, ի ճանապարհս քո կեցո զիս։

Հաստատեա ծառայի քումմ՝ զբան քո յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս զոր և կարծեցի, զի դատաստանք քո քաղցր են։

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քում կեցո զիս։

Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի այք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յարդարուս, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ի պատուիրանս քո զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քում։

Ցիշեա զբան ծառայի քոյ, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեցէ զիս ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Ցիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց, և այք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Ցիշեցի ի գիշերի զանուն քո Տէր, և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ ի կեանս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու Տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով, ողորմեա ինձ ըստ բանի քում։

Խորհեցայ ի ճանապարհս քո, և դարձուցի զոտս իմ ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պահեցի զպատուիրանս քո։

Տոռունք մեղաց պատեցան զինև, այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ՝ վասն իրաւանց և արդարութեան քոյ։

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց, որոց պահեալ էին զպատուիրանս քո։

Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, զարդարութիւնս քո ուսո ինձ։

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում Տէր, ըստ բանի քում։

Քաղցրութիւն գիտութիւն ուսո ինձ, զի ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչ չև խոնարհեալ էի ես մեղայ, վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։

Քաղցր ես դու Տէր, և քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո։

Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից, այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո :

Մածաւ որպէս կաթն սիրտք նոցա , այլ ես զօրէնս քո խօսեցայ :

Բարի է ինձ՝ զի խոնարհ արարեր զիս , որպէս ուսայց զարդարութիւնս քո :

Բարի են ինձ օրէնք բերանոյ քոյ, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ :

Ձեռք քո արարին և ստեղծին զիս , իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո :

Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ եղիցին , զի ես ի բանս քո յուսացայ :

Ծանեայ Տէր , զի արդարութեամբ են դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս :

Եղիցի ողորմութիւն քո ի մխիթարել զիս , ըստ բանի քում զծառայս քո :

Եկեսցեն յիս զթութիւնք քո և կեցից . զի օրէնք քո խօսք իմ էին :

Ամաչեսցեն ամբարտաւանք որ ի տարապարտուց ա-նիրաւեցան յիս , այլ ես հոգայցայ ի պատուիրանս քո :

Խրատեսցեն զիս երկիւղածք քո , և այք ճանաչեն զ-վկայութիւնս քո :

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան քում , զի մի ամաչեցից :

Կարօտացաւ անձն իմ ի փրկութիւնս քո , զի ես ի բանս քո յուսացայ :

Ապաստեցին աչք իմ բանի քում , ասացի՝ երբ մխի-թարեսցես զիս :

Եղէ ես որպէս տիկ ի պարզի , զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ :

Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քոյ , երբ արասցես ինձ իրաւունս ի հալածչաց իմոց :

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս , այլ ոչ որպէս զօրէնս քո :

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են, ի նանիր հա-լածեցին զիս , օգնեա ինձ :

Փոքր մի ևս և կորուսանէին զիս յերկրի , այլ ես ոչ թողի զպատուիրանս քո :

Ըստ ողորմութեան քում կեցո զիս , և պահեցից զ-վկայութիւնս բերանոյ քոյ :

Յաւիտեան Տէր բան քո կայ յերկինս, ազգէ մինչև յազգ է հշմարտութիւն քո :

Հաստատեցեր զերկիր , և կայ :

Հրամանի քում մնայ օրս , զի ամենեքեան ծառայք քո են :

Եթէ ոչ օրէնք քո խոսք իմ էին , կանխաւ ևս արդեօք կորուսեալ էի ի խոնարհութեան իմում :

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո , զի նոքօք կեցուցեր զիս :

Քո եմ ես և կեցո զիս , զի զարդարութիւնս քո խնդրեցի :

Ինձ սպասեցին մեղաւորք ի կորուսանել , զի զվկայութիւնս քո ես ի միտ առի :

Յամենայն կատարածի տեսի զվախճան , յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո :

Որպէս սիրեցի զօրէնս քո , զօրհանապազ խոսք իմ էին :

Քան զթշնամիսն իմ իմաստուն արարեր զիս ի պատուիրանս քո , զի յաւիտեան իմ էին :

Քան զամենայն ուսուցիչսն իմ իմաստուն եղէ , զի վկայութիւնք քո խոսք իմ էին :

Քան զծերս իմաստուն եղէ , զի զպատուիրանս քո քննեցի :

Յամենայն ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ , որպէս զի պահեցից զբանս քո :

Ի բրաւունց քոց ես ոչ խոտորեցայ , զի դու օրէնագէտ արարեր զիս :

Որպէս զի քաղցր են ի բերան իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ :

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զամենայն ճանապարհս չարաց , զի դու օրէնագէտ արարեր զիս :

Ճրագ են բանք քո ոտից իմոց , և լոյս ուղիղ շաւղաց իմոց :

Երդուայ և հաստատեցի , զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո :

Խոնարհ եղէ մինչև յոյժ , Տէր կեցո զիս ըստ բանի քում :

Կամս բերանոյ իմոյ հաճեա Տէր , և զիրաւունս քո ուս ինձ :

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ , և զօրէնս քո ես ոչ մոռացայ :

Եդին ինձ մեղաւորք որոգայթ , ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ :

Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ :

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան՝ վասն հատուցման :

Ջանօրէնս առեցի , և զօրէնս քո սիրեցի :

Ծգնական և փրկիչ իմ ես դու , և ես ի բանս քո յուսացայ :

Ի բաց եղերուք յինէն չարք , և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ :

Ծգնեա ինձ ըստ բանի քումդ և կեցո զիս , և մի յաժմոթ առներ զիս ի յուսոյ իմմէ :

Ծգնեա ինձ և ապրեցո զիս , և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ :

Անարգեցեր զամենեսեան որք ապստամբ եղեն յարդարութենանց քոց , զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա :

Ցանցառս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի , վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո :

Ընձեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ , զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ :

Արարի իրաւունս և արդարութիւն , մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց :

Ընկալ զծառայս քո ի բարի , զի մի ամբարտաւանք զգուեսցեն զիս :

Սպասեցին աչք իմ փրկութեան քումդ Տէր , և բանից արդարութեան քո :

Արա ընդ ծառայի քումդ Տէր , ըստ ողորմութեան քումդ, զարդարութիւնս քո ուսո ինձ :

Ծառայ քո եմ ես , իմաստուն արա զիս , և ծանեայց զվկայութիւնս քո :

Ժամ է պաշտել զՏէր , խափանեցին զօրէնս քո :

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո , քան զոսկին և զտպատիճն :

Ամենայն պատուիրանք քո յաջողեցան ինձ , զի ատեցի ես զճանապարհս չարաց :

Քանչելի են վկայութիւնք քո , վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ :

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զողայս :

Զբերան իմ բացի և առի զՀոգի, ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ:

Նայեա առ իս և ողորմեա ինձ ըստ իրաւունս սիրողաց անուան քո:

Չճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում, և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

Փրկեա զիս ի զրպարտութենէ մարդկան, և պահեցից զպատուիրանս քո:

Երևեցո զերեսս քո ի ծառայս քո, և ուսո ինձ զարդարութիւնս քո:

Վտակք ջուրց իջին յաչաց իմոց, զի ոչ պահեցին զօրէնս քո:

Արդար ես դու Տէր, և ուղիղ են դատաստանք քո:

Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց Տէր, և ճշմարիտ են յոյժ:

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ:

Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա:

Մանուկ եմ ես և արհամարհեալ, և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:

Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են:

Նեղութիւնք և վիշտք գտին զիս, և պատուիրանք քո խոսք իմ էին:

Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան, իմաստուն արա և կեցո զիս:

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով, լուր ինձ Տէր, զի զարդարութիւնս քո խնդրեցի:

Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս, և պահեցից զվկայութիւնս քո:

Իսկ սրդ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս. և բազում էին որք ատէին զիս ի սուրբ պարտուց ։

Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. չար խօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան։

Մի՛ թողուր զիս, Տէր Աստուած իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն, հայեաց յօգնել ինձ, Տէր փրկութեան իմոյ :

ՍԱՂՄՈՍ Լ.

Աւասիկ թէ պահեցից զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով :

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել մեղաւորին առաջի իմ:

Խուլ եղէ և խոնարհեցայ, լռեցի ի բարութենէ՝ և ցաւք իմ նորոգեցան յիս :

Ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում, և ի խորհուրդս իմ վառեցաւ հուր :

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցոյց ինձ Տէր զկատարած իմ և զթիւ աւուրց իմոց քանիսն է, զի գիտասցից թէ որչափ ինչ պակասակաղ է յինէն :

Ահա չափով եդեր զաւուրս իմ, և կաք զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ամենևին ընդունայն է ամենայն մարդ մանկի :

Այսպէսն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի, դանձէ և ոչ գիտէ ումմ ժողովէ :

Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ՝ թէ ոչ դու Տէր, կամ կաք զօրութեան իմոյ՝ թէ ոչ ի քէն :

Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս, նախատինս անզգամաց արարեր զիս :

Խուլ եղէ և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր :

Ի բաց արա յինէն զհարուածս իմ, զի ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ :

Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդիսասայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ :

Լուր Տէր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց, արտասուաց իմոց մի՛ լռեր :

Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և անցաւոր որպէս ամենայն հարք իմ:

Թոյլ արա ինձ՝ զի հանգեսցից մինչ չև երթիցեմ ուստի ոչ ևս դառնիցիմ:

ՍԱՂՄՈՍ ԼԹ

Համբերելով համբերի Տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց :

Եհան զիս ի գերդ ատամանաց, ի կաւոյ և ի տղմոյ։ Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զդնացս իմ։

Ածրկ ի բերան իմ օրհնութիւն նոր, զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ։

Տեսցեն բազումք և երկիցեն և յուսասցին ի Տէր. և բանեակ է այր որոյ անուն Տեառն յոյս է նորա։

Ոչ հայեցաւ նա ի նանրութիւն, և ոչ ի մոլութիւն սուտ։

Բազում արարեր դու Տէր Աստուած իմ զսքանչելիս քո. խորհրդոց քոց ոչ ոք է որ նմանիլ քեզ։

Պատմեցի և խօսեցայ՝ և բազում եղեն քան զթիւ. ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար, լսելիս հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղացն ոչ խնդրեցեր։

Յայնժամ ասացի թէ ահաւասիկ գամ ես, ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ։

Առնել զկամս քո Աստուած իմ կամեցայ, և զօրէնս քո ի մէջ որովայնի իմոյ։

Աւետարանեցից զարդարութիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա չրթունս իմ ոչ արգելից ի քէն։

Տէր դու գիտացեր զի զարդարութիւնս քո ոչ ծածկեցի ի սրտի իմում, զճշմարտութիւն քո և զփրկութիւն քո։

Ասացի և ոչ թաքուցի զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո ի ժողովրդենէ մեծէ։

Այլ դու Տէր, մի՛ հեռի առներ զգթութիւնս քո յինէն. զի ողորմութիւն և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցի զիս։

Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ոչ էր նոցա թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

Բազում եղեն քան զհեր գլխոց իմոց, և սիրտ իմ ետոզ զիս։

Կամեաց Տէր փրկել զիս, և Տէր յօգնել ինձ նայեաց։

Ամաչեցեն և յամօթ լիցին այք խնդրէին զանձն իմ՝ բառնալ զոս. դարձցին յետս և ամաչեցեն՝ այք խնդրէին ինձ չար։

Կրեսցեն զամօթ առաջանայն վաղվաղակի, որ ասէին ինձ վաչ վաչ։

Ցնծացեն և ուրախ լիցին ի քեզ, ամենեքեան որ խնդրեն զքեզ, Տէր:

Ասացեն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, և այք սիրեն զփրկութիւնս քո:

Ես աղքատ և անանկ եմ Աստուած, խորհեա զիս. օգնական և պաշտպան իմ ես, և դու Աստուած իմ մի՛ յամենաք:

Փառք Հօր և Որդւոյ: Ա.յժմ և միշտ:

Ջոյ. Եւ ևս խաղ: Մաղ. Օրհնութիւն և փառք:

Վ.ԵՑԵՐՈՐԴ ՓՈՔՐՈՅ. ՍԱՂՄՈՍ Թ

Երանի որ խորհի զաղքատն և զանճանկն յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահճին ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, եա մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար, երբ իցէ պի մեռցի և կորիցէ անուն նորա:

Մանէր տեսանել զնանրութիւն, խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

Ա.ռաջս ելանէր և զնոյն խօսէր, զինէն չչնջէին ամենայն թշնամիք իմ:

Խորհեցան չար ի վերայ իմ, բան անօրէնութեան ելին ի վերայ իմ:

Միթէ որ ննջիցէն՝ այլ ոչ ևս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և հան յուսացեայ:

Որ ուտէր զհաց իմ, յառնախնայ առնել ինձ խաբէութիւն:

Ա.յլ դու Տէր ողորմեա ինձ, կանգնեա զիս, և հատուցից նոցա:

Ցայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս, զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Ա.յլ զիս յառթութեան իմում ընկալար, հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի:

ՍԱՂՄՈՍ ԽԱ

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած:

Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզօր և կենդանի. երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ Թէ ուր է Աստուած քո:

Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ. քանզի երթեալ զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ:

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և ի ձայն բարեկենդանութեան:

Աւրդ ընդէր տրտում ես, անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, ի Հերմոնէ ի լեռնէ փոքուէ:

Խորք ի խորոց կարդացին առ քեզ, ի ձայն սահանաց քոց:

Ամենայն հրոսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ:

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր, գիշերի զօրհնութիւն նոր. և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց:

Ասացի Աստուծոյ՝ ընդունելի իմ ես. ընդէր մերժեցեր զիս, ընդէր՞ տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ, յասել ցիս զօրհանապազ՝ Թէ ուր է Աստուած քո:

Աւրդ ընդէր տրտում ես, անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

ՍԱՂՄՈՍ ԽԲ

Դատ արա ինձ Աստուած, և իրաւ արա ինձ ի պատասանի իմում:

Ցազգէ օր ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ և նենգաւորէ փրկեա զիս:

Զի Աստուած հզօրիչ իմ ես, ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ա՛ռաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո զի ա՛ռաջնորդեսցեն զիս, հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ:

Ա՛րդ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Փառք Հօր և Որդւոյ: Ա՛յժմ և միշտ:

Ք՛ր. Եւ ես խաղ: Մ՛ղ. Օրհնութիւն և փառք:

Աղօ՛թ ցո՛ւցանո՛ս մե՛զ տէ՛ր: Բ. 3:

Ի նեղութեան իմում էս առ Տէր կարդացի. լուաւ Աստուած յանդնդոց դժոխոց ողորմի իմում:

Լուր Տէր ձայնի իմում, զի բնկեցեր զիս ի խորս ծովու, և չրջանք գետոց պաշարեցին զիս:

Ամենայն զրօսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ. և ասացի, թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

Ա՛րդ էցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո. զի հեզան զիս ջուրք մինչև յանձն իմ, և անդունդք անհնարինք պաշարեցին զիս:

Ելուա գլուխ իմ ընդ փոսսորս լերանց՝ իջի էս ի խորս երկրի, և սահս զնիցս նորա, զի էին որպէս աղիք յաւիտենից. և հոգին յոտակատութենէ կեանք իմ:

Առ քեզ Տէր Աստուած իմ ի նուազել անձին իմոյ կարդացի, և զքեզ Տէր յիշեցի. և մտցին աղօթք իմ ի տաճար սուրբ քո:

Զի որք պահէին զունայնութիւն և զսուտութիւն, յողորմութենէ իւրեանց մերժեցան:

Ա՛յլ ես ի ձայն օրհնութեան խոստովան եղէց քեզ. մատուցից պատարագս Տեառն, և կատարեցից զուխտ իմ ի փրկութեան:

Ե՛ւ ի ձո՛ւն անկա՛ւ ոչո՛ւն ազբա՛յն.

ՇԱՐԱԿԱՆ ԳԿ. ՍՏ.

Զա՛րհուրեա՛լ զձգա՛ցաս՝ա՛ւա՛ղ մա՛ռ՝ամա՛ռ՝զ անձն իմ. յա՛հա՛զ քոց զատա՛ռնա՛ց. յանկարծ՝ մա՛ռնեմ՝ նա՛ց: Երէց՝ կրկնէ:

Դ-ԲՅԵ-Լ ԱՉՕՂ+ Յ-ՂԵ-ՈՈ- ՇԲՓ-ԲԵՔՆ .

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի: 411 :

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ· ՍՏ

Քա՞նզի կամիս, սիրե՛ցա՛ւ անձն իմ, ի միջոցս մեծամեծս. արդ կա՛ց և ինձ ինձ. աննեարե՛լ պատահանն : Երէց- կրկնե- :

Դ-ԲՅԵ-Լ ԱՉՕՂ+ Յ-ՂԵ-ՈՈ- ՇԲՓ-ԲԵՔՆ.

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի : 411 :

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ· ՍՏ

Ա՞րդ անկեա՛լ անձն իմ, սիրե՛ցա՛ւ անձն իմ. փըրկի՛չ եւ բաբերա՛ր. խնայեա՞ց ինձ ի միջոցեա՞ց. եւ ո՞չ պատրանա՛ք ինձ բանսիմի՛ղ : Երէց- կրկնե- :

Փառք Հօր և Որդւոյ: Ա.յժմ և միշտ :

Ե- ՈՉ- ԱՒԵՆ.

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու Իսահակայ Յակովբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ Տէր թող զմեզս իմ :

Որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն զարդ նոցա. ամենակալ :

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխոր, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ :

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենա :

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո, և ահաւոր է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենա :

Դու Տէր բարձեալ, գթած, երկայնամիտ, բազում ողորմ. և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենա :

Դու Աստուած ոչ եգեր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ, որք ոչ մեղան քեզ. ամենա :

Այլ եգեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենա :

Զեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենա։

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենա։

Բարկացուցի զարհամարհութիւն, և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն քո. ամենա։

Եւ արդ Տէր խոնարհեցուցանեմ գծունկս սրտի իմոյ, և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ. ամենա։

Մեղայ Տէր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն, թող ինձ Տէր, թող ինձ. և մի կորուսաներ զիս քոյ անօրէնութեան իմոյ. ամե։

Մի յաւիտեան բարկանար ինձ Տէր. և մի յիշեր ըզչարիան իմ, և մի պարտաւորեր զիս ընդ իջեալս ի ներ քոյ երկրի չարեօք. ամենա։

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես. և յիս ցոյց զբարեբարութենդ քո, որ անարժան եմ. ամե։

Կեցուացես զիս քոյ բազում ողորմութեան քումբ. և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամե։

Զքեզ Տէր օրհնեն ամենայն զուարթունք երկնից. և քո են փառք յաւիտեան. ամէն։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ. ՍՏ

Ա՞մենաճկալ. քանի՞ զմե՛զս իմ զի Աստուած ե՞ս անպա՞շխարհա՞գ։ Երէց՝ երկնե՛։

Աղ՝ ղ՛ղյնե՛լ ե՛ն.

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու Իսահակայ։ 412։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ. ՍՏ

Ե՛ւ գշո՞գիդ ասէր. մի հա՞նե՛ր յի՛նէ՛ն զի Աստուած ե՞ս անպա՞շխարհա՞գ։ Երէց՝ երկնե՛։

Ե՛՝ ղ՛ղյնե՛լ ե՛ն.

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու Իսահակայ։ 412։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ. ՍՏ

Ե՛ւ փըրկեա՞ զի՛ս. յա՞հա՞գի՞ն հըրա՞յն. զի Աստուած ե՞ս անպա՞շխարհա՞գ։ Երէց՝ երկնե՛։

փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։ Այժմ և միշտ։
Աղաչեմ և խնդրեմ ի քէն Տէր՝ թող ինձ զմեզս իմ։
Բազումզորամ Տէր, ողորմեա ինձ։
Առաւած, քաւեա զիս զմեղաւորս։
Արարիչ իմ և յոյս Առաւած, զիա՛ յիս ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա ինձ բազմամեղիս։
Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս Առաւածածին Մարիամ, բարեխօսեա առ Տէր վասն իմ մեղաւորիս։
Ամենայն սուրբք Առաւծոյ, բարեխօսեցէ՛ք առ Հայր ողորմելին վասն մեր մեղաւորացս։
Քրիստոս Որդի Առաւծոյ անեղական, ընկալ զաղաչանս մեր, զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։
Յաղթօղ զօրութեամբ սուրբ և կենդանարար և պատուական խաչիդ քո Տէր պահպանեա զմեզ։
Առաքեա Տէր զհրեշտակ խաղաղութեան քո, որ եւ կեալ պահեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի։
Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ Տէր, յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քո և ողորմեա մեզ։

ՁԱՂՔ ԲՐՈՂ.

Եկեալք ի խոստովանութիւն ապաշխարութեան հաւատով զյոյս միածնի Որդւոյն Առաւծոյ զիցուք ի սիրտս մեր, խնդրելով ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց։ Վասն զի նա ինքն է նախախնամողն Առաւած յաւիտենական, որ եկն կամաւ Հօր ի փրկել զաբարածս. և առաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, շնորհելով հանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալսն և զառաջնեալսն մեզաք յապաշխարութիւն քաւութեան։ Արդ եկայք ամենեքեան խոնարհեալ անձամբ, բնկենալ սրտիւք անկեալք և լացեալք առաջի Տեառն արարչին մերոյ, զի անցուցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարեթարութեամբն իւրով։ Ամենակալ Տէր Առաւած մեր, կեցո և ողորմեա։

ԱՂՕԹ.

Տէր Առաւած փրկութեան մերոյ, որ ողորմածդ ես և գթած, երկայնամիտ, բազումզորամ, և զղջանաս ի վերոյ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին,

այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն և զկեանն։ Դու Տէր առատ ողորմութեամբ քով միխիթարեա զծառայքս քո, և տուր սոցա տեղի ապաշխարութեան. հաշտեա մարդասիրութեամբդ քո, և արա զառատ անդամս նմա ևկեղեցւոյ քումմ սրբոյ։ Որպէս զի առողջացեալք հոգւով, խոստովանութեամբ և ապաշխարութեամբ մըտցեն յեկեղեցի քո սուրբ. և ընդ ժողովրդեան քումմ քեզ հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօ ՍԱՂՄՈՍ Ծ. ոչխարին.

ԿՁ. Ցօղնա յիս մշակաւ և սուրբ եղէց, լաւ և քան զձիւն սպիտակ եղէց։

ՓԽ. Ողորմեա ինձ Աստուած, քոմ մեծի ողորմութեան քումմ, քոմ բազում գթութեան քումմ քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լաւ դիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր, և զչար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթեսցես ի դատեն քո։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ,

Դու Տէր գճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և ըզծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղնա յիս մշակաւ և սուրբ եղէց, լաւ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զՀոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամպարիշտք առ քեզ դարձցին :

Փրկեա զիս յարենէ Աստուած , Աստուած փրկութեան իմոյ . ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում :

Տէր , եթէ զբերանս իմ բանասա , բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո :

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք , բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ , զսիրտ աւրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ :

Բարի արա Տէր կամօք քովք Սիովնի , և չինեսցին պարիսպքն Երուսաղեմի :

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան , ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ : կ . 21 :

Եւ կատարեսցին աւուրք սգոյ քոյ . և ժողովուրդ քո ամենեքին արդար , և յաւիտեան ժառանգեսցեն զերկիր , պահել զնորատունկ գործոց ձեռաց իւրեանց ի փառս : Ամենաւարն հազարաւոր եղիցի , և կրտսերն յազգ մեծ . զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա : 22 :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԿԻԵԼԷ ՄԱՐԳԱՐԷԷ : Լ . 24 :

Այսպէս ասէ Տէր , և առից զձեզ ի հեթանոսաց , և ժողովեցից զձեզ յամենայն ազգաց , և առաջի զձեզ յերկիրն ձեր : Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ , և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց , և յամենայն կռաց ձերոց սրբեցից զձեզ . և տաց ձեզ սիրտ նոր , և ոգի նոր նորոգեցից ի ձեզ . և հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց , և տաց ձեզ սիրտ մարմնեղէն , և զոգի իմ տաց ձեզ : Եւ արարից՝ զի յարդարութիւնս իմ գնասջիք , և զիրաւունս իմ պահիցէք և առնիցէք զնոսա . և բնակիցէք յերկրին՝ զոր եառ Յարցն ձերոց , և եղիջիք ինձ ի ժողովուրդ և ես եղէց ձեզ յԱստուած : Եւ փրկեցից զձեզ յամենայն պղծութեանց ձերոց , և կոչեցից զգորեան և բազմացուցից զնա , և ոչ ածից ի վերայ ձեր սով : Եւ բազմացուցից զպտուղ ծառոց , և զարդիւնս անդոց , զի մի՛ և ընդունիցիք զնախատինս սովոյ ի մէջ ազգաց : Եւ յիշեսջիք զճանապարհն ձեր չար և զգնա-

ցըս ձեր զանբարիս, և տաղտկասիք յերեսաց անօրէնութեանցն ձերոց և ի գարշելեացն ձերոց։ 31։

Գոզոսի առաքիլոյն յերբայեցւոց թղթոյն է ըմբերցուածս։ ԺԹ. 19։

Ունիմք այսուհետև եղբարք, համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի, զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն՝ մարմնոյ իւրոյ. և քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ. մատիցուք հշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց և մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան. պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն։ Եւ զգուշացուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց. և մի՛ թողցուք զժողովս մերս, որպէս սովոր են ոմանք. այլ մխիթարեցուք, և այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձենալ։ Զի կամովար մեօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան հշմարտութեանն՝ այնուհետև ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատարագ, այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառակորդսն։ Ումբհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի, առանց ողորմութեանց՝ ստ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ ո՞րչափ առաւել պատժոյ արժանի համարիցիք գայն, որ զՈրդին Աստուծոյ ստ ոտն ետար, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով սրբեցաւն, և զՀոգին շնորհաց թշնամանեաց։ Ումմ գիտեմք զայն որ ասացն. իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից, ասէ Տէր. և դարձեալ՝ թէ դատի Տէր զժողովուրդ իւր։ Ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։ 31։

Ապ- ՍԱՂՄՈՍ ԺԱ. ՅՈՒԼԻՍ.

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս։ 410։

Ամէնայն, Օրհի

Որոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու։ Ի. 36։

Ջտէրն մեր Յիսուս Քրիստոս

Աղաչէր ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ հաչ ընդ ն-

մա. և մոեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ չիւ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ ոտս նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեացն զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ով և որպիսի ոք կին մերձենայ ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնա. Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ։ Եւ նա ասէ. ասա վարդապետ։ Եւ ասէ. երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մին պարտէր հինգ հարիւր դահեկան, և միւսն յիսուն. և իբրև ոչ զոյր նոցա հատուցանել, երկոցունց չնորհեաց. արդ ա՛ սա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմոն. ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն չնորհեաց։ Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար։ Եւ դարձեալ ի կինն կոյն, ասէ ցՍիմոն. տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք և թաց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց. համբոյր մի զու ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ. իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ։ Վասն որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում չատ թողուցու՝ չատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թողու։ Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն։ 50։

Աղ՝ ասկաւ՝ ֆրոպ

Եւ ևս խաղաղութեան զՏէր ազաչեացուք։ Լսելի Տէր ձայնի ազաչանաց մերոց, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Ք՜ո. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Եւ՝ ապա կրկին շարէ, զոր ասացեալ է սրբոյն Բարսղի Սեբաստիոյ հայրապետին ի վերայ ապաշխարողաց։

Տէր Աստուած Հայր ամենակալ արարիչ երկնի և եր-

կրի, որ յակնարկել բարեբար կամաց քոց գոյացուցեր զամենայն արարածս, զերևելիս և զաներևոյթս զերկնայինն և զերկրայինս. և նախանձամբեամբ քով առեղծեր զմարդն ի հողոյ, և ըստ պատկերի բարեբարութեանդ պատուեալ մեծարեցեր զնա, չնորհելով նմա զանմահութեան և զանապականութեան զկենդանութիւն. ինքնիշխան կամօք և փառօք զարդարեալ պատկեցեր զնա, պարգևելով նմա զվայելչութիւն ուրախութեան դրախտին փափկութեան, գործել զնա և պահել, և հանապազ մշանջենաւորել յանճառ պարգևան, և յաւազանալ օր ըստ օրէ ի գործս բարիս. և յաւելեր նմա զպատուիրատնադրութիւն կենսաբեր հրամանի բարեբար կամաց քոց. զի յաւելուածով պատուիրանադրութեան՝ մեծի փառաց և պատուոյ զնա ճոխացուցանէիր. և ի ձեռն բարեյօժար կամացն հնազանդութեան՝ յեա առաւել ի գերակատար կեանսդ զնա փոխէիր յիմանալի կայանս բնակութեան վերինն Երուսաղեմի:

Իսկ նա ի ձեռն օձապատիր չարին խաբէութեան՝ ըզգործի կենացն և զպատճառս բարեացն անձնիշխան յօժարութեամբ ի կողմն բանսարկուին դարձուցեալ, և ինքնայօժար կամօք գործակցեալ խաբէութեան չարին, ի բաց չեղեցաւ ի քումմէ արարչագիր և կենսաբեր պատուիրանադրութենէ. և ի ներքոյ անկեալ չարին հնազանդութեան, նախամեծար առնելով զվրիպական բանս պատրող թշնամւոյն՝ քան զքո ստուածագիր օրինադրութիւնդ, կնոջն լսելով խրատու, կորոյս զսիրական վեհ խնամութիւնն՝ առիցն հնազանդեալ զվնասն աւդնորդական տէրութեան, անհամեմատաբար և անխորհրդապէս ի բաց մերկացաւ զբոցաճաճանչ լուսեղէնն զարդարանան: Եւ հակառակաբար հոյիայթանօք չանայր ծածկել զամօթալիր մերկութիւնն պատուհասուն սիրեալն՝ անյուսացեալ ի զօրութիւն ամենակալիդ, կարծէր թաքչել յամենատես գիտութենէ ստուածութեան քո՝ պատճառելով զպատճառս մեղաց, եթէ կինս զոր ետուր ինձ՝ սա եղև պատճառ: Վասն որոյ զգաւոց և զանիծից ժառանգեաց զկեանս, ի ներքոյ անկեալ մահու և ապականութեան, ըստ անուսո և ստուածային հրամանիդ՝ ասելով, եթէ՝ յօրում յաւուր ուտիցես մահու մեռանիցիս. որով և թագաւորեալ սիրեաց ի վերայ

մեր իշխան մահու, և զինութիւնս մեր պրաւեալ ինքեան հնազանդութեամբ պահակն կոթառեան, և զամենեսեան ծառայս իւր արարեալ, վարեաց ի գործ խիստ ծառայութեան գժոխոց։

Իսկ դու Հայր բարերար և բազմագութ յառաջս և յամենաբաւ մարդասիրութենէդ քումմէ յաղթեալ՝ ոչ հանդուրժեցեր զանարատս ձեռին քո առեղծուածս յայնպիսի վտանգաւոր ազէաս տարակուսանաց տեսանել. այլ բազկազօրավեալ հայրախնամ սիրով քո զիաւցար յորդիս մարդկան, և յայց եղեալ կարուսելոց, առաքեցեր ի խնդիր գմիածին և զէակիցդ Հօր զծագածին և զանբաժանելի զէական Բանդ Աստուած, որ եկն և էառ զկերպարանս գձառութեան ազգատացեալ բնութեանս մերոյ, ներբնաւորացեալ ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ Աստուածածնէն, և յանձն իւր էառ զյանցանս սխալմանց մեզոցն Ադամայ. և աստուածախնամ տեսչութեամբ իւրով անօրինեալ զամենայն կերս մարդկայինս յանձն իւր բայ ի մեզոց, եղև պատուղ մարդկութեանս։ Հովիւն երկնաւոր եկն և խնդրեաց զոչխարն զկորուսեալ ի վերայ լերինն բարձու, և առեալ եղ ի վերայ կենաարեր ուսոյ իւրոց, դարձուցանելով ի հայրենի բնակութիւնն, ուստի արտաքսեցաւն տարապրութեամբ. և զանիծիցն և զյաւոյն երոյծ զդատապարտութիւն, իւրով անպատժական և անպարտական մահուամբն։ Եւ զանկեալն ի ձեռս սատակաց վերաւին ողջացոյց պատերով զվէրս նորա, արկանելով ի նա ձէթ և գինի, և առնելով ի պանդոկիս ամէնբնակալ սուրբ կաթուղիկէ Եկեղեցւոյ. որ ժողովէ զամենայն ցրուեալս և զկեղեքեալս, և միաւորէ յորդիգրութիւն ժառանգութեան Հօրդ երկնաւորի. և հաչատարար և մեղսաքաւիչ իւրով պատարագաւն որ ի վերայ խաչին՝ բոլորապատուղ գինեն քեզ ընծայեցոյց ընդ մեր. և վասն մերոց պարտեացն զանձն իւր փոխանակելով։ Եւ զարձեալ վերաւին առացաւ զմեզ սուրբ սիրով իւրով, և ազատեաց ի ծառայութենէ բանսարկուին, պատառելով զմեսրհակ զատապարտութեան յանցանաց մերոց, որ կայր մեզ հակառակ. երարձ զայն ի միջոյ և բևեռեաց ընդ խաչափայտին. մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս մեքենաւոր զօրութեան նոքա. յայտ յանդիման խայտառակեալ ետուակեաց զնա

յանձին իւրում զօրութեամբ աստուածութեան իւրոյ: Եւ իշխանական պետութեամբ ինքեալ ի տարին սանդարամետն զժոխոց, ազատեալով զզօրութիւն բանութեան կարծեալ իշխանին աշխարհի, որ բարձրացեալ և լեռնացեալ ամբարտաւանութեամբ ունէր գրաւեալ ընդ իւրեամբ զբնութիւն մարդկութեանս. որով ժամանեալ հհաս թագաւորն ի բարձունս՝ հզօրն ի պատերազմի և ելեալ ի բարձունս հպարտացելոյն, և կապեաց զհոկայն՝ աւերելով զամուրս նորա, և յափշտակեաց զգանձն նորա, և դարձեալ եմոյծ զարքունական պատկերն ի դրախտն՝ ուստի եհան, զեօթնեկին շնորհն տալով՝ զոր կորոյն եօթնեակ յանցանօք: Քանզի չինեաց խնամատութիւնն Հօր զառն զխորանն Դաւթի, զանկեալն և զկործանեալն վերստին նորոգեաց, ուստի լինելոց նորա ծագիկ յարմատոյն Ցեսեայ. և հանգեաւ ի նա հոգի սուրբ, որ ի մեզ խորհրդածի. հոգի իմաստութեան և հանճարոյ. և լցեալ եղև հոգւով երկիւղիս արքութեան: Զի ուր երկիւղ Տեառն է, անդ պատուիրանաց պահպանութիւն. և ուր պատուիրանաց պահպանութիւն, անդ և ոչ ինչ յանցանք: Քանզի դյանցանս մեր էառ, և զցաւս մեր եբարձ. և զբիզ միայն ծանոյց մեզ Հաւատաեալ Աստուած կենդանեաց և մեռելոց, առնելով խաղաղութիւն առնամբ խաչին իւրոյ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի ի նմին: Եւ միջնորդական սուրբ արեամբն իւրով հաշտեցոյց զկամս քաղցրութեան սիրոյ քո առ արարածս: Քանզի բարձաւ միջնորմն, և յուժաւ կրճեին, որ կայր խափան և արգել մերոյ փրկութեան. և տեղի տուեալ սրովբէիցն շրջապատեալ բոցիզէն սրոյն, որ պահէր ըստնանապարհս ծառոյն կենաց. վասն զի ընդ մեզ եղաւ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք Ցեսուս, որ առաջնորդեաց մեզ ընդ երկնաչու պողոտայն փրկաւէտ կենացն, և անցոյց ի վեր ընդ դրունս երկնից, և նստոյց զնա ի վերոյ իշխանութեանց և պետութեանց: Եւ խրախոյս առեալ Հաւատացելոյ՝ ասէ. քաջալերեցարուք ես յաղթելոյ աշխարհի, և ետուս ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն: Այս որս և ասել մեզ Համարձակապէս. թէ ուր է մահ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո. քանզի եղաք փրկեալք և ազատեալք արեամբ միածնի Որ-

դւոյ քո, Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք։

Խաղաղութիւն ամենեցուն։

Առաւծոյ երկրպագեսցուք։

Եւ արդ Տէր Աստուած մեր բարերար և բազմագութ. որ այսպիսի անճառ և անպատում բարեաց հաղորդս զազգս մարդկան արարեր. որով մեծարեցեր զմեզ ի ձեռն Միածնի քո անօրէնութեան. որ եկեալ կատարեաց զամենայն գրեալս օրինաց և մարգարէից և քաղցրուացոյց վարդապետութեամբ իւրով ժողովեաց զդպրեալ ազգս մարդկան. և միաւորեալ միացոյց զամենեսեան միաբան սիրով ի մի հաւատս և ի մի յոյս կոչման քոյ արարչական խնամոց զթութեանցդ. և հօրդեաց ճանապարհ փրկութեան ամենայն աիեզերաց, պարգեւելով զառհասատչեայ կենդանութիւն Հոգւոյն սրբոյ նորածնելոց նոր ժողովրդոց որդւոց առաջաւոր. կազմելով զդեղ և զպսպեզանիս ապաշխարութեան՝ իւրով առաջս մարդասիրութեամբ, ասելով. եթէ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն. և դարձեալ՝ թէ եկայք առ իս ամենայն աշխատեալք և որք ունիք բեռինս ծանունս մեղաց և ես հանդուցից զձեզ։ Եւ յորդորական ասաւածախօս ձայնիւն յորդորեալ քաջալերեաց զամենեսեան ի հնազանդութիւն ասաւածային լծոյ ծառայութեան, ասելով. եթէ առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտիք հանդիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ թեթեւ։

Եւ արդ մեք ծառայքս քո ժողովուրդ և խաշն արօտի քո՝ զինք արեան միածնի Որդւոյ քո՝ ժողովեալք ի գաւիթ սուրբ եկեղեցւոյ քո, և խոնարհեալ ազաչեմք ըզբազմագութ և զառատ մարդասիրութիւնդ, և հայցեմք ի քաղցրութենէ քումմէ դթութիւն և զթողութիւն մեղաց մերոց։ Խոնարհեցո Տէր զունկն քո և լուր ազաչանաց ծառայից քոց. և ողորմութեամբ քով թող մեզ զյանցանս մեր զկամայն և զակամայ. և արա զմեզ որդիս լուսոյ և որդիս աւրինէնեան, զորս զրեցեր ի զիրըս որդեգրութեան ժառանգութեան սրբոցն ի լոյս. որ չարին պատրանօք որացեալ եղաք կամօք մերովք ի մեղսասէր և ի կամակոր նորա կամեն, որոչելով ի հայ-

բախեսամ սրարչական գիծոց քոց, տարագիր առնելով զանձինս մեր յորդեդրութենէ ժառանգութեան Հօրդ երկնաւորի. և ոչ պահեցաք զգուշութեամբ զառացուածս և զպանձս հոգևոր մեծութեանն, զոր սուրբ աւազանաւն ստացաք զմաքրութիւն, և զանմեղութիւն և զարդարութիւն, և զհոգևոր մեծաշուք փառքսանութիւն: Այլ անառակ վարուք մերովք ծախեցաք զհայրենատուր մեծութիւնն, մինչև ժամանեցաք ի վերայ մեր յեսին աղքատութիւնն, և սովամահ չքաւորութեամբ նուաղեցան անձինք մեր: Եւ յոյս ակնկալութեան մերոյ չիք ոք բաց ի քէն Տէր, զի դու ես Աստուած մեր, և զանուն քո անուանեմք զօրհանապազ: Հայր երկնաւոր, հայեաց ի զարձումն ծառայից քոց, և ընկալ զզղջումն խոստովանութեան մերոյ, որպէս զանառակ որդւոյն ընկալար զդարձումն, և վերստին զարդարեցեր զնա արփիապարգ և լուսեղէն զգեստիւն, և առաջին պատմուճանին ծածկութիւ, զոր ինքեան կամակոր և անառակ վարուքն մերկացաւ: Վասն որոյ և մեք նորին յօժարութեամբ զղջացեալ սրտիւ և բեկեալ անձամբ դառնամք առ քո բարեգթութիւնդ, առելով. Հայր մեղաք յերկինս և առաջի քո, ոչ ևս եմք արժանի կոչիլ որդի սուրբ անուանդ քո: Այլ զմեզ իբրև զմի ի վարձկանաց քոց: Անխափան Տէր ողորմութեամբ և քաղցրութեամբ կամաք քովք. և հայրական գիծով սիրոյ բարերարութեան քո ել ընդ առաջ մեր. և զգեցո մեզ զառաջին պատմուճանին զլուսափայլ վերարկուն, զոր զգեստուրեալ զարդարեցաք աւազանին լուսափայլ պայծառութեամբն: Մերկեա ի մէնջ զհնացեալ պատմուճան չարին ծածկութեանց, զոր ծուլութեամբ և անառակ վարուք մերովք զգեցաք, և օտարացաք ի հայրական խնամոց քոց: Ցուր մեզ Տէր Աստուած մեր զքո զուարախական և զմարգասիրական զհամբոյրդ, տալով զինքիք արքութեան ի հոգիս մեր. և զմատանին արդարութեան տպաւորեա յաջոյ ձեռին մերում, միշտ ունելով մեզ զնշան և զդրոշմն ուխտին սրբութեան, զոր ուխտեցաք միջնորդութեամբ արեան Որդւոյ քո սիրելւոյ: Այրս մեզ զբաժակն ուրախարար, զոր խառնեցեր ի խառնարան սրբութեան աստուածընկալ սեղանոյ քառաթև խաչին, յորում զննաք զգենումն ճշմարիտ պատարագին եղինն պարա-

բակի, և հրաւիրեցեր ի պատրաստել ճաշն հարսանեաց միածնի Որդւոյ քո սիրելւոյ, զպակասամիտն ի հանճարոյ՝ ատտուածային երկիւղին և պատուիրանին ըզգուշութեան, և անզգամացն պատուիրեցեր թողուլ զանզգամութեան ճանապարհն։

Եւ արդ տուր մեզ զհացն արքութեան մարմնոյ միածնի քո, որով կեցցուք. և արբո զմեզ զինւով անուշութեան ուրախութեամբ տուր բաժակին. զի արբեալ միշտ ուրախասցուք յանապատ ուրախութիւնդ. և վայելեսցուք յանկապուտ ճախութիւնդ, յերջանիկ յօթևանս Հօրդ երկնաւորի. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի արդոց քոց. և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՁԱՆՁ ԱՂՕՐԿՆ ԱՆՆ ՍԱՂՄՈՍ ճԺԽ. Ի ՐԱՒ.

ԿՅ. Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ և խոստովան եղէց Տեառն։

ՓԽ. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է։ 331։

ԱՂՕ ՍԱՂՄՈՍ ՂԲ. Ի ՐԱՒ.

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանեարուք զի նա է Տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քանզի բարի է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

ՁԱՆՁ ՓՂՐ. Սուրբ եկեղեցեաւս։ Աղ. Ի մէջ ատեարիս։

Եւ ԿՐԹՈՅ ԵԱՆԿՈՊՈՍ ԿՄ ԱՆՔԸՆՑՆ ՂՅՍ ՕՐՀՆՈՒԼՒՆ։

Օրհնեալ է ամենասուրբ երրորդութիւնն ի բարձունս Հայր և Որդի և սուրբ Հոգին. մեծ գոհութիւն երից անձանց, և մի աստուածութեան անսահմանելոյ, անփոփոխելոյ, ամենակարողի, անմահի, ամենակեցուցա-

նոցի, ամենասարգելի, անճառի, պատիւ երկրպագութիւն և մշտնջենաւոր փառաբանութիւն յերկնաւորաց և յերկրաւորաց, ի հրեշտակաց և ի մարդկանէ, ի սրովբէից և ի քերովբէից, ի սերաթէանց և յիշխանութեանց. երրորդութեան երրեակ և մի աստուածութեան, որ էնն յէութեան յիակութեան համագոյական աստուածութեանն՝ հարթ և հաւասար ի խորութիւն և ի բարձրութիւն՝ ի լայնութիւն և յերկայնութիւն: Որ իւրով կանխագէտ զօրութեամբն ապար զերկինս և զերկիր. ձգեաց զերկիրըս առանց հիման խորանաձև հաստատութեամբն, և արկ ի վերայ նորա դրազմութիւն ջուրց. զնոսա հրեղէնքըն ընդ ջուրն և ոչ չիջանին, զի նմա ամենայն ինչ կարելի է. սահմանեաց զծով աւազով. բուսոյց յերկրէ զծառս և զծաղիկս՝ հանդերձ սերմանեօք. պատուճաց չորիւք եղանակօք զրոլոր շրջանս տարւոյն. եղ զնոսա հակառակ անհաչտելի՝ և ի սէր անբակտելի. ապար ապի ազգի զեռունս ի ծովս, և զթռչունս թեւաւորս, և բազում զազանս վայրենիս: Ապա յետ ամենեցուն ապար զմարդն ձեռօք իւրովք ըստ պատկերի իւրում, և փչեաց ի նա չունչ կենդանի, և եղև մարդն ի հոգի կենդանի. և զամենայն ինչ հնազանդ ապար ի ներքոյ ոտից նորա, և կացոյց միջաւայրման՝ կենաց և մահու. և ետ նմա պատուէր չճաշակել ի պտղոյ ծառոյն գիտութեան, և ի պահել պատուիրանին խոստացաւ նմա զվերնայարկ վերինն երանաւորեմի: Իսկ բանսարկուն գործի իւրոյ չաբութեան գտեալ զօճն, և նոքաւ խօսեցաւ ընդ կնոջն՝ ի պատճառս աստուածանալոյն, եթ նմա ուտել ի ծառոյն գիտութեան. և մերկացաւ ի լուսեղէն փառացն: Իսկ բարեբարին քաղցրաձայնեալ ասէ. ուր ես Ադամ. և ի զոլ նորա ի դրախտն, նկարեցաւ զալուստն Միածին Բանին իւրոյ յաշխարհս. և ձայն ոտից նորա՝ դրշմեաց զՅովհաննէս Մկրտիչ. իսկ Ադամայ անզգուշութեամբ գիտեալ ի մահ՝ զանպարտականն Աստուած պատճառս իւրոյ կորուածոյն համարեալ՝ ասէր թէ կինս զոր եստուր ցիս՝ սա յանցոյց զիս: Իսկ զաստուածն արդարութեան անէծ զնոսա՝ և զիշատակարս նոցա, և եհան զնոսա արտաքոյ դրախտին. սակայն ոչ ժամկարելով ողորմութեամբն՝ ընկալաւ զպատարագն Աբելի, անմահացոյց զզաւակ նորա Ենովք, պահեաց զնոյ ի տապանին բազմահոյլ կենդա-

նեօք , և զամբարչեաքն կայէն իւրովք ծննդովքն առ հանապազ անձրեւօք ջնջեաց : Օրհնելով զառաքեցորդն Ա.Բրսամ՝ խոստանալով նմա երդմամբ , բազմացուցանել զզաւակ նորա իբրև զաստեղս երկնից : Բազում նըշանօք և արուեստիւք խօսեցաւ առ հարան մեր՝ առաքելով զմարգարէին քարոզիչս : Իսկ իբրև եկն լրումն ժամանակին , խօսեցաւ ընդ մեզ Որդւովն , որ եկն և մարմնացաւ ի սրբոյ Կուսէն , և եմուտ ընդ օրինօք , զի զորս ընդ օրինօքն էին՝ ազատեսցէ . կատարեաց զօրէնսըն , ելից զառաս մարգարէիցն . արար նշանս և աքուեստս . լուսաւորեաց զկոյրս . առողջացոյց զանդամալոյծս . հալածեաց զդեւս : Ապա ի կատարումն նշանացն՝ շնորհեաց զյարութիւն Ղազարու՝ չորեքօրեայ կոչմամբ ի թաղմանէ : Նստաւ ի վերայ յաւանակի էշոյ , որ է խորհուրդ կոչման հրէից և հեթանոսաց . վասն որոյ և մանկանին ասացաւն երգէին , օրհնութիւն որդւոյ Դաւթի : Իսկ ի սերկեան աւուրս՝ զայ կամաւորութեամբ ի չարչարանս . յանձն առնու մատանիլ յանօրէնն աշակերտէն : Յերեկոյ հասեալ ժամուն՝ զերկոտասանիցն լուանայ զոտս զխոնարհութիւն ուսուցանելով նոցա , նա և զՅուդային յառաջ լուանայր . որ և աչխատեցաւ մինչև ցգաւխիթ քահանայապետին . վասն որոյ և Յուդա ի միտս իւր ասէր՝ թէ բիւր անգամ մեծարես զիս , ոչ եմ մատանալոց զերեսան արծաթին : Առ ի յայսմ ահաւոր և սքանչելագործ ասելիս՝ եղև ուրախութիւն հրեշտակաց և մարդկան : Ա.յսօր բարձաւ ցանկ անիծիցն Ադամայ : Ա.յսօր ազատեցաք ի ծառայութենէ սատանայի : Ա.յսօր արարիչն արարածոց ի յերկրի երևեցաւ : Ա.յսօր Աստուածն սերտվրէից ծառայի զկնիս զկերպարանս : Ա.յսօր անհան փերտվրէից՝ խնարհի և լուանայ զոտս աշակերտացն : Ա.յսօր արկօղն զլոյս որպէս զօթոց՝ զգենու զկնիկ : Ա.յսօր աթոռակիցն Հօր՝ ընդ հողեղէնս բազմի : Ա.յսօր վտառակիցն սուրբ Հոգւոյն՝ յանձն առնու մատանիլ ի դատաստան մահու : Ա.յսօր կենագործօղն ամենեցունն ընդ մահուամբ սահմանի : Ա.յսօր վէմն առանց ձեռին հատեալ՝ և ինքն լեռնացեալ ելից զտիեզերս : Ա.յսօր բաշխէ զնարմին և զարիւնն՝ և յայտնէ զանօրէնն աշակերտին զխորհուրդն : Ա.յսօր կապեալ լինի արձակիչն կապելոց , զոր երկինք ոչ բաւէին առնել : Ա.յսօր օրհ-

նէ զառաքեալսն ի դպրութիւն քահանայութեան : Ա. յաօր զոանի դրանն կոթուածալ , որ է թագաւորական պատկերն : Ա. յաօր եղև ուրախութիւն հրեշտակաց վասն գիւտի մարգրեալ ոչխարին : Ա. յաօր ճշմարտապէս հաղորդեցաք մարմնոյ և արեան Տեառն : Ա. յաօր օրհնեցան քահանայապետք ամենայն հանդերձ քահանայիւք : Ա. յաօր լուսազարդեցան թագաւորք հանդերձ ամենայն զօրութեամբն իւրեանց և իշխանութեամբ՝ ընդ Դաւթի և ընդ դասապետս նորա : Ա. յաօր օրհնեցան ձեռք և ոտայք , երիտասարդք և կուսանք ի ձեռն կապոյտին և արձակոյին : Ա. յաօր դրախտն բանի մարդկութեանն՝ և ամենայն արարած ցնծան յանմահական կեանս : Ա. յաօր ի հին արարութեանց փոխեցաք , և ամենեքեան նորոգեցաք ի Քրիստոս : Ա. յաօր եռ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս՝ և զամենայն զօրութիւնս թշնամւոյն : Ա. յաօր ի ձեռն աւազանին լուսազարդեալք մաքրեցան հաւատացեալք յաղտոյ մեղաց : Ա.րդ եկեսցէ միխիթարութիւնն երուսաղեմի ի վերայ ձեր , որ ասէ . միխիթարեցէք , միխիթարեցէք զժողովուրդ իմ , ասէ Աստուած . քահանայքդ խօսեցարուք ի սիրտ երուսաղեմի . միխիթարեցէք զդա , զի լի եղև ատառապանօք . թողեալ լիցին նմա մեղք իւր : Դարձեալ՝ եթէ զճանապարհս սրտի նորա տեսի և բժշկեցի , և եռաւ նմա միխիթարութիւն , և փոխանակ մխերոյն՝ օծումն ուրախութեան :

Ա.րդ բարեգութն Աստուած ուրախացուսցէ զձեզ զաւետեաւն , և երկնաւոր պարգեւացն արժանի արասցէ : Օրհնեսցէ Տէր Աստուած զհայրապետս . ընդ սրբոյն Գրիգորի և ընդ այլ սրբոց հայրապետացն մանաւանդ արասցէ : Օրհնեսցէ Տէր Աստուած զքահանայս ընդ քահանայութեան Մելքիսեդեկի , և զարդարեսցէ ըստ տեսլեանն Մովսեսի ի զարդ անկողոպտելի , ըստ պատմուճանին Ահարոնի . և հոգեզարդեսցէ ըստ առաքելոցն խոստանակցութեան . և արասցէ միշտ առանց ամօթոյ , զի յերեւել հօտապետին՝ ընդունիցիք զանթառամ փառսն պսակն : Օրհնեսցէ Տէր Աստուած զմիաբան ժողովուրդս , և թեթեւացուսցէ զբեռինս մեղաց ձերոց : Օրհնեսցէ Տէր Աստուած զաւուրս զայս և զբնակութիւնս և զհիմունս եկեղեցւոյս՝ ըստ այնմ որ ասէ . այսօր եղև փրկութիւն տանս այսորիկ՝ ըստ աւետեացն Աբրահամու

հանդերձ ազգաւ և ժառանգակցօք իւրովք : Օրհնեսցէ Տէր Աստուած զազգասուրս տանս այսորիկ , զլուսաբերս , զդրնոքացս , և անթառամ պսակացն արժանիս արասցէ : Օրհնեսցէ Տէր Աստուած զհաստատեօղսդ և զպահպանօղսդ . և թողցէ զյանցանս ձեր՝ որպէս ըզպատնկին և զմաքրասերին : Օրհնեսցէ Տէր Աստուած ըզծերան խոստովելեան բանակին . և որպէս զծերունին Սիմէոնի՝ որ զԱստուածորդին ի գիրկս իւր ընկալաւ , և հայցէր արձակիլ ի խաղաղութիւն : Օրհնեսցէ Տէր Աստուած զազգս ձեր՝ որպէս զազգս Երրայեցւոց՝ որք աւրն ոտս արմատնեցաց և եղեն ընդ առաջ նորա ազգակիչն և ասէին՝ ամենեցուն օրհնեալ որ գաս յանուն Տեառն : Օրհնեսցէ Տէր Աստուած զերիտասարդս՝ որպէս զերանելին Յովսէփ , որ հաճոյ եղև Աստուծոյ և օրհնեցաւ ի նմանէ : Օրհնեսցէ Տէր Աստուած զկանայս՝ որպէս զկանայս իւզարկեցն՝ որ եկին ի գերեզման Փրկչին և լցան ուրախօք սուրբ յարութեան Տեառն : Օրհնեսցէ Տէր Աստուած զժամեակս քաղաքիս մերոյ , զի որպէս ձայն հրեշտակապետի յագիօղ է առ ի զարթուցանել զննջեցեալս ի մահահանգիստ քնոյ , նոյնպէս և ձայն սորա յագիօղ է առ ի հարուածել զլեզուիկն ամենայն զօրօք իւրովք : Օրհնեսցէ Տէր Աստուած զվերակացու առաջնոյս , զմչակս և զեզիմս , զհաւկիս և զհօտս սորա : Օրհնեսցէ Տէր Աստուած զանդաստանս մեր՝ և բուսուցէ զամենայն բոյս շահեկանութեան . ի բոյս արասցէ զամենայն ինեաս և զրիծ , զհրայրեաց և զդալուկ , զժանեա , զկարկուտ , զմարախ , զջրհեղեղ , զառն եղեմնաճին և զամենայն ցաւս և զհսկեսմահ ի մարդոյ և յանասնոյ . և հարուածեսցէ զլեզուիկն ամենայն զօրօքն իւրովք և առաքեսցէ յանդունդս , և զհրեշտակ խաղաղութեան առաքեսցէ և օրհնեսցէ զամենեսեան : Օրհնեսցէ Տէր Աստուած զամենեսեան զմիաբան զարթ և զկանայդ , ըզծերս և զտղայս , և փրկեսցէ զձեզ յամենայն չարեաց , և ամրացուսցէ ընդ հովանեաւ աջոյն իւրոյ , և երկնից արքայութեան արժանիս արասցէ : Օրհնեսցէ Տէր Աստուած զընակութիւն քաղաքիս մերոյ , և հարուածեսցէ զամենայն չար և զզօրութիւն բանեացեալ թշնամւոյն : Օրհնեսցէ Տէր Աստուած զկրթնաւորեալ , ընդ սրբոյն Եղիայէ և ընդ Ենոքայ ժառանգակիցս և մանուկիցս ա-

բասցէ։ Օրհնեսցէ Տէր Աստուած զժողովուրդս սուրբ եւ կեղեցւոյս մերոյ առ հասարակ զարս և զկանայս, զերիտասարդս, և երևեցուսցէ զերեսս իւր ի ձեզ։ Օրհնեսցէ Տէր Աստուած զխոստովանեցողսդ և արժանի արասցէ զձեզ լուացման սուրբ առաքելոցն ի վերնատանն։ Եւ փոխանակ արբապահութեան ձերոյ՝ զերկնայինն պարգևեսցէ ձեզ կերակուր։ Եւ փոխանակ ժուժկալութեան ձերոյ զոր ծարաւեցայք, յանմահական աղբերէն տացէ ձեզ ըմպել ջուր։ Եւ փոխանակ դիշերային աքնութեան ձերոյ՝ ընդ հրեշտակս դասեսցէ զձեզ։ Եւ փոխանակ լռակացութեան ձերոյ՝ անթառամ պսակօք զարդարեսցէ զձեզ։ Եւ փոխանակ ողորմութեան ձերոյ որ առ աղքատս, յաջակողման բազմեցուսցէ։

Արդ՝ ով աստուածասէր ժողովուրդք և հաւատացեալք Քրիստոսի, պահեցէք զպատուիրանս Տեառն և զիրաւունս նորա նորա, և մի դադարիք և ձանձրանայք առնել ողորմութիւն. մինչդեռ ժամանակս ի ձեռս է՝ գործեցէք ըզբարիս, զի գիտեմք զի Քրիստոս մերմէ Յիսուսէ Քրիստոսէ դյաւիտեանական կեանն առնուցուք։ Արդ հատուցանեսցէ բարեաց ամենեցուն տացէ եկեղեցեացս շինութիւն, քահանայից ուղղափառութիւն, թագաւորաց և իշխանաց վայելչութիւն, ծերոց մխիթարութիւն, կրօնաւորաց ժուժկալութիւն, երիտասարդաց ողջախոհութիւն, մեզաց լուծումն, հիւանդաց բժշկութիւն, դիւաց խորտակումն, ախտաժետաց առողջութիւն, և փրկութիւն հոգւոց և մարմնոց։ Եւ արդ լսելով զայս, ի բաց ընկեցէք յանձանց ձերոց զչարութիւն և զամենայն խարդախութիւն, թողէք իւրաքանչիւր եղբօր իւրում դյանցանս, և զամենայն խէթ զոր ունիք ընդ միմեանս և զամենայն չարութիւն. գործք բարիք բոլորովիմբ ի կատարումն. սիրեցէք զՏէր յամենայն սրտէ, և զկամս նորա կատարեցէք. ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն ունիցիք. հեզ լիջիք և խոնարհ, լսել ձայնին որ ասէ, յո՛ բնակեցայց եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և զրջ դողան ի բանից իմոց. խնդրեցէք զխաղաղութիւն և երթիջիք զհետ արդարութեան. յուսոյ ակն կալիջիք յաւիտեանս յաւիտենից։ Եւ Տէր Աստուած արարիչն ամենայնի՝ հաստատեսցէ զձեզ, և տացէ առատաբոյս բարիս առ և ի հանդերձելումն, և արժանի արասցէ զձեզ

դասիլ յաղակոզմանն, և ննջեցելոց ծանօթից և անծանօթից զերկնից արքայութիւնն պարգևեացէ. և Քրիստոս Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

Զկնի Քու. Խնդր: Եւ ասէն. Լ. Տէր ողորմ. Աղ. Քում ամենազօր և հրաշալի սէրութ: Եւ գնի խաչն և աւետարան առաջի քահնային և շուրջ խաղանայքն, և գացին ընծայս. և օրհնէ խահնայն զապաչխարողսն և զդիակն համբուրելով զդիմեանս:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ցերկն խաճ ասէն զձայնս ծեացեալ ողորմեայդն, և նշխար գործի և հագանէն յեկեղեցին և ակառնէն. Խոնարհեցո և Ապրեցո:

ՄՆՍԵԴԻ

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո Տէր:

Տէր սիրեցի գվայելչութիւն տան քո. և զտեղի յարկի փառաց քոց:

ըմթերցուած ի ծննդոց: ԻԲ. 1:

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ՝ փորձեաց Աստուած զԱբրահամ՝ և ասէ ցնա. Աբրահամ Աբրահամ: Եւ նա ասէ. աւասիկ եմ: Եւ ասէ ցնա. առ զորդիդ քո սիրելի զոր սիրեցեր՝ զԻսահակ, և գնա դու յերկիր բարձրը, և հանցես զդա անդ յողջակէզ ի վերայ միոյ լերանց յորոց ասացից քեզ: Եւ յարուաւ Աբրահամ ընդ առաւօտն, համեռեաց զէշ իւր, և առ ընդ իւր երկուս ծառայս, և զԻսահակ զորդի իւր. և պատառեաց փայտ յողջակէզ, և յարուաւ գնաց. և եկն ի տեղին զոր ասաց նմա Աստուած: Եւ յաւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս իւր և հառս զտեղին ի հեռաստանէ: Եւ ասէ Աբրահամ ցպառանիս իւր. Նստարուք դուք այդր հանդերձ իշովդ, և ես և պառանեակդ երթիցուք մինչև ցանդր, և երկիր պագցուք և դարձցուք առ ձեզ: Եւ առ Աբրահամ զփայտ ողջակիզին, և եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ. և առ ի ձեռն զհուրն և զսուր. և գնացին երկոքեան ի միասին: Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ հայր իւր. Հայր: Եւ նա ասէ. ահ՞ է որդեակ: Եւ նա ասէ. ահա հուր և ահա փայտ, ո՞ւր է ոչխար յողջակէզ: Եւ նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ: Գնացին երկոքեան ի միասին, և եկին ի տեղին

զոր ասաց նմա Աստուած: Անդ չինեաց սեղան Աբրաամ և եդ ի վերայ զիայեան. և կապեաց զխաշակ զորդի իւր, և եդ զնա ի սեղանն ի վերայ փայտին: Եւ ձգեաց Աբրաամ զձեռն՝ առնուլ զսուրն և զենուլ զորդին իւր: Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ. Աբրաամ Աբրաամ: Եւ նա ասէ ցնա. աւասիկ եմ: Եւ ասէ. մի մեր զձեռն քո ի պատանեակդ, և մի ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու Աստուծոյ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ: Համբարձ Աբրաամ զաչս իւր և եսես, և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերաց. և գնաց Աբրաամ և առ զխոյն. և եհան զնա յողջակէզ փոխանակ խաշակայ որդւոյ իւրոյ: Եւ կոչեաց Աբրաամ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տէր եսես. զի ասիցեն ցայսօր ի լերինն յայնմիկ Տէր երևեցաւ: Եւ կոչեաց հրեշտակ Տեառն զԱբրաամ երկիցս անգամ յերկնից և ասէ. յանձն իմ երդուայ, ասէ Տէր, փոխանակ զի արարեր դու բանդ զայդ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ. այս օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ, և իբրև զաւազ առ ափն ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց. և օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի. փոխանակ զի լուար ձայնի իմոյ: 18:

ընթերցուած յեսայեայ մարգարէէ: գԱ. 1:

Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել. կոչել տէ Տեառն ընդունելի և օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն սգալսն, տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան, և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութեան: Եւ կոչեցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս, և չինեացին զաւերական յաւիտենից, և դյաւազադոյն աւերեալսն կանգնեացին, և նորոգեացին զքաղաքս աւերեալս ազգաց մինչև յազգս: Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, և այլազգիք մանակալք և այգեգործք քո:

Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեցէք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեցէք, զզօրութիւն ազգաց կերկիք, և մեծութեամբ նոցա զբանչելի լինիք։ Փոխանակ ամօթոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն, և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն, և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։ 7։

Ընթերցուած ի գործոց առաքելոց։ Ա. 15։

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն ասէ. և էր անդ բազմութիւն անուանց իրրև հարիւր և քառասից. արք եղբարք, պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի վասն Յուդայի՝ որ եղև առաջնորդ ունելոցն Յիսուսի. զի ի թիւս մեր էր ընդ մեզ, և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։ Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան, և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ և հեղաւ ամենայն փոր նորա. և յայտնի եղև ամենեցուն որ բնակեալ են յԵրուսաղէմ. մինչև կոչել գեղջն այնմիկ բարբառոմբ իւրեանց Ակեղդամայ, այսինքն է՝ գեօղ արեան։ Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց. եղիցի բնակութիւն նորա աւերակ. և մի ոք իցէ որ բնակիցէ ի նմա. և զկարգ նորա առցէ այլ։ Արդ պարտ է յաբանոց յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ և ել առ մեզ Տէր Յիսուս, սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն յորում վերացաւ մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ։ Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, և զՄատաթիա։ Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. դու Տէր, որդագէտ ամենայնի, յայտնեա զի ոք զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ և պատգաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս գնալ ի տեղի իւր։ Եւ եռան վիճակս նոցա, և ելանէր վիճակն Մատաթիայ. և համարեցաւ ընդ մեռասան առաքեալսն։ 26։

Աւ՞ ՍԱՂՄՈՍ ԺԱ. ՈՐՈՂՔԻ ՅԱՅՆՔ։

ԿՅ. Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք։

ՓԽ. Ասեն դէր Աստուած ազօթից իմոց, և մի անտես առներ զխնդրուածս իմ։

Նայեցաւ առ իս և լուր ինձ, զի տրամեցայ ես ի ձանձրանալ իմում և խռովեցայ։

Ի ձայնէ թշնամւոյն և ի նեղել մեզաւորին՝ խոտորեցան յիս անիրաւութեամբ, բարկութեամբ, ոխս պահէին ինձ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ։

Ահ և դողումն եկն ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար։

Ասէի՝ տայր ոք ինձ թեւս որպէս զաղաւնոյ, զի թըռչեի վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի։

Ակն ունէի Աստուծոյ որ փրկէր զիս ի կարճմտութենէ զայրանալոյ, ի մրրկեալ նեղութենէ։

Ընկլո Տէր և բաժանեա զլեզուս նոցա, զի տեսի զանօրէնութիւն և զհակառակութիւն ի քաղաքի։

Ի տուէ և ի գիշերի չուրջ եղեն զպարսպօք նորա անօրէնութիւնք, չարիք և մեղք են ի մէջ նոցա. և ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ և նենգութիւն։

Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք ի նմանէ։

Իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։

Ապաքէն ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր, զի գնայաք միաբանութեամբ ի տան Աստուծոյ։

Եկեսցէ մահ ի վերայ նոցա, և կենդանւոյն իջցեն ի դժոխս. զի չարութիւն է ի բնակութեան նոցա և ի մէջ նոցա։

Ես առ Աստուած կարդացի, և Տէր լուաւ ինձ յերեկոյս՝ ի վաղորդայն և ի հասարակ աւուր։

Պատմեցի և ասացի, և լուիցէ ձայնի իմում. փրկեացէ խաղաղութեամբ զանձն իմ ի մերձաւորացս իմոց, զի կարեաք հասին ի վերայ իմ։

Լուիցէ Աստուած և խոնարհ արասցէ զնոսա, որ յառաջնէ է քան զյաւիտեանս։

Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ երկեան յԱստուծոյ։

Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, և նոքա պղծեցին զօրէնս նորա։

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա, և եհաս ի սիրտս նոցա։

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք։

Ընկեա ի Տէր զհոգս քո՝ և նա կերակրէ զքեզ, և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։

Դու Աստուած իջուացես զնոսա ի գուբ ապականութեան, արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ի քեզ Տէր յուսացայ։

Ապա Ուղիղ եղիցին ազօթք իմ. Որպէս խունկ առաջի քո տէր։

Ձերեկոյի ազօթս մեր ընկալ Տէր. Եւ զտարածումն ձեռաց մերոց։

Քարող Աղաչեացուք։

Հր. Ակ. Այսօր կանգնեցաւ։ 393։ Քար. Վասն խաղ։ Աղ. Հայր գթած։ Ե՛ ախանէ պոպոքէն ՍՂ. ԻՐ. ԿՅ. Պատասա։ ՓԻ. Տէր հով։ Առ. Ա. Կոր. ԺԱ. 23. Չի ես ընկ։

Չէն պոպոքէն ՍԱՂՄՈՍ ԻՐ. ողբայն։

ԿՅ. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակն յանդիման նեղչաց իմոց։

ՓԻ. Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ։ 815։

Չէն Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ ԺԴ. 1։

ՉՏէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ զիարդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն, բայց ասէին՝ թէ մի՛ ի ժողի աստ, զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։ Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ ունէր չիւ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զչիւն՝ եհեղ ի վերայ գլխոյ նորա։ Եւ աչակերտքն զչարէին և ասէին. ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդորիկ. մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի, և տալ աղքատաց. և զայրանային նմա յոյժ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք զմա. զի՞ աչխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք։ Դա զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն խնկեաց ըզ-

մարմին իմ ի նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին: Եւ Յուդա Սկարիովացի մի յերկոտասանից անտի՝ գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա: Նոքա իբրև լուան՝ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ. և խնդրէր՝ թէ զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա: Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յորժամ զպատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն. ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք, զի կերիցես զպատիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն և իբրև մտանիցէք ի քաղաքն՝ պատահեացէ ձեզ այր մի որ սափոր ջրոյ յառ ունիցի, երթայք զհետ նորա. և յոր տունն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն. վարդապետ ասէ՝ ո՞ւր են իջևանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ զպատիկն. և նա ցուցցէ ձեզ վերնատունն մի մեծ զարդարեալ, անդ պատրաստեսջիք մեզ: Եւ գնացին պատրաստել աշակերտքն նորա. եկին ի քաղաքն, և գտին որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զպատիկն: Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկոտասանեւքն հանդերձ: Եւ իբրև բազմեցան և դեռ ուտէին, ասէ Յիսուս. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ հակ ընդ իս: Եւ նոքա սկսան տրտմել և ասել մի ըստ միոջէ. միթէ ե՞ս իցեմ, և միւսն՝ միթէ ե՞ս իցեմ: Նա պատասխանի ետու և ասէ ցնոսա. մի յերկոտասանից այսր, որ միանայ ընդ իս ի սկաւառակդ: Այլ որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ յորմէ ձեռն որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ եթէ չէր իսկ ծնեալ մարդն այն: Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուս հաց՝ օրհնեաց և երեկ ետ նոցա և ասէ. առէք, պարտ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ ետ նոցա, և արբին ի նմանէ ամենեքեան: Եւ ասէ ցնոսա. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն բազմաց հեղանի: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս յառնիցէ ընդ ի բերոյ արթոյ, մինչև յօրն յայն՝ յորժամ արբիցէ զնա նոր յարքայութեան Աստուծոյ: Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն Ձիթենեաց: 26:

Ծ՟ր. Խնդրեացուք: Կեցո: Է Ի՟ն: Աչ. Թագաւոր խաղ:

Ա. Ի Ա. Գ

ՈՒՐԲԱԹ· ԴՋ

Ի ԳԻՇԵՐԻ

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ ԴՋ. Օրհնեա անձն իմ զՏէր։

ՀԵՏԵՒԱՆ ՇԱՐԱԿԱՆ ԴՋ

Ա՛ՅՍՕՐ ի կատարումն ասուածային ընթրեանց նոր նախատի հաղորդութեանն քո. ի վերնատունն խնդրելոդ տալ մեզ ի հօտէ ն փրկիչ. նախ եւ դու զան Աստուծոյ դիմեալ կամաւ ի մահ խաչին առ ի բառնալ զմեղս աշխարհի. ‖ վասն որո՛յ խնամեա ի մեզ Քրիստոս կամաւո՛ր քո չարչարանօք։ Ա՛յսօր որ ի հրեղէն զօրաց երկնից միշտ վառարանեալ երկրպագի՛ս բանդ. աղօթիցիր առ Հայր մարմնով ընկալեալ ընդ Հո՛ր ընկե՛ր վասն իմ զպաղատանս. նախ կամաւ կրելով զերկիւղ ի հրեշտակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց եւ երկրաւորաց. վասն։ Ա՛յսօր յանաչ նըշանակեալ հրամանն քո կատարիր յաշակերտաց դոն. քա՛նդի զհովիւդ քոջ հարեալ ցըրուեցա՛ւ հօտն ընտ մարգարէին. ո՞ր է՞ւ կա՛ց ցո՛ր ա՛նհամեմիտ ի յԱննայէ և ի Կայիափայ դատապարտեալ ի ծառայէն ապտակեցար և նախատանաց թուք կէ՛ր պատրա՛նդ Հո՛ր ընկալար. վասն։ Ա՛յսօր ընկերն հաւատոյ չարժեալ փորձողին խարէութեան մնրա. ա՛ռ ի քէն Թողացուցեալ ընդմարդկայինն արկարութիւնս յանդիման նեղոյ. եւ ա՛ռ յոյս դարձի մեզ՝ան որ դատնանալէն արտասուելովն ընկալա՛ր ի քէն երիւք հարցմանն սիրոյն զերիցս ուրացութեա՛նդն ընդդըժընկութիւն. ընդ նմի՛ն ես ըզժընկեա ըզմեզ Քրիստոս և չնորհեա՛ մեզ արտասո՛ւս անդաշխարհութեանն։

† Ա՛յսօր զոր յերկինս լուսեղինացն ահիւ պատուհաս Բանդ Աստուած. նըմանեցեա՛լ զանձ երբայեցւոցն. պինանալի՛ զմոյզ ի գիշերի ջահիւք և սուսերօք եկեալ ըմբռնել զանըմբռնելին. ‖ վասն որո՛յ երկերպա-գեմք անճառելի՛ քո նահրհռութեանդ։ Ա՛յսօր զոր սե-բո՛վքըն ծածկին զզէմս յահէ փառաց աստուածու-թեանդ. ինակ կո՛րբսաեա՛ն ո՛րդին Յուդաս. ի համբ-բո՛յր մերձեալ նենգութեամբ նըշանակ եւ մահիւ մահ-ա՛նամահիդ. վասն։ Ա՛յսօր ընդ գերագոյն անօրէնու-թիւնըդ քո Որդի՛ Աստուծոյ. հմլեք անմարմնո՛ցըն հրաբո՛ւն սերի՛ն. պահպանեա՛լ զարմանային սեռանե-լով զանառա՛նելիդ մնացեալ կամաւ ի ձեռս մեզառո-բաց. վասն։ Ա՛յսօր բարե՛կամք և մերձաւորըք քո հե-ռի եղեն ի քե՛ն փրկաստս. օտարացա՛ն ևս եղբարըք քո՛. ևս ցուլըք զե՛րք պահպանիցին սրբ ի դըպրաց և ի փարիսեցւոց. ևս չուրջ եղեն չունըք բազումք զինուորք Պիղատոսի՛ եւ Հերո՛դի. վասն։

Ջ-ը. Եւ ևս խազ։ Մ-ղ. Օրհնութիւն և փառք։

Ե՛ ապա լուցանէն երկոքեան ճրագքինս ի վերայ սեղանոյն յոսկեայս և յայնկոյս, և ճրագքեն ոչ ահեղ ի ոչխ։ Ե՛ ասեն ի ընթ՛։

ՍԱՂՄՈՍ Բ

Ընդէր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհե-ցան ի սնոտիս։

Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողո-վեցան ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա։

Խզեսցուք զկապանս նոցա, և ընկեսցուք ի մէնջ լծ-ս նոցա։

Բնակիսն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, և Տէր ար-համարհեսցէ զնոսա։

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, և սրտմտութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա։

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի վերայ Սիովնի լերին սրբոյ նորա՝ պատմել ինձ զհրամանս Տեառն։

Տէր ասաց ցնա՝ որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ։

Խնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեայ, որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա։

Արդ թագաւորք զայս ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան այք դատիք զերկիր։

Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ։

Ընկալարուք զկրթսո նորա՝ զի մի՛ բարկասցի Տէր, և կորընչիցիք ի ճանապարհացն արդարութեան։

Ի ժամանակի որպէս բորբոքեսցի բարկութիւն նորա։

Երանի ամենեցուն՝ այք յուսացեալ են ի Տէր։

ՍԱՂՄՈՍ Գ

Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան ի վերայ իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր։

Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է։

Ոչ երկեայց ես ի բիւրուց զօրաց նոցա, այք չուրջանակի պատեալ պահեալ պաշարէին զիս։

Արի Տէր, և փրկեա զիս, Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան այք էին ընդ իս թշնամութեամբ ի սոթապարտուց, և զատամունս մեղաւորաց փշրեացես։

Տեառն է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո։

ՍԱՂՄՈՍ Դ

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած քոյ արդարութեան, ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։

Որդիք մարդկան, մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զսուտ։

Ցաներուք դի աքանչելիս սրտի Տէր սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա :

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք . զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք :

Մատուցէք պատարագ արդարութեան , և յուսացարուք ի Տէր :

Բազումք ասէին թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և եռուր ուրախութիւն սրտից մերոց :

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա :

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեացուք և զարթիցուք . դի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ :

Ե֊ սլշն եղեռնկեն յոյնէ֊ նցուդ :

Ի՝չհանէք ժո՛ղովեցա՛ն ի միասի՛ն . վասնո՛ւն Տեառն ճե՛ւ վա՛տն ծծե՛լոյ նորա՛ :

Եբէ֊ անքա՛մ ասէն , և ղչեռկէն քարչդ :

Ա՛ղ֊ եբէ Տեառն նէբսենէ ասոցենալ յաղթս ինձի ոբբոմնա֊ ջինչերի ա֊նեղութեան :

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Ա՛յսօր անճառ լուսոյն ծագումն : Ա. Քէդ գոռ : 164 :

Ա՛ղ֊ յա֊ջինչերէդցա֊ գոսէն . Օրհի

Սրբոյ Աստուածածնէ որ ըստ Յովհաննու : ԺԳ . 16 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Ամէն ամէն ասեմ ձեզ . ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր , և ոչ առաքեալ մեծ քան զայն որ առաքեացն զնա : Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս : Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցի . այլ զի լցցի գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խարէութիւն : Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչ չէ եղեալ , զի յորժամ լինիցի հաւատասջիք թէ ես եմ: Ամէն ասեմ ձեզ . որ ընդունի զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն զիս : Զայս իրրև ասաց Յիսուս , խռովե֊

ցաւ յոգի իւր, վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մնանելոց է գնա։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք թէ զումէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս. ակնարկէ նմա Սիմոն Պետրոս հարցանել՝ ո՞վ իցէ, վասն որոյ ասէն։ Եւ նա անկեալ գլանջքն Յիսուսի, ասէ ցնա. Տէր, ո՞վ է։ Պատասխանի եւս Յիսուս և ասէ. այն է՝ որում ես թացիկ զպատառն և տացց։ Եւ թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Սկարիովտացւոյ. և յետ պատառոյն՝ տպա եմուտ ի նա սատանայ։ Եւ ասէ ցնա Յիսուս. արդ որ գինչ առնելոցն ես՝ արա վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք խնացաւ ի բազմականաց անտի՝ թէ առ ինչ ասաց ցնա. զի ոմանք համարէին թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս, գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս, և կամ զի ազքատաց ինչ տացէ։ Իսկ նորա առեալ զպատառն՝ եւ արտաքս վաղվաղակի, և էր գիշեր։ Եւ իբրև եւ, ասէ Յիսուս. այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ ի նմա։ Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրեսցէք զիս. և որպէս ասացի ցհրեայսն, եթէ ուր հան երթամ՝ դուք ոչ կարէք գալ, և արդ ձեզ ասեմ։ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր, յո՞վ երթաս։ Պատասխանի ես Յիսուս. ուր հան երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս. Տէր, ընդէր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քո։ Պատասխանի ես Յիսուս. զանձն քո զիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չէ իցէ հաւտ խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս գիս։ Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթևանք բազումք են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ և պա-

տրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ ես. զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք. և ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք: Ասէ ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՞վ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել: Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ: Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա: Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցոյց մեզ զՀայր՝ և չասա է մեզ: Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ տեսս զիս՝ տեսս զՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր: Ո՞չ հաւատասա եթէ ես ի Հայր, և Հայր յիս է. բանն զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է նա գործէ զգործսն: Հաւատացէք ինձ՝ եթէ ես ի Հայր և Հայր յիս: Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ: Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և մեծամեծս ես քան զնոսս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ: Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, ա՛ր արիցց զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի: Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք. և ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի: Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ. փոքր միւս ես, և աշխարհս ոչ ես տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինիցէք: Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի Հօր իմում, և դուք յիս, և ես ի ձեզ: Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեսցուցից նմա զիս: Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէր, զի եղև՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք. և որ ոչն սիրէ զիս՝ զբ-

բանս իմ ոչ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս: Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ. իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ: Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, և մի՛ դանդիսանացին: Լուայք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս: Եւ այժմ ասացի ձեզ մինչ չև եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք: Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսոքիկ, և յիս ինչ ոչ գտանէ: Այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս առնեմ. ծն արիք զնասցուք ասեն: Ես եմ որ թըն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է. ամենայն ուռ որ յիս է և ոչ բերէ պտուղ, կարէ զնա. և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի: Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ: Կացէք յիս՝ և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք: Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչ ինչ կարէք առնել: Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, եղ նա արտաքս իբրև զուռն, և ցամաքեցաւ. և ժողովին զնա, և ի հուր արկանեն և այրի: Եթէ կացցէք յիս, և բանքն իմ ի ձեզ կացցեն. զոր ինչ կամիցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ: Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, և եղիջիք իմ աշակերտք: Որպէս սիրեաց զիս Հայրն իմ, և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի սէր իմ. եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր նորա: Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի: Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ: Մեծ ևս քան զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ

բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ. ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ. և եդի զձեզ՝ զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կացցէ։ Եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ զձեզ ատիցէ, գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ ատի էիք՝ աշխարհ զիւրան սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոսունս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։ Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղս ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չիք ինչ պատճառ վասն մեղացն իւրեանց։ Որ զիս ատեայ, և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղս ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին և ատեցին՝ և զիս և զՀայր իմ. այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ ատեցին զիս տարապարտուց։ Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ. և դուք վկայէք, զի ի սկզբանէ ընդ իս էք։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք. ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ։ Այլ եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն առնեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք ի ձէնջ հարցանէ զիս՝ թէ յո՞ երթաս. այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, սրտմտութիւն եղիցի զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ.

լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, ա-ռաքեցից զնա առ ձեզ: Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց, և վասն արդարութեան, և վասն դատաստանի: Վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս. վասն արդարութեան, զի առ Հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք զիս. վասն դատաստանի, զի իշխան աշ-խարհիս այսորիկ դատապարտեալ է: Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ. յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնոր-դեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յան-ձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ ան-տի առնուցու և պատմեսցէ ձեզ: Ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմ-մէ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ: Փոքր մի՝ և ոչ ևս տեսանէք զիս, և ապա տակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր: Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ տակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և եթէ ես առ Հայր իմ երթամ: Եւ ասէին. զի՞նչ իցէ այն փոքր միւս ևս, չգիտեմք զինչ խօսի: Գիտաց Յիսուս եթէ կամէին զնա հարցա-նել, և ասէ ցնոսա. վասն այդորիկ խնդրէք ընդ մի-մեանս զի ասացի՝ թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ տակաւիկ միւս ևս և տեսանիցէք զիս: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայիք և ողբասջիք դուք, և աշ-խարհ խնդասցէ. դուք սգասջիք, այլ սգամտութիւն ձեր յուրախութիւն եղիցի: Կին յորժամ ծնանիցի՝ սգամտութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ: Եւ դուք այժմ սգամտութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ, և ու-րախ լինիցին սիրտք ձեր, և զուարթութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ: Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ յանուն իմ, տացէ ձեզ: Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք՝ և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ իցէ: Զայս առակօք խօսեցայ

ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ: Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցէք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ եղէ: Եղի ի Հօրէ՝ և եկի յաշխարհ, զարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր: Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտնութեամբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես. այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն, և ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք եթէ յԱստուծոյ եկեր: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. այժմ հաւատայք: Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցըրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է: Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի: Զայս իբրև խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ. որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենական: Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր ետուր ինձ յարարիչ. և այժմ փառաւորեա զիս Հայր, առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր զնոսա, և զբանն քո պահեցին: Այժ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն եղէ. և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: Այժ՝ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա զորս ետուր ինձ, զի քո են. և որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է, և փառաւորեալ եմ ի նոսա: Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն

քո, որով հաւուրն ինձ. զի եղիցին մի՛ որպէս և մեք մի եմք: Մինչ էի յաչխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով հաւուրն ինձ. և պահեցի. և ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորառեան, զի գիրն լցցի: Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաչխարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց: Ես հաւուրն նոցա զբանն քո, և աշխարհս ատեաց զնոսա. զի չեն յաչխարհէ, որպէս և ես չեմ յաչխարհէ: Ոչ զայս ազաչեմ զի բարձցես զնոսա յաչխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չարէ: Յաչխարհէ ասաի չեն, որպէս և ես չեմ յաչխարհէ: Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանդ ճշմարտութիւն է: Որպէս զիս առաքեցեր յաչխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ. և ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ: Ա՛լ ոչ վասն նոցա միայն ազաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատացէ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն զոր հաւուրն ինձ՝ հաւուրն նոցա, զի իցեն մի՛ որպէս և մեք մի եմք. ես ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի: Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, և սիրեցեր զնոսա որպէս զիս սիրեցեր: Հայր, զոր հաւուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր հաւուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զկայնելն աշխարհի: Հայր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից, զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես ի նոսա: Զայս իրրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի՝ ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր: ԺՀ. 1:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ազաչեցուք: Քահ. Տէր ողորմեա: Երէց. Երկիր:

Քար. Եւ ես խաղ: Քահ. Օրհնութիւն և փառք՝

Ի վճռել ասէն ի առեւտրանի՝ չկշռացանեն զերկուս մասեղինս՝ ի յոչխ և ի յոհեղէ, յերկոտասան մասեղինացն, ի յերանոցն ախոռել ինչ ցառաջինան:

ՍԱՂՄՈՍ Թ

Երանի որ խորհի զաղքատն և զանանկն : 409 :

ՍԱՂՄՈՍ ԹԱ

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց այնպէս : 410 :

ՍԱՂՄՈՍ ԹԲ

Դատ արա ինձ Աստուած . և իրաւ արա ինձ : 410 :

ԿՅՐԵՂ :

Բան անօրէնութեան եղին ի վերայ իմ . տէր տէր մի թողուր զիս :

Երէք անգամ կրկնէ , և ձայնին բարձր ասա :

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Էլից զօրէնան Մովսեսի : Բ . Վեց գոյն : 165 :

ՋՆՆԴ Օրթի

Արբոյ Աւետարանիս որ ըստ Դուկասու : ԻԲ . 1 :

Ելան չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի .

Մերձեցաւ ատն բազարջակերացն՝ որ կոչէր պասքա : Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա , բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի : Ապա եմուտ սատանայ ի Յուդա ի կոչեցեալն Սկարիովտացի , որ էր ի թուոյ երկոտասանիցն : Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետան և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն , զի մատնեսցէ զնա նոցա : Եւ խնդացին , և խոստացան տալ նմա արծաթ . և յանձն առ , և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն : Եկն օր բազարջակերացն , յորում օրէն էր զենուլ զպասեքն . և առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս և ասէ . երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն զի կերիցուք : Եւ նոքա ասեն . ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք : Եւ ասէ ցնոսա . ահա իբրև մտանիցէք ի քաղաքն , պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ . երթիցիք զհետ նորա ի տունն յոր մտանիցէ , և ասասջիք տանտիրոջ տանն . վարդապետ ասէ քեզ , ո՞ւր են վանքն իմ՝ յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ . և նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ , և անդ պատրաստեսջիք : Եւ գնացեալ գտին որպէս և ասացն նոցա և պատրաստեցին զպասեքն : Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ և երկոտասան առաքեալքն

ընդ նմա: Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս կերայց ի սմանէ, մինչև լցցի յարքայութեան Աստուծոյ: Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ. առէք զայդ և բաժանեցէք ի ձեզ: Ասեմ ձեզ, թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ: Եւ առեալ հաց՝ գոհացաւ, երեկ և ետ նոցա և ասէ. այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն ա՛ռ և ասէ. այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ: Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս. և որպէս մարդոյն ըստ սահմանելոյն երթայ, բայց վայ մարդոյն այնմիկ որով ձեռն մատնիցի: Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՛վ է ի նոցանէ որ զայն գործելոց իցէ: Եւ եղև հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ո՛վ ի նոցանէ համարիցի մեծ: Եւ նա ասէ ցնոսա. թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև կրտսերն, և առաջնորդն իբրև ծառայեսցուն: Ո՞վ է մեծ, բազմեալն՝ եթէ սպասաւորն. ոչ սպաքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրև ծառայեսցուր: Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ. և ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեանն իմում, և նըստիցէք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի: Եւ ասէ Տէր. Սիմոն՝ Սիմոն, ահա սատանայ խնդրեաց զձեզ խաղրել իբրև զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցեն հաւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատեացես զեղբարս քո: Եւ նա ասէ ցնա. Տէր, ընդ քեզ պատրաստ եմ և ի բանտ և ի մահ երթալ: Եւ նա ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ, չիցէ այսօր հաւու խօսեալ, մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել: Եւ ասէ ցնոսա. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և կօշկաց, միթէ կարօտացայք իմիք: Եւ նոքա ասեն. և ոչ իմիք: Այլ ասէ. այլ այժմ որ ունի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր և

գնեսցէ իւր սուսեր։ Բայց սակս ձեզ. զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ ա-նօրինս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։ Եւ նոքա ասեն. Տէր, ահաւասիկ են սոքա երկու սուրք։ Եւ նա ասէ ցնոսա. բաւական են։ Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի լեառն ձիթենեաց, գնացին զհետ նորա և աշակերտքն։ Իբրև եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն։ Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի, եդ ծունր՝ կայր յաղօթս և ասէր. Հայր, եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին։ Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս. և հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ ի յերկիր։ Եւ յարուցեալ յաղօթիցն, եկն առ աշակերտան՝ եգիտ զնոսա ի քուն ի տրտմութենէն. և ասէ ցնոսա. զի ննջէք, արիք կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք ի փորձութիւն։ Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ, և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր նոցա։ Իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան առեալ էր նոցա, թէ ընդ որում ևս համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ Ասէ ցնա Յիսուս. Յուդա, համբուրե՞լ մատնես զորդի մարդոյ։ Իբրև տեսին որ զնախաւն էին՝ որ ինչ եղեւն, ասեն ցնա. Տէր, հարցուք զնոսա սրով։ Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայ, և ի բաց եհան զականջ ունկն նորա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Թոյլ առէք մինչև ցայդ վայր։ Եւ մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա։ Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա զքահանայապետսն, և ցիշխանս տաճարին և ցծերսն. իբրև ի վերայ աւազակի ելէք սուսերօք և բրօք. հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի։ Եւ կալեալ զնա ածին և մուծին ի տուն քահանայապետին. և Պետրոս երթայր զկնի նորա հեռագոյն։ Իբրև լուցին կրակ ի մէջ դաւթին և նստան չուրջ, նստաւ և Պետրոս ի մէջ նոցա։ Եւսես զնա աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա և ասէ. և սա ընդ նոսա էր որ ընդ նմայն էին։ Իսկ Պետրոս ուրացաւ և

ասէ . ոչ գիտեմ զնա , կին զու : Եւ յետ սակաւ միոյ՝ այլ ոմն հառս զնա և ասէ . և զու ի նոցանէ ես : Եւ Պետրոս ասէ . այր զու , չեմ ի նոցանէ : Եւ իբրև ժամ մի անց ի վերայ , այլ ոմն վիճէր և ասէր . ստոյգ և սա ընդ նմա էր , քանզի գալիլեացի է : Ասէ Պետրոս . այր զու , չգիտեմ զինչ խօսիս : Եւ առժամայն մինչ զեռ նա զայն ասէր , խօսեցաւ հաւ : Դարձաւ Տէր և հայեցաւ ի Պետրոս . և յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա . մինչ չև հաւուս խօսեալ իցէ , երիցս ուրասցիս՝ չգիտել զիս . և ելեալ արտաքս՝ լայց դառնապէս : Եւ արքն , որ պահէին զնա , այպն առնէին զնովաւ և հարկանէին . ծածկէին զերեսս նորա և առնէին , և հարցանէին ցնա և ասէին . մարգարեաց՝ ով է որ եհարն զքեզ : Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին ի նա : 65 :

Ազօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեցուք : Քահ . Տէր ողորմեա : Երէց՝ Երկնե՛ : Քոյ . Եւ ևս խաղ : Քահ . Օրհնութիւն և փառք :

ՍԱՂՄՈՍ ԾԸ

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Աստուած , յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ ապրեցո զիս :

Փրկեա զիս յայնցանէ ոյք գործեն զանօրէնութիւն , յարանց արիւնահեղաց ապրեցո զիս :

Որսալ զանձն իմ կամեցան , և հասին ի վերայ իմ հզօրք :

Ոչ մեղք իմ և ոչ յանցանք , առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ :

Զարթիր ընդ առաջ իմ և տես , զու Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի :

Նայեաց և այց զսա ամենայն հեթանոսաց , մի ողորմիր ամենեցուն ոյք գործեն զանօրէնութիւն :

Դարձցին ընդ երեկոյս , սովեցին որպէս շունք և շրջեցին զքաղաքաւ :

Նոքա զօրանշեցան բերանովք իւրեանց , և սուր ի շրթունս նոցա :

Իսկ արդ մի լուաս զոյս , զի զու Տէր ծիծաղեցիս զնոքօք , և արհամարհեցես զամենայն հեթանոսս :

Զզօրութիւն իմ առ քեզ պահեցից , զի Աստուած օգնական իմ է :

Աստուած իմ, ողորմութիւն նորա կանխեսցէ զս[ուս] իս, և Աստուած իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ։

Մի՛ սպանաներ զնոսա, զի մի մոռասցին զժողովուրդըս քո։

Ցրուեա զնոսա զօրութեամբ քով և ընկճեա զնոսա, զի դու ես պաշտպան իմ Տէր։

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա, ընկալցին նոքա յամբարտաւանութենէն իւրեանց։

Յանէծս և ի սուտ իւն մատնեսցին, ի կատարած բարկութեան սպառեսցին, և մի գոյին։

Գիտասցեն զի Աստուած տիրէ Յակովբայ, և ամենայն ծագաց երկրի։

Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք և շրջեսցին զքաղաքաւ։

Նոքա սիրեսցին յուտել, ապա թէ ոչ յագեսցին՝ արանջեսցեն։

Եւ օրհնեցից զօրհնութիւնս Տեառն, ցնծացայց առաւօտուց յողորմութեան քումմէ։

Զի եղեր իմ պաշտպան և տուն ապաւինի, յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ։

Քեզ սաղմոս առացից, Աստուած ապաւէն իմ, Աստուած ողորմութեան իմոյ։

ՍԱՂՄՈՍ ԾԹ

Աստուած մերժեցեր և ամերկեցեր զմեզ, բարկացար և դիմացիս ի մեզ։

Շարժեցեր զերկիր և խռովեցուցեր զսա, բժշկեա զհարուածս սորա զի սասանեցաւ։

Ցուցեր ժողովրդեան քումմ խստութիւն, և եռուր բմպել մեզ զվինի չիմնարութեան։

Եռուր երկիւղածից քոց նշան, զի ապրեսցին յերեսաց պղեղան։

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով քո և լուր մեզ։

Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ, ցնծացայց, բարձր եղէց, բաժանեցայց զՍիւքէմ, և զհովիտսն յարկաց չափեցից։

Իմ է Գաղաադ և իմ է Մանասէ, Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։

Ցուդա թագաւոր իմ, Մովաբ աւազան յուսոյ իմոյ։

Ցեղոմէ ուղղեցից զդնացս իմ, և ինձ այլազգիք հնազանդ եղեն։

Ո՞ տարցի զիս ի քաղաք ամուր, կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչև յեդեմ։

Եթէ ոչ դու Աստուած, որ մերժեցեր զմեզ, և ոչ ելեր Աստուած ընդ զօրս մեր։

Տուր մեզ օգնութիւն ի նեղութեան, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։

Աստուծով արասցուք զօրութիւն, և նա արհամարհեսցէ զայնոսիկ որ նեղեն զմեզ։

ՍԱՂՄՈՍ Կ

Լուր Աստուած աղօթից իմոց, և նայեա Տէր յաղօթս իմ։

Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ ի վառառակել սրտի իմոյ։

Ի վիմ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ, և իմ եղեր յոյս, և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն։

Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց։

Դու Աստուած լուար աղօթից իմոց, եառեր ժառանգութիւն՝ որք երկնչին յանուանէ քումմէ։

Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի առնոց նորա, ա-ւուրս ազգաց մինչև յազգս նորա։

Կայ և մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ ողորմութիւն, և ճշմարտութիւն այդ խնդրեսցեն ի նմանէ։

Այսպէս սաղմոս ասացից քեզ յաւիտեանս յաւիտենից, և տաց քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ։

ԿՅՐԻԼ

Փրկեա՛ զիս ի թըշնամեաց իմոց Աստուա՛ծ. եւ ի հակառակաց իմոց ապրեցո՛ զիս։

Եբե+ անե՛մ կէնե՛ս, և չյեռնեն բոլոր ասա։

ՇԱՐԱԿԱՆ Դ

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն։ Գ. քեզ պառն։ 166։

ՋԱՆԻ ՕՐԻՒ

Արդ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ ԺԳ. 27։

Ոչ ան չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքեան գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ հարից զհովիւն

և ոչխարքն ցրուեցին : Ա.ղ յետ յարութեան իմոյ յա-
ռաջագոյն երթայց քան զձեզ ի Գալիլեա : Պատասխանի
եւ Պետրոս և ասէ ցնա . Թէպէտ և ամենեքեան գայ-
թագղեացին , այլ ես ոչ : Եւ ասէ ցնա Յիսուս . ամէն
ասեմ քեզ , թէ դու իսկ յայսմ գիշերի՝ մինչ չև հաւու
խօսեալ իցէ՝ երիցս ուրացցես զիս : Իսկ Պետրոս առա-
ւել ևս պնդէր և ասէր . եթէ մեռանել ևս հասանիցէ
ընդ քեզ՝ զքեզ ոչ ուրացայց : Նոյնպէս և ամենեքեան
ասէին : Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի . և
ասէ ցաշակերտան . Նստարուք աստ՝ մինչև ես յաղօթս
կացից : Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅակովբոս և
զՅովհաննէս , և սկսաւ տխրել և հոգալ : Յայնժամ ասէ
ցնոսա . տրտում է անձն իմ մինչև ի մահ , մնայէք աստ
և արթուն կացէք : Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ ,
անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր . և կայր յաղօ-
թըս , զի եթէ հնար ինչ է՝ անցցէ ի նմանէ ժամն . և
ասէ . արբա Հայր , ամենայն ինչ քեզ հնարաւոր է , ան-
ցո զբաժակս զայս յինէն . բայց ոչ որպէս ես կամիմ՝
այլ որպէս դու կամիս : Եւ գայ գտանէ զնոսա զի նըն-
ջէին , և ասէ ցՊետրոս . Սիմոն , ննջե՞ս . ո՞չ կարացեր
ժամ մի արթուն կալ : Արթուն կացէք և յաղօթս կա-
ցէք , զի մի մտջիք ի փորձութիւն . ոգին յօժար է՝ բայց
մարմինս ակար : Եւ դարձեալ չորրորդ եկաց յաղօթս , և
զնոյն բանս ասաց : Դարձաւ միւսանգամ անդրէն՝ և ե-
գիտ զնոսա ի քուն . քանզի էին աչք նոցա ծանրացեալ՝
և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի տացեն նմա : Գայ
երրորդ անգամ , և ասէ ցնոսա . Ննջեցէք այսուհետև և
հանգիստ արուք , զի հասեալ է վախճան . եկն ժամ , և ահա
մատնի որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց . ծն արիք
գնասցուք , զի ահաւասիկ մերձեցաւ որ մատնելոցն է
գիս : Եւ մինչդեռ նա դեռ խօսէր , գայ Յուդա Սկա-
րիովտացի՝ մի յերկոտասանից անտի , և ընդ նմա ամ-
բոխ սուսերօք և բրօք՝ ի քահանայապետէն և ի դպրաց
և ի ծերոց : Տուեալ էր նշան մատնչին՝ և ասէր . ընդ
որում ես համբուրեցից՝ նա է , կալէք զնա և տարէք
զգուշութեամբ : Եւ մատուցեալ վաղվաղակի ասէ ցնա .
ռաբբի ռաբբի . և համբուրեաց զնա : Եւ նոքա արկին
ի նա ձեռս՝ և կալան զնա : Եւ մի ոմն յայնցանէ որ կո-
չեալն կային՝ ձգեաց սուր , և եհար զծառայ քահանա-

յապետին, և ի բաց եհան զունկն նորա։ Պատասխանի ետ Ցխուա՝ և ասէ ցնոսա. իբրև ի վերոյ աւադակի լքէք սուսերօք և բրօք՝ ունել զիս։ Հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի ի տաճարին, և ոչ կալարուք զիս. այլ զի լցցին գիրք մարգարէիցն։ Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին և փախեան։ Եւ ումն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զիւրև կտաւ մի ի մերկուց. ունէին զնա երիտասարդքն, և նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ։ Եւ տարան զՑխուա առ քահանայապետան Կայիափա. և գային ընդ նմա ամենայն քահանայապետքն և գպիրք և ծերք։ Եւ Պետրոս երթայր ի հեռատեսանէ զհետ նորա՝ մինչև ի ներքս բակ ի դատիճ քահանայապետին, և նստէր ընդ պատուերան և ջեռնոյր առ լուսով։ Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Ցխուայ վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա, և ոչ գտանէին. զի բազում սուտ վկայութիւն վկային զնմանէ, և ներման միմեանց ոչ էին վկայութիւնքն։ Այլ յարուցեալ վկային սուտ զնմանէ և ասէին, թէ մեք լուաք ի դմանէ զի ասէր. ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս չինեցից այլ՝ առանց ձեռագործի։ Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա։ Այլ յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՑխուա և ասէր. ոչ ինչ առաս պատասխանի, զինչ զոքա զքէն վկային։ Եւ նա լուռ եւթ կայր և չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ քահանայապետն հարցանէր զնա կըրկին անգամ և ասէր. դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ օրհնելոյն։ Պատասխանի ետ Ցխուա և ասէ ցնա. դու առացեր թէ ես եմ. բայց ասեմ ինչ եք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան, և եկեալ ընդ ամպս երկնից։ Եւ քահանայապետն պատառեաց վարվարակի ըզպատմուճանս իւր և ասէ. զինչ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն ի բերանոյ դորա. զիա՞րդ թուի ձեզ։ Եւ ամենեքեան պատասխանեցին զնա՝ թէ մահապարտ է։ Եւ սկսանք ակն քարկանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել՝ կռփել և ասել. մարգարեաց մեզ Քրիստոս, ո՞վ է այն որ եհարն զքեզ։ Եւ ապասուորքն ապտակս հանէին նմա։ Եւ Պետրոս մինչդեռ էր ի խնամարհ ի դատին՝ գայ աղախին

մի քահանայապետին, և տեսանէ զնա զի լնուոյր. հա-
յեցաւ ընդ նա և ասէ. և դու ընդ Յիսուսի Նազովրե-
ցւոյ էիր: Նա ուրացաւ և ասէ. ոչ ճանաչեմ, և ոչ
գիտեմ զինչ դուդ ասես. և իբրև եկ յարտաքին գաւի-
թըն, և հաւ խօսեցաւ: Պարձեալ ետես զնա ազախինն,
և սկսաւ ասել ցայնոսիկ որ չուրջն կային, թէ և սա ի
նոցանէ է. և նա դարձեալ ուրացաւ: Եւ յետ սակաւ
միոյ՝ դարձեալ որ չուրջն կային ասեն ցՊետրոս. ար-
դարև և դու ի նոցանէ ես, քանզի գալիլեացի ես, և
խօսքդ խակ քո նման են: Եւ սկսաւ նզովել՝ երդնուլ և
ասել, թէ ոչ գիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք. և
նոյն ժամայն կրկին հաւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պետրոս
զբանն զոր ասաց ցնա Յիսուս, թէ չէ իցէ հաւու եր-
կիցս խօսեալ՝ զի դու երիցս ուրացիս զիս, և սկսաւ
լալ: 72:

Աղօթք հանդերձ ծանր գնելով զՏէր ողորմութիւն:
Ք՜Հ. Տէր ողորմեա: Երէց՝ Կրկնէ՜:
Ք՜Ր. Եւ ևս խաղ: Ք՜Հ. Օրհնութիւն և փառք:

ՍԱՂՄՈՍ ՀԸ

Աստուած, մեղն հեթանոսաք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո:

Ա.բարին վերատաղէմ որպէս հիւզս մրգապահաց. արկին զդիակունս ծառայից քոց՝ զէշ թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի:

Հեղին զարիւնն նոցա որպէս ջուր չուրջ վերատաղէմ, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա:

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այպն կատականաց այնոցիկ որ չուրջ էին զմեօք:

Մինչև յե՞րբ Տէր բարկանաս դու խաղաս, բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո:

Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգաց որ զքեզ ոչ ճանաչիցեն, ի վերայ թագաւորաց որ զանուն քո ոչ կարդացին. զի կերան զՅակովբ և զտեղի նորա աւերեցին:

Մի յիշեր զմեզս մեր զառաջինս, վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո Տէր, զի աղքատացաք յոյժ:

Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն մեծի փառաց անուան քո:

Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեզս մեր, վասն անուան քո:

Մի՛ երբեք ասացեն ի հեթանոսս, թէ ուր է Աստուած նոցա։

Այլ յայնմէ ինչ լիցի ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց որ հեղաւ։

Մոցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քո չահեա դու զորդիս սպանելոց։

Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ ի ծոց նոցա, նախատինս զոր նախատեցին զքեզ Տէր։

Մեք ժողովուրդք և խաչն սրբոյ քո խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո։

ՍԱՂՄՈՍ ՀԹ

Ո հովուեալ Իսրայելի՝ նայեաց, որ առաջնորդես որպէս խաչին Յովսեփու։

Որ նստիլ ի քրովբէս՝ յայտնեա առաջի Եփրեմի, Բենիամինի և Մանասէի։

Զարթո զզօրութիւն քո, և եկ կեցուցանել զմեզ։

Աստուած զօրութեանց, դարձո զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Տէր Աստուած զօրութեանց, մինչև յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։

Ջամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով։

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այպն կատականաց թշնամեաց մերոց։

Աստուած զօրութեանց, դարձո զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Այգի յեգիպտոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս և տնկեցեր, և առաջնորդեցեր նմա։

Հատատեցեր զարմատս նորա և ելից զերկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա, և բարուեակ նորա զմայրս Աստուծոյ։

Զգետաց զօրթ իւր մինչև ի ծով, մինչև ի գետս են չառուիղք նորա։

Ընդէր քակեցեր զպատե նորա, կթեն զնա անցաւորք ճանապարհի։

Ապականեաց զնա խոզ անտառի, և երկ վայրի արածեցաւ ի նմա։

Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկինից և տես, այց արա այգւոյս այմիկ և զարմանս տար ամա զոր անկեաց ակ քո :

Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ, այրեցեալ ի հուր և աւերեալ, ի սասան քումմէ կորիցեն :

Եղիցի ձեռն քո ի վերայ առն, ակ քո ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ :

Ոչ ևս ի բացեայ եղիցուք մեք ի քէն. կեցուսցես զու զմեզ, և զանուն քո Տէր կարդասցուք :

Աստուած զօրութեանց, դարձո զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք :

ՍԱՂՄՈՍ Զ

Ցնծացէք առ Աստուած օգնական է մեր, աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ :

Առէք սաղմոս և տուք օրհնութիւն, սաղմոս ասացէք նմա ի ձայն քաղցրութեան :

Փող հարէք ի զլուխս ամսոց, յառաջ նչանաւորի տաբեկանաց մերոց :

Հրաման է այս Իսրայելի, և իրաւունք են Աստուծոյ Յակովբայ :

Վկայութիւն Յովսեփու զոր եդ ընդ նմա . որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց , լեզու զոր ոչ գիտէր լսաւ :

Ի բաց արա ի բեռանց զթիկունս նորա , և զձեռս նորա յորթ և ի թիւ ծառայելոյ :

Ի նեղութեան կարդացեր առ իս և փրկեցի զքեզ , լսայ քեզ ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ ի վերայ ջուրցն հակառակութեան :

Լսեր ժողովուրդ իմ, և վկայեմ քեզ , և Իսրայէլ՝ թէ լսիցես ինձ :

Մի՛ ևս եղիցին քեզ աստուածք առժամանակ , և մի՛ երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի :

Ես եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց , բաց զբերան քո և լցից զդա :

Ժողովուրդ իմ ոչ լսաւ ձայնի իմում, և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ :

Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց , զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց :

Զի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր ինձ, կամ Իսրայելի զճանապարհս իմ գնացեալ էր :

Որպէս զոչինչ խնարհ արարեալ էր իմ զքշնամիս նորա, ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ։

Թշնամիք Տեառն առկային նմա, և եղիցին ժամանակք նոցա յաշխարհի։

Կերակրեաց զնոսա ի պարարտութենէ ցորենոյ, ի վէմ մեղր յագեցոյց ի նոսա։

ԿՅՐԻ

Նո՞ր է ձեռանէ քումմէ մերժեցա՞ն. մե՞ք ժո՞ղովուրդք եւ խաչն արօ՞տի քո՞։

Եբե՛ ան՞ջա՛ կրինե՛ս, և չ՛ե՛ն քա՛յր սա՛ս։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Ճառագայթ փառաց էին որ։ Դ. Ջեց պառն։ 167։

ՋԻՆՒ ՕՐԻՔ

Սրբոց Ա՛ռաքելոցն որ քան Մատթէոսի։ ԻՋ. 31։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Յայնժամ ասէ ցնոսա. ամենեքին դուք գայթագղեցայ էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցին ոչխարք հօտին։ Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա։ Պատասխանի եւ Պետրոս և ասէ ցնա. թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթագղեցայց։ Ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, զի յայսմ գիշերի՝ մինչ չև հաւտ խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։ Ասէ ցնա Պետրոս. թէ և մեռանիլ հասանիցէ ընդ քեզ, ըզքեզ ոչ ուրասցայց։ Նոյնպէս և ամենայն աշակերտքն ասէին։ Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի դեօղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցնոսա. Նստարուք այդր՝ մինչև երթայց կացից յաղօթս։ Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ։ Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի իմ մինչև ի մահ, կացէք աստ՝ և սկեցէք ընդ իս։ Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս՝ և ասէ. Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Գայ առ աշակերտսն, և գտանէ զնոսա ի քուն, և ասէ ցՊետրոս. այդպէս ո՞չ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս. արթուն կացէք և աղօթս արա-

բէք՝ զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն. հոգիս յօժար է, բայց մարմինս տկար: Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկաց յաղօթս ցիսուս՝ և ասէ. Հայր իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զսա, եղիցին կամք քո: Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք: Եթող զնոսա՝ և գնաց կաց յաղօթս երրորդ անգամ, և զարձեալ զնոյն բան ասաց: Յայնժամ գայ առ աշակերտան և ասէ ցնոսա. Ննջեցէք այսուհետև և հանգերուք. զի ահա հասեալ է ժամ, և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց. արիք երթիցուք ասեմ, զի ահաւասիկ եհաս որ մատնելոց է զիս: Եւ մինչդեռ նա գայն խօսէր, ահա Յուդա՝ մի յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում՝ սրովք և բրօք՝ ի քահանայապետիցն և ի ծերոց ժողովրդեանն: Եւ որ մատնելոցն էր զնա՝ եառ նոցա նշան և ասէ. ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք: Եւ վաղվաղակի մատուցեալ առ ցիսուս ասէ. ողջ եր վարդապետ. և համբուրեաց ընդ նմա: Եւ ցիսուս ասէ ցնա. ընկեր, վասն որոյ եկիբդ: Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի ցիսուս և կալան զնա: Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ ցիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և եհար ըզծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նորա: Յայնժամ ասէ ցնա ցիսուս. դարձո զսուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան որ առնուցուն՝ սրով անկանիցին: Թէ համարիցիս՝ թէ ոչ կարիցեմ աղաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այժմ այր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց: Այլ զիա՞րդ լինուցին գիրք՝ եթէ այսպէս պարտ է լինել: Յայնժամ ասաց ցիսուս ցամբոխն. իբրև ի վերայ աւազակի ելէք սուսերօք և բրօք՝ ունել զիս. հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի և ուսուցանէի, և ոչ կալայք զիս: Այլ այս ամենայն եղև՝ զի լցցին գիրք մարգարէիցն: Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան: 56:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեացուք:

Ք—ՀՏ. Տէր աղօթեա: Եբէյ֊ խրիՆէ֊:

Ք—Ղ. Եւ ևս խաղ: Ք—Հ. Օրհնութիւն և փառք:

ՍԱՂՄՈՍ ՃԸ

Աստուած օրհնութեան խնդ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ի վերայ իմ:

Խօսեցան զինեն լեզուաւ նենգաւորաւ, և բանիւք աշ
տելութեամբ պաշարեցին զիա։

Մարտեան ընդ իա ի տարապարտուց, փոխանակ սի
րոյ իմոյ մատնէին զիա, այլ ես յաղօթս կայի։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ,ատելու
թիւն փոխանակ սիրոյ իմոյ։

Կացս ի վերայ Նորա մեղաւոր, ատամանայ կացցէ ընդ
աջմէ Նորա։

Ի դատաստանի իւրմէ ելցէ դատապարտեալ, և ա
զօթք Նորա ի մեղս դարձցին։

Եղիցին աւուրք Նորա Նուազ, և զայցելութիւն Նորա՝
զան այլ ստանայի։

Եղիցին որդիք Նորա որբ և կին Նորա այրի. սահեա
ցին փոխոխեացին, որդիք Նորա մուրացք եղիցին, և ել
ցեն ի բնակութենէ իւրեանց։

Քննեսցէ փոխատու զամենայն ինչս Նորա, յափշտա
կեսցեն օտարք զվաստակս Նորա։

Մի գայի ոք օգնական նմա, և մի՛ ոք ողորմեսցի ի վե
րայ որբոց Նորա։

Եղիցին որդիք Նորա ի սատակումն, և յաղգի ջնջեսցի
անուն Նորա։

Յիշեսցին մեղք հօր Նորա առաջի Տեառն, և մեղք
մօր Նորա մի՛ ջնջեսցին, և եղիցին առաջի Տեառն յամե
նայն ժամ։

Սատակեսցի յերկրի յիշատակ Նորա, փոխանակ զի ոչ
յիշեաց առնել ողորմութիւն։

Հալածեաց զայր աղքատ և դառնակ, սպանանել զայն
որ խոնարհ է սրտիւ։

Սիրեաց զանէծս՝ և եկցէ նմա. ոչ կամեցաւ օրհնու
թիւն, հեռի եղիցի ի նմանէ։

Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ, մտցէ որպէս ջուր
ի փոր Նորա, որպէս ձէթ ընդ ոսկերս Նորա։

Եղիցի նմա որպէս հանդերձ զի ագանի, որպէս պա
տի որ ածի հանապազ ընդ մէջ։

Այս գործ է այնոցիկ որ չարախօս կացին զինէն առ
Տէր, և այք խօսէին չար զանձինս իմ։

Այլ դու Տէր Տէր արա ընդ իա բան անուան քումմ,
զի քաղցր է ողորմութիւն քո, և փրկեա զիա, զի աղ
քատ և անանկ եմ ես։

Ահա իմ խռովեցաւ ի փորի իմում, և ես սպկէս ըս-
տուեր ի խուսափիլ իմում պակասեցայ, և թօթափեցայ
սպկէս մսրախ :

Ծունկք իմ ակաթացան ի պահոց, և մսրմին իմ այ-
լայլանեաց յիւղոյ :

Եղէ ես նախատ նոցա, տեսին զիս և շարժեցին զգ-
լուխս իւրեանց :

Օգնեա ինձ Տէր Աստուած իմ, և փրկեա զիս ըստ
ողորմութեան քում :

Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու Տէր արարեր
զայս :

Նոքա անիծանեն և դու օրհնեացես. այք յարուցեալ
են ի վերայ իմ՝ ամօթ կրեսցեն, այլ ծառայ քո ուրախ
եղիցի ի քէզ :

Զգեցցին զամօթ որ չարախօս կայեն զանձնէ իմմէ,
և արկցեն սպկէս կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք :

Այլ ես խոստովան եղէց առ Տէր յոյժ բերանով ի-
մով, ի մէջ բազմաց օրհնեցից զքէզ :

Զի եկաց նա ընդ աջմէ անանկիս, փրկել զիս յայն-
ցանէ այք հալածեն զանձն իմ :

ՍԱՂՄՈՍ ՃԹ

Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև
եղիցեն զթշնամիս քո պատուանդան ոտից քոց :

Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիովն,
և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց :

Ընդ քեզ է սկիզբն աւուրց զօրութեան, ի վայելչու-
թիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսնակ ծնայ
զքեզ :

Երդուաւ Տէր և ոչ ևս զղջասցի, թէ դու ես քահա-
նայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ
աջմէ քումմէ :

Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթագաւորս. դատի
զհեթանոսս և բազում առնէ զհարուածս, և խորտա-
կեսցէ զգլուխս բազմաց յերկրի :

Ջուխս ի ճանապարհի արբուսցէ, վասն այնորիկ և
բարձր արասցէ զգլուխս :

ՍԱՂՄՈՍ ՃԺ

Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ խնդ, ի
խորհուրդս ուղղոց ի ժողովուրդս. մեծ են գործք Տեա-
ռն, և քննեալ են յամենայնի կամք նորա :

Խոտովանութիւն և վայելչութիւն են գործք նորա, արդարութիւն նորա միայ յաւիտեանս յաւիտենից։

Ցիշատակ արար սքանչելեաց իւրոց ողորմած և ողորմած է Տէր, կերակուր տայ երկիւղածից իւրոց։

Ցիշեաց յաւիտենից զսխտա իւր, զօրութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժողովրդեան իւրում։

Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց, և գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են։

Հաւատարիմ են յամենայնի պատուիրանք նորա, հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից, արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ։

Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան իւրում, պատուիրեաց յաւիտենից զսխտա իւր. սուրբ և ահեղ է անուն նորա։

Սկիզբն գիտութեան երկիւղ Տեառն, խնամութիւն բարի ամենեցուն որ առնեն զնա, և օրհնութիւն նորա միայ յաւիտեանս յաւիտենից։

ԿՅՐԻ

Թօ՛ռնցան գինէդ լեզուաւ նենգաւո՛րաւ. Եւ բանիւ սաստկութեամ՛ն գիս պաշա՛րեցի՛ն։

Երէց՝ անգո՛ւ կրկնէ, և չ՝ետքին քարշ տա՛։

ՇԱՐԱԿԱՆ Դ

Զար կապանաց մարդկան լուծիչ։ Ե. Քէց պոռն։ 168։

ՋԻՆ Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ Ի՚Զ. 57։

Վասն չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր գրիչքն և ծերք ժողովեալ էին։ Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչև ի սրահ քահանայապետին. և մտեալ ի ներքս նստէր ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն։ Իսկ քահանայապետքն և ամենայն տանեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց։ Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք՝ ասէին, Թէ սա ասէր՝ կարօղ եմ քակել զտաճարն Աստուծոյ, և զերիս աւուրս չինել։ Եւ յարուցեալ

քահանայապետն ասէ ցնա. չառնս ինչ պատասխանի, զինչ դոքա ամբաստանեն զքէն: Եւ Յիսուս լուռ կայր: Պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դուն ես Քրիստոսն Որդի Աստուծոյ: Ասէ ցնա Յիսուս. դու ասացեր. բայց ասեմ ձեզ, յայսմ հետէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից: Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ. հայհոյեաց. զի ես պիտոյ են մեզ վկայք, ահա արդ լուայք զհայհոյութիւն դորա. զինչ հաճոյ է ձեզ: Նոքա պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է: Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կռիւեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն. մարգարեաց մեզ Քրիստոս, ո՞վ է՝ որ եհարն զքեզ: Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւթին. մատեաւ առ նա աղախին մի և ասէ. և դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր: Նա ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ, թէ ոչ գիտեմ զինչ խօսիպ: Եւ իրրև եկ նա արտաքս քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ որ անդն կային. և սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր: Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն: Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ՝ ասեն ցՊետրոս. արդարև և դու ի նոցանէ ես, քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ: Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն. և իսկոյն հաւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց, թէ մինչ չև հաւուս խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս լացաւ դառնապէս: 75:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ողորմեա: Քահ. Տէր ողորմեա: Երէց՝ կրկնէ:

Քար. Եւ ևս խաղ: Քահ. Օրհնութիւն և փառք:

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է զի: 331:

Կոչէ

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է՞. զի յաւիտեան է ողորմութիւն նորա՞:

Երէց՝ անթմբիր կրկնէ, և չխեցին բարձր ասա:

ՇԱԲԱԿԱՆ Դ

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց: Զ. վէց տուն: 169:

ՁԻՆԻ Օրթի. Ի ԲԵԹ ԿԷՍԱՐԻԱ:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԸ. 2:
Վասն չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Գիտէր և Յուդա՝ որ զնա մատնելոց էր՝ զտեղին. զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուս աշակերտօքն հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ի քահանայապետէին և ի փարիսեցւոց ապաստւորս, գայ անդր լուսիւք և լապտերօք և զինուք: Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն եկեալ ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա. զո՞ խնդրէք: Պատասխանի ետուն նմա. զՅիսուս Նազովրեցի: Ասէ ցնոսա Յիսուս. ես եմ: Կայր ընդ նոսա և Յուդա՝ որ մատնէրն զնա: Իբրև ասաց՝ թէ ես եմ, յետս յետս չոգան և զարկան գգետնի: Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք: Եւ նոքա ասեն. զՅիսուս Նազովրեցի: Պատասխանի ետ նոցա Յիսուս. ասացի ձեզ թէ ես եմ. արդ եթէ զիս խնդրէք, թողէք զայսոսիկ գոցա երթալ: Զի լցցի բանն՝ զոր ասաց, թէ զորս ետուր ցիս՝ ոչ կորուսի ի նոցանէ և ոչ զոք: Իսկ Սիմոն Պետրոս՝ քանզի ունէր սուր, ձգեաց զնա և եհար զքահանայապետին ծառայ, և ի բաց առ գունդն նորա զականջ. և էր անուն ծառային Մաղքոս: Ասէ Յիսուս ցՊետրոս. արկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա: Իսկ գունդն և հազարապետն և ապաստւորք Հրէից կալան զՅիսուս և կապեցին: Եւ ածին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ: Այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, թէ լաւ է առն միոյ մեռանել ի վերայ ժողովրդեանն: Եւ երթային զհետ Յիսուսի Սիմոն Պետրոս և միւս աշակերտն: Եւ աշակերտն այն քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ քահանայապետին: Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ. ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց ցդռնապանն՝ և եմոյծ ի ներքս զՊետրոս: Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. մի՛թէ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես: Եւ նա ասէ. ոչ եմ:

Կային անդ ծառայքն և սպասաւորք , խաբեայլ արկեալ՝ քանզի ցաւրա էր , և չեռնուին . կայր ընդ նոսա և պե- արտա և չեռնոյր : Եւ քահանայապետն եհարց զՅիսուս վասն աշակերտացն և վասն վարդապետութեան նորա : Պատասխանի ետ նմա Յիսուս . ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի , ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն և ի տաճարի անդ՝ ուր ամենայն հրեայք ժողովեալ էին , և ի ծածուկ լինչ ոչ խօսեցայ : Զի՞ հարցանես զիս , հարց զայնոսիկ՝ որ լսանն , թէ զինչ խօսեցայ ընդ նոսա . ա- հաւասիկ նոքա գիտեն զինչ ասացի ես : Իբրև նա զայն ասաց , մի ոմն ի սպասաւորացն որ անդ կայր , ած սպա- տակ Յիսուսի և ասէ . այդպէս պատասխանի տաս քա- հանայապետիդ : Եւ Յիսուս ասէ ցնա . եթէ չար լինչ խօսեցայ , վկայեա վասն չարին . իսկ եթէ բարի , ընդ- ՞ր հարկանես զիս : Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ : Եւ Սիմոն Պետրոս կայր անդ և ջեռնոյր . ասեն ցնա . միթէ և դու յաշակերտաց անտի նորա իցես : Նա ուրացաւ և ասէ , թէ չեմ : Եւ ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին՝ ազգական այ- նորիկ զորոյ զունկն եհատ Պետրոս . ոչ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա : Դարձեալ ուրացաւ Պետրոս , և յոլովապակի հաւ խօսեցաւ : 27 :

Զինչ Մ-ղ. Հոգւոյն հանդ: Ք-ր. վասն հանգուցեալ: Աչ. Քրիստոս որդի: Հայր մեր: Ողորմեա Քրիստոս:

Եւ ապա ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ ԴՉ. ՅԻՆԽ.

Իշխանք հալածեցին զիս ի նանիր. ալէլուիա:

Զինչ Ք-ր. Եւ ևս խաչ: Ք-հ. Օրհնութիւն: Եւ ապին

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՉ

Աշխարհակերութեամբըն մի լեալ ցո՞ւգաւ. զիւր ընտիր ըղվարպանեան ընդ երեսին արծաթոյ հըրեշտըն մաս- նէր : Ո՞նդ արաւ ես համբուրեցից ասէ ընձա կալարուք. ով համբոյր նենդութեան նըշան եւ անխիղճ մեհան: Աշխարհաւեր յինքենէ գանաուածոյին տուրբ Հոգին. եւ ըզդեցաւ բղտասանոյ ծրպէս հանդերձ արկած դիւրաւ: † Ի զիշերին յորում մանանէր փրկիչըն մեր ի մահ

խաչի եւ ի լեառնէն ձիթենեաց. աղօթելով զայս ասէր Հայր անցո՛ յինէն զբաժա՛կս: Ի՞նչ անօրէն աչակերտին թողեալ ըզգո՛ւթ սիրոյ նորա. եւ փութայր առ քահանայան ասէր ինձ զի՞նչ կամիք տալ ինձ մատնեցից ըզվարդապե՛տն:

Ո՞ր նըմաներ ի քրովբէ՛ն Աստուածածն Բանդ. այսօր վանքն մեր խոնարհութեամբ նըմանար ի լերինըն ձիթենեաց. ‖ օրհնեմք ըզքեզ անդադար երգո՛վ: Ո՞ր համեմատիւդ ես խորհըրդոցըդ հայրենի. աշակերտաց քոց ծանո՛ւցեր ըզխորհուրդ քո՛ գալըստեանն. օրհնեմք: Ո՞ր ամենայնից ես արարիչ եւ ըստեղծիչ կենդանութեան. այսօր ըզծածկեա՛լ խորհո՛ւրդ երրորդութեանըդ յայտնեցեր եկեղեցւոյ սըրբոյ քո. օրհնեմք:

Ըզքեզ օրհնեմք որ բաշխո՛ղ ես բարո՛ւթեանց. և հայցեմք որպէս ի մարդասիրէ. ընդ մեր քո ընտրելոցն զիմանալի աչխա՛րհն: Զի՛ դու ես Տէր յորմէ հայցեմք միայրըն հաւատով հանդերձ ոդուա՛վք սըրբեցելովք. ընդ անջմէ քո զփառս եւ յաւիտեան. ընդ որս և մեք անդա՛նեմք զի զառաւօտս ընդ առաւրըս քո՛: Այլ դու բարձրեա՛լ փըրկիչ որ վասըն մեր խոնարհեցար. արժանի՛ արա ըզմեզ ընդունել զբաժակ պատուիրանի կենաց քոց Տէր. որով կացցո՛ւք յաջմէ քումմէ ի հանդերձեա՛լ քում զատըսառա՛ն:

Հգ. Աստրամփե՛լի հողմոյ նըմանն ահեղագո՛չ ասատիկ հընչմամբ. երեւեցար ի վերնատունն Հոգիդ զառաւն երկոտասանն. որք առ ի քէն մըկըրտեցան որպէս զոսկի հրով մաքրեցան. ‖ մա՛ք քրեա ի միջնէ ըզմեզ մեղաց և ըզգեցո՛ ըզնոյս փառաց: Էակեր յերկիր աստուածա՛բար գա՛տել գնչխարհս Իշխանաբար. ընդ արդարո՛ւթեանն և ընդ մեղաց և ընդ չարին գատաստանաց. բանգեր ըզ-

գանձդ անհիւթական պարգեւս եառնուր որպէս մարդկան. մա՛ք քրեա : Ակն ի սիրոյ զակերդ առաքեանց յինքըն գանգամս իւր քեւ յօդեանց. զեկեղեցի իւր զոր շինեաց հօթըն անամբ քո հաստատանց . տընտես ի նմա եղ գառաքեալան հօթնեակ չնորհօք քո զարդարեանց. մա՛ք քրեա :

Հն. Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մարդա՝ սիրութեամբըդ քո խընայեա յանձինըս մեր. ‖ սատկիչ կենդանեաց և հանդուցիչ նըշխէցելոց : Ի՛ խաչին քե՝ ժողեցար զմահս լուծեր զիշխանութիւն. յաւիտենից ըզնըշխէցեալսըն վերածեր յանմահ ի կեանս. սատկիչ : Ակժանաւորաց քոց անգօթիւք յիչեա ընդմեր ըզնըշխէ՝ ցեալան. յորժամ գայցես անճառ փառօք հաստուցանել մարդկան ըստ գործս . եւ մեր նըշխէցելոցըն չնորհեա դասիլ ընդ սուրբսդ քո :

Մծ. Ըզքե՛զ կոյս և մայր և բնակարան աստուա՝ ծային նեթարդութեանն. գոհանանեմք և վերծրհնեմք զկեղեալ փըրկօղ կենդանութեանն սղգի մարդկան. ‖ վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս. բարեբանեմք ընդմայր և զաղախին փըրկչին մերոյ : Ծնունդըն չօր և հինա՝ ւուրց անժամանակին յաւիտենից. ժամանակաւ յորովայ՝ նի քում բնակեցաւ և ի չորի ոչ մեկնեցաւ. վասն որոյ : Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ չօր . անընդրկալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութեամբ երկրըպագեալ. վասն որոյ : Ըզքե՛զ ոչ միայն որդիք մարդկան այլ եւ վերինն զօրութիւնք. զանաք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զըւարթնոց եւ հրեշ՝ տակաց . զհանանեն և վերծրհնեն եւ փառաւորեն ընդմայր և զաղախին փըրկչին մերոյ :

Խշ. Ակսաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից.

որ ետուր մեզ պահպան յաղթող ընդդէմ թըշնամեացն. ‖ ազաչեմք սուրբ փըրկիչ պահպանեա զանձինըս մեր: Բարձրեալ թագաւոր որ վասըն մեր եղեր ի խաչ. և բարձեր սուրբ գյանցանս նախաառեղծիչն Ադամայ. ազաչեմք: Գլուխ սուրբ հաւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր անսահալ այսոյն պըղծոյ կործանեցաւ անկանգնելի. ազաչեմք: Գաղտացաւ թըշնամիին ընդ յայտնել սըրբոյ խաչին. և ի յանէծ փառաց նորա կոխծանեցաւ յանդունդս երկրի. ազաչեմք: — Փառք Հօր: Երկինըք ցընծային և երկիր ուրախանայր. զանդի փըրկիչ ցուցաւ սուրբ խաչն և լուսաւոր ամենեցուն. ազաչեմք:

— Այժմ և միշտ: Ժողովեալ հըրէիցըն կըշռեցին արծաթ բազում. անեալ տանրանն աւ Պիղատոս ասեն ի խաչ հանն ի խաչ զի հայհոյիչ էր օրինաց:

Աղաղաւ. Փառք հրաշափառ չարչարանաց քոց Տէր:
Ամէն ուխա. Աւետ աւքաղեան. Ջարթիւաւ ազիզն քո:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳՉ

Ինչ՞ եր յերկինից անըսկիզբն որպէս. ի հողանդէն ի բնաւթենէ մարդկանն գչարչարանըս յանձն առեր. ‖ օրհնեմք զքեզ ո՛ր էիր յառաջ քան զամենայն յաւիտեանս: Որ անապակ բանիւ լինելդ ամենայն երկրի. ի յերկրի յաւետեն կացեալ ահագնէդեն արարածք. օրհնեմք: Ցնըմին գոհանս զըւարթանք երկնից. այսօր հնկեր կամաւ ի խաչ գեղարդեամբըն խոցեցար. օրհնեմք:

Գ. Ըզտէր օրհնեցէք ‖ բանիր աբարձ յաւիտեան: Երկ գինաւորըն գեղարդեամբըն յարձակեալ. խոցեալ ի կենարարին բանիր: Ո՛ւսան անդրեւ կենդանարար բըղխեալ. լըսայ ի զաին զոհ ի մեզաց. բանիր:

ՄԵԾԱՑՈՒՍԱՑԷ ԳՋ

Լ՛ոյս լուսոյ մայր. եւ կենարար բանին ընտ֊
կանութ՛եան. ‖ քնդ երանելոցն սգոյ եւ ապ՛ինք ամե֊
նայն : Աստղծոյ՛ն մայր. եւ հընազանութեան կերպի նո֊
րոգութ՛եան՛ն. քեզ : Լ՛ոյս ծագեցաւ ի քե՛ն. նզատե֊
ցար ի խաւարութ՛եան՛ն. քնդ :

ՈՂՈՐՄԵԱ ԳՋ

Ընկեալ ի փըրկութի՛ւն աշխարհ մարդկան. ի ծառայէ֊
յանձն առնու մանուկ ի գոմաստան. ‖ հանդերձելով
վանն ըզմե՛զ կերցուցանել : Առանեալ պիտառոսի որ֊
պէս մահապարտ. ի յԱննայէ և ի կայիափայ դատա֊
պարտեալ. հանդերձելով : Կացեալ ի յատենի երկրորդ
Ադամ. վասն առաջի՛ն Ադամայ պարտեացըն թո՛ղու֊
թեան. հանդերձելով :

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԳՋ

Ո՛վ ընդանչելի՞ և ահ՛ելի ահաւոր. դատաւորի՛ն եր֊
կնի եւ երկրի այսօ՞ր տեսանք ի խաչի : Տեսեալ ըզՏէրն
ի խաչին խաւարեցաւ արեգակն. եւ վարագո՛յր տաճա֊
րին ցե՛ղդ վերնայ վերացաւ մինչ ի վայր : Անհրաժարաբար խա֊
չեցաւ Տէրն ի մե՛ղ ի յանօրէնութենց. պի ընդդէ դերն որ ա֊
պէ՞ք էէ ընդ անօրէնսս համարեցաւ :

Յորժամ ասէն զՏէր յերկինէն՝ ընթացանէն զնացքով ի հե֊
հոերքէնն, ինչ֊ւէ վէմքն փառք ի բարձունս : Եւ ապա քե֊
տէով վասն զասուց խորանի կոնդէզն :

Աստուած երկ

Առանեցայ և ոչ եմանէի. աչք իմ ակարացան յապ֊
փասութենէ :

Աղաղակեցի առ Տէր զօրհնութապատ. և համբարձի առ
քեզ գձեռս իմ :

Քրիստ. փառաւորեցուք :

ՄԱՆԿՈՒՆՔ ԲՁ

Ո՛ր թագաւորդ ես թագաւորանդ Քրիստոս ի ծառայէ դատապարտեալ. համբերելովն վասն մեր. ‖ Երկայնամիտ մի՛ տէ՛ր քեզ վաղք: Ո՛ր պատուական խաչիւդ քո Քրիստոս և սուրբ արեանդդ քո հեղմանբ. կենցաղացնել ըզմեզ կամեցար. Երկայն: Ո՛ր մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբերեցե՛ր. եւ ի մահու ըզմահ կոխեցեր. Երկայնամիտ:

Քէ. վասն խաղաղութեան: Աչ. Սուրբ ես Տէր:

Աչ ՍԱՂՄՈՍ ՃԸ. ՊՂԲԱՅՆ.

կՁ. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի:

փԽ. Ատուած օրհնութեան իմոյ մի լռեր: 459:

ՋՒՆՒ ՕՐԲԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԸ. 28:

վասն չարչարանացդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յատեարանս դատաւորին, և էր այգուց: Եւ նոքա ոչ մտին յատեարանն, զի մի պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն: Ել առ նոսա Պիղատոս արտաքս և ասէ. զի՞նչ չարաբասութիւն մատուցանէք զառնէն դատաստանի: Պատասխանի եառն և ասեն ցնա. եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ: Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա հրեայքն. մեզ ոչ է արժան սպանանել զոք: Զի լցցի բանն Յիսուսի զոր ասաց, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ: Եմուտ ուրեմն կրկին յատեարանն Պիղատոս, կոչեաց զՅիսուս, և ասէ ցնա. դո՞ւ ես թագաւորն հրէից: Պատասխանի եառ Յիսուս. ի քէ՞ն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն: Պատասխանի եառ Պիղատոս. միթէ և ես հրեայ իցեմ. ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ է քո: Պատասխանի եառ Յիսուս. իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհի. եթէ յաշխարհի սմանէ էր արքայութիւնն իմ, պատասուրքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի մատ-

նեցայց Հրէից. բայց արդ թագաւորութիւն իմ չէ աստի: Ասէ ցնա Պիղատոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ումն ես դու: Պատասխանի ետ Յիսուս. դու ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ ի ճշմարտութենէ է, լսէ բարբառոյ իմոյ: Ասէ ցնա Պիղատոս. զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իբրև ասաց, դարձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա. ես և ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա: Բայց է ձեր սովորութիւն՝ զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ կամիք զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան և ասէին. մի զդա, այլ զԲարաբբա. և էր Բարաբբայն այն աւազակ: Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս, և դան եհար: Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. և գային առ նա և ասէին. ողջ եր, արքայ Հրէից: Եւ հանէին նմա ապտակս: Եւ դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես զնաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Եւ Յիսուս արտաքս, և ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծիրանի: Եւ ասէ ցնոսա. ահա այրդ ցձեզ: Իբրև տեսին զնա քահանայապետքն և պատասխարք, զաղաղակ բարձին և ասեն. ի խաչ հան՝ ի խաչ հան զդա: Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զդա ի ձեզ, և ձեզն հանէք ի խաչ. զի ես ի դմա զնաս ինչ ոչ գտանեմ: Պատասխանի ետուն նմա Հրեայքն. մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացս մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար: Իբրև լուաւ զբանս զայս Պիղատոս, առաւել ևս երկեաւ: Եմուտ դարձեալ անդրէն յապարանն, և ասէ ցՅիսուս. ուստի՞ ես դու: Եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա Պիղատոս. ընդ ի՞ս խօսիս. ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ: Պատասխանի ետ Յիսուս. ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեացդ զիս քեզ՝ նորա մեծ մեղք են: Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրեայքն աղաղակէին և ասէին. եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագա-

ւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր։ Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, աճ զՅիսուս արտաքս՝ և նստաւ ի վերայ բեմին ի տեղւոջն որ կոչէր քարայատակ, և հրեայեցերէն կապպաթա։ Էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբրև վեցերորդ, և ասէ ցՀրեայսն. ահա թագաւորդ ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղակէին. բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ, և հան զդա ի խաչ։ Ասէ ցնոսա Պիղատոս. ես զթագաւորդ ձեր ի խաչ հանիցեմ։ Պատասխանեն հոքն քահանայապետքն. չէք մեր թագաւոր՝ բայց ի կայսերէ։ Յայնժամ եա զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ հանիցէ։ ԺԹ. 16։

Երէ. Հանդուրժեալ։ Բ. Խնդրեացուք։ Կեցո։ Ի ընդ։ Աչ. Բաւ ամենազօր և հրաշալի չարչարանացդ։

Ես պնեն ղեռն և զաեխտրոնն ի վերոյ էրուխլին։ 496։

Ի ՅԵՐԵԿՆ

Յերէք ժամ ժողովին ի քոռն Եկեղեցւոյն. և ասեն զճշդիժամ, հանդերձ չորեքեան և մեծ ապընիւ։ Ես ապա ասեն։

Ա՜ՂԷՆ ՍԱՂՄՈՍ ԼԴ. Ի ընդ։

Կ՘. Յարեան ի վերայ իմ վկայք չարեաց, զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս։

ՓԽ. Դառնա Տէր զայնոսիկ ոյք դառին զիս, մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ իս։

Ա՛ռ զվէն և զասպար քո, և արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, ասել զնոսա. և ասա դու ցանձն իմ՝ Թէ փրկութիւն քո ես եմ։

Ամաչեսցին և յամօթ լիցին ոյք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցին ոյք խորհէին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթագղութիւն, և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ։

Հասցէ ի վերայ նոցա որոգայթ զոր ոչ գիտացին, և որս զոր թագուցին՝ առցէ զոտս նոցա, և յորոգայթ ի նոյն անկցին։

Այլ անձն իմ ցնծասցէ ի Տէր, ուրախ եղիցի ի փրկ-

կութեան նորա. և ամենայն ոսկերք իմ սասցին, Տէր՝ ո՞ նման է քեզ:

Չի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զանանկն յայնցանէ որ յափշտակեն զնա:

Յարեան ի վերայ իմ վկայք չարեաց, զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս:

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, անժամանգել զանձն իմ խորհեցան յորդւոց ի մարդկանէ:

Ես ի նեղել նոցա քուրձ զգենուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ, և ազօթք իմ ի ծոց իմ դարձցին:

Որպէս զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի, որպէս սգաւոր և տրտում՝ այնպէս խոնարհ առնէի:

Ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան, ժողովեցան ցիս տանջանք և ես ոչ ծանեայ. ցրուեցան և ոչ դադարեցան:

Փորձեցին զիս և արհամարհեցին, արհամարհանօք կրճտեցին ի վերայ իմ զատամունս իւրեանց. Տէր, ե՞րբ տեսցես:

Ի բաց տար զանձն իմ ի խորամանկութեանէ նոցա, և յառիւծուց զմիամօրութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ Տէր, յեկեղեցիս մեծ, և ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ:

Մի՛ ուրախ եղիցին ցիս թշնամիք իմ ոյք առէին զիս ի սուրբ պատրաստուց. ակնարկիլ առնէին ցիս աչօք իւրեանց:

Ընդ իս զհատագութիւն խօսէին, և ինքեանք բարկութեամբ զնենգութիւն խորհէին:

Բացին ի վերայ իմ զբերան իւրեանց, և ասացին՝ այո այո տեսին աչք մեր:

Տեսեր Տէր, և մի լռեր, Տէր մի ի բացեայ առնիր լինիր:

Զարթիր և հայեաց Տէր, յիրաւունս իմ, Աստուած իմ և Տէր իմ, ի դատաստանս իմ. և իբրև արա ինձ ըստ արդարութեան քում Տէր Աստուած իմ:

Մի՛ ուրախ եղիցին ցիս թշնամիք իմ, և մի՛ ասասցին ի սիրտս իւրեանց թէ վայ վայ անձանց մերոց զի ընկլուզաք զնա:

Ամաչեցին և յամօթ լիցին ոյք խնդային ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգանս ոյք մեծաբանէին ի վերայ իմ:

Ցնծասցին և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, ոյք կամին ընդ արդարութիւն իմ:

Ա*ստուածն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, և այք կամին զխաղաղութիւն ծառայի քո։*

Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո, զօրհնաբանութիւն զովութիւնս քո։

ընթերցուած ի ձաքարիայ մարգարէէ։ ԺԱ. 11։

Եւ ծանիցեն քահանայիքն զխաչինս պահեսցի իմոյ, զի բան Տեառն է։ Եւ ասացի ցնոսա, թէ բարւոք թըւի յաչս ձեր՝ տուք զվարձս իմ. ապա թէ ոչ՝ զդադարեք։ Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի. և ասէ ցիս Տէր. արկ զա զայդ ի բովս, և քննեսա թէ փորձ իցէ, որպէս ես զասայ փորձ վասն նոցա։ Եւ առի զերեսուն արծաթին, և արկի ի տուն Տեառն ի բովս։ Եւ ընկեցի զգաւազանն երկրորդ՝ զվիճակն, ցրել զուխտ իմ ի մէջ Յուդայ և ի մէջ Իսրայելի։ 14։

զօրսի առաքելոյն ի գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս։ Բ. 14։

*Ա՛յլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես աշխարհի։ Զի ի Քրիստոս Յիսուս, ոչ թլփատութիւն ինչ է, և ոչ անթլփատութիւն. այլ նոր արարած. և որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն, և ի վերայ Իսրայէլին Աստուծոյ։ Ա*յուհետև աչխատս ոչ դիս մի արասցէ, զի ես զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն։

Ա*ղօթք հանդիպեալ սաղմոսելով զՏէր ազաչեսցուք։

Քահ. Տէր ողորմեա։ Երէց՝ Երիցս։

Քոր. Եւ ևս խաղաղութեան։ Քահ. Օրհնութիւն և փառք։

Երէցդ ՍԱՂՄՈՍ ԼԱ. Ի ԴԻՒՐ

կձ. Ես ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

փԽ. Տէր մի արամութեամբ քով յանդիմաներ։ 405։

ընթերցուած յեսայեայ մարգարէէ։ գ. 10։

Վա՛յ անձանց նոցա՝ զի խորհեցան խորհուրդ չար առանձինն և ասեն. կապեսցուք զարդարն՝ զի զժոխի եղև

մեզ : Ա. յաւուհետե զարդիւնս զործոց իւրեանց կերիցեն : Վա՛յ անօրինին, չարիք ըստ զործոց ձեռաց իւրոց անց- ցեն ընդ նա : Ժողովուրդ իմ, հարկահանք ձեր ճռաքաղ առնեն զձեզ, և պահանջօղք տիրեն ձեզ. ժողովուրդ իմ, որ երանեն ձեզ՝ խաբեն զձեզ, և զշաւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն : Ա. արդ հասցէ Տէր ի դատաստան, և կացուցանէ յատենի զժողովուրդ իւր. ինքնին Տէր ի դատ կոչեցէ ընդ ծերս ժողովրդեան իւրոյ և ընդ իշ- խանս նոցա. դուք զի հրկէզ արարէք զայգի իմ, և յա- փըշտակութիւն տնանկին է ի տունս ձեր. դուք զի ջըր- կէք զժողովուրդ իմ, և զերեսս տնանկաց լի առնէք ա- մօթով, ասէ Տէր՝ Տէր զօրութեանց : 15 :

Պօղոսի առաքելոյն ի փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս : բ. 5 :

Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ և ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստու- ծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի ա- ռեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ : Խոնարհեցոյց զանձն, լեալ հնա- զանդ մինչու չափ և մինչու խաչի : Վասն որոյ և Աս- տուած զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա ա- նունն որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յի- սուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և անդրամեռելականաց. և ամենայն լե- զու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փա- ռս Աստուծոյ Հօր : 11 :

Աղօթք հանդերձ ապաշխարութեամբ զՏէր աղաչեսցուք : Ք-Հ. Տէր ողորմեա : Եր[illegible]- [illegible]- :

Ք-Ղ. Եւ ևս խաղաղութեան : Ք-Հ. Օրհնութիւն և փառք :

Եր[illegible]- ՍԱՂՄՈՍ Խ. [illegible]-

Կ3. Մտանէր տեսանել զնահատութիւն, խօսէր ի սըր- տի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր :

Փխ. Երանի որ խորհի զազքատն : 409 :

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ : ը. 4 :

Տէր, Տէր ասէ ինձ լեզու խրատու, զի գիտասցից խօ- սել ի ժամու զրանն : Պատրաստեաց զիս ընդ առաւօտս.

յաւել ինձ ունկն ի լսել, և խրատս Տեառն բանոյ զա-
կանջս իմ, և ես ոչ խաւսեաւմ և ոչ ընդդէմ գառնամ:
Զթիկունս իմ եառ ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս,
և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանե-
լոյ: Եւ Տէր, Տէր եղև իմ օգնական. վասն այնորիկ ոչ
ամաչեցի, այլ արարի զդէմս իմ իբրև զվէմ հաստատուն:
Եւ գիտացի թէ ոչ ամաչեցից. դի մերձ է որ արդարա-
ցուցանէ զիս. ո՞վ է ատեան իմ, եկեսցէ և կացցէ ի մէջ.
և ո՞վ է որ դատին զիս, մերձեսցի առ իս: Զի ահաւա-
սիկ Տէր, Տէր օգնական է ինձ, ո՞վ է որ չարչարիցէն
զիս: Ահաւադիկ դուք ամենեքեան իբրև զձորձս հնաս-
ցիք, և ցեց սնցամաս կերիցէ զձեզ: 9:

Զօրասի առաքելոյն ի հոգմայեցւոց թղթոյն
է ընթերցուածս: ե. 6:

Զի մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս ըստ ժա-
մանակի ի վերայ ամպարշտաց մեռաւ. դի ըստ արդա-
րոյ հազիւ ոք մեռանիցի, այլ ըստ բարւոյ թերևս հա-
մարձակիցի ոք մեռանել: Քայտնեաց Աստուած զսէրն
իւր ի մեզ. դի մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վա-
սըն մեր մեռաւ. որչափ ևս առաւել յարդարանալս մե-
րում այժմիկ արեամբն նորա՝ ապրեցուք նովաւ ի բար-
կութենէ անտի: Զի եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտե-
ցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա, որչափ ևս
առաւել ի հաշտելս մերում ապրեցուք կենօքն նորա:
Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս յԱստուած ի
ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և զհաշ-
տութիւն խակ ընկալաք: 11:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր ապաշխարու-
թեամբ:

Քահ. Տէր ողորմեա: երիցս կրկնեաց:

Քեր. Եւ ևս խաղաղութեան: Քահ. Օրհնութիւն և փառք:

Ձ-ՐՐՐԻ ՍԱՂՄՈՍ ԻԱ. Ի ԿԻՒ-

ԿՁ. Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ իւրեանց, և ի
վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:

ՓԽ. Աստուած Աստուած իմ նայեաց առ իս, ընդէր
թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից
յանցանաց իմոց:

Աստուած իմ, ի տուէ կարգացի առ քեզ, և ինձ ոչ

լսաբ . ի գիչերի՝ և ինձ ոչ անսացեր :

Դու ի սուրբս բնակեալ ես , և գովեալ յԻսրայէլի :

Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան ի քեզ և փրկեցեր զնոսա :

Առ քեզ աղաղակեցին և կեցին , ի քեզ յուսացան և ոչ ամաչեցին :

Այլ ես որդն եմ և ոչ եմ մարդ , նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց :

Ամենեքեան որ տեսանէին զիս արհամարհէին զինեւ , խօսէին շրթամբք և շարժէին զգլուխս ի բերանոց :

Յուսացաւ ի Տէր և փրկեսցէ զնա , կենցուսցէ զնա զի կամի զնա :

Դու ես որ հաներ զիս յարգանդէ , յոյս իմ ի տեհանից մօր իմոյ :

Ի քեզ ածեալ ես յարգանդէ , յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ :

Մի՛ ի բացեայ առնիր յինէն , զի նեղութիւնք մերձեալ են , և ոչ ոք է որ օգնէ ինձ :

Շուրջ եղեն զինեւ զուարակք բազումք, և ցուլք գերք պաշարեցին զիս :

Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց, որպէս առիւծ զի մաննչէ և յափշտակէ :

Եմ որպէս զջուր հեղայ, և ցրուեցան ամենայն ոսկերք իմ, և եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի միջ որովայնի իմոյ :

Չորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ, լեզու իմ ի ծնօտս իմ կպեցաւ , և ի հող մահու իջուցին զիս :

Շուրջ եղեն զինեւ շունք բազումք , և ժողովք չարաց պաշարեցին զիս :

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. և նոքա հայեցան և տեսին զիս :

Բաժանեցան զհանդերձս իմ ի միջ իւրեանց , և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին :

Դու Տէր , մի՛ հեռի առնիր զօգնութիւն քո յինէն, և Տէր յօգնել ինձ նայեաց :

Փրկեա ի սրոյ զանձն իմ, և ի ձեռաց շանց զմիամօրութիւն իմ :

Փրկեա զիս ի բերանոյ առիւծու , յեղջերւոյ միեղջերոյ զխոնարհութիւն իմ :

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։

Երկիւղածք Տեառն, օրհնեցէք զՏէր. ամենայն զաւակն յակովբայ փառաւորեսջիք զնա։

Երկիցէ ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայելի, զի ոչ արհամարհեաց և ոչ անարգեաց Տէր զաղօթս աղքատիս, և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն, այլ ի կարդալ իմում առ նա լսաւ ինձ։

Ի քէն է գովութիւն իմ, յեկեղեցիս մեծի օրհնեցից զքեզ։

Զուխտս իմ կատարեցից առաջի ամենայն երկիւղածացդ նորա։

Կերիցեն անանկք և յագեսցին, օրհնեսցեն զՏէր որ խնդրեն զնա։

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից, յիշեսցեն և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի։

Երկիր պագցեն նմա ամենայն առհմք ազանց. զի Տեառն է արքայութիւն, և նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց։

Կերան և երկիր պագին նմա ամենայն պարարտք երկրի, առաջի նորա անկցին ամենեքեան որ իջանեն ի հող։

Անձն իմ նովաւ կեայ, և զաւակ իմ ծառայեսցէ նմա։

Պատմեցից զՏեառնէ ազգի որ գալոցն է, պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծնանելոցն իցէ, զոր արար Տէր։

Ընթերցուած յԱմոսայ մարգարէէ։ Ը. 9։

Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր Տէր, մտցէ արեգակն ի միջօրէի, և խաւարեսցի երկիրն լոյս ի տաէ, և դարձուցից ի սուգ տօնս ձեր, և զամենայն երգս ձեր յողբս, և ածից ի վերայ ամենայն հասակաց քուրձ, և ի վերայ ամենայն գլխոց կնդութիւն. և արարից նմա իբրև սուգ սիրելւոյ, և որոց ընդ նմայն իցեն՝ իբրև օր ցաւոց։ Ահա աւուրք գան, ասէ Տէր Տէր. և առաքիցից սով յերկիր. ոչ սով հացի և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Տեառն։ Եւ խառնեսցին ջուրք ի ծով մինչև ի ծով, և ի հիւսիսոյ մինչև յարևելս. ընթացցին խնդրել զբանն Տեառն, և մի՛ գտցեն։ 12։

Ջօրոսի առաքելոյն ի գործս առաջելոց թղթոյն է ընթերցուածս։ Ա. 18։

Ջի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ

փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ : Չի գրեալ է . կո-
րուսից զիմաստութիւն իմաստնոց , և զխորհուրդս խոր-
հըրդականաց արհամարհեցից : Ո՞ւր իմաստուն , ո՞ւր գր-
պիր , ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ . ո՞չ ապաքէն յիմա-
րեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ :
Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ
իմաստութեամբն զԱստուած , հաճեցաւ Աստուած յիմա-
րութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալ-
սս : Իսկ որովհետև Հրեայք նշան հայցին , և հեթանոսք
իմաստութիւն խնդրեն , մեք քարոզեսցուք զխաչելեալն
Քրիստոս՝ Հրէից գայթագղութիւն և հեթանոսաց յիմա-
րութիւն . բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հեթա-
նոսաց՝ զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ ի-
մաստութիւն . զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան
զմարդիկ , և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ :
Թէպէտ և զձեր իսկ կոչումիդ տեսէք եղ-
բարք , զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ , և ոչ
բազում հզօրք , և ոչ բազում ազնուականք . այլ զյիմարս
աշխարհիս ընտրեաց Աստուած , զի յամօթ արասցէ զի-
մաստունս . և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած ,
զի յամօթ արասցէ զհզօրս . և զանառնմս աշխարհի և
զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն , զի
զչեն իմն խափանեսցէ . որպէս զի մի՛ պարծեսցի ամե-
նայն մարմին առաջի Աստուծոյ : Չի ի նմանէ դուք էք
ի Քրիստոս Յիսուս , որ եղև մեզ իմաստութիւն յԱստու-
ծոյ արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն . զի որ-
պէս և գրեալ է , որ պարծին ի Տէր պարծեսցի : 31 :

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր ապաչեսցուք :
Ք—Հ. Տէր ողորմեա : Երէց՝ Կրկնէ՝ :
Ք—Ր. Եւ ևս խաղաղութեան : Ք—Հ. Օրհնութիւն և փառք :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍ Լ . Ի ԲԱՐ

Կ3 . Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ :
Փխ . Ի քէզ Տէր յուսացայ , մի՛ ամաչեցից : 401 :

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ : ԺԲ . 13 :

Ահաւադիկ ի միտ առեալ մանուկ իմ . վերսացի և բար-
ձրացայ և փառաւորեցայ յոյժ : Չոր օրինակ գործեսցին
բազումք ի վերայ քո , այնպէս անչքեսցի տեսիլ քո ի

մարդկանէ, և փառք քո յորդւոց ի մարդկանէ: Ակնակս զարմացին ազգք բազումք ի վերայ քո, և կարկեացին թագաւորք զբերանս իւրեանց: Զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց ոչ լսել լուեալ՝ ի միտս առցեն: Տէր ո՞ հաւատաց լրոյ մերում, և բազուկ Տեառն ումի յայտնեցաւ: Պատմեցաք առաջի նորա իբրև մանուկ, իբրև զարմաւո ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նորա տեսիլ և ոչ փառք. տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն. այլ տեսիլ նորա անարգ՝ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան: Այր մի ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր՝ անարգեցաւ և ոչ ինչ համարեցաւ: Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի, և մեք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրև յԱստուծոյ: Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ ի նմա, և նորա վիրօքն բժշկեցաք: Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք. այլ ի հանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր. և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր: Իբրև ոչխար ի սպանդ վարեցաւ, և իբրև որոջ առաջի կարչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր: Ի խնամարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, և զազգաւորին նորա ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նորա, յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ: Եւ տայ զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա. և Տէր կամի սրբել զնա ի վիրաց անտի: Եթէ տացի զվասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զսաւակ երկայնակեաց. և կամի Տէր ի ձեռն նորա բառնալ ի ցաւոց անձին նորա, ցուցանել նմա լոյս և առեծուլ խնամատութեամբ, արդարացուցանել զարդարն՝ որ մատուբեն ծառայեաց բազմաց, և զմեղս նոցա նա վերացուցէ: Վասն այնորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեզս բազմաց վերացոյց և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ: ՅԳ. 12:

Պօղոսի առաքելոյն յերրայեցւոց Թղթոյն
է ըմբերցուածս: Բ. 11:

Չի որ սրբէն և որ սրբին, ի միոյէ էին ամենեքեան. վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա, և ասել. պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ. և դարձեալ՝ թէ ես եղէց յուսացեալ ի նա. և դարձեալ՝ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած: Արդ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ միբձաւորութեամբ կցորդ եղև նոցունց. զի մահուն իշխող խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ. և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն: Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակն Աբրահամու բուռն հարկանէ. ասի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յառաւաժակոյս կողմանէ առաի, առ ի քաւելոյ զմեզս ժողովրդեանն: Չի որով ինքն չարչարեցաւ՝ զիւրն առնել, կարօղ է և փորձանաւորացն օգնական լինել: 18:

Եւ ապա սկանին զերծ առցել Տեառն ներսեհի յաղթս զեբեդէի ուրբաթոն ցերեկի աւետարանացն:

ՇԱՐԱԿԱՆ Դ

Նըշդոգող սիրելեաց որ զգեցաներ մեզ լոյս փառաց. արկար ըզքեզ ի պինուարաց քոյոմիթ կաթմիր նախատանաց. մերկեա չինէն ըզքաւթ մերոց ըզտըբտմանգինն արեամբ ներկած. եւ ըզգեցո զաւրանալին ընզգաւմանաճանն իմ զառաջի՞ն: Նըրկնաւոր թագաւորիդ ի ծուներ ինեալ խաղ առնէին. ծածկեալ ըզգլուխըդ կըռափէին և եղեգամբ հարկանէին. եւ զիմ անկեալ միոչ ի զեռնին ի հնազանդել կամաց չարին. մի քաղուցուս խաղալ սովին այլ կանեղնեսցես զիս վերըսաի՞ն: Բա՞ժակ բոլորըդ քո ճաշեմին չես վըճըռոյ զառաւորին. սահաւիկ էառ զհաւատաց զանին վասըն զանից նախատանեցիր. զիս որ յոտից մինչև ցգլուխ ցաւօք նեղիմ անհրնարին. ա-

ողջացո՛ դաշնեա՛լ կըրկին ձրակէս չնորհօք յաւազանի՛ն։ Աը՞րթալիայլ պըճնեա՛լ զարդուն զոր զգե՛ցուցեր Ահարոնին. փո՛խան պըտակ ի փշոց եղին մըչակք ա՛յգւոյն Իսրայելին. ը՛զփո՛ւշ մեղաց հանցե՛ս յինէն զոր յի՛ս ե՛հար իմ թըշնամին. ե՛չ ողջացո՛ զխայթուածծ վիրին զի՛ ապիք մեղացըն չը՛նչնչացի՛ն։

ՋՒՆԷ ՕՐԻ

Ա՛յս ա՛նէտքան ա՛ռաքելոցս դասին է։

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ Իւ. 1։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իրրև այգ եղև, խորհուրդ արարին ամենայն։ 169։

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր ապաչեցուք։

Քա. Տէր ողորմեա։ Երէք՝ կրկնէ։

Քր. Եւ ևս խաղաղութեան։ Քա. Օրհնութիւն և փառք։

ՎԵՑԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍ ԿԸ. Է ՂԻ

ԿՑ. Եաուն ի կերակուր ինձ լեզի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

ՓԽ. Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ։

Եկի ես ի խորս ծովու, և չրջանք ընկղմեցին զիս։

Վաստակեցի ես առ աղաղակել, կերկերեցաւ կոկորդ իմ։

Նուազեցին աչք իմ, առ յուսալ ինձ առ Տէր Աստուած իմ։

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ ոչք ատելին զիս ի տարապարտուց։

Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ ի նանիր. ինչ զոր ոչ յափշտակեալ էր՝ տուժէի նոցա։

Աստուած դու ծանեար զանզգամութիւն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան։

Մի՛ ամաչեցուցեն վասն իմ որ համբերեն քեզ, Տէր Տէր զօրութեանց. մի՛ պատկառեցուցեն վասն իմ ոչք խնդրեն զքեզ, Աստուած Իսրայելի։

Վասն զի համբերի նախատանաց, և ծածկեաց ամօթ երեսս իմ։

Օտար եղէ ես եղբարց իմոց, և հիւր որդւոց մօր իմոյ:

Նախանձ տան քո եկեր զիս, նախատինք նախատողաց քոց անկան ի վերայ իմ:

Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. արարի զհանդերձս իմ քուրձ, և եղէ յառակ նոցա:

Ձինեն խորհէին ոյք նստէին առ դրունս, զիս այսպն առնէին ոյք ըմպէին զինի:

Ես յաղօթս կայի առ քեզ Տէր, ի ժամանակ ընդունելի:

Առատաձ ի բազում ողորմութեան քում լուր ինձ, ի ճշմարտութիւն փրկութեան քո:

Ապրեցո զիս ի կաւոյ՝ զի մի՛ ընկղմեցայց, ապրեցայց ես յատելեաց իմոց և ի խորոց ջուրց բազմաց:

Մի՛ ընկղմեն զիս պատոյք ջուրց, և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ:

Լուր ինձ Տէր, զի քաղցր է ողորմութիւն քո, ըստ բազում գթութեան քո հայեա յիս, և մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ծառայ քումմէ, զի նեղեալ եմ ես. վաղվաղակի լուր ինձ:

Հայեա յանձն իմ և փրկեա զիս, և վասն թշնամեաց իմոց ապրեցո զիս:

Զի դու գիտես զնախատինս իմ, զամօթ իմ և զպատկառանս իմ:

Առաջի քո են ամենայն նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբեր սիրտ իմ և թշուառութեան:

Ակն ունէի՝ թէ ո՛ արտասցի ընդ իս, և ոչ ոք էր. և մխիթարիչ ինձ ոք ոչ գտաւ:

Եւտուն ի կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ:

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն և ի գայթագղութիւն:

Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո:

Արկեա ի վերայ նոցա զբարկութիւն քո, սրտմտութիւն բարկութեան քո հասցէ ի վերայ նոցա:

Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, և ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ:

Չի զոր զան հարեր՝ հալածեցին, և ի վէրս ցաւոց իմոց յաւելին :

Դիր զմեզս ի վերայ մեղաց նոցա, զի մի՛ մոցեն յարդարութիւն քո :

Ջնջեսցեն նոքա ի գպրութենէ քումմէ կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցեն :

Աղքատ և ցաւած եմ ես, փրկութիւն քո Աստուած ընկալցի զիս :

Օրհնեցից զանուն Աստուծոյ խնդ օրհնութեամբ, և բարձր արարից զնա գովութեամբ :

Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զարջ մատաղ, որ բերէ եղջիւրս և կճղակս :

Տեսցեն ազքատք և ուրախ եղիցին. խնդրեցէք զԱստուած և կեցցեն անձինք ձեր :

Չի լուաւ Տէր անառակաց, և զկապեալս իւր ոչ արհամարհեաց :

Օրհնեսցեն զնա երկինք և երկիր, ծով և ամենայն որ գնոսա ի նոսա :

Աստուած փրկէ զՍիան, և շինեսցեն քաղաքք Հրէաստանեաւ. շինեսցեն բնակեսցեն և ժառանգեսցեն ի նմա :

Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ, և որք սիրեն զանուն քո բնակեսցեն ի նմա :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ : ԿԴ . 1 :

Իսկ այս ամ է որ դիմեալ գայ յԵզովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ և բազուն զօրութեամբ : Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան : Վասն էր կարմիր են ձորձք քո, և հանդերձք իւրև հնձանահարի, լիոյ հնձանի կոխելոյ : Հնձան հարի միայն, և ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զնոսա սրտմտութեամբ և ճմլեցի զնոսա բարկութեամբ և ինչուչ յերկիր, և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի. զի հասեալ էր ի վերայ նոցա օր հատուցման, և ամ փրկութեան եկեալ հասեալ : Հայեցայ՝ և ոչ ոք էր որ օգնէր, զննաւ ածի՝ և ոչ ոք էր որ ի թիկունս հասանէր. փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն պղեմ կալաւ. կոխեցի զնոսա բարկութեամբ իմով, և զննի զնոսա սրտմտութեամբ իմով, և ինչուչ զնոսա յերկիր : 6 :

Պօղոսի առաքելոյն յերբայեցւոց թղթոյն
է ըմթերցուածս: Թ. 11:

Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց, մեծաւն և կատարելով և անձեռագործ խորհրդեամբ, այս ինքն է՝ որ ոչ յայսց արարածոց, և ոչ արեամբ նոխազոց և զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ի սրբութիւնան, յաւիտենականս գտեալ փրկութիւն: Զի թէ արիւն ցլուցն և նոխազոց և մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ, որչափ ևս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մեռց ձերոց ի վեհերոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի: Եւ վասն այնորիկ նորոյ ուխտի է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետս առցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւնն յաւիտենից: Զանգի ուր կտակ է, հարկ է զմահ ի մէջ բերել զկտակարարին. զի կտակ՝ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ զիարդ իցէ հաստատուն մինչ կտակարարն կենդանի է. ուստի և ոչ առաջինն առանց արեան նորոգեր: Զանգի իբրև պատուիրան ամենայն պատուիրանաց օրինացն ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն և նոխազացն՝ ջրով և բրդով կարմրով և զոպայիւ, զկտակարանաւքն իսկ և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց, և ասէ. այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած: Եւ զխորանսն և զամենայն կահիս պատուն նոյնպէս սրսկեաց զարիւնն. և ղրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն, և առանց հեղման արեան չլինէր թողութիւն: Ապա հարկ էր օրինաւորացն՝ այնպիսեաւքն սրբել, և բուն իսկ երկինսն՝ առաւել ևս պատարագօք քան զնոսս. զի ոչ ևթէ ի ձեռագործ սրբութիւնան եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն, այլ ի բուն իսկ յերկինս՝ յանդիման լինել երեսաց Աստուծոյ վասն մեր: Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն որ մտանէր ի սրբութիւն սրբութենանցն ամի ամի արեամբ օտարու. ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել իսկզբանէ աշխարհի. բայց արդ ահասոսիկ մի անգամ ի կատարած յաւիտեանց

յանապատութիւն մեզաց իւրով պատարագան յայտնեալ է։ Եւ զոր օրինակ կայ ճնայ մարդկան մի անգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան, նոյնպէս և Քրիստոս մի անգամ մատուցեալ պատարագ առ ի բառնալոյ զմեզս բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեզաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն։ 28։

ՇԱԲԱԿԱՆ Դ

Ե՞տուն ընկե՞լ քեզ ըզկենդանին և ընդքաշեալն ի ծառայինն. արդեօք կամաւ զի քաղցրասցին ճաշակք պըտղոյն դառնագունին, ընդհանուրքին թունաւորին զոր ի մանուն հոգւոյս արկին. հէրքեա ի բաց հանդերձ սովին և քաղցրասցի սէր քո ի մի՞ն։ Առէ՞ղնեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ ի մէջ դրախտին. վասն բարձեր ըզվայր խաչին ի գնդզոթայ հաներ տեղին. զիմ աւձ ի մեղս անկեալ հոգի և ծանրաշղթայն բարձող բեռին. բաշխ ի յուսոյդ ընտ ոչխարին հան ի յերկինս յուխտեալ տեղի՞ն։ Ի՞նչ յուրբաթու ժամ ներթողին բնաւնջեալ Տէր ի խաչին. լուծեր զկապանս նախանատեցն և կնպեցեր ըզթըշնամին. զիս ամբաստ ընդ հովանեաւ կենդանարար քո նըշանին. և ի ծագերն յաբեւելից լուսաւորեա լուսով նորի՞ն։ Ի՞րանեալ աւազանին բացեր ըզդուռն Ադեմ դրախտին. ընտ հաւատոյ ընդառնորին կատարեցեր ըզխընդրելին. տուր և ինձ Տէր ընդ նըմին լսել ընդնոյն պատասխանին. ա՞յսօր ընդ քո ես ինձ յԱդեմ ի հայրենիս քո պառոյի՞ն։

ՋԱՀԻ Օրթի

Արդեօ Աստուածանիս որ բան Մարկոսի։ ԺԶ. 1։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ։ 172։

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք։

Քահ. Տէր ողորմեա։ Երէց՝ Քրիստե։

Ջոյ. եւ ևս խաղաղութեան: Ջահ. Օրհնութիւն և փառք:

ՆՈՅՆԵՄԲԵՐԻ ՍԱՂՄՈՍ Զ: Ի ԸՆԹ-

Կձ. Եղէ ևս որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ:

Փխ. Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկըն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դըժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն ի գուբ:

Եղէ ևս որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռելս ազատ:

Որպէս վիրաւորս, որ ննջեն ի գերեզմանի:

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս ի գրի ներքնումն, ի խաւարի և ի ստուերս մահու:

Ցիս հառաստեցաւ սրտմտութիւն քո, զամենայն ղօսանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նըշաւակ իւրեանց:

Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացաւ յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Միթէ մեռելոց առնիցես սքանչելիս, կամ բժիշկք յարուցանիցե՞ն խոստովան առնիցին առ քեզ:

Միթէ պատմեսցէ՞ ոք երկիւք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Միթէ ճանաչիցե՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն:

Ցնծանք և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Երկեան զինեւ որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։

Ընթերցուած յերեմիայ մարգարէէ։ ԺԱ. 18։

Տէր ծանոյ ինձ և ծանեայց. յայնժամ տեսի զգործս նոցա։ Եւ իբրև զգառն անմեղ վարեալ ի սպանդ, ոչ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ չար և ասեն. եկայք արկցուք փայտ ի հաց նորա, և ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց, և անուն նորա մի՛ եւս յիշեսցի։ Տէր զօրութեանց, որ ընտրես զիրաւունս, և քննես զերիկամունս և զսիրտս, տեսից սո՛ւ ի քէն զվրէժխնդրութիւն սո՛ւ ի նոսա. զի քեզ յայտնեցի զիրաւունս իմ։ Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ արանցն Անաթովթայ որ խնդրեն զանձն քո, և ասեն՝ մի՛ մարգարէասցես վասն մեր, ապա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց։ Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց. ահաւասիկ ես այց արարից ի վերայ նոցա. երիտասարդք նոցա սրով մեռցին, և ուստերք և դստերք նոցա սովով վախճանեսցին։ Եւ մնացորդք ոչ եղիցին նոցա. զի մեծից չարիս ի վերայ բնակչացն Անաթովթայ յամի այցելութեան նոցա։ Արդար ես դու Տէր և մատուցից առաջի քո ատենս. բայց խօսեցայց զիրաւունս. զի՞ է զի հանապարհք անպարչատց յաջողեալ են, և երջանկացան ամենեքեան որ արհամարհեն զարհամարհանս։ Տնկեցեր զնոսա և արմատացան, ծնան որդիս՝ և արարին պտուղ. մերձ ես դու Տէր ի բերանս նոցա, և հեռի յերիկամանց նոցա։ Եւ դու Տէր գիտես զիս, տեսեր զիս՝ և փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժողովեա զնոսա իբրև զոչխար ի սպանդիս, և նուիրեա զնոսա յաւուր սպանման նոցա։ Մինչև յե՞րբ սուգ ունիցի երկիր, և խոտ ամենայն վայրի ցամաքեսցի. ի չարեաց բնակչաց երկրին սպականեցան անասունք և թռչունք. զի ասացին թէ ոչ տեսցէ Աստուած զվախճանս մեր։ Որք քո ընթանան՝ և լքուսցին զքեզ. զիա՞րդ կացուիցիս երիվարօք. իսկ արդ յերկիրդ խաղաղութեան յուսացեալ ես. զի՞ զործես

ցես ի վերանալ Յորդանան գետոյ։ Քանզի և եղբարքն քո և տուն հօր քո, և նոքա դաւեցին քեզ, և նոքին ապա-
ստակեցին զկնի քո, կոչեցան ի վերայ քո. մի՛ հաւա-
տար նոցա ի խօսեցին զքէն չարութիւն։ Ա՛յր դառն
իմ, թողի զժառանգութիւն իմ, եառ զսիրելին անձին
իմոյ ի ձեռս թշնամեաց իւրոց. եղև ժառանգութիւն իմ
ինձ իբրև առիւծ յանապատի. եա ի վերայ իմ զբարբառ
իւր, վասն այնորիկ ատեցի զնա։ ԺԲ. 8։

Պօղոսի առաքելոյն յերբայեցւոց թղթոյն
է ըմբիռցուածս։ ԺԹ. 19։

Ունիմք այսուհետև եղբարք, համարձակութիւն։ 417։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Բաւ՞ըրաւելով զելի Է՛լին հիմունք Է՛րկրի տատանէին.
Է՛ւ վարագոյր հին՝ սրինին վերա՛ւստ ի վայր պատռէին.
սրդ ընդ վիմանցն որ չարժէին չարժեա՝ դանչարժ սիրտս
ի բարին. ընդ պատռել վարագուրին զի՞մ պա՞-
տռեա ըզգի՞ր պարտի՞ն։ Ա՞րե՞զակա՞ն լոյս քո՛զ սր-
կեալ խաւարամեայր միջօրէին. Է՛ւ զերեզմանք՝ բանալին
մարմին՝ սրբոցըն յառնէին. ընդ խաւարել լուսաւո՞-
րացն մարքեա յինէն զգործ խաւարին. ընդ մեռելոցն
որք յառնէին կանգնեա՞ զմեզօք մեռեալ հոգի՞։ Ն՛որ
սիրոյ պատուիրանին գործո՛վ լցցուք եղեր Բանին. ա-
զօթելով առ Հա՛յր յերկի՛նս թողո՛ւլ ըզմեզս որ ի խաչին.
ինձ որ հոգւովս հաւատացեալ երկը՛ըպա՛զեմ քեզ Մխա-
ծին. Թո՛ղ ըզլուծումն հրամանին մի յիշեսցին մեզք
մա՞սի՞ն։ Ա՞յրեսկի՞ն առնդաբամեալք ի յաւանդէին
սա Հայր գհոգի՛դ. որ ի զրժոխս ինքեր ներքին ի բանս
մահու և խաւարին. կամեալ զիշխանսն մահաճին հա-
նե՛ր գհո՛գիսն որ ի բանտի՛ն. Է՛ւ զիա՞ հանցես Տէ՛ր ընդ
նոսին բանտէ՛ մեզաց աղյամբըզի՞ն։

ՁԻՆ ՕՐՔ

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Իբ. 66 :

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ իբրև այգ եղև , ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն և գպիրք , և հանին զնա յատեանն իւրեանց՝ և ասեն . եթէ դու ես Քրիստոսն , ասա մեզ : Ասէ ցնոսա . Թէ ասացից ձեզ , ոչ կայն ոչ հաւատայք . և եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք ինձ պատասխանի կամ արձակիցէք : Բայց յայսմ հետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ : Եւ ասեն ամենեքեան . ուրեմն դու ես Որդին Աստուծոյ : Եւ նա ասէ ցնոսա . դուք ասէք թէ ես եմ : Եւ նոքա ասեն . ընդէ ևս պիտոյ է մեզ վկայութիւն , զի մեզն իսկ լուաք ի բերանոյ դորա : Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա՝ տային զնա առ Պիղատոս : Եւ սկսան չարախօս լինել զնմանէ և ասել . զսա զդա գի թիւրէր զազգս մեր , և արգելույր ի տալոյ հարկս կայսեր , և ասէր զանձնէ՝ թէ Քրիստոս իւր թագաւոր : Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ . դո՞ւ ես թագաւորն հրէից : Նա պատասխանի ետ նմա և ասէ . դու ասացեր : Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդսն . չգտանեմ ինչ մեղս յառնս յայսմիկ : Եւ նոքա պընդէին և ասէին , թէ խռովէ զժողովուրդս , ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլէէ մինչև ցայսր : Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլէէ , եհարց եթէ գալիլեացի իւր այրն է . և իբրև գիտաց թէ յիշխանութենէ Հերովդի է , ետ առնել զնա առ Հերովդէս . քանզի և նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ : Եւ Հերովդէս իբրև եւտես զՅիսուս , ուրախ եղև յոյժ . զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա . քանզի լսէր բազում անգամ զնմանէ , և ակն ունէր նշան ինչ լեալ տեսանել ի նմանէ : Հարցանէր զնա բանիւք բազմօք , և նա ոչ ինչ ետ նմա պատասխանի : Կային քահանայապետքն և գպիրք՝ և պնդապինս չարախօսէին զնմանէ : Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն , և այպն արարեալ՝ արկ զնովսւ հանդերձս սպիտակս , և ետ առնել անդրէն առ Պիղատոս : Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուր յայնմիկ . քանզի յառաջ

թշնամիք էին միմեանց: Կոչեաց Պիղատոս զքահանայապետան և զիշխանս և զժողովուրդն, և ասէ ցնոսա. առնէք մատուցէք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն, և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և ինձ ոչ գտի յառնս յայսմիկ զորոց դուք չարախօսէիք զդմանէ: Այլ և ոչ Հերովդէս, քանզի առաւ տանել զդա առ նա. և արդ ոչ ինչ մահու արժանի է գործեալ դորա. խրատեցից զդա, և արձակեցից: Զի հարկ էր մի մի քան ոճրի արձակել նոցա: Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. բարձ զդա, և արձակեա մեզ զԲարաբբաս, որ էր վասն խռովութեան իրիք եղելոց ի քաղաքին և սպանութեան մտեալ ի բանտ: Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել, քանզի կամէր արձակել զՅիսուս: Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. ի խաչ հան զդա: Եւ նա երիցս ասէ ցնոսա. զի՞նչ չար արար առ. ոչ ինչ մահու մտից գտի ի սմա. խրատեցից զսա և արձակեցից: Եւ նոքա ահիպէին մեծաձայն՝ և խնդրէին զնա ի խաչ հանել. և զօրանային բարբառքն նոցա և քահանայապետին: Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա: Արձակեաց նոցա զԲարաբբան՝ զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր ի բանտ, զոր և խնդրէին իսկ, և զՅիսուս մատնեաց կամացն նոցա: Իբրև առին զնացին զնա, ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յանդէ, եդին ի վերայ նորա զխաչն՝ բերել զկնի Յիսուսի: Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց որ կոծէին և աշխարէին զնա: Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. դուստերք Երուսաղէմի, մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց. զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն, թէ երանի ամլոց և որովայնից՝ որ ոչ ծնան, և առեանց՝ որ ոչ դիեցուցին: Յայնժամ սկսանիցին ասել լերանց՝ թէ անկարուք ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ: Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի: Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա: Իբրև չոքան ի տեղին կոչեցեալ գագաթն, անդ հանին զնա ի խաչ. և զչարագործսն՝ զմին ընդ ամէն և զմին ընդ ձախմէ խաչեցին: Եւ Յիսուս ասէ. Հայր, թող զոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն: Եւ ի բաժանել զհանդերձս նորա,

արկին վիճակս. և կայր ժողովուրդն հայեցեալ: Անդրա-
նէին գնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. զայս
ապրեցոյց, ապրեցուսէ և զանձն՝ եթէ զա է Քրիստոս
Որդի Աստուծոյ ընտրեալն: Այլն առնէին գնա և դի-
նուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ և
ասէին. եթէ դու ես Թագաւորն հրէից՝ փրկեա զանձն
քո: Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա, յունարէն և
դաղմատերէն և երբայեցերէն գրով, թէ սա է արքայն
հրէից: Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր
գնա՝ և ասէր. ա՛յ դու ես Քրիստոս, փրկեա զանձն քո
և մեզ: Պատասխանեի ես ընկերն սատակով նմա՝ և ա-
սէ. չերկնչիս դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի կաս. և
մեք յիրաւի, զի արժանի օրոց գործեցաքն՝ առնումք ըզ-
հատուցումն, և սա ապիրատ ինչ ոչ գործեաց: Եւ ա-
սէ ցՅիսուս. յիշեա զիս Տէր, յորժամ գայցես արքայու-
թեամբ քով: Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ,
այսօր ընդ իս իցես ի դրախտին: Եւ էր իբրև վեցերորդ
ժամ. և խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև
ցիննեներորդ ժամն. խաւարեցաւ արեգակն: Եւ հերձաւ
վարագոյր տաճարին ընդ մէջ: Եւ կարգաց Յիսուս ի
ձայն մեծ՝ և ասէ. Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ:
Զայս իբրև ասաց՝ եհան զոգի: Եւ տեսեալ հարիւրապե-
տին զոր ինչ եղեն, փառաւոր արար զԱստուած և ասէ.
արդարև այրս այս արդար էր: Եւ ամենայն ժողովուրդ-
քըն որ եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն և ըզ-
զօրծ, բախէին զկուրծս՝ և դառնային: Կային և ամե-
նայն ծանօթքն նորա ի հեռուստանէ, և կանայք որք ե-
կեալ էին զհետ նորա ի Գալիլէէ՝ տեսանէին զայն: 49:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր ապաչեցուք:
Բ-ՀՏ. Տէր ողորմեա: Երէց- Կրկնէ:

Բ-Ը. Եւ ևս խաղաղութեան: Բ-Հ. Օրհնութիւն և փառք՝

Ո-ԸԵՐԸՐԸ ՍԱՂՄՈՍ ՃԱ. Ի ԸՆ-

Կ3. Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես
հաւատան յանապատի:

Փխ. Տէր լուր աղօթից իմոց, ապագակ իմ առ քեզ
եկեսցէ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ ես զունկն

քո , յորում աւուր կարգամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ :

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոխ չորացան :

Հարաւ որպէս խոտ և ցամաքեաց սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ :

Կցեցաւ ոսկր իմ ի մսեղին իմ, նմանեցայ ես հաւասլասան յանապատի :

Եղէ ես որպէս բու յաւերակի , ոչնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս :

Նախատեցին զիս թշնամիք զօրհանապազ, և զովիչք իմ ինև երդնուին :

Զմոխիր որպէս հաց կերայ , և զըմպելի իմ արտասուօք խառնեցի :

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո , զի զս բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս :

Աւուրք իմ որպէս հովանի անցին , և ես որպէս խոտ ցամաքեցայ :

Դու Տէր յաւիտեան կաս , և յիշատակ քո ազգէ մինչև յազգ :

Դու յարուցեալ զիատսիս ի վերայ Սիոնի , ժամանակ գիտելոյ նորա հասեալ է ժամ :

Հաճեցան ծառայք քո լինդ քարինս նորա , և ի հողս նորա գիտացին :

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումէ , և ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց :

Շինէ Տէր զՍիոն, և երևեսցի փառօք իւրովք ի նմա :

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զինդրուածս նոցա :

Գրեսցի այս յազգ յայլ , ժողովուրդ զոր ստացեալ է՝ օրհնեսցէ զՏէր :

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբութենէ իւրմէ , Տէր յերկինից յերկիր հայեցաւ :

Լսել զհեծութիւն կապելոց , և արձակել զորդիս մահապարտաց :

Պատմել ի Սիոն զանուն Տեառն, և զօրհնութիւնս նորա՝ յերուսաղէմ :

Ժողովել ժողովրդոց ի միասին , և թագաւորաց ծառայել Տեառն :

Պատասխանի եւ նմա ի հանապարհի զօրութեան իւրոյ, զնուագութիւն աւուրց իմոց առաջի ինձ, և մի հաշներ զիս ի կէս աւուրց իմոց. զի ազգէ յազգ են ամք քո:

Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են:

Նոքա անցանեն, և դու կաս և ամենա յաւիտեան:

Ամենեքեան որպէս ձորձս մաշեսցին, որպէս վերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին:

Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան ազդեսցի:

ԸՍՔերցուած ի Զաքարիայ մարգարէէ: ԺԴ. 5:

Եւ եկեսցէ Տէր Աստուած իմ և ամենայն սուրբք ընդ նմա. և եղիցի յաւուր յայնմիկ՝ ոչ եղիցի լոյս. և ցուրտ և պարզ: Եղիցի օր մի. և օրն այն յայտնի Տեառն, ոչ տիւ իցէ և ոչ գիշեր, և ընդ երեկս եղիցի լոյս: Յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ, կէս նորա ի ծովն առաջին, և կէս նորա ի ծովն որ յետոյ. զամառն և զգարուն նոյնպէս եղիցի. և եղիցի Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի: Յաւուր յայնմիկ եղիցի Տէր մի՝ և անուն նորա մի, պատել զամենայն երկիր, զանապատն՝ ի Գաբայ մինչև ցՌեմմոն ընդ կողմն հարաւոյ Երուսաղէմի: Եւ Հռամ ի անդրոյ խրամ կացցէ. ի դրանէն Բենիամինի մինչև ի անդի դրանն առաջնոյ. մինչև ի դուռն անկեանցն, և մինչև ցաշտարակն Անամայելի, մինչև ի հնձանս թագաւորին. և բնակեսցեն ի նմա, և նզովք ոչ ևս լիցին. և բնակեսցէ Երուսաղէմ յաւուրս: 11:

Գողոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ԸՍՔերցուածս: Գ. 13:

Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն, պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ, մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին, և միայն հզօր, թագաւոր թագաւորաց, և Տէր տերանց. որ միայն ունի զանմա-

հուԹիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք եահս ի մարդկանէ, և ոչ տեսանել կարօղ է. որում պատիւ և զօրուԹիւն յաւիտեանս. ամէն։ 16։

ՇԱԲԱԿԱՆ Դ

Ա՞ղբերըն անձպարկան որ յետ մահուան անմահացեալ. բղխեալ ի քէն վըտակ կըրկին ի ննջեցեալսըն կազանդին. բաց ըղբերա՞ն իմ յաւրըհնեալսըն զո տրեան կենարարին. լըւաց զարԹեալ յանաղանին ԹէՀ ոչ չնորհաք այլ սրտաստուաք։ Ցա՞ նմահի՞ զ մեռանելոյ զմեռանալ հո՞գիս կենդանացն. Թաղմամբ ի նոր գերեզմանի զԹաղեալս ի մեղաց վերացեալ. ի գիր ներքնաձին լինելովն ի գրոյն մեղաց վերաբերեալ. Ի առուեր մահու քո բնակելով լուսաւորեա և զիս հոգւով։ Ա՞ըս իմ առ քե՞զ աղաղակ Բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ. ո՛ր կամաւոր վանըն մարդկան կրեցեր մարմնով զայս ամենայն. ի՞նձ լըսելի՞ արա ըզձայն յաղթայԹութեանըդ զո կոչման. ը՞նդ ժողովոցն անդ ա՞նդրանկաց ծրհնել ըզքեզ միշտ յաւիտեան։

ՋՒԴ Օրթի

Սրբոյ Աեստաբանիս որ ըստ Յովհաննու։ ԺԹ. 17։
Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտան, և ելանէր ի տեղին՝ որ անուանէր գագաԹան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթա. ուր և ի խաչն իսկ հանին զնա, և ընդ նմա երկուս ևս այլս առ ի և անտի, և ի մէջ զՅիսուս։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից։ Զայն տախտակ ընԹերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ եբրայեցերէն, գաղմատերէն և յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի գրեր Թագաւոր Հրէից. այլ ԹէՀ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից։ Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցին՝ գրեցի։ Իսկ զինուորքն երբև

հանին ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա և արա-
բին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ
պատմուճանն քանզի էր առանց կարանի ի վերուստ փոր-
անկեալ ամենևին, ասեն ցմիմեանս. մի պատառեսցուք
զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ դորա ումմ և ելցէ:
Զի լցցի գիրն որ ասէ. բաժանեցան զհանդերձս իմ յիս-
րեանս, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին:
Զինուորքն զայս ինչ գործեցին: Եւ կային առ խաչին
Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէով-
պա, և Մարիամ Մագդաղենացի: Յիսուս իբրև տեսա
զմայրն և զաշակերտն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ
ցմայրն. կին դո՛ւ, ահա որդի քո: Ապա ասէ ցաշակեր-
տըն. ահա մայր քո: Եւ յայնմ ժամուընակէ առ աշակեր-
տըն զնա առ իւր: Ետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս,
եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի
գիրն՝ ասէ. ծարաւի եմ: Եւ անդ կայր աման ինչ լի
քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեզ-
ուայ՝ չուքչ եդեալ զչոփաւ զոպայի, մատուցին ի բերան
նորա: Իբրև առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուաւն՝
ասէ. ամենայն ինչ կատարեալ է: Եւ խոնարհեցուցեալ
զգլուխն՝ աւանդեաց զոգին: Իսկ Հրեայքն՝ քանզի ուր-
բաթ էր, զի մի անդէն ի խաչին սպանեցին մարմինքն
մինչև ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ,
աղաչեցին զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձս նոցա,
և բարձցին: Եկին զինուորքն, և զառաջինն խորտակե-
ցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա ի խաչն
ելեալ էր: Բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի
այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա.
այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկող նորա,
և վազվազակի եկ արիւն և ջուր: Եւ որ տեսանն՝ վկայեաց,
և ճշմարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ՝ թէ ճըշ-
մարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք: Այս եղև, զի
լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի փշրեսցի: Եւ դար-
ձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին ի նա՝ յոր խոցե-
ցինն: 37:

Ե՝ ապա երկին Յովսէփ Առիմաթեացի, աւուրս և հղօր . . . :

Ե՝ գնաց զօրքն խաչն և ջախջախեցան ի վերայ ձբռելոյն, և
խառն ածին: Ե՝ երկիր պտղանն սկնկելաւ, և համբուրքն
պնդան և ջախջախեան, և ասին:

ՇԱՐԱԿԱՆ ԲԿ

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք. եւ ըզթաղմունքն քո մեծացուցանեմք. եւ սուրբ զյարութիւնդ քո փառաւորեմք. եկայք հաւատացեալք. երկրպագանցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասնզի եկն ի ձեռնըն խաչին իւրով չնորհեաց պարգեւս աշխարհի:

Ան. Փառք սուրբ խաչին անկիւնաւթեան. սուրբ Սիոն անկիւնաւթեան. սուրբ յարութեանըն անկասկածելի փառաւորութեան: Նըշանեցար ես սո մեզ լոյս ի բնութեան քոյ և էստուր ուրախութիւն սրտիցդ մերոց: Ի պըտղոյ ցօրենոյ գինւոյ և ձիթոյ խրեանց լըցուցեր ըզնոսա: Փառք սուրբ: Փառք եւ երկրպագութիւն չօր եւ Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն: Փառք սուրբ խաչին անկիւնաւթեան. սուրբ Սիոն:

Բկ. Խաչըն կենարար. որ եղեւ ըմեզ փըրկութիւն. ‖ սովաւ ամէնեցիս ընդքոյդ բարերարեմք: Որ ի չօրիւ լռեալոյ լոյս ճառագայթեաս ի յերկիրի եւ զատապան զօրութեան հաւատացեալոց. սովաւ: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըմեզ ցուցաւ ի յօդնութիւն ընդդէմ թըշնամւոյն. սովաւ:

Ես ասեն տէր ողթոնոս. ցարաւեցար ձէրն կամ ոչ տէր խաչելոնեան կամ ի շարժառոց խաչ:

ՁԱՅՆ ՔՈՒ. Սուրբ խաչիս: Աղ. Պահպանեա: Հայր:

ՑԵՐԵԿՈՑԻՆ

Ի գառն հաճի հաղորդին յերկնեցին և ախոնին. Ես առ Աստուած: Խոնարհեցո: Ապրեցո: Լոյս գաւառի:

ՄՆՍՆԴԻ

Եւսան ի կերպակուր ինձ լեզի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ:

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն, և ի գայթագղութիւն։

ընթերցուած յերեմիայ մարգարէէ։ ԺԱ. 18։

Տէր ծանոյ ինձ և ծանեայց. յայնժամ տեսից։ 488։

ընթերցուած յեսայիայ մարգարէէ։ ԾԲ. 13։

Ակատադիկ ի միտ առցէ մանուկ իմ զօրացն։ 479։

ՍԱՂՄՈՍ ԻԱ. Ի ԿԻ–

կց. Բառնանեցան զհանդերձս իմ ի մէջ։ 476։

Ուղիղ եղիցին ապաչանք իմ. Որպէս խունկ առաջի քո Տէր։

Տարածումն ձեռաց իմոց. Պատարագ երեկոյի։

ՓՈՐՂ ԱԶԱՀԵՑՈՒՔ։

ԶՍուրբ Առաւուածն ասէն ի ձեռնէս անկեալ տեսանոյտ և ժողովրդոյտ։ Իսկ Փառաւորեալ ոչ ասէ։

ՀԱՄԲԱՐՁԻ ԴՉ. ՍՏ.

Եկայք՝ երթիւք հաշտեացուցանելք երկընպատկեցուք սուրբ երրորդութեանն. քանզի յայն որ ընդ Հօր էք յիշեալ թեան. ի քահանայիցդ գտանիցեալ եկեսցէ ի խաչ ելանել. ‖ անընդմիջաբար թաղաւորն։ Զոր երկինք անչ բանէին առնել. զիա՞ յա պատուհասիս ձեռով բարձանել. եւ եկեալ ի անդր կառավարմանն. ի խաչ ելանել. անդր։ Հիացեալ պետութեա՞ն երկնից. ընդ թագաւորն Տեառն իւր զերիզմանն. քանզիզիմ՞ որ անդամ՞ն էր յիշեալ թեանն. վասն այսպատճառի ընդմի՞ն համչակեաց. անդր։

ՁՆԻ ՓՈՐ. Վասն խաղաղութեան։ Աղ. Հայր գթած։

ՁՆԻ ՀԱՄԱՐՈՒՑՆ ասէն ՍԱՂՄՈՍ ԺԸ. Ի ԿԻ–

կց. Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։

ՓԽ. Պահեա զիա Աստուած, զի ես ի քեզ յուսացայ. ասացի Տեառն, Տէր իմ ես դու, և բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ։

Սրբոց քոց որ են յերկրի քում, սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա։

Յառաքեցին հիւանդութիւնք նոցա . յետ այսորիկ ա-պա վաղվաղեացին :

Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա յարեանց, և ոչ յիշեցից զանուանս նոցա ի շրթունս իմ :

Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ , դու ես որ այսբէն զարձուցանես զժառանգութիւն իմ յիս :

Վիճակք եղին ինձ ընդ ընտիրս , և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ :

Օրհնեցից զՏէր որ խնամառուն արար զիս . մինչ ի գիշերի ես խրատեցին զիս երիկամունք իմ :

Յառաջագոյն առաքէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ , զի ի ընդ աջմէ իմում զի մի սասանեցայց :

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ , ես և մարմին իմ բնակեսցէ յուսով :

Զի ոչ թողցես զանձն իմ ի գժոխս , և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն :

Ծուցեր ինձ զճանապարհս քո կենաց , լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ վայելչութիւնն աջոյ քո մինչև յաւար :

Ընթերցուած յԱռաւօտս : Իմաստ . բ . 1 :

Խորհեցան յանձինս իւրեանց զանուղղայս և ասեն . սակաւ և ցաւագին են կեանք մեր, և ոչ գոյ բժշկութիւն ի վախճանի մարդոյ , և չիբևեցաւ որ դարձաւ ի գժոխոց : Զի յանկարծակի ինն եղաք , և յետ այսորիկ լինիցիմք իբրև զչեղեալք : Զի իբրև ծուխ է շունչ յբանդունս մեր, և իբրև կայծակն բանն ի շարժմանն սրտի մերում . յորոյ շիջանելն մոխիր լինի մարմինն , և ոգին սփռի իբրև զօդ թոյլ : Եւ անուանս մեր մոռացի ժամանակաւ , և ոչ ոք յիշատակեսցէ զգործս մեր : Անցեալն կեանք մեր իբրև զհետս ամպոյ , և իբրև զչամանդաղ ցրուեցին հալածեալ ի ճառագայթից արեգական և ի տապոյ նորա ծանրացեալ : Զի անցք սաւառնի են կեանք մեր, և չիք խոսիան վախճանի մարդկան , զի կնքեցաւ և ոչ ոք դարձուցանէ : Եւ արդ եկայք և վայելեսցուք ի բարութիւնս որ կան , և վարեսցուք արագաժողով զրաղեալք իբրև ի մանկութեան : Գինոյ պինեօք և անոյշ իւղով լցցուք , մի անցցէ առ մեօք ծաղիկ գարնանոյ : Բոլո-

բիւք վարդից պսակեացուք՝ մինչչև թառամեալ իցեն : Մի ոք ամենեքին լիցի անմասն ի մեծամեծար ուրախութենէս մերմէ . յամենայն տեղիս թողցուք զնշանակ ուրախութեան . զի այն է բաժին մեր , և սոյն վիճակ : Բռնադատեացուք զանառնին անիրաւութեամբ , մի խնայեսցուք յայրին , մի խորշեսցուք ի բազմաժամանակեայ ալեաց ծերոյն : Եւ օրէնս արդարութեան՝ բանս իւրեն մեր եղիցի . զի ակարութիւն անպիտան յանդիմանի : Դարանակալ լիցուք արդարոյն՝ զի զժպհի եղև մեզ , և հակառակ կայ գործոց մերոց , և նախատինս դնէ մեզ զյանցանս օրինացն , և բամբասէ զմեզ մեղօք մանկութեան մերոց : Խոստանայ ունել զդիտութիւն Աստուծոյ , և Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ . և եղև ի յանդիմանութիւն մտաց մերոց : Ծանր է մեզ և անտանելի զնա , զի անմման են այլոց կեանք նորա և այլազգի շաւիղք նորա : Ի գարշութիւն համարեցաք նմա , և խորշի ի ճանապարհաց մերոց՝ իբրև ի պղծութեանց . երանէ զվախճան արդարոց , և հպարտացեալ՝ կոչէ հայր զԱստուած : Տեսցուք թէ ճշմարիտ իցեն բանք նորա , և փորձեսցուք զվախճան նորա : Եթէ իցէ արդարև Որդի Աստուծոյ , պաշտպանեսցէ նմա , և փրկեսցէ զնա Աստուած ի ձեռաց հակառակորդաց : Քննամանօք և զանութիւք խոշտանգեսցուք զնա , զի գիտասցուք զհեզութեան նորա , և խեղճուսուր լիցուք անհնակալութեան նորա : Մահու խայտառակութեան դատեսցուք զնա . եթէ լինիցի այցելութիւն նմա ի բանից իւրոց : Զայս խորհեցան և խաբեցան . զի կուրացոյց զնոսա չարութիւնն իւրեանց , և ոչ ծանեան զխորհուրդս Աստուծոյ , և ոչ վարձուց սուրբ կալան արդարութեան , և ոչ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից : 22 :

Ընթերցուած ի Ջաթարիայ մարգարէէ : ԺԲ . 8 :

Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր զամենայն բնակիչս Երուսաղեմի . և եղիցի որ ակարն իցէ ի նոսա յաւուր յայնմիկ՝ իբրև զԴաւիթ , և տունն Դաւթի՝ իբրև զտունն Աստուծոյ , իբրև զհրեշտակ Տեառն առաջի նոցա : Եւ եղիցի յաւուր յայնմիկ խնդրեցից բառնալ զամենայն ազգս եկեալս ի վերայ Երուսաղեմի . և հեղից ի վերայ տանն Դաւթի և ի վերայ բնակչաց Երուսաղեմի

հոգի չնարհաց և գիտութեան: Եւ հայեցին առ իս փա-
խանակ կաքաւելոյն, և կոծեցին ի վերայ նորա կոծ
իրրև ի վերայ սիրելւոյ, և աշխարհացին աշխար իրրև
ի վերայ անդրանկան: Զաւուր յայնմիկ առաւակացի կոծ
յերուսաղէմ իրրև զկոծ նաննենաց կոտորելոց ի դաշտի,
և կոծեցի երկիր ըստ ազգս ազգաց առանձինն: Ազգ
տանն Դաւթի առանձինն, և կանայք նոցա առանձինն.
ազգ տանն Նաթանայ առանձինն, և կանայք նոցա ա-
ռանձինն. ազգ տանն Ղևեայ առանձինն, և կանայք նոցա
առանձինն. ազգ տանն Շմաւոնի առանձինն, և կանայք
նոցա առանձինն: Ամենայն ազգք մնացեալք առանձինն,
և կանայք նոցա առանձինն: 14.

Պետրոսի առաքելոյն ի կաթողիկեայց առաջին թղթոյն է
ընթերցուածս: Գ. 17:

Չի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստու-
ծոյ կամացն չարչարել՝ քան չարագործաց. զի և Քրիս-
տոս միանգամ վասն մեղաց ի վերայ մեր մեռաւ, ար-
դարն ի վերայ անարդարոց. զի զմեզ մերձեցուսցէ առ
Աստուած. զի թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կեն-
դանի է հոգւով: Որով և ոգւոյն որ էին ի բանտին,
երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբելոցն, յորժամ
ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի
յորս տապանն կազմէր. յորս նուագուընք, այս ինքն՝ ո-
գիք երկու ապրեցան ի ջրոյն: 20.

Հ֊ն֊ Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ընդ երկոցա հանդիպեցեն յալիք, առաւօտուց եղիցի
ուրախութիւն:

Ջ֊ն֊ Ալէլուիա Օրթի

Արդոյ Աճառաբանիս որ ըստ Մատթէոսի: Իէ. 57:
Վասն Թադման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իրրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յԱրի-
մաթիայ, որում անուն էր Յովսէփ, որ աշակերտեցաւ
իսկ Յիսուսի. սա մատուցեալ առ Պիղատոս խնդրեաց
զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ
զմարմինն: Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց
սուրբ կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց
ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմա-

նին վէմ մի մեծ՝ գնաց: Անդ էր Մարիամ Մագդա-
ղենացի, և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզ-
մանին: 61:

ե՝ ապա երթին Սուրբ Աստուած, սուրբ և հզօր...:

ե՝ ապա նախատօնակ ուրբ, զի ընդառաջ տեառն է, ասելով

ՇԱԲԱԿԱՆ ԲԶ

Պարզևատուն ամենեցուն: Ի՝ր սրբոյն: 503:

ե՝ Սրբերոյն էրուղէ խնդրեցուք: կեցո. ի ընդ՝:

Աղ. Քեզ ամենազօր և հրաշալի թագաւոր:

ե՝ գնին գերեզմանն և գտանեն ի վերոյ գլորեալ և ասեն
ցայլ քո Քրիստոս: 497: ե՝ հարցուցին զիրեարս: Ապա-
ստ գոչ ուրեքն:

Աստուածածնէ՛ն կոյսըն Մարիամ
Կայր առ խաչի՛ն Լուսոյ Միածնի՛ն.
Հեղոյր արտօղօսր կըսկըծամբ սըրտին.
Եւ զայս ասէր ձայնս ողբալովին.
Ա՛յ ո՛հ այ ո՛հ. զքե՛զ ի խաչ տեսողիս
Հանգոյս ցաւոց մօտըրդ այրած սըրտի՛ն:
Ո՛րդեակ սրդեա՛կ ցիտուս իմ սրդեակ.
Ա՛չացըս լոյս մօրըս քո կեսրո՛ն.
Իմ Միածիւնն զառն ամենապրսակեան.
Ընդ որ մեզաց կանս այժմ ի խաչին: Ա՛յ ո՛հ:
Ե՛կ ցոլհաննե՛ս եկ սրդեակ ևս գոն.
Իմ Միածնի՛ն սիրուն ա՛չակե՛րտ.
Առցուք զմայրիմօղնն ողջագուրկնցուք
Եւ արտասուօք ըզնա թաղեսցուք: Ա՛յ ո՛հ:

Բառք. Սուրբ խաչիս: Աղ. Պահպանեա: Հայր մեր:
Ե՝ և յարուցեալ զառաջին ներսաստիճանեալն սրբ ի-
չոհ՝բոյր: 497:

Ա Ի Ա Գ

Շ Ա Բ Ա Թ · Դ Կ

Ի ԳԻՇԵՐԻ

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ Ա.Զ. ՂՀՌՈ ԴԱՌԱՅՆ ԱՍԱ ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Բ.Զ

ՊԱՐԳԵՒԱՏՈՒՆ ամենեցունց այսօր. խընդրի պարզեւս ի պիղատոսէ. եւ արկղն լցեալ սրպէս զօթից հանանի պատիլ ի Յովսեփայ։ Կենդանատուն ամենեցունց այսօր. զընի ի նոր գերեզմանի. եւ գանձն անմահութեան կընքի մատանեամբ քահանայիցն։ Ամբարձոյ փըրկութիւն Քրիստոս այսօր. ելաւ ի նորատապ վիմէ. զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի պիղատոսէ։

† Կենդանին յաւիտենից Քրիստոս այսօր. խընդրի սրպէս մեռեալ ի պիղատոսէ. եւ մերկութեան ծածկոյթն Ադամայ. յանձն առնու պատիլ ի Յովսեփայ։ Անեղութեանց սրբոյ Քրիստոս այսօր. ի հող մտանու խոնարհեցաւ. եւ բնակեալն ի լոյս յանեղութեան թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի։ Արարչին սրպատութեան Քրիստոս այսօր. ելաւ ի պիղատոսէ. եւ փանաղն չէր ճանաչեալ ծածկեցաւ վիմով ի միջ երկրի։

† Կանանցին մարմնով Քրիստոս այսօր. զընի ի կոյս գերեզմանի. եւ լուծիչն երկանց զըմոխոց մնատանեաւ կընքի քահանայիցն։ Արքային բնութեամբ սրպարիչն ամենեցունց այսօր. ընկղէ ի միջ մահացելոց. որ պահէին պինարայել անբիծն պահպանի ի գիշերայնի։

Որ թագաւորք եւ թագաւորունք Քրիստոս ի ծառայէ գառապարտանալ. համբերելով վասն մեր. երկայնամիտ ես ի՞մ քեզ վասն։ Որ պատուականն խաչիւղ

քո Քրիստոս և սուրբ արեանդ քո հեղմանէ. կենցաղա-
նել զմեզ կամեցար. ‖ Երկայնամիտ ես. ո՞վ քեզ
փառաք: Որ մարդասիրապէս վասն ամենեցուն ամե-
նայնի համբերեցեր. և ի մահու զմեզ կոխեցեր. եր-
կայնամիտ:

Աղթամթերութեամբըն մելիա՞ց զուգա. զի՞ր ընդմեզ
զվարդանական ընդ երեսեն արծաթոյ հըրեշտըն մատա-
նէր: Ընդ որում ես համբուրեցից ասէ ընդառ կալարուք-
ով համբոյր նենգութեան նըչան և ահիթ մահու:
Մերկացաւ յինքենէ զառաուածայինն սուրբ Հոգին.
և ըզգեցաւ ըզսատանայ ոպիէս հանդերձ արկան զիս-
բեաւ:

Որ նըմատիս ի քրովբէս Աստուածդ Բանդ. այսօր
վասըն մեր խոնարհութեանդ նըմատար ի լերինըն ձի-
թենեաց. ‖ օրհնեմք զքեզ անեղադար երգով: Որ
համամզոյդ ես խորհըրդոցըդ հայրենի. աշակերտաց
քոց ծանուցեր զխորհուրդ քո գալըստեանն. օրհնեմք:
Որ ամենայնով ես արարիչ և բառնդձիչ կենդանու-
թեան. այսօր ըզծածկեալ խորհուրդ երրորդութեանդ
յայտնեցեր եկեղեցւոյ սըրբոյ քո. օրհնեմք:

ՀԳ. Եկայն և նըմանն չօր և Որդւոյ Հոգիդ անեղ
և համագոյ. բըզխաւսիցն չօր անբընաբար աւուդ յՈր-
դւոյն ահեռաստեաց. ի վերնատունն այսօր էջեր զՀոգիդ
չնորհաց քոց սրբուցեր. ‖ ա՛րբո և մեզ ողորմութեամբ
ի բաժակէդ իմաստութեանն: Էջից առիղծոյ արանձոյ
որ չըրջէիր ի վերայ ջրոց. նոյն և ի չնորհն աւազանին
ի չնորհել մեզ քոմ էակցին. զըգուռս սրբով ազանա-
կերպ զմարդիկ ծնանիս աստուածակերպ. ա՛րբո: Բա-
րձրն վերնոցն խնամոյիւտ և քաւարին այսըր զգա-
լանց. որ մարգարէս ասաս ի հովուաց և առաքեալս ի

ձկնորսաց. աւետաւոր լսմնաքոմնաբս քարոզ բանի քում գհալածնդս. ա՛ր բրս :

Հն. Ի՛ ձայն վազոյ գալըստեան քո՛ տէ՛ր ամենայն հո՛գիք զարթիցեն. կալ ի դատաստանի քում փրիստոս Աստուած մե՛ր : Յո՛րժամ հընչէ բարբառն ահագին և հարկանի փող յարքեհան մերոյ. եւ մե՛ք գնչելով աւետիքք փառաք գալըստեան քո՛ տէ՛ր : Յո՛րժամ առնես հանուցնումբն տէր և սուրբք քո՛ պարծեսցին ի քե՛զ. եւ մե՛զ չնորհե՛սցես փրկիչ կալ ի յաջմէ քումմէ՛ :

Մ՚Ծ. Զքե՛զ Հայր յաւահչ քան գյանբիտեանս բարեբանե՛ն զասք անմահրինաց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն և աղաղակե՛ն. ‖ Աստուած անսահմանոց և տէ՛ր աւերանց փրկիչ գնա՛ մ : Ա՛ամբե՛ցեր գքո՛ Միածինդ մահրինաեան ի սուրբ կուսէն. եւ անսպա՛ռ ծընանե՛լ յերեսաց ահեռապատն. բանանալով բերանբ նեղութիւնս. Ա՛ստ : Շնո՛րհք բարի յերեսաղէմ երեւեցան հեթանոսաց. զի սրանքիչն յաւետեանից ազգայ ևղեալ յերկնգրութիւն կե՛նաց կոչէ. Աստուած :

Խշ. Գալո՛ւստ սուրբ հաւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր սեսեալ այսոյն պըղծոյ կործանեցաւ սո՛ղկանգնելի. ‖ ազաչե՛մբ սուտ փրկիչ պահպանեա՛լ զանձինս մեր : Դո՛զացաւ Թըշնամին ընդ յայտնե՛լ սրբոյ խաչին. եւ ի յանէ՛ փառաց նորա կոր ծանեցան յանգունգս երկրի. ազաչե՛մբ : — Փառք Հօր : Երկինքբ ցընծայի՛ն և երկի՛ր ուրախանայր. քանզի փրկիչ ցուցաւ սուրբ խաչն և բնաւառաւ սերնդեանց. ազաչե՛մբ :

— Այ՛ժմ և միշտ : Ցընծութիւնն արմատոց փրկառուս այսօր. արտասուի որպէս մե՛ռանիլ ի սրբամարգեցից. եւ բնութիւն անմահութեան խընկի՛ր գգաստիցն բուսաբերից :

Մոլեռան. փառք հրաշափառ թագաւոր քո Տէր:
Ալէլուիա. Ա---ւ շ-ք-ռ---ն. Եղիր զիս ի զբի:

Յ Ա Ռ Ա Խ Օ Տ Ո Ւ

ՀԱՐՑ ԳՉ ՝-ն ---:

Զքե՞զ օրհնեմքը թագաւոր յաւիտենից անմահ. Աւ-
տրւա՞ծ համրըշն մերոց: Զոր ոչ բնաւթիւնք աթարա-
ծոց զԱստըւած տանիւր. մեհաւա՞ր սահմանեալ դը-
նի ի նոր վերկզմանի. նա՞ր զիս ընդունելով մա ծրզ.
‖ գովիմք ըզքե՞զ Տէր համրըշն մերոց: Ո՞ր անսիակ դրով
հանատանեալ քարեէս. կը՞նքի՞ մատանեամբ անկօրուա
պահելով ըզմի՞զ հաւատով երրմրդութեամ ծնդ. գովիմք:
Գ. Ը՞զՏէր օրհնե՞ն ամա՞ցեք և ‖ բարձր ա՞րարչ՞ը
զնա յաւիտեան: Օ՞րհնե՞ն ամա՞ցեք ԶԳրի սոսո թագա-
ւորն յիմանալի զօրացն անհիւ պատուեալ և՞ւ բարձր:
Օ՞րհնե՞ն ամա՞ցէ՞ Զաղեցեալ զԹագաւորն ր պանի
ի զիեաւորաց գաղձն անմահութեան և՞ւ բարձր:

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ ԳՉ

Աստուածածին երկնային զուռն աստուածային: 379:

ՈՂՈՐՄԵՆԱ ԳՉ

Ո՞ր բաչխողզ ես բարութեամ՝ եւ պարգեւատու ա-
րարածոց քոց. այսօր հաճեցար խընդրել ի պարգեւէ
մասէն ի Պիղատոսէ. զի և մեզ չնորհեսցես պարգեւս
ողորմութեան քո: Ո՞ր զանձամբ ըզմեզ փոխաց ի բրէ
զօթոց ըզքէ արիւր. այսօր անձամբ խոնարհութեամբ
պատեցար ի ցնվելիսն ի գերեզմանէ տըքենալ. զի ըզ-
հընութիւն մեզաց մերոց նորոգեսցես ի կեանս անմահս:
Ո՞ր յէութեամբ ես ընդ Հօր անեզատրելի բանիդ. այ-
սօր մատանեամբ քահանայիցն պարապրիլ ի յանձն առեր
անեզոզապատելի զանձ. զի ըզմեզ փըրկեսցես ի յաւերտեան
մեզաց մերոց:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԳՉ

Ցնվե՞լ փ նրչմարիտ եւ արդար. հանցէր ի Պիղատո-

ակ զՀանապարհացդ ըղպարզեաւտեան. որ տըւաւ ըմ մեզ զանձ անկողոպտելի: Պատեա՞ծ լ սուրբ կըտաւովք զմարմինն ակրունեական զաղիսին ըղլոյս որպէս զօծոյ. որ զգեցոյց ըմ մեզ զգնա անկողոպտելի: Եղա՞ւ ի նորափոր ի վիմի նւ մատանեաւ կընքեցաւ որ զնախանձ ակզբն կենդանացոյց. նւ զմարդկա՞ն կանգնեցս մահու ելոյծ:

Ա՞՞՞ՀՈՒ ԵՐՔ

Եղեն զիս ի գրի ներքնումն, ի խաւարի և ի սուսերս մահու:

Զիս հատատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ:

Քարող. Փառաւորեցայք:

ՄԱՆԿՈՒՆԱ ԴԿ. ՍՏ.

Ցո՞վսէ՞փ քեզ հաւատացեալ. Պէզատոսի ակներ-սէր. չնորհե՞լ զաչ բանեանդ մարմին: Զա՞նապատեան զայ սուսուածացեալ մարմինդ. պատահալ սուրբ կըտաւովք ևւ ե՞զ ի գերեզմանի: Ո՞ր արարիչդ եչս ա՞րարածոց. հանգուցեալդ ի քերթվբս. վիմա՞վ կընքեցար յերկրի:

Քար. Ման խաղաղութեան: Աչ. Սուրբ ես Տէր:

Ա՞ՀՈՒ ՍԱՂՄՈՍ ԶՀ. ՀՂԲՅՈՅՆ.

Կց. Եղեն զիս ի գրի ներքնումն, ի խաւարի և ի սուսերս մահու:

Փե. Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ: 487:

ՁՒՆՈՒ ՕՐՔԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Ին. 62:

Ման Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. ակը, յիշեցաք զի մոլորիցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև յերից աւուրս,

զուցէ եկեալ աշակերտքն զիշերի գողանալոցն գնա , և ասիցեն ժողովրդեանն , թէ յարեաւ ի մեռելոց , և լինի՝ ցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն : Ասէ ցնո՛ա Պիղատոս . ունիք զզօրականն , երթայք զգուշացա՛բուք որպէս և գիտէք : Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին , և կնքեցին զվէմն հանդերձ զօրակա՛նօքն : 66 :

Եբր· Տէրն յետ առնոյ : Փոր· Խնդրեա : Կեցո· Ի ՚ի՛ն· :
Աղ· Քառ ամենազօր և հրաշալի Թագաւոր :

Յ Ե Ր Ե Կ Ո Ց Ի

Ձրաքալոցի սուրբ Զատկին՝ յինն հաճ հաղորդին յեկեղեցին, և լուացանէն կանդնեցո : Եւ ասէն ղՅուդա հաճ, իսկ խոնարհեցո և Ապրեցո զ ինչ :

Աւր գինի ծաղոյն ախոռին յաղախոզնեան պահէն , բաղնիք յայնի՛

ՍԱՂՄՈՍ ՃԺԲ

ԿՅ· Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան :

ՓԽ· Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն :

Եղիցի անուն Տեառն օրհնեալ , յայսմ հետէ մինչև յաւիտեան :

Յարևելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն :

Բարձր է ի վերոյ ամենայն ազգաց Տէր , և յերկինս են փառք նորա :

Ո՞վ է օրհնեալ Տէր Աստուած մեր , ի բարձունս բնակեալ , և զիջանարկս առնանէ յերկինս և յերկրի :

Յարուցանէ զաղքատս յերկրէ , և բարձր առնէ զառատոսկեալս յաղբեաց :

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ :

Բնակեցուցանէ զամուն ի տան ուրախառիս , որպէս մայր որդւովք բերկրեալ :

ՇԱՐԱԿԱՆ ԳԶ

Ա՛յսօր աստուածնալ՚ի՛նքն զուարճանայ նո՛ր հաստատեալ վերկիր . պա՛րբք սո՛ւրբ փառաբանե՛ն զքրիստոս·

Եւ մեք ձայնիւ օրհնութեամբ գարգարեսցուք սուրբ ըզ-ամ՛ենս : Ա՛յսօր ե՛ւ մեք ցընծամբք ասելիս ընդհանուր հընչմամբ. մե՛ծասէր փայլմամբ երեւեցաւ աշխարհի. ա՛ռ Ա՛ստուած գոհութի՛ւնք ընթա՛նան պատմեն անպատմ՛ դրա՛ն կե՛նդանւոյ : Ընդա՛մ և զուարճացեր եկեղե՛ցի. կո՛յս սուրբ և համբան երկնաւո՛ր փեսային. անձա՛ռ ասեա-նեմք զօծեա՛ն ըզԲրիծ՛ ասա՛ս գալով աս քեզ լո՛յսըն հե-թանոսաց :

Գ-ր. Եւ ևս խաղաղութեան : Գ-հ. Օրհնութիւն և փառք :

Ա- ՍԱՂՄՈՍ ՃԺ. Ի ՂԵ-

Կ3. Ա՛յսօր է զոր սրսր Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա :

Փե. Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի է, զի յա-ւիտեան է ողորմութիւն նորա :

Ասացէ տունն Իսրայելի՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Ասացէ տունն Ահարոնի՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Ասացեն երկիւղածք Տեառն՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Ի նեղութեան խնդամ ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ յանդարձ :

Տէր է իմ օգնական և ես ոչ երկեսցց. զի սրսացէ ինձ մարդ :

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ :

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս :

Ամենայն ազինք չրջեցան զինև, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա :

Շրջելով չրջեցան զինև, պաշարեցին զիս ի մեամն. և անուամբ Տեառն վանեցի զնոսա :

Շուրջ եղեն զինև որպէս մեղու, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր, և անուամբ Տեառն մեծեցի զնոսա :

Ի մեծելն դրդուեցայ և եղէ մերձ ի գլորել, և Տէր ընկալաւ զիս :

Ջօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր, և եղև ինձ ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն բարձր արար զիս, և աջ Տեառն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս Տեառն:

Խրատեալ խրատեաց զիս Տէր և ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն, և խոստովան եղէց Տեառն:

Այս դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա:

Խոստովան եղէց քեզ Տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն:

Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան:

Ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց:

Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա:

Ո Տէր փրկեա, ո Տէր առաջնորդեա. օրհնեալ որ գալոցդ ես յանուն Տեառն, և օրհնեցաք զքեզ ի տանէ Տեառն:

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ:

Աստուած իմ ես դու՝ խոստովան եղէց քեզ, Աստուած իմ ես դու՝ և բարձր արարից զքեզ:

Խոստովան եղէց քեզ Տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն:

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ե- ---- ե-----ո---- կ-՛ ---ո-է-է-ն- ը-ը-ե---- չ---չ---ով

ըմբռնցուած ի ծննդոց: ա. 1:

Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: 347:

Աղօթք հանդիպ ծուներ դնելով զՏէր ազաչեցուք: գո՛. Տէր ողորմեա: երէց- է---:

գո՛. Եւ ևս խաղաղութեան: գո՛. Օրհնութիւն և փառք:

ըմբռնցուած ի ծննդոց: իբ. 1:

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ փորձեաց: 430:

Աղօթք հանդերձ ծանր գնելով զՏէր աղաչեցուք։ Քահ. Տէր ողորմեա։ Երէց՝ Կրկնէ։

Քար. Եւ ևս խաղաղութեան։ Քահ. Օրհնութիւն և փառք։

Ընթերցուած յԵղից։ ԺԲ. 1։

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի՝ երկրին Եգիպտացւոց, և ասէ. ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ։ խօսեսջիք ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի և ասասջիք. ի տասներորդում ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգացն իւրեանց, ոչխար ըստ երդ։ Եւ եթէ սակաւք իցեն ի տանն՝ որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր դրացի իւր և դրնկեր իւր ըստ մարդահաշուի. իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն։ Ոչխար կատարեալ՝ արու, տարեւոր, անարատ լիցի ձեզ. յօղեաց և յայծեաց առնուցուք. և եղիցի ձեզ պահել մինչև ի չորս և ի տասն աւուր ամսոյս այսորիկ. և զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի ընդ երեկս. և առցեն յարիւնէ անտի և դիցեն ի վերայ երկուց սեմացն և բարաւորին տանցն յորս ուտիցեն զնա ի նմանս։ Եւ կերիցեն զմիսն ի գիշերի յայսմիկ խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերիցեն. և ոչ ուտիցէք ի նոցանէ հում, և ոչ պախ եփեալ ջրով, այլ խորովեալ հրով. զգլուխն ոտիւքն հանդերձ, և զիսորատին նորա։ Եւ ոչ ինչ մնացուք ի նմանէ մինչև յառաւօտ. և ոսկր մի ոչ կոտրեսջիք ի նմանէ. և որ ինչ մնայցէ ի նմանէ մինչև յառաւօտ՝ հրով այրեսջիք։ Եւ այսպէս ուտիցէք. գօտիք ձեր ընդ մէջս, և կօշիկք ձեր յոտս, և ցուպք ձեր ի ձեռին. փութանակի ուտիցէք, զի զատիկ Տեառն է։ Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպտացւոց ի գիշերի յայսմիկ, և հարից զամենայն անդրանիկ երկրիդ Եգիպտացւոց ի մարդոյ մինչև յանասունն. և յամենայն դիան Եգիպտացւոց արարից վրէժխնդրութիւն, զի ես եմ Տէր։ Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վերայ տանց՝ յորս ուտիցէք զսա անդ։ Եւ տեսից զարիւնդ և ապրեցուցից զձեզ. և ոչ լինիցին ի ձեզ հարուածք ի տապանակել՝ յորժամ հարկանիցեմ երկիրդ Եգիպտացւոց։ Եւ եղիցի ձեզ արիւնդ այդ ի յիշատակ, և տօնեցէք զդա՝

ասն Տեառն յապգս ձեր. օրէն յաւիտենական ասնեցէք զդա : Զեօթն օր բաղարջ ուտիցէք, յառաջնում իսկ օրէ անտի՝ անհետ առնիջիք զխմոր ի տանց ձերոց. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն յԻսրայէլէ : Յառաջնում օրէ անտի մինչև օրն եօթներորդ նուիրեալ և զկիր ձեզ սուրբ. զամենայն գործ ապատու մի՛ գործիցէք ի նմա, բայց միայն որ գործիցի ամենայն անձին՝ այն միայն գործեսցի ձեզ : Եւ պահեսջիք զպատուիրանս իմ զայս, զի յաւուր յայմիկ հանից զզօրութիւն ձեր յերկրէս Եգիպտացւոց. և առնիցէք զօրս զայս յապգս ձեր օրէն յաւիտենական : Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ՝ յերեկորեայ բաղարջ ուտիցէք մինչև ցքսան և մի օր ամսոյն ցերեկոյ. զեօթն օր մի՛ գտցի խմոր ի տունս ձեր. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ Իսրայէլի. յեկաց և ի բնակաց երկրին խմորեալ մի՛ ուտիցին. յամենայն բնակութիւնս ձերում ուտիցէք բաղարջ : Եւ կոչեաց Մովսէս զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և ասէ ցնոսա. երթայք առէք ձեզ ոչխար ըստ ազգս ձեր, և զննիջիք ի զատիկ : Եւ առնուցուք մշտիկ զոտպտի թաթխեալ յարիւնն որ առ դրօքն իցէ, և արկանիջիք զրաթաւտաւն և զերկոքումբք սեմսվքն յարիւնէ անտի որ առ դրօքն. բայց դուք մի՛ ելանիցէք իւրաքանչիւր ըստ դրանն տան իւրոյ մինչև ցառաւօտս : Եւ անցցէ Տէր հարկանել զԵգիպտացիսդ. և տեսանիցէ զարիւնն որ ի վերոյ բարուրին և ի վերոյ երկուց սեմոց, և զանց առնիցէ Տէր զդրօքն. և ոչ տացէ Թոյլ սատակչին մուտ նել ի տունս ձեր և հարկանել : Եւ պահեսջիք զբանս զայս՝ օրէն քեզ և որդւոց քոց մինչև ցյաւիտեան : 24 :

Աղօթք հանգերձ ծունր գնելով զՏէր ապաչեցուք :
Փ—հ. Տէր ողորմեա : Կրկնի—ի :

Փ—չ. Եւ ևս խաղաղութեան : Փ—հ. Օրհնութիւն և փառք :

Ըմբերցուած ի Յովհաննու մարգարէէ : Ա. 1 :

Եւ եղև բան Տեառն առ Յովնան Ամաթեայ՝ և ասէ. Արի և գնա ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսջիր անդ, զի եկ ապազակ չարութիւնն նորա առ իս : Եւ յարեաւ Յովնան փախչել ի Թարսիս յերեսաց Տեառն. էջ ի Յոպպէ և եգիտ նաւ որ երթայր ի Թարսիս, եւ գինն՝ և

եմուտ ի նա նաւել ընդ նոսա ի թարսիս յերեսաց Տեառն: Եւ Տէր յարոյց հողմ ի ծովուն՝ և եղև մրրիկ մեծ ի ծովուն, և նաւն ի վտանգի կայր ի խորտակել: Եւ երկիւղ նաւավարքն երկիւղ մեծ, և աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւր. և ընկեցին զկարասին որ էր ի նաւին ի ծով անդր՝ զի թեթեւացուսցեն յինքեանց: Եւ Յովնան իջեալ ի խորչ մի նաւին՝ ննջէր և խորտայր. մատեաւ առ նա նաւապետն՝ և ասէ. զինչ է այդ՝ զի խորտաս, արի կարդա զՏէր Աստուած քո. թերեւս ապրեցուսցէ զմեզ Աստուած, և մի՛ կորիցուք: Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. եկայք արկցուք վիճակ՝ և տեսցուք, վասն ո՞ր են չարիքս այս ի վերայ մեր: Արկին վիճակս, և ել վիճակն Յովնանու: Եւ ասեն ցնա. պատմեա մեզ, վասն էր են չարիքս այս մեզ. զինչ առեսնաս է քո, ուստի գաս կամ յո՞ երթիս, յորմէ՞ աշխարհէ ես կամ յորմէ՞ ժողովրդենէ: Ասէ ցնոսա. Ծառայ Տեառն եմ ես, և զՏէր Աստուած երկնից պաշտեմ որ արար զծով և զցամաք: Եւ երկիւղ արքն երկիւղ մեծ, և ասեն ցնա. զինչ գործեցեր զայդ: Զի գիտացին թէ յերեսաց Տեառն փախուցեալ էր, քանզի պատմեաց նոցա. և ասեն ցնա. զինչ արասցուք քեզ՝ և դադարեսցէ ծովս ի մէնջ: Զի ծովն առաւել ևս խառնվեալ էր և յարուցանէր մրրիկ ի վերայ նոցա: Եւ ասէ ցնոսա Յովնան. առէք ընկեցէք զիս ի ծովդ, և դադարեսցէ ի ձէնջ ծովդ. զի գիտեմ ես եթէ վասն իմ է մրրիկս այս մեծ ի վերայ ձեր: Եւ չանային արքն դարձուցանել ընդ նաւն ի ցամաք՝ և ոչ կարէին, զի ծովն ևս քան զևս խառնվէր և աստիճանայր ի վերայ նոցա: Աղաղակեցին առ Տէր և ասեն. քաւ լիցի Տէր, մի՛ կորիցուք վասն անձին առնս այսորիկ, և մի՛ արձակեր ի վերայ մեր արիւն արդար, զի դու Տէր, որպէս կամեցար և արարեր: Եւ առին զՅովնան և ընկեցին ի ծովն, և դադարեաց ծովն ի խառնութենէ իւրմէ. և երկիւղ արքն երկիւղ մեծ ի Տեառնէ, զինեցին զոհս Տեառն և ուխտեցին ուխտս: Եւ հրամայեաց Տէր կիտին մեծի կլանել զՅովնան, և էր Յովնան ի փոր կիտին գերիս սիւս և գերիս գիշերս: Եւ եկաց Յովնան յաղօթս առ Տէր Աստուած ի փորոյ կիտին, և ասէ. Ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ, և լուաւ ինձ յորովայնէ դժոխոց աղաղակի

խնամ. լուր Տէր ձայնի խնամ. ընկեցեր զիս ի խորս սրտից ծովու, և գետք պաշարեցին զիս: Ամենայն յորձանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ. և ասացի՝ Թէ մերժեցայ յաչաց քոց. արդ իցէ Թէ յաւելից հայել ի սաճառ սուրբ քո: Հեղան ինձ ջուրք մինչև յոգիս, անդունդք անհնարինք պաշարեցին զիս: Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց, ինձ յերկիր՝ որոյ նիգք իւր ազիք յաւիտենից, ելցեն յապականութենէ կեանք իմ: Առ քեզ Տէր Աստուած իմ ի նուազել հոգւոյ իմոյ կարդացի, զՏէր յիշեցի, և եկեսցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո: Որ պահէին գունայնութիւն և զսուտութիւն՝ զողորմութիւնս իւրեանց թողին. այլ ես ի ձայն օրհնութեան և խոստովանութեան մատուցից քեզ պատարագ զոր ուխտեցի, և հատուցից փրկութեան Տեառն: Եւ հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ ձկանն՝ և կթուք զինա ի ցամաք: Եւ եղև բան Տեառն առ Յովնան երկրորդ անգամ և ասէ. արի գնա ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսջիր ի նմա զառաջին քարոզութեանն զոր խօսեցայ առ քեզ: Յարեաւ Յովնան և գնաց ի Նինուէ, որպէս խօսեցաւ ընդ նմա Տէր. և Նինուէ էր քաղաք մեծ Աստուծոյ, իրրև գնաց երից աւուրց ճանապարհի: Եւ սկսաւ Յովնան մտանել ի քաղաքն իրրև աւուր միոյ ճանապարհի, քարոզեաց և ասէ. այլ ևս երիք աւուրք՝ և Նինուէ կործանեսցի: Եւ հաւատացին արք Նինուէացիք Աստուած, և քարոզեցին պահս և քուրձ զգեցան ի մեծամեծաց մինչև ցփոքունս իւրեանց: Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմէ և մերկացաւ զպատմուճան իւր, զգեցաւ քուրձ և նստաւ ի վերայ մոխրոյ: Եւ քարոզեցաւ և պատմեցաւ ի Նինուէ՝ ի թագաւորէն և ի մեծամեծաց իւրոց, Թէ մարդ և անասուն՝ խաշն և արջառ՝ մի՛ ինչ ճաշակեսցեն և մի՛ ճարակեսցին և մի՛ ջուր արբցեն: Եւ զգեցան քուրձ մարդ և անասուն, և աղաղակեցին առ Աստուած սրտի ժուռք, և դարձան յիւրաքանչիւր ճանապարհէից իւրեանց չարաց՝ և յանօրէնութենէ որ ի ձեռս իւրեանց, և ասեն. ո՞վ գիտէ ապաչաւեսցէ Աստուած և դարձցի ի բարկութենէն սրտմտութեան իւրոյ, և մի՛ կորիցուք: Եւ ետես Աստուած զգործս նոցա՝ զի դարձան իւրաքանչիւր ի ճանապարհէից իւրեանց չարաց, և զղջացաւ Աստուած ի վերոյ չարեացն՝

զոր խօսեցաւ առնել նոցա, և ոչ արար։ Եւ արամեցաւ Յովնան արամութիւն մեծ և խռովեցաւ, և եկաց յաղօթս առ Տէր Աստուած, և ասէ. ով Տէր, ո՞չ այս այն բանք են իմ մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ առապարեցի փախչել ի Թարշիշ, զի գիտէի թէ ողորմած ես դու և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց. և արդ Տէր Տէր, առ զոգի իմ յինէն, զի լաւ է ինձ մեռանել՝ քան թէ կեցեմ կենդանի։ Եւ ասէ Տէր ցՅովնան, թէ արդարև յա՞յժ արամեալ իցես։ Եւ ել Յովնան ի քաղաքէ անտի, և նստաւ յանդիման քաղաքին, և արար իւր հովանի, և նստաւ ընդ հովանեաւն. մինչև տեսանիցէ թէ ինչ լինիցի քաղաքին։ Եւ հրամայեաց Աստուած դդմենւոյն, և ել ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի ի վերայ գլխոյ նորա, զուարճացուցանել զնա ի տառապանաց իւրոց. և ուրախ եղև Յովնան ի վերայ դդմենւոյն ուրախութիւնն մեծ։ Եւ հրամայեաց Աստուած որդանն՝ առաւօտուն ի վաղիւ անդր, եհար զդդմենին՝ և ցամաքեցաւ. և եղև ի ծագել արեւուն հրամայեաց Աստուած հողմոյ խորշակի տապախառնի, և անկաւ արեւն գլխոյն Յովնանու. և կայր ի տարակուսի և քաղէին ոգիք նորա. և ասէր, լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ։ Եւ ասէ Տէր Աստուած ցՅովնան. թէ արդարև յա՞յժ արամեալ իցես ի վերայ դդմենւոյն։ Եւ ասէ. յայժ արամեալ եմ մինչև ցմահ։ Եւ ասէ Տէր. դու խնայեցեր ի դդմենին՝ յոր ոչ եղեր ինչ աշխատ, և ոչ սնուցեր զնա. որ գիշերի եղև, և միւս գիշերի կորեաւ։ Եւ ո՞չ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ, յորում բնակեալ են աւելի քան ԺԲ հիւրիոսանան բիւր մարդիկ՝ որ ոչ ծանեան զաջ և զահեակ իւրեանց, և անասուն բազում։ Գ. 11։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեցուք։ Քահ. Տէր ողորմեա։ Երէց՝ Քրիստե։

Քար. Եւ ևս խաղաղութեան։ Քահ. Օրհնութիւն և փառք։

Ընթերցուած յՅովհ. ԺԳ. 24։

Եւ եղև յաառաւօտին պահու՝ հայեցաւ Տէր ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյն և ամպոյ, և խռովեաց զբանակն Եգիպտացւոցն. և կապեաց զանիւս կառաց նոցա, և վարէր զնոսա բռնութեամբ։ Ասէն Եգիպտացիքն. փա-

խիցուք յերեսաց Իսրայէլի, զի Տէր պատերազմի վասն նոցա ընդ Եգիպտացիսս: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ձգեա զձեռն քո ի վերայ ծովուդ, և կարկառեսցի անդրէն ջուրըդ, և ծածկեսցէ զեգիպտացիսդ, զկառս դոցա և զհեծեալս իւրեանց: Եւ Ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծովուն, և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի տեղի իւր. և Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն, և թօթափեաց Տէր զեգիպտացիսն ի մէջ ծովուն. և դարձուցեալ ջուրսն՝ ծածկեաց զկառս և զհեծեալս և զամենայն զօրութիւն փարաւոնի, որ մտեալ էին զհետ նոցա ի ծով անդրը. և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն, և ջուրն պատիսպ էր ընդ աջմէ նոցա և ընդ ահեկէ իւրեանց: Եւ ապրեցոյց Տէր զԻսրայէլ յաւուր յայնմիկ ի ձեռաց Եգիպտացւոցն: Եւ տեսին Իսրայէլ զեգիպտացիսն մեռեալս առ ափն ծովուն. և տեսին զձեռն մեծ զոր ա՛ր Տէր ընդ Եգիպտացիսն. և երկեաւ ժողովուրդն ի Տեառնէ, և հաւատացին յԱստուած և ի Մովսէս ծառայ նորա: Յայնժամ երգեաց Մովսէս և որդիքն Իսրայէլի զօրհնութիւնս զայս Աստուծոյ, և ասեն. Օրհնեացուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս նոցա ընկէց ի ծով: Օգնական ընդունելի իմ Տէր, և եղև ինձ ի փրկութիւն: Սա է իմ Աստուած և փառաւոր արարից զսա. Աստուած հօր իմոյ, և բարձր արարից զսա: Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր անուն նորա: Զկառս փարաւոնի և զզօրութիւնս նորա ընկէց ի ծով, զընտիրս հեծելոց և զպատուականս. ընկղմեցան ի ծով կարմիր: Խորք ծածկեցին զնոսա, ընկղմեան յանդունդս իբրև զվէմ: Աջ քո Տէր փառաւորեալ է զօրութեամբ, աջ քո Տէր խորտակեաց զթշնամին: Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս, առաքեցեր զբարկութիւն քո և եկեր զնոսա իբրև զեղէգն: Եւ հողմով սրտմտութեամբ քով պատսպեցան ջուրք. պաղեցան իբրև զպարիսպ ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովուն: Ասաց թշնամին. Հալածեցից և հասից, բաժանեցից զաւարն և լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով, տիրեսցէ նոցա ձեռն իմ: Առաքեցեր զհողմն քո. և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրև զկապար ի ջուրս սաստիկս: Ո՞վ իցէ նման քեզ յաստուա-

ծըս Տէր, և կամ ոմ նմանիցէ քեզ՝ փառաւորեալդ ի սուրբս, սքանչելի փառօք՝ որ առնես գնշանս. ձգեցեր զաջ քո՝ և եկուլ գնոսա երկիր: Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քումմ այսմ զոր փրկեցեր. մխիթարեցեր զօրութեամբ քով ի բանակեաղ սրբութեան քոյ: Լուան ազգք և բարկացան. և երկունք կալան զբնակիչս Քանանացւոց: Յայնժամ տագնապեցան գառաւորք եդոմացի և իշխանք Մովաբացւոց: Կալաւ գնոսա դողումբն, հալեցան ամենայն բնակիչք Քանանացւոց: Անկցի ի վերայ նոցա ահ և երկիւղ, մեծութեամբ բազկի քո քարացին: Մինչև անցցէ ժողովուրդ քո Տէր, մինչև անցցէ ժողովուրդ քո այս զոր առացար: Տարեալ տընկեսցես գնոսա ի լեառն ժառանգութեան քո, ի պատրաստութիւն բնակութեան քո, զոր արարեր Տէր սրբութիւն, Տէր՝ զոր պատրաստեցին ձեռք քո. Տէր թագաւոր յաւիտեան և յաւիտեանս և ևս: Զի մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նորա ի ծով, և ած ի վերայ նոցա Տէր զջուրս ծովուն, և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն: Եւ առ Մարիամ մարգարէ քոյրն Ահարոնի զթմբուկն ի ձեռն իւր, և ելին ամենայն կանայք զհետ նորա թմբկօք և պարուք. և յառաջէր Մարիամ և ասէր. Օրհնեցուք զՏէր, զի փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց ի ծով: ԺԵ. 21:

Յորժամ չօրհնեցուք Իրքան, և չկատարեցան չեզոյեաց հանդիպիլ են Իրքալ, յայնժամ լուցանէն Ջան և Ընդ, և գան հարկքն ի չեռս ահեղացան: Եւ երթեն:

ՇԱՐԱԿԱՆ ԳՉ

Լուանարեա երուսաղէմ զի հասեալ է լոյս քո. զարդարեա զամենրչս քո. եւ փա՛ռք Տեառն՛ ի վերայ քո ծագեսցի: Օ՛րհնեցուք առմսախք քեզ վայելէ Անաբաս օրհնութիւն ի Աստուծոյ. եւ քե՞զ մատոյցին պաօ՛թըք յե՛րուսաղէմ: Գալիա երուսաղէմ լոգէ՛ր. եւ օ՛րհնեա զԱտրնաձ քո. ը՛ նո՛ր ժողովո՛ւրդ զըչխոյ գուսաբր Աստուծոյ:

Աղօթք հանդիսիւ ծանր դնելով զՏէր ապաչեցուք: Քո՛. Տէր ողորմեա: Երէց՝ կրկնէ:

Քո՛ր. Եւ ևս խաղաղութեան: Քո՛. Օրհնութիւն և փառք:

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ: կ. 1:

Լուսաւորեաց լուսաւորեաց, երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցեն: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոսս. բայց ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երեւեսցին, և գնասցեն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո: Համարձակ շուրջ զքեւ զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցին: Յայնժամ տեսցես և խնդասցես, երկիցես և զարհուրեսցիս ի սրտի քումմ. զի փոխեսցի ի քեզ մեծութիւն ծովու և ազգաց և ժողովրդոց: Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց, և ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն Մադիամու և Գեփայ. ամենեքեան ի Սաբայ եկեսցեն, բերել ոսկի և կնդրուկ և ականս պատուականս, և զփրկութիւնս Տեառն ասացեն զաւետս: Եւ ամենայն խաշինքն կեդարու ժողովեսցին առ քեզ, և խոյքն Նաբէոթայ ածցեն և մատուսցին ընդունելի պատարագք ի վերայ սեղանոյ իմոյ, և տուն աղօթից իմոց փառաւորեսցի: Ո՞վ են սոքա որ իբրև ամպս թռուցեալ են, և իբրև զաղաւնիս ձագախառն եղամովին գան առ իս: Ինձ ակն ունին կղզիք և նաւք Թարսեայ յառաջագոյն ածել զորդիս քո ի հեռաստանէ. զարծաթն և զոսկի ընդ իւրեանս՝ վասն անուան Տեառն աստուծոյ, և վասն սրբոյն Իսրայէլի փառաւորելոյ: Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպս քո, և թագաւորք նոցա ընծայեսցին քեզ. զի վասն բարկութեան իմոյ հարի զքեզ, և վասն ողորմութեան իմոյ սիրեցի զքեզ: Եւ բացցին դրունք քո հանապազորդ ի տուէ և ի գիշերի, և մի փակեսցին, կրել ի քեզ զզօրութիւն ազգաց. և զթագաւորս իւրեանց ածիցեն առ քեզ: Զի ազգք և թագաւորք որ քեզ ոչ ծառայիցեն՝ կորիցեն, և ազգքն սերելով սերեսցին: Եւ փառքն Լիբանանու առ քեզ եկեսցեն, սարդիսն և սոսիս և նոճով և մայրիս՝ առ հաստատակ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ, և զտեղի ոտից իմոց փառաւորեցից: 13:

Աղօթք հանդերձ ծանր գնելով զՏէր աղաչեսցուք: Քահ. Տէր ողորմեա: Երէց. Երէկ:

Ֆաբ. եւ ևս խաղաղութեան: Ֆահ. Օրհնութիւն և փառք:
ընթերցուած ի ցովբայ: ԼԸ. 1:

Ո՞վ է դա՝ որ թաքուցանէ յինէն զխորհուրդս, ժողովեալ զրանս ի սրտի, և համարի յինէն թաքուցանել: Պնդեա իրրև այր զմէջ քո, հարցից զքեզ՝ և տուր ինձ պատասխանել: Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա ինձ եթէ խելամուտ իցես հանճարոյ: Ո՞վ եղ զչափ դորա թէ գիտիցես. կամ ո՞վ արկ ի վերայ դորա լար: Ցէ՞ր վերայ հաստատեցան ազիւք դորա, ո՞վ է որ արկ զվէմն անկեան ի դմա: Ցորժամ եղէն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին միս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին: Փակեցի զծով դրամբք, յորժամ ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել: Եդի նմա զէգ ի հանդերձ, և զմառախուղ նմա ի խանձարուրս: Եդի նմա սահմանս՝ եդեալ փականս և դրունս. ասացի, ցայդ վայր եկիցես՝ և այլ մի՛ անցանիցես, այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո: Եթէ ասա քո՛ կարգեցի զլոյսն առաւօտին: Ա՞րուսեակն եւս ակարդ իւր հասանել ի վերայ թևոց երկրի, թօթափել զամպարիշտս ի նմանէ: Կամ թէ քո՛ առեալ զհողն կաս՝ առեղծեր կենդանի, և խօսուն եղիր դնա յերկրի: Եւ մերժեցե՞ր զլոյսն յամպարշտաց, զբազուկս ամբարտաւանից խորտակեցե՞ր: Հասեալ իցես յաղն ծովու, և ընդ հետս անդնդոց շրջեցա՞ր: Բանացա՞ն քեզ աշիւ դրունք մահու, բարապանաց դժոխոց ի տեսանել զքեզ սարսեցա՞ն: Խելամո՞ւտ իցես լայնութեան ասա ի ներքոյ երկնից, ազէ պատմեա ինձ՝ որչափ իցէ: Ջինչ երկիր իցէ յորում լոյսն ապանիցի, կամ զինչ տեղի խաւարի: Տանիցե՞ս զիս ի սահմանս նոցա, եթէ խելամո՞ւտ իցես շաւղաց նոցա: Թերևս գիտիցե՞ս և ընդ այն ժամանակս իսկ ծնեալ իցես, և թիւ աւուրց քոց բազում իցէ: Երթեալ իցես ի շտեմարանս ձեան, և զդանձս կարկտի տեսեալ իցես: Չամբարեալ կայցէ քեզ ի ժամանակս թշնամեաց, յօր մարտի և պատերազմի: Ուսո՞ւ ելանիցէ լեզեանն, կամ սփռիցի հարաւ ի ներքոյ երկնից: Ո՞ պատրաստեաց զհոսանս առատիկս անձրևաց, և զճանապարհս ամպրոպաց տեղեալ յերկիր, ուր ոչ գոյ մարդ յանապատս յանմարդի, յագեցուցանել զանկոխն և զանշէնն, և բղխեցուցանել զբոյս դալարոյ: Ո՞ է հայր անձրևի, և ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ: 28:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեցուք։
Ք֊Ո. Տէր ողորմեա։ Երէք֊ Կրկնե֊։
Ք֊Բ. Եւ ևս խաղաղութեան։ Ք֊Ո. Օրհնութիւն և փառք։

Ընթերցուած ի Յհսուայ որդւոյ Նաւեայ։ Ա. 1։

Եւ եղև յետ վախճանելոյն Մովսեսի ծառայի Տեառն, խօսեցաւ Տէր ընդ Յհսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնեի Մովսեսի և ասէ. Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու և ամենայն ժողովուրդ քո՝ յերկիրն զոր ես տայ որդւոցն Իսրայելի։ Զամենայն տեղիս յոր հասանիցեն գնացք ոտից ձերոց՝ ձեզ տայ զնա, որպէս խօսեցայ ընդ Մովսեսի. զանապատն և զԼիբանանեն, մինչև ցգետն մեծ ցգետն Եփրատ, զամենայն երկիրն Քետացւոց. մինչև ցծովն մեր֊ձին ի մտից արևու՝ ձեզ լիցին սահմանքն. և ոչ ոք կացցէ ընդդէմ ձեր զամենայն աւուրս կենաց քոց։ Եւ որպէս էի ընդ Մովսեսի, նոյնպէս եղէց և ընդ քեզ. և ոչ թողից զքեզ և ոչ անտես արարից զքեզ։ Զօրացիր և քաջ լեր. զի դու բաժանեացես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն՝ զոր երդուայ հարցն քոց տալ ցոցա։ Արդ զօ֊րացիր և քաջ լեր յոյժ, պահել և առնել ըստ ամենայն օրինացն որպէս պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի՛ խոտորիցիս ի նոցանէ յաջ կամ յահեակ, զի խե֊լամուտ լիցիս ամենայնի զինչ և գործեացես։ Եւ մի՛ մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ, և խոկասցես ի դա ի տուէ և ի գիշերի, զի խնամասիս առ֊նել զամենայն գրեալսդ ի դմա. և ապա աջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո, և ապա խելամուտ լինիս֊ցիս։ Ահա պատուիրեմ քեզ՝ զօրացիր և քաջ լեր. մի՛ զանգիտիցես և մի՛ երկնչիցիս, զի ընդ քեզ է Տէր Աս֊տուած քո յամենայն տեղիս ուր և երթայցես։ 9։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեցուք։
Ք֊Ո. Տէր ողորմեա։ Երէք֊ Կրկնե֊։
Ք֊Բ. Եւ ևս խաղաղութեան։ Ք֊Ո. Օրհնութիւն և փառք։

Ընթերցուած ի Յօրդանան թագաւորութեանցն։ Բ. 1։

Եւ եղև ի վերացուցանել Տեառն զնովիա չարժմամբ յերկինս, և գնացին Եղիա և Եղիսէ ի Գաղգադա, և ասէ Եղիա ցԵղիսէ. Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց

զնա ի Բեթել։ Եւ ասէ եղիսէէ. կենդանի է Տէր և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ։ Եւ եկին ի Բեթէլ. և ելին որդիք մարգարէիցն որ ի Բեթէլ՝ առ եղիսէէ, և ասեն ցնա. Թէ գիտիցե՞ս զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ. գիտեմ և ես, լուռ լերուք։ Եւ ասէ եղիա ցեղիսէէ. Նեսա դու աստ, զի Տէր առաքեաց զիս յԵրիքով։ Եւ ասէ. կենդանի է Տէր և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ։ Եւ եկին յԵրիքով։ Եւ մատեան որդիք մարգարէիցն որ յԵրիքով՝ առ եղիսէէ, և ասեն ցնա. Եթէ գիտիցե՞ս զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ. գիտեմ և ես, լուռ լերուք։ Եւ ասէ ցնա եղիա. Նեսա դու աստ, զի Տէր առաքեաց զիս ի Յորդանան։ Եւ ասէ եղիսէէ. կենդանի է Տէր և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ։ Եւ գնացին երկոքեան. և յետս այր յորդւոց մարգարէիցն, և կացին ի հանդիպոյ ի բացեայ. և երկոքեան կացին յեղերն Յորդանանու։ Եւ առ եղիա զմաշկեակն իւր, ծալեաց և եհար զջուրն, և բաժանեցաւ ջուրն յայսկոյս և յայնկոյս, և անցին երկոքեան ընդ ցամաք։ Եւ եղև ընդ անցանելն նոցա, ասէ եղիա ցեղիսէէ. խնդրեա զինչ արարից քեզ մինչչև վերացեալ իցեմ ի քէն։ Եւ ասէ եղիսէէ. եղիցի կրկին ոգիդ քո ի վերայ իմ։ Եւ ասէ եղիա. դժուարինս խնդրեցեր. բայց եթէ տեսցես զիս յառնուն իմում ի քէն՝ եղիցի այնպէս, ապա թէ ոչ՝ մի՛ եղիցի։ Եւ եղև մինչդեռ գնային նոքա, և խօսէին երթայեն, և ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք, և անջրպետեցին ի մէջ երկոցունց. և վերացաւ եղիա շարժմամբ յերկինս։ Եւ եղիսէէ հայէր և աղաղակէր. հայր, հայր, կառքդ Իսրայէլի և հեծեալքդ նորա։ Եւ այլ ոչ ևս տեսա զնա. և բռնեաց եհար զհանդերձիցն իւրոց, և պատառեաց յերկուս ծուէնս. և առ եղիսէէ զմաշկեակն եղիայի զոր ընկէց ի վերայ նորա։ Եւ դարձաւ եղիսէէ, և եկաց առ եզերն Յորդանանու. և առ զմաշկեակն եղիայի զոր ընկէց ի վերայ նորա, և եհար զջուրն և ասէ. ուր ես Տէր Աստուած եղիայի ապիրոյ։ Եւ եհար զջուրն, և բաժանեցան յայսկոյս և յայնկոյս, և անց եղիսէէ։ Իրրև տեսին որդիք մարգարէիցն որ յԵրիքով ի հանդիպոյն, և ասեն. հանգեաւ ոգին եղիայի ի վերայ եղիսէէի. և ե-

կին ընդ առաջ նորա, և երկիր պագին նմա ի վերայ երկրի: Եւ ասեն ցնա. ահաւասիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութեան արք յիսուն. երթիցեն և խնդրեսցեն զտէրն քո, գուցէ առ զնա հոգի Տեառն, և ընկէց զնա առ Յորդանանու, կամ ի վերայ միոյ ուրուք լերանց, և կամ ի վերայ միոյ ուրուք բլրոց: Եւ ասէ Եղիսէէ. մի առաքէք: Եւ բռնադատեցին զնա մինչև ամաչէր. և ասէ. առաքեցէք: Եւ առաքեցին յիսուն այր, և խնդրեցին զերիս աւուրս, և ոչ գտին զնա: Եւ դարձան առ նա, և նա նստէր յերիքով. և ասէ ցնոսա Եղիսէէ. ոչ ասացի ձեզ թէ մի երթայք: Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ. ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս և տէրդ իակ տեսանէ, և ջուրքս չար և երկիրս անպտուղ: Եւ ասէ Եղիսէէ. առէք առ իս կուժ մի նոր, և դիք այդր: Եւ բերին առ նա. և էլ Եղիսէէ յականս ջուրցն, և արկ անդ աղ և ասէ. այսպէս ասէ Տէր. բժշկեմ զջուրդ զայդոսիկ, և մի ևս լիցի այսր մահ և անպտղութիւն: Եւ բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին Եղիսէի զոր խօսեցաւ: 22:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ապաչեցուք:
Քահ. Տէր ողորմեա: Երէց. Կրկնէ:
Քոյ. Եւ ևս խաղաղութեան: Քահ. Օրհնութիւն և փառք:

Ըմբերցուած յերիմիայ մարգարէէ: ԼԱ. 31:

Ահաւասիկ աւուրք գան, ասէ Տէր, և ուխտեցից առ ներդ խթայելի և առանդ Յուդայ ուխտ նոր: Ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում առի զձեռնանէ նոցա հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց. զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր: Այլ այս է ուխտն զոր ուխտեցից առանդ խթայելի. յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տացզօրէնս իմ ի միտս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ: Եւ մի ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր ասել՝ թէ ծանիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչև ի մեծամեծս, ասէ Տէր. զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից: 34:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ապաչեցուք:
Քահ. Տէր ողորմեա: Երէց. Կրկնէ:

Ֆ֊Ը. եւ ևս խաղաղութիւնս։ Ֆ֊Հ. Օրհնութիւն և փառք։

Ըմբերցուած յեզեկիել մարգարէէ։ Ա. 1։

Եւ եղև ի վերայ իմ ձեռն Տեառն, և եհան զիս հոգւովն Տեառն, և եդ զիս ի մէջ դաշտին, և այն լի էր ոսկերօք մարդկան. և շրջեցոյց զիս շուրջ զոսկերօքն, և ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին, և ցամաքեալք յոյժ։ Եւ ասէ ցիս. որդի մարդոյ, իցէ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ։ Եւ ասեմ. Տէր Տէր, դու գիտես զայդ։ Եւ ասէ ցիս. որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդոցիկ և ասասցես ցդոսա. ոսկերք ցամաքեալք՝ լսարուք զպատգամն Տեառն. այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ ցայդոսիկ. ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի. և տացե ի ձեզ կեալ, և ածից ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ի վերայ ձեր մարմ. և տացե զոգի իմ ի ձեզ, և լինիջիք կենդանի, և ծանիջիք թէ ես եմ Տէր։ Եւ մարգարէացայ որպէս և հրամայեն ես ինձ Տէր։ Եւ եղև բարբառ ի մարգարէանալն իմում, և ահա շարժումն. և մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս. և տեսի և ահա կեալք և մարմինք պատէին, և ձգէր ի վերայ նոցա մորթ, և շունչ ոչ գոյր ի նոսա։ Եւ ասէ ցիս. մարգարեաց, որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ շնչոյն, և ասասցես ցշունչն. այսպէս ասէ Տէր Տէր. ևկ շունչ ի չորից հողմոց, և փչեա ի մեռեալս յայսոսիկ և կեցցեն։ Եւ մարգարէացայ որպէս և հրամայեն ես ինձ Տէր. և եմուտ ի նոսա շունչն, և եղեն կենդանի. և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ։ Եւ խօսեցաւ ընդ իս Տէր և ասէ. որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ՝ ամենայն տունդ Իսրայէլի է. և դոքա ասեն, չորացան ոսկերք մեր, հատաւ յոյս մեր և մեռաք։ Վասն այդորիկ մարգարեաց և ասասցես ցդոսա. այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես բացից զգերեզմանս ձեր, և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ, և տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի։ Եւ ծանիջիք եթէ ես եմ Տէր, ի բանալ ինձ զգերեզմանս ձեր և հանել զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ. և տացե զոգի իմ ի ձեզ, և լինիջիք կենդանի. և եդից զձեզ յերկիրն ձեր, և ծանիջիք թէ ես եմ Տէր. և խօսեցայ և արարից, ասէ Տէր Տէր։ 14։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ազաչեսցուք: Ք՜ա. Տէր ողորմեա: Երէց՝ Երկնե՜ա:

Ք՜բ. Եւ ևս խաղաղութեան: Ք՜ա. Օրհնութիւն և փառք:

Յ՜ա՜բ ընդերցո՜ածոց՝ կրկին ղՈ՜անկէն ի քէ՜ն: Եւ՝ ժո՜ղովուրդն ասէ՜ ա՜ն:

Ընթերցուած ի Դաւթեան մարգարէէ: Գ. 1:

Յամին ութուտասներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի՝ արար պատկեր ոսկի. բարձրութիւն նորա վաթսուն կանգուն, և լայնութիւն նորա կանգուն վեց. և կանգնեաց զնա ի դաշտին Դէներայ յաշխարհին Բաբելացւոց: Եւ արձակեաց ժողովել զզօրավարս և զզօրագլուխս և զկուսակալս, զպետս և զբանաւորս և զգործակալս և զամենայն իշխանս աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին որ կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր: Եւ ժողովեցան կօսականք, զօրավարք և զօրագլուխք՝ պետք և բանաւորք, մեծամեծք, գործակալք և ամենայն իշխանք աշխարհաց, գալ ի նաւակատիս պատկերին զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր. և կային առաջի պատկերին զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր: Եւ քարոզ կարդայր զօրութեամբ և ասէր. ձեզ ասի, ազգք և ազինք և լեզուք. յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրընդի, թմբկի և քնարի և տաւղի և վերգոյ միաբանութեան, և զամենայն ազգաց արուեստականաց, անկանիջիք և երկիր պագանիջիք պատկերին զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր արքայ: Եւ որ ոչ անկեալ երկիր պագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոցն հրոյն բորբոքելոյ: Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն՝ զսրնգին, զտաւղի և զնուագարանաց, և զամենայն ազգաց արուեստականաց, անկանէին ամենայն ազգքն և ազինք և լեզուք՝ և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր: Յայնժամ մատեան արք Քաղդէացիք և եղեն չարախօս զՀրէից առ Նաբուգոդոնոսորայ, և ասեն. արքայ յաւիտեան կեաց. դու հրամայեաւր ամենայն մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ՝ զսրնգի և զքնարի և զտաւղի և զնուագարանաց, և զամենայն ազգաց արուեստականաց. և որ ոչն անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրեղէն բորբոքելոյ: Արդ են ասա արք հրեայք՝ զոր կա-

ցուցեր ի վերայ գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրա-
քայ, Միսաքայ և Աբեդնագովայ, որ ոչ հնազանդեցան հրա-
մանի քումմ արքայ, և զդիս քո ոչ պաշտեն, և պատկե-
րիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն: Ցայն-
ժամ Նաբուզոզոնոսոր սրտմտութեամբ և բարկութեամբ
հրամայեաց ածել զԱնդրաք՝ Միսաք և զԱբեդնագով, և
ածին առաջի թագաւորին: Պատասխանի եառ Նաբուզո-
զոնոսոր և ասէ ցնոսա. Թէ արդարև, Սեդրաք, Միսաք
և Աբեդնագով, զդիս իմ ոչ պաշտիցէք, և պատկերին
ոսկւոյ զոր կանգնեցի երկիր ոչ պագանիցէք: Բայց արդ
եթէ պատրաստ լինիցիք, ընդ յորժամ լսիցէք զձայն փո-
ղոյ՝ սրնգի և թմբկի և քնարի, և զմիաբանութիւն ա-
մենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիր
պագանիցէք պատկերին զոր արարի. ապա թէ ոչ պա-
գանիցէք երկիր, ի նմին ժամու անկանիցիք ի հնոց հը-
րոյն բորբոքելոյ. և ով է Աստուած՝ որ փրկէ զձեզ ի
ձեռաց իմոց: Պատասխանի եառին Սեդրաք, Միսաք և
Աբեդնագով, և ասեն ցարքայ Նաբուզոզոնոսոր. ոչ լինի
է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի.
զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեք պաշտեմք, կա-
րող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ և ի ձե-
ռաց քոց արքայ, ապրեցուցանել զմեզ. ապա թէ ոչ
այս լինի յայտնի քեզ արքայ, զի զդիս քո մեք ոչ
պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր
ոչ պագանեմք: Ցայնժամ Նաբուզոզոնոսոր լի եղև սրտա-
մտութեամբ և զոյն երեսաց նորա չրջեցաւ ի վերայ
Անդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի, և ասէ. Ջեռու-
ցէք զհնոցն եօթնապատիկ, զի մինչև ի վախճան այրես-
ցին: Եւ արք հինգ՝ զօրաւորք զօրութեամբ կապեցին
զԱնդրաք՝ Միսաք և զԱբեդնագով՝ արկանել ի հնոց հը-
րոյն բորբոքելոյ: Ցայնժամ արքն այնոքիկ կապեցան
պատմուճանօք և վարտիք, արտախուրակօք և գանկա-
պանօք իւրեանց, և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբո-
քելոյ. զի հրամանն թագաւորին սաստկանայր, և հնոցն
բորբոքէր եօթնապատիկ առաւել յոյժ: Եւ երիքեան նո-
քա՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, անկան ի մէջ հնո-
ցին կապեալք. գնային ի մէջ հրոյն, օրհնէին և գովէին
զՏէր Աստուած: Ցարեաւ Ազարիա և կաց յաղօթս այս-
պէս. Եւթաց զբերան իւր ի մէջ հրոյն և ասէ. Օրհնեալ

ես Տէր Աստուած հարցն մերոց, զովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս. զի արդար ես յամենայնի զոր ածեր ի վերայ մեր, և ամենայն գործք քո ճշմարիտ են. և ուղիղ են ճանապարհք քո, և ամենայն դատաստանք քո ճշմարտութիւն: Եւ խրատուես ճշմարտութեան արա- րեր ըստ ամենայնի՝ զոր արարեր մեզ և քաղաքին սըր- բոյ հարցն մերոց Երուսաղեմի: Զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց. զի մեղաք և անօրինեցաք յապստամբ լինելն ի քէն, և ա- ռաւել մեղաք յամենայնի, և պատուիրանաց քոց ոչ անս- ացաք: Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատուի- րեցեր մեզ՝ զի բարի լինիցի մեզ: Եւ ամենայն զոր ա- ծեր ի վերայ մեր և ամենայն զոր արարեր մեզ՝ ար- դար դատաստանաւ արարեր: Եւ մատնեցեր զմեզ ի ձե- ռըս թշնամեաց մերոց՝ անօրինաց խստաց և ապստամբ- ոգոց, և թագաւորի անիրաւի և չարի քան զամենայն երկիր: Եւ արդ ոչ գոյ մեզ բանալ զբերան մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից: Այլ մի՛ մատներ զմեզ ի հապառ վասն անուան քո, և մի՛ ցրեր զտեղատ քո, և մի՛ ի բացէ առներ զուղղութիւնս քո ի մէնջ: Վասն Աբրահամու սիրելւոյ քո և վասն Ի- սահակայ ծառայի քո և վասն Իսրայելի սրբոյ քո, որոց խօսեցար բազմացուցանել զզաւակ նոցա իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու: Եւ արդ Տէր, նուազեցաք քան զամենայն ազգս, և եմք տառապեալք յամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց. և ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մատրաբէ և առաջնորդ, ոչ ողջակէզք և ոչ զոհք և ոչ պատարագք և ոչ խունկք, և ոչ տեղի առաջի երեսաց քոց առաջի քո, և գտանել ո- ղորմութիւն: Այլ անձամբք բեկեալք և հոգւովք տա- ռապանաց ընդունելի լիցուք՝ իբրև զողջակէզս խոյոց և զուարակաց և իբրև զբիւրաւորս գառանց պարարտաց, այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո՝ լինել հաճարեալ զկնի քո զի չիք ամօթ յուսացելոցս ի քեզ: Եւ արդ զամբ զհետ քո ամենայն սրտիւք մերովք, և երկնչիմք մեք ի քէն, և խնդրեմք զերեսս քո. մի՛ յամօթ առներ զմեզ, այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում և ըստ բազում ողորմութեան քում, և փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց, և տուր փառս անուան

քում Տէր : Եւ յամօթ լիցին ամենեքեան ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ամաչեցուսցեն յամենայն բռնութիւնէ իւրեանց, և զօրութիւն նոցա խորտակեսցի. և ճանիցեն զի զօ՛ւ ես Տէր Աստուած միայն, և փառաւորեալ ի վերայ ամենայն աշխարհի : Եւ ոչ դադարէին որք արկին զնոսա ապառաւորք թագաւորին՝ զՀնոցն բարբաքելոյ նաւթիւ և ձիթով և վչով և արիւամբ. և եղանէր դիպանապետ բոցն ի վերայ քան զՀնոցն ի քառասուն և չիներն կանգուն. և չքնէր պատէր չուրջ զՀնոցսուն, և այրէր զորս գտանէր ի քաղդէացւոց անտի : Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ Ազարիայու ի Հնոցի անդ, և թօթափեաց զբոց հրոյն ի Հնոցէ անտի, և արար ի մէջ Հնոցին իբրև զհովմ որ զօդագին չնչիցէ. և ոչ մերձենայր ամենևին հուրն ի նոսա, ոչ տրամեցուցանէր և ոչ նեղէր զնոսա : Յայնժամ երկեան իբրև ի միջէ բերանոյ օրհնէին և գովէին և փառաւոր առնէին զԱստուած ի մէջ Հնոցին՝ և ասէին. Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս : Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գով : Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո, գով : Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո, գով : Օրհնեալ ես որ հայիս յանդունդս և նստիս ի քրովբէս, գով : Օրհնեալ ես որ նայիս ի հատատաութեան երկնից, գով : Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան : Օրհնեցէք երկինք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք հրեշտակք Տեառն զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ջուրք ամենայն որ ի վերայ քան զերկինս զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամենայն զօրութիւնք Տեառն զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք արև և լուսին զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամենայն աստեղք երկնից զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամենայն անձրեւք և ցօղք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամենայն հողմք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք հուր և տապ զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ցուրտ և ամառն զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք եղեամն և ձիւն զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք սիւք և գիշերք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք լոյս և խաւար զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամպք և փայլատակունք զՏէր, օրհնեցէք : Օրհնեսցէ երկիր զՏէր, օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան : Օրհնեցէք լերինք և բարձունք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ամենայն բոյսք երկրի զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ազբիւրք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք ծով և գետք զՏէր, օրհնեցէք : Օրհնեցէք կէտք և ամենայն կեա-

ասաք որ ի ջուրս գՏէր , օրհ : Օրհնեցէք Թռչունք երկնից գՏէր . օրհ : Օրհնեցէք ամենայն գազանք և անասունք գՏէր , օրհ : Օրհնեցէք որդիք մարդկան գՏէր , օրհ : Օրհնեցէ Իսրայէլ գՏէր օրհնեցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան : Օրհնեցէք քահանայք գՏէր , օրհ : Օրհնեցէք ծառայք Տեառն գՏէր , օրհ : Օրհնեցէք հոգիք և չունչք արդարոց գՏէր , օրհ : Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք գՏէր , օրհ : Օրհնեցէք Անանիա Ազարիա և Միսայէլ գՏէր , օրհ : Զի փրկեաց զմեզ ի դժոխոց , և ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ . և փրկեաց զմեզ ի հնոցէս , և ի միջոյ բորբոքեալ բոցոյս , և ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ : Գոհացարուք գՏեառնէ , զի քաղցր է , զի յաւիտեան է ողորմ նորա : Օրհնեցէք ամենայն պաշտօնեայք Տեառն զԱստուածն աստուածոց : Օրհնեցէք և գոհացարուք , զի յաւիտեան է ողորմ նորա : 91 :

Ե- Երբ ը՛Օրհնեցէք ամենայն գործք Ւ-ովին , գովէրո՛ Երկին Ւ-ովոր Յ-ովհ- , ասելով .

Օրհնեցէք , գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան :

Ե- ի Ւ-ովրան հուրջ ասդնովին , քացցին զՒսկանն և արծա- -ացն քովոյր Յ-ովհ- Ւ-ովոգեոցէ . Օրհնեա ա՛էր : Ե- Ջամարոն . Օրհնեալ Թագաւորութիւնն : Ե- պարարոքն Ւ-ովդի :

Զնի արդ-ովն պարարոքին նախաձեռն առնէն ասելով ,

ՇԱԲԱԿԱՆ Ա2

Ա յսօր յաւիտ. ի միակոյց . Տէ- Ւ-որ ասջոն ի ընտ- 529 և զնի ի ընտ- 531 . և զնի ընդնաւառ գաւարարան ի բնին :

Օրթի

Որոյ Ա՛ստարանիս որ ըստ Մատթէոսի : Իշ . 16 :

Ցետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Իսկ միաստան աշակերտքն գնացին ի Գալիլիա ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս . իրրև տեսին զնա՝ երկիր պագին նմա , և ոմանք կերկուածան : Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ . տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի . որպէս առաքեաց զիս Հայր , և ես առաքեմ զձեզ : Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ : Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի : 20 :

Ջ- . Ընդր : Կնցո . Յ-ովհ- : Ա՛ . Թագաւոր : Հայր մեր՝



Benziger frères, Editeurs, à Einsiedeln, New York & Cincinnati.

Pendant qu'il les bénissait, il se sépara d'eux, et monta au ciel. (Luc. XXIV. 51.)

ԿԻՒՐԱԿԷ · ԱՋ

ՋԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ԳԻՇԵՐԻ

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ ԱՋ. Դասեա Տէր։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՋ

Ա՛ՅՍՕ՝Ր յարեաւ ի մեռելոց փեռայն անմահ եւ երկնաւոր. զի աւետի՛ք խընդութեան՝ համարն ի կերկրէ՛ն ելեղե՛ցի. ‖ օրհնեա՛ ի ձա՛յն ցընծութեան զԱ՛ստուա՛ծ քո՛ Սիո՛ն։ Ա՛յսօր անեռա լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զամենակա՛ն ընթացս քո. լուսաւորեա՛ եւ երեւա՛ղ մ. քանզի յարեաւ լոյս քո՝ Քրիստոս. օրհնեա՛։ Ա՛յսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեմն լուսովն. եւ զի ծագեա՛ց լոյս գիտութեան՝ յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա՛։

† Ա՛յսօր զամբիկ մեր զինամբ Քրիստոսի. ապաստա՛ւ ոճն ցընծութեամբ. նորընծայեալք ի հնութենէ մեղաց անկելով ‖ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ա՛յսօր հրեշտակն լուսափայլ ի յերկինից իջեալ. զարհուրեցո՛յց ըզպահապանան. եւ սուրբ կանանցն քարոզէր ասելով Քրիստոս։

Ո՛րով լուսանալ միաշաբաթի՛ն կանխեցի՛ն կանայքն ի գերեզմանն. ի խընկել զանապական մարմինն։ Եւ զոյն ըզվէմն բարձեալ ի դրաց գերեզմանէ՛ն. եւ լսեալ բարբառ ի հրեշտակէ՛ն. եթէ յարեաւ Քրիստոս և խաւարեաց ըզմահ։ Եւ հանդիպեալ քո Տէր առաքեալացն. եւ տալ աղջիկն կենդանարար. առաքեա՛ց ընտա՛ ի փրկութիւն աշխարհաց։

Փանմ՚ոք յարնւթեան քո Տէր։ Պատրանօք նախատեաժձիր ի մերկացաք ի լուսոյն. ինկ յարուեան մր Միածնիդ ըզգեցաք զանմահութիւն փանմ՚ոք։ Խարանօք փայտին ճաշակեցաք ըզմահ. ինկ ի փայտ՚ն կենաց նորոգեցաք ամենեքեան փանմ՚ոք։

Ըն՚ոդ կանանց իւղաբերան առ քիզ առաւօտուն մրք կենդանիդ յաւիտենից Քրիստոս ընկալ և ըզմեզ. փառանակ սուրբ աւետաւոր զբաժինդ. զբթութիւն քո մեզ հանդիպեցոյ յաւուր պիտութեան. մընախիտարել ըզհոգիս եւ լուսաւորել։ Ըն՚ոդ նոքա՚ն աւետարան նուիեան մր քարոզ՚ցին. ըզքո՚ջ մկայն ըսպանեալ։ ար յաթեարդ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ։

Ո՚ր անճառ էնւթեամբ չծրդ ես փառակից. չարչարիլ մարմնով յանձն առեր վասն մեր. ‖ մընչաքննելոյ ծրհնութեամբ ի հրեշտակաց ծրհնեալ ես Տէր։ Ո՚ր էակդ ես ընդ չծր եւ սուրբ Հոգւոյն. խաչեցար և թաղեցար կամաւ չծր վասն մեր. մընչաքննելոյ։ Ո՚ր միւսանգամ գալոց ես հայրենի փառաք. չնորհելով առաւուածապէս յարութիւն ամենեցուն. յամենայն ազգաց յաւիտենից ծրհնեալ ես Տէր։

Հգ. Ո՚ր ի քրովբէական կառսդ հաճեցիս. այսօր ինձեր յերկինից ի գաղա առաքելոցն առաքդ Հոգի. ‖ ծրհնեալ ես թագաւոր անմահ։ Ո՚ր գրնաս ի վերայ թեւոց հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն սուրբ Հոգի. ծրհնեալ։ Ո՚ր խնամեցս տեսչութեամբ գոս գաղատածս. այսօր ընկեր ի հանատասել գեկեղեցի քո սուրբ Հոգի. ծրհնեալ։

Հն. Ջհոգիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ ի գաղա անդրանկաց գրելոց ի յերկինս։ Ընկալ վասն անցա

ըզբանաւոր պանապրապս ի մէ՛նչ. և չնորհեալ նոցա ընթերցութիւն գոանել յաւուրն յիմանալ։ Հաչտեա՛ ի ձեռըն սուրբ մանկանդ և արեան քո՛ Տէ՛ր. եւ պարգեւեա՛ նոցա գանել յաջակողմեանըն քո՛։

ՄԺ. Յարուցելոյն ի մեռելոց բնակարանն մայր եւ կոյս. որ ըզնընչի ցեանլսըն յԱդամայ կենագործէ անապական. ‖ զքե՛զ մեծացուցանե՛մք որ օրհնեալդ ես ի կանայս։ Աւրաւղին երկնի՛ւ և երկրի ևզեր տաճար և առաքանան. որ ըզնընչի ցեանլսըն մեր հրեղէն նորոգէ. զքե՛զ։ Կենրակրողին տիեզերաց արքունեցեր ըզքո՛ սուրբ ըզկաթն. որ ըզնընչի ցեանլսըն մեր վերըստին նորոգէ. զքե՛զ։

Խ2. Ո՛ր գանտանան բանուկըս քո՛ ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստըւած. եւ նըչան յաղթութեան ետուր մեզ. ‖ տէ՛ր ողորմեա՛ մեր պահեա՛։ Ո՛ր գաշխարհակեցոյց բազկատարած ութիւն խաչի քո՛ Քրիստոս Աստըւած. գաւազան զօրութեան ետուր մեզ. տէ՛ր ողորմեա՛։ — Փառք Հօր։ Ո՛ր ըզմեռանալն ի ճաշակմանէ վայրէին յանցանաց. կենդանոյ վայրկեանն կենագործեցեր. տէ՛ր ողորմեա՛։

— Այժմ և միշտ։ Ա՛յսօր նոր խորհել կոչի ցեանլք ի Քրիստոս. ազատեա՛լք արեամբ գառինն Աստուծոյ. պարբերա՛լք ընդ երկնայնոցն ասելով Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Մաղթանք. փառք հրաշափառ յարութեան. — Ինչ՝ չհամբարձաւ։

Ալէլուիա. Ցրոնկոն Ա2

ՅԱՒՈՏԱԿՈՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

Ա՛յսօր մեծ ա՛ւետիք Ադամայ նախահաւրն ետուաւ.

ամբի ար նբ՚ինչ՚ես լուանաու՛ եղե՛ւ քեզ յարուցանե՛լըն Քրիս-
տո՛ս ‖ Ա՛ստըւա՛ծ հաւրցըն մերոց։ Ա՛յսօր ձայն աւե՛տեաց
յեւանի գոչե՛ն լըսելիս զբսաւերքն իւրա՛մբերք տե՛ռաք
յարուցեա՛լ ըզյարութի՛ւնըն քո՛ ընդ Քրիստո՛ս Ա՛ստըւա՛ծ։
Ա՛յսօր հրեշտակք յե՛րկինց իջի՛ւանլ ասե՛ն գա՛ւեաթի՛ս
մա՛ռգիտե՛ն. յարեա՛ւ խանչի՛լեա՛ն և յաղո՛յց ըզձե՛ռ ընդ
ի՛նքեան՛ն Ա՛ստըւա՛ծ։

Գ. ՂՈՑԷՐ ‖ օրհնեցէ՛ք և բարձր ա՛պաւրէ՛ք ընդա՛մ յա՛-
յեաւա՛ն։ Ա՛յսօր Տէրըն մե՛ր յարեա՛ւ. և՛ կայք պա՛-
հեացո՛ւք ընդ հրեշտա՛կս. յաղթակա՛ն երգո՛ւմ օրհնեցէ՛ք։
Ա՛յսօր սիւն լո՛ւսոյ ծագեա՛ց. ա՛ւրըն եկեղե՛ցւոյ յարու-
ցեա՛լն ի մեռելո՛ց Քրիստո՛ս օրհնեցէ՛ք։

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ ԴՒ

Ա՛ստուածածի՛ն ասէ՛ր լո՛ւսոյ. ա՛ր մարմնո՛վ պա՛րա-
գրեալ ա՛ն՚ճառանա՛ր ծրնա՛ր ըզՏէրն Ա՛ստը՛ւա՛ծ ‖ զքե՛զ
բարե՛բանեա՛լ մեծացու՛ցանե՛մք։ Ո՛ւրա՛խ լեր և բեր-
կրեա՛ մա՛յր ե՛ւ կո՛յս. քա՛նզի ծնեա՛ւն ի կուսէդ ա՛յսօր
վերըւա՛ւն յարութեա՛մբ ծ՚ընա՛ւ ի կո՛յս գե՛ռնգա՛նէ՛ն.
զքե՛զ։ Ցընծա՛ և զուարճացի՛ր հարա՛ւն ի յե՛րկրի՛ ե՛ր-
կնից. քա՛նզի այսո՛ր երկնայնոցն իջի՛ւանլ տայի՛ն քեզ զա՛-
ւետիս յարութեան մե՛ռածնի՛ Որդւո՛յ քո՛. զքե՛զ։

Ի-ՀՈՎՀԱՆ Ա-Ե՛Ա. 3-Վ։ Ի. 1։ Եւ ի միաշաբաթո՛ւն։ 18։
Երէ՛ փառք յարութեան։ Գէղերէ Լուսապայծառ։

ՈՂՈՐՄՆԱ ԴՒ

Ա՛յսօ՛ր ըզպատե՛ւք չարչարանաց եղէ՛ց Ի՛սրաէլի փո՛-
խեցեր. ի՛ վե՛րկնութի՛ւն հոգւո՛ց զաւրի՛կ աւրը յարու-
թեա՛մբ քո՛ Քրիստո՛ս։ Ա՛յսօ՛ր ընդ արեւմո՛ւտս օրինակի՛ն
ա՛նցա՛ւ զառա՛ջնըն գնո՛ւմնոց. պարգեւեցե՛ր մե՛զ զա՛ռն
Ա՛ստուածո՛յ զարի՛ւնըդ քո՛ փրկակա՛ն։ Ա՛յսօ՛ր ընդ
անդրանկացն ազատութեա՛ն ա՛զատեցե՛ր ըզգերեալն.
պըտուղ կե՛նաց ընծի՛ացեալո՛ց և ա՛նդրանիկ մե՛ռելոց։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Դ

Ա՛յսօր հրճուանք ի յերկինս. աւրախանան ընդ մարդկան. որք լինիլ ի յերկնից ան աւետիս աշխարհի. ցընծացէք այսօր ‖ Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ա՛յսօր դուարթունեան ի վիմին. խընկարերից սուրբ կանանցն. փողէր ձայնիւ ցընծութեամբ պատմել աշակերտացն ասելով. ցընծացէք այսօր Քրիստոս: Ա՛յսօր վիմին հաւատոյ. եւ յուվհաննու սիրելւոյ. ընդ հակառակս ընթացեալ ի գերեզմանն յարուցելոյն. զոր տեսեալ պատմէին Քրիստոս: Ա՛յսօր եւ մեք զուարճացեալք. պայծառասցուք ոգնիւս. ընդ հաչտութեանն Աստուծոյ մի՝ մեանց արկցուք զիրկըս սիրով. եւ միաբան գոչեսցուք Քրիստոս:

Ա—օ— երէ՝ յարո՛ղեան է յոյնէն: Քո. Աասացուք:

Զինի Սուրբ Աստուածին զքինոս ղեկեցուցանել. Մաշ. Փրկել զմեզ: Քո. վասն լսելի: Քոհ. Օրհնութիւն և փառք: Ե՛ ելանէն է գո՛ս էկեղեցոյն խօսի՛ և ասիպօրնաս, խնկով և հոգեկո՛ւ, և ամենայն զարդո՛ւ. և պատանէն

ՇԱՐԱԿԱՆ Ա2

Ա՛յսօր յարեաւ ի մեռելոց փեսայն: Երէ՛ գո՛ն: 529:

ՍԱՂՄՈՍ ԿԴ. Ի ՂԱ՛

Փա. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն: 353:

Ալէլուիա. ալէլուիա:

Ընթերցուած ի գործոց առաքելոց: Ա. 1

Զբանն առաջին զոր արարի՝ վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ զորս ընտրեացն, և վերացաւ: Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց, ի բազում ապացուցանաս, յաւուրս քառասուն երևեալ նոցա և ասել վասն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հասցի՝ պատուէր ետուր նոցա յերուսաղեմ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուք յինէն: Զի

Յովհաննէս մկրտեաց ի Յուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մնաուցեալ հարցանէին զնա և ասէին. Տէր, եթէ ի ժամանակի սմա յայսմիկ հաստացանելոց իցես զարքայութիւնն Իսրայելի: Ասէ ցնոսա. ոչ է ձեզ գիտել ըժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան. այլ առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն սրբոյ ի վերայ ձեր, և եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիա, և մինչև ի ծագս երկրի: 8:

Ջոյնէ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Հասեալ կայեն ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ:

Ալէլուիա, Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ԺԶ. 2:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արեւագալն, և ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ ըզգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան: Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին ուր եդին զնա: Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա և ցՊետրոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ: Եւ երթեւ լուան՝ եղին և փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին: 8:

Եւ շուրջ ֆալով ելնելեցեաւ, նախ երևաւ յարեևելեան կողմն ասելով

ՇԱՐԱԿԱՆ Ա2

Ընդ լուսանալ միաշաբաթին: Ա. երես+ պատ: 28:

Ջոյնէ Օրթի Դէպ յարեևելս կողմս:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԹ. 38:

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ որ յԱրի-

մաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ վասն ահին Հրէից, զի թարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս. եկին և թարձին զնա: Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս՝ ի գիշերի զառաջինն, և երեր ըզմուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լտերս հարիւր: Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք խնկովքն հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել: Եւ էր ի տեղւոյն յորում խաչեցաւ՝ պարտէզ, և ի պարտիզի անդ դերեզման նոր, յորում ոչ ոք երբեք էր եդեալ: Անդ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն, եդին զՅիսուս: 42:

Եւ եղեն յաւելուածք կողմն ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԱԿ

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստ: Ա. երես պոռն: 29:

Զկնի Օրթի Դէպ յաւելուած երգոյ:

Արդյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԻԳ. 50:

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար, սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, յԱրիմաթիայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ. սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. և իջուցեալ զնա պատեաց պատանուակաւ, և եդ ի կառաջոյ գերեզմանին, ուր չէր բնաւ ոք եդեալ: Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր. և երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ, տեսին ըզգերեզմանն, և որպէս եղաւ մարմինն նորա: Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս, և ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին: 56:

Եւ գան ի հարուածն կողմն ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԲՁ

Ի գերեզման զս կանխեցին կան: Ա. երես պոռն: 32:

Զկնի Օրթի Դէպ ի հարս երգոյ:

Արդյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ԺԵ. 42:

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրև երեկոյ եղև, քանզի ուրբաթ էր՝ որ ի շաբաթըն մտանէր, եկեալ Յովսէփ որ յԱրիմաթիայն էր, այր

պարկեշտ, նախատրաբ, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի: Եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարև այնչափ վաղ մեռաւ: Եւ իբրև ստուգեաց ի հարիւրապետէ անտի, չնորհեաց զմարմինն Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ի վիմի, և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին ուր եդաւ: Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ՝ չոքան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: ԺԶ. 1:

Եւ գտան ի հեռուստին կոչի ասելով

ՇԱԲԱԿԱՆ ԲԿ

Քո յարութեանդ փառք վայելէ: Ա· Էքէ· պառն: 36:

Ջկնէ Օրթի Դէզ է հեռու կոչտա:

Արդոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԸ. 57:

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն Յարիմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի. սա մատուցեալ առ Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց: Այդ էր Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին: Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. ասէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև յերից աւուրս, զուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց, և լինիցի

յեաին մոլորութիւնն չար քան զառաջինն : Աւե ցնոսա Պիղատոս . ունիք զզօրականն , երթայք զգուշացարուք որպէս և գիտէք : Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին , և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն : 66 :

Եւ ապա ֆան յոպեանն , յոբեմրեան կողմն ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉԻ ԱՋ

Որ զանարատ բազուկս քո : Ա . երէ պոռ : 156 :

ՋՆՆԻ ՍԱՂՄՈՍ Դ . ՅԱՅՆԻ .

կՅ . Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և եռաւր ուրախութիւն սրտից մերոց :

ՓԽ . Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած : 438 :

ՋՆՆԻ ԱԼԵԼՈՒԻԱ ՕՐԻՒ

Արդ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԺԹ . 16 :

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա , զի ի խաչ ելանիցէ : Եւ նոքա առեալ տանէին զնա . և բարձեալ էր ինքնին գխաչափայտն , և ելանէր ի տեղին՝ որ անուանէր գաւգաթան , և կոչէր երբայեցերէն Գողգոթա . ուր և ի խաչն խակ հանեին զնա , և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի , և ի մէջ զՅիսուս : Գրեաց և տախտակ մի Պիղատոս , և եդ ի վերայ խաչին . և էր գրեալ . Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից : Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից , զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս . և էր գրեալ երբայեցերէն՝ դաղմատերէն և յունարէն : Ասեն գՊիղատոս քահանայապետքն Հրէից . մի՛ գրեր թագաւոր Հրէից , այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից : Պատասխանի ետ Պիղատոս . զոր ինչ գրեցի՝ գրեցի : 22 :

Աղ . Սրբ . տրտղ . Եւ ևս խաղաղութեան : Վասն ի վերուստ : Եւ պեռնոփրքն գանգատապանն . և ՋՆՆԻ՝ ֆուղ . Սուրբ խաչիս : Աղ . Պահպանեա :

Եւ ի պառնալն յեկեղեցին՝ ախոնին երէց Նորաստեղծեալ Բանն : Քր . Խնդր : կնցս : ՅԱՅՆԻ : Աղ . Քոյ ամենազօր և հրաշալի յարութեանդ . ասս ՋՆՆԼ ՅՀամբարձումն :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ի պատն Հաճո Հոդովին է գետառն Եփեղեցոյն, և ասէն

ՍԱՂՄՈՍ ԿԲ. Ի ԸՆԹ-

Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոնի և : 353 :

ըմբռնեցուած ի գործոց առաքելոց: Ա. 1:

Զբանն առաջին՝ զոր արարի վասն ամենայնի : 533 :

Զոյնէ- Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ :

ՉՈՆԷ Ալէլուիա Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԲ. 13 :

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գիւղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ, և էր անուն նորա՝ Եմմաուս. և նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց : Եւ եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճել՝ և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ և երթայր ընդ նոսա : Եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա : Եւ ասէ ցնոսա. զինչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս մինչդեռ գնայքդ, և տրտմեալ էք: Պատասխանի ետ մի ումն ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա. դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ : Եւ ասէ ցնոսա. զինչ : Եւ նոքա ասեն. զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղև այր մարգարէ, հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն. ա՛րդէօ մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու, և հանին զնա ի խաչ : Մեք սակն ունէաք թէ նա է որ փրկելոցն է գիտասել. այլ և հանդերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է յորմէ հետէ այն գործեցաւ: Այլ և կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, և ոչ գտին զմարմինն նորա. եկին և ասեն, թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնեռանէ թէ կենդանի է: Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս՝

որպէս կանայքն ասացին, բայց զնա ոչ տեսին: Եւ նա ասէ ցնոսա. ո՛վ անմիտք և հեզդասիրտք ի հաւատալ յամենայնի՝ զոր խօսեցան մարգարէքն. ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի, և մտանել ի փառս իւր: Եւ սկսեալ ի Մովսէսէ և յամենայն մարգարէիցն՝ մեկնէր նոցա որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ: Իբրև մերձեցան ի գիւղն յոր երթային. և նա պատճառէր հեռացոյն ևս ուրեք երթալ: Եւ բռնագատեցին զնա և ասեն. առ մեզ ապիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս: Եւ եմուտ ապանել անդ ընդ նոսա: Եւ եղև ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, և բեկ և եա նոցա. և նոցա բացան աչք և ծանեան զնա, և նա եղև ի նոցանէ աներեւոյթ: Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ խակ և սիրտք մեր ճարէին ի մեզ, մինչ խօսէր ընդ մեզ զճանապարհին, և որպէս բանայր մեզ զգիրս: Եւ յարուցեալ նոյնժամուն դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զմիառաքեանսն և զորս ընդ նոսայն էին, և ասեն՝ թէ արդարև յարեաւ Տէր և երևեցաւ Սիմովնի: Եւ նոքա պատմէին զայն որ զճանապարհէնն, և թէ զիարդ եա ծանօթս նոցա ի բեկանել հացին: 35:

Եւ ելանէն խալխ և աւետարանաա, ինկուվ և մոխինօվ, և ուխնայն ղարդոսվ ի գոռա, ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԱՋ

Ա՛յսօր զանկիկ մեր գնանամբ Քրիստոսի. արասցո՛ւք աճն ցընծութեամբ. նորոգեալքս ի հնութենէ մեղաց անկրով ‖ Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ա՛յսօր հրեշտակքն լուսափայլ ի յերկինից իջեալ. զարհուրեցո՛յց ըզպահապանան. և աւետիս կանանցն քարոզէր անկրով Քրիստոս: Ա՛յսօր նոքա խրատէլ կոչեցեալք ի Քրիստո՛ս. պատասխա՛նք աբեամբ զառիոնն Աստուծոյ. պարծացո՛ւք ընդ երկնաւորսն անկրով Քրիստոս:

ՋԱՒ Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ի. 1:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ի միաշաբաթուէն Մարիամ Մագդաղենացի գայ ա-

առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման անդր, և տեսա-
նէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին: Ապա ընթա-
նայ և գայ առ Սիմովն Պետրոս և առ միւս աշակերտն
զոր սիրէր Յիսուս, և ասէ ցնոսա. բարձին զՏէր ի գե-
րեզմանէ անտի, և ոչ գիտեմ ուր եդին զնա: Ել Պե-
տրոս և միւս աշակերտն՝ և գային ի գերեզմանն. ընթա-
նային երկոքեան ի միասին: Եւ միւս աշակերտն յառա-
ջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ ի
գերեզմանն. և խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ
կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: Եկն և Սիմովն Պե-
տրոս՝ որ գայր զկնի նորա, և եմուտ ի գերեզմանն. և
տեսանէ զկտաւսն զի կային անդ. և վարշամակն որ էր
ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն
ծալեալ ի մի կողմն: Յայնժամ եմուտ և միւս աշակեր-
տըն, որ եկեալ էր յառաջագոյն ի գերեզմանն, հաւա-
տաց. զի չէ՛ւ գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա
ի մեռելոց յառնել: Զոգան դարձեալ առ միմեանս աշա-
կերտքն: Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և
լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն, և
տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին՝ մի
ի մնարից և մի յանուսից՝ ուր կայր մարմինն Յիսուսի:
Եւ նոքա ասեն ցնա. կին դու, զի լաս: Ասէ ցնոսա.
զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ ասեմ՝ և ոչ գիտեմ
ո՛ւր եդին զնա: Զայս իրրև ասաց, դարձաւ ի թիկունս
կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր, և ոչ գիտէր թէ
Յիսուս իցէ: Ասէ ցնա Յիսուս. կին դու, զի լաս, զո՞
խնդրես: Նմա այսպէս կարծեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ.
ասէ ցնա. ակր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ո՛ւր
եդեր զնա, զի ես առից զնա: Ասէ ցնա Յիսուս. Մա-
րիամ: Եւ նա դարձաւ և ասէ ցնա եբրայեցերէն. բաբ-
բունի. որ թարգմանի՝ վարդապետ: Ասէ ցնա Յիսուս.
մի՛ մերձենար յիս, զի չէ՛ւ ես եղեալ եմ առ Հայր իմ. այլ
երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնոսա. ելանեմ ես
առ Հայրն իմ և առ Հայր ձեր. և Աստուածն իմ և Աս-
տուած ձեր: Գայ Մարիամ Մագդաղենացի՝ և պատմէ
աշակերտացն եթէ տեսեալ նա զՏէր, և զայս ինչ ասաց
ցնա: 18։

ՇԱՐԱԿԱՆ ԱՋ

Սո՛ւրբ խաչն օգնակա՛ն հաւատացեալից. կանգնեցա՛ւ ի յերկրի յաղթո՛ղ թշնամւոյն. եկա՛յք ժողովուրդք երկրպագեսցո՛ւք: Ա՛րարիչն Ա՛ստուած բարձրացա՛ւ ի խաչի՛ն. եւ զմեռեալս մե՛զօք փայտի՛ն ճաշակմանն. ի՛ սմա՛ նո՛րոգեալ կեա՛նդանացոյց: Ի՛ միւսանգամ գա՛ղաեան Ա՛ստուա՛ծ ծո՛ւրս ունի՛ն. սո՛ւրբ խաչն ե՛րեւի՛ եւ լուսաւո՛րէ. զի՝ նա՛ է յոյս հաւատացեալից:

ՍԱՂՄՈՍ Դ. ՅՈՒՆԻՍ.

Կ3. Նշանեցաւ ա՛ռ մեզ լոյս երեսաց քոց. և հաւր ուրախութիւն արարից մերոց:

Փս. Ի կարգալ իմում լուար ինձ Աստուած: 438:

ՋՆԻՒ ՕՐԹԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԹ. 31:

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին ապականիցին մարմինքն մինչև շաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ, աղաչեցին զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին: Եկին զինուորքն, և զառաջինոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա ի խաչն ելեալ էր: Բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա. այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, և վաղվաղակի ել արիւն և ջուր: Եւ որ տեսան՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ՝ թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք: Այս եղև, զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի. և դարձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն: 37:

Եւ տրուղ Սրխոաքն. Եւ ևս խաղ: Վասն ի վերուստ: Եւ պետնոտքըն ջանքասպանն և ջուր խոցն աչխարհի:

ՋՆԻՒ Բ. Սուրբ խաչիս: Աղ. Պահպանեա:

Եւ է պատնէշն յերկնչեցին տրուղ Սրխոաքն.

Եւ ևս խաղ: Բահ. Օրհնութիւն: Եւ ոտ ասէն. Խոնարհեցո և Ապրեցո:

ՄԵՍԵԻ Յ–ՐՈՆԵԱՆ ԱՋ. ՓՈՐՁ. Ասացուած։

ՀԱՄԲԱՐՁԻ Ա Ձ

Ընդ լուսանալ միաշաբաթին կան։ Ա· ԵՐԵ+ պոան։ 28։

Ջինի Փոր· վ՝ան խազաղ։ Աղ· Հայր գթած։ Ե– ապ–

ՍԱՂՄՈՍ ՃՂԻ· Յ–Ն–

Գովեա երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիովն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ո եզ զսահմանս քո ի խաղաղութիւն, պարարտու– թեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր, վազվազ ընթանան պատ– գամք նորա։

Դնէ զձիւն որպէս զաստ, և զմէգ որպէս փոշի ցա– նեաց։

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նո– րա ո՞ կարէ կալ։

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շնչեացին հողմք և զնաացին ջուրք։

Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զի– բաւունս Իսրայէլի։

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաս– տանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Ալէլուիա Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ի· 19։

Վ՝ան յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթուջ աւուրն, և դրօք փա– կելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յիսուս և եկաց ի մէջ նոցա, և ասէ ցնո– սա· ողջոյն ընդ ձեզ։ Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռսն և զկողս իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ· ողջոյն ընդ ձեզ· որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրև ասաց, փչեաց ի նոսա և ասէ· առէք Հոգի սուրբ· եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լի– ցի նոցա· եթէ զուրբ ունիցիք, կալեալ լիցի։ Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն երկուորեակ,

ոչ էր ընդ նոսա յորժամ եկին Ցիսուս : Ասէին ցնա այլ աշակերտքն , եթէ տեսաք զՏէր : Եւ նա ասէ ցնոսա . եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բևեռացն , և արկից զմատունս իմ ի տեղիս բևեռացն , և մխեցից զձեռս իմ ի կողս նորա , ոչ հաւատամ : 25 :

Ապ· Քաք· Խնդր : կնցս : Յայնէ· Աղ· Թագաւոր խաղ :

Ցայս ցՔնանդս և դնել ցկէս·ուկէ երէսդ·ոնէն , է ՀՀչէրէ երէ՞ Առաւօտ լուսոյ : Քարո՞ յոտոտօդոտ և յէրնէկոյ · Աստացաք : ՑԷրնէկոյ Մէսնէդէ , Ցարոնէն է Յայնէն : կնցս և ՍԱՂՄՈՍ՝ Յայնէ· — Եւ դնել ցՀմբէրդոն Աոտօդոտ երէ՞ Ցարոնէն է Յայնէն : Եւ դնել ցՊԼնոէկոպէ Արարչական ոչ ոսէ , Բայց է կէս·ուկէ ՀնօրտատեզծեսՀ ոտտ :

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ· ԱԿ.

ՄԵՌԵԼՈՑ Ի·

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՂ

Ասացեալ ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութիւն : 29 :

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱՉ

Օրհնեալ ես դու Քրիստոս որ : Էր տոքտն : 130 :

ՍԱՂՄՈՍ ԿԴ· Յայնէ ·

Քնզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն և : 353 :

Արդոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԳ· 1 :

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Բայց ի միաշաբաթիուն վաղ քաջ ընդ առաւօտն՝ եկին ի գերեզմանն , բերին զխունկան զոր պատրաստեցին , և այլ կանայք ընդ նոսա : Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի , և մտեալ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի : Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ , և ահա արք երիս առ նոսա ի հանդերձս լուսաւորս : Եւ իբրև գահի հարան՝ և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր , ասեն ցնոսա . զի

*խնդրեք զկենդանին ընդ մեռեալս , չէ աստ , այլ յա-
րեաւ : Յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի
Գալիլեա , և ասէր՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել
ի ձեռս մարդոց մեղաւորաց , և ի խաչ ելանել , և յեր-
րորդ աւուր յառնել : Եւ յիշեցին զբանն նորա : Եւ
դարձան պատմեցին զայս ամենայն մեռաւանիցն , և այ-
լոցն ամենեցուն : Եւ էին Մարիամ Մագդաղենացի և
Յովհաննա և Մարիամ Յակովբայ և այլք ընդ նոսա՝ որ
պատմեցին զայս առաքելոցն . և երևեցան առաջի նոցա
շաղփաղփութիւն բանքն նոցա՝ և չհաւատային նոցա :
Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն , և հա-
յեցեալ տեսանէ զկտաւան լոկ՝ զի կային . և գնաց ընդ
միտս զարմացեալ , թէ զինչ եղև : 12 :*

Բ֊ր· Խնդրեացուք : կենդ : Յ֊նէ֊ : Աղ· Բուժ ամենապօր :

Յ Ե Բ Ե Կ Ո Յ Ի Ն

*Մինչև ցկէ֊բ֊կէ Երբ֊բ֊ը֊ընեան՝ ոչ ասէ ես առ Աստուած ,
այլ յեաւ Հայր մերն՝ ՍԱՂՄՈՍ Յ֊նէ֊ :*

ՍԱՂՄՈՍ ԿԴ· Յ֊նէ֊ .

Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն : 353 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Ժ.Զ· 2 :

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գեր : 534 :

*Ես յեաւ ես֊ենոյ ես֊եբ֊ընին՝ Բ֊ր· Եւ ևս խաղաղու-
թեան : Բ֊հ· Օրհնութիւն : Խոնարհեցո Ե Ապրեցո :*

ՀԱՄԲԱՐՁԻ Ա Կ

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած : Ա· Երե֊ պոե֊ն : 29 :

Ես֊յեաւ Համբարձեալն· Բ֊ր· Վասն խաղ : Աղ· Հայր զթած :

ՍԱՂՄՈՍ ՃՁԴ· Յ֊նէ֊ .

Գովեա Երուսաղէմ զՏէր , և օրհնեա զԱստուած : 542 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ· 1 :

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Բայց ի միաշաբաթուն վաղ քաղ ընդ առաւօտն : 543 :

Բ֊ր· Խնդր : կենդ : Յ֊նէ֊ : Աղ· Թագաւոր : Հայր մեր :

Ա · ԵՐԵՔՇԱԲԱԹԻ · ԲՋ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՋ

Ի վերակացութեան քո կանխեցին կանայքն զիւղս : 32 :

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Ա2

Պայծառացիր եկեղեցի հրճուանօքաց յարութեամբ Քրիստոսի՝ որ յարեաւն այսօր ի մեռելոց . զբոլոսկեաց զքեզ խաչին ընդ[1]ուր՝վ ‖ Ա՛սաւուած հարցըն մերոց : Ա՛յսօր նպարայ յինքեան ընկերծանուցին բնաւ մանկ . քանզի որ յԱդամ մեռանելքն էին կենդանացան յարութեանմբ Քրիստոսով Ա՛սաւուծոյ : Ա՛յսօր ցընծան մանկունք առաքեսոյ քանզի Քրիստո՛ս յարուցեալ վարեաւոյց զսուզ եւ զտրտմութիւն . եւ լուսաւորեաց զաշխարհս Ա՛սաւուած :

Գ · Ըզտէր օրհնեցէ՛ք ‖ բա՛րթր ապրէ՛ք ըզնա յաւի՛տեան՝ն : Ա՛յսօր է զոր արար Տէր եկայք ցընծացո՛ւք . ասեցէ՛ք ո՛ւրախութեանմբ մի՛նչև յանկիւնս սերդանդ՛ոյ բա՛րթր : Բարձրացուցէ՛ք ըզտէր Ա՛սաւուած մի՛ր զո՛վ մարգարէ՛ն . երկրպագո՛ւցէք պատուանդանի՝ն ոտից նորա . որ երանի ըզդաւանկնէ՛ք մանու ի մէ՛ջ՝նէ բա՛րթր :

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ Ա2

Որ զաւետս Հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն : 193 :

ՈՂՈՐՄԵՆԱ Ա2

Թո՛ւնա իմ ‖ Ո՛ո՞՛՞՛՞՛

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ Ա.2

Ի՝ բարձանէց ‖ Փանա՛ռք յարութեան քո Տէր: Պա՛տրանօք նախատանեցեր մերկացաք ի լուսոյն. իսկ յարութեա՛մբ Քրիստոսիդ ընդգեցաք զանմահութիւն փանա՛ռք: Խաբանօք փայտին ճաշակեցաք ըզմահ. իսկ ի փայտէ՛ն կենաց նորոգեցաք ամենեքեան փանա՛ռք:

ՍԱՂՄՈՍ Ե

Կ3· Տէր որպէս զինու հաճութեամբ քով պատկեցեր զմեզ:

Փխ· Բանիւ իմոյ ունկն դիր Տէր, և ի միտ առ զաղաղակ իմ:

Եայեաց ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և Աստուած իմ:

Ես զքեզ աղաչեմ Տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել առ քեզ:

Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն, և ոչ բնակեսն առ քեզ չարք, մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց:

Ատեցեր զայնոսիկ որ գործեն զանօրէնութիւն, կորուսանես զամենեսեան որք խօսին սուտ:

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու Տէր, այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից ի տունդ քո, և երկիր պագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո:

Տէր առաջնորդեա ինձ յարդարութեան քում. վասն թշնամեաց իմոց ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո:

Զի ոչ գոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են:

Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն:

Դատեա զնոսա Աստուած, զի անկցին ի խորհրդոց իւրեանց· ըստ բազում անպարշութեան նոցա մերժեա զնոսա՝ զի դառնացուցին զքեզ:

Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ, յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցես դու ի նոսա:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քո, զի օրհնեա-

ցնս դու զարդարն. Տէր, որպէս դինու հաճութեամբ քով պահեցեր զմեզ :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ. 13 :

Յնա յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին : 538 :

Քարոզ. Խնդրեսցուք : կեցո : Աջող. Քառ ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂՄՈՍ Ե

Կց. Տէր որպէս դինու հաճութեամբ քով պահեցեր զմեզ :

Փխ. Բանից իմոց ունկն դիր Տէր, և ի միտ : 546 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ. 1 :

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն : 543 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԲՁ

Ի գերեզման քո կանխեցին կան : Ա. Երէ+ փառ : 32 :

ՍԱՂՄՈՍ Ի

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն, ի փրկութեան քում ցնծացէ յոյժ :

Ցցանկութիւն սրտի նորա եառուր նմա, և զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ :

Ժամանս սրարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո, և եդեր ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ :

Կեանս խնդրեաց ի քէն, և եառուր նմա ընդ երկայն աւուրս, յաւիտեանս յաւիտենից :

Մեծ են փառք նորա ի փրկութեան քում, զփառս և զմեծվայելչութիւն դիցես ի վերայ նորա :

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց :

Թագաւոր յուսացաւ ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի :

Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո :

Դիցես զնոսա որպէս հնոց ի հուր՝ ի ժամանակի երեսաց քոց :

Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա :

Պտուղ նոցա յերկրէ կորիցէ, և զաւակ նոցա յորդւոց ի մարդկանէ ։

Խոտորեցան ի քէն չարութեամբ, խորհեցան խորհուրդ զոր ոչ կարացեն հաստատել ։

Արասցես զնոսա հալածեալս, ի միացուածս քո պատրաստեսցես զերեսս նոցա ։

Բարձր լեր Տէր, ի զօրութեան քում. օրհնեսցուք և աղմա ասասցուք զօրութեան քում ։

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու ։ ԻԴ· 13 ։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին ։ 538 ։

Քարդ· Խնդրեսցուք ։ կեցո ։ Աղքե· Թագաւոր ։

Ա · ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ · ԲԿ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲԿ

Քա յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ ։ 36 ։

ՅԱՒԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱՋ

Օրհնեալ ես Տէր ‖ Աստուած հայրենեաց մերոց ։ Որ բարձրացար ի խաչի ի վանս անդի մարդկան. ապաքեա զքո զդրմութիւնդ ի պահօճնեայս և յերկրպագեա Աստուած ։ Որ զամենայնէն յանձն առեր վասն մեր բարեբան. խնդնայեա յարքայեայ քո յարութեանդ քո Աստուած ։

Գ· ԸնդՏէր օրհնեցէք ‖ բարձր արարչէք ըզնա յաւիտեան ։ Որ յանեապատական յայնմ նըմանի բարեբանեալն ի հրեշտակաց. կամաւոր չարչարանաց համբերմանէն խոյի մանկունս բանին. անդադար օրհնեցէք և գովեցէք բարձր ։ Եւ ինձաւ ի զերեզմանն անապականն և աւրբ մանկունս վ. զի նորոգեսցէ ըզհրաշափառութիւն մեռանելութեան մերոյ յարութեանն իւրով· օրհնեցէք և գովեցէք բարձր ։

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ Ա.Զ

Մնծացուցանեմք զքեզ որ ի Հօրէ Բանդ և ան։ 195։

ՈՂՈՐՄՆԱ Ա.Զ

Ա՛ղաչեմք քեզ Հօր էարկից քո խաչ ելեր կամաւ Հօր ո՞ղորմեա։ Ա՛նմահութեանց արժանի գրիսաոս. ի գերեզմանն ի ջեր սրպէս մարդ ողորմեա։ Եւ յերրորդ աւուր յարեար. յոյս յարութեանն ցուցար մեզ ողորմեա։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա.Զ

Ընդ կանանցն իշխեալքան առ քեզ առաւծամբք կենդանիդ յաւիտենից գրիսաոս ընկալ և լսեր. փոխառակ խնդրեն զծրհնաբանութիւնս։ Փոխառանիկ սիրդ աւետաւոր զբարիսնայն. զիթելիւն քո մեզ հանդիպեսցի յաւուր գալստեանդ. մխիթարել ըզհոգիս եւ լուսաւորել։ Ընդ նմա՛ն աւետարան նուիրեա՛մք քաջ բոզիճ՛՛ացո՛ւք. ընդ՛՛՛ միայն ըզաքանչելի՛՛ սեպ. որ յարիսոյ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ։

ՍԱՂՄՈՍ ՃՇԻ

Գովեա երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած։ 542։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ ԻԴ. 36։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի գրիսաոսի։

Մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի միջ նոցա՝ և ասէ ցնոսա. խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ՝ մի՛ երկնչիք։ Եւ զահի հարեալ երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել։ Եւ ասէ ցնոսա. զի խռովեալ էք, և ընդէր խորհուրդք գալանին ի սիրտս ձեր. տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. չօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։ Եւ զայս ասացեալ՝ ետոյց նոցա զձեռսն և զոտս։ 40։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աջիւ. Քում ամենազօր։

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂՄՈՍ ՃՇԻ

Գովեա երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած։ 542։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ . 13 :
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :
Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին : 538 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԲԿ

Քա յարութեանդ փառք վայելէ : Ա · Եզե+ պոռն : 36 :

ՍԱՂՄՈՍ ԿԴ

Փխ · Քեզ վայելէ օրհնութիւն Առաւած ի Սիովն : 353 :
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ . 36 :
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :
Մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց : 549 :
Քոչող · Խնդրեցուք : կեցո : Աղեխ · Թագաւոր :

Ա · ՀԻՆԳՇԱԲԱԹԻ · ԳԶ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳԶ

Իւզաբեր և սուրբ կանայքն ողբալով փութա : 38 :

ՅԱՌԱԻՕՏՈՒ

ՀԱՐՑ Ա2

Ընդ երիս մա՞նկունան ծրհնաբանեն . բարե՛բա-
նեմք ըզքեզ Քրիստոս ‖ Աառաւա՛ծ հաւրցըն մերոց :
Ո՛ր էջեր ի յերկինից խոնարհութեամբ . եւ խաչի՛
համբերեալ փըրկեցեր ըզմեզ . Աառաւա՛ծ : Թանզեցար
ի նոր ի գերեզմանն . եւ յարուցեա՛լ նորոգեցեր ըզ-
աիեզերս Աառաւա՛ծ :

Գ· ԸնդՏէր ծրհնեցէ՛ք ‖ բարձր աշխարք ըզնա՝ յաւի-
տեան : Ջխաղաւաղն անհամբ եւ զԱառաւաժըն յաւի-
տեա՛նից . ամենեսի՛ն ժողովուրդք բարեբանեցո՛ւք
բարձր : Ո՛ր մանուամբն ըզմահ խափանեաց եւ յարու-
թեամբն իւրով զյարութիւն մեզ պարգեւեա՛ց բարձր :

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Ա2

Ո՛ր ըզհրեշտակին ընձայեալն . լուեա՛լ հիացեալ
բերկրեա՛ցան . ‖ բարեխաւսեա՛ց . վասըն մե՛ր . մեք ծրհ-

նահանջ՝ մի զօրհնեա՛լդ ի կա՛նայս։ Ո՛ր ընդհատն Աստուած յորժամ՝ քո՛ւմ կրնցեր անկիզելի մարմնո՛վ. բարեխօսեա՛՛։ Ո՛ր զաղջ չափելին յէից ի գերկնս քո բարձեալ դիեցուցեր կաթնա՛՛ն. բարեխօսեա՛՛։

ՈՂՈՐՄՆԱ Ա.Զ

· Ո՛ր խո՛նարհեցար ի յերկինից եւ ի՛նձ ի յերկիր. մրաժի՛ն Որդի եւ Բա՛նդ Աստուած ‖ ողորմեա՛՛ բանեաւո՛ր հօտի։ Ո՛ր կա՛նգնեցեր ըզխա՛չ քո ի մէջ երկրի. եւ ելեա՛լ բարձրացար փըրկեցեր ըզտի՛եզերս. ողո՛ր։ Թա՛ղեցա՛ր ի նո՛ր ի գերեզմանի՛ եւ յարո՛ւցեալ յերրո՛րդ աւուր ի յերկինս համարձաւ. ողո՛ր։

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ Ա.Զ

Ո՛ր անճա՛ռ էա՛ռնեամբ Հո՛րդ ես փառակից. չարչարի՛լ մարմնո՛վ յանձն առեր վասն մե՛ր. ‖ մի՛շտընջենաւո՛ր ո՛րհնեա՛լեամբ ի հրեշտակաց օրհնեա՛լ ես Տէ՛ր։ Ո՛ր էա՛կդ ես ընդ Հո՛ր եւ սուրբ Հոգւո՛յն. խա՛չեցար և թա՛ղեցար կամաւ Հո՛ր վասն մե՛ր. մի՛շտընջենաւո՛ր։ Ո՛ր միւսանգա՛մ գա՛լոց ես հայրե՛նի փառա՛ք. չնո՛րհելով առաւո՛տապէս յարութի՛ւն ախեղերաց. յամենայն արարածո՛ց յաւիտենի՛ց օրհնեա՛լ ես Տէ՛ր։

ՍԱՂՄՈՍ Դ.Ը

ԿՅ · Բարձր արարէ՛ք զՏէր Աստուած մեր. երկիր պագէ՛ք պատուանդանի ոտից նորա, զի սո՛ւրբ է։

ՓԽ · Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստեա՛ւ ի քրովբէս, սասանեցաւ երկիր։

Տէր ի Սիո՛ն մեծ է, և բարձր է ի վերայ ամենայն ժողովրդոց։

Խոստովան եղիցուք անուան քո՛ւմ մեծի՛, զի ահաւոր և սո՛ւրբ է, և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ։

Դո՛ւ պատրաստեցեր ուղղութի՛ւն, զիրաւունս և զարդարութի՛ւն Յակովբայ դո՛ւ արարեր։

Բարձր արարէ՛ք զՏէր Աստուած մեր, երկիր պագէ՛ք պատուանդանի ոտից նորա, զի սո՛ւրբ է։

Մովսէս և Ահարոնն երիցունք նորա, Սամուէլ ընդ այնոսիկ որ կարգան զանուն նորա :

Կարգային առ Տէր և նա լսէր նոցա, և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա :

Պահէին զվկայութիւն նորա և զհրամանս զոր ետ նոցա :

Տէր Աստուած մեր, դու լսէիր նոցա · Աստուած, դու քաւիչ լինէիր, վրէժխնդիր ի վերայ ամենայն գործոց նոցա :

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք ի լեառն սուրբ նորա, զի սուրբ է Տէր Աստուած մեր :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ե · 1 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իբրև նըստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր. Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից : Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին : Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր : Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին : Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գըտցեն : Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն : Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին : Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից : Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին : 12 :

Բ·բոշ· Խնդրեսցուք : Կեցո : Աղաչ· Քոմ ամենազօր :

ՅԵՐԿՈՅԻՆ

ՍԱՂՄՈՍ ՂԸ

Կց · Բարձր արարէք զՏէր Աստուած մեր : 551 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԻԴ· 36 :

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Մինչ դեռ դոյն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց : 549 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԳՁ

Իւղաբեր և սուրբ կանայքն ողբալ : Ա· Երե+ պառն : 38 :

ՍԱՂՄՈՍ ԺԴ

Տէր ո՛վ կացցէ ի խորանի քումմ, կամ ո՛վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո :

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում :

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում նա ոչ արար :

Նախատինս ի մերձաւորաց նա ոչ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործ :

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, երդնու ընկերի իւրում և ոչ սուտ :

Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ, կաշառս ի վերայ իւրաքանչ ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան :

· Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ե . 1 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իրրև : 552 :

Բ·ԲՂ· Խնդրեսցուք : կեցո : Աչք+ · Թագաւոր :

Ա · ՈՒՐԲԱԹ · ԳԿ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳԿ

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն : Ընդ յառնել : 42 :

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱՁ

Լո՛յզ ո՛ր ի հրեղէն յամթոռ բարձրացեալ համեցիր երեքտասներեան ձայնիւ ի գանուց հոգեղինաց օրհնութիւնս. ‖ Ա՛ստուա՛ծ հաւրցդն մերոց : Պատկերացկից եղեր հոգեղէն բնութեանդս. մարդասիրապէս գերթացար կուսական ծնընդեամբդ անպատեցեր զմեզ Ա՛ստուա՛ծ : Քանզի միշն յանցանօք ամենեքեան մեռանաք. ա՛յլ ի քո՛ւէդն քո Քրիստոս ամենեքեան նորոգեցաք ի փառս. Ա՛ստուա՛ծ :

Գ. Ըղձեր ‖ օրհնեցէք և բա՛ղթեր արարէ՛ք ըղնա յա՛ւիտեան։ Որ բանիւաղ հանդիպի յաներեւութեան ի յաթոռ ըզմեզ խաչի ի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք։ Եւ ի կաղանդոն արեւուն աղբերէն. նորոգեցան արարածք եւ անմահացան. օրհնեցէք։

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ Ա.

Զքեզ երեւեալ դուն առ եղեկիէլ մարգարէիւ։ 196։

ՈՂՈՐՄՆԱ Ա.

Ա՛նըսկիզբըն բանդ անբաժանելի ծընանիդ Հօր. որ վասըն մեր մարմնացար ի կուսէն. ըզմեզ խաչի ի յանձն առեր և թաղեցա՛ր յերկրի։ Ա՛յսօր զանմահ և զանապական մարմինըն տեսանն. կա՛ռնայքն որպէս մեռեալ խընկե՛լ խընդրէին. այլ հրեշտակին ձայնեալ ասէր. զի խընդրէ՛ք ըզկենդանին ընդ մեռեալս։ Նա՛ ըզԹնառնէն կանգնեց և զդժոխս անէրեաց. յարթուցեալ ի մեռելոց Քրիստոս Աստուած. պարգեւէ ազգի մարդկան զմեծ զոր՛մբմութիւնն։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա.

Սոսկալի տեսիլ հրեշտակին. ի վանահա՛ր քո գերեզմանին. ընդպահապատ նորն զարհո՛ւրեցոյց։ Խմանալիդն մարմնական ձայնի՛ւ. բարբառէ՛ր ա՛ռ սո՛ւրբ կանանցն փարատեցոյց զուզ եւ զալրո՛մութիւն։ Ո՛վ կանայք ըզգնաք աստուածասէրք. զամենեցո՛ւն զոյն եւ զյարութիւն. ընդ մեռեալսն պէ՛ս խընդրէք։

Փայլակնառնձեւ հրեշտակն ի՛ջեալ յերկնից զարհո՛ւրեցոյց ըզպահապանան. եւ սո՛ւրբ կանայքն խընդա՛ւթեամբ լըցոյց։ Աստուածասէրք կանայք ցընծացէ՛ք այսօր յարեա՛ւ Քրիստոս ի մեռելոց. եւ լո՛յս մե՛ծ աշխարհի՛ ծագեաց։ Ա՛ւետիս լըւեալ ի սո՛ւրբ հրեշտակէն. ընթանայիմ առ աշակերտսըն պատմելով նոցա զյարո՛ւթիւնըն Տեառն։

ՍԱՂՄՈՍ ՂԱ

ԿՅ · Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ :

ՓԽ · Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր , զի : 315 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԻԱ · 1 :

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Յետ այսօրիկ գարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերբն Տիբերեայ , և յայտնեաց այսպէս : Էին ի միասին Սիմովն Պետրոս , և Թովմաս՝ անուանեալն երկուորեակ , և Նաթանայէլ որ ի Կանայ Գալիլեացւոց , և որդիքն Զեբեդեայ , և այլք յաշակերտաց անտի երկու : Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս . երթամ ձուկն որսալ : Ասեն ցնա . գամք և մեք ընդ քեզ : Գնացին և մտին ի նաւ , և յայնմ գիշերի կալան և ոչ ինչ : Իբրև այգ եղև կայր Յիսուս յեզր ծովուն , բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս էր : Ասէ ցնոսա Յիսուս . մանկունք , միթէ ունիք ինչ ուտելոյ : Պատասխանեմք նմա ասեն ցնա . ոչ : Ասէ ցնոսա . արկէք յաջակողմն նաւին զուարանդ , և գտանիցէք : Արկին՝ և ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն : Ասէ աշակերտն այն զոր սիրէր Յիսուս՝ ցՊետրոս . Տէր է այն : Սիմովն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է , արկաւ զիւրև զսպածանելին՝ քանզի մերկ էր , և ընկէց զինքն ի ծովն . և այլ աշակերտքն նաւաւն խակ գային , քանզի չէին հեռի ի ցամաքէն , այլ իբրև երկերիւր կանգնաւ , քարշէին զգործն հանդերձ ձկամբն : Իբրև ելին ի ցամաք , տեսանեն կրակեայ կայծականց , և ձուկն մի ի վերայ , և հաց : Ասէ ցնոսա Յիսուս . բերէք ի ձկանց այսմ՝ զոր զուգդ կալարուք այժմիկ : Ելաւ Սիմովն Պետրոս , և ձգէր զգործն ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք , հարիւր յիսուն և երիք . և այնչափ ինչ կայր , և ոչ պատառեցաւ գործն : Ասէ ցնոսա Յիսուս . եկայք ճաշեցէք : Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ գու ո՛վ ես , զի գիտէին թէ Տէրն է : Գայ Յիսուս և առնու զհացն՝ և տայ նոցա , նոյնպէս և զձուկնն : Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն՝ յարուցեալ ի մեռելոց : 14 :

Բ֊ՐՂ · Խնդրեսցուք : կեցո : Աղ֊Ի · Քառ ամենազօր :

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂՄՈՍ ՂԱ

ԿՅ · Տեսին ամենայն : ՓԽ · Օրհնեցէք զՏէր : 315 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ե · 1 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն . և իբրև : 552 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԳԿ

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն : Ա · Եբե+ պոան : 42 :

ՍԱՂՄՈՍ ՂԲ

Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ , զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ :

Հաստատեաց զաշխարհ զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ քո ի սկզբանէ , յաւիտեանս դու ես :

Ամբարձան գետք Տէր , և ամբարձին գետք զձայնս իւրեանց . յարիցեն գետք ի գետոց իւրեանց :

Ի ձայնէ ջուրց բազմաց , սքանչելի եղեն զբօսանք ծովու :

Սքանչելի ես դու Տէր ի բարձունս, վկայութիւնդ քոց մեք յոյժ հաւատացաք :

Տան քում վայելէ սրբութիւն Տէր , ընդ երկայն աւուրս :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԻԱ · 1 :

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր : 555 :

Քրոջ · Խնդրեացուք : կեցո : Աղբե+ · Թագաւոր :

Ա · ՇԱԲԱԹ · ԴԶ

Տօն է գլխատման Յովհաննու Մկրտչին :

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԶ

Փառաբանակից Հօր Որդի որ վասն մեր խաչեր : 44 :

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱԶ

Նախայաւիտեան Բանին պատմող առաքեցար աշխարհի առաքը Յովհաննէ Մկրտչի · ‖ աղաչեա՛ զԱստած-

տա՞ծ համրցըն մերոց։ Ո՛ր ընդհրէշտականցն անտեսանե՞լ
լի՞ն. յարգանդի կուսին տե՞սանել քո և երկրպագե՞լ.
աղաչեա՛։ Որք հաւատով ըզյիշատակըս քո տօնեմք. եւ
անդադար ձայնիւ ընդքեզ ունիմըք բանբեխօս. աղաչեա՛։

Գ. Ը՞ղՏԷր ‖ Գո՛վեցէք ըզՏէր Քրիստո՞ս միշտ եւ
յա՛ւիտեա՛ն։ Զմեծին ի ծնո՛ւնդըս կանանց զկանխակե-
ա՛ին եւ զՄկրտչին Յովհաննու. զառաքինութեան ըզ-
հա՛նդէս. տօնելով այսօր ի ձայն հընչմա՛ն. գո՛վեցէք։
Խա՛յտացե՛ք յերովպայի Հնգուով ի ծընընդեանն Քրիստո-
սի. որ ի փըրկութիւն աշխարհի յայտնեցաւ Աստուած
բա՛ն. գո՛վեցէք։ Ցանապատի բարբառո՛յ ձայնի ընդՄկ-
կըրտչին Յովհաննու զյաղթանակ մարտի ընդդըլխամամ-
նըն կատարե՛մք այսօր ըզյիշատակ. գո՛վեցէք։

ՄԵՒԱՑՈՒՍՑԻ Ա.Զ

Որ զԲանն Աստուած բառական եղեր ընդունել։ 197։

ՈՂՈՐՄԵՆ Ա.Զ

Կա՛րապետ արքայո՛ւթեանն երկնից տա՛ւրք Յո՛վհաննէ՞ս
Մկրտչի. որ եղե՛ւ աշխարհի քա՛րոզ փըրկութեան
յաւիտենից. ‖ աղո՛ւթիւք սորա՛ Տէր լո՛ւր մեզ եւ ո՛ղ-
որմեա՛։ Ո՛ր առաւել քան ըզմարգարէ՞ս մե՛ծ ի ծնո՛ւն-
դըս կանա՛նց. որ ըզքե՛զ մե՛ղ յայտնեաց Աստուած և
մա՛րդ յերկրի՛ երեւեա՛լ. աղո՛ւթիւք։ Զայն բարբառոյ յա՛-
նապատի և կատարիչ խորհըրդոյ. զըլխատեա՛լ այսօր ի
Հերովդեայ վերափոխեցաւ ի գաւա՛ս անմարմնո՛ց. աղո՛-
ւթիւք։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա.Զ

Երկնաքաղաքացի՛ն Յովհաննէ՞ս մե՛ծ ի ծնո՛ւնդըս կա՛-
նա՛նց քարո՛զեր յանապատի սգով արարո՛ղ բարբառո՛վ.
ըղծագո՛ւմըն լուսոյ արեգականն արդարո՛ւթեա՛ն։ Ձըն-
մարիտ մարգարէ և ձեռնադրող Ո՛րդւոյն Աստուծոյ. յա-
ռաջընթա՛ց կարապետ և պատմո՛ղ աստուածայինն օրի-
նացն. հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտե՛նից։

Յանձնարէն զինաբրուսըն մալ՝ գնեալ Հերմոգինէսի . ի պարգեւի մանրն խընդրէր ըզդրնխս մարգարէին . չի՞ ջուցանել զարուեստին և զանձնօթս լսպատէրն :

ՍԱՂՄՈՍ ՁԸ · Ի ԲԽ–·

ԿՁ · Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց , մեծ և ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ :

ՓԽ · Զօդրմութիւնս քո Տէր , յաւիտեան օրհնեցից , ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով :

Աստցե՛ր թէ աշխարհս ողորմութեամբ չինեսցի , յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո :

Եգի ուխտ ընտրելոց իմոց , երդուայ Դաւթի ծառայի իմոյ :

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո , և չինեցից ազգէ յազգ զաթոռ քո ,

Խոստովան եղիցին երկինք սքանչելեացդ քոց Տէր , և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց :

Ո՞վ է յամպս՝ որ հաւասարէ քեզ , կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ :

Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց , մեծ և ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ :

Տէր Աստուած զօրութեանց , ո՞նման է քեզ . հզօր ես դու Տէր , և ճշմարտութիւն քո շուրջ է զքեզ :

Դու տիրես զօրութեանց ծովու , և զխռովութիւն ալեացդ նորա դու ցածուցանես :

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս , ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո :

Քո են երկինք և քո է երկիր , զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր , զհիւսիս և զնարաւ դու արարեր , Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն ,

Քո է բազուկ և քո է զօրութիւն , զօրացի ալ քո և բարձր եղիցի ձեռն քո :

Յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ քո , ողորմութիւն և ճշմարտութիւն գնասցեն առաջի երեսաց քոց :

Երանի ժողովրդեան որ գիտեն զօրհնութիւնս քո Տէր ,

ի լոյս երեսաց քոց գնասցեն, և յանուն քո ցնծասցեն զօրհանապազ, և յարդարութեան քում բարձր եղիցին:

Պարծանք զօրութեանց մերոց դու ես, և ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր:

Ի Տեառնէ է օգնութիւն արբոյն Իսրայելի՝ թագաւորին մերոյ:

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո և ասացեր. եդից զօգնութիւն ի վերայ հզօրին, և բարձր առարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ:

Գտի զԴաւիթ ծառայ իմ, իւղով սրբով իմով օծի զնա:

Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուցէ զնա:

Մի մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա:

Հարից առաջի նորա զթշնամիս նորա, և զատելիս նորա ի պարտութիւն մատնեցից:

Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նորա:

Եդից ի ծովս զձեռն նորա, և ի վերայ գետոց զաջ նորա:

Նա կարդասցէ առ իս, հայր իմ ես դու, Աստուած ընդունելի փրկութեան իմոյ:

Ես անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամենայն թագաւորս երկրի:

Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա:

Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զզաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից:

Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ, և յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ:

Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն, և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն:

Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա, տանջանօք զանիրաւութիւնս նոցա:

Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից ի նոցանէ, և ոչ նենգեցից ճշմարտութեան իմում, և ոչ անարգեցից զուխտ իմ, և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ արհամարհեցից:

Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ Դաւթի ես ոչ ստեցից:

Զաւակ նորա յաւիտեան կացցէ , և աթոռ նորա՝ որպէս արեգակն առաջի իմ, որպէս լուսին՝ ի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս :

Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր և բնդ վայր հարեր զօծեալ քո :

Դարձուցեր զուխտ ի ծառայէ քումմէ , պղծեցեր յերկրի զարբուբիւն նորա :

Քակեցեր զամենայն պարիսպս նորա, և եղեր զամուր նորա ի զոզումն :

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի, եղև նա նախատ դրացեաց իւրոց :

Բարձր արարեր զաջ նեղչաց նորա , ուրախ արարեր զամենայն թշնամիս նորա :

Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա , և ոչ ընկալար զնա ի պատերազմի :

Անարգեցեր զարբուբիւն նորա , և զաթոռ նորա յերկրի կործանեցեր :

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա , և հեղեր զնովաւ զամօթ :

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո ի ապառ , բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո :

Իսկ արդ յիշեա և տես թէ ո՛վ է իմ հանդիպատ. մինթէ ի դո՞ւր ինչ առեղծեր զամենայն որդիս մարդկան :

Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց :

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով :

Յիշեա զնախատինս ծառայի քո , զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց :

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախատեցին փոխանակ օծելոյ քո :

Օրհնեալ Տէր Աստուած յաւիտենից յաւիտենից. եղիցի եղիցի :

Ալէլուիա. ալէլուիա :

ԸՍՓիթրցուած յԱռակաց : Ը. 4:

Զձեզ առաւելեմ, ո՛վ մարդիկ, և բաչխեմ զբարբառ իմ որդւոց մարդկան : Խնացարուք անմեղք զխոհականութիւն. և անխրատք դիք ի սիրտս ձեր. ունկն դիք ինձ, զի զպարկեշտս բարբառիմ, և բղխեմ ի շրթանց իմոց

զաղղութիւնս : Զի գՀշմարտութիւն խոկասցէ կոկորդ իմ, և պիղծ են առաջի իմ չրթունք սուտ : Աբդարութեամբ են ամենայն պատգամք բերանոյ իմոյ, և ոչ ինչ գոյ ի նոսա ծռութիւն և ոչ թիւրութիւն : Ամենայն ինչ ուղիղ է իմաստնոյ, և յարմարեալ այնոցիկ որք գտանեն գգիտութիւն : Ընկալարուք զխրատ՝ և մի՛ զարծաթ . և գգիտութիւն քան զոսկի ընտիր : Լաւ է իմաստութիւն քան զականս պատուականս , և ամենայն ինչ պատուականն չարժէ զնա : 11 :

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ : Թ . 3:

Զայն բարբառոյ յանապատի . պատրաստ արարէք ըզճանապարհս Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ : Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին . և եղիցին ամենայն դժուարինք ի դիւրինս, և առապարքն ի դաշտս : Եւ երեւեսցին փառք Տեառն . և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ . զի Տէր խօսեցաւ : Զայն որ ասէ . գոչեա . և ասեմ . զինչ գոչեցից . գոզջիր, ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ : Յաւնջացաւ խոտն , և թօթափեցաւ ծաղիկ նորա , զի ոգի Տեառն չնչեաց ի նա, արդարև խոտ է ժողովուրդս այս. ցամաքեցաւ խոտն , և թօթափեցաւ ծաղիկն . և բան Տեառն մնայ յաւիտեան : 8 :

Ընթերցուած ի Մատաքիայ մարգարէէ : Գ . 4:

Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացի, մինչ չի եկեալ իցէ օր Տեառն մեծ և երեւելի . որ պատրաստեսցէ զսիրտս հօր առ որդի, և զսիրտս առն առ ընկեր իւր , գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն : Յիշեցէք զօրէնն Մովսիսի ծառայի իմոյ , որպէս պատուիրեցի նմա ի Քորէբ, զամենայն զհրամանս և զիրաւունս : 6 :

Ընթերցուած ի Գործոց առաքելոց : ԺԳ . 25:

Եւ իբրև լնոյր Յովհաննէս զընթացսն , ասէր . զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ . չեմ ես այն . այլ ահա գոյ զինէն իմ որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել : Այր եղբարք, որդիք արբրահամեան առնմին, և որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան

առաքեցաւ : Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ, և իշխանք նոցա՝ անճանաչ եղեն ի նմանէ, և քան զարթառայ մարգարէիցն՝ որ զամենայն չարաթեան ընթեռնուին՝ դատեալ կատարեցին. և ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա: Եւ իբրև կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց, որ երևեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յԵրուսաղէմ, որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումնն որ առ հարսն եղեալ էր. զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս. որպէս և ի սաղմոսին գրեալ է՝ յերկրորդում. որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ : 33 :

Ձ-ՅԻ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա :

Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, ի յորովայնէ յօրսովային երկրպագեալ, սպասաւոր եղև Բանին Աստուծոյ. և լուեալ զահաւոր ձայնն, ազազակէր ասելով. ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի :

Ալէլուիա, Օրթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Ջ. 14 :

Վասն Տիառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտնի եղև անուն նորա. և ասէր, թէ Յովհաննէս Մկրտիչ յարեաւ ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նմանաւ : Այլք ասէին՝ թէ Եղիա է, իսկ այլքն՝ թէ մարգարէ է, կամ թէ իբրև զմի ի մարգարէից : Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է, նա յարեաւ ի մեռելոց : Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ ի բանտի, վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, զի նա՝ կին արար զնա : Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ առնել զկին եղբօր քո : Եւ Հերովդիա սպասցեալ էր ընդ նմա՝ և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր : Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ, և սպասէր նմա.

և լուծանել ի նմանէ բազում ինչ՝ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա: Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս՝ յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեացւոց, և ի մտանել դստերն Հերովդիայ և ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմականացն: Ասէ թագաւորն ցաղջիկն. խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ: Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խընդրեսցես դու յինէն, տաց քեզ՝ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ: Նա ելեալ ասէ ցմայր իւր. զի՞նչ խնդրեցից: Եւ նա ասէ. զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. կամիմ՝ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա. և առաքեաց վաղվաղակի թագաւորն՝ դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա: Եւ չոգաւ գլխատեաց զնա ի բանտին, և եբեր զգլուխն նորա սկտեղ՝ և ետ ցաղջիկն, և աղջիկն ետուր ետ մօր իւրում: Իբրև լուան աշակերտքն նորա, եկին բարձին զմարմինն և եդին ի գերեզմանի: 29:

Քարոզ. Խնդրեացուք. կեցո: Աղջիկ. Քանի՛ ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂՄՈՍ ԿԶ

Ապաւաճ ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երեսեցո զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յամենայն ազգս փրկութիւնս քո:

Խոստովան եղիցին ազ քեզ ժողովուրդք Ապաւաճ, խոստովան եղիցին ազ քեզ ժողովուրդք ամենայն:

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք, զի դու դատիս զժողովուրդս յուղղութիւն, և ազգս երկրի դու առաջնորդես:

Խոստովան եղիցին ազ քեզ ժողովուրդք Ապաւաճ, զոհասցին զքէն ժողովուրդք ամենայն:

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Ապաւաճ Ապաւաճ մեր:

Ապաւաճ մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամենայն ազգք երկրի:

Արթոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԻԱ · 1 :
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :
Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր : 555 :

Լոյս գուարթ :

ՄԵՍԵԻՒ Գալստեան :

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն , օրհնեալ որ գաս եւ :

Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ . արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ :

ՀԱՄԲԱՐՁԻ Ա.Զ

Ո՛ր վերօրհնիս յաթոռս քերովբէից : Քէզ պատ : 310 :
Բարեխօս . Վասն խաղաղութեան : Աղաչ· Հայր գթած :

ՍԱՂՄՈՍ Զ

Յնծացէք առ Աստուած օգնական է մեր ազգ : 457 :

Արթոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԻԱ · 15 :
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ իբրեւ ճաշեցին , ասէ Յսիմոնի Պետրոս Յիսուս . Սիմոնի Յովհաննու , սիրես զիս առաւել քան զդոսա : Ասէ ցնա . այո Տէր , և դու գիտես զի սիրեմ զքեզ : Ասէ ցնա . արածեա զգառինս իմ : Դարձեալ ասէ ցնա . Սիմոնի Յովհաննու , սիրե՞ս զիս : Ասէ ցնա . այո Տէր , և դու գիտես զի սիրեմ զքեզ : Ասէ ցնա . արածեա զոչխարս իմ , Ասէ ցնա երրորդ անգամ . Սիմոնի Յովհաննու սիրե՞ս զիս : Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երրորդ՝ թէ սիրե՞ս զիս . և ասէ ցնա . Տէր , դու ամենայն գիտես , և դու իսկ ամենայն ճանաչես , և եթէ սիրեմ զքեզ : Ասէ ցնա Յիսուս . արածեա զոչխարս իմ : Ամէն ամէն ասեմ քեզ , զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր , և երթայիր յո և կամէիր . և յորժամ ծերասցիս , ձեռս ի վեր կալցես՝ և այլք ածցեն քեզ գօտի , և տարցեն ուր ոչն կամիցիս : Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւորս առնիցէ զԱստուած . և զայս իբրեւ ասաց՝ ասէ ցնա . Կո զկնի իմ : Դարձաւ Պետրոս՝ և տեսանէ զաշակերտն զոր սիրէր Յիսուս՝ զի երթայր զկնի , որ և անկաւ զլանջսն նորա և ասէ . Տէր , ո՞վ է որ մատնելոցն է զքեզ : Զնա տեսեալ Պետրոսի՝ ասէ ցՅիսուս .

տէր, իսկ սա զի: Աչէ ցնա ցիսուս. եթէ կամիմ զի կացցէ զա՝ մինչև ես գամ, քեզ զի փոյթ է, դու ետ զկնի իմ: Եւ ել բանս այս յեղբարս, և համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցէ. և ոչ ասաց նմա ցիսուս, եթէ ոչ մեռանիցէ. այլ թէ կամիմ ես թէ կացցէ զա մինչև ես գամ: Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ, որ և գրեացն իսկ զայսոսիկ. և գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա: Բայց է և այլ ինչ բազում զոր արար ցիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր առնել զգիրսն՝ որ թէ գրեալ էին: 25:

Փոյթ. Խնդրեսցուք: Կեցո: Աչքի. Թագաւոր:

ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷ. ԴԿ

Ի ԳԻՇԵՐԻ

ԿԱՆՈՆԱԳԼ. ԴԿ. ՍԱՂ. ՃԽԵ. Օրհնեա անձն իմ: Ի ընդ. ջինի Հանգստեան Շաբաթ ամ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԿ

Նորոգեալ կընդրկիք առ Աստուած. ընկեցիք հնութեանն. ի զգեստից լերանց գնչմամբ ձայնի տուք ըզփառս Աստուծոյ. և պատուիրեցէք գքաղնութիւն յարքունեցոյն ի մեռելոց: Երկնաւոր փեսային հարթանցանել ընկերացի Աստուծոյ. զարդարեսջ ի ներքոյ ի հանդերձեալս յոյսկնհոգւոյն պլսակեալ. քանզի ահա գայ ան քեզ ‖ Քրիստոս փառաց թագաւորն: Բախացեալ արդիք Սիմէոնի ի թագաւորըն Քրիստոս. ուրախացեալք ցընծութեամբ գնաք տակաւին հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ. եւ ընդ հրեշտակս օրհնութեամբ զՔրիստոս:

† Աքանչելի է խարհուրդ անօրէնութեանն քո Քրիստոս. ար լինէր ի չօրէ ի սէր հարսին ընկերացոյ զոր ընտրեցեր. արուն փառաբանեմս Քրիստոս անմահ թա-

գաւառը։ Էր բնակեցեալ եկեղեցւոյ քո հիմանցն. յորմէ Թովմաս հրաժարէր ոչ հաւատալ զքեզ յարուցեալն. որում ցուցեր աջոյր վտիտգոտիդն զվէրսըս մարմնոյդ։ Ասացեալ Թովմայի. չծշափէիր զկնոցուածս ոտիցն եւ զբեւեռացն. եւ գոչելով վերադառնէր Տէր եւ Աստուած դասանելով ընդարուցեալդ. որով առաք զերանելին որք ոչ տեսեալ հաւատացաք։ Ջհեւ ամս

Յաղթական քեզ օրհնութիւնք Տէր որ զխորոց։ 25։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Ա.Կ

Ո՞ր խոնարհեցար յանճառ փառացդ վենայդ անմահ եւ երկնաւոր. ի սէր հարցն քո եկեղեցւոյ. զոր մաքրեցեր աւազանի՝ն վերըստին ծնընդեամբն. ‖ օրհնեմք ընդքեզ Աստուած հարցըն մերոց։ Ո՞ր կենդանաբար նոր յարութեամբդ քո նորոգեցեր զհնացեալքըս մեղօք. որով ցընծայ այսօր եկեղեցի ընդ նորոգութեամբն բնութեան մերոյ. օրհնեմք։ Այսօր մանկամանք առաքեալք պայծառացեալք վայելչութեամբ. ասէնն ընդ զօրըս հրեշտակաց զնաւակատիս փըրկութեան մերոյ. օրհնեմք։

Գ. ԸզՏէր օրհնեցեք ‖ եւ բարձր ապրիլ՛ք ընդմի՛ յաւիտեան։ Նորոգեցարո՛ք նորոգութեամբ կենացս այսօր յարութեանդըն Քրիստոսի՝ նոր ժողովուրդք. եւ բարձր։ Նո՛ր խաղայիլ կոչեցեալք ի Քրիստոս նոր օրհնութիւնս վե՛ր առաքեսցո՛ւք. նորոգմո՛ւն տիեզերացդ յարուցելոյն ի մեռելոց. եւ բարձր։

ՄԵԾԱՑՈՒՄՆ Ա.Կ

Նո՛ր խորանիդ արքայական՝ն արդարութեա՛ն նո՛ր օրհնութիւնս տացո՛ւք. ‖ եւ անդադար բարեբա՛նեսցո՛ւք։ Նո՛ր տաճարիդ անճառ լուսոյն որ ի՛ չօրէ՛ նո՛ր երգո

երկնացուք. եւ : Ջնոր խաղնատանըդ հրաշալի նոր խաչընտա՛ն բանին եւ մարմնոյ. հոգեւոր երգով բարեբա՛ նեցուք :

ՈՂՈՐՄԵՍ Ա Կ

Ո՛ր վերնատե՛ն նորոգեցեր ըզմեզ ի հնութենէ հինն Ադամայ. եւ ըզսկզբնառաջին գեղեցկութիւնըն նկարեցեր նորահաղծեալ յոգի՛ս հրաշափառակէս. ‖ ա՛ղաչեմք ըզքեզ փրկառո՛ւ մղձաւանջեալ : Ո՛ր զբարձրացոյցն նաւակատեաց խորհուրդ հանդերձելոցն այսօր ծանո՛ւցեր. կենդանարար եւ սքանչելի քո՛ յարութեա՛ մըզ ի մեռելոց. ա՛ղաչեմք : Ընդ քեզ յարուցեր յառնել յանմահութիւն զմահացու բնութիւնս. որով նըշաւա՛ր ընդ ամէն Հօր գլուխդ եկեղեցւոյ. հրաւիրելով զանդամս քո՛ ի նոյն միութիւն. ա՛ղաչեմք :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա Կ

Ա՛յսօր նոր ժողովուրդք ընդ երկնայինսդ լուսեղինա՛ցըն համաձա՛յնեալք. նորոգողին ազգի մարդկա՛ն վեր երգեցուք որ վասըն մեր մեռաւ եւ յարեաւ. ‖ ա՛մէնով փառաւորեա՛լ է քո՛ յարութիւնդ : Ա՛յսօր որդիք Սիոնի ծընեալք աւազանին չնորհօք յերդիս Աստուծոյ. ի նաւակատի՛ս տաճարի՛ բնութեա՛ն մերոյ զովինցէք զփեսային երեալ յանապատ՝ նոր գերեզմանին. ա՛մէնով : Ա՛յսօր մանկունք հաւատոյ կամարելով զնահակատո՛ւս վերի՛ն երուսաղէմի. նորոգեցէք ըզպատմո՛ւճան հոգւոց ձե՛րոց. եւ ընդ որդւոց լուսոյ նոր Սիոնի. բարեբանեցէք զՔրիստոս քահանայն. ա՛մէնով :

ՍԱՂՄՈՍ ՁԴ

ԿՁ. Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և փրկութիւնս քո տուր մեզ :

ՓԽ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր ըզգերութիւն Յակովբայ :

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, ծածկեցեր զամենայն մեղս նոցա :

[A] *Տես ի Զեկուցումն, էջ ԺԲ :*

Լռեցուցեր զամենայն սրամտութիւնս քո, դարձար ի բարկութենէ սրամտութեան քո։

Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո զբըրտմըտութիւնս քո ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանայր մեզ Տէր, և մի՛ ձգեր ըզբարկութիւն քո ազգէ մինչև յազգ։

Աստուած դու դարձեալ կեցուացես զմեզ, ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ։

Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։

Լուաք զինչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ որ դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նոցա, բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսցի, արդարութիւն յերկնից երևեսցի։

Տէր տացէ զբարեգործութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի գնացս իւր։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Գ. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ դարձաւ (Յիսուս) զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա, և ել համբաւ գնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին. և նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց։ Եւ եկն ի Նազարեթ՝ ուր սնեալն էր, և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն։ Եւ յառն նմա գիրս պեսայեայ մարգարէի, և յարեաւ ընթեռնուլ. և իբրև եբաց զգիրքն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ. քարոզել գերեցաց զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի։ Եւ խփեալ զգիրքն՝ ետ ցպաշտօնեայն և նստաւ. և ամենեցուն որ ի ժողովրդեանն էին աչք՝ ի

նա հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։ Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին ի բերանոյ նորա, և ասէին. ո՞չ սա է որդին Յովսեփայ։ Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք սա իս զառակս զայս, բժիշկ, բժշկեա զանձն քո. որչափ լուաք՝ զոր արարեր ի Կափառնաում, արա և սոսա ի քում գաւառի։ Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։ Այդարև ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցաւն երկինք զերիս ամս և զվեց ամիս, և եղև սով մեծ ընդ ամենայն երկիր. և ոչ սա մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեփթա Սիդովնացւոյ սա կին մի այրի։ Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի սա Եղիսէ մարգարէիս. և ոչ օք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման ասորի։ Եւ լցան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն՝ իրրև լսէին զայս. և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա չինեալ էր՝ զահաւիժ առնել զնա։ Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր։ 30։

Եբր. Նաբաատեղծ։ Փոր. Խնդր։ Կեցո։ Աչ. Գուշ ամն։

Յ Ե Բ Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Ուրախ եղիցի Իսրայէլ յարարիչ իւր, որդիք Սիովնի ցնծասցին ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս ասասցեն նմա։

Համի Տէր ընդ ժողովուրդս իւր սուրբ, և բարձր առնէ զհեզս ի փրկութեան։

Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն ի հանգիստս իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց։

Սուր երկայրի եւս ի ձեռս նոցա, առնուլ զհատուցումն ի հեթանոսաց, յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց։

Կապել զթագաւորս նոցա կապանօք, և զպօրաւորս նոցա ձեռնակապօք երկաթեօք:

Առնել ի նոսա զդատաստանն գրեալ. փառք այս են ամենայն սրբոց նորա:

Սրբոց Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԻԱ. 15:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրև ճաշեցին, ասէ Յսիմոնի Պետրա: 564:

Ե՛ս ելանեմ խաչե՛ա և աճեպարանա՛ և ամենայն զորքոյ յանապատան, ասելով

ՇԱԲԱԿԱՆ Դ

Ա՛յսօր նըչան յաղթող ե՛րեւեալ ի յերկրի. պա՛յծառանացո՛յց զսիրելեա՛ն. զե՞րն յաղթութեան ե՛ս ա՛ւար զքեզ խաչ քո՛ տէր. ‖ ա՛պրեցուցանել զքո՛ւզ ի պանդխտեա՛նց թըշնամո՛ւյն: Փա՛յտ կե՛նաց կանդնեա՛ւ ի մէջ տի՛եզերքա՛ց. յա՛յս ե՛ւ ա՛պաւէ՛ն ա՛զգի մարդկա՛ն. սա՛ պա՛հեաց զքո՛ւզ յամենայն վըտանգո՛ւց մե՛րոց. ա՛պրեցուցանել:

Յաղթող զօրութեամբ խաչի՛ քո պահեա՛ զքո՛ւզ Քրիստո՛ս Աստուա՛ծ. ո՛ր տա՛րածեցե՛ր զքեզ՛ն քո ի նմա՛. ևւ լուա՛ծե՛ր զկնիք դատապարտութեան յանցանա՛ց մե՛րոց. ա՛պրեցուցանել:

ՍԱՂՄՈՍ Դ. ՅՈՒՆԻՍ.

Կց. Նչանեցաւ ա՛ռ մեզ լոյս երեսաց քոց և հառուր ուրախութիւն սրտից մերոց:

Փխ. Ի կարգալ իմում լուար ինձ Աստուած: 438:

Սրբոց Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Իէ. 50:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ (Յիսուս) զարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ, և արձակեաց զոգին: Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս ի վերուստ մինչև ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան, և գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան, և ելեալ ի գերեզմանաց յետ յարութեանն նորա՝ մտին ի քաղաքն սուրբ, և երեւեցան բազմաց: Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս՝ իբրև տեսին զշարժումն և զ-

զեալան , երկեան յոյժ և ասեն . արդարև Աստուծոյ Որ-
դի էր սա : Էին անդ կանայք բազումք , կային ի հեռաս-
տանէ և հայէին , որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլեէ
պաշտել զնա . յորս էր Մարիամ Մագդաղենացի , և Մա-
րիամ Յակովբայ և Յովսեայ մայր , և մայր որդւոցն Զե-
բեդեայ : Եւ իբրև երեկոյ եղև , եկն այր մի մեծատուն
Յարիմաթեայ , որում անուն էր Յովսէփ , որ աշակեր-
տեցաւ իսկ Յիսուսի . սա մատուցեալ առ Պիղատոս
խնդրեաց զմարմինն Յիսուսի . յայնժամ Պիղատոս հրա-
մայեաց տալ զմարմինն : Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝
պատեաց սուրբ կտաւովք , և եդ ի նոր գերեզմանի՛ զոր
փորեաց ի վիմի . և թաւալեցուցեալ կափարիչ դրան գե-
րեզմանին վէմ մի մեծ՝ գնաց : Այնգ էր Մարիամ Մագ-
դաղենացի , և միւս Մարիամն , նստէին հանդէպ գերեզ-
մանին : 61 :

Քարոզ· Եւ ևս խաղաղութեան : Ասան ի վերուստ : Ե-
պեռնոփրքն շնորհատուռն և շնորհ կոչնի աշխարհի :

Ձինի Քարոզ · Սուրբ խաչիս : Աջմէ · Պահպանեա :

Ե՛ ի պատնեշն յերկնքեցին Սուխատոփն փառոք .

Եւ ևս խաղաղութեան : Քահանայն . Օրհնութիւն և
փառք : Ե՛ սխռնին խոնարհեցո և Ապրեցո :

ՀԱՄԲԱՐՁԻ Գ Կ

Յորժամ եկին ի գերեզմանն իւղաբեր : Ա· Երե+ պատ : 47 ,

ՍԱՂՄՈՍ ՃԽ

Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա , օրհնեցէք
զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա :

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա , օրհնեցէք զնա
ի բազում մեծութեան նորա :

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան , օրհնեցէք զնա
սաղմոսիւք և օրհնութեամբ :

Օրհնեցէք զնա ցնծութեամբ , գովեցէք զնա ուրախու-
թեամբ :

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր , գովեցէք զնա ի բար-
բառ լսելի :

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան . ամենայն հոգիք՝
օրհնեցէք զՏէր :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ի . 26 :
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն , և Թովմաս ընդ նոսա . գայ Յիսուս դրօքն փակեալք , և եկաց ի մէջ և ասէ . ողջոյն ընդ ձեզ : Ապա ասէ ցԹովմաս . բեր զմատունս քո և տես զձեռս իմ . և բեր զձեռն քո , և մխեա ի կողս իմ . և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ : Պատասխանի եւ Թովմաս և ասէ ցնա . Տէր իմ և Աստուած իմ : Ասէ ցնա Յիսուս . այդ զի տեսեր զիս հաւատացեր , երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատացեն : Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտացն իւրոց՝ որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ : Այլ սոյա այնչափ ինչ գրեցաւ , զի հաւատասցէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ . և զի հաւատասցէք , և զկեանն յաւիտենական ընդունիցիք յանուն նորա : 31 :

Բառք . խնդրեացուք : կնդս : Աղքի . թագաւոր :

Բ · ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ · Ա Զ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ա Զ

Երգեացուք երգ նոր Աստուծոյ փրկչին մերոյ : 3 :

Յայսմ օրէ սկիզբն առաքեալ՝ ահեղ օր դիւրաւ ի հոգեւոյ քաղաքացն օրհնաբանիւն զաստիճանաբանութիւնսն սուրբ ի յայնկն :

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱԿ

Ո՞ր ենկիր ի փըրկութիւն վանդ սրգի մարդկան . ‖ ըզքեզ անպատմ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց : Ո՞ճանձն անձր ըզչարչարանս և խաչի համբերեցեր . ըզքեզ : Ո՞կընքեցար վիմով յարուցիչըդ մեռելոյց . ըզքեզ :

Գ · Ըզտէր օրհնեցէք ‖ բա՞ռք աբարիք ըզնա յաւիտեան : Ո՞ր անմահն մարմնով վանդն փըրկու-

թեան մերոյ ըզմահ ճաշակեաց և խափանեաց ըզմահն թագաւորութիւնն. բաց՝ թէ՝ °Ո՛ր յաւէժ կենդանութեան աշխատաչեաց ըզյարութիւն առաւաժայինն մարմնոյն պաթրգեւեաց մարդկան. եւ ե՞ւս առաւել բարձր:

ՄՆԾԱՑՈՒՍՑԻ ԱԿ

Ուրախ լեր Առաւաժային. տաճար անխախ: 209:

ՈՂՈՐՄԵՆԱ ԱԿ

Սո՛ւրբ Աստուած ո՛ր վասն մեր ըզմահ ճաշակեցեր. և յե՛րրորդ աւուր յարեա՛ր ո՞ղորմեա՛: Սո՛ւրբ Աստուած ո՛ր ըզդժոխս ա՛ւերեցեր. և զդերեալսն փրկեցեր ի նմանէ՝ ո՞ղորմեա՛: Սո՛ւրբ Աստուած ո՛ր ի յերկինս համբարձար ընդ աջմէ՛ Հօր նըստար ի՛ բարձո՛ւնս ո՞ղորմեա՛:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԱԿ

Ա՛ռաքեցար ի Հօրէ բա՛ նդ Աստուած ի՛ փրկութիւն ազգի մարդկան ‖ ծրհնեմք ըզքե՛զ սո՛ւրբ Աստուա՛ծ: Ի՛ գերեզմանն իջեր Քրիստո՛ս անմահ. եւ ի Հօրէ՛ ոչ մեկնեցար ծրհնեմք: Ի՛ յե՛րրորդ աւուր յարեար Աստուածապէս եւ ի յերկինս համբարձար փառո՛ք յարութեան քո՛ տէր ծրհնեմք:

ՍԱՂ. ՁԲ. ԿՑ. Յոյժ մեզ Տէր: ՓԽ. Հաճեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Գ. 31:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ էլ ի կափառնաում ի քաղաքն Գալիլեացւոց, և ուսուցանէր գնոսա ի շաբաթին: Եւ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշխանութեամբ էր բանն նորա: Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւ պղծոյ, և աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. Թո՛ւլացո, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ով ես սուրբդ Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս՝ և ասէ. պապանձեցաց և ել ի դմանէ: Ձգեանեաց գնա դևն ի մէջի անդ, և ել ի նմանէ, և ոչ ինչ վնասեաց նմա: Եւ եղեն զարմանալիք ի

վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին. զինչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ և ելանեն: Եւ երթայր հռչակ ընդ ամենայն տեղիս չուրջ զգաւառսն: Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, եմուտ ի տունն Սիմոնի. զոքանչ Սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա. եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա: Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա: Եւ նա իւրաքանչիւր ումեք ի նոցանէ դնէր ձեռս, և բժշկէր զնոսա: Ելանէին և դեւք ի բազմաց՝ աղաղակէին և ասէին, եթէ դու ես Որդի Աստուծոյ. և նա սաստէր և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոս է: 42:

Քարոզ · Խնդրեցուք: Կեցո: Աջող · Քամ ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ճԽԹ · Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: 569:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գ. 12:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև լուաւ (Յիսուս) եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլիա. և թողեալ զնազարէթ, եկն բնակեցաւ ի Կափառնաում ի ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ· զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա հեթանոսաց. ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և ի սուրբս մահու՝ լոյս ծագեաց նոցա: Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել. ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: Մինչ գնա զդայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, նոքա երկուս եղբարս զՍիմոնն զկոչեցեալն Պետրոս և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան ի ծով. քանզի ձկնորք էին: Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան: Եւ նոցա թողեալ վաղվաղակի զգործն՝ զնացին զհետ նորա: Եւ մատուցեալ անտի յառաջ նոքա

այլ երկուս եղբարս, զՅակոբոս Չեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝ Չեբեդեաւ հանդերձ հարսն իւրեանց, մինչդեռ կազմէին զուարանս իւրեանց. և կոչեաց զնոսա: Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայր իւրեանց, գնացին զհետ նորա: Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս և զամենայն ախտս ի ժողովրդեանն: Եւ եկ լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս. և բժշկեաց զնոսա: Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլէէ և ի Դեկապօլեայ և Յերուսաղեմէ և ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա: 25:

ՀԱՄԲԱՐՁԻ Ա.Զ

Փառք յարութեան քո Տէր: Բ. Երէ+ պոռն: 28:

ՍԱՂ. ՃԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ա. 14:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն (Յիսուս) ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝ և ասէր, թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէ՛ք՝ և հաւատացէք յաւետարանն: Իբրև անցանէր առ ծովեզերբն Գալիլեացւոց, և տես զՍիմոնն և զԱնդրէաս զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով. քանզի ձկնորք էին: Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք զկնի իմ, և արարից ըզձեզ լինել որսորդս մարդկան: Եւ վաղվաղակի թողեալ զուարանն, գնացին զհետ նորա: Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, ետես զՅակովբոս Չեբեդեայ և զՅովհաննէս եղբայր նորա, և գնոսա ի նաւին մինչ կազմէին զուարանս, և կոչեաց գնոսա: Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւրեանց Չեբեդէոս ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին զհետ նորա: 20:

Բ-բոյ. Խնդրեացուք: Կեցո: Աղ+. Թագաւոր:

Բ·ԵՐԵՔՇԱԲԱԹԻ·Ա Կ

ՅԱՌԱՒՕՏՕՒ

ՀԱՐՑ Ա Կ

Ո՞ր վանքն մերոյ փըրկու՛թեա՞ն ինձ՛ ի յերկինից· միածի՞ն Ո՛րդի ‖ Քրիստո՛ս փըրկիչ մե՛ր փըրկեա զմեզ· ՏԷ՛ր Ա՛ստըւած հա՛յցըն մերոց։ Ի՛ խաչին բեւեռեցա՛ր Բանդ ըմբռնե՛լի մարմնո՛վ. եւ յուժե՛ր ըզկապանըս մե՛զ զաց Քրիստո՛ս։ Ո՛ր ն՛ըւէքօրեայ թաղմամբ քո՛ մեռո՛ւցեր ըզմահ. եւ յարութեամբըդ քո՛ կենդանութե՛ցեր զաշխարհս. ա՛ռաւե՛լ գո՛վեա՛լ Քրիստո՛ս։

Գ· ՂԳՏԷՐ ‖ օրհնե՛ցէ՛ք եւ բա՛ղթո՛ւր ա՛րարէ՛ք ըզնա՛ յա՛ւիտեա՛ն։ Ո՛ր ըսպան ըզմա՛հ թաղմամբն իւրո՛վ. եւ յարութեամբն իւրո՛վ մե՛զ կեանքո՛ պարգեւեցաք. մի՛ա՛բան հաւա՛տացեա՛լք օրհնե՛ցէ՛ք։ Ո՛ր ն՛ըստո՛ր ընդ անդո՛ր հո՛ր ծընո՛ղի իւրո՛յ. եւ մարդասի՛րապէս խընամո՛ւ զարքա՛ծս. քա՛հանայք հոգեւո՛ր երգո՛վ օրհնե՛ցէ՛ք։

ՄԵԾԱՑՈՒՑ�է Ա Կ

Ա՛նարատ տաճար բնակարան անբաւ Բանին։ 210։

ՈՂՈՐՄԵԱ Ա Կ

Դո՛ւ ե՛ս Քրիստո՛ս. կեանք և յարութի՛ւն ազգի՛ մարդկա՛ն. ո՞զորմեա՛։ Դո՛ւ յարուցեա՛լ. նորոգե՛ցեր ընտրեա՛լդ ա՞րդեօք ո՞զորմեա՛։ Ցոյս յարութեան մերո՛յ. աղերսո՛ւ կենդանոյ և փըրկութեա՛ն ո՞զորմեա՛։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա Կ

Յարուցեա՛լ Տէրն ի գերեզմանէ՛ն. Միածի՛նն որպէս փայլակն ե՛ւ լոյս փառաց ծա՛գեաց յաշխարհս. եւ երկի՛ւղ և ե՛րկիւղս ցրո՛ւեցա՛ւ։ Ա՛ւծ է՛ յարութի՛ւն Ա՛ստուածորդո՛ւն. քա՛նզի դրո՛ւնք երկնից բացա՛ւ եղեն և հո՛ոտ անոյշ բո՛ւրեաց յաշխարհս. եւ լըցո՛յց զարքաքա՛ծս ամենայն։ Զօրք երկնից իջե՛ալ էի՛ն եւ բանակեա՛լ շուրջ

ըզդ՚բեզմանաւն եւ հոգի՝ զէն բարբառիլն երգէին. ՏԷր օրհնեալ է՝ քո յաւրհնութիւնդ :

ՍԱՂ. 29. կՅ. Յոյց մեզ : փխ. Հառնեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Գ. 43 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ տեղի : 208 :

Քարոզ. Խնդրեացուք : կեցո : Աչքի. Քում ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ճխԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ե. 1 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իբրև նըս-տաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր. Երանի աղ-քատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից : Ե-րանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին : Երանի հե-զոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր : Երանի որ քաղ-ցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագես-ցին : Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գըտ-ցեն : Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն : Երանի խաղաղարարաց, զի նոքա որ-դիք Աստուծոյ կոչեսցին : Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից : Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածես-ցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին : Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՝ ի յաղիցի. ոչ իմիք ապդիցէ այնուհե-տև, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ի մարդկանէ : Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրաւանաւ, այլ ի վերայ աւտանակի. և լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցեն. այնպէս լուսա-տորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն

զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է: 16:

ՀԱՄԲԱՐՁԻ Ա Կ

Յարուցեալ Տէրն ի գերեզմանէն: Բ. Երէ+ պատ: 30:

ՍԱՂ · ՃԾ · Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Արթուն Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ա · 21:

Տէրամբ մերով Յիսուսիս Քրիստոսիս

Եւ մնանէն ի կափառնաում, և իսկ և իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա: Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն: Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ դեւր ի նմա. որ աղաղակեաց և ասէ. Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս և ասէ. կարկեաց՝ և ել ի նմանէ: Եւ զարկեալ զնա այն պիղծ, և աղաղակեաց ի ձայն մեծ, և ել ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչև հցծել ընդ միմեանս և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ, և հնազանդին սմա: Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց: Եւ վաղվաղակի եկեալ ի ժողովրդենէն, եկն ի տունն Սիմոնի և Անդրէասի՝ Յակովբաւ և Յովհաննու հանդերձ: Եւ զօքանչ Սիմոնի պնդէր ջերմացեալ. և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա: Եւ մատուցեալ յապրոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն, և պաշտէր զնոսա: Եւ իբրև երեկոյ եղև ի մտանել արեգականն բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դուռն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէսպէս ախտից, և դեւս բազումս եհան. և ոչ տայր խոսել դիւացն, զի գիտէին զնա՝ թէ Քրիստոս է: 34:

Բառեղ · Խնդրեսցուք: կեցո: Աղերս · Թագաւոր:

Բ · ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ · ԲՁ

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ի

ՀԱՐՑ Ա Կ

Ա՞նընակիցքդըն Բանդդ մարմնացար ի կա՞ս[ի]ն

յանձն առեր կամաւ զխաչն եւ զչարչարանսն ‖ Աստուած հանդերձն մերոց։ Լուակից հօր և հզօրացն Բանդ Աստուածդ ի գերեզման ն ի ջեր մընալով աշ նադպահ մնձն Աստուածդ ։ Յարեար ի մեռելոց յաւուր երրորդի լուծանելով զիշխանութիւն ըմ մահ հոմնձն Աստուածդ ։

Գ. Ըզդեր ծրհնեցէք ‖ բարձր արարէք ընդնայելեաւն ։ Հրաշալի ընդյարութիւն աստուածդրւոյն. ժողովուրդք բարեբանելով բարձր ։ Միսրան գովեցէք ընդյարուցեալն ի մեռելոց. քահանայք հոգեւոր երդով բարձր ։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Ա Կ

Ով գերահրաշ ծագիկ բուրեալ յԵդեմայ. հոտ ։ 211 ։

ՈՂՈՐՄՆԱ Ա Կ

Ի ջեր յերկնից ոգի Աստուածդ. եւ մարմնացար ի սըրբոյ կուսէն. որ անմահնեալիդ ես ի հօրէ՝ ողորմեաւ ։ Ընկեր ի չարչարանսդ կամաւորապէս Աստուած. եւ խաչեցար վասն մարդկան. եւ ի գերեզմանն ի ջեր անեսական՝ ողորմեաւ ։ Զմահ լուծեր և զանչխարհս ազատեցեր կարեղապէս տէր. եւ ի մեռելոց յարեար իշխանութեամբ ողորմեաւ ։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա Կ

Աքանչելի հրեշտակն Տեառն. ցընծութեամբ ի ջեալ ի գերեզմանդն հարկանել զդր. փղ յարութեանդն Տեառն ։ Ի՛ հարկանել վաղոյն. պահապանդքն զարհուրեցան եւ եղեն. ի յահէն արդէս մեռեալ ։ Զայն ընդեր ի հրեշտակէն. բարբառ ընդեր ուրախութեամբ տէր յարեաւդ. փղ յարութեանդն Տեառն ։ Դրօքդն փակեալք. երեւեալ ցհասուս աշակերտացդն եւ ասելդ. խաղաղութիւն ընդ ձեզ ։

ՍԱՂ · ՁԲ · ԿՅ · Յոյց մեզ : ՓԽ · Հաճեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ե · 12 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև ի հասանելն նորա ի մի ի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ՝ իբրև հասս զՅիսուս, անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել : Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա և ասէ. կամիմ, սրբեաց : Եւ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն : Եւ նա պատուիրեաց նմա՝ մի՛ ումեք ասել, այլ եթէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան քո, որպէս և հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա : Եւ յորդէր աւառնել բանն զնմանէ, և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել ի հիւանդութեանէ իւրեանց : Եւ նա խոյս տայր յանապատս տեղիս, և կայր յաղօթս : 16 :

Բ-ըշ · Խնդրեացուք : Կեցո : Աջ+ · Քառ ամենազօր :

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂ · ՃԽՓ · Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն : 569 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ե · 17 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ : Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յոտ մի՛ որ նշանաձեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի : Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից : Իսկ որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից : Քայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից : Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի՛ սպանանիցէ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի : Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում առանց պատճառի՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղրայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղ-

բայր իւր մերոյ՝ պարտաւոր լիցի ի գեհեն հրոյն։ Եթէ մատուցանիցես պատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ գքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քումմ, և ապա եկեալ մատուսցիր զպատարագն քո։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վազագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. զուցէ մատնիցէ գքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի. և արկանիցիս ի բանս։ Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչև հատուցանիցես զյետինն նաքարակիտն։ Լուարուք զի ասացաւ՝ մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում։ Եթէ ակն քո աջ գայթագղեցուցանէ գքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն։ Եւ եթէ աջ ձեռն քո գայթագղեցուցանէ գքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն։ Ասացաւ քէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա գրաձակմանն։ Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա չնալ, և որ գրաձակեալն առնէ՝ չնայ։ Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն զերդմունս քո։ Ալ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքային. և մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։ Ալ եղիցի ձեր բան, այո՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է։ Լուարուք զի ասացաւ, ակն ընդ ական, և առանձն ընդ առանձան։ Ալ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ չարի. այլ եթէ ոք ածիցէ սպառակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա և զբաճկոն քո։ Եւ որ ստիպապարհակ վարիցէ գքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս. որում խնդրէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս։ Լուարուք ապաքէն զի ասաց

ցաւ, սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Ա.յլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և ազօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որ ւկհնեն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգական իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և աշ ձէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն. և եթէ ասցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: Ա.րդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է: 48:

ՀԱՄԲԱՐՁԻ ԲՁ

Եկին ի վերնգմանն առաւօտեան: Բ. Եզե+ պոռն: 33:

ՍՍՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ա. 35:

ՏԷրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս. և գնաց զհետ նորա Սիմոն և որ ընդ նմանն էին. և իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ: Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դեւս հանէր: Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր և ասէր. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Իսկ Յիսուս զթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա և ասէ ցնա. կամիմ՝ սրբեաց: Եւ իբրև ասացն ցնա, վազվազակի գնաց ի նմանէ բորոտութիւնն, և սրբեցաւ: Եւ աստեալ նմա՝ եհան զնա արտաքս վազվազակի, և ասէ ցնա. զգոյշ լեր, մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային, և մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ ևս կարօղ լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յա-

նապատ տեղիս էր. և զայն առ նա յամենայն կողմանց : 45 :

Քարոզ. Խնդրեսցուք : կեցո : Աչքի. Թագաւոր :

Բ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ. ԲԿ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԱԿ

Ո՞ր յաթոռ փառաց նըստաւես ընդ Հօր. օրհնաբա-
նի՞ն ի դասուց քերովբէից ‖ օրհնեա՛լ Տէ՛ր Աստուա՛ծ
հարցըն մերոց, Ո՛ր ե՛կիր ի փըրկել ըզնախահայրն Ա-
դամ. ի ճառկնա՛նէ՛ մահանըր պըտղոյն. օրհնեա՛լ :
Ո՛ր փոխանակ ծառոյն գիտութեան կառուր ըզխաչ քո
Տէր. եւ արբուցեր ըզ մեզ ի կողահո՛ն աղբերէդ. օրհնեա՛լ :

Գ. Ը՞ղՏէր ‖ օրհնեցէ՛ք եւ բարձր ա՛րարէ՛ք ը՞զը-
նաձ յաւիտեա՛ն : Ո՞ր ելոյծ ըզվտանգաւոր երկունըս
նախահա՛ծն. ծըննանե՛լո՛վ ի սըրբոյ կո՛ւսէ՛ն. օր-
հնեցէ՛ք : Ո՞ր երբա՛ռ ը՞զփչաբեր անիծադրութի՛ւն բու-
սաբե՛րին. բեւեռե՛լո՛վ ի վերա՛յ խաչի՛ն. օր-
հնեցէ՛ք : Ո՞՛ր ճառկեացն ըզլերզի զանեութեա՛ն վանն
ազգի մարդկան. եւ պա՛րգեւեաց ըզմարմինն եւ զարիւն
իւր զանապահա՛կն. օրհնեցէ՛ք :

ՄՆԹԱՑՈՒՍՑԷ ԱԿ

Չանճառելի զոյս առաւուածութեանն. տես օրի : 213 :

. ՈՂՈՐՄԵԱ ԱԿ

Ո՞ր խոնարհեա՛ցար յերկինից ի հայրական ծո՛ցոյ. մին-
ձին ողորմա՛ծ և առեր մարմի՛ն ի սըրբոյ կու-
սէն վասն մերոյ փըրկութեանն ո՞ղորմեա՛ : Ընդ մեզ
Աստուա՛ծ չըրջեցար ընդ մեղաւորացս. եւ կամեցեր
ըզգեստիս վհշապի՛ն և չինչան խայթոցըք մահարե՛րին
եւ փըրկեցեր ըզմեզ՛ն ո՞ղորմեա՛ : Բեւեռեցեր ըզ-

մեղաս մեր ի վերայ խաչին. եւ համբերեալ մահու ի-ջեր ի գերեզմանն կենդանութիւն չնորհեցեր նըստեալ-ցեն ի խաւարի. եւ զօրութեամբ յարեար ոգոյ-մեռեալ:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԱԿ

Հրաշալի ըզյարութիւն Աստուածորդւոյն. ա՛յսօր աճեալ առաքելոցն եւ բանմութիւնըք հրեշտա-կացն. Երգէին երգ նոր անլռելի ձայնիւ: Զայն ահեղ գաբրիէլեան փոզոյն. ա՛յսօր զոչէր աւետարանէր ա-ւետիք են աշխարհի. Երգէին: Լոյս մեծ եւ ահաւոր. ա՛յսօր ծանգեաց սուրբ եկեղեցւոյ յարուցեալ ի մե-ռե-լոց Քրիստոս. Երգեսցուք երգ նոր:

ՍԱՂ. ՁԲ. ԿՑ. Յոյժ մեզ: ՓԽ. Համեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ե. 17:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ եղև ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փա-րիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որք ժողո-վեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց և Հրէաս-տանի և Երուսաղեմի. և զօրութիւն Տեառն էր ի բժըշ-կել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ. և խնդրէին զնա մուծանել ի ներքս, և դնել առաջի նորա. և իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տա-նիս, և ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո: Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիք և ասեն. ո՞վ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ մե-ղըս, բայց միայն Աստուած: Իրբև գիտաց Յիսուս ըզ-խորհուրդսն նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք ի սիրտս ձեր. զինչ դիւրագոյն է, ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա: Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ մեղս, ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ՝ արի ա՛ռ զմահիճս քո, և երթ ի տուն քո: Եւ առաջանայն յարու-ցեալ առաջի ամենեցուն, ա՛ռ զիւրև յորոյ վերայ ան-

կեալն գնէր, գնաց ի տուն իւր, և փառաւոր առնէր զԱստուած : Զարմանք կալան զամենեսին, և փառաւոր առնէին զԱստուած. մի եղեն աչիւ և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան : 26 :

Քարոզ. Խնդրեսցուք : Կեցո : Աղօթ. Քառ աւետարանի :

Յ Ե Բ Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ՃԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արթո Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ջ. 1 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա. զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինս է : Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ : Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա : Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս : Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկան : Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա : Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մտա ի սենեակ քո՝ և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս : Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև զհեթանոսսն. զի համարին թէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ : Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն,

զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։ Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև զկեղծաւորան տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան՝ թէ պահիցեն։ Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու՝ յորժամ պահիցես, օծ զգլուխ քո և լուա զերեսս քո, զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպահօղ, այլ Հօրն քումմ ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ։ Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։ 21։

ՀԱՄԲԱՐՁԻ ԲԿ

Ֆրխատոս յարեաւ ի մեռելոց։ Բ. Եղեւ գոռն։ 36։
ՍԱՂ. ՃԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան։ 571։
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ Բ. 1։

Տեառն մերոյ Յիսուսի Ֆրխատոսի

Եւ մտեալ դարձեալ ի Կափառնաում՝ յետ աւուրց լուր եղև եթէ ի տան է, և ժողովեցան բազումք՝ մինչև ան-դի ևս ոչ լինել և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։ Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն՝ ի լուցին զմահիճն յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ նստէին, և խորհէին ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած։ Եւ զիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի առ զմահիճս

քո և երթ ի տուն քո : Այլ զի վիտասկիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի՝ թողուլ ըզմեղս , ասէ ցանդամալոյծն . քեզ ասեմ , արի առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո : Եւ յարեաւ , և վաղվաղակի առեալ զմահիճան՝ ել առաջի ամենեցուն . մինչև զարմանալ ամենեցուն և փառաւորել զԱստուած և ասել , թէ այսպիսի բնչ երբեք ոչ տեսաք : 12 :

Ֆարիսեցի· Խնդրեսցուք : կեցո : Աղքի· Թագաւոր :

Բ · ՈՒՐԲԱԹ · Գ Շ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Ա Կ

Ա՛նեղանէր Սուրբ Աստուած իմոյ երկինից ի յերկրական քս . եւ անճառելի ծաղմամբ սրինօրինեցաւ յարքանդիլ կուսին աբեզաքին արքայաբնութեան . ‖ օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց : Ա՛նմեկնելոց ի հօրէ եկիր կամեալ ի մահ խաչի . եւ ընդ չարանգիծսըն պատժեալ ի սպանդ վարեցար այլ ի ծոցոյ հօր ոչ բաժանեցար . օրհնեմք : Ա՛նմահութեանդ սրբոյ փրկատոս իմոյ ի հող մահու . կատարելով զնշխարսըն հոգերգոցին ի գրի ներքնումն . այլ ակնարկելով քս ի դժոխս հաներ բոլոսպետարսըն քաջութեամբ եւ որ նմանիմ ին ի տապանս . օրհնեմք :

Գ· Ը՛գՏէր ‖ օրհնեցէք եւ բարձր արարէք ընդհանուր յաւիտեան : Ո՛ր անապականն Թագաւորն երկնից ի ծնեալ ի կուսէ երկրի . ինքանելով ի սուրբնս անպատուհասն չնարհեաց նմանելոցն ի խաւարի . օրհնեցէք : Ո՛ր կենսաբեր յարութեամբն իւրով ազատեաց զմարդկանս ի կեանս անմահ . եւ անբրբ մարմնով և արեամբըն հրաշիբեաց ըզմեզ յերկնից յարքայութիւնն . օրհնեցէք :

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ Ա Կ

Ո՛ր զկեանքն անմահարար մահկանացու բնու : 289 :

ՈՂՈՐՄՆԱ Ա.Կ

Եկեր ի տեսութիւն ահեղատեսիլ Աստուած. եւ մարմին զգեցար ի սըրբոյ Կուսէն. ‖ կենդանի՛չ եւ յոյժ մե՛ր կեցո՛ զմեզ: Խաչի համբերեցեր վասն ապրիմարդկան. եւ մեռեալս չարչարեալ փըրկեցե՛ր ի մահուանէ. կենդանի՛չ: Եգիր ի գերեզմանի կեա՛նք աշխարհի. եւ յարուցեալ յերրորդ աւուր զմարդիկ ի կեանըն փոխեցե՛ր. կենդանի՛չ:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Ա.Կ

Երգեսցուք քեզ ընդ հրեշտակ կա յաղթական՝ ծրհնեցերզութիւն: Որ մահուամբ քո՝ մեռուցեր զմահ. եւ յարութիւն պարգեւեցեր հաղանիւթ բընութեա՛նս. երգեսցուք: Որ ցուցեր մեզ ճանապարհ նո՛րոգման եւ մաքրեցեր զաղտեղութիւն յանցանացն զոր պատրեաց Բընեամի՛ն. երգեսցուք:

Կանխեցին կանայք իւղաբերք. ի գերեզմանն. եւ տեսին զյարութիւնըն Տեառն: Բացաւ դուռըն յարութեան. գերեզմանի՛ն կըն՛եքերոյ լոյս ծագեաց աւետեցաց: Ցարեաւ Տէրն ի մեռելոց. հզօր զօրութեամբ հաստատեաց զհիմունս եկե՛ղեցւոյ սըրբոյ:

ՍԱՂ. ՁԲ. ԿՑ. Ցոյց մեզ Տէր: ՓԽ. Հատեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ե. 27:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԱՌԱՒ ՔՐԻՍՏՈՍ

Եւ յետ այնորիկ ել առաւ, և եառն մաքսաւոր մի՝ ո՞րում անուն էր Ղեւի, զի նստէր ի մաքսաւորութեան. և ասէ ցնա. Ակ զկնի իմ: Եւ թողեալ զամենայն՝ յարեաւ զնաց զկնի նորա: Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւրում. և էր ժողովուրդ բազում մաքսաւորաց, և այլոց որ էին բազմեալ ընդ նոսա: Եւ տրտնջէին փարիսեցիքն և գպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ և ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք: Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա. ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հի-

* Տես ի Չեկուցումն, էջ Զ:

ւանդաց. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն: Եւ նոքա ասեն ցնա. ընդէր աշակերտքն Յովհաննու պահեն առէպ և խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն, և քոյքդ ուտեն և ըմպեն: Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարօղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել. եւ կեացեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ: Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չմիաբանի կապերան որ ի նորոյն: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու, և տիկքն կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է, և երկոքին պահին: Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի ըզնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է: 39:

Քաղց. խնդրեսցուք: Կեցո: Աղխ. փառ ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ՃԽԹ. Օրհնեցէք զՏէր. յօրհնութիւն նոր: 569:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Ջ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ձրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի: Իսկ արդ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս: Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին միաժարիցէ և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի: Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի՛ վասն մարմնոյ ձերոց՝ թէ զինչ ապանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ: Հայեցարուք ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հընձեն, և ոչ ժողովեն ի շտեմարանս, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա: Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի: Եւ վասն

հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոնի յամենայն ի փառան իւրում զգեցաւ իրրև զմի ի նոցանէ: Իսկ եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է և վաղիւ ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՛րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք: Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք. զինչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խընդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ: Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է առաւրն չար իւր: 34:

ՀԱՄԲԱՐՁԻ ԳՁ

Ա յսօր յարութիւն Քրիստոսի ասենք: Բ. Եբէ- թո՜ն: 39:

ՍԱՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Բ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ել դարձեալ ի ծովեզրն, և ամենայն ժողովուրդն գայր առ նա, և ուսուցանէր զնոսա: Եւ մինչ դեռ անցանէր, տեսս զԼևիի Ալփեայ՝ զի նստէր ի մաքսաւորութեան, և ասէ ցնա. Լեր ինձ: Եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղև ի բազմելն նորա ի տան նորա, և բազում մաքսաւորք և մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա: Իսկ դպիրքն և փարիսեցիք իրրև տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա. զի՞ է՝ զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք: Իրրև լուաւ Յիսուս՝ ասէ ցնոսա. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց, և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: Եւ էին աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն ի պահս. գան և ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ոչ պահեն: Եւ ասէ ցնոսա Յիսուս. միթէ մարթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա իցէ փեսայն պահել. զորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել. այլ

եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ : Ոչ ոք կապերա նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն ի հնոյ անտի, և չար ևս պատառումն լինի : Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկան, գինին հեղու և տիկքն կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է : 22 :

Բ-բաշ. Խնդրեսցուք : Կեցո : Աչք-ի. Թագաւոր :

Բ·ՇԱԲԱԹ·Գ Կ

ՅԱՌԱԽՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲՁ

Ո՞ր ի յերկնից իջեր անընակիզն Աստուած բա՞ն եւ լոյս. ‖ զքեզ ամենեքեան օրհնեսցուք. Աստուած հարցըն մերոց : Ո՞ր ի խաչին բեւեռեցար եւ հեղեր դարիւնդ ի փըրկութիւն տիեզերաց. զքեզ : Ո՞ր ի գերեզմանի եգար. եւ յարեար ի մեռելոց Քրիստո՛ս յաւուր երրորդի. զքեզ :

Գ. Ընդէր օրհնեցէք եւ բաշխեր ապարիկք ըզնա յանիսանա՞ն : Ո՞ր ի խաչին բեւեռեցաւ եւ ի գերեզման ձեռամբ իւրոց ազատակեցաւ. եւ կերակուր ընկալաւ ընդլեզի. ‖ ամենայն արարածք զովքով բարձր ապարիկք ըզնա յանիսանա՞ն : Ավանդ սրբոյ ամ՝ ամ՝ այ աբեղայ կըն խաւարեալ եւ ցերեկոյ վարդապետ տաճարին վերնատ ի վա՞յր. վերջըք պատահեալ երկիր չարժեալ ամենայն : Աթանգեցան ի մէջ երկրի. եւ ի յերերդ աւուր յարեաւ ազատաւածապէս. եւ ի յերկինըս համբարձաւ Աստըւած ամենայն :

ՄԵԾԱՑՈՒՍՑՔ ԲՁ

Սուրբ և Աստուածածին Մարիամ ցանկալի : 225 :

ՈՂՈՐՄԵՍ ԲՁ

Ի՞նչ եր յերկնից որդի Աստուծոյ ազատեցեր զարա-

բանծա. ան կանի՞մ առա՛ջի՛ քո՝ զդօրսեա՛ իննէ Ա՛ստըա՛ծ։ Ի՛ խա՛չին բե՛ւեռեցար Ա՛ստըա՛ծ և ընդմա՛րդն ի կա՛պա՛նաց մա՛հո՛ւ արձա՛կե՛ցե՛ր. ե՛ւ դի՛ւս մի՛ ա՛նառե՛ս առնե՛ր. ո՛ր մեղո՛քս ե՛մ մե՛ռնա՛լ։ Ծա՛զմա՛մբն Հո՛ր յա՛նմատո՛յց լա՛ւառի՛ն որ ի՛ջի՛ր ի գե՛րեզմա՛ն. կե՛նդա՛նացուցեր զա՛բրաժ՛ըս քո՛. ե՛ւ դի՛ւս մի՛ ա՛նառե՛ս առնե՛ր. քա՛նզի՛ քե՛զ միա՛յնոյ մեղա՛յ։

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ ԲՁ

Ի՛ գե՛րեզման քո կա՛նեխե՛ցի՛ն կանա՛նքն զի՛ւղս և պեսո՛ւկըս բե՛րի՛ն. ի՛՞նչ պա՛տի՛ւ Թագո՛ւհի՛ քո՛. զի՛ զմի՛զո՛ք ըզհոգա՛ցեալըս վի՛ր՛ած՛ե՛ր ի կեա՛՞նս։ Փո՛խա՛՞նո՛ւկ իւղոյն զհաւա՛տս անբի՛ծս. ե՛ւ զաղա՛ւնըս մե՛ր ընդ ա՛ռաւո՛տեան կա՛նանցն ընկա՛լ. ո՛րք զանձի՛ն կենա՛ց լո՛ւա՛ն ե՛ւ այ՛ի ունկա՛՞ն։ Ե՛՞ռա՛ն ա՛՛ւետս առաքելոցն յա՛րեա՛՛ւ յա՛րո՛ւցիչըն մե՛ր. ա՛ւետեա՛ց ըզդըժո՛խս. ե՛ւ զքրիստոսա՛մն կա՛՛պեա՛ց ի՛՛ յա՛նլոյծ կա՛պա՛՞նս։

ՍՍՂ · ՁԴ · ԿՅ · Յոյց մեզ · փԽ · Հաստեցար · 567 ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու ։ Ձ · 1 ։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև ի չաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտասյան, և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ չիւէին ընդ ափ և ուտէին։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. ընդ՞նչ գործէք՝ զոր չէ օրէն ի չաբաթու։ Պատասխանի եառ նոցա Յիսուս և ասէ. չիցէ՞ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն և որ ընդ նմանն էին. զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, և զհացն զառաջաւորութեան ևկեր՝ և եա այնոցիկ որ ընդ նմանն էին. զոր ոչ էր օրէն ումեք ուտել, բայց միայն քահանայապետիցն։ Եւ ասէ ցնոսա. տէր է որդի մարդոյ և չաբաթու։ Եւ եղև ի միւսում չաբաթուն մտանել նմա ի ժողովուրդն և ուսուցանել. և էր անդ այր մի, և ձեռն իւր աջ գոսացեալ էր։ Եւ սպասէին նմա գրիւքն և փարիսեցիք՝ թէ ի չաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարաբասութիւն ինքեան։ Եւ

նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն՝ որոյ ձեռնն զօսացեալ էր. արի անց ի միջ: Եւ նա յարուցեալ եկաց: Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից ինչ զձեզ. միթէ չար է ի շաբաթու, բարի ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ քան կորուսանել: Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա. ձգեա զձեռն քո: Եւ նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն: Ելոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս, թէ զի՞նչ առնիցեն Յիսուսի: 11:

Քարոզ. Խնդրեցաք: Կեցո: Աչքի. Քոյր ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂՄՈՍ ԿԶ

Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. երե: 563:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Ի. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք, և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: Ջի՞ տեսանես զչիզ յականն եղբօր քո, և ի քում ականն զգերանդ ոչ տեսանես. կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, Թող հանից զչիզդ յականէ քումմէ. և ահա հատագիկ ի քում ականդ գերան կայ: Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զչիզն յականէ եղբօր քո: Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ: Խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խընդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ իցէ ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տացէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ տացէ նմա: Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա: Ջամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք: Մտէք ընդ նեղ

դուռն. քանի՛ ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա. քանի՛ անձուկ է դուռնն և նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա: Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք. ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա: Միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ: Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել: Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի: Ապա ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա: Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է: Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դեւս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք. և յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբեք գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն: Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զոսոսա, նմանեսցէ առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրեւք՝ և խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զոսոսա, նմանեսցէ առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ. իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն և անկաւ, և էր կործանումն նորա մեծ յոյժ: Եւ եղև իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա. զի իբրեւ իշխանութիւնս ունէր, և ոչ որպէս գրագիրքն: Այլ իբրեւ էջ ի լեառն անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր պագանէր նմա, և ասէր. Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել: Զգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս և ասէ. կամիմ՝ սրբեաց: Եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս. զգոյշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցոյց

զանձն քո քահանային, և մատո զպատարագն զոր հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա: Եւ մտեալ ի կապարանսն, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա և ասէր. Տէր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ: Ասէ ցնա Յիսուս. Ես եկից և բժշկեցից զնա: Պատասխանի եւս հարիւրապետն և ասէ. Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ. քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս. ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ: Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ գհետն երթային. ամէն ասեմ ձեզ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք: Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից, և որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լայ և կրճել ատամանց: Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ՝ և որպէս հաւատացեր եղիցի քեզ: Եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ: Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչն նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմին. յոտն եկաց և պաշտէր զնոսա: Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զոգիսն բանիւ և զամենայն հիւանդսն բժշկեաց: Չի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ: Ղ. 17:

ՄԵՍԵԴԻ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գաս ոգոյ ես:

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:

ՀԱՄԲԱՐՁԻ Դ2

Թագաւոր գոլով քո յաչխարհ. մտեր ի քաղաքն: 309:

ՍԱՂ. 2. Ցնծացէք առ Աստուած օգնական է: 457:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի. Բ. 23.

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև (նմա) ի շաբաթու անցանել ընդ արտասյս, և աշակերտքն ի գնալն իւրեանց սկսան հասկ կորզել և ուտել: Եւ փարիսեցիքն ասեն ցնա. տես զինչ գործեն աշակերտքն քո ի շաբաթու զոր չէ արժան: Եւ ասէ ցնոսա Յիսուս. ո՞չ երբեք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղև, և քաղցեաւ նա՝ և որ ընդ նմայն էին. զիարդ եմուտ ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիս, և զհացսն զառաջաւորութեան եկեր՝ և ետ և այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն: Եւ ասէ ցնոսա. շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբաթու, ապա ուրեմն տէր է որդի մարդոյ՝ և շաբաթու: Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գոսացեալ էր: Եւ ապասէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ: Եւ ասէ գայրն՝ որոյ ձեռնն գոսացեալ էր. արի անց ի մէջ: Եւ ասէ ցնոսա. զինչ արժան է ի շաբաթու, բարի ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել: Եւ նոքա լռեցին: Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա, ասէ գայրն. ձգեա զձեռն քո: Եւ նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա: Գ. 5:

Քաղաք. Խնդրեսցուք: կեցո: Աջմէ. Թագաւոր:

Գ. ԿԻՒՐԱԿԷ. ԴՁ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳՁ

Ե՛րկնըպագեմք քեզ Քրիստոս ար ի ձեռն սրբոյդ առաքելոցըն ծանուցար մեզ. ‖ Տէ՛ր Աստուած հաշտեալ մերոց: Ե՛ւ աշխարհատեաց ի սըրբոց առաքելոյն. ա՛ռաք փառաւորել զքեզ ի տաճարի սրբութեանն քո.

զար հիմնեցուցեր ի վերայ վիմի հաւատոյ. տէ՛ր։ Եկայք ժողովուրդք սրբք ի հնթանոսաց. ցընծութեամբ ասնանացուք զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. բարեբանելով ըզՏէ՛ր։

Գ. ԸնդՏէր օրհնեցէք ‖ և առաւել բանիւ սրբարէք ըզնա յաւիտեան։ Ընդ այնմիսիկան բանմութիւնան ըզՔրիստոս թագաւորն. որ եկաւորէ այսօր ի սուրբ եկեղեցի. ամենայն ազինքք գովեցէք և։ Եկայք հաւատացեալքք սուրբ երրորդութեանն յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. սրբարէք ասնս ուրախութեան մինչեւ յանկիւնըս սեղանոյ և առաւել։

ՄԵՄԱՅՈՒՍՑԻ Գ2

Աստուածածին երկնային զուարն աստուածային։ 379։

Գէղէրէ, Գալաթիա աստ. Գասք լուսեղէն։

ՈՂՈՐՄԵԱ Գ2

Այսօր հրեշտակաց բանմութիւնքըն ասնակից լինին ընդ մեզ. քանզի երկնաւոր թագաւորն եկաւորէ ի սուրբ եկեղեցի։ Խընդամ և զուարճացիր հարսնացեալըդ Աստուածոյ եկեղեցի. քանզի ըզքեզ Տէրըն առ բանից ընծայեաց և համեցաւօծու ըընակիլ ի քեզ։ Լուսաւորեա լուսաւորեա կանթուղիկէ եկեղեցի. քանզի ի քեզ չող աստուածեղէնն իջանէ յօրէ լուսոյ ծագեանց. և լուսաւորեաւօծոց ըզմանկունըս քո։

ՏԻՐ ՑԵՐԿՆԻՑ Գ2

Ո՞րք արժանաւորեցայք ի կոչումըն փառաւորութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն և՛ երգ նոր. և՛ երգեցէ՛ք զանունն նորա ձայնիւ ըզնծութեա՛մբ յօրհնութիւն ինոր։ Զօրացեալքս ի քեզ Քրիստոս ժողովուրդք հաւատա՛ցեալոց. հըչմարիտ խոստովանութեա՛մբ օրհնեմք զթագաւորդ աստուածային

կ՚նաբեր տընօրէնութեան քո. փառաւորելով զաշխատութիւնս եւ ընդգանչելի անուն քո. տէր տէր ի մեծ ի վերայ ամենայն երկրի: Ո՛րպէս լեր եկեղեցի սուրբ. հարան երկնաւոր խորհրդոյն ի փառս ամենասուրբ երրորդութեանն. որ հաճեցար ի չխանդութեամբն իւրով. զարդարեաց ծաղմամբ լուսոյ պըսակեամբ զքեզ. ի պատիւ ամենայնի՝ ոյ՝ սրբով ի՝ւրով:

Զկնի Սուրբ Աստուածէն Աղ. փրկիչ: Քաջ. վասն լսելի: Քահ. Օրհնութիւն: Եւ ելանէն խոչ և աւետարանաւ և ամենայն ղարդուսւ ի գուռս, ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ. Գ2

Ո՛րպէս լեր սուրբ եկեղեցի. քանզի փրիստոս ար քայն երկնից. այսօր պըսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրըս քո՛ ս քանչելի փառաւքն իւրով: Խընդա յոյժ գուսանըր Սիոնի. քանզի երկի՛ր ա՛ երկինք եղեն. այսօր վիրաւորին քո նորոգմամբ. եւ թագաւորն երկնաւո՛ր հաճեցաւ բըն՚ակիլ ի քեզ: Ընդ գահս երկնաւոր զօրացըն վերառա՛լ ուրախութեամբ քեզ այսօր զաննդադար փառաւորութիւնս. ո՛րպէս լեր հարան անսպառ անքննելի քո խորհրդո՛վ:

Զկնի ՍԱՂՄՈՍ կէ. ի ՂԱ.

Կց · Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. և զՏէր յաղթեցան խաչեալն:

Փխ · Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն: 293:

ԸՊՔՆԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ: Գ. 9:

Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց, և հանեա պատուղ ի քոց արդարութեան արմտեաց. զի յորժամ շահեսցաք քո լիութեամբ ցօրենոյ, և գիւեաւ հնձանք քո առատել ևս բղխեսցեն: Որպէսզի, մի՛ լքանիր ի խըրատու Տեառն, և մի՛ լուծանիր յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, ատնջէ զամենայն որդի զոր ընդունի: Երանեալ է այր որ եգիտ գիմաստութիւն, և մարդկանացու՝ որ հասս գհանճար: Զի լաւ է վաճառն

զայն գտանել՝ քան զգանձս ոսկւոյ և արծաթոյ։ Պատուականագոյն է քան զականս պատուականս, և ոչ ինչ է չար որ հակառակ կայցէ նմա։ Յայնմի է ամենեցուն որ մերձին ի նա, և ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա։ Չի երկայնաւուրք և ամք կենաց յաջմէ իւրմէ, և յահեկէ իւրմէ փառք և մեծութիւն։ Ի բերանոյ նորա բղխէ արդարութիւն, զօրէնս և զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ։ Ճանապարհք նորա ճանապարհք բարեաց, և ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ։ 18։

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ։ կԶ. 12։

Չի այսպէս ասէ Տէր. ահաւասիկ ես դարձուցանեմ ի դուստ իրրև զգետ զխաղաղութիւն, և իրրև զհեղեղատ յորդեալ՝ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա ի վրայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, և ի վերայ ծնգաց իւրեանց զգուիցեն. որպէս մայր զմանուկ իւր զգուիցէ, այնպէս զգուեցից զձեզ. և յԵրուսաղէմ մխիթարեսջիք, և տեսջիք և խնդասցին սիրտք ձեր, և ոսկերք ձեր իրրև զդալարի զուարճասցին. և ծանիցի ձեռն Տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի անհաւատիցն։ Չի ահաւասիկ Տէր իրրև զհուր եկեսցէ, և կառք նորա իրրև զմրրիկ հատուցանել սրտմտութեամբ զհատուցումն իւր, և բոցով հրոյ զարհամարհանս իւր։ 15։

Գողոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս։ Գ. 14։

Չայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ ի մօտոյ գալ. ապա թէ յամեցից, զի գիտասցես՝ թէ որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ չրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան։ 16։

Ջ-ՅԴԷ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Հիմունք նորա ի լեռան սուրբ նորա, սիրէ Տէր զդրունս Սիովնի քան զամենայն յարկս Յակովբայ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ ԺԶ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպոսի կեսարիայն՝ հարցանէր ցաշակերտան և ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն

զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զեղիա, և կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն : Ասէ ցնոսա Յիսուս . իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ : Պատասխանի եւ Սիմոն Պետրոս և ասէ . դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ : Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնա . երանի քեզ Սիմոն՝ որդի Յովնանու , զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ , այլ Հայր իմ որ յերկինս է : Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն : Եւ տացց քեզ զպետական արքայութեան երկնից . և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս , և զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս : 19 :

Եւ փետրեցին զանդատողքն, և ընդ նոսին աչեարկին : Ապո-
քոյ · Սուրբ խաչիւս : Աղ · Պահպանեա : Եւ ի դառնալն
ախտիցն յայնէ .

ՍԱՂ . ՁԻ . ԿՅ · Յոյժ մեզ : ՓԽ · Հատեցար : 567 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ջ . 12 ,

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև ընդ աւուրն ընդ այնոսիկ ել ի լեառն : 223 :

Եբէ · Նորատունկ : Քոյ · Խնդր : Կնցս : Աղ · Քում ամն :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ . ՃԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ը . 18 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Տեսեալ (Յիսուս) ժողովուրդս բազումս դիւրև , հրամայեաց երթալ յայն կողս : Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա . վարդապետ , եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես : Ասէ ցնա Յիսուս . աղուեսուց որջք գոն , և թռչնոց երկնից բոյնք . այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ գլուխ իւր : Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա . Տէր , տուր ինձ հրամանն՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ : Ասէ ցնա Յիսուս . եկ զկնի իմ, և թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց : Եւ իբրև ել մուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա . և

ահա չարժումն մեծ եղև ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր: Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր փրկեա զմեզ՝ զի կորընչիմք: Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր վատասիրտք էք սակաւահաւատք: Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ: Եւ մարդիկն զարմացան և ասէին. որպիսի՛ ոք իցէ սա, զի և հողմք և ծով հնազանդին սմա: Եւ իբրև անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն՝ չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո, Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: Եւ դևքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ ասա, հրամայ մեզ երթալ յերամակ խոզից: Եւ ասէ ցնոսա. երթայք: Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ի գարէ անտի ի ծով, և մեռան ի ջուրն: Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա: Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, և եկն ի քաղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի որ գնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա: Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր. զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ արի և շրջեաց: Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս, յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՝ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո: Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր: Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւորեցին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան: Թ. 8:

ՀԱՄԱՌԱՐՁԻ ԴՁ

Փառաբանակից Հօր Որդի որ: Ա. Բ. Քէ դ—ն: 44:

ՍԱՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս ըստ Մարկոսի: Գ. 6:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ ելեալ սրտաբո վազվազակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիարդ կորուսցեն զնա: Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց ի ծովեզրն: Եւ բազում ժողովուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ նորա, և ի Հրէաստանէ և յԵրուսաղեմէ, և յայնկոյս Յորդանանու, և որք ի Տիւրոսէ և ի Սիդովնէ. բազում ժողովուրդ իրրև լսէին որչափ ինչ առնէր, գային առ նա: Եւ ասէ ցաշակերտան իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա. քանզի զբազումս բժշկեաց. մինչ զալ խառնել զնովաւ՝ զի մերձենացին առ նա որք ունէին ախտս ինչ: Եւ այսոք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին, թէ դու ես Որդի Աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա: 12:

Բառք. Խնդրեացուք: կեցո: Աջխ. Թագաւոր:

Գ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ. Դ Կ

ՅԱԹԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲԶ

Ա՛նապատական բանդ ա՛ստղեաց. որ լիցեր ի մէջ հնձ՛ոցին. փըրկեցեր զերբիս մա՛նկունսըն ցա՛ղո՛ւմն օրհնո՛ւթեան. ‖ օրհնեալ ե՛ս Տէ՛ր Աստղա՛ծ: Ո՛ր ի բաբելոնի ըզբոց հրոյն չէ՛ լքեցեր. եւ զմանկունսն ա՛պրե՛ցո՛ւցեր. եւ նոքա՝ ի բո՛ցէն ա՛ռե՛լով. օրհնեալ: Ո՛ր յաթգանդի կո՛ւսէն բնակեցար. եւ ծընար ո՛րպէ՛ս մի՛ նո՛ւկ. որ ըզմանկ կո՛խեցեր և զյարութիւն քո ցո՛՛ւցեր. օրհնեալ:

Գ. Ը՛զՏԷՐ ‖ օրհնե՛ցէք եւ բա՛՛ր թ՛ր աղաղակ՛՛ք յաւիտեա՛՛ն: Ջանըմակիզբըն զամենամաւրր զերրորդութիւնն. ո՛ր նո՛յն ինքն իւր աչնէզ ըզնաւթեամբըն զո-

յաղագս յաչընչէ զամենային արարածս. ընդընա հո-
գեւոր երգով օրհնեցէք: Զհամատոհմական էութեան
բանն ի չօրէ. ար լոյս մեծ ծագեաց անեռասելի ծա-
գմամբ ար հաստատեաց զերկինս եւ զիմանալի զօրըս
հրեշտակաց. ընդընա հոգեւոր երգով օրհնեցէք:
Զանեռիս զերկնաւոր զթագաւորութիւնն. ար արարչա-
գործ ասեղծմամբ վայելչացոյց զերկինս եւ զերկիր.
ի վաղս ամենաժառուրբ երրորդութեանն երկրբրեան
հրեշտակայինն օրհնութեամբ. ընդընա հոգեւոր երգով
օրհնեցէք:

ՄԽՃԱՑՈՒՍՑԷ ԲՁ

Ընդքէզ կոյս և մայր և բնակարան աստուածայինն
նեմարդութեանն. զհաւանեմք և վերծրհնեմք զհղեալ
փրկօղ կենդանութեան աղգի մարդկան. ‖ վասն որոյ
ըզքեզ Աստուածածին և կոյս. բարեբանեմք ընդմայր և
զաղախին փրկչէն մերոյ: Ծնունդըն չօր և հինա-
ւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայ-
նի քում բնակեցաւ և ի չօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ:
Ծնանիլն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ
չօր. անարգանաւք ի մարդկանէ փառաւորութեամբ էու-
թեամբ երկրբրպագեալ. վասն որոյ: Ըզքեզ ոչ միայն
արդիք մարդկան այլ եւ վերինն գօրութիւնք. զանաք ան-
մարմնոց հոգեղինաց հրեղինաց զբւարթնոց եւ հրեշ-
տակաց. գոհ հարանեն և վերծրհնեն եւ փառաւորեն
ընդմայր և զաղախին փրկչէն մերոյ:

ՈՂՈՐՄՆԱ ԲՁ

Աստուածէն պարտուղ առաջին ծառայն բղնախառնող-
ծըն մահացոյց. իսկ Որդիդ միածին երկն եւ փրկեաց
զմեզ: Չտրչտրաս ես յանձն առեր ընդխաչի չարու-
թիւնդ մեռանելոց. ընդընա զձեռագիր իմոյ յանցանացս:

կ՚ընդունուիս՝ եւ զերկոսեանն եղար վանն ի հնոցն առեղծեալ մարգոյն. զմեղօք մեռեալ զա՞նձն ի՞մ կեն-դա՞նացո՞ :

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԲՁ

Ո՞վքին ի զերեզմանն առաւօտեա՞ն սուրբ կանայքն. յօծա՞նել խընկիկ զանաւպակա՞ն մարմի՞նն: Ո՞չչուի-մըն հրեշտա՞կին քա՞յլ երկր ընդոստ առ՞նուլ. ցո՞նծա-ցեք յաբեաւ որպէս յառա՞ջն ա՞ստ՞ց: Ա՞ռեալ ի հրեշ-տա՞կէն զաւետիս յարութեանն. պատմի՞ն աշակեր-տացն ԵՔ՚ յարեաւ Քրի՞ստոս :

ՍԱՂ · 27 · 43 · Յոյժ մեզ : ՓԽ · Հաճեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ի· 1 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ իբրեւ կատարեաց գամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնաում: Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախ-ճանել, որ էր նմա պատուական: Իբրեւ լուաւ զՅիսու-սէ, առաքեաց զծերսն ի Հրէից՝ աղաչել զնա՝ զի եկեալ ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ասելով եւ ասէին, Թէ արժանի է որում զՆորին զայս առնես. զի սիրէ զազգս մեր, եւ ըզ-ժողովրդեանցն նա չինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրեւ ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս եւ ասէ ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական Եթէ ընդ յարկաւ ի-մով մտանիցես. վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ ար-ժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ եւ բժշկեսցի մա-նուկս իմ. քանզի եւ ես այր մի եմ՝ կարգեալ ընդ իշ-խանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս. եւ ասեմ ասա՝ երթ, եւ երթայ. եւ այլում՝ Թէ եկ, եւ գայ. եւ ծառա-յի իմում՝ Թէ արա զայս, եւ առնէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթայրն զհետ նորա եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, Թէ եւ ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան առ-դրէն պատգամաւորքն ի տուն, եւ գտին զծառայն հի-ւանդ՝ բժշկեալ : 10 :

Քաջալ. խնդրեացուք: կեցո: Աչքի. փառ ամենազօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ. ճՂԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն: 569:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Թ. 9:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ անցեալ ընդ այն (Յիսուսի) հասեալ այր մի զի նըստէր ի մաքսաւորութիւնն, Մատթէոս անուն. և ասէ ցնա. եկ զկնի իմ: Եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղև իբրև բազմեալ էր նա ի տանն, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա: Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր: Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա. ոչ է պիտոյ բժիշկ կարօղաց՝ այլ հիւանդաց: Երթայք ուսարուք՝ զի՞նչ է՝ զողորմութիւն կամիմ, և ոչ զպոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու և ասեն. ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն: Ասէ ցնոսա Յիսուս. միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առաջապահ առ պահել՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն: Ոչ ոք արկանէ կտաւեր անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու լցանել զլրութիւնն նորա ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի: Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, և գինին հեղու և տիկքն կորնչին. այլ արկանեն գինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին: 17:

ՀԱՄԲԱՐՁԻ ԴՆ

Ընդ հրեշտակն յերկնից աւետաւոր: Բ. Եբեր. գոռ: 48:

ՍԱՂ. ճԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութիւնս: 571:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Գ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Լսանէ ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չորեքան առ նա: Եւ արար երկոտասանս՝ զի ի-

ցեն զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարոզել, և ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս և հանելոյ զդեւս։ Եւ եղ անուն Սիմոնի՝ Պետրոս. և Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննու եղբօրն Յակովբայ՝ եղ նոցա անուանս Բաներգէս, որ է՝ որդիք որոտման, և զԱնդրէաս և զՓիլիպպոս և զԲարթուղիմէոս և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս, և զՍիմոն Կանանացի, և զՅուդա Սկարիովտացի, որ և մատնեացն զնա։ 19։

փ–բ։ Խնդրեսցուք։ կեցո։ Աչք։ թագաւոր։

Գ · ԵՐԵՔՇԱԲԱԹԻ · Ա Զ

ՅԱՌԱՒՕՏՕՅ

ՀԱՐՑ ԲՁ

Ո՛ր թանգաւորդ ես յանբաւեւնից տէր և արարիչ ամենայն լինելութեան. ‖ օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց։ Ո՛ր սպանանելոցդ ես ի սերմնավրէից. եւ փառաւորեալ յանմարմնականն բանըմբռնեցեալ. այսօր ի դահճացըն մերկացեալ և ի գինաւաճառաց բաց բաժանեցար վասն մերոյ փըրկութեան. օրհնեալ։ Ա՛յսօր ըզկենդանարարըն մեր սուրբ ըզխաչն օրհնեցուք. քանզի ի վերայ նորա բանչեցաւ մեզ պարգեւք անմահութեան. տէր Աստուած։

Գ · Ը՛ՁՏԷՐ ‖ օրհըն՛եմ ի՛ ձեզ. եւ բարձր արարէք ընդնա յաւիտեան։ Ա՛յսօր նըշան սուրբ խաչին ի յե՛մ ի՛ ձեռ՛կըրկի՛ երեւե՛ւնալ. օրհ։ Ա՛յսօր ընդդէմ թըշնամւոյն. զնա ահագարեա՛ ի՛ ձեռ՛կըրկի՛ ցո՛ւցա՛ւ մեզ. օրհ։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԲՁ

Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարերար։ 341։

ՈՂՈՐՄԵԱ ԲՁ

Ո՛ր կամաւոր խաչելութեամբ քո տէ՛ր բաւեր ըզմեզ. ‖ ըզքէզ բարերանեմք ամենեցո՛ւն յարութի՛ւն։ Ո՛ր երեքօրեայ թաղմամբ քո տէ՛ր ազատեցեր ըզմեզ.

ընդքեզ : Ո՛ր լուսափայլ յարութեանդ քո Տէր կենաց պարծեցեր զաշխարհս . ընդքեզ :

ՏԷՐ ՑՆԵՐԿՆԻՑ ԲՂ

Զայն անեռասուր հրեշտակին զընտրեցացոյց զառաւօտեան կանայն . զՔրիստոսէ պատմելով ըզյարութիւն . Մի յուսահատիք տրտմութեանդ այլ ցընծացէք բերկրելով . խնկազգեացք աստուածայնոյն և փախարձողք յարութեանն : Փութացարուք ի Գալիլեա՝ անեսա՛ն նեցէք աշակերտացն . Եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց ըզմահ :

ՍԱՂ . ՁԲ . ԿՑ . Ցոյց մեզ : ՓԽ . Հաձեցար : 567 :

Արթոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ի . 11 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԱՏԱՒ ՔՐԻՍՏՈՍ

Եւ եղև ի վաղիւն երթայր ի քաղաք մի, որում անուն էր Նային . երթային ընդ նմա և աշակերտքն նորա , և ժողովուրդ բազում: Իբրև մերձ եղև ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի, որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի . և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա : Իբրև հառս զնա Տէր՝ գթացաւ ի նա և ասէ . մի՛ լար : Եւ մատուցեալ մերձեցաւ ի դագաղն . և որք բարձանային տանէին՝ զեղի առին . և ասէ . պատանի դու, քեզ ասեմ, արի : Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել : Եւ ետ զնա ցմայր իւր . և ահ կալաւ զամենեսեան , և փառաւոր առնէին զԱստուած՝ և ասէին, թէ մարգարէ մեծ յարուցեալ է ի մէջ մերում, և թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարեբանին : Եւ ել պրոյտս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա , և ընդ ամենայն կողմանս աշխարհին : Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ : Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտաց իւրոց Յովհաննէս , առաքեաց առ Տէր և ասէ . դու ես որ գալոցն ես , եթէ այլում ակն կալցուք : Եւ եկեալ առ նա արքն՝ ասեն . Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ . դու ես որ գալոցն ես, և թէ այլում ակն կալցուք : Եւ ի նմին ժամու բժշկեաց

պրազում ի հիւանդութենանց և ի հարուածոց և յայլոց չարաց, և կուրաց բազմաց չնորհեաց տեսանել: Պատասխանի ետ Նոցա և ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լուայք. զի կոյրք տեսանեն և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատաք աւետարանին. և երանի իցէ՝ որ ոչ գայթագղեսցէ յիս: Եւ իրրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. զի՞նչ ելէք յանապատն տեսանել. եղէգն չարժուն ի հողմոյ: Այլ զի՞նչ ելէք տեսանել. այր ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւանիկ՝ որ ի հանդերձս երեւելիս և ի փափկութեան են՝ յարքունեաս են: Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո, ասեմ ձեզ՝ առաւել ևս քան զմարգարէ. զի սա է՝ վասն որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ամէն ասեմ ձեզ, մեծ ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է, բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա: Եւ ամենայն ժողովուրդն իրրև լուան՝ և մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած, զի մկրտեցան ի մկրտութենն Յովհաննու: Իսկ փարիսեցիքն և օրինականքն զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ: Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ, և ո՞ւմ իցեն նմանեալք: Նմանեալ են մանկտւոյ որ ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս և ասիցեն. փող հարաք ձեզ՝ և ոչ կատեցէք, ողբացաք՝ և ոչ լացէք: Եկն Յովհաննէս Մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասէք՝ դև գոյ ի նմա: Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասէք. ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց: Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց: 35:

Բ–ԸՂ. Խնդրեացուք: կենցո: Աղէ՛. Զուտ ամենազօր:

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂ. ՃԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: 569:

Արթո՛ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Թ. 18:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Մինչդեռ (նա) զայս խօսէր ընդ նոսա ահա իշխան մի

մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա և կեցցէ: Յարեաւ Յիսուս և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ: Եւ ահա կին մի տեառնատես երկոտասանամեայ, մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա. քանզի ասէր ի մտի իւրում, թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ: Իսկ Յիսուս իբրև դարձաւ և եհաս գնա, ասէ. քաջալերեցաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ: Իբրև եկն Յիսուս ի տուն իշխանին, և եհաս զփողարան և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. ի բաց գնացէք. զի ոչ է թէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ: Եւ ծաղր առնէին գնա: Եւ իբրև եղ ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն: Եւ եղ համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն: 26:

ՀԱՄԲԱՐՁԻ Ա2

Ընդ կանայն իւզաբերեան առ: Գ. Եղե+ պառն: 28:

ՍԱՂ. ճԳ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Գ. 20:

Տերամբ մերով Յիսուսիս Քրիստոսիս

Գան ի տուն, և գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա: Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ: Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղեմէ իջեալ էին, ասէին թէ բզեղզեբուղ գոյ ի դմա, և իշխանաւ դիւացն հանէ դա զդեւս: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօք խօսէր ընդ նոսա. զիարդ կարէ սատանայ զսատանայ հանել. և արդ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն. և եթէ տուն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն: Եւ եթէ սատանայ ի վերայ անձին իւրոյ յարիաւ՝ և բաժանեալ իցէ, ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է: Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ ի տուն նորա աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա զտուն նորա աւար հարկանիցէ: Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողի որդւոց մարդկան մեղք և հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյեսցեն, բայց որ հայհոյեսցէ զՀոգին սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան,

այլ պարտապան լիցի յաւխաներից մեղաց : Զի ասէին՝ թէ այս պիղծ գոյ ի նմա : 30 :

Քաջաղ · խնդրեսցուք : կեցո : Աչքի · թագաւոր :

Գ · ՀՈՐԵՔՇԱԲԱԹԻ · Ա Կ

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

ՀԱՐՑ ԲՋ

Ա՛յսօր բեւեռեալ քո՛ւ խաչին . և՛ զի՛նա՛ւորին խո՛ցեալ զանարատ ըզկո՛ղզ ‖ ՏԷ՛ր Ա՛ստուած հա՛րցըն ը մե՛ռոց : Ի՛սկ բըղխումըն սուրբ արեան՝ քո՛ւ լըւաց ըզսո՛ւտ ըզերըս յանի՛ծից Ադա՛մայ . ՏԷ՛ր : Պարգեւատո՛ւ բարեաց՝ո՛ց եւ սըւոզ աղո՛ըմա՛ւթեան . Ե՛րդա՛ր ի՛ գերեզմա՛՛նն . ՏԷ՛ր :

Գ · Ը՛ղՏէ՛ր ‖ Ա՛մե՛նա՛յն գո՛՛րծք օրհնե՛ցէ՛ք : Ո՛ր յանէ՛ից գոյա՛՛ցոյց արարածն ի՛ւր կե՛ըպմանէ . զգաստացեալ օրհնաբանե՛ի՛ք Է՛զդ . ամե՛նայն : Ո՛ր զգաստակնե՛ք մնա՛ռ եւ՛ լոյծ . իւրո՛վ անչընչացեալ մարմնոյն լըհնոզացեալ մարդոյն . ամե՛նայն : Ո՛ր զանազնանձնաշա՛՛կըն քաղցրա՛՛ցոյց . ճաշակմամբ զանըն՝ո՛՛ւթեանն . զի՛ հաղո՛ըդեսցո՛ւք մարմնոյ եւ արեա՛՛նըն Տեառն . ա՛՛մե՛նայն :

ՄԵԾԱՑՈՒՑԷ ԲՋ

Բանն ա՛ռաքեալ ի՛ Հօրէ՛՛՛ ո՛ր վաղըն մեր մարմնացա՛՛՛ւ . եւ ցընծութի՛ւն աշխարհի յա՛յտնեցաւ . ‖ ըզքեզ բա՛րեբանե՛մք Աստուածածնի՛՛ն կո՛՛յս : Զի՛ ո՛րո՛ւմ ո՛չըն հանդո՛ւրժէ՛՛՛ն բո՛՛ցա՛նըչոյլ սո՛՛րովբէ՛՛՛ն . նա՛ բնակեցաւ ի քո՛ւմ յո՛ր՛վայնի՛ն . ըզքեզ : Յո՛րմէ՛ սարսեալ դո՛՛դայի՛՛՛ն փա՛յլակնացայտ ի՛ լուսո՛՛՛յն . ի՛ զի՛րկըս քո՛ ը՛նդա՛ ը՛նկալա՛ր . ըզքեզ :

ՈՂՈՐՄԵԱ ԲՋ

Հա՛յր ա՛նըսկի՛զբն . ո՛ր վե՛րջն՝նե՛ալդ ե՛ս ի դասուց քե՛ր-

բովքէից · ընդքէզ ամպաւճոյմբ ‖ ձողրմեա քոյոց հաշտատացելոց : Բանդ ի հօրէ ձր յաւտակ քան զյաւիտեանան ոլորի · փառակից Հօրն եր · ձողրմեա : Ո՛ր նըմա մխ ի քրովբէս եւ սեռաչութեամբ խնամեն զաթաթածըս քո· ճըշմարիտ սուրբ Հոգիոյն ձողրմեա :

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ ՌՉ

Ա՛յսօր զուարճացան սիեզերք ամենայն · ճըշմանրիտ յարութեամբ Աստուածորդւոյն · քանզի զդըժոխս աւերեաց եւ զերեաց զաթգելեալս ի նմա : Ա՛յսօր լուսափայլեալ մեծապայծառ ծաղմամբ հրեշտականպետն ի վիրայ վիմին · կանանցն աւետէր ասելով · զի խընդրէք զկենդանին ընդ մեռեալս : Ա՛յսօր բերկրեցան կանայքն իւղաբերք · աւետեօք յարութեամբ Աստուածորդւոյն · զարձան յաւտաքեանն ասելով · յարեաւ Աստուած :

ՍԱՂ · ՉԴ · ԿՑ · Ցոյց մեզ : ՓԽ · Հատեցաւ : 567 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ի · 36 :

ՉՏԷՐՆ ՄԵՐ ՅԻսուս Քրիստոս

Աղաչէր (գնա) ումն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ : 417 :

Քոյրդ · Խնդրեացուք : Կեցո : Աչքդ · Քամ ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ · ՃԽՉ · Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Թ · 27 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն (Յիսուս), զհետ եղեն նորա կոյրք երկու , աղաղակէին և ասէին · ողորմեաց մեզ, որդի Դաւթի : Եւ իբրև եկն ի տուն , մատեան առ նա կոյրքն : Եւ ասէ ցնոսա Յիսուս . հաւատայք՝ եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ : Ասեն ցնա · այո Տէր : Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա և ասէ · ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ : Եւ բացան աչք նոցա . և սպառնաց նոցա Յիսուս և ասէ · զգոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ :

Եւ նոքա եկեալ համբուրեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն : Եւ յելանէին նոցա արտաքս , ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար , և յելանել դիւին՝ խօսեցաւ համրն : Եւ զարմացան ժողովուրդքն և ասեն , թէ և ոչ երբեք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլ : Իսկ փարիսեցիքն ասէին , թէ իշխանաւ դիւաց հանէ զդևս : 34 :

ՀԱՄԲԱՐՁԻ Ա Կ

Աբանչելի հրեշտակին Տեառն : Գ· չորս թուն : 30 :

ՍԱՂ· ճԺ· Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան : 571 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Գ· 31 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Գան եղբարքն և մայր (նորա) և արտաքոյ կացեալ՝ յղեցին և կոչէին զնա : Եւ անդ ժողովուրդն չուրջ զնովաւ նստէր· և իրեւ ասացին ցնա· ահաւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ , և խնդրեն զքեզ , պատասխանի եառ նոցա և ասէ· ո՞վ է իմ մայր կամ եղբարք : Հայեցաւ չուրջ զիւրեւ յաշակերտան զի նստէին , և ասէ· ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ· զի որ առնէ զկամն Աստուծոյ , նա է իմ եղբայր և քոյր և մայր : 35 :

Քաղաք· Խնդրեցուք : Կեցո : Աղաչե· Թագաւոր :

Գ· ՀԻՆԳՇԱԲԱԹԻ· ԲԶ

ՅԱՌԱՒՕՏՕՒ

ՀԱՐՑ ԲԶ

Ո՛ր զբթացար ի սուրբ մանկունեան եւ լքեալ փըրկեցեր ի բո՛ըռնքեալ բոցոյն· ‖ ընդքե՛զ մի՛շտ օրհնո՛ւմք Աստուած հարցըն մերոց : Ո՛ր սդո՛ըմեցար ազգի մարդկան՛ն եւ լքեալ մարմնացա՛ր ի՛ սուրբ կուսէն· ընդքե՛զ· Ո՛ր երկքօրեայ թագաւո՛մբ քո՛ տէ՛ր չարժեցան հիմունք երկրի՛· ընդքե՛զմանա բանի՛ր ըզմեռեալսըն յարուցեր· ընդքե՛զ :

Գ· Եւ՛ցէք Ո՛ր պա՛յծառացոյցն ընդ՛ այս խաչին· սո՛ր բաժանե՛լով զիւր պանա՛ծառ բարձուկն· եւ ի՛ա զե՛զ

յաղթութեան արտաքոյ լուրոյ ‖ ամենեցունց գոհութիւն մատուցանեմք : Ի չանեղծել ի սուրբն կողմ ի բերելն և զանազան սասանեցան զբաժնիք. քանզի որ ի նմա արգելեալքն անդադարեցին ան ՏԷր ամենեցուն : Եւ զարգելեալսն ի բռնութենէ մահու ազատեցոյց երկնաւոր յարութեամբն լուրով ամենեցուն :

ՄԵՏԱՑՈՒՍՑԷ ՌՁ

Չկուսութիւնդ քո Աստուածածին անարատ : 303 :

ՈՂՈՐՄՆԱ ՌՁ

Որ խանձեցար և թանձեցար վասն մերոյ փըրկութեան եւ յաչըեար ի մեռելոց. ‖ խնայեա ի ծնողիս քոյըս քո միայն մարդասէր : Որ ըզդժոխս աւերեցեր և ըզկերեալսն փըրկեցեր եւ մեզ կեանս նըւիրեցեր. խնայեա : Որ ի յերկինըս հանգրաձար եւ ընդ աջմէ Հօր նըստար. ի միանդամ քո գալըստեանն. խնայեա :

ՏԷՐ ՑԵՐԳՆԻՑ ՌՁ

Ապաշխելի կանայքն անեղկից եկեղն ի տեսանել ըզկերեզմանն. զի կատարեալ սէրըն մերժեաց զերկիւղն : Եկեղն ի խընկել ըզտէրունեանն մարմինն. եւ տեսին յարուցեալ ի գերեզմանէն. եւ վերըստին լցաւն ծաղեաց յաչխարհս : Քարոզեաց հրեշտակըն զյարութիւնըն Տեառն. եւ բացան գերեզմանըք նըշխեցեալոց. եւ յարութիւն Տեառն յաղթեաց մահու :

ՍԱՂ. ՁԻ. ԿՁ. Ձոյց մեզ ՏԷր : ՓԽ. Հաճեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ը. 1 :

ՏԷրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև յետ այնորիկ և ինքն չրջէր ընդ քաղաքս և ընդ գիւղս, քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ նմա, և կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յոգւոց չարաց և ի հիւանդու-

թեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւն ելեալ էր. և Յովաննա կին Փուզայ հազարապետին Հերովդի, և Շուշան, և այլք բազումք որք պաշտէին զնա յընչից իւրեանց: Եւ ի ժողովել բազում ժողովրդոց, և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ առակաւ. Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր. և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ և եղև կոխան, և թռչունք երկնից կերան զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, և ընդ բուսանելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւթոյ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ արար պտուղ հարիւրապատիկ: Զայս իրրև խօսեցաւ, ասէ. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Հարցանէին զնա աշակերտքն՝ թէ զի՞նչ իցէ առակն: Եւ նա ասէ. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք, զի տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լուիցեն՝ և մի՛ իմացցեն: Բայց առակն այս ինչ է. սերմն՝ բանն Աստուծոյ է. և որք առ ճանապարհաւն, այնոքիկ են որ լսեն, և ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի՛ հաւատացեն և ապրեսցին: Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձութեան հեռանան: Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իրրև լսեն զբանն՝ և ի հոգս և ի մեծութիւն և ի ցանկութիւն աշխարհիս գրգռեալ՝ հեղձնուն և անպտուղ լինին: Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ: Ոչ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ կապաստաւ, կամ դնէ ընդ մահճօք. այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն: Զի ոչ ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի, և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի և եկեսցէ ի յայտ: Տեսէք այսուհետև զիարդ լսէքդ. զի որ գոյցէ՝ տացի նմա, և որ ոչն գոյցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ: Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ազդ եղև նմա և ասեն. մայր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և կամին զքեզ տեսանել: Եւ ասէ

ցնոսա. մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն։ 21։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղօթ. Քառամ ամենազօր։

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր։ 569։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ թ. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ չրջէր (Յիսուս) ընդ ամենայն քաղաքս և ընդ գեօղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդն՝ գթացաւ ի նոսա, զի էին աչխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս՝ որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. հունձք բազում են՝ և մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտան իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս։ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին, Սիմոն՝ անուանեալն Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա, Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննէս եղբայր նորա. Փիլիպպոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակովբոս Ալփեայ և Ղեբէոս՝ որ անուանեցաւն Թադէոս, Սիմոն Կանանացի, և Յուդայ Սկարիովտացի՝ որ և մատնեացն զնա։ Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և ասէ. ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, և ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք. այլ երթայք առաւել առ ոչխարան կորուսեալս տանն Իսրայելի։ Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք. ձրի առէք՝ և ձրի տուք։ Մի՛ առանայք ոսկի և մի՛ արծաթ և մի՛ պղինձ ի գօտիս ձեր, մի՛ պարկ ի ճանապարհ, և մի՛ երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛ ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք կամ ի գեօղ, հարցանիցէք թէ ո՞ է ի նմա արժա-

նի . և անդ լինիջիք մինչև ելանիցէք անտի : Եւ իբրև մտանիցէք ի տունն, ողջոյն տայիք նմա՝ և ասասջիք. ողջոյն տանս այսմիկ . եթէ իցէ տունն արժանի , եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի : Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լսիցէ բանից ձերոց , իբրև ելանիցէք ի տանէն՝ կամ ի քաղաքէն յայնմանէ , թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց : Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի , քան քաղաքին այնմիկ : ժ . 15 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԲՁ

Զայն աւետաւոր հրեշտակին : Գ . Էջ . պառ : 33 :

ՍԱՂ . ճԾ . Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան : 571 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Գ . 1 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Գարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն. և խըտնեցան զնովաւ ժողովուրդք բազումք , մինչև ի նաւ մըտանել նմա և նստել ի ծովուն . և ամենայն ժողովուրդն զծովեզերբն՝ ղցամաքն ունէին. և ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ : Եւ ասէր նոցա ի վարդապետութեան իւրում. լսէ՛ք , ահաւասիկ ել սերմանօղ սերմանել . և եղև ի սերմանելն , ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկեր զնա : Եւ այլն անկաւ յտպառաժի՝ ուր ոչ գոյր հող բազում. և վազվազակի բուսաւ , քանզի ոչ գոյր հիւթ երկրին , և յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ , և զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ : Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա , և պտուղ ոչ ետւ : Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն , և ընդ միոյ վաթսուն , և ընդ միոյ հարիւր : Եւ ասէր . որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ : 9 :

Բ-ԲՂ . Խնդրեսցուք : Կեցո : ԱղՂ . Թագաւոր :

Գ · ՈՒՐԲԱԹ · ԲԿ

ՅԱՒԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲՁ

Ո՛ր զարդարեալ նորանո՛ւցեր զարբաժնոց գոյացու-

թիւնս հանապազ չէր և հոգւոյն. ‖ ըզքեզ մինչ օրհնեմք ամենայն հարցըն մերոց։ Որ կամաւոր խոնարհութեամբդ քո յանձն առեր ըզչարչարանս ի խաչին ընդունելացար. ըզքեզ։ Որ զմահճացու մեր բնութիւնս վերստին ձեռն կենդանութեամբ հրաշափառ քո յարութեանդ. ըզքեզ։

Գ. ԸզՏէր ‖ օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք ընդ ամենայն յաւիտեան։ Որ էլն ի գերեզմանն եւ աւերակս ընդ ըզդժոխս մեծ եւ հզօր զօրութեամբ եւ յարեան ի մեռելոց. օրհնեցէք։ Լուսաւորիչն աշխարհի որ ամենեցուն ի մեղաց ըզտէր ներզեցոյ ամենայն. ներելոյ հրաշ յարութեամբն իւրով. օրհնեցէք։

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ Բ2

Ձքեզ ամենօրհնեալ Աստուածածնին. մայրդ։ 135։

ՈՂՈՐՄՆԱ Բ2

Երկիր ի չարչարանսդ չարչարանացըն լուծիչ. բեւեռացար ի խաչին. լուծեր ըզկապանսդ մերոց. ‖ Քրիստոս յոյս յարութեան մերոյ ողորմեա։ Ի՞նչ ի գերեզմանն աւերեցեր ըզդժոխս եւ յարեար կեր-բարդ աւուր զանխարհըս լցուցեր խընդութեամբ. Քրիստոս։ Աքեռեր առ աշակերտսըն քոյնքերել ըզնոսա. եւ խոստացար լինել ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց. Քրիստոս։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Բ2

Կանխեալով աւրք կանանցն ընդ առաւօտն ի գերեզմանն. եւ գահաւոր յարութեան ըզձայն ի հրեշտակէն լսեալ ‖ ՆՔԷ յարեար Աստուած։ Թողեալ ըզտընքրութիւնքն երթանեկ և աւրք կանանցն. եւ խընդութեամբ ընթանային պատմել աշակերտացն ՆՔԷ։ Ձսքանչելի և դհրաշագործ ըզյարութիւնըն Քրիստոսի. առաքելոցն ըստուգապէս տեսանել ընդհանուր քարոզչին ՆՔԷ։

ՍԱՂ · ՁԲ · ԿՁ · Յոյց մեզ · ՓԽ · Հաճեցար : 567 :

Սրբոյ Աբեսաբանիա որ ըստ Դուկասու : Ը · 22 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ եղև ի միում աւուրց՝ ինքն եւ ի նաւ և աշակերտքն նորա, և ասէ ցնոսա. եկայք անցցուք յայնկոյս ծովակիս. և գնացին : Եւ մինչդեռ նաւէին՝ ի քուն եմուտ, և էջ մրրիկ հողմոյ ի ծովակն՝ և ուռնոյր, և ստգնապէին : Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. վարդապետ վարդապետ, կորնչիմք աւասիկ : Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջրոցն, և հանդարտեցին և եղև խաղաղութիւն : Ասէ ցնոսա. ո՞ւր են հաւատք ձեր : Եւ զահի հարեալ զարմացան, և ասէին ցմիմեանս. ո՛վ արդեօք իցէ սա՝ զի և հողմոց և ջրոց հրամայ տայ, և հնազանդին սմա : Եւ նաւեցին ի կղին յաշխարհն Գերգեսացւոց, որ է յայն կոյս հանդէպ Գալիլեայ : Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք՝ պատահեաց այր մի ի քաղաքէն, յորում էին դեւք, և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ և ոչ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս : Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո, Յիսուս՝ որդի Աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս : Քանզի հրամայ տայր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ի շղթայս և պահէր յերկաթիս, և խզէր զկապանսն, վարէր ի դիւէն յանապատս : Եհարց զնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ : Եւ նա ասէ. լեգէոն : Զի դեւք բազումք մտեալ էին ի նա. և աղաչէին զնա՝ զի մի՛ հրամայ տայէ նոցա երթալ յանդունդս : Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական ի լերինն. և աղաչեցին զնա՝ զի հրամայ տացէ նոցա մտանել ի նոսա. և հրամայեաց նոցա : Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին ի խոզսն. և դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծովակն՝ և հեղձաւ : Իրրև տեսին խոզարածքն զիրան որ եղեն՝ փախեան, և պատմեցին ի քաղաքին և յագարակսն : Եւ իրրև ելին տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտն Յիսուսի, և երկեան : Պատ-

մեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զիա՛րդ փրկեցաւ դիւահարն։ Եւ ապաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ ի նաւ, դարձաւ անդրէն։ Ապաչէր զնա այրն ուստի դևքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա և ասէ. դարձ ի տուն քո, և պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած։ Գնաց ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։ Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի, ապաչէր զնա մտանել ի տուն նորա. զի դուստր միածնոր էր նորա, ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր ի տեառնատեսութեան արեան յամաց երկոտասանից, որում ոչ էր լեալ հնար յումեք բժշկել։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա, և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. ո՞վ է որ մերձեցաւն յիս։ Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որ ընդ նմա էին. Վարդապետ, ժողովուրդքդ պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրև եահս կինն՝ թէ ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն։ Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատա առներ զդա։ Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի եա նմա և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա՝ և կեցցէ։ Եւ մտեալ ի տունն, ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։ Լային ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ. մի՛ լայք՝ զի չէ մեռեալ, այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ զամենեսեան արտաքս, կալաւ զձեռանէ նորա, բարբա-

ածցաւ և ասէ. արի կաց, մանուկ դու: Եւ զարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնօղքն նորա. և նա պատուիրէր՝ մի՛ ումեք ասել որ ինչ եղեւն: 57:

Փոքոշ. Խնդրեցաւք: Կեցո: Աչքի. Փառ ամենազօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: 569:

Արքայ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԶ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև գոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս: Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, և ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ, և առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ վասն իմ, ի վկայութիւն նոցա և հեթանոսաց: Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զի՞նչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք. զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և յառնիցեն որդիք ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա, և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ: Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ, և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւսն. ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ որդի մարդոյ: Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ քան զտէր իւր: չասս իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր իւր: Եթէ զտանուտէրն բէեղզեբուղ կոչեցին, որչափ ևս առաւել զընտանիս նորա: Մի՛ այսուհետև երկնչիցիք ի նոցանէ. զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս, և զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանիցաց: Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել: Այլ երկեարուք դուք առաւել յայնմանէ՝

որ կարօղն է զոգի և զմարմին կորուսանել ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանդի միոջ վաճառին, և մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։ Ա՛յլ ձեր և ամենայն իսկ հեր զլխոյ թուեալ է. և արդ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Մի՛ համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր. քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ և զդուստր ի մօրէ իւրմէ և զհարսն ի սկեսրէ իւրմէ, և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի։ Եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։ Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ, և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր։ 42։

ՀԱՄԲԱՐՁԻ ԲԺ

Առաւօտեան սուրբ կանոյքն։ Գ. Եբեր պոռն։ 36։

ՍԱՂ. ՃԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան։ 571։

Սրբոյ Աբեսաբանիս որ ըստ Մարկոսի։ Գ. 10։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ իբրև եղև առանձինն, հարցին զնա որ զնովաւն էին աշակերտաւքն հանդերձ զառակսն։ Եւ ասէ ցնոսա. Ձեզ առեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ. բայց նոցա որ արտաքինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի. զի տեսանելով տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լսելով լսիցեն՝ և մի՛ իմացցեն, զի մի՛ երբէք դարձցին՝ և թողցի նոցա։ Եւ ասէ ցնոսա. ոչ գիտէք զառակս զայս, և

դիմիրդ զամենայն առակսն գիտիցէք։ Որ սերմանէն՝ ըզբանն սերմանէ։ Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի, և յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ և հանէ զբանն սերմանեալ ի սիրտս նոցա։ Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան, որք յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին. և զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են, ապա ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին՝ վաղվաղակի գայթագղին։ Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցան, նոքա են՝ որ իբրև զբանն լսեն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան մոանեն և հեղձուցանեն զբանն՝ և անպտուղ լինի։ Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն և ընդունին, և տան պտուղ, ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր։ 20։

Բառք. Խնդրեցաւք։ կեցո։ Աղքի. Թագաւոր։

Գ. ՇԱԲԱԹ. ԳԶ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲԿ

Ո՞ր յերկնային գիւտուրթեամբ նոցըդ միշտ երկբրպաշտիս Քրիստոս թագաւոր ընդ հօրդ և՛ սուրբ Հոգւոյն. ‖ ծրհնեալ ես Տէր Ա՛ստուածդ հարցըդ մերոց։ Որ խոնարհեցար յանճառ փառացդ եկեալ իշխանութեամբ ի մահ խաչին զըզբրկեցան զբժոխս յաշխէ՛ զփառացդ քոց. օրհնեալ։ Եւ հրաշափառ քո յարութեամբըդ կենագործեցեր զիս զմեղօք ըզմեռանելս. եւ համարձակ փառօք ի յերկինս. օրհնեալ։

Գ. Ը՞զՏէր Ը՞զՔրիստոս թագաւորըն քակղրանձայն երգով օրհնեցէ՛ք ‖ եւ բարձր արարէ՛ք ըզնա յաւիտեա՛ն։ Որ պատուականն խաչելութեամբ հրաշագործեաց ըզփըրկութիւնս յաւիտենից նընջեցելոցն. քակղրանձայն երգով օրհնեցէ՛ք եւ բարձր։ Ջյարեւցեալն իշխանութեամբ զիաւակից Հօր և սուրբ Հոգւոյն. ընդ վերջին ատեան արժանի գտանել զնա զովեցէ՛ք եւ բարձր։

ՄՆԱՑՈՒՍՑԻ ԲԿ

Չքեզ Աստուածածին որ վերօրհնես ի գօրաց : 230 :

ՈՂՈՐՄՆԱ ԲԿ

Թիւնս իմ ‖ Ո՞ղորմեա իմ՝ նա Աստուածածին իմ ողորմեա՛ : Ո՛ր ի յերկնից լինիր Բանդ Աստուած եւ վասն մե՛ր մնացուածոյդ ի սըրբոյ կուսէն . ողորմեա : Ո՛ր ի խաչին տարածեցեր զանարատ բազուկսդ քո՛ . եւ վասն մե՛ր հեղեր զարիւն քո սուրբ . ողորմեա : Ո՛ր ի գերեզմանի եղար անապական . եւ յարուցեա՛լ նորոգեցեր զաշխարհս . ողորմեա : Ո՛ր ի յերկինս համբարձար ամենակալող . և ընդ ա՛ջմէ՛ Հօր նըստար յաթոռ փառաց . ողորմեա :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԲԿ

Քա՛ յա՛րձակութեանդ . փա՛ռըք վայելէ՛ երկայնամի՛տ ՏԷ՛Ր : Օ՛րհնեա՛լ է քո յարութիւնդ Աստո՛ւած որ ըզմա՛հ մանո՛ւ ծանուցեր քո՛յին կամաւոր մահուամբն . քո՛ յա՛ : Գո՛հանայ ահեղ հրեշտակին ի վէ՛մին որ քարոզէ՛ր սո՛ւրբ կանանցն յարեա՛ւ ՏԷ՛ր ի՛ մեռելոց . քո՛ յա՛ :

ՍՍՂ . ՁԴ . ԿՑ . Ցայց մեզ : ՓԽ . Հաճեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Թ. 1 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն՝ ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց , և բժշկել զհիւանդութիւնս : Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ և բժշկել զախտաժէտս : Եւ ասէ ցնոսա . մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ , մի՛ գաւազան և մի՛ մսխաղ , մի՛ հաց և մի՛ արծաթ , մի՛ երկուս հանդերձս ունիցիք : Եւ յոր տուն մտանիցէ՛ք՝ անդ սկսի՛ք , և անտի գնայցէ՛ք : Եւ որք ոչ ընդունիցին զձեզ , յորժամ ելանիցէ՛ք ի քաղաքէն յայնմանէ , զփոշի ոտից ձերոց թօթափեսցի՛ք ի վկայութիւն նոցա : Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս , աւետարանէին և բժշկէին ընդ

ամենայն տեղիս : Լուաւ Հերովդէս չորրորդապետ ըղգործսն ամենայն , և զարմանայր վասն ասելոյն յոմանց , եթէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց , և յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ , և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջնացն յարեաւ : Ասէ Հերովդէս . զՅովհաննէս՝ ես գլխատեցի . իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայսպիսի իրս լսեմ : Եւ խնդրէր տեսանել զնա : Գարձան առաքեալքն , և պատմեցին նմա զամենայն զոր արարին : Եւ առեալ զնոսա խուսեաց առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ , որում անուն էր Բեթսայիդա : Եւ ժողովուրդքն իբրև գիտացին , գնացին զհետ նորա . և ընկալեալ զնոսա խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ , և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր : Եւ օրն սկսաւ տարածամել . մատեան երկոտասանքն և ասեն ցնա . արձակեա զժողովուրդսդ , զի երթեալ շուրջ ի գեօղսն և յապարակս հանդիցեն , և զտցեն կերակուր . զի աստ յանապատի տեղւոջ եմք : Ասէ ցնոսա . դուք տուք զոչս ուտել : Եւ նոքա ասեն . ոչ զոչ մեր ունիմ քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս , բայց եթէ երթիցուք գնեցուք բաւական ժողովրդեանդ կերակուր : Քանզի էին արք իբրև հինգ հազար : Ասէ ցաշակերտան . բազմեցուցէք զդոսա դասս դասս , յիսուն յիսուն : Եւ արարին այնպէս , և բազմեցուցին զամենեսեան : Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն , հայեցաւ յերկինս՝ օրհնեաց , և երեկ և ետայր ցաշակերտան արկանել ժողովրդեանն : Կերան և յագեցան ամենեքեան , և բարձին զնշխարս կտորոցն երկոտասան սակաւս : 17 :

Քարոզ · Խնդրեսցուք : Կեցո : Աղաչե · Քաւ ամենազօր՝

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍՍՂ . ԿԶ . Աստուած ազգաժեա մեզ և օրհնեա : 563 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԱ . 1 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻսուս Քրիստոս

Եւ եղև իբրև կատարեաց (Յիսուս) զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց , գնաց անտի քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա : Իսկ Յովհաննէս իբրև լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի , առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց , և ասէ ցնա . դու ես որ գալոցն ես , և

թէ այլում ակն կալցուք : Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. գնացէք պատմեցէք Յովհաննու՝ զոր լուայք և տեսէք. կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սըրբին՝ և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին. և երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս : Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդսն զՅովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել յանապատին, եղէգն չարժուն ի հողմոյ. այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ : Ահաւասիկ որ զփափուկսն զգենուն ելեալ են՝ ի տունս թագաւորաց են : Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ. այո՝ ասեմ ձեզ, և առաւել քան զմարգարէ : Զի նա է վասն որոյ գրեալն է. ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո : Ամէն ասեմ ձեզ, չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա : Եւյց յաւուրսն Յովհաննու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, և բռնաւորք յափշտակեն զնա : Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս մարգարէացան : Եւ եթէ կամիք ընդունել՝ նա է Եղիա՝ որ պարտ լոյն է : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ : Եւ ում նմանեցուցից զազգս զայս. նմանէ է մանկտւոյ՝ որ նստիցին ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց, և ասիցեն. փող հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք : Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասեն, դեւ զոյ ի նմա : Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասեն, ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց : Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին : Վայ քեզ՝ Քորազին, վայ քեզ՝ Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի ձեզ եղեն, վաղուց ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր : Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդովնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ : Եւ դու Կափառնաում, մի՛ մինչև յերկինս բարձրացիս, այլ մինչև ի դժոխս իջցես : Զի եթէ ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ի քեզ, ա-

պաքէն կայնի ևս մինչև ցայսօր : Բայց ասիմ ձեզ՝ եթէ երկրին Սողոմոնեայ դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ : 24 :

ՄԵՍԵԻՒ Գ·ԼՈՒԿԱՆ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն , օրհնեալ որ գայոց ևս :

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ . արարէք տօնս ուրախութեան կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ :

ՀԱՄՐԱՐՁԻ Ա Զ

Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից : Քէյ պոռ : 310 :

ՍԱՂ . Զ . Ցնծացէք առ Աստուած օգնական է : 457 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Դ· 21 :

Տ�էՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ ասէ ցնոսա . միթէ գայ ճրագ դի ընդ գրուանաւ դնիցի , կամ ընդ մահճօք . ոչ ապաքէն ի վերայ աշտանակի դնիցի : Զի չէ ինչ ի ծածուկ , որ թէ ոչ յայտնեացի . և ոչ եղև ինչ զաղտնի , եթէ ոչ ի յայտ գայցէ . եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ : Եւ ասէ ցնոսա . տեսէք զինչ լսէքդ , և յաւելցի ձեզ որոց լսէքդ . որով չափով չափէք՝ նովին չափեսցի ձեզ : Որ ոք ունիցի տացի նմա . և որ ոչն ունիցի , և զոր ունին՝ բարձցի ի նմանէ : 25 :

Քաջ· Խնդրեսցուք : Կեցո : Աջդ· Թագաւոր :

Դ· ԿԻՒՐԱԿԷ· Գ Կ

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ի

ՀԱՐՑ ԲԿ

Ա՞նդ սիրկըդն Աստուած Էւ ա՞մէնաղօր . ար առաքեցեր ըզմի՞ածէ՞ն ո՞րդիդ քո՞ ի փըրկո՞ւթիւն մե՞զ . ‖ օրհնեմք ըզքե՞զ Աստուած հարցըդն մերոց , Ըզնա՞ր ի չօրէ՞ ա՞ճեցա մի՞ւթիւն . ի կուսական արհայնէ ե՞լ՞ւեալ մարմնո՞վ ի փըրկո՞ւթիւն մե՞զ . օրհնեմք : Ո՞ր նը՞ստիս ի քրովբէ՞ս Էւ յանմարմնոց վերօրհնի՞ս Քրիստոս սըբըբասանց ձայնիւ . համբո՞ւրելով չարչարանաց ի խաչի՞ն բարձրացա՞ր խարտակեցեր ըզդօրո՞ւթիւն մահո՞ւ . օրհնեմք՝

Գ. Ը՛գՏԷՐ ‖ Ա՛մենայն ակի՛նք զՔրիստոս գո՛վեցէք զյա՛րուցեա՛՛ն ի զերեզմանէ՛ն ա՛՛նապական մարմնո՛վ: Զքա՛րզ հրեշտակին լուեա՛՛լ կանանցն ընթացեա՛լ պատմէին աշակերտացն ասե՛լո՛վ. յարեա՛ւ Ա՛տ֊ուածն ա՛մենայն: Ե՛ւ մեք ընդ նմա՛ն երգա՛կցեա՛լ հանցո՛ւք զօ՛րհնութի՛ւն. փրկողին ըզմեզ ասե՛լո՛վ յարեա՛ւ Ա՛տ֊ուածն ա՛մենայն:

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ ԲԿ

Աիւն լուսոյ և ամպ հովանի սուրբ կոյս. որ: 228:

ՈՂՈՐՄԵՆԱ ԲԿ

Ի՛ՆՂԵՐ ՏԷ՛Ր եւ մա՛րմնացար ի՛ կուսէն. եւ գհողեղէնն բընո՛ւթի՛ւնս ա՛զա՛տեցե՛ր ի՛ մեզա՛ց: Ե՛լեր ՏԷ՛Ր բեւե֊ռեցար ի՛ խաչին. ըզմեռանելւ յանձն ա՛ռեր կե՛նդա֊նատու մեռելո՛ց: Ե՛դար ՏԷ՛Ր ի նո՛րանո՛ր ի վիմի. եւ մատանեա՛ւ կընքեցա՛ր գանձո՛ւդ կենաց աշխարհի: Յա֊րեցե՛ր ՏԷ՛Ր աւե՛րեցե՛ր ըզդժո՛խս. ի յերկինըս հանդր֊ձա՛ր եւ ընդ աջմէ՛ Հո՛ր նըստա՛ր:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԲԿ

Ո՛Քրիստոս յարեա՛ւ ի՛ մեռելո՛ց: Ը՛նդ արշալո՛ւսն ա֊ռաւո՛տեան կա՛նխեա՛՛լ կանանցն ի զե՛րեզմանն ասե՛լով Քրիստոս յարեա՛ւ: Ո՛՛ւ առ նո՛ա ասէ՛ր հրեշտակն պի՛՛ խընդրէ՛ք ըզկենդանին ընդ մեռեա՛լս Քրիստոս: Ո՛Փո՛ւթացան բո՛ւք ով սուրբ կանանդ եւ պա՛՛տմեցէք ա֊շակերտացն ասե՛լով Քրիստոս:

ՍՍՂ. ՉԳ. ԿՑ. Ցոյց մեզ. փխ. Հաճեցար: 567:

Սբբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Թ. 18:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղեւ ի կալն (ևորա) յաղօթս առանձինն՝ էին ընդ նմա և աշակերտքն նորա. եհարց զնոսա և ասէ. զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ: Եւ նոցա պատաս֊խանի տուեալ ասեն. զՅովհաննէս Մկրտիչ, և այլք՝

զեղիա, իսկ այլք՝ թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։ Աս ցնոսա · զուք զո՞վ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի եառ Պետրոս և ասէ · զՔրիստոսն Աստուծոյ։ Նա առաքեաց ի նոսա, և պատուիրեաց մի՛ ումեք ասել զայն · և ասէ, թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարել և անարգել ի քահանայապետից և ի ծերոց և ի դպրաց, և սպանանել և յերիր աւուր յառնել։ Եւ ասէր առ ամենեսին · եթէ ոք կամի զինի իմ գալ, ուրացցի զանձն, և առցէ զխաչ իւր հանապազ, և եկեսցէ զհետ իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։ Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք և Հօր և հրեշտակաց սրբոց։ Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի գոցանէ որ այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ։ Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել ի լեառն կալ յաղօթս։ Եւ ի կալն նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ, և փոխեցաւ հանդերձ նորա և եղև սպիտակ փայլուն։ Եւ ահա արք երիս խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս և Եղիա, երևեալ փառօք · և ասէին զելիցն նորա զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Իսկ Պետրոս և որ ընդ նմանն էին՝ ծանրացեալք ի քնոյ, զարթեան տեսին զփառսն նորա և զերիսունս արսն որ կային առ նմա։ Եւ եղև ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս · վարդապետ, բարւոք է մեզ առ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի։ Եւ ոչ գիտէր զինչ խօսէր։ Եւ իբրև զայս առաց, եկն ամպ և հովանի եղև ի վերայ նոցա · և երկեան ի մտանելն նոցա ընդ ամպսն։ Ձայն եղև յամպոյն և ասէ · զա է որդի իմ ընտրեալ, զնա լուարուք։ Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն · և ինքեանք լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչ ինչ յորոց տեսին։ 36։

Եբ։ Նորատեղծ։ Փոխ · Խնդր։ Կեցս։ Աղ · Քան զմեզ։

Ց Ե Բ Ե Կ Ո Ց Ի Ն

ՍԱՂ. ճՂԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն: 569:

Սբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԱ. 25:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնմ ժամանակի պատասխանի եաւ (Յիսուս) և ասէ. զոհանամ զքէն Հայր, Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Ամէնայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ: Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, և ում Որդին կամիցի յայտնել: Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի: 30:

ՀԱՄԲԱՐՁԻ Գ Կ

Ձատաւոյ ժամերգութեան: Բ. Էջ 42:

ՍԱՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Դ. 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զկեսրեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն, և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա զորբեան ամոք ի հասկին. այլ յորժամ տայցէ զպտուղն, վազվազակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. զում նմանեցուցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որով առակաւ առակեսցուք զնա: Որպէս հասան մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի, և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բանալ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարօղ լինէին լսել. և առանց առակի ոչ ինչ

խօսէր ընդ նոսա , բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն : 34 :

Քարող· խնդրեսցուք : կեցո : Աջմխ· թագաւոր :

Դ · ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ · Դ Զ

ՅԱՌԱԻՕՏՕՒ

ՀԱՐՑ ԲԿ

Ո՞ր գծառայի՛ ըզկերպարանըս յանձն առեր վասն մե՛ր . եւ խոնարհեա՛լ քո կամաւ ի՛ մէր բընութիւնս . ‖ օրհնեա՛լ ես Տէ՛ր Ա՛ստուած հարցըն մերոց : Ո՛ր խաչեցար հաճութեամբ չօր մխածին Որդի՛ . եւ թաղմամբն երեքօրեայ ըզբընանութիւն մահու լուծեր . օրհնեա՛լ : Ո՛ր փառաւոր յարութեամբըդ քո կանգնե՛ցեր ըզմահացեալն . ի յերկինըս համբարձար ընդ աջմէ՛ Հօր նըստաւ . օրհնեա՛լ :

Գ· ԸԳՑԷՐ ‖ օրհնե՛ յ՞ցեխ՛ք եւ բարձր արարէ՛ք ըզնա յաւիտեա՛ն : Հրաշալի՛ յարութեամբ փըրկչին ճառագայթեցա՛ն արարածք . մի՛ աբանութեամբ օրհ : Գնդապե՛տ ամբանցի՛ն զըժոխք աւծանե՛լով ըզթագաւորն անմահ . մի՛ աբանութեամբ օրհ :

ՄՆԾԱՑՈՒՄՑԷ ԲԿ

Որ ողոբմեցար ի մեզս ծնեալ մարդկան Հայր , 229 :

ՈՂՈՐՄՆԱ ԲԿ

Թո՛ւեալ իմ Ո՞ր իմէ՛ր յերկընէ՛ց բաա՛նդ Ա՛ստուած առե՛ր մա՛րմի՛ն ո՞ւ մերոյ բընութեան . ‖ վասըն յանցանաց նո՛ր խաւսե՛ զձե՛ն ո՞՛ն ողո՛րմիա՛ մե՛զ Ա՛ստուա՛ծ : Ի՛ խաչին բնո՛ւեալ կամաւո՛րապէս փըրկի՛չ եւ պահպանի՛չ յանձն առեր ի վերնո՛ւրն ո՞՛ն վասըն : Ի՛ գերեզմանի եղա՛ր անապականո՛ւթեամբ փըրկի՛չ եւ պահպանի՛չ յանձն առեր վերկրո՛ւթեան ո՞՛ն յարո՛ւցեալ լո՛յս ծագեցա՛ր ստուե՛րա նըստա՛ն ո՞՛ց . ողո՛րմիա՛ :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԲԿ

· Ա՛ռաւօտեան սուրբ կանայքն հանդերձ իւղովք և խընկովք եկին ի սուրբ գերեզմանն. եւ ո՛չ գրաւլով խընդրէին զանձա՛ն ‖ փառաց Քրիստո՛ս։ Ե՛ւ ի ձայնէ հրեշտակին զըւարճացան սըրտմտզգեցիք ա՛ռաւօտեան սուրբ կանայք զի՛ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս յարեաւ՛ փառաց։ Ա՛ռաւաջասէր սուրբ կանայք փութացարուք հետեւիլ. պատմող լինել պետրոսի եւ յո՛վհաննու սիրելոյ. յարեա՛ւ փառաց։

ՍՍՂ. ՁԲ. ԿՑ. Յոյժ մեզ։ ՓԽ. Հաճելար։ 567։

Սրբոյ Աբեսաբանիա որ ըստ Ղուկասու։ Թ. 37.

Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ

Եւ եղև ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ, աղաչեմ զքեզ՝ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ. և ահա այս հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ, և զարկուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ ձերկնի ի նմանէ՝ խորտակեալ զնա. և աղաչեցի զաշակերտան քո զի հանցեն զնա, և ոչ կարացին։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ. ո՛վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ և անասցեմ ձեզ. մատո այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատուչէր, զարկոյց զնա դևն և չարժլեաց։ Ա՛սաեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն, և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ։ Եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտան իւր. դիք դուք ի ականս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի մարդոյ մատնեցոց է ի ձեռս մարդկան։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ զի մի՛ գիտասցեն. և երկնչէին հարցանել զնա վասն բանին այնորիկ։ Եմուտ խորհուրդ ի նոսա, թէ ո՛ արդեօք մեծ իցէ ի նոցանէ։ Յիսուս իրրև ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՝ կացոյց ի մէջ նոցա առ իւր, և ասէ ցնոսա.

որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդու-
նի . և որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի
որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ : Պա-
տասխանի ետ Յովհաննէս և ասէ. Վարդապետ, տեսաք
զոմն զի յանուն քո զդեւս հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ
չերթի ընդ մեզ : Ասէ ցնոսա Յիսուս. մի՛ արգելուք զնա,
զի որ ոչն է ձեր թշնամի՝ ի ձեր կողմն է : 50 :

Քարոզ · Խնդրեացուք : Կեցո : Աղօթ. Զամ ամենազօր :

Ց Ե Ր Կ Ո Ց Ի Ն

ՍԱՂ. ՃԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Երգոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԲ. 1 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ գնաց (Յիսուս) ընդ արտարայան նոցա ի շա-
բաթու . և աշակերտքն նորա քաղցեան, և սկսան հասկ
կոթզել և ուտել. փարիսեցիքն իրրև տեսին՝ ասեն ցնա.
ահաւանիկ աշակերտքն քո գործեն , զոր ոչ է արժան
գործել ի շաբաթու : Եւ նա ասէ ցնոսա. ոչ իցէ ընթեր-
ցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որ
ընդ նմայն էին. զիարդ եմուտ ի տունն Աստուծոյ՝ և ե-
կեր զհաց զառաջաւորութեանն. զոր ոչ էր օրէն նմա ու-
տել , և ոչ՝ որոց ընդ նմայն էին , բայց միայն քահա-
նայից : Կամ թէ չիցէ ընթերցեալ յօրէնս՝ զի ի շաբաթս
քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթն , և անմեղք
են. բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է աստ : Եւ
եթէ գիտէիք զինչ է՝ զողորմութիւն կամիմ՝ և ոչ զզոհ,
ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտան : Զի տէր է
շաբաթու որդին մարդոյ : Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն
ի ժողովուրդն նոցա : Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն
իւր գօսացեալ էր . հարցին զնա՝ և ասեն , եթէ պարտ
իցէ ի շաբաթու բժշկել. զի չարանաւանացն զնասանէ : Եւ
նա ասէ ցնոսա . ով է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար
մի , և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու . միթէ
ոչ ունիցի և յարուցանիցէ զնա . իսկ արդ որչափ ևս
առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի
շաբաթու բարիս գործել : Յայնժամ ասէ ցայրն . ձգեա
զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իրրև զմիւսն : Իսկ
փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնասանել՝

թէ ո՛րպէս կարուսցեն զնա : Եւ ցիտուս իրրև գիտաց , մեկնեցաւ անտի : Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան : Եւ ասասեաց նոցա՝ զի մի՛ յայտնեսցեն զնմանէ ումեք . զի լցցի որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ . ոչ հակառակեսցի և ոչ աղաղակեսցէ , և ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա : Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ , և զպատրոյկն առկայծեալ ոչ չիջուսցէ , մինչև հանցէ ի յաղթութիւն զդատաստանն . և յանուն նորա հեթանոսք յուսասցին : 21 :

ՀԱՄԲԱՐՁԻ Դ.Զ

Որ ի վերդ ես քան զմիտս և : Դ . Եզեր պոռն : 45 :

ՍԱՂ . ՃԺ . Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան՝ 571 :

Սրբոյ Աստուածնիս որ քան Մարկոսի : Դ . 35 :

ՏԷՐՆ ՄԻՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իրրև ընդ երեկս լինէր . եկայք անցցուք յայն կողմն : Թողուն զժողովուրդն, և առնուն զնա նաւուն հանդերձ, և զայլ ևս նաւսն որ էին ընդ նմա : Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ , և զալիքն ի նաւն զեղոյր մինչ գրեթէ լի իսկ լինել . և ինքն ննջէր ի թիկս նաւին ի վերայ բարձի : Զարթուցանէին զնա և ասէին . Վարդապետ, ոչ ինչ է քեզ փոյթ, զի կորընչիմք աւասիկ : Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն . և ծովուն ասէ . դադարեա կարկեաց . և դադարեաց հողմն , և եղև խաղաղութիւն մեծ : Եւ ասէ ցնոսա . ընդէր այդպէս վատասիրտք էք, չե՞ս ունիք հաւատս : Եւ երկեան երկիւղ մեծ , և ասէին ցմիմեանս . ո՞ ոք արդեօք իցէ սա , զի և հողմ և ծով հնազանդին ամս : Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն Գերգեսացւոց : Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի , պատահեաց նմա այր մի ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ , որոյ և բնակութիւնն իւր իսկ ի գերեզմանս էր . և ոչ չղթայիւք ոք ևս կարէր կապել զնա , վասն բազում անգամ առնակապօք և չղթայիւք կապելոյ , և խզելոյ ի նմանէ զչղթայն և զառնակապն խորտակելոյ . և ոչ ոք կարէր պատրանել զնա , քանզի հանապազ գոյգոյ և գիշերիկ ի գերեզմանս

և ի լերինն ազատակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև եաս զՅիսուս ի հեռատեսանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա. ազատակեաց ի ձայն մեծ և ասէ. զի՞ կայ իմ և քո, Յիսուս որդի Աստուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած, մի՛ տանջեր զիս։ Քանզի ասէր ցնա. ել, այսր պիղծ, ի մարդոյ այսի։ Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո. և ասէր ցնա. լեգէոնն անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ ազաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց՝ արօտական մեծ։ Ազաչեցին զնա ամենայն դեւքն և ասեն. առաքեա զմեզ ի խոզսն, զի մուցուք ի նոսա։ Եւ հրամայեաց նոցա։ Եւ իբրև ելին այսքն պիղծք՝ մտին ի խոզսն, և դիմեաց երամակն ի գարէ անտի ի ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձնուին ի ծովուն։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զինչ իցէ որ գործեցաւն։ Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն, և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա որոց տեսեալն էր, թէ զինչ եղև այսահարին, և զինչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա՝ գնալ ի սահմանաց նոցա։ Եւ իբրև եմուտ նա ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ. և Յիսուս ոչ եա նմա թոյլ, այլ ասէ ցնա. երթ ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա որ ինչ միանգամ Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ Եւ չոքաւ և սկսաւ քարոզել ի Դեկապօլին, զոր ինչ արար նմա Յիսուս. և ամենեքին զարմանային։ Ե. 20։

Ք-ըշ· Խնդրեացուք։ Կեցո։ Աչք։ Թագաւոր։

Դ · ԵՐԵՔՇԱԲԱԹԻ · ԴԿ

ՅԱՌԱԻՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲԿ

Ո՞ր էիր յառաջ քան զլսյանիեանսն բանդեց Աստուած. վասն մերոյ փըրկութեան՝ ո՞ւր մարմնով էաս աւետիս կո՞ւտէ ‖ ընդկնդ օրհնեմք Աստուած հաստրսն ը մի՛ թոց։ Ո՞ր ըզկերպանքսն ծա-

ամի ճրչմնարատամպէս յանձն ամեր. եւ խանչի եւ մա-
հու համբերելով ի ջնջիր ի գերեզման ընդ-
քեզ: Որ երեքօրեայ թաղմամբ փըրկիչ սուրբ զյարու-
թիւնըդ քո ցուցեր. եւ վերըստին նորոգեալ կեցու-
ցեր ըզհընացեալս մեզ ընդ-քեզ:

Գ. Ըզցէր ծրհնեցիք ‖ Ամենայն ազինըք բաւ՝րձր
արարիք: Չխաչեալն ի միջ երիցըւոյ և զնդեալն ի նոր
գերեզմանի. ամենայն: Չյարուցեալն իշխանութեամբ
և զաւն բռղըն զըժոխոց. ամենայն:

ՄԵՄԱՑՈՒՍՑԻ ԲՂ

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ. երկիր բա: 222:

ՈՂՈՐՄԵՆԱ ԲՂ

Որ համեմատ ես Հօր և սուրբ Հոգւոյն. անբաժա-
նելի էակ միութեան խոնարհեցար ի բարձանց եւ ա-
ռեր մարմին ի կոյսէն. յաղագս ո՞նկէղջոյն. յանլու-
ծիչ կենաց բանտարկուին խաբմամբ: Որ դամասւորդ
ես ծածկելոց գիշատող. այսօր ի հողոյ դամասպարտեալ
բանգամբ ի խաչ եւ լեզեամբ կեբանկրեցար. յաղագս
ո՞նկէղջոյն. ի ճանչակմանէ՞ մահաբեր պըտղոյն: Որ
կենդանութիւնդ ես ամենից՝ցուն այսօր ըղմահ խաչի
ի յանձն առեր եղեր ի սիրտ երկրի եւ յերրորդ ա-
ւուր յարեար. չնորհեա՞ մե՞զ վերածիլ ընդ քեզ
յանապատումս ի կեա՞նս:

ՏԷՐ ՑՆԵՐԿՆԻՑ ԲՂ

Կանխեցին կանայքն. ընդ առաւօտն ի գերեզ-
մանն հանդերձ խո՞նկովք: Բերելով զիւղս անու-
շութիւնս. ի յօժարութիւն կենդանարար մարմնոյ փըրկչին մերոյ:
Ու՛ր հրեշտակքն զօրութեամբ. գոչելով ա՛ղաւակեր
յարեաւ Քրիստոս:

ՍԱՂ. ՀԻ. ԿՑ. Ցոյց մեզ Տէր: ՓԽ. Հատեցար: 567:

Արթոյ Աւետարանիս ար ըստ Ղուկասու : Թ. 51 :

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ Յերուսաղէմ : Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց . և իրրև չոգան , մտին ի գիւղ մի Սամարացւոց՝ պատրաստել ինչ նմա . և ոչ ընկալան զնա , զի զէմ եղեալ էր նորա երթալ Յերուսաղէմ : Իրրև տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս՝ ասեն . Տէր , կամիս զի ասացուք , և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա : Դարձեալ առաքեաց ի նոսա և ասէ . ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք . զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել : Եւ գնացին յայլ գիւղ : Եւ մինչդեռ երթային նորա ի ճանապարհի՝ ասէ ումն ցնա . եկից զկնի քո՝ յոր վայր և երթիցես : Ասէ ցնա Յիսուս . աղուեսուց որջք գոն , և թռչնոց երկնից զգաստք , և որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր զիցէ զգլուխ : Ասէ ցմիւս ևս . եկ զկնի իմ : Եւ նա ասէ . Տէր , հրամայ առաջի ինձ երթալ նախ թաղել զհայր իմ : Ասէ ցնա Յիսուս . թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց , և դու երթ պատմեա զարքայութիւն Աստուծոյ : Ասէ և այլ ումն . եկից զկնի քո Տէր , բայց նախ հրամայ առաջի ինձ հրաժարիլ ի տանէ իմմէ : Ասէ ցնա Յիսուս . ոչ ոք արկանէ ձեռն զվաճոյ և հայիցի յետս , եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ : 62 :

Բարեշ . խնդրեսցուք : Կեցո : Աչքե . զուտ ամենազօր :

ՅԵՐԿՈՅԻՆ

ՍԱՂ . ճԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արթոյ Աւետարանիս ար ըստ Մատթէոսի : ԺԲ . 22 :

Աւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ մատուցան (առ Նա) դիւահար մի կոյր և համր , և բժշկեաց զնա . որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ : Զարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին . միթէ սա իցէ Քրիստոս որդի Դաւթի : Բայց փարիսեցիքն իրրև լուան՝ ասեն . ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ բէեղզեբուղաս իշխանաւն դիւաց :

Իբրև դիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ա-
մէնայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի,
և ամէնայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ
կացցէ. և եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր
բաժանեցաւ. արդ դիարդ կացցէ թագաւորութիւն նո-
ցա: Եւ եթէ ես բէելզեբուղաւ հանեմ զդևս՝ որդիքն
ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դա-
տաւորք: Ապա եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդևս,
ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ:
Կամ զիարդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ և զգործիսն
նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, և ա-
պա զտունն նորա յափշտակիցէ: Որ ոչ ընդ իս է՝ հա-
կառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: Վասն այ-
դորիկ ասեմ ձեզ. ամէնայն մեղք և հայհոյութիւնք թող-
ցին մարդկան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի:
Եւ որ ոք ասիցէ բան զորիւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց
որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ
աշխարհի և մի՛ ի հանդերձելումն: Կամ արարէք զծառն
բարի՝ և պտուղ նորա բարի, կամ արարէք զծառն չար՝
և պտուղ նորա չար. քանզի ի պտղոյ անտի ծառն ճա-
նաչի: Ծնունդք իմից, դիարդ կարիցէք բարիս խօսել՝
որ չարքդ էք. քանզի ի յատելուածոյ սրտի խօսի բերան:
Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբա-
րիս, և մարդ չար՝ ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ
զչարիս: Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամէնայն պատարկ
բանի զոր խօսիցին մարդիկ՝ տացեն համար յաւուրն դա-
տաստանի: Զի ի բանից քոց արդարասցիս, և ի բանից
քոց պարտաւորիսցիս: 37:

ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏ

Հրէշտակացն դասքն յերկինից: Գ. Եզեր. գլուխ: 48:
ՍԱՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութիւնս: 571:
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ե. 21:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ իբրև անց (Յիսուս) միւսանգամ յայն կողմն՝ ժողո-
վեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն:
Եւ ահա մի ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր
Յայրոս. իբրև հատս զնա՝ անկաւ առ ոտս նորա, աղա-

չէր գնա յոյժ և ասէր, թէ զուարթ նորա մերձ է ի մահ, պի եկեալ գնիցէ նմա ձեռն, որպէս պի ապրեացի և կեցցէ: Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում գհետ նորա, և նեղէին գնա: Եւ կին մի էր ի տեառնատեսութեան արեան զկիրակառասան ամ, և յոյժ վշտացեալ ի բազում բժշկից, և ծախեալ զինչս իւր զամենայն, և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ: Իբրև լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին կեալ՝ և բուռն եւհար զհանդերձէ նորա. քանզի խորհէր ի մտի, թէ միայն մերձեցայց ի հանդերձս նորա՝ փրկեցայց: Եւ վաղվաղակի ցամաքեցաւ ապրիւր արեան նորա, և գիտաց ի մարմնի իւր՝ թէ բժշկեցաւ ի ամենայնացն: Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ էլ ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ով մերձեցաւ ի հանդերձս իմ: Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխ նեղէ զքեզ, և ասես թէ՝ ով մերձեցաւ ի հանդերձս իմ: Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար: Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ զազան արար, քանզի գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրան ստուգութեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ի տանջանաց քոց: 34:

Ֆաքաղ· Խնդրեացաւք: կեցո: Աղջ· Թագաւոր:

Դ· ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ· ԱՁ

ՅԱԹԱԽՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲԿ

Կամաւորութեամբ եկիր ի չարչարանս եւ ի ծառայէ ապստամբեցար. ‖ օրհնեմք զքեզ Աստուած հարցըն մերոց: Տարան ձեզեր զքեզ առ ի վերայ խաչին. եւ ընդ անօրէնս համարեցար. օրհնեմք: Որ զմեռանիլ յանձն առեր վասն արարածոց. եւ ի գինաւորէն զեղծուցեամբըն խոցեցար. օրհնեմք:

Դ· ԸՂՑԿԸ ‖ Ընդ հնգեւոր երգով բաժրթիր սրտիկք: Որ ճախարար յօժարութեամբ եկեալ ի նահատակ

եղծեալ մաքրոյն. եւ խաչի յանձն առնու ըզմահ ըզնա: Որ էջն ի սաղմին կոչմամ երկրի եւ դոզալովն սաւանեցան դըժնէք. այսօր յարուցեալ վերածեաց ըզնըջ-ղեցեալսն. ըզնա:

ՄՆԾԱՑՈՒՄՑԻ ԲԿ

Մայր լուսոյն Մարիամ անհաւանացեալ օրհնեալդ: 137:

ՈՂՈՐՄՆԱ ԲԿ

Որ յանթառս փառաց նըստեալ Բանդ Աստուած. խոնարհեցար ի հայրական ծոցոյ ա՞ռաւել մարմին ի կուսէն. վերականգնելով ի տեղի ըստնտրանկեալ լուսոյն պհպտացեալ բնութիւնս: Որ կանգնեցեր ըզխաչ քո ի միջի երկրի. եւ անվաս ըզսրմռիչ սպառն դրախտին բացեր նախատատ դժին. կենագործելով ի ճահճակոմանէ մահարբեր պըտղոյն: Եւ զօրութեամբ խաչի քո Քրիստոս. հիմնեցուցեր զկաթուղիկէ եկեղեցի ըզնաժկարան սուրբ ներքրդութեանդ. լուսաւորելով ըզհնթանոս ի սուրբ կըրկնակի ծնըն[դ]եան մէ:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԲԿ

Ըզդյալ բնութիւն փրիատոսի ամէն նեքեան օրհնեսցուք. զի նա միայն Աստուած փառաւորեալ յաւիտեան: Ըզճաղատագրի յարութեանն առնալով հրեշտակին. նա զօրանայր ի պատմել ըզկենսարեր յարութիւնն: Զայն աշակերտացն լսէին առաքեսանն սուրբ կանայքն. ի հրեշտակէն զանոնցին ուրա՞խութեամբ յանապատեալսն:

Ձաւիկ կերպակա՞ն խընդութեամն ունեաք. եթե նեղի կանանցն ասեալք ի հրեշտակէ՞ն անկրկիտ խընդութեամբ և բերկրանաց ուրախութեամբ ընթանային պատմել աշակերտա՞ցն աստ՞ուծ: Զոր մեհուն երկիւղիւ. ընդ մեռեալսս համարեալ կարծէաք. նա՞ ենթընկճանութեամբ յարուցեա՞լ զմահու եղոյծ զիշխանութիւն. և կենդանութիւն պարգեւեա՞ց աշխարհի

մահ՞ երդկա՞ն: Ա՛յլ ի՛ բաց եղեալ ընկերակա՞ն երկեղի՞ն ընկալցի՞ն. նախաժամանեցին ի պատիւ այնորի՞կ. որ մնհուամբն երկայն ըմա՞հ եւ անմահութիւն պարգեւեա՞ց այ՞ղի մահ՞ երդկա՞ն:

ՍԱՂ. ՀԻ. ԿՅ. Յոյց մեզ: ՓԽ. Հաճեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ժ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յետ այսորիկ երևեցոյց (Տէր) և այլ ևս եօթանասունս և երկուս, և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի տեղիս՝ ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են և մշակք սակաւ. արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր: Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ի մէջ գայլոց: Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս. և ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք: Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ անդ որդի ողջունի՝ հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր, ապա թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցէք տանէ ի տուն: Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր, և բժշկեսջիք որ ի նմա հիւանդք իցեն. և ասասջիք նոցա, մերձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ և ոչ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք ի հրապարակս նորա՝ ասասջիք. և զփոշիս որ կառնեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ: Ասեմ ձեզ, զի Սոդոմայեցւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ: Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ, վաղուց ևս արկեալ ի խորտ և ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր: Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձակագոյն լիցի դատաստանի՝ քան ձեզ: Եւ դու Կափառնաում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև ի դժոխս իջցես: Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ.

և որ զիս անարգէ , զառաքիչն իմ անարգէ . և որ ինձ լսէ , լսէ այնմիկ որ զիս առաքեաց : Դարձան եօթանասնաւն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր, և զդեւք հնազանդին մեզ յանուն քո : Եւ ասէ ցնոսա . տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն : Ահա տուի ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս , և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն , Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ թէ այսք հնազանդին ձեզ , այլ խնդացէք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս : Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն սրբով և ասէ . զոհանամ զքէն Հայր , Տէր երկնից և երկրի , զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի դիտնոց, և յայտնեցեր զայս տղայոց . այո Հայր , զի այսպէս հաճոյ եղև առաջի քո : Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ . և ոչ ոք գիտէ թէ ով է Որդի, եթէ ոչ Հայր, և ո է Հայր՝ եթէ ոչ Որդի , և ում կամիցի Որդին յայտնել : Եւ դարձեալ առանձինն առ աշակերտան ասէ . երանի աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէք . ասեմ ձեզ , զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել զոր դուք տեսանէք՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէք՝ և ոչ լուան : 24 :

Բ–ԻՉ . Խնդրեսցուք : Կեցո : Աչք+ . Քում ամենազօր :

Ց Ե Ր Ե Կ Ո Ց Ի Ն

ՍԱՂ . ճԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն : 569 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԲ . 38 :

Ա՛ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ պատասխանի եղեն (նմա) ոմանք ի դպրացն և ի փարիսեցւոց՝ և ասեն . վարդապետ , կամիմք նշան ինչ տեսանել ի քէն : Նա պատասխանի եղև և ասէ ցնոսա . ազգ չար և չնացօղ՝ նշան խնդրէ , և նշան մի՛ տացի նմա , բայց նշանն Յովնանու մարգարէի : Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս , նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս : Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա , զի զղջացան ի քարոզութեանն Յովնանու : Եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ : Դիշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և

դատապարտեցէք զսա. զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի : Եւ ահա մեծ քան զՍողոմոնն է սատ : Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ . յայնժամ ասէ . դարձայց ի տուն իմ՝ ուստի ելին . և եկեալ գտանէ պարապորդ մաքրեալ և յարդարեալ : Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ . և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն : Այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի : Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա : Եւ ասէ ումն ցնա. ահա մայր քո և եղբարք քո կան արտաքոյ , և խնդրեն խօսել ընդ քեզ : Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն ցնա , և ասէ . ո՞վ է իմ մայր , կամ ո՞վ են իմ եղբարք : Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ . ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ. զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է , նա է իմ եղբայր և քոյր և մայր : 50 :

ՀԱՄԲԱՐՁԻ Ա՟Զ

Որ անճառ էութեամբ Հօրդ ես : Դ· Երէ· պատ· 29 :

ՍԱՂ . ճԾ· Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան : 571 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Ե · 35 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Մինչ դեռ (նա) զայն խօսէր , գան ումանք ի տանէ ժողովրդապետին և ասեն , թէ դուստրն քո մեռաւ , զի՞ ևս աչխատա առնես զվարդապետդ : Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասացեալ , ասէ ցժողովրդապետան. մի՛ երկնչիր , բայց միայն հաւատա : Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ , բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայրն Յակովբայ : Գայ ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս և աղաղակ յոյժ : Եւ մտեալ ի ներքս՝ ասէ ցնոսա. զի խառնիլ էք և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ : Եւ ծաղր առնէին զնա . և նորա հանեալ արտաքս զամենեսեան , առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր , և գնասա որ ընդ նմանն էին , և մտանէ ուր դնէր մանուկն : Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա. տալիթա՝ կում. որ

թարգմանէ, ազգիկ դու՝ քեզ ասեմ արի: Եւ վազվազակի յարեաւ ազգիկն, և գնայր. քանզի էր ամաց իբրև երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք: Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց՝ տալ նմա ուտել: 43:

Ֆոյզ. Խնդրեացուք: Կեցո: Աչքի. Թագաւոր:

Դ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ. ԱԿ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳՉ

Փառաւորեմք զքեզ Տէր Աստուա՛ծ հա՛րցըն մերոց: Որ ըզցօղ անապականն արեանն ցօղեցեր տիեզերաց ի վերայ խաչին. ‖ ծրհնեմք զքե՛զ միշտ և փառաւորեմք: Որ թաղմամբն ե՛րեքօրեայ. յարուցեա՛ր ըզլո՛յս ձա՛ղեցեր աիեզերաց. ծրհնեմք զքե՛զ:

Գ. ԸՂՏԷ՛Ր ‖ ծրհնե՛ցէք և բարձր արարէք ընդե՛մ յաւիտեա՛ն: Որ ի բարձունս եւ և զերեաց ընդգերա՛թիւն. եւ ե՛ս պարգեւս որպէս մարդկա՛ն ծրհնե՛ցէք, ե՛ւ ի մեռեալս ապա առանց ծպնակա՛նի. քահանայք ծրհնե՛ցէք:

ՄՆԾԱՑՈՒՄՑԷ ԳՉ

Աստուածածին երկնային դուռն աստուածային: 379:

ՈՂՈՐՄՆԱ ԳՉ

Ո՞վ ակից չծր. կամաւն բարեխաւսեմ եկիր ի չարչա՛րանս. պչրչարա՛ծ ծծո՛ւս յանձն առեր. խաչի համբերելով իջեր ի գերեզման: Խղաթերիցն եկեալ ի գերեզման փըրկչի՛դ. ը զի՛ ծծո՛ւս աճեցչըս բե՛րին. ի խընկել զանապական մարմնոյ: Ա՛ւետս լուեալ ի հրեշտակէն որ ա՛՛աքը. Տէ՛՛ ծծո՛ր յարեաւ ի մեռելոց. ձե՛զ կեանըս պարգե՛ւեաց:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԳՉ

Ո՞վ զարեր ե՛ւ սո՛ւրբ կանա՛յքն. աղբա՛՛վ փութացէք եկին ի գե՛րեզմանն քո՛ Տէ՛ր. ի խընկել զանապա-

կան մանրմին ոգ : Բանրքա աւետաւեր հրեշտակի՝ն . որ զոչէ՞ր ահ երկանիկ կանայսըն պի խընդրէք զկենդանին ընդ մեռեալս . քանզի յարեաւ Տէր եւ աշա՞կերտաց զրժոխս : Պատմեալ երանելի կանանցըն զյարութի՝ն Տեառն աշակերտացն ուրախացեալք ընթանային . պէ՞տրա և Յովհաննէ՞ս ի կէ՞նատանէ վերկզմանն :

ՍՍՂ . ՀԲ . ԿՅ . Յոյց մեզ : ՓԽ . Հաճեցար : 567 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԺԴ . 25 .

ՋՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և ասէր . վարդապետ , ընչ՞ գործեցից՝ զի զկեանն յաւիտենական ժառանգեցից : Եւ նա ասէ ցնա . յօրէնս ընչ՞ գրեալ է , որպէ՞ս ընթերցուս : Նա պատասխանի եւ ասէ . սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , և յամենայն անձնէ քումմէ , և յամենայն զօրութենէ քումմէ , և յամենայն մտաց քոց . և զընկեր քո իբրև զանձն քո : Եւ ասէ ցնա . ուղիղ եաւր զպատասխանիդ . զայդ արա և կեցցես : Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս . և ո՞վ է իմ ընկեր : Պատասխանի եւ Յիսուս և ասէ . այր մի էջանէր յԵրուսաղեմ յերիքով , և անկաւ ի ձեռս աւազակաց , որք մերկացին զնա , և վէրս ի վերայ եդին , թողին կիսամահ և գնացին : Վասն եղև քահանայի միոջ էջանել ընդ նոյն ճանապարհ , և տեսեալ զնա՝ զանց արար . նոյնպէս և Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի , եւտես և զանց արար : Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ , և տեսեալ զնա՝ գթացաւ . և մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ ձէթ և գինի , և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի , և դարմանեաց զնա : Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի , հանեալ եւս ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ . դարման տար դմա , և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ դալստեան իմում հատուցից քեզ : Արդ ո՞ յերեցանց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկողն ի ձեռս աւազակացն : Եւ նա ասէ . որ արար ողորմութիւնն ի վերայ նորա : Ասէ ցնա Յիսուս . երթ և դու

արա նոյնպէս : Եւ եղև ի գալն նոցա՝ և ինքն եմուտ ի գեօղ մի , և կին մին անուն Մարթա՝ ընկալաւ զնա ի տան իւրում : Եւ նորա էր քոյր մի , որում անուն էր Մարիամ. որ և եկն նստաւ առ ոտն Տեառն , և լսէր զբանս նորա : Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում ապա-
սու . եկն եկաց առ նմա՝ և ասէ . Տէր , ոչ ինչ փոյթ է քեզ , զի քոյրդ իմ միայն ետ զիս ի սպասու . արդ ա-
սա ցմա զի օգնեսցէ ինձ : Պատասխանի եւ Յիսուս և ասէ . Մարթա Մարթա , գու հոգաս՝ և զբազում իւիք զբաղեալ ես . բայց սակաւ ինչ պիտոյ է . Մարիամ մնան բարի ընտրեաց , որ ոչ բարձցի ի սմանէ : 42 :

Բ–ղ . Խնդրեացուք : Կեցո : Աչք . Գումարեմ :

Յ Ե Ր Ե Կ Ո Ց Ի Ն

ՍԱՂ . ճԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԳ . 1 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յաւուր յայնմիկ ելեալ (Յիսուս) ի տանէն՝ նստէր առ ծովեզերն . և ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա ի նաւն և նստել . և ամենայն ժողո-վուրդն կայր առ ծովեզերբն : Եւ խօսէր ընդ նոսա բա-զում առակօք և ասէր . ահա ել սերմնացան սերմա-նել , և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանա-պարհաւ, և եկն թռչուն երկնից և եկեր զնա : Եւ այլն անկաւ յապառաժի , ուր ոչ գոյր հող բազում , և վաղ-վաղակի բուսաւ . առ ի չգոյէ հիւթոյ երկրին՝ ի ծագել արեւու տապացաւ , և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ : Եւ այլն անկաւ ի մէջ փշոց , և ելին փուչքն և հեղձու-ցին զնա : Եւ այլն անկաւ յերկիր բարի , և տայր պտուղ . էր որ հարիւրապատիկ , և էր որ վաթսնապատիկ , և էր որ երեսնապատիկ : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ : Եւ մա-տուցեալ աշակերտքն ասեն ցնա . ընդէր առակօք խօսիս ընդ նոսա : Նա պատասխանի եւ ասէ ցնոսա . քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից , և նոցա չէ տուեալ : Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի . և որ ոչն գուցէ՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ : Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա . զի տեսանեն՝ և ոչ տեսանեն , և լսեն՝ և ոչ լսեն , և ոչ առնուն ի միտս : Եւ

կատարի առ նոսա մարգարէութիւնն եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք. զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք խրթնաց ծանրացաւ լսուն. և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք՝ և ականջօք լուիցեն՝ և սրտիւք իմասցին, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա: Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ ձեզ, զի բազումք մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լսուն: Եւ արդ լսարուք դուք զառակ սերմանացանին. յամենայնի՝ որ լսէ զբանն արքայութեան և ոչ առնու ի միտ, գայ չարն և յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է որ առ ճանապարհաւն սերմանեցաւ: Եւ որ յապառաժին սերմանեցաւ այն է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղակի ընդունի զնա. բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է, ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթագղի: Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, և լինի անպտուղ: Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն ի միտ առնու, և տայ զպտուղ. է որ հարիւր, և է որ վաթսուն, և է որ երեսուն: 23:

ՀԱՄԲԱՐՁԻ ԱԿ

Հրաշալի գործութիւն Աստուածոյ: Գ. Եզր. գոռ: 30:

ՍԱՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ջ. 1:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ էլ անտի, եկն ի գաւառս իւր, և երթային զհետ նորա աշակերտքն իւր: Եւ եղև ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. և բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, և ասէին. ուստի է սմա այս, կամ ո՞րնչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց սորա լինիցին. ոչ սա է մանուկ հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յակովբայ և Յովսեայ և Յուդայի և Սի-

մոլեի, և չիցե՞ն քորքն դորա առատ առ մեզ. և գայթագղէին ի նա: Եւ առէ ցնոսա Յիսուս. ոչ է մարգարէ անարգ, բայց եթէ ի գաւառի իւրում, և յազգատոհմի և ի տան իւրում: Եւ ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա: Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա: 6:

Ջ՚ղջղ. խնդրեացուք: կեցո: Աչք. թագաւոր:

Դ · ՈՒՐԲԱԹ · ԲՋ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳՉ

Փա՞ռաւորեալ ՚ի ղի՞ Աստուծոյ. ո՞ր եկիր կամաւ ի չարչարա՞նս ‖ տէ՞ր Ա՞ստուած հա՞յրըն մերոց: Տա՞ր ըաձէցեր զամենազօր բազմակըս քո ի վերա՞յ խաչա՞փայտ՚ին. եւ ե՞րկիրըս հիացեալ անասնեցաւ ե՞ւ զողալո՞վ ե՞րեւէր. ի՞ յահէ փառաց քոց տէ՞ր: Ե՞ւ տեսեալ արեգականն զարարիչդ ի վերա՞յ խաչա՞փայտ՚ին. չհանդուրժեալ չարչարանաց արարչի՚ դ խաւարեցոյց ըզլոյսն ի մէ՞ջ օրէ՞ն. ի՞ յահէ փառաց քոց տէ՞ր:

Գ · Ըզտէ՞ր օրհնեցէք ‖ բանքդ արարէ՞ք յաւիտեա՚ն: Ե՞ւ զի՞նաւորըն զերզարդեամբըն յարձակեա՞լ. խոցեա՞լ ՚ի զկող կենարարին բարձր: Ո՞ւսոի՞ անդրիւք կենդանա՞բար բղխեա՞լ. լըւա՞լ ՚ի զաւէրս ի մեզոց բանքդ:

ՄՆԱՑՈՒՄՏԻ ԳՉ

Չանճառելի լուսոյ մայր. և զրնակարան անակղընա: 93:

ՈՂՈՐՄՆԱ ԳՉ

Ցամենահայնի բազմամոգոքիմ Աստուած. նայեա՛ յիս զբթութեամբ եւ խնայեա՛ ‖ զի զո՛ւ միայն ես մարդասէր: Ե՛ւ խաչիւըդ զո կենդանարար պահեա՛. եւ յարութեամբ բըզ զո փըրկեա՛ և ապրեցո՛ զի: Ե՛ւ ի մէ՛ւսանգամ ի

զալըատահն քո՝ Տէր. վերըատին դիս նորոգեա և ապրեցո՛ զի դու միայն ես մարդասէր։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԴՁ

Ա՛յսօր յարութիւն քրիստոսի. ուրախացէք հաւատացեալք ի մի՛ Աստուած Հայր ամենակալ։ Ա՛յսօր ես կանանց՝ քեզ իւղաբերք առաքեցան. ‖ ՕՐՀՆԵԼՆ զԱստուած զՀայր ամենակալ։ Ա՛յսօր ես հրեշտա՛կք ի յերկինս հնազեւոր հընչմամբ երգով. ՕՐՀՆԵԼՆ։

ՍԱՂ· ՁԲ· ԿՅ· Ցոյց մեզ։ ՓԽ· Հաճեցար։ 567։

Արբոյ Աստուածանիս որ ըստ Ղուկասու։ ԺԱ· 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. և իբրև դադարեաց, ասէ ցնա մին յաշակերտացն իւրոց. Տէր ուսո մեզ յաղօթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց աշակերտացն իւրոց։ Ասէ ցնոսա. յորժամ կայցէք յաղօթս, ասացէք. Հայր մեր. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. զհաց մեր հանապազորդ տուր մեզ օրըստօրէն. և թող մեզ զմեղս մեր, զի և մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։ Եւ ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բարեկամ, տուր ինձ փոխ երիս նկանակս. զի բարեկամ իմ եկն առ իս յուղեայ, և ոչ ինչ ունիմ դնել առաջի նորա։ Եւ նա ի ներքուստ ասիցէ պատասխանի և ասիցէ. մի՛ աշխատ առներ զիս, զի դուրգ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի. ոչ կարեմ յառնել և տալ քեզ։ Ասեմ ձեզ. եթէ ոչ յարուցեալ ասիցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժուժկանն յարուցեալ ասիցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։ Եւ ես ասեմ ձեզ. խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Ցո՞ ոք ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, մինչ փոխանակ ձկանն օձ տացէ նմա. և կամ խնդրիցէ ձու, մինչ կարիճ տացէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց,

ոչափ ևս առաւել հայր ձեր յերկինից տացէ բարիս այնոցիկ՝ որ խնդրենն ի նմանէ : 13 :

Բ-ՐՈՂ . խնդրեսցուք : կեցո : Աչք+ . Քառ ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ . ճԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԳ . 24 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Այլ առակ արկ առ նոսա և ասէ . նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում . և ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի նորա , և ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝ և գնաց . և երբև բուսաւ խոտն և արար պտուղ , ապա երևեցաւ և որոմնն : Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա . տէր , ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում , արդ ուստի ունիցի զորոմնն : Եւ նա ասէ ցնոսա . այր թշնամի արար զայն : Ասեն ցնա ծառայքն . կամիս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց : Եւ նա ասէ ցնոսա . մի՛ . գուցէ մինչ քաղիցէք զորոմնն , և ըզցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք . Թոյլ առաք երկոցունց աճել ի միասին մինչև ի հունձս , և ի ժամանակի հնձոց ասացից ցհնձօղսն . քաղեցէք նախ զորոմնդ , և կապեցէք զայդ խրձունս առ ի յայրել , և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ : Այլ առակ արկ առ նոսա և ասէ . Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ , զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում . որ փոքր է քան զամենայն սերմանիս , և յորժամ աճիցէ , մեծ է քան զամենայն բանջարս , և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից և հանգչել յոտոս նորա : Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ . Նման է արքայութիւն երկնից խմորոյ , զոր առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս ալեր՝ մինչև ամենայն խմորեցաւ : Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն , և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա : Զի լցցի ասացեալն ի մարգարէէն . բացից առակօք զբերան իմ , բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի : 35 :

ՀԱՄԱՌՕՏ ԲԱ

Այսօր գուարճացան սիրելիք : Գ . Ե . Զ . ՀՌ պաշ : 33 :

ՍԱՂ · ՃԺ · Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան։ 571։
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ Ջ · 7։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ հրէքն չուրչ զգաւառօքն, և ուսուցանէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանեան, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ ի գօտիս. այլ ագանել հողաթափս, և մի՛ զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթևանս կալջիք՝ մինչև ելանիցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լսիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. և դեւս բազումս հանէին, և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա։ 13։

Գ՚ղեղ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աչք։ Թագաւոր։

Դ · ՇԱԲԱԹ · ԲԿ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀՄՐ Ց Գ2

Ո՞ր յաւիտենից եմ Աստուած եւ տէր ամենայն կենդանեաւթեան. խոնարհեցար ի չարչարանս հանթերելով խաչի և մահու. ‖ զքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Ո՞ր ամենայն բարութեանց ես ակր եւ ի քրովբէական աթոռ նըստիս. երգար ի նոր բանիվոր վիմի անապական մարմնով. զքեզ։ Ո՞ր էակից ես հօրդ եւ սուրբ Հոգւոյն. լրջեր ի զժոխս փըրկեցեր զգերեալսն աւերելով բռնիչ. զքեզ։

Գ · ԸՂՑԷՐ ‖ Երգով օրհնութեամբ. բանիր սրարիք յաւիտեան։ Ո՞ր երգեր ընդօրութիւնըս զրժոխոյ խորհըրդով սընօրէնութեան իւրոյ. Քրիստոս թագաւոր փառաց. փառաւորեալ ի զօրից զբարձունից. երկայք ժողովուրդք երգով։ Ո՞ր բանիւ գոյացոյց զարարածս

Էակից Բանն ի Հօրէ Քրիստոս. և մանաւանդ խաչէն զաւ-
ետեանըն վասըն մեր համբերեալ յաղթեաց մահու ի-
խանութեամբ. եկայք ժողովուրդք երգեմ:

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ ԳՉ

Ո՛րան լեր Աստուածածնին յոյս և փըրկութեան
մայր. ըղքե՛զ ընդունող լուսոյ ուժգնանեմք:
Ըղքե՛զ լուսոյ մայր և կոյս. ըղքե՛զ զանձրդ կենաց
աստուածայինն. ձայնիւ ցնծութեա՛մբ մեծացուցանեմք:
Աղօթս առ որդի անարատ լուսոյն. հրեշտակայինն օրհնու-
թեամբ պատուեալ ըզքե՛զ մեծացուցանեմք:

ՈՂՈՐՄԵԱ ԳՉ

Քրիստոս Աստըւած որ տարածեցեր ըզձեռըս քո ի
խաչին. եւ լուծեր ըզկնիք գատապարտութեան մերոյ.
ո՞ղո՞րմեա: Ի՝ խաչին բեւեռեցար. եւ հեղմամբ ա-
բեանըդ քո փըրկեցեր ըզտիեզերս ի մեղաց. ո՞ղո՞ր-
մեա: Թաղեցար ի մէջ երկրի. եւ յերրորդ աւուր յա-
րեաւ ըզղջմունս աւերեցեր բանին. ո՞ղո՞րմեա:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԳՉ

Ի՛ խաչանիշ փայտէն զընդերկեցան զղջմունք. զօրու-
թեամբ սուրբ Հոգւոյն նորոգեցաւ երկիր. ո՞վ է սա
որ խափանեաց ըզմահ: Հրեշտակն աւետէր կուսին
Աստուծոյ. սա է ի սկզբանէ բանն որ յառաջ քան
զյաւիտեանս Որդին. սա է Թագաւորն որ: Ցաւեա՜ծ
յանուր երրորդի՝ վա՜յ մըք պատահեցան երկիր շարժեցաւ
սահանեցան զղջմունք. սա է կենդանին յաւիտենից
Քրիստոս:

ՍԱՂ. ՉԲ. ԿՅ. Ցոյց մեզ: ՓԲ. Հաճեցար: 567:

Արդոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԺԱ. 14:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ հանէր դև մի համր. և եղև ելեալն դիւին՝ խօ-
սեցաւ համրն, և զարմացան ամենայն ժողովուրդքն:

եւ ոմանք ի նոցանէ ասեն. թէեղկեբուզաւ իշխանաւն դիւաց հանէ զա զդևս: Եւ այլք փորձէին և նշան յերկնից խնդրէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ թէեղկեբուզաւ իշխանաւն դիւաց հանէ զա զդևս: Եթէ ես թէեղկեբուզաւ հանեմ զդևս, որդիքն ձեր իւ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդևս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Յորժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Բայց եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեացէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ յոր յուսացեալ էր, և զաւար նորա բաշխեացէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: Յորժամ այն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ չրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ ուստի ելին: Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ: Յայնժամ երթայ և առնու եօթն այլ ոգիս չար ևս քան զինքն, և մտանէ բնակէ անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն: Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն երասխ կին մի ի ժողովրդենէ առաւ և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ, և առեանցն՝ որ դիեցուցին զքեզ: Եւ նա ասէ. նա՝ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն: Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել. ազգս այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, և նշան յերկնից ոչ տացի ամս՝ բայց նշանն Յովնանու: Զի որպէս եղև Յովնան նշան Նինուէացւոց, նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ազգիս այսմիկ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ, և դատապարտեսցէ զսոսա. զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սաղոմոնի. և ահա առաւել քան զՍաղոմոն է աստ: Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեացեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու. և ահա առաւել քան զՅովնան է աստ: 32:

Ֆ-ըղ. խնդրեացուք: կեցո: Աչք+. Քառ ամենապօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍՍՂ. կՉ. Աստուած ողորմեա մեզ և օրհնեա: 563:

Սրբոյ Աբեսաբանիս որ ըստ Մատթէոսի: ԺԳ. 36:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Յայնժամ Թողեալ (Յիսուսի) զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն և ասեն. մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի: Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ սերմանէ սերմն բարի՝ է որդի մարդոյ, և ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ որոմնն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է, և հունձքն կատարած աշխարհիս է, և հնձօղքն՝ հրեշտակք են: Որպէս ժողովի որոմնն և ի հուր այրի, այնպէս և լինի ի կատարած աշխարհիս. առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթագղութիւնս՝ և զայնոսիկ ոյք զործեն զանօրէնութիւն, և արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն դայն: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուխտանի արկելոյ ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ. զոր՝ իբրև լցաւ՝ հանեալ ի ցամաք, և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեացեն զչարս ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Ասէ ցնոսա Յիսուս. խնացարուք զայս ամենայն: Ասեն ցնա. այո Տէր: Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ամենայն

պիր աշակերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին։ 52։

ՄԵՍԵԻԻ Գ-ԼՈՒԽԱՆ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գայոց ես։

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ։

ՀԱՄԲԱՐՁԻ Գ Ձ

Թագաւոր գոլով քո յաչխարհ մտեր ի քաղաքն։ 309։

ՍԱՂ. Ձ. Ցնծացէք առ Աստուած օգնական է։ 457։

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ Ձ. 14։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտնի եղև։ 562։

Բ-ԲՈՂ. Խնդրեացուք։ Կեցո։ ԱղՃ. Թագաւոր։

Ե· ԿԻՒՐԱԿԷ· Գ Ձ

Ցայս ՚ի-ւրՙՙկէս, և յա՛ր ա՛ր ա՛ն քեր, ի Մայիսի 7, երեսման առաքե խայ պօն է։

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Գ Ձ. Օգնական ընդունելի եղև։ 16։

Ալէլուիա Ցարո՛ՙՙեան ՚ի յայնէն։

ՅԱՌԱՒՕՏՕՒ

ՀԱՐՑ ՃԱՁԻ Գ Ձ

Ա՛յսօր, ընդ ամպըս լուսաւորս երևեալ. նըշան ակրաւնական խաչին. բացա՛նի՛չ փա՛ռ յլմամբ տե՛ա՛ղացն ընթացեալ ի քա՛ղաքըն պա՛տա՛ՙՙին. ‖ ըզնըչա՛ն քո՛ Տէր Ա՛ստըւա՛ծ հա՛՛ըցըն ը մե՛ըց։ Յաբեւա՛ՙՙից փայլանց ձա՛ռագա՛յթ տուրբ խաչի՛ն. ա՛րեգակնանկե՛ըպ ճառագա՛յթի՛ւք. վիա՛ըն տե՛ա՛ՙՙնիւ ի յե՛ըրա՛ըպ ժա՛մու. նըչա՛ն։ Ա՛պա՛ՙՙէն ցուցա՛ւ մեզ տուրբ խաչըն փըրկչական զի յաղթեացո՛ւք նահա՛ւ ա՛նօրէ՛ն Թըշնամւո՛յն. կնի՛ք հաստատութեան ընկալեալ ի յանձէ նըմա մեր. ըզնըչա՛ն։

Գ. ԸզՏէր ծրհնեցէք բանբեր ամբարեք ընդեմ յանի-
տեան: Ա. Յօր նըշանն սուրբ խաչին ի յերկինից երեւեալ
եկայք նոր ժողովուրդք միաբանութեամբ ըզՏէր ծրհ:
Ա. Յօր ի սուրբ գողգոթա ցոլացեալ երեւիւր աեսիլ
ահաւոր ժողովոյն. քա՛ հանեայք երգով ըզՏէր ծրհ:

ՄՆԾԱՑՈՒՄՏԷ ԴՉ

Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս. որ ընդոյն առ ի՛
Հօրէ ծընանր մարմնով. եւ եղեր աթեւելք արեգականն
արդարութեան. ‖ հոգեւոր երգով ընդքեզ սըրբա՛ւհի-
ւեցաւցանեմք: Քեզ՛ վրէից զերազոյն էին աթոռ.
եւ ծո՛ւ կենաց անմահական պըտղոյն. տանգանակ կը-
տակէ՛ բանին և սափոր ոսկի երկնային մանանայիեն.
հոգեւոր: Քեզ բացաւ սրնվրէ՛ափակ դուռըն դրախտին.
եւ քեզ տըւաւ մեզ փայան անմահութեան. զոր ի նմա՛
զենեալն անմահ այսօր յերկինից լուսաւորեաց. հոգեւոր:
Գէշերէ խա՛չ ——. Ա. յսօր եկեալ կամաւ Տէրն ի խաչ:

ՈՂՈՐՄԵՆԱ ԴՉ

Ի՛ յերկնից երեւեալ նըշանն յաղթութեան. ա՛յ-
սօ՛ր. հեթանոսաց ծագեալ ծ լոյն ողորմութեան: Եւ
բանմութեանն ժողովոյն. տեսանէին ա՛յսօ՛ր. սուրբ
ըզխաչըն լուսածայ ճառագայթիւք զարդարեալ: Ըզնզ
երեւումըն սըրբոյ խաչի քո Քրիստոս ա՛յսօ՛ր. երա-
սաղէմ մեծապէս պանծացո՛ւ յոյժ: Եւ ըզծագումըն
լուսոյ աստուածային նըշանի՛ քո՛. ճառագայթիւք տե-
սանիծ՛ր բանմութեան ժողովոյն: Ա՛մենայնի զօրու-
թիւն խաչի քո Քրիստոս. որ ցուցաւ ի յօգնութիւն ընդ-
դէմ թըշնամւոյն. պատե՛րազմեալ զօրութեամ՛ր քո՛վ:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԴՉ

Գանո՛ւ զօրութեա՛ն ըզխաչ քո՛ եւ աստուր մեզ Քրիս-
տոս եւ սուրբ յաղթեսցուք անօրէն թըշնամւոյն: Ա-

է զԱն յաղթութեամբ ոչընդունն Աստուծոյ. ‖ եւ սովաւ յաղթեացուք անօրէնն թշնամւոյն: Սա է աթոռ տէրունեան. եւ ի սմա է բազմեալ Քրիստոս ոչրդւոյն Աստուծոյ. եւ: Սա է սեղան սրբութեան եւ ի սմա է պատարագեալ Քրիստոս զանն Աստուծոյ. եւ: Սա է կարասկեա յաւուր զալստեան Քրիստոսի. եւ պշտակ պարծանաց հաւատացելոց. եւ սովաւ:

Աստուած երդ

Եստուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով քով եւ լուր մեզ:

Քրիստոս Աստուած

Ի՛ւ ընդ Աստուծոյն Աստուածդն Աստ. Փրկիչ: Աստ. վասն լանչի: Քոյ. Օրհնութիւն: Եւ ելանէն խաչիս և աստեղս նաս և ասէնայն զարդոսի ի գրոս ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉԻ ԴՉ

Չօրութիւն աւուրս խաչի քո Քրիստոս. որ կանգնեցեր ի փրկութիւն մարդկան քոց. ‖ սա՛ պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ: Քանզի ի սմա բարձրացար Աստուած. եւ ի սմա հնդեր ընդ պատուական աւուրս զարբինդ. սա: Եւ զքո մխիթարութիւնդ զգալուսաւորդ. ընդ շանաւ խաչի քո ցուցեր մարդկան. սա:

ՉԱՆԻ ՍԱՂՄՈՍ Դ. Ի ԸՆԹ-

Կ8. Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա, տեսանեն ամենայն ժողովուրդք զվառս նորա:

Փխ. Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք:

Ամպ և մէգ չուրջ է զնովաւ, կիրառութիւն և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա:

Հուր առաջի նորա գնասցէ, այրեսցէ չուրջ զթշնամիս նորա:

Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց, տեսեալ և սասանեցաւ երկիր:

Լերինք որպէս մամ հալեսցին յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր :

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա , տեսին ամենայն ժողովուրդք զփառս նորա :

Աշխեսցեն ամենեքեան որք երկիր պագանեն կռոց , և որք պարծին ի դրօշեալս իւրեանց :

Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք նորա , զի լուաւ և ուրախ եղև Սիան , և ցնծացան դստերք Յուդայ վասն իրաւանց քոց Տէր :

Զի դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի , յոյժ բարձրացար ի վերայ ամենայն կռոց :

Որք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն . պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց , ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա :

Լոյս ծագեաց արդարոց , ուղղոց սրտից եղև ուրախութիւն :

Ուրախ եղերուք արդարք ի Տէր , խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա :

Ալէլուիա . ալէլուիա :

Գողգոսի առաքելոյն ի Գաղատացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս : Ջ. 14:

Ամէն ինձ քաւ լիցի պարծել , բայց միայն ի խաչն : 474 :

Ջ–ՅՀ– Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց , և ետուր ուրախութիւն սրտից մերոց :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԻԳ . 27 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից և երեւի մինչև յարեւմուտս , այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ : Զի ուր դիշն իցէ , անդր ժողովեսցին արծուիք : Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգականն խաւարեսցի , և լուսին ոչ տացէ զլոյս իւր , և աստեղք անկցին յերկնից և զօրութիւնք երկնից շարժեսցին : Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս , և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի , և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք : Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ , և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից

հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա: Ի թգնեւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն. նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն: Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից և ոչ Որդի, բայց միայն Հայր: 36:

Ե- Գեառնաբրքին գանգատագան և գալխարհս:

Զինի Քր. Սուրբ խաչ: Աղ. Պահպան: Ե- Ի գառնալն՝ ասէն ՍԱՂ. 29. 48. Յոյց մեզ: Փխ. Հաճեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԺԱ. 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թաքստեան, (և ոչ ընդ գրուանաւ.) այլ ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն: Ճրագ մարմինդ ակն է. յորժամ ակնն առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն խաւարին եղիցի. արդ զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է, և չգոյէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշուլիւք լուսաւորիցէ զքեզ: Եւ մինչ դեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. և նա մտեալ բազմեցաւ: Իրրև եահս փարիսեցին՝ զարմացաւ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ: Ասէ ցնա Տէր. այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և զպնակին սրբէք, և ներքինն ձեր լի է յափշտակութենէ և չարութենէ. անմիտք, ոչ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն արար: Բայց ազէ զարժանն խնկ տուք ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր: Այլ վայ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէք զանանուխ և զփիգենայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրոյն Աստուծոյ. զայս արժան էր առնել՝ և զայնու ոչ անցանել: Վայ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս, և զնախաղէնս ի հրապարակս: Վայ ձեզ, զի էք դուք իրրև զգերեզ-

մանս անյայտս, և մարդիկ գնան ի վերայ և ոչ գիտեն։ Պատասխանի եւս ումն յօրինականացն և ասէ ցնա. վարդապետ, զայդ բանս ասելով և զմեզ թշնամանես։ Եւ նա ասէ. և ձեզ վայ օրինականացդ, զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ միով ի բեռինն ոչ մերձենայք։ Վայ ձեզ, զի շինէք դէրիմս մարգարէիցն, և հարքն ձեր սպանին զնոսա. ապա ուրեմն վկայէք, եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք զդերեզմանս նոցա շինէք։ Վասն այսորիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց. առաքեցից ի նոսա մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ սպանանիցեն և հալածիցեն. զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից հեղեալ ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայգմանէ, յաբենէն Աբելի մինչև յարիւնն Զաքարիայ կոտորելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն. այո ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայգմանէ։ Վայ ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք զվճականս գիտութեանն. դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք։ Եւ ի խօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն՝ զաթոռի հարկանէին. և սկսան դպիրքն և փարիսեցիք ըզշարել և զբղծել բնդ նմա վասն բազում իրաց, և ապասել որսալ ինչ բանս ի բերանոյ նորա, զի չարախօսեսցեն զնմանէ։ Որովք ի կատել բնութեացդ ժողովրդեանն՝ մինչև կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտան իւր. նախ զդոյշ լերուք անձանց ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծաւորութիւն։ Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի՝ լսելի լիցի ի լոյս, և զոր յունկանէն խօսեցարուք ի չուխմարանս՝ քարոզեսցի ի վերայ տանիցաց։ Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի զարհուրիցիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ ասելի ինչ ոչ ունիցեն առնել։ Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկնչիլիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիլիք։ Ո՞չ ապաքէն հինգ ճագ երկուց դանգաց վաճառի, և մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ։ Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք, զի քան զբազում ճագս լաւ էք դուք։ Ասեմ ձեզ, զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի

մարդկան, և որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամենայն որ ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգին սուրբ հայհոյիցէ՝ մի՛ թողցի նմա: Այլ յորժամ տանիցին զձեզ ի ժողովուրդս և ի պետութիւնս և յիշխանութիւնս, մի՛ հոգայցէք՝ որպէս թէ զի՛նչ պատասխանի տայցէք կամ զի՛նչ ասիցէք· զի Հոգին սուրբ ուսուցցէ ձեզ ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել: ԺԲ· 12:

Եբր· Նորատեղծ: Բոլ· Խնդր: Կեցց: Աչ· Բուժ ամն:

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂ· ճԽԹ· Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն: 569:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԳ· 53:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև իբրև կատարեաց (Յիսուս) զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: Եւ եկեալ ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչև զարմանալ նոցա և ասել· ամա ուստի՞ իցէ այս իմաստութիւն և զօրութիւնք՝ Ո՞չ սա է հիւսանն որդի· ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, և եղբարք սորա Յակովբոս և Յովսէս և Սիմոն և Յուդա· և քոյրք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են· և արդ ուստի՞ է ամա այս ամենայն: Եւ գայթագղէին ի նա: Եւ Յիսուս ասէ ցնոսա· չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տան: Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա: 58:

ՀԱՄԲԱՐՁԻ 9Ջ

Փառաւորեալ է քո յաթուիւնդ: Դ· Ե· Ջեց պոռն: 39:

ՍԱՂ· ճԾ· Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ջ· 30:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Ժողովեցան առաքեալքն (առ Յիսուս), և պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին: Եւ ասէ ցնոսա Յիսուս· եկայք դուք առանձինն յանապատ տեղի, և հանգիչիք սակաւ մի· զի էին բազումք որ եր-

թային և գային, և հայց անգամ չժամանէին ուտել : Եւ գնացին նաւու յանապատս տեղի առանձինն : Եւ տեսին գնոսա զի երթային , և զգացին բազումք . և հետ յաջմէնայն քաղաքաց խուռն ընթանային անդր , և մերձեցային առ նոսա : Եւ եղեալ հառս ամբոխ բազում, և գիտացաւ ի նոսա , զի էին իրրև ոչխարք՝ որոց ոչ իցէ հովիւ . և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ : Եւ իրրև բազում ժամ եղև, մատուցեալ աշակերտքն ասէին . տեղիս անապատ է , մինչ դեռ աւուր կայ , արձակեա զժողովուրդս , զի երթեալ շուրջ յագարակս և ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի սոսա ինչ ուտել ոչ ունին : Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա . դուք տուք դոցա ուտել : Ասեն ցնա. երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց , և տացուք դոցա ուտել : Ասէ ցնոսա . քանի նկանակ ունիք, երթայք տեսէք : Իրրև գիտացին, ասեն ցնա . հինգ , և երկուս ձկունս : Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար խոտոյ . և բազմեցան դասք դասք, ուր հարիւր և ուր յիսուն : Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս՝ օրհնեաց , մանրեաց զնկանակսն , և ետ ցաչակերտսն զի արկցեն նոցա , և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն : Կերան և յագեցան . և բարձին զնշխարսն երկոտասան սակաւի լի , և ի ձկանցն անտի . և էին որք կերանն՝ իրրև արք հինգ հազար : 44 :

Բ-ր-շ· Խնդրեացուք : Կեցո : Աչք-. Թագաւոր :

Ե· ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ· Գ Կ

Ց Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

ՀԱՐՑ 42

Կամաւո՞ր-թէ հեամբ եկիր ի չարչարա՞նս տէր . եւ ի վերայ նա՞խա՞ատ դժին ընդմե՞ռանիլ յանձն ա՞ռնէր . Տէ՞ր Ա՞տաբատ հարցընէն մերոց: Ա՛նպատրաստկանդ մատու որպէ՞ս մնհատա՞րտս. զառաջապահեա՞լ ի՞ խաչ եկեր վա՞ռն տպդի մա՞րդկան . Տէ՞ր : Ա՛նմահութեանց արտ՞ուղ Քրիստո՞ս Ա՞տաբատ . ի զերեզման ի՞ջեր յարուցիչդ մեռե՞լոց . Տէ՞ր :

Գ. ԸզՏէր օրհնեցէք ‖ բանբեր ամբարէ՞ք զբանգիանէն ի վերայ խաչին։ Ո՛ր կանդնեացն ըզքառանկիւնն սէ՞ զա՞ն խաչին. յաղագըս քառակողմ անչխա՞րհիկ պա՞տարագեալ. յորմէ սեղանոյ բուրեաց անուշահո՞տ հո՞զէ՞. բանբեր։ Ո՛ր փոխանակ մեղանչելո՞ց մանկացն պըտղոյն. պարզեւեաց մեզ կենա՞ցո՞ւ ա՞րդարութեան. ի կեանսն յաւիտենից նո՞րոգելով ըզմի՞զ բանբեր։

ՄՆԱՑՈՒՍՑԻ Գ2

Աւրբ զԱստուածածինն. օրհնութեամբ մեծացու։ 141։

ՈՂՈՐՄԵԱ Գ2

Լո՛յս ճըշմարի՛տ որ ի՛ հօրէ առաքեցար. աւետ մնարմին պարապրիլ ի կուսէն ո՛չ մեկնելով յանբծնին յէ՛ութենէ. ‖ Բա՛նեղ Ա՛ստուած ողո՛ր՛մեա՛։ Ո՛ր անհապ ես յարարածո՛յ. եւ քան զամենայն միաբո՛ւս գերապանոյ. զո՛ր երկիւղ ոչ բաւէին տանել յարդանդի կուսին կրեցար. Բա՛նեղ։ Չյաղթահարեալս յանձն առեր. ա՛խտանկիր հողեղինացս եղե՛ր. վանեն մերոյ փըրկութեան ի գերեզմանէ եղա՛ր. անկոնջո՛ւտ պահելով զարարածըս Բա՛նեղ։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Գ2

Փա՛ռաւորեալ է՛ քո յարութի՛ւնդ։ Ո՛ր յարեա՛ր՛ զի ի մեռելոց յաւո՛ւր երրորդի՛. Քրիստո՛ս ծնո՛ղ Ա՛ստուծոյ. փա՛ռ։ Ո՛ր յանձն՛ա՛ռ բարբառոյ յարութեան քո Տէր երկիր շարժեցաւ. վէմըք պատառեցան Քրիստո՛ս ծնո՛ղ Աստուծոյ. փա՛ռ։

Ի՛ ձայն անձեղ յարութեան քո Տէր զարհուրեցան զինուորքըն զամենա՛ն. յարիւնափայլ հրեշտակին ի՛նդ մա՛ռնն. եւ զդողալով շարժեցաւ երկիր։ Ա՛նա՛ւասեա՛ւ աւրբ կանանցըն գնա՛ւղով ըղվիճակաւոր գերեզմանն. բերելո՛վ զիւղս անուշութ՛ի՛ւն ի յածո՛ւմըն կենսաբո՛ր մարմնո՛յն. անպարապիլ էակատեսութեան։ Եւ տեսեալ

ըղձերովքն վերանըստեալ ի վիմին. տաքիսղելով աչքերուհանէ. ասէ զանձինր ողջոյն տուր փողոցն. քանզի յարեաւ որ յառաջն ասաց։

ՍԱՂ. ՀԲ. ԿՑ. Յոյց մեզ։ ՓԽ. Հատեցար։ 567։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ ԺԲ. 13։

Ա՛ն Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Ասէ ոմն ի ժողովրդենէն (ցնա). վարդապետ, ասա ցեղբայր իմ՝ բաժանել ընդ իս զժառանգութիւնն։ Եւ նա ասէ ցնա. այր դու, ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր։ Եւ ասէ ցնոսա. տեսէք և ըզդոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ ենթէ ի մթերից ընչից ընչից ուրուք իցեն կեանք նորա։ Խօսեցաւ առ նոսա առակ մի և ասէ. առն ուրումն մեծատան եռուն անդք առհմակաւս. և խորհէր ի միտս իւր և ասէր, զի՞ գործեցից՝ զի ոչ զոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Եւ ասէ. գիտեմ զինչ արարից. քակեցից զչտեմսրանս իմ՝ և նա մեծամեծս շինեցից, և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ, և ասացից ցանձն իմ. անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամս բազումս. հանգիր՝ կեր արբ և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցեր՝ եւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։ Ասէ ցաշակերտան իւր. վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք ընդ օգոյ՝ թէ զինչ ուտիցէք. և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք։ Չի ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն չառմնարանք և ոչ համբարանոցք, և Աստուած կերակրէ զնոսա. որչափ ևս առաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս։ Ո՞վ ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի. իսկ արդ ենթէ ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք։ Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճէ, ոչ չանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ, և ոչ Սողոմոնի յամենայն ի փառան իւր զգեցաւ իրրև զմի ի նոցանէ։ Իսկ ենթէ զխոտն որ այսօր ի բացի է և վաղիւ ի հնոց արկանելի՝ Աստուած այնպէս զգեցուցանէ,

արչաւ ևս առաւել զձեզ , թերահաւատք : Եւ դուք մի՛ խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք , և մի՛ զբաղնուք · զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն : Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ , և այն ամենայն յաւելցի ձեզ : 31 :

Ք–ՐՂ · Խնդրեցուք : կեցո : Աչք+ · Քոմ ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ · ճԽԹ · Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԴ · 1 :

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի , և ասէ ցծառայս իւր · Նա է Յովհաննէս Մկրտիչ , նա յարեաւ ի մեռելոց , և վասն այնորիկ զօրութիւնք լինին նմանաւ : Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս՝ կապեաց զնա և եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա . զի ասէր ցնա Յովհաննէս . չէ արժան քեզ առնել զդա : Եւ կամէր զնա սպանանել , բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի . քանզի իբրև զմարգարէ ունէին զնա : Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի , կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազմականին . և հաճոյ թուեցաւ Հերովդի , ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ : Եւ նա յառաջագոյն խրատեալ ի մօրէ իւրմէ , տուր ինձ , ասէ , այսր ի վերայ սկահղ զգլուխն Յովհաննու Մկրտչի : Եւ տրտմեցաւ թագաւորն , բայց վասն երդմանցն և բարձակեցելոցն՝ հրամայեաց տալ նմա : Եւ առաքեաց զխոստեաց զՅովհաննէս ի բանտի , և բերաւ զլուխ նորա սկահղը և տուաւ աղջկանն , և տարաւ առ մայր իւր : Եւ մատուցեալ աշակերտքն նորա բարձին զմարմինն և թաղեցին , և եկեալ պատմեցին Յիսուսի : 12 :

ՀԱՄԲԱՐՁԻ Գ Կ

Ձ-քո յարութիւնդ օրհնեմք : Գ · Գ · Ձէց գոշ : 42 :

ՍԱՂ · ճԺ · Օրհնեցէք զԱստուած ի սրբութիւնս : 571 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Ջ · 45 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ նոյնժամայն ետուաց զաշակերտսն մտանել ի նաւ ,

և յառաջագոյն քան զնա երթալ յայն կոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ. և հրաժարեալ ի նոցանէ՝ ել ի լեառն կալ յաղօթս։ Եւ իբրև երեկոյ եղեւ՝ էր նաւն ի մէջ ծովուն, և ինքն ի ցամաքի։ Եւ նոքա զնոսա հոգմեակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, և կամէր զանց առնել առ նոքօք։ Նոքա իբրև տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ լինիցի, և զաղաղակ բարձին. քանզի ամենեքեան տեսին զնա՝ և խառնեցան։ Եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալերեցարուք, ես եմ՝ մի՛ երկնչիք. և ել ի նաւն առ նոսա, և դադարեաց հողմն։ Եւ առաւել ևս յիմարեալ էին ի միտս իւրեանց, և զարմանային յոյժ. քանզի և ի վերայ հացին ոչ խնացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ։ Եւ իբրև անցին յայն կոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ։ Եւ իբրև ելին ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. և ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր՝ ի գեօղս կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։ 56։

Քաղ. Խնդրեցուք։ կեցո։ Աջիւ. Թագաւոր։

Ե · ԵՐԵՔՇԱԲԱԹԻ · ԴՋ

ՅԱՒՒԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Գ2

Ա՞րդեօք արդարծոց Քրիստոս աշա՛կերտ յածմ՛ր. ի խաչին բուսեալ համ՛ձե՛ւ գինաւորըն գեղարդեամբըն յարձա՞կեալ ըզկո՞ղ քո խոցեաց ‖ Տէր Աստուած հաշրցըն մերոց։ Կենդանեղ յատենէ Քրիստոս աշա՛կերտ յածմ՛ր. ի գերեզմանի եղեալ համ՛ձե՛ւ պահպանեալքըն պահէին ըզպաշտօ՞ւթեամբ ըզդե՞րեզմանն քո Տէր։ Յարեալդ ի մեռելոց Քրիստոս աշա՛կերտ յածմ՛ր. ըզդերեզմա՛ն աւերեալ

եահձե կենդանութիւն պարգեւեցեր արարածոց քո՝ յո՞վ յարութեանդրդ ՏԷր Ա՛ստուած հաւրցըն մերոց :

Գ· Ը՛ղՏԷր ‖ Ը՛զնա՛ օրհնե՛լով բարձր ա՛րարէ՛ք յա՛ւիտեան՛ն : Զո՛ր կարա՛ղեացըն ցո՛ւհանն՛էս մա՛րգարէիցն Ի՛ղԺո՛ւխս. ա՛ւետաբա՛նէ՛՛՛ր ը՛զգալո՛ստս արեգա՛կեանն արդա՛րո՛՛ւթեան. ը՛զնա՛ : Ո՛րո՛ւմ բռնաւո՛՛ղին արգելա՛լքն ի մե՛զ ամա՛՛ենէր բանտե՛՛ն. ա՛զատե՛ցո՛ւցի՛՛՛ չ յա՛ւսոյ գա՛լըստեան Աստուածորդւո՛յն ի յե՛՛րկինից. ը՛զնա՛ : Ո՛րոյ ե՛կեալ կատարեա՛ց զմարգարէիցն ը՛զամե՛նաւթիւն. ա՛ւե՛՛րելո՛՛՛վ զդրո՛՛նըս դըժոխոյ եւ զ՛զո՛՛րութիւն մա՛՛՛հու. ը՛զնա՛ :

ՄՆԱՑՈՒՍՑԷ Գ2

Լ՛ոյս լուսոյ մայր և կենսատար Բանին բնակա : 469 :

ՈՂՈՐՄԵՆԱ Գ2

Ի՛ՆԸՐ յերկնից ի հօրէ՛ և մարմնացար ի կո՛՛ւսէ՛ն. համբերո՛՛՛ւ՛՛՛ձե՛՛՛զ փըրկիչ վասըն մեր ըզմահ ճաչակե՛՛՛ցեր : Ե՛կիր ի չարչարանըս չարչարանացըն լո՛՛ւծի՛՛՛չ. խանձո՛՛՛ւ՛՛՛ձե՛՛՛ր թաղե՛՛՛ցար. եղար ի գերեզմանի Բրինաստ Ա՛ստուած մեր : Ե՛ւ յերրորդ աւուր յարեար անեղական փո՛՛՛ւ՛՛՛ձ ՏԷր. պարգեւեցո՛՛՛ւ՛՛՛ձե՛՛՛զ աշխարհի վերադարձութիւն. Ե՛ւ զմեզ զոդոմանութիւն :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Գ2

Հրաշալի յարութիւնն ըզպահանջանըն դարձո՛ւ՛՛՛ցեալ. Եւ հրեշտակն ի յերկնից լինել ի ձայն ահեղ յարութեանն Աստուածորդւոյն. կանխա՛՛՛ւ՛՛՛նցն աւետէր յարեաւ Աստուած : Ի՛ ձայնէ՛՛՛ հրեշտակին զրւարձանան սրբամանգիստ կանայքն. Եւ դարձա՛՛՛ն խընդութեամբ ետուն աւետս անաբեւոյն ելո՛՛՛ւ՛՛՛ց յարեաւ՛՛՛ Նախանձամատչին : Ե՛կայք լուսազգեանք. յօրհնո՛՛՛ւթիւն նոր օրհնեսցուք ըզՏէր. քանզի մարմնով որ ի մէնջն էառ ի՛ հրեշտակաց երկրպագութիւն առնու. ի՛ սրտմտութի՛՛՛ւ՛՛՛ն և ի քրտնէից :

~Տո՛ւք ըզվա՛ռս ի՛ բարձունս. թագաւորի՛ն յաւի՛տեանից. ո՛ր վըրկեա՛ցդ զաղջս որդւոց մարդկան ի ծառայութենէ՛ն թըշնամւոյն. ‖ ծրհնութիւն առաքոյի՛ն ի՛ բարձունս: Նա՛ ի՛նքնիչխանո՛ւթեամբ բազմեցաւ ի վերայ խաչին. կապեա՛ց զի՛չխանըն մեղսամա՛ր. զմահու զ՚բեամբըն յԱ՛դամայ կենագործեաց ի կեանս ա՛նմահ. ծրհնութիւն: Նախայաւիտեա՛ն Արդին փառակից Հո՛գւոյն. զընկի՛ ի՛ նո՛ր վերին զմա՛նէ. նո՛ր նորոգել զին ըզհընացեա՛ւլըս մե՛զ. ծրհնութիւն: Հո՛լանթեւեա՛ն սե՛րովբէն նըմատելով ի վերայ վիմին. հարկանէ՛ր փո՛ղ յարութեանըն Տեառն. պահապանացն յահէն եղե՛ն ո՛րպէս մե՛ռեալ. ծրհն: Հանդո՛րդս արա՛ եւ ըզմի՛զ Տէր. ընդ սրբոց քո՛ց ա՛ռաքե՛լոցն. որք արժանի՛ եղեն տե՛սանել ըզքեզ ի յա՛րութեա՛ն քո. արժանաւորեա՛ Տէ՛ր տեսանել ըզքեզ ի մի՛ւսանգամ քո՛ գալըստեանն. ծրհնութիւն առաքոյի՛ն ի՛ բարձունս:

ՍԱՂ. ՁՒ. ԿՅ. Յոյց մեզ: ՓԽ. Հաճեցար: 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԺՒ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ հայր: 239:

Քառ. Խնդրեացուք: կնոջ: Աղաչ. Քամ ամենազօր:

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ՍԱՂ. ՃԽԹ. Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն: 569:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԳ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև լուաւ (Յիսուս), գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն: Իբրև լուան ժողովուրդքն գնացին ոտիւք ի քաղաքաց անտի: Եւ իբրև ել՝ հաւր ժողովուրդ բազում, զթացաւ ի նոսա, և բժշկեաց

զհիւանդս նոցա : Իբրև ընդ երեկս եղև , մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն . տեղիս անապատ է , և օրա՝ տարաժամեալ , արձակեա զժողովուրդսդ՝ զի երթիցեն չուրջ ի շէնան , գնեացեն իւրեանց կերակուրս : Եւ ասէ Յիսուս . ոչ ինչ պիտոյ է դոցա երթալ · դուք տուք դոցա ուտել : Եւ նոքա ասեն ցնա . ոչ ինչ ունիմք ասա , բայց հինգ նկանակ և երկուս ձկունս : Եւ ասէ ցնոսա . բերէք այսր զայն : Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ . և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս , օրհնեաց . և եբեկ և եա ցաշակերտան զնկանակսն . և աշակերտքն ժողովրդոցն : Կերան ամենեքեան և յագեցան , և բարձին ըզնշխարս կոտորոցն երկոտասան սակաւի լի : Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հազար , Թող զկանայս և զմանկտի : 21 :

ՀԱՄԲԱՐՁԻ Դ

Ձյարութիւն Աստուած : Ե · Ձ · Ի · ՃՀ գլուխ 45–47 :
ՍԱՂ · ՃԾ · Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան , 571 :
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : Ի · 1 :

Ա՛ս Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ժողովեցան (առ նա) փարիսեցիքն և ոմանք ի դպրացն որ եկեալ էին յԵրուսաղեմէ : Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անաւր՝ զի խառնակ ձեռօք , այս ինքն է՝ անլուայ ուտէին հաց , բամբասեցին : Ձի փարիսեցիքն և ամենայն հրեայք , եթէ ոչ բանալիր լուանան զձեռս , հաց ոչ ուտեն . քանզի ունին զաւանդութիւն ծերացն . և ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին , ոչ ուտեն . և այլ ինչ բազում է՝ զոր ընկալան ունել , մկրտութիւնս բաժակաց և սաղմոսաց և պղնձեայց և մահճաց : Ապա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք , թէ ընդէր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերացն , այլ խառնակ ձեռօք հաց ուտեն : Նա պատասխանի եա և ասէ ցնոսա , թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց , որպէս սաաց . ժողովուրդս այս չրթամբք մեծարէ զիս , և սիրտք նոցա հեռացեալ ի բացեայ են յինէն . զուր պաշտեն զիս . ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս : Թողեալ զպատուիրանն Աստուծոյ , ունիք զմարդկան աւանդութիւն :

Եւ ասէ ցնոսա . բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ , զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք : Զի Մովսէս ասէ . պատուեա զհայր քո և զմայր . և որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ , մահու վախճանեսցի : Եւ դուք ասէք , եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝ կորբան , որ է պատարագ , զոր յինէն օգտեսցիս . և ոչ ևս տայք թոյլ նմա չառնել ինչ հօրն կամ մօր : Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն զոր աւանդեցէք . և բազում ինչ այլ՝ որ այսմ նման է՝ առնէք : Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա . լուարուք ինձ ամենեքեան և ի միտս առէք . ոչ ինչ արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա , այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն . որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ : 16 ,

Ք-ղղ . խնդրեացուք : կեցո : Աղ+ . թագաւոր :

Ե · ՋՈՐԵՔՇԱԲԱԹԻ · Դ Կ

Յ Ա Ռ Ա Ւ Ո Տ Ո Ւ

ՀԱՐՑ Գ Կ

Ա՛նճառելի բնութիւն և բան Հօր . առաքեա՛ցիր ի հայրական ծոցոյ . եւ առեր մարմին ի սըրբոյ կուսէն . ‖ սո՛ւրբ Աստուած հարցըն մերոց : Ե՛կեալ ի փըրկութիւն մեզ թագաւո՛ր անմահ . յանձն առեր ըզմահ խաչի եւ ի՛ջեր ի՛ գերեզման անճա՛պական . սո՛ւրբ : Եւ յարուցեալ ի՛ մեռելոց երեքօրեայ . լոյս ծագեցա՛ր աբե՛ղեաց իշխանութեամբ լուծեր գերկաւնս մահու . սո՛ւրբ :

Գ . Ը՝զՏէր օրհնեցէք բարձր ա՛րարչ զԹագաւորն ամենեցուն . իշխա՛ն Հայր միշտ եւ յաւիտեա՛ն : Զյարուցեալն ի՛ մեռելոց փրկաւո՛ր Աստուած . ժողովուրդք ‖ առաւե՛լ բարձր ա՛րարչ ընդեմ յաւիտեա՛ն : Զա՛նապական լոյսն ի՛ Հօրէ ծագեալ սո՛ւրբ զՀոգին . քահանայք ընդ սերովբէսն գո՛վեցէք եւ առաւե՛լ :

ՄՆԹԱՑՈՒՄՑԻ Գ Կ

ԶԱստուածածինն և միշտ կոյս անդադար օրհ : 95 :

ՈՂՈՐՄՆԱ ԳԿ

Ո՛ր յաքեահրդ ի մեռելոց Քրիստոս Աստուած. ‖ Եւ մե՛զ կեանքս չնորհեցեր սուրբդ։ Ո՛ր գանկեանն ի նախնեացն իւ մեղաս. պատուականն արեամբդ քո կանգնեցեր. եւ մե՛զ։ Եւ յարութեամբդ քո դժխարհըս կենցուցեր. եւ ըզդրախնըս դժոխոց փըշրեցեր. եւ մե՛զ։

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ ԳԿ

Ցարեա՛ւ Տէ՛ր իւ գերեզմանէ՛ն։ Ը՞նդ յառնել փըրկչին մերո՛։ Ո՛վ երկիր չարժեցա՛ւ։ վէ՛մըք պատառեցա՛ն։ Ճաշառագայթեալ լոյսն ի վերայ վիմ։ Ո՛ն. զարհուրեցա՛ւ ըզպահապա՛ն։ ա՛ռ դրա՛նըն գերեզմանի՛ն։

Զատուածամայրն ըզգերեզմանաւըն բոլորեա՛լ զաբք հրեշտակաց տեսանէին ըզՏէրըն յա՛րեալ իւ գերեզմանէ՛ն։ Աստուածամայրը կանայքն. Եկիր ի գերեզմանն փըրկչի՛ն ա՛ռ յիւղօք եւ խընկօք. յօծանե՛լ զմարմինըն տէրունակա՛ն։ Լուսապայծառ հրեշտակն. Ընդառիր ի վերայ վիմի՛ն ա՛ռ տանրանէր կանանցն. յարեա՛ւ Տէ՛ր։ եւ փըրկիչըն տիեզերա՛ց։

ՍԱՂ · ՁՒ · կՁ · Ցայց մեզ։ փԻ · Հատեցաւ։ 567։

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ ԺԲ. 49։

ՏԷՐՆ մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Հուր եկի արկանել յերկիր. և զինչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր. և մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զինա՛րդ փութամ մինչև կատարեսցի։ Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր. ոչ, ասեմ ձեզ, այլ բաժինս։ Չի եղիցին յայսմհետէ հինգ ի տան միում բաժանեալք, երիքն յերիսուց և երիսունքն յերից։ Բաժանեսցի հայր յորդւոյ, և որդի ի հօրէ. մայր ի դստերէ, և դուստր ի մօրէ, սկեսուր ի հարսնէ, և հարսն ի սկեսրէ իւրմէ։ Ասաց և ցժողովուրդսն. յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից՝ իսկոյն ասէք թէ անձրեւ գայ, և լինի

այնպէս . և յորժամ հարաւ չնչեալ , ասէք թէ խորշակ լինի , և լինի այնպէս : Կեղծաւորք , զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել , իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք : Ընդէր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն : Յորժամ երթայցես ընդ ոսոխի քումմէ առ իշխան , ի ճանապարհի տուր զհաչիւն՝ զերծանել ի նմանէ . զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն , և դատաւորն մատնիցէ դահճի , և դահիճն արկանիցէ ի բանտ : Ասեմ քեզ , ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին բնիանն : Եկին ոմանք ի նմին ժամանակի , և պատմեցին նմա վասն գալիլեացւոցն , որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա : Պատասխանի եւ ասէ ցնոսա . Համարիք եթէ այն գալիլեացիք եղեն մեղաւոր քան զամենայն գալիլեացիս , զի զայնպիսի անցս կրեցին . ոչ , ասեմ ձեզ , այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք : Կամ նոքա ութտասանքն , յորոց վերայ աշտարակն անկաւ ի Սիլոամ , և սպան զնոսա , համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ . ոչ , ասեմ ձեզ , այլ թէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք : Ասաց և զառակս զայս . Թզենի մի էր ուրումն անկեալ յայգւոջ իւրում , և եկն խնդրել պտուղ ի նմանէ և ոչ գտից : Ասէ ցայգեգործն . ահա երիք ամք են՝ յորմէ հետէ գամ խընդրել պտուղ ի թզենւոջդ՝ և ոչ գտանեմ . արդ կտրեա զդա , ընդէր և զերկիրդ խափանէ : Նա պատասխանի եւ ասէ . ա՛եր , թող զդա այս ամ ևս . մինչև չուրջ զդովաս բրեցից և արկից աղբ , թերևս արասցէ պտուղ . ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա : ԺԳ . 9 :

Բ՚՚՚Ղ . Խնդրեացուք : Կեցո : Աչք . Քում ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ . ճԽԹ . Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԴ . 22 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ սակաւուց վազվազակի զաչակերտան մնռանել ի նաւ և յառաջել յայն կոյս , մինչ ինքն զժողովուրդն արձակեցէ : Եւ իբրև արձակեաց զժողովուրդն՝ ել ի լեառն առանձինն կալ յաղօթս : Եւ իբրև ընդ երեկս եղև , անդ

էր միայն : Եւ նաեւ մեկնեալ էր ի ցամաքէն բազում առագաբիւօք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն : Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն : Իբրեւ տեսին գնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն՝ թէ առ աչօք ինչ իցէ . և առ ահին աղաղակեցին : Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ . քաջալերեցարուք , ես եմ՝ մի՛ երկնչիք : Պատասխանեի ես նմա Պետրոս և ասէ . Տէր , եթէ դու ես , հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոցս : Եւ նա ասէ . եկ : Եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջուրցն , և եկն առ Յիսուս : Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ . և իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց և ասէ . Տէր փրկեա զիս : Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր կալաւ զնա և ասէ . Թերահաւատ, ընդէր երկմտեցեր : Եւ իբրեւ ելին ի նաւն՝ հանգարտեաց հողմն : Եւ որ ի նաւին էին՝ մատեան երկիր պագին նմա և ասեն . արդարեւ որդի Աստուծոյ ես դու : Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսարեթ . և իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ , առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և մատին առ նա զամենայն հիւանդս : Եւ աղաչէին զնա , զի զոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին . և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան : 36 :

ՀԱՄԲԱՐՁԻ Դ

Հրեշտակ քո Տէր որ գայր: Գ· Ե· Զ· Է· Ը: 48–49:
ՍԱՂ . ճԾ . Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:
Արդ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Է. 17:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ իբրեւ եհաս ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին : Եւ ասէ ցնոսա . այդպէս և դուք անմիտք էք . ոչ իմանայք , եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ՝ ոչ կարէ զնա պղծել . զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ , այլ յորովայն, և արտաքս ելանէ , և սրբէ զամենայն կերակուրն : Եւ ասէր , թէ որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն . շնութիւնք , պոռնկութիւնք , գողութիւնք, սպանութիւնք , ագահութիւնք , չարութիւնք , նենգու-

թիւնք, զիջութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: Այս ամենայն չարիք ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ: Եւ անտի յարուցեալ եկին ի սահմանս Տիւրոսի և Սիդովնի. և մտեալ ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր ներկեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա. և կինն էր հեթանոս, փիւնիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ նորա: Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր նախ յագեցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, և շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին: Եւ ասէ ցնա. վասն այդր բանիդ երթ, ել դեւն ի դստերէ քումմէ: Գնաց ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն. և զդուստրն, զի անկեալ դնէր ի մահիճս: 30:

Փ–ր–ջ. Խնդրեացուք: կենցս: Աչք+. թագաւոր:

Ե. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ. ԱՋ

ՅԱՌԱԻՕՏՈՒ

ՀԱՐՑ Գկ

"Նախայաւիտեան Մրդի փառակից Հօր և առաքը Հոգւոյն. ար միշտ յանձամբ փառաց բանիբեանիս ի վերին պարապող. ‖ ընդքեզ ծրհնեմ՞ք Աստուածած հարցըն մեծաց: Ընդեալ մարդ ճշմարիտ ընկեր կամաւ ի չարչարանս. և բանիդ ընդփայտ խաչի անեպարտականդ մահու. ընդքեզ: Ի գերեզմանն լիներ խափանիչ մահու. երեքօրեայ յարուցեալ լոյս ծագեցար առաւերանըմատաց ընդքեզ: ‖

Գ. Ընտիր օրհնեցեալ ‖ բարձր արարչ՞ ո՞վ քեզ զնա յանիսաւ՞ն: Զքաղաւորըն փրիսաւս. ար վանըն ամի ի յանցանաց ընդմէն ճաշակեալ զբարձր: Զէակի՞ց Բանըն Հօր. ար երեքօրեայ թաղմամբ զդըժոխս ալեբնաց. բարձր:

ՄՆԱՑՈՒՄՏԻ Գկ

Ամենագովելի. եւ քան զերկինըս բարձրացեալ ար

զանհա՛ւ՝ ամենևին ընդՏէրըն յո՛րովայնի քո՛մ կրնցեր. եւ ցընծո՛ւթիւն աչխարհի ծընա՛ր. ‖ վասն որոյ ամենևքեան ընդ քեզ միշտ մեծա՛ցուցանե՛մք: Ամե՛ն նախայծա՛ռ բեր՛կրեա՛լ միշտ կոյս ո՛ր զանհա՛ւ՝ ընդ Աստուած ընդ Բանն անճառա՛բար յընդացա՛ր. եւ ըզմարմնացեա՛լն Աստուած ծընա՛նեւլով ի քէն. վասն: Ի՛ լեռնէ վէմի առանց ձեռին հա՛տեալ. Գաղնիէ՛ լ գո՛ւշակեա՛ց զանսե՛ռըն ծնո՛ւնդ քո՛. հարան երկնաւո՛ր. մայր եւ կո՛յս ընդ ընդեանն մըն՛նալով կոյս. վասն:

ՈՂՈՐՄԵՍ Գ Կ

Ա՛նըսկիզբըն Բա՛նդ ա՛ՅՆՀա՛ռելի՝ ծըն՛նունդ. ո՛ր ա՛ռաքմամբ չո՛ր իջի՛ր ի յե՛րկինից վասըն մեր՝ փըրկո՛ւ՛թեան. ‖ զքեզ ա՛ղա՛չեմք. ողո՛րմեա՛ քո՛ ա՛րա՛բա՛ծոց: Ո՛ր անեղ ստուածո՛ւթեամբ և ա՛ՅՆոհո՛վհանելի բընո՛ւթեամբ. ի կուսէն ծըն՛նար նախանատեղծին կերպմանբ. եւ ելիր կամա՛ւ ի չարչա՛ՅՀ՛ւարա՛նս. զքե՛: Ի՛ խաչին բեւեռեցար կամա՛ւ՝ չո՛ր եւ մա՛ւրբ չո՛ղոցն. եւ ի՛ջեր ի զերեզմանն անմա՛հ բընո՛ւթիւն. եւ յարեար ի մե՛ռելոց փրկո՛ւ՛ստաս. զքե՛:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Գ Կ

Ըզգո՛ յարուցի՛նդ ո՛րհնո՛ւմբք մարգարէ՛ր. ‖ աղաղա՛կելով Տէ՛ր փառքդ քեզ: Զո՛ր ո՛րհնո՛ւն ա՛ւերակքըն. եւ զոմե՛ն քո՛ւրակքըն. աղաղակելով: Ա՛ՆՀաղար բերանո՛վ. ա՛ՆՀանդիստ բա՛ՐՐառո՛վ. աղաղակելով:

Ա՛ռեա՛լ եւ մեր զո՛Րհնո՛ւթիւնըս հրե՛շտակացն երգե՛ւ՛մբ եւ՛ւ ա՛ՆՀմբք փա՛ՀՀոք յա՛ՐուԹեա՛ն քո՛ Տէ՛ր՝ Ո՛ր խաչե՛ցար վասըն մեր Թագեցա՛ւ՛ր եւ՛ւ յա՛րեար՝ ՀՀ ա՛ղաաե՛ցեր ի մեզա՛ց: Աւո՛ւրբ Ա՛ստուած ա՛ւ՛ւրբ եւ՛ւ հզո՛ՀՀ ա՛ւրբ ա՛ՆմահՀ Թագաւո՛ր:

ՍԱՂ. ՉԲ · ԿՑ · Յոյն մեզ · փԽ · Հաւհեցար · 567 ·

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : ԺԳ. 10 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթս. և ահա կին մի՝ զոր ունէր ոգի հիւանդութեան ամս ութետասան, և էր կարկամեալ, և ոչ կարէր ամենևին ի վեր հայել: Եւ տեսեալ զնա Յիսուսի, կոչեաց առ ինքն և ասէ ցնա. կին զուռ, արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ: Եւ եդ ի վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և փառաւոր առնէր զԱստուած: Պատասխանի եւ ժողովրդապետն՝ ցասուցեալ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու: Պատասխանի եւ նմա Տէր և ասէ. կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսրայ, և տանի ոռոգել նմա: Իսկ այս դուստր Աբրահամու էր զոր կապեաց սատանայ՝ ահաւասիկ ութետասան ամ, ոչ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու: Եւ զայս իրրև ասաց, յամօթ լինէին ամենեքեան որ հակառակն կային նմա. և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն՝ որ գործէին ի նմանէ: Եւ ասէր. ո՞ւմ նման է արքայութիւնն Աստուծոյ, և որո՞ւմ նմանութեան նմանեցուցից զնա: Նման է հատոյ մանանեխոյ, զոր առեալ մարդոյ արկ ի պարտէզ իւր. աճեաց և եղև ծառ, և թռչունք երկնից բնակեալ էին յոտոս նորա: Եւ դարձեալ ասէ. ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ. նման է խմորոյ, զոր առեալ կնոջ թաքոյց յալեւր երից գրուանց՝ մինչև խմորեցաւ ամենայն : 21 :

Բառ. Խնդրեացուք : կեցո : Աղաւ. Քուէ ամենապօր :

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր : 569 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԵ. 1 :

ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Յայնժամ մատեան (առ Յիսուս) որ յԵրուսաղէմ փարիսեցիքն և դպիրք և ասեն. ընդէր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուանան զձեռս

յորժամ հայց առնեն: Նա պատասխանի ետ և ասէ ցնա. խակ դուք ընդէր անցանէք զպատուիրանսն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութիւնն: Զի Աստուած ասաց. պատուեա զհայր քո և զմայր, և որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի. և դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր ինչ ինէն օգտիցես, և ոչ պատուիցէ զհայր իւր և զմայր իւր. և խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն: Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի և ասէ. ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ միկաւսի է յինէն, զուր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս: Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն ասէ ցնոսա. լուարուք և ի միտ առէք. ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա ասեն ցնա. գիտե՞ զի փարիսեցիքն իրրև լսեան զբանն՝ գայթագղեցան: Նա պատասխանի ետ նոցա և ասէ. ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի: Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին ի խորխորատ անկանիցին: Պատասխանի ետ Նմա Պետրոս և ասէ. մեկնեա մեզ զառակս զայս: Ասէ ցնոսա. տակաւին և դուք անմիտք էք: Եւ ոչ իմանայք եթէ ամենայն որ մտանէ ի բերան, յորովայն երթայ և արտաքս ելանէ. խակ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի գայ, և այն պղծէ զմարդ: Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք. այս ամենայն է՝ որ պղծէ զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել ոչ պղծէ զմարդ: 20:

ՀԱՄԲԱՐՁԻ Ա.Զ

Սոակալի սեռիլ հրեշտակին: Ե· Զ· Ճեց տուն· 29:
ՍԱՂ· ճԾ· Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ի· 31:

Ցետոն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնիա, և եկն ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ սահմանացն

ի Դեկապոլիս։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր, և ազաչեցին՝ զի ձեռն դիցէ ի վերայ նորա։ Եւ առեալ զնա ի սկզբան յամբոխէ անտի՝ արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և ե֊թուք անդր. և կայաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան և ասէ. եփփաթա, որ է՝ բացիր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ. և պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն։ Եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին, և եւս քան զեւս զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք ղործեաց սա, զի խլից լսել տայ, և համրից խօսել։ 37։

Ք֊ՐՏ֊Շ. Խնդրեցաւք։ Կեցո։ Աչք֊։ Թագաւոր։

Ե֊ՈՒՐԲԱԹ֊Ա Կ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳԿ

Ա՛յսօր զե՛նաւ մեզ պատառ֊ք֊ն. անձրա՛ւ գա՛ն Ա֊տուծո՛յ ի֊ վերա՛յ խաչի՛ն. է՛ակից չո՛ր ե՛ւ սա՛ւրբ Հո՛գւո՛յն ‖ Ա՛մարւած հա՛րցը՛ն մե՛րոց։ Ա՛յսօր բա՛ցաւ մեզ արքայա֊կա՛ն դո՛ւռն դրա՛խտին հրա՛եր֊ե֊լո՛ց ի֊ կո՛չումն ա֊քա֊ղա՛կան ա՛ղանդ֊ի ա֊ք֊ռա՛ւնեան մարմնո՛յ ե՛ւ ա՛րեա՛ն Աստուծո՛յ։ Ե՛ւ հրաշալի՛ յոտնքե՛ամբ քո՛ փրկո՛ւած. ա֊ր֊ե֊գ֊ք֊ա֊կ ա՛ղանդն նախահա՛ւր զարդարեա՛լ. մքո՛ւանէն ի յա֊ծո՛ւացո՛ւած ընդ փշո՛ւոյ֊ի փրկո՛ւածո՛ւ. Աստուծո՛յ։

Գ֊։ Ը֊ղձէ֊ր օրհնեցէ֊ք ‖ Ա՛ռանձ֊ի բարձր ա՛րարչէ֊ք ընդ֊նա՛ յա֊ւիտեա՛ն։ Զ֊ադամանդ֊ին ըզդեցեալ մարմին. ի փառաւո՛ր֊ին աջո՛ւն խաչին բարձրացեալ. ա֊ղո՛ւոր֊ք սո՛ւրբանալ դո՛ղոյ֊ի֊ն. առա՛ւել։ Ո՛ր ընդո՛ղ անանգամն աջեցա՛ն. ի կեդրո՛ն ա՛ղբերէն արբո՛ւց ախոնեցա՛ք. ժո՛ղովո՛ւրդք հա՛ւատացեալք. առա՛ւել։

ՄՆԱՑՈՒՄՍՑ֊Ի ԳԿ

Մա՛յր և կո՛յս ազախի՛ն փրկո՛ւածո՛ւ որ բարեխօսք։ 246։

ՈՂՈՐՄԵԱ ԳԿ

Ո՛ր ա֊ղբատանո՛ւ֊ի֊ դ֊ր֊ք֊ զ֊ք֊ չարչարա՛նօք խաչի՛ն. ա֊զա֊

տեցի՛ր ըզմարդն ի սրբոմանզկեաց փայտէն. եւ ի մե՛ղսաճաշակ պըտղոյն. ‖ Քրիստոս Աստուած եւ մեզ ո՛ղորմեա՛: Ո՛ր մնհուամբ քո կենդանի՛ եւ մեռելութեամբըն յերկիր. նորոգեցեր զարձեալ զայրեալսն եւ զհնազանդեալ բնութիւնս. Քրիստոս: Ո՛ր ի բեթօրեան յարութեամբըդ քո եւ համբարձմամբդ յերկինս. վերածե՛ր ըզմարդն առ կենաց փայտեան եւ յանմահական ճաշակն. Քրիստոս:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԴՊ

Ցեղիլ փայլակնաձեւ զբաւթենէն. ի վիմին հընչեցեալ առ խըճկապզեանց կանգա՛ղան. փա՛ռաւոցդ զերկիւղալից սըրտմտութիւն: Պահանջաղնդրն պակուցեալ անարե՛կ լինէին. եւ կանգնեցն աւետարանեա՛ղ. մահ մնհո՛ւ յաղթեաց եւ ծա՛նուցաւ մե՛հ: Քաւթղս առաքեալ ա՛ռ ի ըջանի՛կ ա՛ռաքեալն. փո՛խանցարուք ի գա՛լիլեա՛ն. եւ ա՛նտանիցէք զկենագործ ընդքրիստոս:

Ցանհաս փառաց խո՛նարհեալ եւ ընդգնցար ըզհնազենէն բըռնութիւնս. վերա՛ռեր զանկեանն ի զլխոյնել յանմահական ի կեանս. ‖ ընդքեզ ճրհնեա՛լ մք ա՛ղաչապարան ը Բա՛նդ Աստուած: Ա՛նպատրաստական նըշդ մնհո՛ւ դատապարտեալ ի վերայ խա՛չին. որ փո՛խանակ զանանութեան պըտղո՛յն աբրծուցեր մեզ ի սի՛զամաց կոզէ՛դ. ընդքեզ: Ա՛ոաքեցար ի զըժոխս ցնցուղնելով բզզծրութիւն անաուսծո՛ւթեանդ. Ջա՛ղեցեր ընդմնհո՛ւ խարդախողին խափանեցեր բզզծրութիւն մահո՛. ընդքե՛զ:

ՍԱՂ. 21. 43. Յայց մեզ. փե. Հաճեցար. 567:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. ԺԹ. 22:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ չրջեր ընդ քաղաքս եւ ընդ գիւղս, ուսուցանէր. և ճանապարհ արարեալ յերուսաղէմ, ասէ ցնա.

Տէր, եթէ ասկա՞ւք իցեն՝ որ ապրելոց իցեն: Եւ նա ա-
սէ ցնոսա. Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ
ձեզ, զի բազումք խնդրեսցեն մտանել՝ և ոչ կարասցեն,
յորմէ հետէ մտցէ տանուտէրն, և փակեսցէ զդուռնն. և
սկսանիցիք կալ արտաքոյ՝ և բախել զդուռնն, և ասել.
Տէր՝ Տէր, բաց մեզ. և պատասխանի առեալ ասիցէ
ձեզ. ոչ գիտեմ զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիցիք
ասել. կերաք առաջի քո և արբաք, և ի հրապարակս մեր
ուսուցեր: Եւ ասիցէ. ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուս-
տի էք. ի բաց կացէք յինէն ամենայն մշակքդ անիրա-
ւութեան: Անդ եղիցի լալ և կրճել առաքինոց, յորժամ
տեսանիցէք զԱբրահամ և զԻսահակ և զՅակովբ և զա-
մենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, և զձեզ
հանեալ արտաքս: Եւ եկեսցեն յարեւելից և յարեւմտից
և ի հիւսիսոյ և ի հարաւոյ, և բազմեսցին յարքայութեան
Աստուծոյ: Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք,
և իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք: Ի նմին աւուր
մտեան ոմանք փարիսեցիք և ասեն ցնա. Ել և գնա
աստ, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ ասէ
ցնոսա. երթայք ասացէք աղուէսոն այնմիկ. ահաւասիկ
հանեմ դեւս, և բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ,
և յերիր աւուր կատարիմ. Բայց պարտ է այսօր և վա-
ղիւ և ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգա-
բէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ: Երուսաղէմ՝
Երուսաղէմ, որ կատարէիր զմարգարէս, և քարկոծ առ-
նէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ
ժողովել զորդիս քո՝ որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք,
և ոչ կամեցարուք. ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր:
Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ ևս տեսանիցէք զիս, մինչև ա-
սիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն Տեառն: 35:

Գ-ԷՊՂ. Խնդրեսցուք: ԿԵՑՈ: ԱՀՃԴ. Զուտ ամենազօր:

ՅԵՐԿՈՒՑԻՆ

ՍԱՂ. ՃԽԳ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: 569:
Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԵ. 21:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ ելեալ անտի (Յիսուսի) գնաց ի կողմանս Տիւրոսի
և Սիդովնի: Եւ ահա կին մի քանանացի ի սահմանաց

անաի նոցա եղեալ, ազապակէր և ասէր. ողորմեաց ինձ Տէր որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի: Եւ նա ոչ եւս նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտաքն նորա՝ ազաչէին զնա և ասէին. արձակեա զնա՝ զի աղազակէ զհետ մեր: Նա պատասխանի եւս և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի: Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. Տէր, օգնեա ինձ: Պատասխանի եւս նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց: Եւ նա ասէ. այո Տէր, քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի եւս նմա Յիսուս, և ասէ. ով կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս: Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու: 28:

ՀԱՄԲԱՐՁԻ ԱՆ

Երգեցուք քեզ ընդ հրեշտակս: Ե· Զ· վեց տուն: 30:
ՍԱՂ· ՃԾ· Օրհնեցէք զԱստուած ի սրբութիւնս: 571:

Սրբոյ Աւետարանին ըստ Մարկոսի: Ը· 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զաշակերտսն իւր և ասէ ցնոսա. գթամ ես ի վերայ ժողովրդեանդ. զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, և ոչ ունին զինչ ուտիցեն. և եթէ արձակեմ զդոսա նոքին իւրեանց, նքթիցեն ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ ի հեռասանէ եկեալ են: Պատասխանի եւս նմա աշակերտքն նորա. ուստի կարիս յայգեցուցանել զդոսա հացիւ յանապատի սմա: Եւ հարցանէր զնոսա. քանի նկանակ հաց ունիք: Եւ նոքա ասեն. եօթն: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ երկրի. և առեալ զեօթն նկանակն՝ գոհացաւ՝ երիզ, և տայր ցաշակերտսն զի արկցեն, և արկին առաջի ժողովրդեանն. և ձկունս սակաւ ունէին, և զայն ևս օրհնեաց, և հրամայեաց արկանել: Կերան և յագեցան, և բարձին զնշխարս կտորացն եօթն զամբիւղ: Եւ էին որք կերանն՝ իբրև չորք հազարք, և արձակեաց զնոսա: 9:

Բ-ՐԴ· Խնդրեցուք: Կեցո: Աղ-ի· Թագաւոր:

Ե·ՇԱԲԱԹ·ԲԶ

ՅԱԹԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Դ2

Ո՛ր եկիր կամաւ չօր ի խաչ ելանել. վասն ազգի մարդկան ‖ Թագաւոր փառաց Քրիստոս ամենեքեան օրհնե՛ցո՛ւք: Ո՛ր մնձամ խաչի համբերեցեր վասն մեր. անեմկնելի՛ զ չօրէ՛. Թագաւոր: Ո՛ր երեքօրեայ թաղմամբ պահեցար կենդանեմ. յարութիւն մեր և կեա՛նք Թագաւոր:

Գ· ԸՂՑԷր ‖ օրհնե՛ցէք եւ բարձր արարէ՛ք ըզնա յաւիտեան: Ո՛ր ի վերայ խաչին եհիր զարիւն իւր Քրիստոս. եւ փրկեցեր զարարա՛ծս ի մեղաց օրհ: Ո՛ր ընդմէջ կոխանց զդժոխս աւերեցեր. յարուցեալ ի մեռելո՛ց ազատեցեր ըզմեզ. օրհ:

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ Դ2

Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: 260:

ՈՂՈՐՄԵՆԱ Դ2

Թի՞նա իմ Ո՛ղորմեա փըրկիչ: Ո՛ր կամաւ չօր ընչաբչանաւնես յանձն առեր բա՛նդ Աստուած. ազգ՝ Ո՛ր հանամաբ աւերս չօգու՛ն. ընդդեմ թեամբն փըրկեցեր քո՛ յարո՛ւթեանդ. ազգ՝:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Դ2

Փառաբանակից չօր Որդի. ար վասն մեռ՛ր խաչեցա՛ր զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. ‖ փառա՛՛՛ք յարութեան քո Տէր: Հրեշտականգեամբն ի՛ջնեն. ար ընդսաստատա՛՛նան երկիւղո՛՛ւ զարհուրեցոյց առ դրանն կերեզմանին. փառա՛՛՛ք: Եւ ըսքանչելի աւուրս կանգնեցին. աւետարանչա՛՛ր անձ լո՛՛վ յարեան Քրիստոս յարուցիչն մեռելոց. փառա՛՛՛ք:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ ԺԴ. 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև ի մտանելն (նորա) ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու՝ ուտել հաց, և նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր ումն էր անդ ջրգողեալ առաջի նորա։ Պատասխանի Յիսուս և ասէ օրինաւորսն և ցփարիսեցիս. Թէ արժան իցէ ի շաբաթու բժշկել։ Եւ նոքա լուռ եղեն. և բռնեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց։ Եւ ասէ ցնոսա. Այր ուրուք ի ձէնջ էչ կամ եզն անկանիցի ի ջրհոր, և ոչ վազվազակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ կարացին առ նմա պատասխանի առ այն։ Ասաց և առ կոչնականսն առակ մի, հայեցեալ թէ զիարդ բարձրնաիր լինէին. ասէ ցնոսա. Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. և եկեալ՝ որ ըզքեզն և զնա կոչեաց, ասիցէ ցքեզ՝ տուր սմա տեղի, և ապա ամաչանիցիս ամօթով զկետին տեղին ունել։ Այլ յորժամ կոչիցիս, երթիցիր բազմիցիր ի կետին տեղւոջ. զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. բարեկամ ի վեր մտաիր. յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։ Ասէ և ցկոչնաւէրն. Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգականս քո, և մի՛ զդրացիս քո, և մի՛ զմեծամեծս. զի մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս, զկաղս և զկոյրս, և երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ, և հատուցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց։ Իբրև լուաւ զայս ումն ի բազմականացն՝ ասէ ցնա. երանի որ կերիցէ հաչ յարքայութեան Աստուծոյ։ Եւ նա ասէ. այր ումն գործեաց ընթրիս, և հրաւիրեաց զբազումս։ Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն, թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ։ Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել։ Ասա-

ՙՀինն ասէ. ազարակ գնեցի, և հարկ է ելանել տեսանել զնա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ միւսն ասէ. լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ միւսն ասէ. կին ածի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ: Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն տեառն իւրում: Յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. ել վաղվաղակի ի հրապարակս և ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս և զկոյրս և զկաղս և զկոյրս մոյծ այսր: Եւ ասէ ծառայն. տէր, եղև զոր հրամայեցեր, և կայ ևս տեղի: Եւ ասէ տէրն ցծառայն. ել ի ճանապարհս և ի ցանգս, և արա այսր մտանել, զի լցցի տունս իմ: Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեացս իմոց: 24:

Բ–ղ. Խնդրեացուք: Կեցո: Աղ–ն. Զուտ ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ԿԶ. Ապաւած ազօրմեա մեզ և օրհնեա: 563:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԵ. 29:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ գնացեալ անտի (Յիսուսի), եկն ի ծովեզրն Գալիլեացւոց, և ելեալ ի լեառն նստէր անդ: Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս, համրս, միսկողմանիս, և այլս բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա: Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համրքն խօսէին, կաղք գնային, միսկողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի: Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուս զաշակերտան՝ ասէ. գթամ ի ժողովուրդդ, զի արդ երիք աւուրք են՝ զի կան առ ի, և ոչ ունին ինչ ուտիցեն. և արձակել զդոսա նոքս ի չկամիմ, գուցէ նկքիցեն ճանապարհին: Ասեն ցնա աշակերտքն. իսկ արդ մեզ յանապատի աստ ուստի իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս. քանի նկանակ ունիք: Եւ նոքա ասեն. եօթն, և ասկաւ ձկունս: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ. և առեալ զեօթն նկանակն և զձկունսն՝ գոհացաւ և երիկ, և եւս ցաշակերտան, և նոքա ժողովրդեանն: Կերան ամենեքեան և

յագեցան. և բարձին զնչխարս կտորոցն՝ եօթն զամբիղ լի: Եւ որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք, թող զկանայս և զմանկտի: Իբրև արձակեաց զժողովուրդսն՝ ել ի նաւ և ելն ի սահմանս Մագդալեայ: Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք փորձելով խնդրէին ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա: Եւ պատասխանի ետ և ասէ ցնոսա. (յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինելոյ՝ զի կարմրացեալ է երկին: Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի չառագունի տրամատութեամբ երկին: Արդ՝ զերեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ոչ կարէք գիտել:) Ազգ չար և չնացօղ՝ նշան խնդրէ, և նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի: Եւ եթող զնոսա և գնաց: Գնացին և աշակերտքն յայնկոյս, և մոռացան առնուլ հաց: Ասէ ցնոսա Յիսուս. տեսէք և զգոյշ լերուք ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոյ: Նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին՝ թէ հաց ոչ բարձաք: Գիտաց Յիսուս և ասէ. զի խորհիք ի միտս ձեր թերահաւատք, եթէ հաց ոչ ունիք. տակաւին չիմանա՞ք և ոչ յիշէք զհինգ նկանակն ի հինգ հազարսն, և քանի տակառ բարձէք. և ոչ զեօթն նկանակն ի չորս հազարսն, և քանի զամբիղս բարձէք. արդ զիա՞րդ ոչ խմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ զգոյշ լինել ի խմորոյ սադուկեցւոց և փարիսեցւոցն: Յայնժամ ի միտս առին, եթէ ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց: ԺԲ. 12:

ՄԵՍԵՒԻ Գ–ԼՈՒԽԱՆ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն. օրհնեալ որ գայոց ես:

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:

ՀԱՄԲԱՐՁԻ Ա Շ

Ար վերծրհնիս յաթոռս փերովբէից: Վեց տուն. 310:

ՍԱՂ. Շ. Յինծացէք առ Աստուած օգնական է: 457:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ը. 10:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն ի կողմանս Դաղմանուենայ: Եկին փարիսեցիքն՝

և սկսան վիճել ընդ նմա, և խնդրէին ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա: Եւ գայրացաւ յոգի իւր և ասէ. զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ ոչ տացի նշան ազգիս այսմիկ: Եթող զնոսա, դարձեալ եմուտ ի նաւ, և գնաց յայնկոյս: Եւ մոռացան հոգ բառնալ, բայց միայն մի նկանակ ունէին ընդ իւրեանս ի նաւին: Եւ պատուիրէր նոցա և ասէր. զգոյշ եղերուք ի խմորոյ անտի փարիսեցւոց և ի խմորոյ հերովդիանոսաց: Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ ունիմք: Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք ի սիրտս ձեր թերահաւատք, թէ հաց ոչ ունիք. տակաւին ոչ իմանայք և ոչ յիշէք. ապշութիւն ունի զսիրտս ձեր. աչք գան՝ և ոչ տեսանէք, ականջք են՝ և ոչ լսէք և ոչ իմանայք տակաւին. և ոչ յիշէք, յորժամ զհինգ նկանակն ի հինգ հազարան, և քանի՞ տակառի լի բարձէք զկտորսն: Եւ ասեն. երկոտասան: Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հազարան, և քանի՞ զամբիւղ լի՝ բարձէք զկտորսն: Եւ նոքա ասեն. եօթն: Եւ ասէ ցնոսա. իակ դիտէք ոչ իմանայք: Գան ի Բեթսայիդա. և ածեն առ նմա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձենայի ի նա: Եւ առեալ զձեռանէ կուրին՝ հանն արտաքոյ ագարակին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ ի վերայ նորա. և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ: Եւ նայեաւ՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս զի չիքին իբրև զծառս: Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ եւ տացն, և տեսանէր. ոչացաւ և տեսանէր համարձակ զամենայն: Ապաւեցաւ զնա ի տուն իւր՝ և ասէ. ի չէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն քո. և յորժամ ի չէնն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես ի չինեն: 26:

Գ—ՃՂ. Խնդրեցաւք: Կեցո: Աչքն: Թագաւոր:

Զ. ԿԻՒՐԱԿԷ. ԲԿ

ՑԱՒԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԳԶ

Ո՞ր բաներանձամբ եմ ի գանձից քերթվիչիս անմահ Թագաւոր. ‖ ճրչնեա՛լ եմ եւ զովեալ յաւիտեան: Ո՞ր խնդարհեցար յերկնից և առեր մարմին զնախաստեղծին Ադամայ. ճրչնեա՛լ: Ո՞ր նըստիս ի վերայ չորիքերպեան կենդանեանց Քրիստոս Աստուած. ճրչնեա՛լ:

Գ. Գարթըք Տեառն ընդՏէր ‖ օրհնեցէ՛ք զՔրիստոս բարբառ աղաղակ յանխափան Տեառն : Գիշերըք ընդՏէր օրհնեցէ՛ք զՔրիստոս. Ընդնընջառեալն ի յարթուռ փառացդ. ընդարձա՛կ բերանեամբն ի հրեշտակաց ընդնա՛ անդադար ձրկ : Ի՛սրայէլ ընդՏէր օրհնեցէ՛ք զՔրիստոս Ո՛ր յահէ փառացդ առատաձեռնութեանն. զո՛ղաղանջն զընարթուռնք երկնից. ընդնա՛ անդադար ձրկ :

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ Դ2

Անարատ կոյս Աստուածածին Մարիամ սրբուհի : 261 :

ՈՂՈՐՄԵՍ Դ2

Ի՛ խաչէ՛ն հլեր բա՛նդ Աստուածածին մարմնացեալդ ի կուսէն կանա՛ւ Հօր և Հոգւոյն ի փըրկութի՛ւն աշխարհիս մարդկան : Ի՛ զե՛ բնչմանէ՛ եգար ա՛նապատկա՛ն. զի՛ զմեռելութիւնըս մե՛ր բարձե՛ր լըգե՛ բեաթըն փըրկեցի՛ր ի՛ ձե՛ռաց մահու : Ն՛ւ յերրորդ աւուր յարեար անաստուածաշունչն ի՛ յերկիւնըս համբարձար ընդ ա՛ջմէ՛ Հօր նըստաբար. փառաւորեալդ ի հրեշտակաց և երկնըպագեա՛լդ ի սերովբէից :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ Դ2

Ո՛ կանո՛նցըն կանխեմ՛ զ ի՛ քաղցրութըն կենդանւոյն տեսին ընդվզե՛ցի ի՛ դրացն ի բաց մերժեալ : Ո՛ թափո՛ր լըգե՛ բեզմա՛նն. Եւ ա՛ւնացն տեսանէ՛լին. Եւ ա՛ղբատութեամ՛բ լա՛յլին յա՛ւուրս տառապեալք : Ո՛ Մա՛յր խաչեցեալդ. զի՛ լա՛ւ յա՛ւուրս հանգստեալ. քանզի՛ Քրիստո՛ս վասն մե՛ծաց յաղթեաւ :

ՍԱՂ · 2Ւ · ԿՅ · Յոյժ մեզ : ՓԽ · Հաճեցար : 567 :

Արդով Աստուածածին որ քան Զուարճաւ : ԺԴ · 25 :

Տէրամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ

Եւ երթային (ընդ նմա) ժողովուրդք բազումք, զարձաւ և ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս, և զեղբարս և զքոյրս, նա՛ և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել : Զի

որ ոչ բառնայ զխաչ իւր և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Եւ զի ոք ի ձէնջ կամիցի չինել աշտարակ, և ոչ նախ նստեալ համարիցի զծախան՝ եթէ ունիցի բաւական ի կատարումն։ Զի գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և ոչ կարիցէ կատարել, ամենեքեան որ տեսանիցեն՝ ըսկըսանիցին ծաղր առնել զնա և ասել, թէ այս այր սկսաւ չինել՝ և ոչ կարաց կատարել։ Կամ որ թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարօղ իցէ տասն հազարաւ զդէմ առնել զայնորիկ՝ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ, մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակս առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն։ Այլ այսպէս ամենայն ոք ի ձէնջ, որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Քաղաղ է աղ. ապա թէ աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի. ոչ յերկիր և ոչ յայր է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս։ Ով ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ի նմանէ։ Ցրտնջին փարիսեցիքն և դպիրք և ասէին. ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի և ուտէ ընդ նոսա։ Ասաց առ նոսա զառակս զայս. ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ մի ի նոցանէ, ոչ թողուցու զիննսունն և զիննն յանապատի, և երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ զնա։ Եւ իբրև գտանէ՝ դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց ինդալով, և երթայ ի տուն. կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննսնից և իննից արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն։ Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն, և եթէ կորուսանիցէ դրամ մի, ոչ լուսանիցէ հրաւ, և ածիցէ տունն ի տան, և խնդրիցէ ասէպ՝ մինչև գտանիցէ. և երբև գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։ Այսպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։ Եւ ասէ. տան միոջ էին երկու որդիք. ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. հայր, տուր ինձ բա-

ժին որ անկանի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն։ Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։ Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորել։ Եւ գնացեալ յարեցաւ ի մի ումն քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս. և ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք սայր նմա։ Եւ եկեալ ի միտս իւր ասէ. քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացակից, և ես սաստ սովամահ կորնչիմ. յառուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբրև զմի ի վարձկանաց քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, եհան զնա հայրն և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցսն նորա, և համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայսն իւր. վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ազուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարարակ, զնէք, կերիցուք և ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ. և սկսան ուրախ լինել։ Եւ էր երէց որդին նորա յագարակի. և մինչդեռ դայր և մերձ եղև ի տունն, լուաւ զձայն երգոց և ըզպարուց. և կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՛նչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ է, և եհան հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս՝ սպաշէր զնա։ Պատասխանի ետ և ասէ ցհայրն. այս քանի՛ ամք են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քոյ ոչ անցի. ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեզներ զմա զեզն պարարակ։ Եւ ասէ ցնա. որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։ ԺԵ. 32։

Եբր. Նորաստեղծ: Փ–բ. Խնդր: Կեցո: Աչ. Քառ ամն:

Յ Ե Բ Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն: 569:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԺԶ. 13:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղեալ (Յիսուս) ի կողմանս Փիլիպպեայ կեսարիային՝ հարցանէր ցաշակերտան և ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ: Եւ նոքա ասեն. այն զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զեղիա, և կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանեաւ Սիմոն Պետրոս և ասէ. դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանեաւ Յիսուս և ասէ ցնա. երանի քեզ Սիմոնի՝ որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց չնա մի՛ յաղթահարեսցեն: Եւ տացս քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս: Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասասցեն՝ թէ նա է Քրիստոս: Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն, թէ պարտ է նմա երթալ Երուսաղէմ, և թէ բազում չարչարանս չարչարել ի քահանայապետէն և ի դպրաց և ի ծերոց ժողովրդեանն, և սպանանել, և յերիր աւուր յառնել: Եւ առեալ զնա Պետրոս առանձինն, սկսաւ կազել ընդ նմա և ասել. քաւ լիցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ: Եւ նա դարձեալ ի Պետրոս ասէ. երթ յետս իմ սատանայ, դայթագղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զաստուածայնն, այլ զմարդկան: Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտան իւր. եթէ ոք կամի զինէ իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր և նկնասցէ զինէ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Զինչ օգտիցի մարդ՝ թէ գաշխարհս ամենայն չահեսցի, և զանձն իւր տուժեսցի. կամ զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրում: Զի

գալոց է որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր: Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով: Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. և պայծառացաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս: Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա: Պատասխանի առ Պետրոս և ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս. մի քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի: Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա. ձայն եղև յամպոյն և ասէ. դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, զմա լուարուք: Իբրև լսան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ: Եւ մատուցեալ Յիսուս բռնեն ևհար զնոսա ձեռն և ասէ. յառնա կացէք և մի՛ երկնչիք: Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս: Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ. մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչև որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ: Հարցին զնա աշակերտքն և ասեն. զիա՞րդ գրիցքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ է գալ: Պատասխանի առ Յիսուս և ասէ ցնոսա. Եղիա գայ, և հատուսանացէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է. և ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան. նոյնպէս և որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ: Յայնժամ ի միտ առին աշակերտքն, թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա: ԺԷ. 13:

ՀԱՄԱՌՈՏ ԲԱ

Կանխեցին կանոպքն ընդ: Գ. Ե. Զ. ԽՆ գոռ: 36:
ՍԱՂ. ՃԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:
Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ը. 27,

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եկ (Յիսուս) աշակերտաւքն հանդերձ ի շէնս կեսա-

բնայ փիլիպպեայ , և ի ճանապարհին հարցանէր ցաշակերտան և ասէր . զո՞ ուստեք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցեմ : Նոքա եւս պատասխանի և ասեն . զՅովհաննէս Մկրտիչ , և այլք զեղիա , և այլք զմի ոք ի մարգարէից անտի : Ասէ ցնոսա . իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ : Պատասխանի եւս Պետրոս և ասէ ցնա . դու ես Քրիստոս : Եւ սպառնաց ի նոսա՝ զի մի՛ ումեք ասիցեն զնմանէ : Եւ սկսաւ ուսուցանել զնոսա , թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել , և անարգիլ յերիցանց և ի քահանայապետից և ի դպրաց , և մեռանիլ և յերիր աւուր յառնել . և համարձակ զբանն խօսէցաւ : Եւ առեալ զնա մեկուսի Պետրոս՝ սկսաւ սպառնալ նմա : Եւ նա դարձաւ եւս զաշակերտան , սպառնաց Պետրոսի և ասէ . երթ յետս իմ սատանայ , զի ոչ խորհիս դու զաստուածայնն , այլ զմարդկանս : Եւ կոչեցեալ սա ինքն զժողովուրդն աչակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա . եթէ ոք կամի գալ զկնի իմ , ուրասցի զանձն իւր , և բարձցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ : Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր , կորուսցէ զնա . և որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին , ապրեցուսցէ զնա : Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի , և զանձն իւր տուժեսցի . քանզի զի՞նչ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ : Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ ի չնացօղ և ի մեղաւոր ազգիս այսմիկ , և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք Հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց : Եւ ասէ ցնոսա . ամէն ասեմ ձեզ , զի են ոմանք ի սացանէ որ աստ կան , որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ եկեալ զօրութեամբ : Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս , և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն . և յայլակերպ եղև առաջի նոցա . և հանդերձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ , որպէս թէ փիլոք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել : Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսիսեւ հանդերձ , և խօսէին ընդ Յիսուսի : Պատասխանի եւս Պետրոս և ասէ ցՅիսուս . ռաբբի , բարւոք է մեզ աստ լինել . և արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ , և մի Մովսիսի , և մի Եղիայի : Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր , զի զարհուրեալ էին : Եւ

եղև ամպ մի հովանի ի վերայ նոցա, ձայն եղև յամպոյ անտի և ասէ. դա է որդի իմ սիրելի, զմա լսարուք։ Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր, ոչ ևս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Եւ նոքա զբանն ի մտի ունէին. և խնդրէին ընդ միմեանս՝ թէ զի՞նչ իցէ ի մեռելոցն յառնել։ Հարցին ցնա և ասեն. զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն, եթէ Նախ Եղիայի պարտ է գալ։ Նա պատասխանի ետ նոցա և ասէ. Եղիա նախ եկեալ յարդարեցէ զամենայն։ Իսկ զիա՞րդ գրեալ է զորդւոյ մարդոյ, զի բազում ինչ չարչարեսցի և անգամանեսցի։ Այլ ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, և արարին ընդ նա զինչ և կամեցան, որպէս և գրեալ է վասն նորա։ Թ. 12։

Փ–ղշ· խնդրեսցուք։ կեցո։ Աչք։ թագաւոր։

Ջ · ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ · ԳՋ

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

ՀԱՐՑ ԳՉ

Ո՛ր ի քնաւկերպեան նըշաւիս յաթոռ. անկըճռելի ձաղնի՝ օրհնիս ի պայծառ դաշտուց. հա՛գ ւոր երգով ‖ Ա՛ստըւած հարցըն մերոց։ Ո՛ր ի վճռիւեան սրովբէից հանդչիս. եւ խնամի՞ս զքո զարարածս նըչանաւ խաչի քո զմեզ ապրեցուցեր Ա՛ստըւած։ Ո՛ր նըշաւիս ի յաթոռ փառաց. անահի՛ւ բարձրեալ գովեալ նըչանաւ խաչի քո զմեզ ապրեցուցեր Ա՛ստըւած։

Գ· Ը՞ղձե՛ր ‖ Ա՛ՀՃ՛ՄՆԱՅՆ գործք տես ա՛ն ըղձե՛ր օրհնե՛ղք։ Ա՛Հյաւր փըրկա՛ն առըր խաչիւն զաւրձանաւն ապրեցի՛ր ա՛։ Ա՛Հյաւր մըշտեա՛լ ի գերեզման՝ ան՛երեաց ըղդըժոխս ա՛։ Ա՛Հյաւր ի յերկինս համարձա՛ւ ընդ աջմէ՛ Հօր նըստա՛ւ ա՛։

ՄԵՍԱՑՈՒՑԻՉ ԳՉ

Ա՛ստուածածի՛ն մայր լուսոյ առըր կո՛յս լուսեղէն

տաճանր. սրտմտ ի բրկիճեքք չէին բանական. սո՛ւտ ի բնա-
կութիւն էքէն մարմնացա՞՞ւ: Ըզքիզ անհաւանացեա՛լ
ար մեռանիզ ի կանայս ծրհնեա՛լ. կրճլով ի քիզ գանատ-
նելի զբընութիւնն. ծրհնութեա՞՞մբ մեծացուցանեմք:
Որ՛պէս լեր աթոռ փըրկութեան յոյս հաւատառութեան
մարդկան. մի՛ ընարզ օրինաց և չնորհա՞՞ց. ծրհնութեամբ
անդադար գնհութեա՞՞մբ մեծացուցանեմք:

ՈՂՈՐՄԵԱ ԴՉ

Թի՞ւնա իմ Ո՞ղորմեա՞՞ մեզ Աստուած: Որ ի յեր-
կինից ի հօրէ լքեր անբնակիզքն Որդի. նո՞յն ինքն ըզ-
զընժոյա աւերեցեր. ո՞չ: Որ ըզհատանգամն աստուա-
ծանթեանդ երեւեցուցեր փըրկիչ. ընդպատասխա՞՞նըն զար-
հուրեցուցեր. ո՞չ: Որ ձեռօքըն թոմմայի չծչափեցար
փըրկիչ. ան աշակերտըն մըտեր դրօքըն փակեալով.
Ո՞ղորմեա՞՞:

ՏԷՐ ՅՆԵՐԿՆԻՑ ԴՉ

Ահագին ձայնի՛ւքդ զո Քրիստոս. ի վերայ խաչին
դողացուցեր զարթարաշծա ամենայն. զերկնային եւ զեր-
կրաւքըր բընութիւնս: Ահագին երեւումբն հրեշտա-
կին. զարհուրեցոյց ըզկանանցն ասելով. զի խընդրէք
ընկենդանին ընդ մեռեալս: Եւ յահէ զօրութեան
Աստուածպրծոյն զարհուրեցան կարապկոըք զըժոխացն
անելով. համբառնէք իշխանք ընդրունըս ձեր ի վեր:
ՍՄՂ. ՁԲ. ԿՅ. Յոյց մեզ: ՓԽ. Հաճեցար: 567:

Սրբոյ Աստուածածնին որ ըստ Ղուկասու: ԺԲ. 1:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻսուս Քրիստոս

Եւ ասէ առ աշակերտան. այր մի էր մեծատուն, ո-
րոյ էր անուն. և նովւ գնծանել ամբաստանութիւն, որ-
պէս թէ վատնիցէ զինչս նորա: Կոչեաց և ասէ ցնա.
զինչ է այս զոր լսեմն զքէն. տուր զհամար անուսու-
թեան քո, զի ոչ ևս կարես լինել անուս: Ասէ ընդ ինքս

իւր անառեան. զի՛նչ գործեցից, զի Տէր իմ հանէ զարձառթիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ. զիաեմ զինչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի սրձառթենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի քահանայապետաց Տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. քանի՞ ինչ պարտիս Տեառն իմում։ Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա. կա զքիր քո՝ և նիստ գրեա վաղվաղակի յիսուն։ Յարձեալ ասէ ցմիւսն. դու քանի՞ ինչ պարտիս. և նա ասէ. հարիւր քառ ցորենոյ. և ասէ ցնա. կա զքիր քո՝ և նիստ գրեա ութսուն։ Եւ գովեաց տէրն զառաքեան անիրաւութեան, զի խոհականութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսոքիկ խոհականագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ, արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս։ Որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է. և որ ի փոքուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է։ Իսկ արդ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ։ Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ։ Ոչ ոք ծառայ կարէ երկուց տէրանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։ Իբրև լուին զայս ամենայն փարիսեցիքն, քանզի արծաթասէրք էին, անդրանէին զնա։ Եւ ասէ ցնոսա. դուք էք որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, ապա Աստուած զիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։ Օրէնքն և մարգարէքն մինչև ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա բռնաթարի։ Դիւրին է երկնից և երկրի անցանել, քան յօրինացն միոյ նշանախեցի անկանել։ Ամենայն որ արձակէ զկին իւր և առնէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։ Այր ումն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս, և առնէր լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ումն անուն Ղազարոս, անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ. և ցանկայր յագել ի փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ և շուներք գային և լիզուին

զվէրս նորա : Եւ եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակաց զնա ի գոգն Աբրահամու. մեռաւ և մեծատունն և թաղեցաւ. և ի դժոխոն՝ ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր, եւտես զԱբրահամ ի հեռատանէ, և զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ: Եւ նա ազաղակեաց և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, և զովացուցէ զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ սմա: Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեակ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսդ քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա սմա մխիթարի, և դու այդր պապակիս. և ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին ոմանք առ ձեզ անցանել, ոչ կարեն, և ոչ այսր ոք առ մեզ անցանել: Եւ ասէ. արդ աղաչեմ զքեզ հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց: Եւ ասէ Աբրահամ. ունին զՄովսէս և զմարգարէսն, նոցա լսիցեն: Եւ նա ասէ. ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ապաշխարիցեն: Եւ ասէ ցնա. եթէ Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն, և ոչ թէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն : 31 :

Բ-ՐՂ. Խնդրեսցուք : Կեցո : Աչք-. Քում ամենազօր :

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն : 569 :

Արթո Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԺԻ. 14:

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի ի ծունր ինկանէր և ասէր. Տէր ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ի հուր, և երբեք ի ջուր. և մատուցի զնա աշակերտացն քոց, և ոչ կարացին բժշկել : Պատասխանի Եսու Յիսուս և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչև ցերբ իցեմ ընդ ձեզ, մինչև ցերբ անտայցեմ ձեզ. ած զնա առ իս : Եւ սատակաց ի նա Յիսուս, և ել ի նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ : Յայնժամ մա-

տեան աշակերտքն առանձինն և ասեն ցՅիսուս. մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա: Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ: Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանեխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեցաւ ասասի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ: Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահովք: 20:

ՀԱՄԲԱՐՁԻ Գ2

Հրաշալի յարութիւնն: Զ· Ն· ՚ի ՚ի: 39. 41:
ՍՍՂ. ճԺ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան: 571:
Սրբոյ Աբեսաբանիս որ քաւ Մարկոսի: Թ. 13:

Տերամբ մերով Յիսուսիս Քրիստոսիս.

Եւ եկեալ առ աշակերտան՝ տեսին ամբոխ շուրջ զնոքօք և գրագիրսն՝ զի վիճէին ընդ նոսա: Եւ վազվազակի ամենայն ժողովուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: Եւ հարց զնոսա թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա: Պատասխանի եւ մի ումն ի ժողովրդենէն և ասէ. վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, և ուր հասանի՝ զարկուցանէ զնա, և փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտան քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա: Պատասխանի եւ նոցա և ասէ. ո՛վ ազգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև ցե՞րբ անասցեմ ձեզ. ածէք զնա առ իս: Եւ ածին զնա առ նա. իբրև եահաս զնա այն, վազվազակի չարժլեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրէր: Եհարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժամանակք են՝ յորմէ հետէ այդ եղև զմա: Եւ նա ասէ. ի մանկութենէ. բազում անգամ ի հուր արկանէ զդա և ի ջուր զի կորուսցէ. արդ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ Տէր՝ գթացեալ ի վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա. ասացեր եթէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն: Եւ վազվազակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ. հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում: Իբրև եահաս Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն ի վերայ՝ սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. համրդ և խուլ այս ես ասեմ քեզ հրամայեմ, ել ի դմանէ, և այլ ևս մի՛ մտանիցես ի դա: Եւ աղաղակեաց և յոյժ ըմկեաց զնա, և ել·

և եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմոց խակ առնել՝ թէ մեռաւ: Եւ Յիսուս կոչեաւ զձեռանէ նորա յա-րոյց զնա, և կանգնեցաւ: Եւ իբրև եմուտ նա ի տունն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէր ոչ կա-րացաք հանել զնա: Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանել, եթէ ոչ պահօք և ազօթիւք: 28:

Բ՚ղ՚ղ. Խնդրեացուք: կնցո: Աղ՚ղ՚. Թագաւոր:

Զ·ԵՐԵՔՇԱԲԱԹԻ·ԳԿ

ՅԱՌԱԻՕՏՈՒ

ՀԱՐՑ Դ2

Ցո՞րժամ ի խաչին բեւեռեցաք Քրիստոս Աստուա՛ծ. եւ զԱդամ նորո՛գեցեր ի նախաստեղծ բընութիանն. ‖ Հրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ ի սպա-սաւորէն ապստակեցար. եւ ի վիճաւորէն գեղարդեամբ բըն խոցեցաք. Հրհնեալ: Թաղեցար ի մէջ երկրի. եւ յե՛րրո՛րդ աւուր յարեար ամենակարող փըրկի՛չ. Հրհնեալ:

Գ· Գո՛րծըք ետուն ըզՏէր օրհնե՛ցէ՛ք եւ բա՛րձր ա-բանէ՛ք ընդ յաւիտեան: Գիշե՛րք ըզՏէր օրհնե՛ցէք Որ էիր յե՛ւթիան ի բարձունս եւ ի հօրէ առաքեցար ի յերկիր. վասն մեր մեղաւորացս յի՞նչ դիմ տէր: Ի՞նչ պայէ ըզՏէր օրհնե՛ցից Որ բանիւ քո բարձեալ ու-նես զամենայն արարածս. և ի խաչին վասն մեր բե-ւեռեցար յի՞նչ դիմ տէր:

ՄՆԱՑՈՒՄՑԻ Դ2

Ուրախացիր Աստուածածին. որ կուսութիանց: 262:

ՈՂՈՐՄՆԱ Դ2

Ա՛նեղակից բանըդ հօր և եղիլոց պատճառ. որ ծը-նա՛ր ի կո՛ւսէն ‖ ըզքե՛զ ծա՛ղկեամբ Աստուած. ապա՛շխ-ղութիան ազգի մա՛րդկան: Ա՛երթվըփ՛ին անհաւոր եւ դա-տաւո՛ր կենդանանայ եւ մեռե՛լոց. որ ի խաչին բեւեռե-ցար ըզքե՛զ: Կենդանարա՛ր ազգիս եւ պարգեւա-

առ առաս ողորմութեան՝ որ յաւերդ ի մեռելոյդ ըզքեզ ծանեաք Աստուած. ազատեմք ողորմեա այդպէս մեզ բզկան։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԴՋ

Ո՛ր ի վերդ ես քան ընդհաս և դիտրհաւրդս. համա-զոյական ես ղերկոցս սրտարդ. ի չօրէ առաքեցար վա-սըն մեր եւ մարմնացար ի սուրբ ի կուսէն։ Ա՛նբըն-նին ի յէութեան Աստուած. անօրինեցար յաղագնդի կուսին. ապրեցուցանել զնախաառգծին ծընունդն. և վերըստի՞ն նորդել ի փառս։ Ո՛չ չառացար մարդ եղանել Աստուած. այլ եւ խաչի՞ համբերեար ըզթաղո-մըն յանձն առեր զերկբօրեայ. և յարուցեա՞լ նորդ-զեցեր զայրհարչս։

ՍԱՂ · ՁԲ · ԿՅ · Յոյց մեզ ։ փԹ · Հաճեցար ։ 567 ։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու ։ ԺԷ · 1 ։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ասաց և առ աշակերտան իւր. ոչ է մարթ չգալ գայ-թագղութեան, բայց վայ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցէ։ Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա, և անկանէր ի ծով, քան թէ գայթագղեցուցանէ զմի ոք ի փոքրկանցս յայսոցանէ։ Զգոյշ կացէք անձանց. եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա. և եթէ ապաշխարիցէ, թող նմա. և եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, և եօթն անգամ դարձցի ի քեզ և ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա։ Եւ ասեն առաքեալքն ցՏէր. յաւել մեզ հաւատս։ Եւ ասէ Տէր. եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանեխոյ, և ասիցէք թմենեացս այսմիկ, խլեաց և արմ-կեաց ի ծովս, և հնազանդեսցի ձեզ։ Իսկ ո՞վ ոք ի ձէնջ որ ունիցի ծառայ հոտատարած կամ հովիւ, որ իրրև մտա-նիցէ յագարակ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց բազ-մեաց. այլ ո՞չ ասիցէ ցնա, թէ պատրաստեա զինչ ընդ-քրեցց իցեմ, և զօտի ածեալ պաշտեա զիա՝ մինչև կե-րայց և արբիցց, և ապա կերիցես և արբցես դու։ Միթէ չնորհ ունիցի ծառային այնմիկ, զի արար զամենայն հրամանան։ Նոյնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամե-նայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ թէ ծառայք անպի-

ասեք համբ, զոր պատրէաքն առնել՝ արտաքս: Եւ եղև մինչև երթայր նա յերուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարեայ և Գալիլեացւոց: Եւ մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պատահեցան նմա տասն այր բորոտ, որք կացին ի հեռատանէ, բարձին զձայնս և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ: Եւ իբրև հաւս զնոսա, ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայիցն: Եւ եղև իբրև գնացին, սրբեցան: Մի ոմն ի նոցանէ իբրև հաւս՝ եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած. անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա՝ և գոհանայր զնմանէ, և ինքն էր Սամարացի: Պատասխանի եւս Յիսուս և ասէ. ո՞չ տասն սրբեցան, իսկ արդ ինոնքն ո՞ւր են: Չի ոչ գտան գառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. արի գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ: 19:

Ջ-ՐՂ. Խնդրեցաւք: Կեցս: Աչք. Քառ ամենազօր:

Ց Ե Ր Ե Կ Ո Ց Ի Ն

ՍԱՂ. ճԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: 569:
Սրբոյ Աբեսաբանիս որ ըստ Մատթէոսի: ԺԲ. 21:

Տնօրամբ մերոյ Յիսուսիս Քրիստոսիս

Եւ մինչդեռ չերթին նոքա ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս. մատանելոց է որդի մարդոյ ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ: Եւ արամեցան յոյժ: Իբրև եկին նոքա ի կափառնաում, մատեան որք զերկդրամեանն պահանջէին առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն: Եւ ասէ. այո: Եւ իբրև եմուտ ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և ասէ. զի՞րդ թուի քեզ Սիմովն. թագաւորք ազգաց յումմէ առնուն գհարկս կամ գհասն, յորդւոց իւրեանց՝ թէ յօտարաց: Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս. ապա ուրեմն ազատ են որդիքն: Բայց զի մի գայթագղեցուսցուք զնոսա, երթ ի ծով՝ և ընկեա կարթ, և զառաջին ձուկն որ ելանիցէ՝ առ, և բաց զբերան նորա, և գտանիցես ստատեր. և զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո: Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան

երկրնդր· ‖ բայց ևս ևս լերուք առ Տէր հանդիսակից ձեր ածնողացս : Հրէշտանակապիտոք երկնաւորք· եւ հրէշտակաց պինուտութիւնք· պետութիւնք բարձրացեալք ի քահանայապետութիւն երրնդր· բայց ևս : Որք ի ակըզբան վըրկութեանն· ի քոջ հովուբն յայտնութիւնն· անդրան հօտիցըն հովուաց ներգակելով երդէին· ընդ նոսին համաձայնեալ երգեմք եւ մեք զփառս ի բարձունս :

Զկնի Սուրբ Աստուածն Մեր· փրկել : Սր· Վասն լսելի: Քոհ· Օրհնութիւն : Ես ելանեն խոչե և սահպրանաս և ոչնայն ղբդրոս ի դոսրս , ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԴՋ

Թագաւոր գոյով քո յաչխարհ : Երե· պոռն : 309 :

Զկնի ՍԱՂՄՈՍ Ղե· ի ընե-

Կ8· Լերինք ցնծասցին առաջի Տեառն, զի գայ և հաստատել է Տէր ի դատել զերկիր :

Փե· Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի աքան: 315:

ԸՆՔերցուած յերգոց երգոյն Սողոմոնի: Ջ. 9:

Ո՞վ է սա որ երևեալ է իբրև գառաւօտ , գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն, իբրև զհիացումն կարգեալ : Մաի ի պարտէզ իմ քոյր իմ հարսն , կթեցի զմուռս հանդերձ խնկօք իմովք· կերայ զհաց իմ մեղու իմով· արբի զգինի իմ կաթամբ իմով : Կերայք մերձաւորք իմ և արբէք· և արբեցարուք եղբօրարդիք իմ: Ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ : Ո՞վ է սա որ ելանէ ապխտակացեալ· յեղեալ յեղբօրարդին իւր· ի ներքոյ խնձորոյն զարթուցից զքեզ· անդ երկնեաց զքեզ մայր քո· անդ երկնեաց որ ծնաւն զքեզ: Եղբօրարդին իմ էջ ի պարտէզ իւր ի տաչտս խնկոց· հովուել ի բուրաստանս, և ժողովել չուչանս: Ես եղբօրարդւոյ իմոյ և եղբօրարդին իմ ինձ , որ հովուէն ի մէջ չուչանաց· մինչև սիրեն լուսաւորեսցէ և սուտերքն չարժեսցին : Զայն եղբօրարդւոյ իմոյ առ դրանն : Ետ ինձ քոյր իմ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ· զի գլուխ իմ լցաւ ցօղով , և վարսք իմ ի չաղից գիշերոյ : Դիր զիս

իբրև զինիք ի սրտի քումմ, իբրև զմատանի ի վերայ բազկի քո. զի հզօր է իբրև զմահ սէր: Նա պարիսպ և սոնինք իմ իբրև զաշտարակս, ես էի յաչս նորա՝ իբրև գտեալ խաղաղութիւն: Այգի եղև Սողոմոնի ի Բեհլմահեմ. եւ զայգին իւր ցպահապանան. բերցէ այր իբրաքանչիւր ընդ պտղոյ նորա հազարս արծաթոյ: Այգի իմ ինձ առաջի իմ. հազարք Սողոմոնի, և երկերիւրք պահապանաց որ պահեն զպտուղ նորա: Որ նստիզ ի պարտէզս, այլք անսան քեզ. զձայն քո լսելի արա ինձ: Ը. 13:

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ: կդ. 1:

Իսկ այս ոչ է որ զիմեալ գայ յեղովմայ: 484:

Գողոսի առաքելոյն յերրայեցւոց թղթոյն է ընթերցուածս: թ. 24:

Զի ոչ եթէ ի ձեռագործ սրբութիւնան եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն, այլ ի բուն իսկ յերկինս՝ յանդիման լինել երեսաց Աստուծոյ վասն մեր: Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն որ մտանէր ի սրբութիւն սրբութեանցն ամի ամի արեամբ օտարաւ. ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել ի սկզբանէ աշխարհի. բայց արդ առասիկ մի անգամ ի կատարած յաւիտեանից յանդգնութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է: Եւ զօր օրինակ կայ մեզ մարդկան մի անգամ մեռանիլ, և յետ այնորիկ դատաստան, նոյնպէս և Քրիստոս մի անգամ մատուցեալ պատարագ առ ի բառնալոյ զմեզս բազմաց. իսկ երկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն: 28:

Զ-ին- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գաս ոգւոյ եւ:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԺԹ. 29:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև իբրև մերձեցաւ ի Բեթփագէ և: 320:

Ո-ին- ե-ր-ի. Եւ ևս խաղաղութեան. վասն ի վերուստ:

եւ փեսեռնեփքին ջանփասպառն , և ղարս կոչին աշխարհի ։
Զինի Քարող · Սարր խաչիս ։ Աղջխ · Պահպանեա ։
Ի գառնալն յեկեղեցին ախոնին շնորհատուիծեալ ։
Քարող · խնդրեացուք ։ կեցո ։ Աղջխ · Քառ ամենազօր ։

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ · Խջ · կՅ · Համբարձաւ ։ փխ · Ծափս ։ 711 ։
Արքոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի ։ Ի · 29 ։
Տէրամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ

Եւ յետանէն նոցա յերիքովէ՝ գնացին ղհետ նորա ժողովուրդք բազումք ։ Եւ ահա կոյրք երիս նստէին առ ճանապարհատն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն . ողորմեաց մեզ , Յիսուս որդի Դաւթի ։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեացեն. և նոքա ևս առաւել ազաղակէին և ասէին. Տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի ։ Յանգի ած Յիսուս , կոչեաց զնոսա և ասէ . զինչ կամիք զի արարից ձեզ ։ Ասեն ցնա . Տէր , զի բացցին աչք մեր ։ Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա , և վաղվաղակի տեսին և գնացին զհետ նորա ։ Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ, և եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն ձիթենեաց , յայնժամ Յիսուս արձակեաց երիս յաշակերտացն իւրոց , և ասէ ցնոսա . երթայք ի գեօղ՝ որ առաջի ձեր է , և անդէն գտանիցէք էշ կապեալ և յատանակ ընդ նմին , լուծէք ածէք ինձ ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ , ասացէք , եթէ տէառն իրեանց պիտոյ են . և վաղվաղակի առաքեսցէ զնոսա ։ Բայց այս ամենայն եղև , զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ . Ասացէք դստեր Սիովնի . ահա թագաւոր քո գայ քեզ հեզ և հեծեալ յէշ և ի յատանակի իշոյ ։ Գնացին աշակերտքն , և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս . և ածին զէշն և զյատանակն , և արկին զնոքօք ձորձս , և նստաւ ի վերայ նոցա ։ Եւ բազում ժողովուրդք տարածէին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին , և այլք հատանէին ոստս ի ծառոց և տարածանէին ի ճանապարհին ։ Եւ ժողովուրդքն որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին . օրհնութիւն որդւոյ Դաւթի , օրհնեալ որ գայ յանուն Տեառն . օրհնութիւն ի բարձունս ։ Եւ ի մտանելն

նորա յերուսաղէմ՝ զդրդեցաւ քաղաքն ամենայն, և ա-
սէ՝ ով իցէ սա: Եւ ժողովուրդքն ասեն. սա է մարգա-
րէն Յիսուս՝ որ ի Նազարեթէ Գալիլեացւոց: Եւ եմուտ
Յիսուս ի տաճարն, և հնձան արտաքս զամենեսեան, որ
վաճառէին և գնէին ի տաճարի անդ. և զսեղանս հա-
տուփառուացն կոթծանեաց և զաթոռս ապատնէվաճա-
ռացն: Եւ ասէ ցնոսա. գրեալ է, տուն իմ տուն աղօ-
թից կոչեցի. և դուք արարէք զդա այրս աւազակաց:
Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ի տաճարին, և բը-
ժշկեաց զնոսա: Իբրև տեսին քահանայապետքն և դը-
պիրք զհրաշելիսն զոր արար, և զմանկտին որ ազա-
դակէին ի տաճարին և ասէին՝ օրհնութիւն որդւոյ Դաւ-
թի, բարկացան և ասեն ցնա. լսես զինչ ասեն դոքա:
Այո ցնոսա Յիսուս. այո. չիցէ ընթերցեալ ձեր՝ եթէ ի
բերանոյ տղայոց և ծնդիկանց կատարեցեր գօրհնու-
թիւն: Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին ի Բե-
թանիա, և անդ ագաւ: ԻԱ. 17:

ՀԱՄԲԱՐՁԻ Դ2

Ի յարութեան յաւուր զատաւան: Էջէ՛ գոռն: 310:
Համբարձաւ Տէրն մեր յերկինս: Էջէ՛ գոռն: 706:
ՍԱՂ. ԻԳ. կՅ. Համբարձէք: փԽ. Տեառն է: 715:
Արթոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ժ. 46:
Վասն զատաւան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
Եւ զան յերիքով. և ընդ ելանելն նորա յերի: 317:
Քարոզ. Խնդրեացուք: կնցո: Աչքն. թագաւոր:

Է. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ. ԲԿ

ՅԱՌԱՒՕՏՕՒ

ՀԱՐՑ Դկ

Ո՞ր զամենագօր գօրութիւնդդ քո ցուցեր ի Բաբե-
լոնի. փըրկելով զերիս մանկանցն ի հնոցին ‖ ըզքո զ
ճրհնի՞մք Ասարիա՞ն համբոյրն մերոց: Ո՞ր ըզբազ-
մանգեղ ներթողութիւնդդ քո ցուցեր. զօրանց երկնաւորաց
տանջելով զբազմակերս քո՞ ի խաչին. ըզքո զ: Ո՞ր ըզ-

բազմանգիւթ ողորմութիւնդ քո ցուցեր. ա՛ռ ա՛զգըս մարդկան. թանդելով ի սիրտ երկրի զի զմահու բարձցես ի երկիւղ ըզքո՛ զ օրհնե՛մբ Աստուա՛ծ հա՛րցըն մեր։

Գ· Ը՞զՏէր օրհնե՛ցէ՛ք ‖ բարձր արարէ՛ք ընդա՛ յա՛ւիտեա՛ն։ Բանն անե՛զական՝ խոնարհեալ ի հոգե՛ղէն գոյացութի՛ւնս. համբե՛րեալ չարչարանաց զմա՛հ խաչի՛ ի յանձն է՛ա՛ բարձր։ Ել ի՛ջեալ ի գերեզմա՛ն անապական և անո՛ւրը մարմնո՛վ. յարո՛ւցեալ յերրորդ աւո՛ւր լո՛յս ծագեցոյց տիեզե՛րաց. բարձր։ Ո՛ւմ հրեշտակապետն ի՛ջեալ ի գերեզմանըն կենսատուի՛ն. աւե՛տէր առ սո՛ւրբ կանայս Տէ՛ր յարեա՛ւ ի մեռելո՛ց բարձր։

ՄՆԾԱՑՈՒՍՑԷ Դ

Աստուածածնի՛ մայր և կոյս. ծագօղ արեգա։ 281։

ՈՂՈՐՄՆԱ Դ

Յա՛րեաւ երեւե՛ցաւ ա՛ռաքելոյն. եւ մե՛զ փըրկիչ ո՛ղորմեա։ Քո՛ զ Քրիստոսի՛ թագաւորիդ անմահի՛. երկի՛ւղապահութե՛մբ և ղայրութի՛ւնդ քո՛ վարա՛ւորե՛մբ։ Փա՛ռըք փըրկո՛ղի՛դ եւ Միածնի՛դ անմահի՛. փըրկեա՛ զմա՛ղուխդըն քո՛ զոր ընտացար պատուակա՛ն արեամբըդ քո՛ սըրբոյ։

ՏԷՐ ՑՆՈՐԿՆԻՑ Դ

Յո՞րժամ ակին՝ ի՛ գերեզմանն. ի՞ւղարբեր կանայքն եւ բերի՛ն ըզխա՛ւնկան ի խընկել. գա՛ղտնապա՛կան մարմի՛նն։ Յո՞րժամ հրեշտակն աւե՛տարանէր. յա՛ւրեա՛ւ Քրիստո՛ս պատմեցէ՛ք աշակերտացն զյարութի՛ւնըն Տեառն։ Ի՛ւր նոցա զարհո՛ւրեա՛լ վասն աշխարհին տեւելոյն. պա՛տմէ՛ին աշակերտացն գահո՛ւիքն տեսլի՛ւ։

ՍԱՂ· Խշ· կՁ· Համարձա։ փխ· Ծագեա հարեք։ 711։

Սրբոյ Աւետարանեա որ ըստ Ղուկասու։ ի· 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղեւ ի միում աւուրցն յայնցանէ, մինչդեռ ա՛ստ-

ցանէր զժողովուրդն ի տաճարի անդ և աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն և գպիրք ծերովքն հանդերձ, և ասեն ցնա. ասա մեզ՝ որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ է որ քեզ զայդ իշխանութիւն: Պատասխանի եառ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, և ասացէք ինձ. մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ: Եւ նոքա խորհեցան ի միտս իւրեանց և ասեն. եթէ ասեմք յերկնից, ասէ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս զՅովհաննէ թէ մարգարէ է: Եւ պատասխանի եառն՝ չգիտել թէ ուստի իցէ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս: 8:

Բ–ղ. Խնդրեցաւք: կեցո: Աղ–. Քանի ամենազօր:

Ց Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. թՀ. կՅ. Համբարձաւ: ՓԽ. Ճափա: 711:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԱ. 18:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ այդուհետև իբրև դարձաւ անդրէն ի քաղաքն՝ քաղցեաւ, և տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին, եկն ի նա, և ոչ ինչ եգիտ ի նմա՝ բայց միայն տերև: Եւ ասէ ցնա. մի այսուհետև ի քէն պտուղ եղիցի յաւիտեան: Եւ առժամայն չորացաւ թզենին: Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, թէ զի՞նչ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին: Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք, ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք՝ բարձիր և անկիր ի ծով, եղիցի: Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք: Եւ իբրև եկն ի տաճարն, մատեան ա՛ւ նա՝ վինդեռ ուսուցանէր՝ քահանայապետքն և ծերք ժողովրդեանն և ասեն. որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ եառ քեզ զիշխանութիւնդ զայդ: Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա. հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննու

ասաք էր, յերկնից թէ ի մարդկանէ : Եւ նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին. եթէ ասեմք՝ յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք՝ ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքեան զՅովհաննէս իբրև զմարգարէ ունէին : Պատասխանի եւ ասեն Յիսուսի և ասեն. ոչ գիտեմք : Այլ ցնոսա և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս : Բայց զիարդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն՝ ասէ. որդեակ, երթ այսօր գործեա յայգւոջ : Նա պատասխանի եւ ասէ. երթամ տէր, և ոչ չոգաւ : Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս. Նա պատասխանի եւ ասէ. ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ յայգին : Արդ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն : Ասեն. յետինն : Այլ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջանան քան զձեզ յարքայութիւն երկնից : Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, և ոչ հաւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա : 32 :

ՀԱՄԲԱՐՁԻ Դ

Որք անկակից եղաք նմանութեան մահու քո : 718 :
Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս օրհնութեամբ : 707 :
ՍԱՂ. Ի. ԿՅ. Համբարձեալ : ՓԽ. Տեառն է : 715 :
Արդ Աւետարանիս որ ըստ Մարկոսի, ԺԱ. 12,

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի Բեթանիայ քաղցեաւ. և հանս թզենի մի ի բացուստ տերևալից, և եկն թէ գտանիցէ ինչ ի նմա. և իբրև եկն ի նա, ոչ ինչ եգիտ՝ բայց միայն տերև. զի ոչ իսկ էր ժամանակ թզոյ : Պատասխանի եւ ասէ ցնա. մի ևս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ : Եւ լսէին աշակերտքն նորա : Գան յԵրուսաղէմ. և մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականան և զգնօղս՝ որ էին ի տաճարին. և զսեղանս հաւատավաճառացն գրուեաց, և զաթոռս ապստնէվաճառացն կործանեաց. և ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն : Ուսուցանէր զնոսա և ասէր. գրեալ է, թէ տունդ իմ տուն աղօթից կոչեցի

ամենայն հեթանոսաց. և դուք արարէք զդա այրս ա-
ւազակաց: Լուան քահանայապետքն և զգիրք, և խըն-
դրէին թէ արդէս կորուսցեն զնա, բայց երկնչէին ի նմա-
նէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն
նորա: Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն
ելանէին: Եւ մինչ դեռ այգուցն առ նովաւ անցանէին,
տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց. յիշեաց Պետրոս՝
և ասէ ցնա. ռաբբի, ահաւասիկ թզենին զոր անիծեր՝
ցամաքեցաւ: Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնոսա.
եթէ ունիցիք հաւատս առ Աստուծոյ, ամէն ասեմ ձեզ, որ
զ՚ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և անկիր ի ծով, և
ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր
ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ և ասիցէ: Վասն այ-
սորիկ ասեմ ձեզ. ամենայն ինչ զոր ինչ ազօթս ա-
րարեալ խնդրիցէք և հաւատայցէք թէ առնուցուք, եղի-
ցի ձեզ: Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ
ունիցիք ինչ զումեք. զի և հայրն ձեր որ յերկինս է,
թողցէ ձեզ զյանցանս ձեր: (Զի եթէ դուք ոչ թողու-
ցուք, և ոչ հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր:) 26:

Քարշ. խնդրեցուք: Կեցո: Աղքս. թագաւոր:

Է. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ. ԳՋ

ՅԱՌԱՋՈՏՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑ ԳԿ

Ո՞յսօր ցընծան երկինք եւ երկիր յարութեամբ
քո Տէր Աստուած հարցըն մերոց: Ո՞յսօր նորո-
գիցաւ տիեզերք ամենայն յարութեամբ քո: Ո՞յսօր
հրեշտակապետական առեալ բանիք զյարութիւն քո:

Գ. Ընդէր օրհնեցէք ‖ բարձր արարէք ընդեմ յաւի-
տեան: Որ չարչարանաւք խաչին փրկեցաք զտիեզերս.
և հեղմամբ արեանն իւրով զթզուխիւն մեզ չընդու-
հաց բարձր: Որ երեքօրեայ թաղմամբ զդատ
ապրեցաք. և յարութեամբն իւրով զյարութիւն մեզ
պարգեւեցաք բարձր:

ՄԵԾԱՑՈՒՑԱԼ ԴԿ

Աստուածածին սուրբ կոյս անհարանացեալ : 286 :

ՈՂՈՐՄԵԱ ԴԿ

Ո՞ր ըզկնի՞պարան՝նըս մանհացո՞ւ բընա՛թեան ապդի մարդկան. յանձն առեր Աստուած բան՝եղ Հ՝ակից Հօր· եւ եկիր կամաւ ի խաչ : Ո՞ր ի վերայ նախանաւեղծին ըզմեռանե՛լ յանձն առե՛ր . համբերե՛լով չարչարանաց ի խաչին բարձրացար բանըզ գոյակից Հօր. եւ իմիր ի գերեզման՝ն : Ո՞ւ յերբո՛ւդ առա՛ր յարեար զմահու լուծեր զիշխանութի՛ւն . աբձակելով զըմբըռնեալսն ի նմանէ բանըզ փառակից Հօր . եւ նըստար ընդ աջմէ Հո՛ր :

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԴԿ

Ի՞չ հրէշտակն յերկնից աւետաւո՛ր երջանիկ եւ սո՛ւրբ կանանցըն քարոզէ՛ր անե՛ղով. ‖ եւ ձեռ՛ն վերըմո՛ւտքն լոյսըն ծագեա՛լ ի յարեւարէ : Այսօր ան՛սիլ ահեղակե՛րպ հրէշտակապետ՛ն մերձեալ ի գե՛ղեղ վիճուածանցն . այսօ՛ր սըրտաբե՛կեալ պահա՛պանացըն գարհուրեա՛լ մեռանե՛լն . եւ : Այսօր ցընծա՛յ Երուսաղէմըն վերի՛ն. այսօ՛ր ցընծայ Սիո՛ն մայր եկեղե՛ցի քանզի փըրկիչըն մեր յարեա՛ւ և աւերեա՛ց ըզդըժո՛խս. եւ մե՛ռա՛ւ վերըմո՛ւտքն լոյսըն ծագեա՛լ ի՞ Հօրէ :

ՍԱՂ . ԽԶ . ԿՅ . Համբարձաւ : ՓԽ . Ցարխ : 711 :

Արթոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու : Ի · 9 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ակաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. այր ոմն ազնկեաց այդի , և եհ զնա մշակաց . և ինքն գնաց նապարհ ժամանակս բազումս : Եւ ի ժամու առաքեաց առ մշական ծառայ , զի ի պտղոյն տացեն նմա . և մշակքն զան հարին զնա՝ և արձակեցին ունայն : Եւ յաւել միւս ևս ծառայ յղել . նոքա և զնա ևս զան հարին , անարգեցին և առաքեցին ունայն : Եւ յաւել զեր-

բորդն առաքել. նոքա և զնա վիրաւորեցին, և հանին արտաքս: Ասէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքեցից զորդի իմ սիրելի, թերևս ի տանէ պատկառեսցեն: Իբրև տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս և ասեն. սա է ժառանգն. սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն. և հանին զնա արտաքս քան զայգին և սպանին: Արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. ո՞չ սպաւքէն գայցէ և կորուսանիցէ զմշական զայնոսիկ, և տայցէ զայգին այլոց: Իբրև լուան՝ ասեն. քաւ, մի՛ լեցի: Եւ նա հայեցեալ ընդ նոսա ասէ. իսկ զի՞նչ իցէ այն որ գրեալն է՝ եթէ վէմն զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան: Ամենայն որ ընդհարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ խնդրէին զպիրքն և քահանայապետք արկանել ի նա ձեռս ի նմին ժամու, և երկեան ի ժողովրդենէն. զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն: Եւ ապա ապաւեցին, և առաքեցին դաւճանս կեղծաւորեալս՝ զանձինս առ արդարս ունել, զի ըմբռնեսցին զնա բանիւք, առ ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին: Հարցին զնա և ասեն. վարդապետ, գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն. այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ: Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ ցնոսա. ցուցէք ինձ զդահեկանն: Եւ նոքա ցուցին: Եւ ասէ. զո՞ր պատկեր և գիր ունի: Պատասխանի և ասեն և ասեն. կայսեր: Եւ նա ասէ ցնոսա. արդ երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն, և զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին: 26:

Բ—ղ. Խնդրեսցուք: Կեցո: Աչք+. Գում ամենազօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ. ԽԶ. ԿՅ. Համբարձաւ: ՓԽ. Ճառս: 711:

Արեայ Ակեսարանից որ ըստ Աստիճանաց: ԻԱ. 33:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն առակ լուարուք. այր մի էր տանուտէր՝ որ տընկ-

կեաց այգի, և ցանգով պատեաց զնա, և փորեաց ի նմա հնձան, և չինեաց աշտարակ. և եառ զնա ցմշակս, և գնաց ի տար աշխարհ: Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա. և կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն առնէին, զոմն սպանանէին, զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս: Ցետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ. Թերևս ամաչեցեն յորդւոյ առաքելոյ իւրմէ: Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միմեանս. սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութիւնն նորա: Եւ առեալ Հանին զնա արտաքոյ քան զայգին, և սպանին: Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ: Ասեն ցնա. զչարսն չարաւ կորուսցէ, և զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց: Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ՞ երբեք ընթերցեալ ձեր ի գիրս. զվէմն՝ զոր անարգեցին շինօղք, նա եղև գլուխ անկեան. ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր: Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ, և տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա: Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, և յոյր վերայ անկցի՝ հասեսցէ զնա: Իբրև լուան քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք զառակս նորա, գիտացին թէ վասն նոցա ասաց: Եւ խնդրէին զնա առնել, բայց երկեան ի ժողովրդոցն. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա: 46:

ՀԱՄԲԱՐՁԻ Դ

Որք անկակից եղաք նմանութեան մահու: 718:

Համբարձաւ Տէրն մեր յերկինս: Երէք պատ: 706:

ՍԱՂ. ԻԹ. ԿՁ. Համբարձէք: փխ. Տեառն է: 715:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ԺԱ. 27:

Տէրամբ մերով Յիսուսիս Քրիստոսիս

Գան միւսանգամ յԵրուսաղէմ. և մինչդեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն և դպիրք և ծերք, և ասեն ցնա. որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ եառ քեզ զիշխանութիւնդ զայդ: Պատաս-

խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ պատասխանի, և ես տացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ թէ ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի: Խորհէին ընդ միմեանս և ասէին. եթէ ասեմք եթէ յերկնից, ասէ ցմեզ՝ իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա. այլ եթէ ասեմք՝ ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքեան զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր: Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս. չգիտեմք: Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի և ասէ. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս: Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք և ասել. այր մի տնկեաց այգի, և ած շուրջ զնովաւ ցանդ, և գուբ հընձան փորեաց և շինեաց աշտարակ, և ետ զնա գիշակս և գնաց ի տար աշխարհ: Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն. և նոցա կալեալ՝ զան հարին զնա, և արձակեցին ունայն: Յարձեալ առաքեաց այլ ծառայ, և զնա կատաղեսառեցին՝ և արձակեցին անարգեալ: Եւ յարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազումս այլս, զոմանս՝ հարկանէին, և զոմանս՝ սպանանէին: Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. թերևս ամաչեսցեն յորդւոյ սասի իմմէ: Իսկ մշակքն իրրև տեսին զնա զի գայր, ասեն ցմիմեանս. սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն. և կալեալ զնա սպանին, և հանին արտաքոյ այգւոյն: Արդ զինչ արասցէ տէր այգւոյն: Եկեսցէ և կորուսցէ զմշակսն, և տացէ զայգին ի ձեռս այլոց: Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, թէ զվէմն զոր անարգեցին չինօղքն, նա եղև գլուխ անկեան. ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր: Եւ խնդրէին զնա ունել, և երկեան ի ժողովրդենէ անտի. զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն. և թողին զնա և գնացին: Եւ առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց անտի և ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ: Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին. վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես.

արդ ասա մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր՝ եթէ ոչ. տացո՞ւք՝ թէ ոչ տացուք: Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա. ընչ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից: Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. ո՞ր է պատկեր այս կամ գիր: Եւ նոքա ասեն ցնա. կայսեր: Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա. երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Եւ զարմացան ընդ նա: ԺԲ. 17:

Փորձ. Խնդրեցուք: Կեցո: Աղքատ. Թագաւոր:

Է · ՀՈՐԵՔՇԱԲԱԹԻ · ԳԿ

ՅԱՒԱԽՕՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

Փառաւորեա՛լ է անո՛ւն քո առաքեալդ. տէ՛ր, որ ամենայն հա՛րցըն մերոց՝ ո՛ր ի բանձնելս քո ընկա՛կեալդ է՝ և. եւ հայիս յարքայութիւնդ քո քաղցրութեամբ. փառաւորեա՛լ: Ո՛ր ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցա՛ր թագաւո՛ր յաւիտենից. փառաւորեա՛լ:

Գ · ԸՂՁԻՍ ‖ Ա՛մենայն արարած ծրհըշնե՛ ձեզ. և բա՛ռդ արարո՛ղ զի՞ կեալըն ի վերկութի՛ւն մարդկա՛ն: Ո՛ր էակից է՝ Հո՛գ եւ սուրբ Հո գւո՛յն. ի յերկրի երեւեցա՛ւ ամենայն: Ո՛ր հրեշտակացն անեռանդնելի՛ն է. ի վերա՛յ խաչին տեսա՛ւ ամե: Ո՛ր սրովբէից անհամանելի՛ն է. ի զերե՛զմանի կո՛դալ ամե: Ո՛ր քրովբէից անխմանալի՛ն է. ի յերրո՛րդ աւուր յարեա՛լ ամե:

ՄՆԱՑՈՒՄՍՑՔ ԴԿ

Ջքեզ Աստուածածին. ազբիւր անապատ լուսոյն: 282:

ՈՂՈՐՄՆԱ ԴԿ

Թո՛ւնս իմ Աղո՛ւոհ բանի՛ եղեալ ինձ Աստուա՛ծ: Ո՞ր ի հօրէ՛ ածա՛կեցար անբաւիկըն ո՛րդի՛ և ի սրբոյ կուսէն ծընա՛ր ազ: Ո՞ր ի խաչի՛ն բեւեռեցար Աստուածա՛ծ բանդ·

և ի չծրէ՞ ոչ մե՛կնեցար. ո՞ղ: Ո՞ր ի գերե՞զմանի՞ եղար. թաղաւոր անմահ և ի յերրորդ աւուր յարեար. ո՞ղ: Ո՞ր ի յերկի՞նս համբարձար. ամենակարող և ընդ ա՛ջմէ՛ չծր նըստար. ո՞ղ:

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԴԿ

—Հրեշտակացըն դաւաքն. յերկնից ի յերկիր վայրաբերեալ ի սպա՛ն ՈՒրուհայն Աստուծոյ: —Հրեշտակին ձայնիւ. ցընծայր կո՛յսըն սո՛ւրբ և ընթացեալ առ աշակերտըն պատմէր: —Կենդանին յարեա՛ւ. զի՛ կո՛՛նըս մահո՛ւ երկեայ և կեանըս պարգեւեաց աշխարհի:

ՍԱՂ. ԽԶ. ԿՑ. Համբարձաւ: ՓԽ. Ծափս հարէք: 711:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ի. 27:

Աւ ՏԷՐՆ մեր Յիսուս Քրիստոս

Աստուածեալ ումանք ի սպզուկեցւոցն, որք հակառակէին չլինել յարութիան, հարցին ցնա և ասեն. վարդապետ, Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի՝ ունայ իցէ կին, և անորդի իցէ, զի առնուցու եղբայր նորա զկինն, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում: Եղե եօթն եղբարք էին. և առաջնոյն առեալ կին, մեռաւ անորդի. ա՛ռ զնա և երկրորդն, մեռաւ և նա անորդի. ա՛ռ զնա և երրորդն, նոյնպէս և եօթանեքեան, և ոչ թողին որդիս. մեռաւ և կինն. արդ ի յարութիանն ո՛ւմ ի նոցանէ լինիցի կին. զի եօթանեքեան կալան զնա կին: Պատասխանի եա՛ւ նոցա Յիսուս և ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնուն և արանց լինին, իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել և յարութիանն ել ի մեռելոց, ոչ կանայս առնուն և ոչ արանց լինին, փանդի և ոչ մեռանել եա՛ւ կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Աստուծոյ. փանդի յարութեան որդիք են: Այլ զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ի մարենաւն, որպէս ասէ զՏէառնէ Աստուծոյ Աբրահամու, և զԱստուծոյ Սահակայ, և զԱստուծոյ Յակովբայ: Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց. զի ամենեքեան նմա կենդանի են: Պատասխանի եաւն նմա ումանք ի դպրացն և ասեն. վարդապետ, բարւոք ասացեր: Եւ ոչ եա՛ւ ոք իշխէր հարցանել զնա և ոչ ինչ: 40:

Քաղաք · Խնդրեցաւք : Կնոջ : Աղջիկ · Քոմմ ամենազօր :

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ · ԽԶ · Կ3 · Համբարձաւ : ՓԽ · Ծառս : 711 :

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԻԲ · 1 :

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Գարձեալ պատասխանի ետ (Յիսուս) , և ասէ ցնոսա առակօք. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում: Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս , և ոչ կամեցան գալ : Գարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն ինչ պատրաստ է . եկայք ի հարսանիս: Եւ նոքա յուշացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր, և ոմն ի վաճառ իւր, և այլք կալան զծառայս նորա՝ թշնամանեցին և սպանին: Իսկ թագաւորն իրրև լուաւ՝ բարկացաւ , և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց: Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են , և հրաւիրեալքն չէին արժանի: Արդ երթայք յանցս ճանապարհաց , և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս : Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զորս և գտին՝ զչարս և զբարիս , և լցան հարսանիքն բազմականօք : Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ եահաս անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց. և ասէ ցնա . ընկեր , զիարդ մտեր այսր , զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց . և նա պապանձեցաւ: Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորան. կապեցէք զոտս և զձեռս՝ և հանէք զդա ի խաւարն արտաքին , անդ եղիցի լալ և կրճել ատամանց : Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք : 14 :

ՀԱՄԲԱՐՁԻՆ ԴԶ

Արք անկակից եղաք նմանութեան մահու : 718 ·
Համբարձաւ ՏԷրն մեր Քրիստոս օրհնութեամբ: 707:
ՍԱՂ . ԻԳ . Կ8 . Համբարձէք : ՓԽ . Ցեառն է : 715 :

Արթոյ Աստուածդ որ ըստ Մարկոսի։ ԺԲ. 18։

Աւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Գան (աւ նա) սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք յարու-թիւն. հարցանէին ցնա և ասէին. վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի, և թողու-ցու կին և որդի ոչ թողուցու, զի առցէ եղբայր նորա զկինն նորա և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին և մե-ռաւ, և ոչ եթող զաւակ։ Եւ երկրորդն առ զնոյն, և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն, և եօթնեքեան իսկ, և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ ի յարութեանն յո-ժամ յառնիցեն, որո՞ւ ի նոցանէ լինիցի կինն, զի եօթնե-քեան կացան զնա կին։ Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնոսա. ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք, զի ոչ գի-տէք զգիրս և ոչ զզօրութիւնն Աստուծոյ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, և ոչ կա-նայք արանց լինին. այլ իբրև հրեշտակս իցեն՝ որ յեր-կինն են։ Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսեսի՝ ի մորենւոջն որպէս ասաց ցնա Աստուած. ես եմ ասէ՝ Աստուած Աբ-րահամու և Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ. և ոչ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց. և արդ դուք յոյժ մոլորեալ էք։ Եւ մատուցեալ մի ումն ի դպրացն՝ լսէր նոցա մինչ վիճէին. իբրև եհաս թէ բարւոք եհա նոցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ. որ պատուի-րան է առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա. առաջին քան զամենայն, լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է. և սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պա-տուիրան։ Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա գրիչն. բարւոք է վարդապետ. ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած, և ոչ գոյ այլ բաց ի նմանէ։ Եւ սիրելն զնա յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ և յամենայն մտաց, և սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս և

զզոհս։ Եւ տեսեալ Յիսուսի թէ խմաստութեամբ եհաս ըզպատասխանին՝ ասէ ցնա. չես հեռի յարքայութենէն Աստուծոյ։ Եւ ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։ 34։

Բառք. Խնդրեսցուք ։ կենցո ։ Աչքն ։ Թագաւոր ։

Է · ՀԻՆԳՇԱԲԱԹԻ · ԴՁ

ՅԱՌԱՋՕՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

Ո՞ր յասաՀ քան զարեւ անձն քո՞ ի կերկրի երեւեցար. եւ ընդ մարդկան շրջի՞ար ‖ Աստըւա՞ծ հա՞րցըն մերոց։ Կա՞մ ասօրօրապէ՞ս անչընչացա՞ր եւ ի ծոց Հօր անանդեցեր զքո՞ սուրբ զհո՞գիդ Աստըւա՞ծ։ Ե՞ր ըզհրաշալի՞ անունըդ քո՞ մարգարէն վերա՞գոչեաց. հո՞գի երեսաց ը մե՞ռոց տէր Քրիստո՞ս. Աստըւա՞ծ։

Գ · Ր՞ԳՏԷՐ ‖ Մխոսանա՞լութեամբ օրհնե՞ցէք զՔ առաւ՞ք ե՞ւ ա՞ր ի՞ր ա՞ր բա՞ր արա՞րէք ըզնա յաւիտեա՞ն։ Ջյաղուցեանն ի մեռելոց Քրիստո՞ս և զկենդանին յաւի՞տե՞նից. միաբա ։ Ո՞ր ըզդրո՞ւնըս գըժոխոց փըշրեաց և զաղբկեալսն ի նմա կերզեա՞ց ի՞ կեանս. միաբա ։ Ո՞ր վիմե՞ւն կը՞նքելով յարեաւ և դրօքըն փակելով եմա՞ւտ ան ա՞շակե՞րտան. միաբա ։

ՄՆԱՑՈՒՍՑԷ ԴԿ

Աստուածածին և սրբուհի. որ զԲանն Աստուած։ 283։

ՈՂՈՐՄԵՍ ԴԿ

Ի՞նչեր յերկնից Միածի՞ն անմահ կենդանի ի հօրէ. հանանցեալ սուրբ Հոգո՞ւյն բանդըդ մարմնացար ի կո՞ւսէ՞ն ։ Ենկեր ի չարչարա՞նս չարչարանացըն լուծիչ. ձեռք որ զերկինս արարի՞ն տարածեցեր ի խաչի՞ն, Հանգերեցեր վասը՞ն մերոյ փըրկութեան. ըզմեռանիլ յանձն առնի՞ր կենդանատու մեռելոց ։

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ ԴԿ

Հրեշտակ քո՞ Տէր որ զյարութիւնըն քարոզեաց ։

Չպահանջանքն զարհուրեցո՞յց զկանայսըն լուսաւորեաց անկո՞վ: Չի խընդրէ՞ք ըզկենդանին ընդ մեռեալս. չէ՞ աստ այլ յարեաւ:

ՍԱՂ. ԽԶ. ԿՅ. Համարձաւ: ՓԽ. Ցասխ: 711:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ի. 41:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Աչ և առ նոսա. զինչպ ասեն զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւթի. զի ինքն Դաւիթ ասէ ի գիրս սաղմոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմում, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Իսկ արդ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զինչպ որդի նորա իցէ: Եւ լաւ ի լաւ ամենայն ժողովրդեանն ասէ ցաշակերտան. զգոյշ լերուք ի գրացն, որ կամին պատմուճանիօք շրջել, և սիրեն ողջոյնս ի հրապարակս, և զնախաթոռս ի ժողովուրդս, և զբարձերէցս յընթրիս: Որ ուտեն զտունս այրեաց, և պատճառանիօք յերկարեն զաղօթս. նոքա ընկալցին ածուխ դատաստանս: Եւ հայեցեալ Յեսու վճռաւանն որ արկանէին զտուրս իւրեանց ի գանձանակն: Եւնա և զկին աճի այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս: Եւ ասէ. արդարև ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսեան: Ամենեքին նոքա ի մխերից իւրեանց արկին յընծայան Աստուծոյ, բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ: ԻԱ. 4:

Քարոզ. Խնդրեսցուք: Կեցո: Աչք. Զուտ ամենապօր:

ՅԻՒՍԻԿՈՍԻՆ

ՍԱՂ. ԽԶ. ԿՅ. Համարձաւ: ՓԽ. Ցասխ: 711:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԲ. 15:

Վասն Տիեզն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝ առին խորհուրդ (զնմանէ) թէ որպէս զնիցեն նմա որոգայթ բանիւք: Եւ առաքեն առ նա զաշակերտան իւրեանց հերովդիանոսեացն հանդերձ՝ և ասեն. վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ վոյթ զումեքէ, և ոչ հայիս

յերեսս մարդոյ. արդ ասա մեզ, զիա՞րդ թուի քեզ, պարտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ: Գիտաց Յիսուս զխաբանութիւնն նոցա, և ասէ. զի՞ փորձէք զիս կեղծաւորք. ցուցէք ինձ զդահեկան հարկին: Եւ նոքա մատուցին նմա դահեկան մի. և ասէ ցնոսա. ո՞ր է պատկեր այս կամ գիր: Ասեն. կայսեր: Յայնժամ ասէ ցնոսա. երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Իբրև լուան՝ զարմացան, և թողին զնա և գնացին: Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն, որ ասէին՝ թէ չիք յարութիւն. հարցին զնա և ասեն. վարդապետ, Մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում: Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն արար կին՝ և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում: Նոյնպէս և երկրորդն և երրորդն, մինչև ցեօթնեքորդն. յետ ամենեցուն մեռաւ և կինն: Արդ ի յարութեանն ո՞ր յեօթանցն եղիցի նա կին, զի ամենեքին կալան զնա կին: Պատասխանի եւ ետ Յիսուս և ասէ. մոլորեալք, ոչ գիտէք գրիցս և ոչ զզօրութիւն Աստուծոյ. զի ի յարութեանն ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրև հրեշտակք յերկինս: Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ գաւազանն առ Մովսէս յԱստուծոյ. եմ եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ՝ և չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց: Իբրև լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետութիւն նորա: Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ պատնէշեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին: Եւ հարց մի ոմն ի նոցանէ զնա՝ փորձելով, և ասէ. վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս: Եւ Յիսուս ասէ ցնա. սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց. այս է մեծն և առաջին պատուիրան. և երկրորդն նման ամին, սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան: Եւ ի ժողովել փարիսեցւոցն, հարց զնոսա Յիսուս և ասէ. զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞ր որդի է: Ասեն ցնա. Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս. իսկ զիա՞րդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր, և ասէ. ասաց Տէր

ցՏէր իմ, նիսա ընդ աչմէ իմմէ, մինչև եղից զիշնամիս քո պատուանդան ոտից քոց. իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ: Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչ ինչ: 46:

ՀԱՄԲԱՐՁԻ ԴՁ

Որք անկակից եղաք նմանութեան մահու: 718:

Համբարձաւ Տէրն մեր յերկինս: Երէ+ գոռ: 706:

ՍԱՂ. ԻԳ. ԿՑ. Համբարձէք: ՓԽ. Տիառն է: 715:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ԺԲ. 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Պատասխանի նա (Յիսուս) և ասէ՝ մինչ ուսուցանէր ի տաճարին. զիա՞րդ ասեն դպիրքն, թէ Քրիստոս որդի Դաւթի է. և ինքն Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. ասաց Տէր ցՏէր իմ, նիսա ընդ աչմէ իմմէ՝ մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ եթէ ինքն Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա: Եւ բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ: Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութեան իւրում. զգայչ լերուք ի դպրաց անտի՝ որ կամին ի հանդերձս երևելիս շրջել, զնախաղոյնս ինդրել ի հրապարակս, և զնախաթոռս ի ժողովուրդս, և զպահպանութիւնս յընթրիս. որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի կա՛ս պատասխանս ընկալցին: Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ. եկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ է նախարարիկ մի: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտան իւր ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. զի այրին այն տառապեալ՝ չատ արկ քան զամենեսեան որ արկին ի գանձանակն. քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ իւրմէ զամենայն ինչ զոր ունէր արկ, զոյս չափ զկեանս իւր: 44:

Գ՚ղ՚ղ. Խնդրեսցուք: Կեցո: Աչ՚ղ+. Թագաւոր:

Է · ՈՒՐԲԱԹ · Դ Կ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

— Ա՛նըմկիցըն բա՛նդ մը յանճաո յաՅԹող ներսե՛ն ե՞ս. զքե՛զ տեսա՛ք ի խաչին. վասն ա՛րարածոց քո՛ց փըրկու՛թեան՝ ‖ Ա՛տաբա՛ծ հա՛րցըն մերոց։ Զքե՛զ ո՞ր անքննե՛նդ ես յԷ՛ութեա՛ն ե՞ն. ըսպասաւորի՛ն ա՛ր-տաքսեալ. եւ զինաւորըն գե՛ղարդեա՛մբն խոցեալ. զանարատ ըզկո՛ղ քո՛ ի խաչի՛ն Ա՛տաբա՛ծ։ Ո՞ր թա-գաւո՛րդ ես անմա՛հ ե՞հ. զմեռանիլ յա՛նձն ա՛ռար. եւ ըզԹագո՛ւհին ե՛րկբօրեայ. վասն ա՛րարածոց քո՛ց փըր-կու՛թեան Ա՛տաբա՛ծ։

Գ · Ըզձէ՛ր օրհնեցէ՛ք ‖ Ա՞ա՛ւ ե՛ւ ո՛վ բա՛րձր ա՛րա-րէ՛ք ընդա՛ յաւիտեա՛ն։ ՁԹագո՛ւհըն Մեսի՛ա եւ ըզ-խաչեա՛ն ի մէջ ի յանօրինաց. ե՛ւ ընկերի՛ դառնու-Թեան՝ հաշակեա՛լ վասնը՛ն մեր. ա՛ա՛։ Ա՛նարա՛տ գառն Աստո՛ւծոյ պա՛տարագեալ. ե՛ւ ընծոցո՛ւմըն գե՛ղարդեա՛ն առեալ ի կո՛ղն. եւ ընփըրկակա՛ն արիւնն ե՛հեղ ի վե-րա՛յ ամենայն տիեզերաց. ա՛ա՛։

ՄՆԹԱՑՈՒՄՑԷ ԴԿ

Ո՛ր զանճառելին ծնաւ աւրբ Աստուածածնին։ 103։

ՈՂՈՐՄԵԱ ԴԿ

Ո՛վ անըն մերոյ փըրկու՛Թեան՝ խանարհե՛ցար ի յերկ-նէ՛ց եւ ի՝ՙ՚՛՚՛՚՝՚՛՚՝՚՛՚՝

սուրբ զնա ծ՛ոթած. և ընդմէջ ճանչակեայ բ. զամէնեսեան յաթուցեալ զհաւատացեալսն ի քէզ մրբ ‖ սղոպան՝՛կէրին սակրով. փառաք: Վէ՛մրք պատառեցան ի խաչի լռ՚ Թեա՛՚ն քո՛՚ Տէր. եւ գերեզմանք բացան. զբժշկեալ զարհնութեցան և մեռեալքն յաթուցեալ սղոպան՝՛կէրին: Յաթուցեալ է Տէրն ի գերեզմանէն ա՛հեղակերպ փա՛յլմամբ. պատառեցա՛՚ան վէ՛մք. եւ երկիր սա՚ սանեցա՛՚՛. ի՛ յահէ՚ զ բարբառո՛՚յ մեծ կաթողիկո՛՚ն: Ո՛՚ՀՀ հրեշտակն ի յերկնից ի գերեզմանն՛՚ն Տեառն. հընչո՛ցուցա՛՚՛ան նէ՛՚ր. ըզձայն անհեղ գոչման վա՚ զա՛՚՛յն ի վերա՚յ գերեզմանո՛՚ն: Ի՛՚նչ եկեալ սուրբ կանանցն ի խընկէ՚լ զմարմի՛՚նն Տեառն. եւ լըսեալ ի հրեշտա՛՚՛ան կէ՛՚ն. ե՛ՔԷ յարեա՛՚ւ ի մեռե՚ լո՛՚՛ց կենդանի՛՚ն յաւիտեանից:

ՍԱՂ. ԽՉ. ԿՅ. Համբարձաւ: ՓԽ. Ճախ: 711:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԻԱ. 5:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ յասել ամենց զաւետարչէն, թէ զեղեցիկ: 278:

Ք՚՚Ղ. Խնդրեսցուք: կեցո: Աչք՚՚. Քառ ամենազօր:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ԽՉ. ԿՅ. Համբարձաւ: ՓԽ. Ճախ: 711:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԳ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ խօսեցաւ (Յիսուս) ընդ ժողովուրդսն և ընդ աշակերտան իւր և ասէ. յաթոռն Մովսիսի նստան գպիրքն և փարիսեցիք. զամենայն ինչ որ ասիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք, բայց ըստ գործոցն նոցա մի առնէք, զի ասեն և ոչ առնեն: Կապեն բեռինս ծանրանս և զժուարբակիրս, և դնեն ի վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ կամին չարժել զնոսա: Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ի ցոյց մարդկան. լայնեն զգրապանակս

իւրեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց. սիրեն զյառաջագահս յընթրիս և զնախաթոռս ի ժողովուրդս և զողջոյնս ի հրապարակս, և կոչել ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի։ Բայց դուք մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, և ամենեքեան դուք եղբարք էք։ Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է հայր՝ որ յերկինսն է։ Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է։ Եւ մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել։ (Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք զտունս այրեաց. պատճառանաւոք երկարէք զաղօթս, վասն զի աւելի դատաստան ընդունիցիք։) Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածէք ընդ ծով և ընդ ցամաք՝ առնել եկամուտ մի, և յորժամ լինիցի՝ առնէք զնա որդի գեհենի կրկին ևս քան զձեզ։ Վա՛յ ձեզ, առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է՝ արժան է։ Մոլոքա՛ք և կոյրք, զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ զոսկին։ Եւ որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ի պատարագն որ ի վերայ նորա է՝ արժան է։ Ջիմարք և կոյրք, զի՞նչ մեծ է. պատարա՞գն, եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն։ Իսկ որ երդուաւ ի սեղանն, երդնու ի նա և յամենայն որ ի վերայ նորա է. և որ երդուաւ ի տաճարն, երդնու ի նա և ի բնակիչն նորա. և որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ և յայն որ նստի ի վերայ նորա։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք զանանուխ և զդամիթ և զչաման, և թողէք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան և զողորմութիւն և զհաւատս. զայս արժան էր առնել՝ և զայն չթողուլ։ Առաջնորդք կոյրք, որ զմիջատիկս քամէք և զուղտս կլանէք։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զարտաքին զբաժակին և զկաւաճանկին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխառնութեամբ։ Փարիսեցի կոյր, սրբեա նախ զներքինն բաժակին և զկաւաճանկին, զի լինիցի և արտաքինն նոցա

սուրբ : Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի նման էք գերեզմանաց բաւլոց , որ արտաքոյ երևին գեղեցիկք , և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ : Այնպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան արդարք , և ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ : Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի չինէք դշխրիմս մարգարէից , և զարդարէք զգերեզմանս արդարոց , և ասէք , եթէ էաք յաւուրս հարցն մերոց՝ ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն . ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն . և դուք լցէք զչափ հարցն ձերոց : Օձք՝ ծնունդք իժից , զիա՞րդ փախչուցուք ի դատաստանէ գեհենին : Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս , և ի նոցանէ սպանանիցէք և ի խաչ հանիցէք , և ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր , և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք : Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի , յարենէն Աբելի արդարոյ մինչև յարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքիայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ . ամէն ասեմ ձեզ , եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ : Երուսաղէմ Երուսաղէմ , որ կոտորէիր զմարգարէս և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ . քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք , և ոչ կամեցաբուք : Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ : Բայց ասեմ ձեզ , թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայսմ հետէ , մինչև ասիցէք՝ Օրհնեալ եկեալն յանուն Տեառն : 39 :

ՀԱՄԲԱՐՁԻ Դ2

Որք անկակից եղաք նմանութեան մահու : 718 :
Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս : Էջէ՛ գո՛ն . 707 :
ՍԱՂ . ԽԴ . ԿՅ . Համբարձէք : ՓԽ . Տեառն է : 715 :
Արքայ Աւետարանիս որ բառ Մարկոսի : ԺԳ . 1 :
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Եւ յելանելն (Նորա) ի տաճարէ անտի , ասէ ցնա : 257 :
Ջ՛ուշ . Խնդրեացուք : Կեցո : Աչքո՛ . Թագաւոր :

Է· ՇԱԲԱԹ· Ա Զ

ՅԱՌԱԻՕՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

Ո՞ր յահեղակե՞ղ աթո՞ռ նըստի՞ս ե՝ ընդ Հօր ե՞ս յԷութեան. խոնարհե՞ցար յերկինից վասըն մերոյ փըրկո՞ւթեան. ‖ ըզքե՞զ բա՞րեբանեմք Աստուած հա՞րցըն մերոց: Ո՞հատի սերովբե՞ն ի խոնարհ ունելով ըզդէմս յարփիահրաշ փառացդ քո՞ց Քրիստոս. ինակ ցոյդայի՝ լըրութեամբ մերձենալ ի համբոյր նըշանակ և աւթի մանո՞ւթեան. ըզքե՞զ: Ո՞ր ի բարձրութի՞նս երկնից էիր ընակակից Հօր և սուրբ Հո՞գւոյն. ևս ի դասո՞ց ներքայեցւոց զըպրաց և փարիսեցւոց բանձար ի խաչ վասըն մեր. ըզքե՞զ:

Գ. Ըզցէր օրհնեցէք ‖ բարձր ա՞րարէք ըզնա՞ յաւիտեա՞ն: Հայ՞րարձաւ Աստուած ծնրհնա՞թեամբ և զօրէ երկնից երդե՞ի՞ր՞ն. ով է սա՞ թագաւոր փառաց բարձր: Ա՞ա էր՞ն նա՞. ո՞ր ի հովո՞նեաւոր ե՞ւ ի լաւ սեղէն ամպոյն ձայն եղեւ դա էր որդի իմ սիրելի բարձր:

ՄՆԾԱՑՈՒՄՑԷ ԴԿ

Ի՞նչ ե՞զ ե՞մք աշխարհնա՝յ. ‖ Քրիստոսի՞ մա՞յր Աստուածոյ մերոյ: Ո՞ր քան զե՞րկինըս բարձրագոյն Աթոռ. պարծանք եկեղեցւոյ. Քրիստոսի: Ո՞ր քան զարե՞գակըն պայծառագոյն Մարիամ. մի դադարեր բարեխաւսել վասըն մե՞ր. Քրիստոսի:

ՈՂՈՐՄԵԱ ԴԿ

Ո՞ր վասըն մեր յերկինի՞ց խո՞նարհեցար. նո՞ր զերկրի ըզտե՞ղերս. ծնեա՞ և ի՞նձ փըրկի՞չ ‖ ո՞զորմիա՞ծեմբ եւ կեցո՞: Ո՞ր ըստ հըզեղչ՞ն ըզնա՞ծեա՞ն մա՞րդկան. զդե՞ցա՞ր մա՞րմին. զվիրաւորեա՞լ՞ք

լքե՞ս մեզ օ՛ք. զա՞նձն իմ մրխիծ թարեա՞ ո՞ղոր։ Ո՞ր ըղդատակնիք մա՛հ ո՞ւ լո՛ւծեր. գնա՞ խա՞տե՞ զծին. զդատաստա՞պարտեա՞ լքե՞ս մեզ օ՛ք. զհո՞գին իմ նո՞ր գեա՞ ո՞ղ։

ՏԷՐ ՑՆԵՐԿՆԻՑ ԴՆ

Փա՞ռք Քրիստոսի ամենազօր յարութեա՞ն։ Քրիստոսի՞ ամենազօր յարո՞ւթեանն է՛րկրպագե՞ն քեզ տովէ՛ք. է՛ւ վի՛ցէ՛ւեան՞ ամբոխքըն հո՛գեւորական հընչմամբ երգեն ասելո՞վ. փա՞ռք։ Այսօր անո՛ւշահո՞տ բուրմամբ ընթա՞նայի՞ն սո՛ւրբ կանայքն. ասե՛ստանե՛լով ըզհրեշտա՞կն արեգակնակե՛րպ փայլմամբ իւ՛ վերայ վի՛մին դո՛չէր ասելո՞վ. փա՞ռք։ Այսօր արձա՛կեցաք ի կա՛պանա՞ց նախահա՛յրն. է՛ւ վերընա՛ւն նո՛րոգմամբ յա՛ւիտեանական կենա՛ցն եղա՛ք ժառանգորդ՛ք. փա՞ռք։

Ի՛նչ աղաղակե՞ց կա՞ն նա՛նց եկեալ. իւ՛ սո՛ւրբ գե՞րեզմանն. հրե՞շտակ ըզհրեշտակապետ՛ն ընդձայնըն լըսեա՛լ. ‖ ո՛ւ՞ր ա՛ղ ըզ վիճակեալըն խըն՛դըրկ՛ք յանբնա՛ւ քրիստո՛ս ո՞ւ՛ր ասե՛ս. անընդհա՛տ թաղա՞ւորն։ Ա՞րիմաթիա՞ցի՞ չլսե՞ս մե՛ծ ծանգեա՛լ. իւ՛ սո՛ւրբ գե՞րեզմանն. հրե՞շտակ զարհուրեա՛լ պա՞հապանացն ե՛րկիւղալից ը՛մո՞ռանէ՛ն. ա՞յլ քա՛րն զհրեշտակապետ՛ն ը՛ր գո՛չէ՞ր առ կա՛նայան. ո՞։ Ընթացեա՛լ պետրո՞սն է՛ւ Յովհաննէ՞ս. իւ՛ սո՛ւրբ գե՞րեզմանն. հրե՞շտակ հանդիպեա՛լ վաղչամակե՞ն է՛ւ սո՛ւրբ կըտաւոցն. այլ քա՛րն զհրեշտակապետ՛ն ը՛ր գո՛չէ՞ր առ նոսա. ո՞։

ՍԱՂ. ԽԶ. ԿՑ. Համբարձաւ։ ՓԽ. Ծ տաիս։ 711։

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ ԻԲ. 1։

ՋՏԷՐՆ ՄԵՐ Յիսուս Քրիստոս

Մեր՛ձեցաւ ատն բազարջակերացն՝ որ կոչէր պասքա։ Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք թէ ո՛րպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ի ժողովրդենէ ան-

ած ։ Ապա եմուտ սատանայ ի Յուդա ի կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ի թուոյ երկոտասանիցն ։ Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետսն և ընդ գրիս և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա ։ Եւ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ. և յանձն առ, և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մերկուսի յամբոխէն ։ Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպատաքն. և առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս և ասէ. երթայք պատրաստեցէք մեզ զպատաքն զի կերիցուք ։ Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք ։ Եւ ասէ ցնոսա. ահա իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տունն յոր մտանիցէ, և ասասջիք տանուտէրն տանն. վարդապետ ասէ քեզ, ո՞ւր են վանքն իմ՝ յորում զպատաքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ. և նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք ։ Եւ գնացեալ գտին որպէս և ասացն նոցա և պատրաստեցին զպատաքն ։ Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա ։ Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ զայս պատաք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս կերայց ի նմանէ, մինչև լցցի յարքայութիւնն Աստուծոյ ։ Եւ ընկալեալ բաժակ գոհացաւ և ասէ. առէք զայդ և բաժանեցէք ի ձեզ ։ Ասեմ ձեզ, թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ ։ Եւ առեալ հաց գոհացաւ, եբեկ և եւս նոցա և ասէ. այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք սա իմոյ յիշատակի ։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն սա և ասէ. այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ ։ Բայց տեսիլ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս. և որպէս մարդոյ բան սահմանելոյն երթայ, բայց վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռն մատնիցի ։ Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ի նոցանէ որ զայն գործելոց իցէ ։ Եղև և հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ո՞վ ի նոցանէ համարիցի մեծ ։ Եւ նա ասէ ցնոսա. թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրասերն, և առաջնորդն

իբրև զպատասուորն: Ո՞վ է մեծ, բազմեա՞լն՝ եթէ պատասուորն. ո՞չ պատքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրև զպատասուոր: Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ. և ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեանն իմում, և նըստիցէք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի: 30:

Քարող. խնդրեացուք: կեցո: Աղաչե. քանմ ամենազօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

ՍԱՂ. ԽԶ. կՅ. Համբարձաւ: փխ. Ծախս: 711:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԴ. 1:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍուս ՔՐԻՍՏՈՍ

Եւ ելեալ արտաքս (Յիսուս) ի տաճարէն գնայր: 370:

Լոյս գուարթ

ՄԵՍԵԴԻ ԳՈՂՈՓԵՆ

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գալոց ես:

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:

Քարող յոհնէսէս պենտեկոստէի յաստուած և յերեկոյի

Աստուածէ:

Զնի Սուրբ Աստուածէն ղբենուն փքաւ և յոտեան ելանէն խուչ և սեխտրանաս և մանդիլուց և սինայ ղարդոսէ:

ՀԱՄԲԱՐՁԻ ԴՉ

Առաքելոյ ազաւնոյ: կենդանարար Աստուած: 763:

ՍԱՂՄՈՍ ՃԾԲ

կՅ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիրն ուղիղ:

փխ. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մատներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն ի գործս քո· յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ· վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուազեաց յինէն հոգի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեմ այնոցիկ որ իջանեն ի գուբ:

Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Արթոյ Աբեսարանիս որ բառ Մարկոսի: ԺԴ· 1:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ էր դատին և բազարջակերք յետ երկուց: 434:

Բ-ըշ· Գոհարանելով: կեցո: Աչք+· խաղաղութեամբ:

ԿԻՒՐԱԿԷ· ԱԿ

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ

Ի ԳԻՇԵՐԻ

ՀԻՏԻԱՊ ՇԱՐԱԿԱՆ ԲԿ

Ո՞ՐԴՈՐԴԱԲԻՒՆՆ ԱՆԹԱՓԱՆԵԼԻ ԵՒ ԶՕՐԱԲԻՒՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՅՍ ԾԱՓԱԿԱԼ ՅԱՇՀԱՐՀ. ‖ ՆԸՄԱՆ՝ ՓԱՌՔ ՀԱՒՆԱՑՔ ԶՕՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԱ ԵՒ ՀՂՈՐԴՈՒԹԻՒՆ: Ո՞Ր ԷՋԸՆ ՅԵՐԿՆԻՑ. ԱՅՍՕՐ ՆԱ ՀԱՒՆԱԳԱՒ ՅԱՌԱՔԱՓԱՌԼԸՆ ՃԸՇՄԱՐԻՏ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ. ՆԸ: Ո՞Ր Ի ԽՈՐՀՈՒՐԴԸՍ ՓԸՐԿԱԿԱՆ. ԱՅՍՕՐ ԸՆԴ ԻՋԱՆԵԼ ՅԱՌԱՔԱՓԱՌԼԸՆ ԾԱՆՈՒՑԱՒ ՄԱՐԳԱՐԷՆ. ՆԸ:

Ք՜Ր. ԵՒ ԼԱ ԽԱՂ: Ք՜Հ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ: Ե՜Ս ՍՊ՜Ս

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴՉ

Ա՛ՌԱՔԵԼՈՅ ԱՂԱՒՆՈՅ. ԻՋԱՆԵԼՈՎ ՄԵԾԱՃՄԱՆ ՀԸՆՉՄԱՆԸ Ի ԲԱՐՁԱԾՆՈՅ. Ի ՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ ԼԱՒՈՅ ՓԱՅԼՄԱՆ ՀՐԱՊԻՆԵԱՑ ԱՆԿԻՍԵԼԻ ԶԱՇԱԿԵ՛Ս ԲՈՒՆ. ՄԻՆՉԴԵՌ ՆԸՆԱՓԷՆ Ի ՍԱՒԸՐ ՎԵՐԱԾԱՒԱՆՆ: Ա՛ՆՆԻՒԹԱԿԱՆ ԱՂԱՒՆԻ. ԱՆՔԸՆՆԵԼԻ ՈՐ ՔԸՆՆԷ ԸՊԻՆԱ Ա՛ՍՏՈՒԾՈՅ. ԶՈՐ ԱՌԱՒԱԼ Ի ՀՕՐԷ՝ ՊԱՏԱՒ ԶԱՀԱՒՈՐ ԵՒ ԸՄԻ ԼԱՆԱՑԱՄ ԳԱԼ Ա՛Յ ԼԱՆ. ԶՈՐ ՔԱՐԵԳԵՑԻՆ ՀԱՒԱՏՈՅԱԿԱՆ: Օ՛ՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ԲԱՐՁՆԱ. ԵՒՂԻՆ Ի ՀՕՐԷ ՀՈԳԱՅՆ ՍԸՐԲՈՅ. ԱՐԱՒ ԱՌԱՔԵԱԼՔՆ ԱՐԲԵՑԱՆ ԱՆՄԱՀԱԿԱՆ ԲԱԺԱԿԱ՛Ն. ԵՒ ՀՐԱՒԻՐԵՑԻՆ ԳԵՐԿԻՐԱ Ի ՅԵՐԿԻՆՍ:

† ԿԻՆԱՀԱՆԱՐԱՐ Ա՛ՍՏՈՒԱԾ ՄԱՐԳԱԱԿԸ ՀՈԳԻ. ԸՊԱԺԱՂՈՎԵԱԼՍԸՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՐԱՒ. ԼՈՒԱՒՈՐԵՑԵ՛Ր ՀՐԵՂԻՆԱՔ ԼԻԶՈՒԱ՛Ք. ‖ ՎԱՆ ԱՐԱՅ ԵՒ ՄԵ՛Ք ԱՅՍՕՐ ԱՍՆԵ՛Ք ԸՊԱՀՐԱՏԱ ՔՈ ԱՒԸՐ: ՉՈՒԱՐՃԱՑԱ՛Ն ՔՈ ՊԱՇԼՈՒԱՆԱ՛ՔՆ ԱՒԸՐ ԱՌԱՔԵԱԼՔՆ. ԿԱՂԵԼՈՎ Ի ՄԻԱԲԱ՛Ն ԸՊՊԵՐՈՒԱՆԱՆ Ի ՄԻԱԲԱ՛Ն ԲԱՂՄԱՃԱՅՆ ԼԻԶՈՒԱ՛Ք. ՎԱՆ:

Ա՛նմահաբար բաժակ հեղեա՛լ յերկինից սուրբ Հոգի. զոր աբրին ի վերնատունըն դա՛նաք առաքեալցն. ‖ օրհնեալ ես սո՛ւրբ Հոգիդ ճշմարիտ: Ա՛ռատապէս ծաւալեալ ի մե՛զ հաւրըն կենդանեաց. քանզի աբրեալ առաքելոցն եւ արբուցիր ամենեքեան. օրհնեալ: Ա՛յսօր մեծապէս ցընծան եկեղեցի՛ք հետ քո՛ նահատակ. ըզմայլեալք ուրախութեամբ ի քո՛ն կենդանի պարար բաժակ. օրհնեալ:

Հոգին սուրբ. էր միշտ և է եւ եղիցի. ոչ սկզբնական է՛ւ ոչ դադարեալ ծլ. այլ ‖ միշտ ընդ Հօր և ընդ Որդւոյ կարգեալ և թըւեա՛լ եւ միշտ օրհնեալ է ի յաւիտեան: Էր միշտ ընդունող. սրբրող և լըցուցիչ աստուածացուցիչ ծ. եւ միշտ: Միշտաշարժ ինքնաշարժ. ինքնիշխան ինքնագօր ամենագօծր. վասըն զի չընչէ ուր կամիւ. յորքան անխորժէ. յորժամ և յորքա՛ն եւ միշտ:

ՀՄ. Հանդարձա՛ւ ՏԷրըն մեր Քրիստոս. օրհնութեամբ ընդ ամպս երկնից ծ. եւ առաքելոցն երկրըպագեալ դարձան յերուսաղէ՛մ. միտքանութեամբ վերառաքէլն զաղօթս: Միտալ ի յերկինըս բիւրաւոր զօրօք բանմութեամբ հրեշտակաց ծ. արք ազազակէին եւ ասէ՛ն. օրհնեալ եկեալ ի յանունըն Տեառն: Նըմանեալ ընդ ամէն ծընողին. կամարելով ըզխնամատարեալ պարգեւս. մըխիթարիչ սուրբ Հոգին դայ առ ձե՛զ. ազրիւրացուցանել զմեծ զնդրմանութիւն:

ՀՆ. Ժամանակ զարձի իմոյ եհա՛ս ի յերկիր. ‖ արդ Տէր ընկալ ըզծառայս քո՛. եւ Հոգի՛ քո՛ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ: Խոստովանող հոգին որ ելից զանձնութեան ընթացս աշխարհի. արդ: Ի վերջնումն աւուր մեծի յորժամ անկնի այցելութիւն

քոյոց սիրտդաց յայնժամ խնայեա՛ ի ծառայս քո՛. եւ Հոգի՛ ։

ՄԺ. Նո՛ր Սիոնի ծընեալ մանկա՛ն ընդ սուրբ աւազանն. չնարհանարդեա՛ լք Հոգւոյն Աստուծոյ. օրհնեցէք զՀայրն երկնաւոր յաւուր ծնընդեան՛ն սըրբուհոյ կուսին. ‖ յոր օրհնեցա՛ք յա՛ նիծից նահանջն։ Ա՛րեամբ զաւրինն անապատա՛ փըրկեալ ժողովրդք. յաւուր ծնընդեա՛ն մեր անապանելոյն. գովեցէք ըզՄիածինն որ հաճեցա՛ առնուլ մարմի՛ն ա՛նապական ի նմանէ. յոր։ Յանապատդ՛ուին չնորհաց Հոգւոյն լուսազարդեա՛լ աղբք հեղհեղոնաց. յաւուր ծնընդեա՛ն մեր բանիւն ծնողի. ըզփառաւորից Որդւոյ զՀոգին բաբերանեցէ՛ք հոգեւոր երգով. որ մաքրագործեա՛ց զմարմնաւորսն ի Քրիստոս ։

ՅՈՎ. Ըղքո՛ղ որ Հոգւով և հըրով մաքրեցեր ըզմարդկաւն պղտեղութի՛ւն. որպէս զԱստուած և ընփըրկիչ ամենեքեան օրհնեսցո՛ւք։ Փըրկիչն երեւեցաւ և պա՛շխարհս ապրեցոյց ի պատրանաց Քրչնամուն. որդեգրութի՛ւն չնարհելով ի ձեռն մըկըրտութեա՛ն։ Ջրո՛վ կիզո՛ւ ըզմեզս մեր սյաօր. երեւեալ ապրեցո՛ւչին և զմաւցուցանէ՛ զպաշխարհս աստուածայի՛ն ընտրո՛ւթե։

ՄԺ. Թա՛գաւոր փառաց Աստուած Հոգիդ կենդանարա՛ր. ի չնարհաբաշխս աւուր մեծի ծնընդեան Քաբիամուղջաւոր Դաւթի թագաւորի՛ծ. նորոգեա՛ զկենդանութի՛ւն մերոյ թագաւորի՛ն. զի օրհնեսցո՛ւք ըզքո՛ց ցնե՛ր այժմ և յաւիտեան։ Ա՛դրիւր կենաց և փըրկութեան մերոյ Հոգի՛ Հո՛ր եւ Որդւոյ. ի յարմատոյն Յեսսեայ բըղխման գաւազանի՛ հանեալ ժամո՛ւ. չնարհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ հայ-

բապետ՝ ՚ի Տ՚ն. ‖ զի՛ օրհնեալ սգո՛ւք ընդքե՛զ տէր այժմ և յաւիտեան: Լրա՛ւն ա՛շխարհի եւ հառա՛ջայթ իմանալի Հոգւով սո՛ւրբ Աստուծոյ. ի ցընծութեան աւուր լըրման ութախութեան Յանվակիմայ եւ Աննայի՛ց. աղօթի՛ւք սո՛ցա լըցո՛ զպէ՛տըս կարեաց հայաստանեայց եկեղեցւո՛ ՚ի Տ՚ն. զի՛:

Թ2· Ո՛ր հաստատո՛ւեցե՞ր բանիւ զեկեղեցի քո՛ Քրիստո՛ս ի վե՛րայ առաքելական վիմի՛. երդե՛լ ի սանձ զե՛րգըս հոգեւո՛րս: Կա՛նգնեա՛լ ի սա՛ւ սեղան սըրբութեան. բա՛շխէ՛ զմարմի՛ն ի՛ւր և զարի՛ւն. եւ տա՛յ ի սանե՛ւ մե՛ղ նո՛ր թողութի՛ւն. ի՛ թո՛ղութի՛ւն մե՛ղաց մե՛ր բո՛ց: — Փառք Հօր: Ի՛ջեա՛լ Հո՛գւոյն սըրբո՛յ. աղաւնակե՛րպ երեւմա՛մբ. ի վե՛րայ մարմնոյ եւ արեանն Տեա՛ն. ի բըժըշկութի՛ւն Հո՛գւոյ մերոց:

—Այժմ և միշտ: Հո՛գւ տրա՛կան ն՛ սո՛ւրբ մըկըրտութեամբ. զարդարե՛ցեր նոքօք ըզտէ՛ր եկե՛ր ի՛ զգե՛ստըս լո՛ւսափա՛յլս եւ նո՛րափե՛ա՛ւրս. վա՛ռեա՛ զրո՛յ եւ մե՛ք այսօր ա՛ռնե՛մք ըզգա՛լուստս քո՛ սո՛ւրբ:

Ա՛լէլուիա յո՛ր՚օրէս պենտակոստէի ի գալոփեան յայնէն ա՛ս՚:

ՅԱՌԱԽՕՏՈՒ

ՀԱՐՑ Ա.2

ԶՀո՛գւոյն ըզգա՛լուստըն ա՛ռնե՛մք ո՛ր մըխիթա՛րեաց զառաքեա՛լսըն հանդչե՛լով ի նոսա՛ հրեղէն լե՛զուո՛ք. ‖ օ՛րհնեա՛լ յաւի՛տեա՛ն: Զե՛րեւումըն Հո՛գւոյն սո՛ւրբ նե՛մք վե՛րաբերեա՛լ Աստուած խո՛նարհե՛ալ նո՛ր թողո՛ւմ եւ կենդանա՛րար. օ՛րհնեա՛լ: Ա՛յսօր ութախա՛նեա՛լ Հո՛գւո՛ւն. խո՛նարհե՛ալ Աստուած զՀո՛գին սո՛ւրբ բըժխո՛ւմըն և լո՛ւսոյ՛ն զամե՛նայն. օ՛րհնեա՛լ:

Գ· Ընդ՚ՏԸ՛Ր ‖ օ՛րհնե՛ա՛լ ե՛ս ձեզ՛ք ե՛ւ ա՛ղաչե՛մ ես զձեզ՛ք ե՛ւ բարե՛

ա բարեկ ընդունայն յանէնանէ ն։ Զերկոցն ի հօրէ զէա-
կից Որդւոյ. սուրբ Հոգի ն ծրէնն։ Զե կեանցն աշխոր
Աստուած. հրեղինաք լուսաւք աշ բան ն ընտրութեան ն
ծրէնն ։՝ ։

ՄՆՑԱՑՈՒՍՑԷ Ա2

Աշխոր ը նան էր ժողովուրդք. յերնեայիք ։՝՝ ք. ընդ
դալստեան Հոգւոյն սրբոյ. ‖ մեծացուցանելով. զե-
ղերն ի հօ՞րէ։ Աշխոր յընծայէն ն առաքեալքն. զար-
դարեալ ։՝՝ ւք ի շնորհաց Հոգւոյն սրբոյ. մեծա ։
Աշխոր ը զուարթացայէն ն արարածք. ճշմարիտ ։՝՝ ա
գալստեամբ Հոգւոյն սրբոյ. մեծա ։

ԳԻՇԵՐ

Իմեալ Հոգի՛ն յանաքեանան. եւ հրաշինեալ գըն-
արեալն անկէզ ի սուրբ վերնատուն ։ Ելս եւ հան-
գեան նոքօք յաղգըս մարդկան զանազան լեզուաց բա-
ժանեմամբ ։

ՈՂՈՐՄՆԱ Ա2

Որ յամենայնի ես ստուածըւթիւն. եւ ի ձայն հընչ-
ման ի՞ր յերկնից սուրբ Հոգի. ‖ ողորմեա մեզ ։ Որ
զամենայն լընուս զօրութեամբ քո. եւ ի զանս առաք-
ելոցն իջեր բընակիլ սուրբ Հոգի. ողորմեա։ Որ ան-
բաժանելի ես յաստուածըւթենէն. եւ ի հրեղէն լեզուս
բաժանեալ հանգեար յանաքեալսն սուրբ Հոգի. ո-
ղորմեա ։

ՏԻՐ ՑԵՐԿՆԻՑ Ա2

Որ ի զրուվեսական կանուղդ հաճեցիր. այսօր ի-
ջեր յերկնից ի զանս առաքելոցըն անուրբ Հոգի. ‖ ծրհ-
նեալ ես բանգաւոր անուանց ։ Որ զընտա ի վերայ թեւուց
հոգւոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար
յանաքեալսն անուրբ Հոգի. ծրհնեալ ։ Որ խառնեա տես-

չնթեամբ զքո զարբանծս. այսօր ե՛կեր ի հանատառել զեկեղեցի քո սուրբ Հոգի. օրհնեալ ես Քրիստոս ամեն։

Ժողովեաց ընտրելոց մեռատանէին. ապաւեա՛ւ մըննայիւն աւետեացըն Հօր հաւատաւ ի վերնատունն։ Սուրբ Հոգին երիւեալ սիրեցոյն. լեցո՛ւյց խընդութեամբ սուրբ զանազեալսըն հաւատալ ի վերնատունն։ Ո՛րք այրին ըզհնարըն կենդանի. եւ ընթացա՛ւ արբուցին սիեզերաց. որք արբինըն կենդանացա՛ն։

Աւետարան երէց յոհաննէ պենտեկոստէի զայս առ։

Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք, զՀոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգալուստ։

Ցեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած, և զՏէր յաղթութեան խոստացեալ։

Զկնի Սուրբ Աստուածին ընթերցուած գործոց առաքելոց, և ետուն նմա խօսիլ և աւետարանել և ասէին զմեծս ի գործ՝ ասելով

ՇԱՐԱԿԱՆ Դ.

Առաքելոյ ազաւնոյ իջանելով մեծաս։ երէս պատ. 763։

Ապ՝ ՍԱՂՄՈՍ ճԽՒ. ի ՂԱ՝

48. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

ՓԽ. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր։ 761։

Ալէլուիա ալէլուիա։

ընթերցուած ի գործոց առաքելոց։ բ. 1։

Եւ ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին ամենեքեան միաբան ի միասին։ Եւ եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նստէին. և երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա։ Եւ էին յերուսաղէմ բնակեալ հրեայք՝ արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից։ Եւ իբրև եղև

բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն և խառնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա: Աքանչանային ամենեքեան և զարմանային և ասէին ընդ միմեանս. ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսին՝ Գալիլեացիք են, և զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք: Պարթևք և Մարք և Ելամացիք, և որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի և ի Գամիրա, ի Պոնտոս և յԱսիա, ի Փռիւգիա և ի Պամփիւլիա, յԵգիպտոս և ի կողմանս Լիբիացւոց, որ ընդ Կիւրենացիա և որ եկք Հռոմայեցիք, Հրեայք և եկք նոցուն, Կրետացիք և Արաբացիք, լսեմք խօսիլ նոցա ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ: Աքանչանային ամենեքեան զարմացեալք և ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել: Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, եթէ քաղցուալից իցեն: Յարուցեալ Պետրոս հանդերձ մեսամանիւքն, ամբարձ զձայն իւր և խօսեցաւ ընդ նոսա. արք Հրէաստանեայք, և որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի և ունկն դիք բանից իմոց. ոչ որպէս դուք կարծէք՝ թէ սոքա արբեալ իցեն. զի դեռ երեք ժամք են աւուրս: Այլ այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովելայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ, և մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, և ծերք ձեր երազովք յերազեսցին. և ի վերայ ծառայից իմոց և ի վերայ աղախնանց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, և մարգարէասցին: Եւ տայց նշանս յերկինս ի վեր, և նշանս յերկիր ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի ի խաւար և լուսին յարիւն, մինչ չև եկեալ իցէ օր Տեառն մեծ և երևելի: Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ: 21:

Զ-ՅԴ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԴ. 15:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք. և ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ

ձեզ բնակեսցէ ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ. փոքր միւս ևս, և աշխարհս ոչ ևս տեսա-նէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի Հօր իմում, և դուք յիս, և ես ի ձեզ. որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։ Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէր, զի եղև՝ զի մեզ յայ-տնելոց ես դու զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պատասխանի ետ Յի-սուս և ասէ ցնա. եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևան առ նմա արասցուք. և որ ոչն սիրէ զիս՝ ըզբանս իմ ոչ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։ 24։

Քրոջէ Սրկոսէն. Եւ ևս խաղ։ Վասն ի վերասա։
Եւ պետռնուքեն շնորհատուն և շնչուրհ։
Ապ քուր. Սուրբ խաչիս։ Աղխ. Պահպանեա։
Եւ ի գոռնոլն չեկնեցին, սկոռնէն

ՇԱՐԱԿԱՆ Բ Կ

Երրորդութիւնն անբաժանելի և զօրութիւն։ 763։
Զինի. Նորատունկ։ Քուր. Խնդր։ Կնց։ Ագ. Քամ առ։

ՅԵՐԵԿՈՑԻՆ

ի գոռն չոռն չուղին է գոռոռ եկեղեցոյն. և ասէն

ՍԱՂՄՈՍ ՃԾԲ. Ի ԸՆԾ-

կՅ. Հոգի քո բարի։ Փխ. Տէր լաւ ազօթից։ 761։

ԸՆԾԵՐԳԱԾ Ի ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ, Բ. 1։

Եւ ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին։ 768։

Զ-ինէ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։
Արթոյ Ալեսաբանիս որ ըստ Յովհաննու։ ԺԵ. 26։
Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.
Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից

ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ. և դուք վկայէք, զի ի սկզբանէ ընդ իս էք: Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք. ի ժողովրդոց հերձանց հանիցեն զձեզ: Այլ եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն առնեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր և ոչ զիս: Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք ի ձէնջ հարցանէ ցիս՝ թէ յո՛ երթաս. այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, սրտմտութիւն ելից զսիրտս ձեր: Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ: Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց, և վասն արդարութեան, և վասն դատաստանի: Վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս. վասն արդարութեան, զի առ Հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք զիս. վասն դատաստանի, զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է: Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդուրժել այժմիկ. յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ առնու և պատմեսցէ ձեզ: Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ առնու՝ և պատմեսցէ ձեզ: Ց՚Ղ. 15:

Եւ ելանէն խուխ և աւետարանս և հռիփսիմէ և ամենայն ընդոստ ի քուր, ասելով

ՇԱԲԱԹԱՆ Դ՚Զ

Առաքելոյ ապաւնոյ իմանելով: երէ քան: 763.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ց՚Ղ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Փոքր մի՛ և ոչ ևս տեսանէք զիս, և ապա տակաւին մի՛ և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր: Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր

ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և եթէ ես ա՛ւ Հայր իմ երթամ: Եւ ասէին. զի՞նչ իցէ այն փոքր միւս ասէ. չգիտեմք զինչ խօսի: Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել, և ասէ ցնոսա. վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս զի ասացի՝ թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս ես և տեսանիցէք զիս: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի: Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ: Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր, և զուարթութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ: Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ: Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք՝ և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի: Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ: Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի: Ելի ի Հօրէ՝ և եկի յաշխարհս, դարձեալ թողում զաշխարհս, և երթամ առ Հայր՝ Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտնութեամբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես. այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն, և ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք եթէ յԱստուծոյ ելեր: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. այժմ հաւատայք: Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցըրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է: 32:

ՇԱՐԱԿԱՆ ԴԶ

Կենդանարար Աստուած մարդասէր: Երե- տաս: 763:

Սբրոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ ԺԶ. 33։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի սուր նեղութիւն ունիցիք, այլ քաջ Յաղթեցարուք զի ես յաղթեցի աշխարհի։ Զայս իրրև խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ. որպէս եառուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր եառուր նմա, տացէ զկեանան յաւիտենական։ Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր եառուր ցիս զի արարից. և այժմ փառաւորեա դիս Հայր, առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն։ Յայտնեցի զանուն քո մարդկան, զոր եառուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ եառուր զնոսա, և զբանն քո պահեցին։ Այրդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր եառուր ինձ, եառ նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս։ Այրդ՝ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա զոր եառուր ինձ, զի քո են. և որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է, և փառաւորեալ եմ ի նոսա։ Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, որով եառուր ինձ. զի եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք։ Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով եառուր ինձ. և պահեցի. և ոչ օք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։ Ժէ. 12։

ՇԱՐԱԿԱՆ ՃԶ

Նոյն և նման Հօր և Որդւոյ Հոգւոյ։ Էջ։ թուղ։ 775։

Սբրոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ ԺԷ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուարթութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։

Եւ եաու նոցա զբանն քո , և աշխարհս ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ , որպէս և ես չեմ յաշխարհէ : Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա յաշխարհէ , այլ զի պահեսցես զնոսա ի չարէ : Յաշխարհէ ասաի չեն , որպէս և ես չեմ յաշխարհէ : Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով . զի քո բանդ ճշմարտութիւն է : Որպէս զիս առաքեցեր յաշխարհ , և ես առաքեցի զնոսա յաշխարհ . և ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ , զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ : Ա՛լ ոչ վասն նոցա միայն աղաչեմ , այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս . զի ամենեքին մի իցեն , որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ , զի և նոքա ի մեզ իցեն . զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս : Եւ ես զփառան զոր եաուր ինձ՝ եաու նոցա , զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք . ես ի նոսա , և դու յիս , զի եղիցին կատարեալք ի մի : Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս , և սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր : Հայր , զորս եաուրն ինձ , կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս . զի տեսանիցեն զփառան իմ, զոր եաուրն ցիս . զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի : Հայր արդար , և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ՝ այլ ես զքեզ ծանեայ , և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս : Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից , զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ , և ես ի նոսա : Զայս իրրև ասաց Յիսուս , ել աշակերտօքն հանդերձ յայն կոյս ձորոյն Կեդրոնի՝ ուր էր պարտէզ , յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր : ԺՀ . 1 :

Ե՛ Ա՛ր · Էրոպէ · Եւ ես խաղ : Վասն ի վերուստ :

Ե՛ պետռնութքեն ընդոտոտռան և ընչնարհ :

Զհի քարող · Սուրբ խաչիս : Աղօթ · Պահպանեա :

Ե՛ ի թռռնալն առքռռութն էրոպէ · Եւ ես խաղաղութեան՝ քահանայն · Օրհնութիւն և փառք :

Ե՛ ինռնէն խռնարհեցո և Ապրեցո :

ՄԵՍԵԴԻ յոՂոչքս ՊԷՆռիռռէի ՅարռՂԵռն ի յոյնէն ռռռ՝

ՀԱՄԱՌՕՏԻ ԲԿ

Երրորդութիւնն անբաժանելի և զօրութիւն : 763 :

ՍԱՂ . ճԺ · Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան՝ 571 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ ԺԴ. 15։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ 769։

Քարոզ. Գոհաբանելով։ Կեցո։ Աղջխ. Խաղաղութեամբ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ· ԲՋ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԻՒ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՋ

Նո՛յն եւ նըմա՛ն Հօր եւ Որդւոյ Հո՛գիդ անեզ և համագո՛յ. բըղխումըն Հո՛ր անքննաբար ա՛ռաջ յՈրդո՛յն ա՛ճառատաքո՛ր. ի վերնատունն այսօր ի՛ջեր գՀո՛գիդ ընդ երկո՛ց քոց արբուցեր. ‖ ա՛ստըս և մեզ ողո՛րմութեամբ ի բա՛ժակէդ իմանատութեա՛ն։ Լո՛ւից առեղծո՛ղ արա՛րածոց որ չըքնչեր ի վերոյ ջրո՛ց. նո՛յն և ի ջո՛ւրան աւա՛զանին ի շնորհել մեզ քո՛մ էակցի՛ն. զըգուռս սիրով ազա՛նաղկեալ զմարգիկ ծնանելո՛ս աստուածակերպ. ա՛ստըս։ Բա՛րձրն վերնոյն իմանալեաց և ըստորի՛ն այսըր գգալեանց. որ մարգարէ՛ս ասս ի հո՛վուաց և առաքեալս ի՛ձկնորսանց. աւետաւո՛ր ըզմարքոսո՛ւրս քարոզ բանի քո՛մ զհալածո՛ղս. ա՛ստըս։

† Աստուածեղէն հոգմա՛ն նըմա՛ն ա՛հեզագո՛ղ ասատիկ հընչմա՛նըդ. երեւեցար ի վերնատունն Հո՛գիդ գասուն երկոտասանն. որք անւ ի քէն մըկընքուեցան որպէս գոսկի՛ հրո՛վ մաքրեցան. ‖ մա՛ստքեա ի մէ՛նջ ըզմէ՛գ մեղաց և ըզդեցո՛ ընդ՛ոյս փառաց։ Լո՛ւսեր յերկինս աստուածա՛պարտ գա՛սուդ գաշխարհս լո՛ւսաւորեա՛ր. ընդ ա՛րդարութեա՛ն և ընդ մեղաց և ընդ չարին գա՛սատատանաց. բա՛ցեր ըզդանձդ անհի՛ւթանական պարգեւս եառնո՛ւր որդւոց մարդկան. մա՛ստքեա։

Հայր ան[ը]սկիզբն. որ վերծրհնեալդ ես ի դասուց քե-
րովբէից. ըղքեզ աղաչեմ[ք] || ընդ[ո]րմեա քոյոց հա-
ւատացելոց։ Բանդ ի հօրէ որ յառաջ քան զյաւի-
տեանս որդի. փառակից հօ[ր]ն. ընդ[ո]րմեա։ Որ նըս-
տիս ի քրովբէս եւ սեպհուխեամբ խնամեն զարքայա-
քն. ճշմարիտ սուրբ հոգի[ո]վ ընդ[ո]րմեա։

Ակնեղն ի հօրէ ծընեալ որդի յանէից գոյացոյց զե-
զեալքս. զերկնային և զերկրաւորս էութիւն. || արա-
բա[ծ]ք ամենայն տուք փառս արարչին յաւիտեան[ս]։
Պատկեր անեղութեան փառացըն հօր ի պատկեր բա-
րեբարութեան իւրոյ. արար զմարդկայինն բընութիւնս.
արարած։ Լոյսն ի հօրէ լուսոյ ծագեալ լուսափայլ
զարդարեաց զԱդամ. ի դրախտին եդեալ անմահ տընե-
կոցն երկրագործ. արարած։

Ըստ աւետեաց մարգարէին որ ասէ փըրկեա[ր]քս ա-
րեամբ գառինդ. ցընծամք եւ մեք ծառք անուամբ
ընդ գալուստ Տեառնըդ կըրկնակի. չնորհեա մեզ Տէր
ընդ արդարոցն ընդ առ ի քէն սրընկեալ ծառանդն. ա[ր]ժ-
ժըմ յաւուրն ը գուարճանալ եւ յերկրորդին ընդ փեղ
ցընծալ։ Սըմին նըման տայ անւամբ Զաքարիան նոր
Սիմէն. երթ ձերաքս լեր աչա գայ ահա քեզ թանձրն
եւ հեզ արքայ. ներստեալ ի յիշ և յանանդակ կըրկին
ազանց գոլ օրինակ. ներ[ս]տեալդ յանթոն քերովբէից
նիստ գըթութեամբ ի մեր հոգի[ս]։ Զահեզ փառաց
քոց ներուսին ար լինելոյդ է յերկրորդումն. ետես զա-
րի յառաջագոյն ծանոյց կանխաւ ազգումդ հոգւոյն.
թէ յայտնապէս Աստուած գայցէ հնար առաջի իւր բար-
բոքէ. յա[ր]ուժամ ցիտաս ի մեզ խնայեա գըթած գրիս-
տոս եւ ընդ[ո]րմեա։ Աստուածածին անհանդանագեալ յեր-
կրէ երկինս հառան ընծայեալ. յա[ր]ժամ բազմիս լուսոյ

նըման քո Միածնիդ յաջակողմեան. յայնժամ մաղթեա ընդ մեր ընդնայն փըրկել ընդմէդ յահէդ բոցոյն. համ֊մա֊դանիլ ընդ արդարոցն երգել ըսփոփա ընդ երկնայնոց՝ն։

ԾՆ. Բանն առաքեալ ի Հօրէ֊՛ն՛ եր վանըն մեր մարմնա֊ցաւ֊՛ւ. եւ ցընծութիւն աշխարհի յա֊յտնեցաւ. ‖ ընդ֊քէդ բարեբանեմք Աստուածածնի՝ն կոյս։ Զի սրտմամ ոչըն հանդուրժէ֊՛ն բոցանըշոյլ սերտովբե֊՛ն. նա բնա֊կեցաւ ի փառս յարեվայնի. ընդքէդ։ Յորմէ՛ սաթսեալ գո֊ղայ֊՛ն փայլակնացայտ ի լուսո֊՛յն. ի գիրկըս քո ընդնա ընակաւր. ընդքէդ։

ԱՊ. Օրհնեմք ընդքէդ անըմակիզբըն Հայր. յամենայն ժամ օրհնութիւն ի բարձունս։ Գովեմք ընդքէդ միածի՝ն Որդի. յամենայն ժամ գոհութիւն ի բարձունս։ Բան֊բերանեմք ընդքէդ սուրբ Հոգի. յամենայն ժամ փառք քեզ Աստուած։

Ընդունիմք փառդ. սաղմոսարանաւ եւ քնարիս. օրհ֊նեցէք ընտէրն ի յեկեղեցիս։ Որդիք Սիոնի. ցընծա֊ութեամբ եւ ուրախութեամբ. գովեցէք զՈրդին միա֊ծի՝ն։ Եւ սուրբ գՀոգի՝ն. ամենայն շունչք բարե֊բանեցէք. երգով եւ ձայնիւ ցընծութեա՛մբ։

ՀՆ. Հրեշտակայինն ձայնիւն օրհնեցուք զամենասուրբ պերծրդութիւնըն փառաւորելով ըզՀայր. որ վերակո֊չեաց ‖ զամենեսեան ի մանկութեան յանմահութի՛ւն։ Երդեցէք տեառն երգ նոր երկեցցէք աղրբեցելոց. Քրիս֊տոսի երկրպագելով. որ վերադառնայց զամենեսեան։ Աղրբանայց ձայնիւն օրհնեցուք հոգեւորականն հընչ֊մամբ գովեցուք. սուրբ գՀոգին փառաւորելով. որ վե֊րադարձոյց զամենեսեան։

ՄԾ. Որա խաչեալ Աղրբուհի գաղրէ՛լի աւետեաց. որ փարթամա֊ցան ըզգալո՛՛ւ֊ստա արքային տեառն ի

յերկնից։ Ո՞ղջ ընդ քեզ Մարիամ ի քեզ սուրբ Հոգին եկեսցէ. եւ զօրութի՞ւն Բարձրելո՞ւ յի վերայ քո հովանասցի՞։ — Փառք Հօր։ Ո՞ր ծնանի լոյսն է ի քէն Իսրայէլի առաջնորդ. եւ ը՞նդհանուր քարոզի՞ Աստուած հրեշտ անմահ բանն։

— Այժմ և միշտ։ Ակն ի սիրոյ զսէրդ առաքեանց յինքըն զանդամն իւր քեւ յօդեանց. զեկեղեցի իւր զո՞ր չինեսցէ եօթըն սեամբ քո հաստատեանց. սրընաեա ի նմա եղ զաւաքեալսն եօթնեակ չնորհօք քո զարդարեանց. մա՞քրեա ի մէնջ ըզմէդ մեղաց և ըզկեցո ըզլոյս փառաց։

ՅԱՌԱՒՕՏՕՒ

ՀԱՐՑ ԱՒ

Ո՞ր անխտանալիդ ես յէութեան եւ անպատում Հոգիդ ճշմարիտ. անընկալըզնաբար բըզխուսն ի Հօրէ եւ համագոյակից Որդւոյն միածնի. ‖ օրհնեմք ըզքե՞զ Աստուած հաւրցըն մերոց։ Ո՞ր կատարեալ անձնաւորութեամբ յերից կատարելոց մի և նոյն բնութիւն. սրով ընդ Հօր և ընդ Որդւոյ միշտ երկրպագիս յաւրհնաբանից Հոգի Աստուածոյ. օրհնեմք։ Ո՞ր համապատիւ Հօր եւ Որդւոյ քանզի ըզքեզ անստուածապա՞տն եկեղեցւոյ. յոր միկրթիմք եւ զահաւնեմք համագոյ երրորդութիւն անբաժանելի. օրհնեմք։

Գ. Ընդէր օրհնեցէք ‖ բա՞ց ի՞ծրթր ապարէք զրանչիսըզն չնորհաց։ Եկայք նոր ապրասած ի Քրիստո՞ս նոր բանեւնալք աւտպանաւն ի Հոգւոյն սըրբոյ. բա՞։ Ո՞ր քահանայութիւն վի բանպատուական ի Քրիստոսէ ձեռամբ սուրբ Հոգւոյն. բա՞։

ՄԵՆԱՑՈՒՄՏԷ ԱՒ

Չանճառելի զլոյս աստուածութեանն. անօրինա։ 213։

ՈՂՈՐՄԵԱ ԱԿ

Ո՛ր առաքեցար ի հօրէ՝ հոգիդ անեղ եւ համազոյ. ազաչանօք անօրինաբար քոյդ էակցին լինել մըխիթարիչ սուրբ առաքելոցն. ‖ ազաչեմք ընդքո ոգոյդ սուրբ: Ո՛ր ինքեր ամբարտաւանէ յերկինից սանտիկ հոգմոյ նըմանէն Աստուած յայտնապէս. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի գլուս առաքելոցն. ազաչեմք: Ո՛ր արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեանն զհոգիս պըրծոց քոց առաքելոցն. որք արբուցին տըրամանցելոց որդւոց Ադամայ ըզրաժանին ուրախարար յայգւոյն երկնայ. ազաչեմք:

ՏԷՐ ՑՆՐԿՆԻՑ ԱԿ

Ո՛ր յերկինայինն զօրս անմարմնոցըն նախ հեղեր սուրբ տապէա հոգիդ հըշմարիտ. զաստուածայինն և զգեղեցիկն քո իմաստութիւնդ լինել փառաբանիչ սուրբ երկրպագութեանդ. ընդ ‖ նոսին փառաւորելիք զերրեակ միութիւնդ: Ո՛ր զկերպանքանն աստուածայինն առնել երրորդութեամբ խորհըրդակցութեամբ. զարդարեցեր փըչմամբ շնորհաց քոց կենդանարար. եւ ընդ ձեռամբն առ ի նմանել խօսեցար օրինօք եւ մարգարէիւք. ընդ նոսին: Ո՛ր յերկրպագիդ լինելութեանն յետ յարութեան քում էակցին. մըտանել ի վերնատունն զրօքըն փակեալք շնորհն լիով ըստ առաջին փըչմանն ըզքեզ մեռանելոյ առաքելոցն ասաց առէք հոգի սուրբ. ընդ նոսին:

ՁԻՆՒ Սուրբ Աստուածդ ՍԱՂՄՈՍ ՃԳ. Ի ԸՆԾ-

ԿՑ. Առաքեա զոգի քո և ստեղծցին, և նորոգեա զերեսս երկրի:

ՓԽ. Օրհնեա անձն իմ զՏէր, Տէր Աստուած: 342: Ալէլուիա. ալէլուիա:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՍՈՒՂՈՑ: Ա. 1:

Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր: Եւ

երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնդոց. և Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս: Եւ եղև լոյս. և տեսև Աստուած զլոյսն զի բարի է. և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին. և կոչեաց Աստուած զլոյսն ցերեկ, և զխաւարն կոչեաց գիշեր. և եղև երեկոյ՝ և եղև վաղորդայն, օր մի: 5:

Ընթերցուած Յաւակաց: ՟Բ. 1:

Խմաստութիւն չինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն: Զին զոհելիս իւր, և խառնեաց ի խառնելիս գինի իւր. և պատրաստեաց սեղան իւր: Եւ առաքեաց զծառայս իւր, կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր՝ և ասէ, որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս: Եւ ցպակասամիտսն ասէ. եկայք կերայք ի հացէ իմմէ, և արբէք գինի իմ զոր խառնեցի ձեզ: Թողէք զանզգամութիւն և կեցջիք, խնդրեցէք գիմաստութիւն զի ապրեսջիք. և ուղղեցէք գիտութեամբ զհանճար, և ուղիղ համնապարհս խնացարուք գնացս: 6:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց: ժ. 44:

Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն: Զարմացան՝ որք ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն սրբոյ զեղուին. քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս, և մեծացուցանել զԱստուած: Յայնժամ պատասխանի ետ Պետրոս. միթէ զնուբն ոք արգելուլ կարէ ջուր ի չկրառելոյ զոսոս, որք և զՀոգին սուրբ ընկալան որպէս և մեք: Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ: 48:

Ջ-ՆԽ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Զայն Տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց ո-րոտաց, և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև մկրտեցաւ (Յիսուս), ել վաղվաղակի ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և տեսև զՀոգին

Աստուածոյ՝ զի լինիցէր իրրև զազանի և զայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. զա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ: Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ: Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Դ. 2:

Եբէ. Արարչական: Քոյ. Խնդր: Կնջս: Աղ. Քառ ամե:

ՅԵՐԿՈՑԻՆ

ՍԱՂ. ՃԳ. ԿՅ. Ազաքիս: Փխ. Օրհնեա անձն: 342:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԴ. 15:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք: 769:

ՀԱՄԲԱՐՁԻ ԲԿ

Ամէն երկնայինքն ուրախ: Վեց քառ. քեռ է վայր:

ՍԱՂՄՈՍ ԻԸ

ԿՅ. Զայն Տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց որոտաց, և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Փխ. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ, մատուր: 399:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գ. 16:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ իրրև մկրտեցաւ (Յիսուս), ել վաղվաղակի: 780:

Քոյշ. Գոհաբանելով: Կնջս: Աղջխ. Խաղաղութեամբ:

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ. ԲԿ

ԵՐԲՈՐԴ ՕՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԻՒ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՆ

Ամէն երկնայինքն ուրախանան ընդ երկրաւորացս նորոգմանն. քանզի նորոգողն էից Հոգին Ըստ ի սուրբ վերնատանն. սրով նորոգեցաւ զանազ աւանդելոցն: Ամէն հողանիւթեայ բնութիւնս ցընծայ ընդ Հօր հաշ-

տութեան. քանզի որ երթայ զՀոգին ի մարդկանէ մարմին եղելոց. զարձեալ վերըմտիցէն ընծայն պարգեւէ: Ա՛յսօր մանկունք եկեղեցւոյ ածեն՛ն ցընծութեամբ զգալուստ սուրբ Հոգւոյն. որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս եւ զերապայծառս. երգեն ընդ սրովբէից զերկրաքընթերնե՛ն:

† Ո՛ր զմիաբանեալսն յաշտարակին բաժանեամբ լեզուացըն քակեաց. այսօր ըզրաժանեալ լեզուս այզգոց միաբանեաց դարձեալ ի՛ սուրբ վերնատանն. ‖ ամենայն հոգիք ծրհնեցէ՛ք զՀոգին Ա՛ստուծոյ: Ո՛ր էջ Հոգին Տեառն եւ առաջնորդեաց երկնատանան ցեղիցն Իսրայելի ի յանապատին. այսօր երկրատանան առաքելոցն առաջնորդէ ի յաւետարանն. ամենայն:

Ա՛յսօր անդրիւր գիտութեան բղխեա՛ լ ի սուրբ վերնատունն. յորմէ լըցան աշէգերք գնացի՛ք գետացն առաջնոցն: Ա՛յսօր ի՛ջեալ ի յերկիր. Հո՛ր աւետիքն ի բարձանց. տալ աւետս Աստուծոյ դառնալ յեղեմ վերըստի՛ն: Ա՛յսօր խընդայ նո՛ր Սիոնն. որդւո՛վք իւրովք զո՛ր ծընաւ. ծծմամբ Հոգւոյն նո՛ր պտղեալ յորովայնոյ եւ առընչեա՛ն: Ա՛յսօր ի ձայն զոհութեան. զՀո՛գի՛ն ընդ Հո՛ր և Որդւոյ. հո՛գիք ամենայն ծրհնեցէք զերկնքընթերեանն երգելո՛վ: Ա՛յսօր ցընծամք երկրաւորքս. ընդ գալըստեան երկնայնոյն. եւ պարելով ընդ հրեշտակս երգե՛մք ըզփառս ի բարձունս:

Վ.Ա.Ր · Ո՛ծրհնեցէ՛ք մանկունք ընդ երկնայնոցն ըզՀայրն երկնաւոր. որ մանրամասնեալ բանին. վըկայեաց յերկինս ‖ այսօ՛ր ի՛ թարմ լերմ՛ն: Գո՛վեցէք ընդ աւետվէ՛ն զՈ՛րդին միածի՛ն որ փայլեաց մարմնով. զմա՛ս առաւածութեանն այսօ՛ր: Բա՛րեբանեցէք ընդ քերովբէ՛ն զՀո՛գին ճրշմարիտ. որ լուսափայլ ամպով. Էակցին հովանացեալ այսօ՛ր:

Ի՞ՉՔԵՐ ՏԸՐ ԱՂՈՐՄԱԲԱՆԱՄԲ ՔՈ ՅԱՉԽԱՐՀ. ԵՒ ԸՂՁԵԱԼ ԸՆԴԱԲԻՒՆՆ Ի ԿԵԱՆՆ ՎԵՐԱՓԽԱՆԵՑԵՐ: ԵՒԼԵՐ ՏԸՐ ԱՒՐ ՀԱՅՐ ՓԱՌՔ Ի ՅԵՐԿԻՆՆ. ԵՒ ՄՂԽԻԹԱՐԻՉ ԱՌԱՔԵՑԱՆ ԱՌԱՔԵՑԵՐ ՍՈՒՐԲ ԶՀՈԳԻԴ: ԲԱՑԵՐ ՏԸՐ ԱՅՍՕՐ ԸԳԱՆՁԴ ԵՐԿՆԱՅԻՆ. ԵՒ ԲԱՇԽԵՑԵՐ ԱՌԱՍՏԱՊԷՍ ՊԱՐԳԵՒԱ ԱՂՔԱՆԱ ԸՆԴԱԲԵԱՑՆԱ:

Ո՞Ր ՕՐՀՆԵ՞Ս Ի ՀՐԵՇՏԱԿԱՑ ԱՆԴԱՍԴԱՐ. ՀԱՅՐ ԵՐԿՆԱԻՈՐ ԸՆԿԱԼ ԶԱՂԱՇՀԱՆԱՍ ՄԵՐ: ՈՒ Ո՞ՒՈՄԷ՞ ՔՈ ԱՆԿԱՆԻՄՔ ՓԸՐԿԻՉ. ԽԸՆԴՐԵՄՔ ԶԹՈՂՈՒԹԻՒՆ ԲԱՂՈՒՄ ՅԱՆՑԱՆԱՑ ՄԵՐՑ: ՈՐ ԳԻՏԱԿԴ ԵՍ ԶԱՂԱՆԵԱՑ ՄԻՐԿԱՆ ՀՕԳԻԴ ՍՈՒՐԲ. ՏԸՐ և ԿԵՆԴԱՆԱԲԱՐ ԸՆԿԱԼ ԶԱՂԱՇՀԱՆԱՍ ՄԵՐ:

ԱՊ. Ո՞ՐՀՆԵՑԷՔ ԸՂՏԸՐ ԸՆԴ ԵՐԿՆԱՅԻՆՍՆ ՆԸՄԱՆԵԱԼ ԴԱՒԱՒԳ. ՆԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՔ ԱՍԵԼՈՎ. ՔԱ՛Զ ՀՕՐ ՄԸՈՂԻԴ ՄԻՋ ԸՂԿԱՆՆԸՆ ՓԱ՞ՌՔ: Ե՞ՐԿԵՑԷՔ ՏԵԱՌՆ ԵՐՂ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՔ ԸՆԱԲԵԼՑՆ ՆՈՐՔԻՔ ՍԻՈՒՆԻ՞ ԱՍԵԼՈՎ. ՔԱ՛Զ Ո՛ՐԴՈՑ ՀՆՕՐՀՈՂԻ՛Դ ՄԻՋ: ԲԱՇԲԱՆԵՑԷՔ ԶԱՍՏԱՍԱԾ Ի ԿՔԱՆԵԼԻԱՆ ՍՐԲՐԻ՛ԱՆ ՆԱՐԱ ՁԱՅՆԻՒ ՅԱՆԾՈՒԹԻԱ՞ՄԲ ԱՍԵԼՈՎ. ՔԱ՛Զ ՀՈ՛ԳԵՑԻԴ ԿԱՐԳԵՒՈՂԻԴ ՄԻՋ:

ՀՐԵ. Ո՞Ր ՅԱՆԻՒ Ց ԱՍՏՂԾԵՐ ԸՂԿԱՇՈՒՆԱՅՍ ՔՈ Ի՛ՆՐ ԿԵՂԼՈՒՅ ՀՆԱՐՑ ԱՆԵՂԱԿԱՆ. ԸՆԴ ՆՈՍԻՆ ՕՐՀՆԻՄՔ ԸՂՔԵԶ ԵՒ ՄԵՔ ՀՈՂԵԼ՛ ՆՔԱ: Ո՞Ր ԲԱՆԻ՛Ւ ԳՈՅԱՑՈՒՑԸՐ ԶԻՆՆԻԱԿ ԴԱՌՆ ՀՐԻՂԻՆԱՑ ԲԱՆԴ Ի՛ ՈՒԸՂԲԱՆԻ. ԸՆԴ ՆՈՍԻՆ ԳՈՎԻՄՔ ԸՂՔԵԶ: Ո՞Ր ԱՐԱՐԻ՛Ր ՅՈՂԽ ԻՄԱՆԱԼԻ ԸՂՀՐԵՇԱԿԸՆ ՔՈ՛ ՀՆԳԻ՛ ԱՍՏՈՒԾՈՅ. ԸՆԴ ՆՈՍԻՆ ԲԱՐԻ ԲԱՆԻՄՔ ԸՂՔԵԶ:

ՀՆ. ԹԱՆԳԱՒՈՐ ԽՈՍՈՂՈՒԹԻԱՆ ՈՐ ՔԱՂՑՐԻԹԻԱՄԲ ԽՆԱՄԻՒՆ ԳՔՈ ԳՈՐԾԱԾՈՅ. ՄԻՇԱՀ | ՏԻ՛Ր ԶՀՈՂԻՍ ՆԸՆՋԵՑԵԼՈՑՆ ԸՆԴ ԱՒԵՐԸՆՔ ՔՈ՛ ԵՒ ԳՈՐԾԱՒՈՐԻԱ՛Ր Ի ՅԱՒԻՒՆՆ ԱՅՅԵԼՈՒԹԻԱ՛Ն: Ո՞Ր ԿՈՉԵՑԵՐ Ի ԴՐԱՑ ՄՈՀՈՒ ԸՂՔԵՐԵ-

լին քո զԱզարիա. եւ ծանուցեր զաստուածութիւնդ ընդհանուր տիեզերաց. լուսաւորեա՛ Տէ՛ր։ Ի՛ տա՛ճարի քում սրբութեան մատուցանեմք քեզ պատարա՛ն աբեղտութեանց. պայծառացո՛ Տէ՛ր։

Մ֊ Ո՛ր ողորմեցար ի մեզս ծընեալ մարդկան Հայր երկնաւոր ընտ մարգարէին. և առաւել բնութեանս այսօր պարգեւ բգեղեալն աւրդ բզծնօղ Ո՛րդւոյդ միածնի. ‖ մաղթանո՛ք սո՛րա Տէր մեզ ազօրեա՛։ Ո՛ր ցօղեցեր ի մեզ յամպոյ ծրի՛նաց Որդի՛դ այսօր զկոյսն Մարիամ. յորմէ ծընար մարմնով և բարձեր նովաւ բզմեզս նախաառեղծին Ադամայ. մաղթանո՛ք։ — Փառք Հօր։ Ո՛ր մաքրեցեր Հնգից սաւրբ բզսկիրս եւ զարդա՛ր նզ մեր քո փառակցին. ա՛յսօր ամենայն ծնողաց նորին առաւր բզմայր բանի՛ն զօրհնիչն Եւայի. մաղթանո՛ք։

— Այժմ և միշտ։ Ո՛ր ելից Հոգին Տեառն բզբեմս լեալ ճարտարապետ խորանին. այսօր չինէ՛ զմարդիկ խորա՛ն սաւրբ երրորդութեանն. ամենայն հնգից ծրհնեցէ՛ք զՀոգին Աստուա՛ծ։

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

ՀԱՐՑ Դ֊Զ

Ո՛ր բոլորից ես պատճառ էից անապատճառից և արար պատճառաւ. Հայր աւնծի՛ն եւ աւնբնակի՛դն Որդւոյ պատճառ անժամանակ ծնընդեամբ եւ Հոգւոյ բըզխանո՛ն աւնքբ ննաբար. ‖ օրհնեա՛ Տէ՛ր Աստուա՛ծ հա՛յրըն բ միրոց։ Ո՛ր կամաւ Հօր և սաւրբ Հոգւոյն անեզակից բա՛նդ Աստուած. ի՛ հայրա՛ կա՛ն ծոցոյ իջի՛ր աւետաւեօք Գաբրիելի՛ ա՛ր ըզհնդին բերկրեալ կուսին յորմէ ծընար մարմնով անճառաբար ի՛ Հոգւո՛ն սրբոյ. օրհնեա՛լ։ Ո՛ր մարգարէ՛ից քոց չակեցեր Հոգով յառաջագոյն զպատուա՛ռ քոմ է՛ակցին. եւ ի՛ յորդանա՛ն վը-

* Սկիզբն· տես ի Հնկուցումն, էջ 2։

կայնցեր աղաւնակերպ լինամբ ի վերայ մարմնացեալ Բանին. օրհնեալ:

Գ. Ըզձէր օրհնեցեք բարձր ամբարձք ընդ յաւիտեան: Այսօր համագոյակիցըն չօր են ՈրդւոյՀոգին. հրաժարայլ ծանգամամբ. ինչալ ի վերնատունըն մկկըբառանց ըզդաս առաքելոցն ի հաւրն անկիզելի ըզՁէր: Այսօր արարչակիցըն չօր են ՈրդւոյՀոգին. բընդխառնալ անհիւթական ջուր կենդանի յերուսաղէմ. խնամատուիեան են մաքրութեան մէղաց ըզՁէր:

ՄԵՄԱՅՈՒՍՑԻ Դ

Ուրախացիր Աստուածածին վերթօրհնեալդ ի սրով: 265:

ՈՂՈՐՄՆԱ Դ

Ո՛ր ի վերայ բընդխառնալ գաւազանին ցէսաեայ հանգեաւ ճշմարտին չնորհօք. Հոգի՛ Աստուծոյ եւ խորհըրդոյ. Հոգի հզօրութեան և գօրութեան. Հոգի խնամատուիեան և գիտութեան. Հոգի երկիւղի աստուածպաշտութեան. ‖ աղաչեմք չնորհեա՛ և մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւացդ: Ո՛ր զգուշակեալըն քո եօսէեաւ ելից օծեալն ի քէն մարմնով. ասէ՛ Հոգի Տեառն ի վերայ իմ. զոր ի անօրէնութեանըն խոնարհութեամբ ընթերցեալ որ վանն իւր զրան մարգարէին. աղաչեմք: Որ զառաքեալն առ ի չօրէ եւ ի հոգւոյդ Բանէն յաչխարհ. մարգարէ իւրն ծանեալ զոր ի դիմաց մարգարէըն բարբառէր առ մարդկութիւնս Տէր Տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա. աղաչեմք:

ՏԷՐ ՑՆԵՐԿՆԻՑ Դ

Ընդ երկնայնոց հոգեղինաց գասուցն. հոգւոց առնդծողին երդմք. ‖ վա՛յ ոմանցն ի գալստեա Հոգւոյն սրբոյ: Ընդ առաքելոց խըմբիցն այսօր զուարճացեալ վերապրեմք Հոգւով. վա՛յ Աստանօր վերնա-

տունս. Ամէնիմ որդիք նորոյ երգիցէք ձայնիւ վերնոյն. փա՛ռ։ Ի՛ ձայն ցընծութեա՛ն ամենայն հոգիք տացո՛ւք զմեզ նորոգո՛ղին ըզփառս. փա՛ռ։

Ձ(ԺԴ) Սուրբ Աստուածէ ՍԱՂՄՈՍ Լ՚ · Ի ԵՒ-

ԿՅ · Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

ՓԽ · Ցնծացէք արդարք ի Տէր, ուղղոյ վայելէ օրհնութիւն. խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ, տաւնադեաւ սաղմոսարանաւ սաղմոս տացէք նմա։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր զի բարի է. սաղմոս տացէք նմա օրհնութեամբ։

Ուղիղ են պատգամք Տեառն, և ամենայն գործք նորա հաւատովք են, և սիրէ գողորմութիւն և զիրաւունս Տէր։

Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Ժողովեաց որպէս ի մէկ ղնուրս ծովու, և դնէ ի խորս դանձս իւր։

Երկիւղ ի Տեառնէ ամենայն երկիր, և ի նմանէ դողայցեն ամենայն բնակիչք աշխարհի։

Զի նա ասաց՝ և եղեն, ինքն հրամայեաց՝ և հաստատեցան։

Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց։

Խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ, խորհուրդ սրտի նորա ազգէ մինչև յազգ։

Երանի՛ ազգի որոյ Տէր Աստուած օգնական է նմա, ժողովուրդ զոր ընտրեաց ի ժառանգութիւն իւր։

Յերկինից նայեցաւ Տէր յամենայն որդիս մարդկան, ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի։

Ո առեղծ առանձին զսիրտս նոցա, ի միտ առնէ զամենայն գործս նոցա։

Ոչ թէ ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւոր, և ոչ հսկայ ի բազում զօրութեան իւրում։

Սուտ է ձի ի փրկութեան իւրում, ի բազում զօրութեան իւրում ոչ ապրեցուցանէ զհնծեալն :

Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց, և այք յուսան յողորմութիւն նորա :

Փրկել ի մահուանէ զանձինս նոցա , կեցուցանել զնոսա ի սովի :

Անձինք մեր համբերեցին Տեառն , զի օգնական և պաշտպան մեր է :

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր , և յանուն սուրբ նորա յուսացաք :

Եղիցի ողորմութիւն քո Տէր ի վերայ մեր, որպէս յուսացաք ի քեզ :

Ալէլուիա ալէլուիա :

ԸՓՓերցուած ի ՃՃղոց : Ը . 6:

Եւ եղև յետ քառասուն աւուր երից Նոյ զպատուհան տապանին զոր արար . և արձակեաց զագռաւն , և ել և անդրէն ոչ դարձաւ մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ : Եւ արձակեաց զաղաւնին զհետ նորա՝ տեսանել թէ ցածուցեալ էր ջուրն յերեսաց երկրէ . և չգտեալ ապաւնոյն հանդիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր . զի ջուր դեռ ունէր զամենայն երեսս երկրի . և ձգեաց զձեռն և ընկալաւ զնա , և առ զնա անդրէն առ իւր ի տապան անդր : Եւ զապրեցաց և աւուրս եօթն , և դարձաւ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի . և դարձաւ առ նա ապաւնին ընդ երեկս , և ունէր տերև ձիթենւոյ չիղ ի բերան իւրում . և գիտաց Նոյ , թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ : Եւ զապրեցաց աւուրս եօթն և , և դարձեալ արձակեաց զաղաւնին . և ոչ ևս յաւել դառնալ առ նա : 12 :

ԸՓՓերցուած յԱռակաց : Խ---- . Ա . 5 :

Զի սուրբ Հոգին խնաւտութեան փախիցէ ի նենգութենէ , և մերժեսցի ի խորհրդոց անմտաց , և յանդիմանեսցէ ի հասանել ի վերայ անիրաւութեանց : Զի մարդասէրը Հոգին խնաւտութեան՝ ոչ արդարացուցանէ զհայհոյիչն ի շրթանց իւրոց . զի երիկամանց նորա է վկայ Աստուած , և սրտի նորա ստիկան ճշմարիտ , և լեզուի նորա ունկնդիր : 6 :

ԸՓՓերցուած ի գործոց առաքելոց : ԺԳ . 1 :

Եւ էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք

և վարդապետք, Բառնաբաս և Շմաւոն կոչեցեալն Նիգեր, և Ղուկիոս Կիւրենացի, և Մանայէն դայեկորդի Հերովդի չորրորդապետի, և Սաւղոս: Մինչդեռ ի պաշտամանն Տեառն կային և պահէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍաւղոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա: Յայնժամ պահեալ և ազօթս արարեալ, եդին ձեռն ի վերայ նոցա և արձակեցին: Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելևկիա, և անտի նաւեցին ի Կիպրոս. և հասեալ ի Սաղամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից. ունէին և զՅովհաննէս պաշտօնեայ: 5:

Ջ-ՅԻ- Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, չնչեացն հոգմբ և գնացին ջուրք:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ա. 29:

ՉՏԷՐՆ ՄԵՐ ՅԻսուս ՔՐիստոս

Ի վազիւ անդր տեսանէ (զՅիսուս) զի գայր առ նա, և ասէ. ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է՝ վասն որոյ ես ասէի, զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի լիներիցի Իսրայէլի՝ վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել: Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրև գաղաւնի յերկնից, և հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս. յոր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ Հոգւովն սրբով: Եւ ես տեսի, և վկայեցի եթէ սա է Որդին Աստուծոյ: 34:

Երէ Լսական: Փոշ. Խնդր: Կեցո: Աչ. Փուշ ամենայն:

ՅԻՆՆԵԿՈՅՏԻՆ

ՍՍՂ. ԼԲ. 48. Ողորմութեամբ: Փխ. Յնծացէք: 786:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գ. 16:

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻսուս ՔՐիստոս

Եւ իբրև մկրտեցաւ (Յիսուս), ել վազվազակի: 780:

ՀԱՄԲԱՐՁԻ ԳՁ

Աբեգային արդարութեան Քրիս։ վէց տուն. տես ի վայր։

ՍԱՂՄՈՍ ճԽԷ

կՅ. Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շնչեացին հողմք և գնաացին ջուրք։

, փԽ. Գովեա երուսաղէմ զՏէր, և օրհնեա։ 542։

Արթոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ա. 29։

ՉՏԷՐն մեր Յիսուս Քրիստոս

ի վաղիւ անդր տեսանէ (զՅիսուս) զի գայր։ 788։

Քաջ. Գոհաբանելով։ կենցո։ Աչքն. խազապութեամբ։

ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ · ԳՁ

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳՁ

Աբեգա՞ն արդարութեան Քրիստոս ծանգեալ յաշխարհ համածեաց ընկաւառն ան՞գիտութեան. եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ ա՞ռ Հայր յո՞ր ժէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. ‖ վասն որոյ և մե՞ք ևս երկրպագանեմք Հօր Հոգւո՞վ եւ ճշմարտութեամբ։ Որ փո՞խանա՞կ ծոցածին բանին որ ի՞նչ յերկինս. առաքեցաւ աւետիքն Հոր ի բարձանց Հո՞գի՞ն ճշմարտութեան. մերթեւթանալ զոր յԱդամայ ապրտեցելոց և հրաւիրել զընտրեալ գաւա առաքելոյն. վասն։ Ա՞յսօր արբտամակա՞ն և գիչերայինն լուծանի երկունք ծնընդեան նաւթահանդն. քանզի գծնեալսըն մարմնով ի մահ եւ յա՞պա կանո՞ւթիւն. վերընտիրն ծնանիլ Հոգին յարդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վասն։

† Ա՞ր համագոյդ ե՞ս Հօր և Որդւոյ. ա՞ն ճաոատար

բըզխանումն ի միշտ Ն՛ԷՆ. ա՞յսօր բըզխեն ցեր Ջուր կեն-
դանի յե՛բուսա՞ղէմ ‖ Հոգի՞ Աստուծոյ ադո՞ամբաւ:
Ո՛ր աթարչակից եա Հօր և Որդւոյ. ա՛րթիլ կենդանա-
ծնեալք ի Ջո՛ւրս աբարածք. ա՞յսօր ծրդին Աստու-
ծոյ ծնանիլա ի՞ Ջուրց Հոգի՞:

Հոգիդ ճըշմարիտ. ո՛ր զաստուածայինն ըզհրամանելն
քո զաստածըն դաւթեան լը՞ցե՛ր. աբբուցանելո՛վ ա՛շա-
կերտացն ըզպաբարտութիւն քո՛ ի սուրբ վերնատունն.
ադո՞ամբաւ: Ո՛ր առաքեցար ի Հո՞րէ. կենդանարար
վրտակ և լոյս ճըշմարիտ. աբբուցանելով նոքօք ծրդւոց
Սիոնէի զուղարս փակփակութեան. ադո՞ամբաւ: Ո՛ր կա-
տարեցե՛ր ըզխոստ ցանկութեան սբրտից նոցա. ո՛րք
ըսպասեա՛լ մըննային մեծի գալըստեան քո՛ ի սո՛ւրբ
վերնատունն. ադո՞ամբաւ:

Ո՛ր ի թեւս թե՞թեւս. աննըմա՛ն սաստանեալ եւ հրա-
ցա՞յտըդ սերտվրէն ցվերանբաստեալ տեսչութեամ՛ր խնա-
մեա զաբարանծս. ‖ Հոգի՞ սո՞ւրբ. ծրհնեալ ես յա-
բարածո՛ց քոց: Ո՛ր սբանչելսպա՞ծան. հրաշալի ձայ-
նիս ընդ Հօր և ընդ Որդւոյ միշտ փառաբանին. եւ
քաղցրութեամ՛ր հայիս յաբարանծս. Հո՛, Ա՞յսօր աստուա-
ծային տեսչութեամբ. ի վերնատունն հընչեա՞լ հո՞ղմա-
ձայն հընչմամբ. եւ զաստաբեան սբբուցեա՞լ բաշխեցար
յաբարանծս. Հո՛:

ԱՊ. Ո՛ր սի՞րահարես սո՛ւ ի քէն կարգեալ սընտես
բնութեան մերոյ. իմաստութեամ՛ր ընդարարիս ենթով քո
յոց պարտականաց. թո՛ղ և ըզմե՛ր ընդյանցանս ‖ ադո՛ր-
մութեամբըզ քո՛ Քրիստոս: Ո՛ր զպատմո՛ւճանն սո՛ւրբի
զոր զգե՛ցուցեր օծմամ՛ր Հոգւոյն. մե՛րկացաք մե՛ղաք ըն-
նահաւօրն պա՛տրանաց. զգե՛ցո ըզնո՛ն վե՛ըստին ադո՛ր-
Յաստուածայինն կա՛յծակուսն ի սրտվրէից անընդ-

լինն. անմաքրապէս մերձենալ պարտապան քում խորհըրդոյն. չնորհեա ըզնոյն մաքրութեամբ ի Քո՛ղութիւն մեզաց մերոց: Ո՛ր վանեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ մերինոյն. այլ ետուր զհացըն կենաց կենդանի առաքեալ բանաւորաց. բարեխօսեա՛ մեզ փրիստոս ընդդէմ ըզդիր մեզաց մերոց:

Ըզհաւրն երկնաւոր. օրհնեցէք ընդ հընչեցո՛ղս ձայնս միայն ի Քաղաւոր փառաց: Զո՛րդին միածին. գոհութեամբ բարերանեցէ՛ք ձայր եկին և փըրկեաց ըզմեզ: Զմըխի՛թարիչ սուրբ դՀոգին. ամենայն չունչք բարերանեցէ՛ք ձա՛ր լուսաւորեաց ըզմեզ:

Ուն. Հնգի՛ իմ յամենայն ժամ զքեզ փառաւորէ. ցէր վանըն զի լոյս են հրամանըք քո՛ ի վերայ երկրի: Հնգի՛ քո սուրբ եւ բարի. զէն ինձ փրիստոս եղիցի յամենայն ժամ. ընդդէմ թըշնամւոյն հակառակողին: Հնգուհն սըրբոյ հովանացեալ զքեզ Աստուածածինն մարմնացեալ Հօր հաճութեամբ. զո՛րդին միածին մեզ ի փըրկութիւն:

Այսօր գաւրիսկ ցընծութեամբ երգեաց սըրբո՛յ կուսին աւետիս բերկրեաց ասելով. որ ծընաւ ընդփըրկի՛չ աշխարհաց մերոց: Ա՛նթառելին երկնի եւ երկրի. ի կուսակա՛ն արգանդէ՛ մեզ կամ՛նք յայտնեցաւ. Աստըւա՛ծ պցելո՛ւ մարդկան: Յառաջընթաց փայլմամբն լուսաւորել ասաւեն. մեզո՛ւցըն հնաւորելով նընչանիլ. ի ծընո՛ւնդ Աստուածորդւոյն:

Ա՛նըակըրնական բանին Հո՛ր ըզնա՛ կարան. տա՛ճար եւ անապատ ա՛ղի անեսանելի լուսոյն. զքեզ ը մեծացուցանեմք արըժանապէս երգով Աստուածամայր եւ կոյս: Յորմէ կենդանասաղծեալք յանեղէն հաղորդեցան ամենայն ըզարկանքս. աղաչեմ սը-

զայացաւ յորո՞վ ևս՞ կին քառ. և ձընաւ առ ի քէն մար-
մնացեալ Աստուածըն ը բոլորից · ‖ զքեզ ը մեծացու-
ցանելիք արքայ նահապէս երդով Աստուածամայր և
կոյս : Յորմէ զարհուրեալ դողալին զանք վիրէն զը-
ւարթնոցն . ազգայապէս առ ընկալեալ բարեձեր ի
դիրկս . և աբրահամեր որպէս մայր բնասցնողին զքեզ
ըզկնաւակն քո սուրբ ը զկաթն . զքեզ :

Թշ · Ի՛ խանչանիլ փայտէն զընդերձեցան զը-
ժոխք · զնթաքեամբ սուրբ Հոգւոյն ներթագեցաւ երկիր . ո՞վ է սա
‖ որ խափանեաց զմեզ : Հրեշտակն առեալ կուսին
Մարիամու . սա է ի սկզբանէ բանն որ յառաջ քան
զյաւիտեանս Որդին . սա՛ է թագաւորն որ : — Փառք
Հօր : Յարեա՛ և յաւուր երրորդի՝ վեհմիք պատառեցան
երկիր շարժեցաւ սահանեցան դրժոխք . սա՛ է կենդա-
նին յաւիտենից Քրիստոս :

— Ա՛յժմ և միշտ : Ո՛ր փառակից ես Հօր և Որդւոյ .
և քննես զսխո՛րհս Աստուծոյ . ա՛ր յայնր խորագէտս
իմաստից զյիմարս աշխարհի արա՞րն ը Հո՛գի Աստու-
ծոյ մղո՛ս բանս :

ՅԱՌԱԽՕՏՈՒ

ՀԱՐՑ ԴԿ

Ո՞ր անբընեին ես յէ՛ն քեամն համնգոյ երրորդու-
թի՛ւն . երկբընբրեան մի աէրութի՛ւն միով բնութեամ
աստուածութի՛ւն . ‖ զքե՛զ բա՛նբանեմք Աստուած
հա՛րցըն մերոց : Ո՞ր ես պատճառ Որդւոյ ծնընդեամբ
Հայր յառաջ քան զյաւիտեանս . յորմէ Հոգի՛դ ճառագայ-
թեալ ա՛նորիչ բաժանեամբ . զքե՛զ : Ո՞ր էակից ես
Հօր Որդի լոյս ի լուսոյ ծագումն անճառ . անեղակից
սուրբ Հոգւոյդ Հօր և Որդւոյ հաւասար . զքե՛զ :

Գ · Ըզցէր օրհնե՛ցէք ‖ բարձր ա՛րարէ՛ք զրբզխաբեր

ի հօրէ։ Աստ յոջ ամենայն հոգիք բանաւորաց. սուրբ գէնգին ճշմարտութեան եր բոցաշունչ լեզուօք ահեղագոչ սաստիկ հոգմոյ հընչմամբ ի յերկինս. երկնեցէք ի ձայն գնհութեան բարձր։ Աստ յոջ քահանայք եկեղեցւոյ. սուրբ գէնգին կենդանարար եր բանիւք առաքեալս զրազմապատիկ պարգեւս յինկեղեցիս արգարս. գովեցէք հոգեւոր երգով բարձր։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԴԿ

Չքեզ Աստուածածին. աղբիւր անապատ լուսոյն։ 282։

ՈՂՈՐՄԵԱ ԴԿ

Աղբիւր կենաց բաշխող չնարհաց Հոգի իքեաւ ի բարձանց. զանապականն պարգեւս քո բաժանեցեր յաւրհնեալսն։ Եր ի վերայ Յուրցըն գոլով առեղծանէիր զարբանածս. իքեաւ ի Յորդանանէ՝ն ծնանիս արդիս Աստուածոյ։ Ո՞ր զարդարեաւ նորոգես մերս ընդ զինար քո զեկեղեցի. պէս պէս չնորհաց քոց պարգեւօք փայլեցեր մանկանցըք սրբոյ։

ՏԷՐ ՑԵՐԿՆԻՑ ԴԿ

—Հոգիք հրեղինացն. այսօր ասնէն ընդ մեզ ընդհանուր Հոգւոյն Աստուծոյ։ —Տեսանողն յառաջ. նըշանակէր զառաստարուղս վրտակ խնառոյց ի մեզ հեղեալ ի Հոգւոյն։ —Վէմըն Հաւատոյ. զմայլեալ անմահականն բաժականն. այսօր բաշխէր ծարաւեացդ։ —Գինասցս այս գնացուք. ցընծայ քաղաքն Աստուծոյ Սիոնի մայր եկեղեցի։ —Վանն սրոյ և մեք. ի բրեանկ և մի աստուածութեանն երգեմք ընդհանս ի բարձունս։

ՁԱՅՆ Սուրբ Աստուածին ՍԱՂՄՈՍ ԽԴ. Է ԸՆԴ-ՀԱՆ. Վանն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո, իպզով ուրախութեան առաւել քան զընկերս քո։

ՓԽ. Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս բարիս։ 359։

Ալէլուիա. ալէլուիա։

ընթերցուած յառաջին թագաւորութեանց : ԺԶ . 12 :

Եւ ասէ Տէր ցՍամուէլ . արի օծ զԴաւիթ , զի դա է բարի : Եւ առ Սամուէլ զեղջիւրն իւղոյ , և օծ զնա ի մէջ եղբարց իւրոց : Եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ և առ յառաջ . և յարեաւ Սամուէլ և գնաց յԱրիմաթիամ . և Հոգի Տեառն վերացաւ ի Սաուղայ , և խեղդէր զնա այս չար ի Տեառնէ : 14 :

ընթերցուած ի Զաքարիայ մարգարէէ : ԺՐ . 8 :

Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր առնեայն բնակչաց Երուսաղեմի . և եղիցի որ տկարն իցէ ի նոսա յաւուր յայնմիկ՝ իբրև զԴաւիթ , և տունն Դաւթի՝ իբրև զտունն Աստուծոյ , իբրև զհրեշտակ Տեառն առաջի նոցա : Եւ եղիցի յաւուր յայնմիկ խնդրեցից բառնալ զամենայն ազգս եկեալս ի վերայ Երուսաղեմի , և հեղից ի վերայ տանն Դաւթի և ի վերայ բնակչաց Երուսաղեմի հոգի շնորհաց և պաւթեան : Եւ հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն , և կոծեսցին ի վերայ նորա կոծ իբրև ի վերայ սիրելւոյ , և աշխարհեսցեն աշխար իբրև ի վերայ անդրանկան : 10 :

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս : Դ . 1 :

Զայս ասեմ . ցորքան ժամանակս ժառանգն տղայ է , չէ ինչ առաւել քան զծառայն , թէպէտ և տէր իցէ ամենեցուն . այլ ընդ հսկայութեամբ է և ընդ գաւառապետօք՝ մինչև ի ժամանակակէտ հօրն . նոյնպէս և մեք մինչ տղայքն էաք , ընդ տարերսք աշխարհիս ի ծառայութեան կայաք : Այլ իբրև եկն լրումն ժամանակին , առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղև ի կնոջէ , և ի մուտ ընդ օրինօք . զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն գնեսցէ , զի մեք զորդեգրութիւն ընկալցուք : Եւ զի էք դուք որդիք , առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր , որ աղաղակէ աբբա , Հայր . այսուհետև չես ծառայ , այլ որդի . եթէ որդի , և ժառանգ Աստուծոյ : 7 :

Զատիկ՝ Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա .

Որպէս իւղ զի ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի , ի մօրուացն ի պատանս զգեստուս նորա :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ա. 18 :

Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս : Խօսեալ ըզմայր նորա Մարիամ Յովսեփու , մինչչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ : Եւ Յովսէփ այրն նորա , քանզի արդար էր , և ոչ կամէր առակել զնա , խորհեցաւ լռելեայն արձակել զնա : Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ , ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեցաւ նմա՝ և ասէ . Յովսէփ՝ որդի Դաւթի , մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո . քանզի որ ի նմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է . ծնցի որդի , և կոչեսցես զանուն նորա Յիսուս . զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց : 21 :

եբր . խաւարն : փ–ր . խնդր : կեցո : Աչ . զամ ամենա :

ՅԵՐԿՈՅԻՆ

ՍԱՂ . ԽԴ . կՅ . Վասն այսորիկ : ՓԽ . Բղխեսցէ : 359 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : Ա . 29 :

ՉՏԷՐՆ մեր Յիսուս Քրիստոս

Ի վաղիւ անդր տեսանէ (զՅիսուս) զի գայր : 788 :

ՀԱՄԲԱՐՁԻ ԳԿ

Չանակզրնաբար բղխումն : Քէց գոռ : 796 :

ՍԱՂՄՈՍ ՃԼՔ

ԿՅ . Արդէս իւղ զի լինիլ ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի , ի մօրուացն լինիլ ի գրասպանս զգեստուս նորա :

ՓԽ . Չի բարի կամ զի վայելուչ , զի բնակիլն եղբարք ի միասին :

Արդէս իւղ զի լինիլ ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի , ի մօրուացն լինիլ ի գրասպանս զգեստուս նորա :

Արդէս ցօղ զի ցօղէ ի Հերմոնէ , ի վերայ լերինն Սիովնի :

Անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն , և կենդանի յաւիտենից :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : Ա. 18 :

Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս : գոռ ի Քէց :

Քաջաղ· Գոհարանելով: կեցո: Աղաչե· Խաղաղութեամբ:

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ · Գ Կ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԻ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Գ Կ

Զանընակընկրնաբար բըզխաւմն ի չօրէ՛ զշնգին հըչմա-
բի՛ա . ո՛ր հընչմամբ ձայնի՛ էջ ի վերնատունն այսօր
նըմա՛ն տաճարիկ հոգւոյ . ‖ զո՛ր փառաւորի՛մք հնգեւոր
երգո՛վ: Ջհամագոյակիցըն հօր եւ Որդո՛յ զրաչխնդրն
չնորհա՛յ . ո՛ր ի հրեղէն լեզուս բաժանեա՛լ զրա՛նն ըն-
տութեան լեզուաց չնորհեա՛ց սուրբ առաքելոցն . զո՛ր:
Զանդրիւրն ի՛մաստութեան բզկնատրեա՛լն անձնատուրու-
թեամբ . ո՛ր խօսեցա՛ւ չօրէնս և ի մարգարէս եւ չա՛ւե-
տարանս . զո՛ր :

÷ Այսօր ցընծա՛ն զանաք առաքելոցըն գալըստեամբ
Հնգունն Առուածոյ . զո՛ր մըխիթարեա՛ց վհատնակ բա-
նին մարդկացելոյ եղեա՛լ ընդ նոսա՛ . ‖ փառըն տացուք
նըմա՛ սըրբատաց ձայնի՛ : Այսօր բըղխեա՛ց չուր կեն-
դանի յերուսաղէմ յորմէ լըցա՛ն գետք անտուաժայինք·
եւ ընթացեա՛լ արբուցին ամենքեան զքաւանվըտա՛կ անդ-
բիւրն եղեմայ . փառըն :

Ա՛Պ . Օ՛րհնեմք բզգեզ անըմկիզրըն Հայր Որդւոյդ
մըճաճնի . զո՛ր առաքեցեր ի զարձուածն մոլորեալ աչխա-
րին . զարձո՛ւ եւ զմեզ ի մեզաց Որդւոյ քո չարչա-
րանո՛ք : Գովեմք բզգեզ բան եւ լոյս որ զոհրական
քո պատկեր լուսով հրաչի քո զբաեալ վերնականգնե-
ցո՛ր . կանգնեա՛ զանկեալքըս մեզօք քոյի՛ն սուրբ
չարչարանո՛ք: Բարեբանեմք զփառակիցըդ Հօր զՀոգի

ճըշմարիտ . օր նորոգեցեր ընդ նահատակսն մեղօք հընձն Ադամայ . նօթոգնա՞ եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո չնորհա՞ց : Որ բարեխաչիր բարձրելոյն հոգա նացեալ պօրութեամբ եւ բնա կարան սուրբ Հոգւոյն որով ծընար գԲաննն Աստուած . բարե՛ւ՝ խօսեա վանըն մեր Աստուա՛ծածին Մարիա՛մ :

Զանընակիզըն Աստուած գՀայրն ամենակալ . բարեբանեցէք ընդ զուարթունս երկնից : Զան ի չօրէ ծընեալ գՈրդին միածին . բարեբանե՛ցէք հրեշտակայինն ձայնիւ : Եւ գնորոգող սուրբ գՀոգին ձայնիւ ցընծութեամբ . բարեբանե՛ցէք անլռելի ձայնիւ :

Ա՛նընակիզըն Աստուած և թագաւոր երկնաւոր . բարե՛բանեա՛լ ի զօրաց անմահից երկնաւորաց . ընդքեզ օրհնեմըք Հայր անընակիզըն : Խընաարհեցար ի բարձանց վանըն մերոյ փըրկութեան արձակիչ կապելոց եւ բժիշկ հնգուց մերոց . ընդքեզ գովեմք Որդի՛ միածի՛ն : Ո՞ր էակից ես ընդ չօր և վանակից Միածնի՛դ բաշխա՛ղ պարգեւաց եւ արուեստ ողորմութեան . ընդքեզ բարեբանեմըք սուրբ Հոգի՛դ ճըշմարի՛տ :

Ո՛վ . Ո՛ր ընհա՛ւր աստուածութեա՛ն զո փրխատն . բո՛րոտեցեր ընդ տիեզերս անմեղա՛ն . ըզցանկիսկեա՛լ ըզբընաւթիւն թըշնամւոյն : Ի յայդուհին անմահութեա՛ն եղեմայ . ճաշակե՛ցին զաւգ առաքելո՛ն . զրաժակ կենաց զոց Տէր և մեզ արբուցի՛ն : Զաւ՛ճառ անճապաղա՛ն բանին չօր . բարեբանեն զաւգ հոգեղինա՛ն . գՀՀեմք և մեք ձայնա՛ կցելով երկնայնոցն :

Աստուածաստուն խընկաձեր ծա՛ռ յանուշահո՛տ բուրաստա՛նէն ո՛ր ի գնա՛՝ցս չոգւոյն վըտակաց ոռոգեալ . եւ զանմահութեան պըտուղն ի ժամու ե՛ռուր մե՛զ . վան որոյ ամենեքեան ընդքեզ միշտ մեծացուցա-

նե՞մք։ Զա՞նազանական բազբնչն. յանասուածայինն դրախտն յորովայն քո՞ տը՞նկեալ բըղխեցե՞՛՛ր յանմահացոյն ցնծասնայ ծաղիկ վայելչուչ կռուական ծնը՞նդեա՞մբ. վասն որոյ անմնեքեանն ըզքեզ միշտ մեծացուցանե՞մք։ Յաղթութ՛ն լուսոյ ծագումն ի քեզ վառեաց ըզծրագ մարմնոյն լո՛յս աչխարհի՛ սրով զտեա՞՛լ զպատկերն իւրական զոր վերըստին նորոգեաց յառաջինն կերպարանն. վասն որոյ բարեխոսեա՝ նորոգել ըզմեզ ի հնութենե՛ մեզա՛ց։

Ծն. Ծա՞ռ կե՛նաց տընկեալ յարդեն սուրբ կոյս. որ ըզհայրապատճ՛ռնըն բըղխեցեր գծագրե՛կ եւ ետա՛՛ւր ի ժամու գործին պըտուղ մարդկան. զորոյ զմարմինն ճաշակեալ անմահացան յառնով. ‖ վասն որոյ օրհնարանեմք ըզքեզ յաւուր քո ծնը՞նդեա՞ն։ Բանակաւոր երկիր Տիրոջ եւ անզատանա՛ն մնքուր ի փչոց մեղաց որ ըզբա՛՛յան երկնային առանց սերման ծընար. որով զկենդանին եառւր ըզհաց անվեալ բնութեանն. վասն։ Ա՛մպ թեթև յերկրային ցանկութեանց սուրբ կոյս եւ վառարան աստուածային բոցոյն որ ըզցո՛՛ղն համբառնուղ անձրեւեցեր ի բանական երկիր. որով բնութեանս բնաւն արդարութեան սուրբ բոյս. վասն։

Հն. Լեառնըն վիսանձին ազրիւր յորդառատ. բանալ նակ ծաղկեալ այգի վայելչուչ արուարձ հոգեղէն. բարբառոյ բանին ան՛ն անօրինութեա՛ն տապարաւ Հոգւոյն. ‖ սո՛ւ ծընեալն ի քե՛ն միշտ բարեխոսեա՝ անդադար հայցմանմ. չնորհել զթո՛ղութիւն մե՛ր նըշխլոց՛ն։ Փախիկութեան դրախտի՛ն բացող բանալի. քրիստոսի՛ բարձող նըմանող երկնից. առփար ոսկեղէն լի մանանայիւ. զաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ առաջի՛ր լուսոյ մայր. սո՛։ Ցօղ քաղցրաժաւալ ցանկալի զաւրինացն. նեխութեղէն արուարձ գեղ մարգարտափայլ

հինն Եկեղեցւոյ. մանաւանդ անդամներ անոր հոմանուագ առաքեալ կոչեալ Մարիամ. ամէն:

ՄԲ. Աստուածածնին խորհուրդն լուսոյ. անվայրապիակ արիւնէն կենաց որ եղեր արեւակայեալ արեգականն արդարութեան. եւ ընդառելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. ‖ վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Նահապետն տառապեր. եւ մարգարէ անկիզելի որ զանչէ՞ջ հուր աստուածութեանն ի քեզ տարեալ կրեցեր. արտով բնութեանս կիսեալ չկրցաւ բոց. վասն: — Փառք Հօր: Կենդանի տաղաւնակ. կամակարանաց նորոյ ուխտիս որով ե՞լ յերկիր աւետեաց հորդեալ. Հոգւով ի քեզ ալպատարեալ բանին. վասն:

— Այժմ և միշտ: Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց Հոգւոյն զուարթացաւ բոյսք Եկեղեցւոյ. պարտաւանն զաշտաք արդարութեամբ եւ գեղեցկացան անապատք մանրիք կուսութեամբ. փառքն ասցուք նմանի ընբրանաց ձայնիւ:

ՅԱՒԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ ԲԿ

Ա՞նէզանելիկ Աստուած եւ եղեւ լոյս էա՞կ. որ առաքեցեր յաշխարհ զանեղականց քո զՀոգիդ ի փառս մեծին Որդւոյ քո. ‖ օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց: Ծագումն ի Հօրէ անեռաձ ծընընդեա՞մբ. որ Հաւր մըխիթարիչ առաքեալոց քոց սրբոց զՀոգիդ քո սուրբ բանիւ գոլով. օրհնեալ: Հոգիդ Աստուծոյ անեղ էութիւն. կամարեալ անձնաւորութեամբ և կամարար բոլորից ընդ Հօր և ընդ Որդւոյ միաւորեալ բնութեամբ. օրհնեալ:

Դ. ԸզՏէր Աստեղծ հոգիդ զՀոգին սուրբ գովեցէք զՀակիւոցըն Հօր և Որդւոյ. երկրպագեալ ձայնիւ:

Ընդհուպն երկնային զարկեա՛լ բանին յերկիր բանա՛ւոր. ար մըկըրտեա՛ց այսօր զառաքեալսն ի սուրբ վե՛ր-նատունն ‖ ամենայն հոգի՛ք գՀոգին սուրբ զովեցէ՛ք զկակի՛ուցըն Հօր և Որդւոյ. երկի՛նքըրրեան ձայնիւ։ Ցե՛-լոյն ի Հօրէ՝ զառաքա՛նըրուխս անդրիւրն խմնա՛ւիցդ. ար խօսե՛ցան ընդհին և նոր՝ օրէ՛նս Աստուծոյ. ամենայն։

ՄԵԾԱՑՈՒՄՑԷ ԲԿ

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ. երկիր բա։ 222։

ՈՂՈՐՄԵԱ ԲԿ

Ի՞նչեր տէր ա՛զգ-բանութեանդ քո՝ յաչխարհ. և՛ ընդ-առա՛ջ բընաւթիւնս ի կեա՛նս վերադարձեցեր։ Եւ՛ր տէր աս Հայր փառաւո՛ր ի յերկի՛նս. եւ մըխիթարի՛չ առաքե-լո՛ցն առաքեցեր սուրբ զՀոգի՛դ։ Բա՛ցեր տէր այսօ՛ր ընդանձդ երկնային. եւ բաշխեցեր առատապէ՛ս պար-գե՛ս ա՛զգքան բընաւթեա՛նս։

ՏԷՐ ՑՆԵՐԿՆԻՑ ԲԿ

Ա՛յսօր ա՛զգիւր գիտութեան բըղխեա՛լ ի սուրբ վե՛ր-նատունն. յո՛րմէ լըցան տի՛եզերք գնացի՛ք գեառո՛ց առաքելո՛ւմբ։ Ա՛յսօր իջեա՛լ ի յերկիր. Հօր աւետիքն ի բարձանց. տա՛լ աւետիս Ա՛ստուծոյ գառնա՛լ յերդիմ վե՛-րըստի՛ն։ Ա՛յսօր խըն՛նդայ նոր Սիո՛ն. որդւո՛վք իւ-րո՛վք զո՛ր ծընա՛։ ա՛ծմամբ Հոգւոյն նո՛րոգեալ յորդի՛ն լուսոյ եւ տուընջեա՛ն։ Ա՛յսօր ի ձայն գոհութեան. զՀոգի՛ն ընդ Հօր և Որդւոյ. հո՛գիք ամենայն օրհնե՛-ցէք զերկի՛նքընդրեանն երդեցո՛ւ։ Ա՛յսօր ցընծամբ եր-կրաւո՛րքս. ընդ զաւդասեան երկնայնոյն. եւ պարելով ընդ հրեշտակս երգե՛մբ ըղխնաս ի բարձո՛ւնս։

ՁԻՒՒ Սուրբ Աստուածդ ՍԱՂՄՈՍ ԺԸ. Ի ՊԻ-

43 · Յանկալի է նա քան զոսկի և քան զականս պա-տուականս բազումս, քաղցր է նա քան զմեղու խորիսխ։

ՓԽ. Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

Օր աւուր բղխէ զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն։

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Յարեւու եհար զխորան իւր, և ինքն որպէս փեսայ ել ելանէ յառագաստէ իւրմէ, ցնծայ նա որպէս ակայ յընթանալ զճանապարհս իւր։

Ի ծագաց երկնից են ելք նորա, հանդիպառ նորա մինչև ի ծագս նորուն. և ոչ ոք իցէ որ թաքիցէ ի տապոյ նորա։

Օրէնք Տեառն անբիծ են և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ, և իմաստուն առնէ զպզտիս։

Արդարութիւնք Տեառն ուղիղ են և ուրախ առնեն զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց. երկիւղ Տեառն սուրբ է և ճշմարիտ յաւիտեան։

Դատաստանք Տեառն ճշմարիտ են, և արդար է նոյն։

Ցանկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս բազումս, քաղցր է նա քան զմեղու խորիսխ։

Զանգի ծառայ քո պահեցէ զայս, ի պահել նմա հատուցումն բազում։

Զյանցանացն իւր ո՞վ կարէ առնուլ ի միտ. ի զաղանեաց իմոց սուրբ արա զիս Տէր, և յօտարէն պահեա զծառայ քո։

Այս թէ ոչ տիրեացեն ինձ, յայնժամ անբիծ եղէց, և սուրբ եղէց ի մեծաց մեծաց։

Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քոյ յամենայն ժամ, Տէր օգնական իմ և փրկիչ իմ։

Ալէլուիա. ալէլուիա։

ԸՍՔԽԵՐՑԱԾ ՅԻՆԻՑ։ Լ. 22։

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. և դու այս քեզ խնդիս անուշանաս, ծագիկ ընտիր զմբռնեսցես հինգ հատիս սիկղ, և կինամոմոն զանայչ զկէս այնորիկ երկե-

բիւր և յիսուն, և զիսունկեղէնն զանոյշ երկերիւր և յիսուն, և հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն, և իւղ ի ձիթենեաց հիմնաւ միով: Եւ արասցես զայն իւղ յօծումն սրբութեան, իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործի, իւղ յօծումն սրբութեան լինիցի: Եւ օծցես ի նմանէ զխորան վկայութեանն, և զտապանակ վկայութեանն և զսեղանն և զամենայն զկահ նորա, և զաշտանակն և զամենայն զկահ նորա, և զսեղան խնկոյն, և զսեղան ողջակիզացն, և զամենայն զկահ նորա, և զաւազանն և զյաստակ նորա: Եւ սրբեսցես զնոսա, և եղիցի սրբութիւն սրբութեանց. ամենայն որ մերձենայցէ ի նոսա՝ սրբեսցի: 29:

Ընթերցուած յԱռակաց: Խոհ. ք. 13:

Չի ոմն է մարդ՝ որ զիտիցէ զխորհուրդս Աստուծոյ, կամ ոմն ածիցէ զմտաւ թէ զինչ կամիցի Տէր: Չի խորհուրդք մահկանացուաց զանգիտօղք են, և զաղփադիսն հնարագիտութիւնք մեր: Չի մարմին եղծանելի՝ ծանրացուցանէ զոգի, և հակէ հողեղէն յարկս զմիտս բազմահոգս: Եւ հաղիւ նկատեմք զերկրաւորս, և որ ինչ առաս կացցէ՝ աշխատութեամբ գտանեմք: Իսկ որ ինչ յերկինս է՝ ոմն քննեսցէ. և զխորհուրդս քո ոմն գիտացէ, եթէ ոչ դու եառեր իմաստութիւն, և առաքեցեր զսուրբ Հոգիդ քո ի բարձանց: Եւ ապա ուղղեցան շաւիղք երկրաւորացս, և գՀաճոյս քո ուսան մարդիկ, և իմաստութեամբ քով փրկեցան: Նա զնախաստեղծն՝ գՀայրն աշխարհի զմիայն հաստատեալ պահեաց, և փրկեաց զնա ի յանցանաց իւրոց, և եառ նմա զօրութիւն ունելոյ զամենայն: ժ. 2:

Ընթերցուած ի Գործոց առաքելոց: ժթ. 1:

Եւ եղև՝ մինչդեռ Ապողոս ի Կորնթոս էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմանիքն՝ և իջանել յԵփեսոս, և գտանել զոմանս զաշակերտս. ասէ ցնոսա. եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն: Նոքա ասեն ցնա. այլ և ոչ թէ Հոգի սուրբ գոյցէ՝ լուեալ է մեր: Եւ ասէ. ընդ յո՞ր մկրտեցարուք: Նոքա ասեն. ի Յովհաննու մկրտութիւնն: Եւ ասէ Պաւղոս. Յովհաննէս քարոզեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն, և ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն

ցեն, այս ինքն է՝ ի Յիսուս Քրիստոս: Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի: Եւ ի դնել ի վերայ նոցա Պաւղոսի զձեռն, եկն Հոգի սուրբ ի վերայ նոցա. խօսէին լեզուս և մարգարէանային, և էին ամենեքեան արք իբրև երիսունաւն: 7:

Զ–ԺԲ– Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Գնացք գեաց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ի. 19:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ էր երեկոյ ի միաշաբաթիւջ աւուրն, և դրօք փակեալք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահիւն հրէից, եկն Յիսուս և եկաց ի մէջ նոցա, և ասէ ցնոսա. ողջոյն ընդ ձեզ: Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռս և զկողն իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր: Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրև ասաց, փչեաց ի նոսա և ասէ. առէք Հոգի սուրբ. եթէ ումիք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրբաք ունիցիք, կալեալ լիցի: 23:

Երէ ձառագայթ: Ք–Ր. Խնդր: Կեցո: Աչ. Քամ ամն:

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ՍԱՂ. ԺԸ. կՅ. Յանկարծ է: Փխ. Երկինք: 800:

Արբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Ա. 18:

Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեալ: 795:

ՀԱՄԲԱՐՁԻ ԴԶ

Անճահաբար բաժակ հեղեալ յերկինից: Ճշ Քոշ: 804:

ՍԱՂՄՈՍ ԽԵ

կՅ. Գնացք գեաց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն:

Փխ. Աստուած մեր ապաւէն և զօրութիւն, օգնական ի վերայ նեղութեանց որ գտին զմեզ յոյժ:

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ի խառնել երկրի, ի փոխեալ լերանց ի սիրտ ծովու:

Գայլեցին և խռովեցան ջուրք նոցա, խռովեցան լերինք ի զօրութենէ նորա ։

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն ։

Աստուած ի մէջ նոցա՝ և նոքա մի սասանեսցին, օգնեսցէ նոցա Աստուած ի վաղորդայնէ մինչ ի վաղորդայն ։

Խռովեցան հեթանոսք, և խոնարհ եղեն թագաւորութիւնք. եա զձայն իւր Բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր ։

Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է մեր Աստուած Յակովբայ ։

Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ սարսո զնչանս և զաբուեսաս ի վերայ երկրի ։

Եհար զպատերազմ ի ծագաց մինչ ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զրէնս խորտակեաց և զասպարս այրեաց հրով ։

Կանխեցէք և ծանեարուք զի ես եմ Աստուած. բարձր եղէց ի հեթանոսս, և բարձրացայց ի վերայ երկրի ։

Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է մեր Աստուած Յակովբայ ։

Սրբոյ Աւետարանէս որ ըստ Յովհաննու ։ ի. 19 ։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթիւն աւուրն, և դրօք 803 ։

Քարոզ. Գոհաբանելով ։ կեցո ։ Աղօթ. խաղաղութեամբ ։

ՈՒՐԲԱԹ · ԴՋ

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԻՒ

Ի ԳԻՇԵՐԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴՋ

ՇԱԲԱԹ

Սրբոց հարիւր եւ չիսուն հայրապետացն Կոստանդնուպոլսի Ս· Ժողովոյն

Ի ԳԻՇԵՐԻ ՕՐՀ. ԳՁ· Ա.յսօր սրբոց հայրապետ: 934:
ՅԱՌԱՒՕՏՈՒ ՀԱՐՑ ԳՁ· Ո.ր էիր յառաջ քան զյս: 938:
ՄԱՆԿՈՒՆՔ ԳՁ· Ո.վ հրաշալի նախահարք միշտ: 939:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ Աստուած· է ԸՆ:
ՀԱՄԲԱՐՁԻ ԴԿ. Բանն որ ընդ Հօր: Եօթն տուն: 185:
Քար· վանն խաղ: Աղ· Հայր զթած: փխ· Աստ օրհ:
Քար· խնդրեսցուք: կեցո· է ԸՆ: Աղ· Թագաւոր խա:

Ես յորժամ զհամբարձին ունէին, յիքն զվարթոյսն ընդդէմ խոբանին, յօրինակ արտաւնելոյն Աբրահամ է դրախտին, և ճայ անբաց՝ ինձ է Գաղատա յորոմնեան շքեղ երեկոյն: Ես յայս ինձ ջաց ու համբառնին զաւետարանն, և ու բոլոյսացուցանին է հաւատացքին և է կեցոյն է պես ժողովրդեանն, Աստուած և կեցո է ԸՆ, և առաւօտեան ժամերգութեան աւետարան ու ընթեանան Տօնարի՝ այլ չորեքտասաց, 169, որպես և է գծոս խոչի, և է ճաշս ու ասի Հանգիպեան շարական:

ԿԱՐԳ

ՄԵՆԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ՈՏՆԱԼՈՒԱՑԻՆ

ԸՍՏ ՈՐՈՒՄ ԱՍԱՑՆ ՅԻՍՈՒՍ

ԹԷ ՕՐԻՆԱԿ ՄԻ ԵՏՈՒ ԶԵԶ ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՍԲԲՈՑՆ

ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՑ ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՍՈՒՐԲ ԳԻՏԱՊԵՏՆ

ՀԱՅՈՑ ՄԵՆՆ ԳՐԻԳՈՐ ՎԻԱՑԱՍՒԷՐ

Յերեկոյէ ոտնալուացին ընդէ կոտրման առաքն պատահեցին, է պատնէշդրդ ժամուն ժողովին է գուխն եկեղեցոյն, պարտասո առնելով զպատ խորհրդական լուացմանն: Եւ դընդն զառաքն Ա-ե-պարանն է վերայ սեղանոյ առաքն եկեղեցոյն, և շինուածիր առաքն նշանն պատ է յետս տանուոյէ ոմանց. և մոնեղէն երկու է յետս ապաառաքոց: Եւ կացեն յոլնդ և յահնիկ առաջանէն, հանդերձ մոնեղինօք լուացելովք, և անուշահոտ խնկովք:

Եւ առիւածն տրոշէ.

Եւ ևս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա:

Եւ ապա եպիսկոպան և իմ ընէ այլ ոք է ընթացող երէցանցն ընդ, իմ վանուց երէց, կոտրէլ գրօնդն, որոմ հաստատեալ ընդառաջ օրն, ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ:

Եւ անառնէ հանդերձն բացնելոնէն ընդինէրդրդ առնման ողբոյին.

կՁ. Յօղեա յիս միտաւ և սուրբ հոգի, լուա և քան զձիւն սպիտակ եղէց:

փԽ. Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի: 415:

Աստ ՇԱՐԱԿԱՆ Ակ

Աւսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան: 393:

Աստ ՚առիւածն տրոշէ.

Եւ ևս գոհութիւն և երկրպագութիւն մատուցցուք Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է ճա-

ռագայթ փառաց, և ծագումն էութեան անեղգընակա-
նին Հօր. որ նոյն ինքն այսօր անբաժանելի գոլով յէա-
կան լուսոյն, խոնարհեցոյց զինքն յաղքատ բնութիւնս
մեր, առեալ զկերպարանս ծառայի. կատարեաց զանօ-
րինական փրկագործութիւնն, լուաց զոտս աշակերտացն
յօրինակ մեզ: Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի
այժմ խոնարհեացի՝ մարդասիրութեամբն իւրով ի ժողո-
վարանս մեր, և լուացմամբ երևելի Ջրոյս այսմիկ շնոր-
հօք սրբեսցէ զանեղևոյթ հոգիս մեր ի մեղաց մերոց:
Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Ե՛ ժողովուրդն ասէ ի ՚ի՛ երէ՛ Տէր ողորմեա:

Ե՛ ապա եպիսկոպոսն կամ աստիճանին ասէ ղողջո՛ղ ղոյս.

Փառաւորեմք զքեզ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս՝ միածին Որդի և բան Հօր, Տէր և արարիչ հրեշտակաց և մարդկան, Աստուած հուր կիզելոյ. որ և հրեղէն զօ-
րութիւնքն զարհուրեալ սարսափին նայել ի պատիւ փա-
ռաց աստուածութեանդ քո. ուստի և սերովբէքն թևա-
պօղեալ ծածկեն զդէմս իւրեանց՝ անդադար փառաբա-
նութիւն մատուցանելով առաջի աթոռոյ սէրութեանդ
քո: Դու Տէր և այժմ ի լրման ժամանակի փրկութեանս
մերում հաճեցար լինել մարդ ի սուրբ և յանարատ կու-
սէն Մարիամայ. և ընդ ամենայն անցանելով՝ բաց ի մե-
ղաց, բարձեր զպարտիս Ադամայ յաստուածազործ մար-
մինդ քո, զոր ի մերմէ բնութենէս ընկալար, և զամե-
նայն կատարեցեր ըստ օրինացն, փրկելով զմեզ յանիծից
օրինացն: Եկիր ի վերնատունն՝ կատարելով և զայն ևս
մոխսատիպիր առաւել օրէնսդրութիւն: Եւ որ սպասա-
ւորեալ պաշտիս յանհնութեական հրեղինացն, ըստ որում
կրկնի քեզ ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց
և անդաբամեռականաց, այսօր անօրինական մարդասի-
րութեամբ խոնարհեցար ի ծունկս քոյոց սրբոց առաքե-
լոցն. լուացեր զոտս հողեղէնս, զբարւոք և զդեղեցիկ
կարգս աւանդելով մեզ:

Եւ արդ Տէր բարերար և բազումողորմ, որպէս և յայնժամ ազդ արարեալ՝ դասախարակեցեր զմեզ՝ կեր-
պարանակից լինել փրկագործ խոնարհութեան քո, շնոր-
հեա և այժմ մեզաւոր ծառայիցս քոց, որք յերեսս ան-
կեալ աղաչեմք զգթութ մարդասէր շնորհաց քոց, զքա-

ւութիւն մեղաց. որպէս զի փոքր ևս լրովս այսուիկ՝ յօրս լուանամք զոտս միմեանց և տկար անձամբք մերովք՝ զկենդանարար աւանդութիւնս կատարեմք, հեղցես ի մեզ զամէնասուտ և զամենազօր շնորհս քո, և մաքրեսցես զմեզ յամենայն աղտեղութենանց և ի շաղախմանց մեղաց մերոց: Հեռացո ի մէնջ զամենայն հպարտութիւն և զամբարտաւանութիւն, զոր էած բանսարկուն ի վերայ տկար բնութեանս մերում պատրանօք իւրովք: Այժմ նաւարեա զմեզ՝ մտաց աչօք լուսաւոր ճառագայթիւք նայել ի կենսարեր իմացմն շնորհսդ քոց: Ջգեցո մեզ Տէր զճշմարիտ խոնարհութիւն և զհեզութիւն և զքաղցրութիւն և զսէր քո՝ որ է լրումն օրինաց քոց, զոր կատարեցեր՝ և ուսուցեր մաքրափայլ աշակերտաց քոց. որպէս զի և մեք կատարելով զյիշատակ փրկաւէտ չարչարանաց քոց, ընդ դասս արդոց առաքելոցն արժանի լիցուք ասելոյ զլուսափայլ յարութիւն քո, և ընդ նոսին խոստովանելով զքեզ Փրկիտոս Աստուած մեր, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժմ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դարձեալ երկիր պագանեմք, և փառաւորեմք զքեզ Փրկիտոս Աստուած մեր, որ եսք էակից Հօր՝ և համազոյակից սուրբ Հոգւոյն, որ միշտ փառաւորեալ օրհնեիս անպատում սրբոյս ձայնիւ ի հոգեղէն և ի հրեղէն զուարթնոցն. անպատմելի և հրաշազարդ գեղապարուրեամբ հաճեցար և ի հողեղինացս ընդունել զօրհնաբանութիւն, որք ի քոյոց սրբոց առաքելոցն ընկալեալք զաւանդութիւն, և բան կարի մերում զվերնոցն բերելով գնահատութիւն, պար առեալ կամք առաջի քոյոյ տէրութեանդ՝ հանդերձ զգալի անուշահոտութեամբ: Ընկալ Տէր և զխունկս զայս ի մէնջ ի մեղաւորացս, զոր մատուցանեմք քեզ ի ժամուս յայսմիկ, որ է յիշատակ խոնարհութեան քո՝ զոր վասն մեր կատարեցեր. և լցո զմեզ յանուշահոտութենանց մարմնաւոր աստուածութեան քո՝ զոր վասն մեր զգեցար. և ի ձեռն լուացմանս այսորիկ նիւթականի լուա և մաքրեա զանխիթ ոդիս մեր ի թունից մահաբեր վիշապին. և արժանաւորեա զմեզ՝ մաքուր տաճար և օթևան լինել սրբոյ Երրորդութենանդ, այժմ և միշտ և յանապատ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ յետ այսորիկ կարդայ քահանայն աւետարան՝ արևմուտք ի կողմն խորանին: Եւ այս կանոն կարդայ:

Ա-ԷՆ Յ-Յ-Է- ՍԱՂՄՈՍ ԻԸ

ԿՁ. Զայն Տեառն ի վերայ Ջուրց՝ և Աստուած փառաց որոտաց. և Տէր ինքն ի վերայ Ջուրց բազմաց:
Փս. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ: 399:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ ՑՆԼԻՑ: Լ. 17:

Խօսեցաւ Տէր ընդ Մովսեսի և ասէ. արա աւազան պղնձի, և զխարիսխ նորա պղնձի, առ ի լուանալոյ ի նմա. և դիցես զնա ընդ խորանն վկայութեան և ընդ սեղանն. և արկցես ի նա ջուր: Եւ լուասցեն Ահարոն և որդիք նորա ի նմանէ զձեռս և զոտս իւրեանց: Յորժամ մտանիցեն ի խորանն վկայութեան՝ լուասցեն ջրով և մի՛ մեռանիցին. կամ յորժամ մերձենայցեն ի սեղանն պաշտել, և հանել զողջակէզսն Տեառն, լուասցեն զձեռս և զոտս իւրեանց, զի մի՛ մեռանիցին: Եւ եղիցի նոցա օրէնն յաւիտենական, նմա և ազգաց նորա յետ նորա, 21:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ ՑԵՐԲՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ: Լ. 38:

Եւ արար փիլատոս տապանակ պղնձիա. և ուղեղ պատնարդ մի քառասուն սափոր. ի չորից կանգնոց պատնարդ մի չափով, և պատնարդ մի ի վերայ միոյ մեքենովքայ՝ տապանեցունց մեքենովքացն: Եւ եդ զմեքենովքան հինգ յատոյ տանն յաջմէ, և զհինգն յատոյ տանն ի ձախմէ. և ծոմն յատոյ տանն ընդ աջմէ՝ ընդ արևելս ի հարաւոյ կողմանէ: Եւ արար փիլատոս զտանան և զվերուցիչան և զտապտանն. և կատարեաց փիլատոս առնել զամենայն գործն զոր արար արքայի Սողոմոնի ի տան Տեառն: 40:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ ՑԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ: Դ. 2:

Եւ արար Սողոմոն զծոմն Հալածոյ ի տան կանգնոյ ձյափն, բոլորակ չուրջանակի, և ի հինգ կանգնոյ զբարձրութիւն, և չուրջանակի յերեսաւն կանգնոյ: Եւ նմանութիւն եզանց ի ներքոյ նորա, որք չուրջ կային, ի տան կանգնոյ չուրջ պատեալք զնովաւ. և ձուլեցին զզուարական ըստ ձուլածոյն իւրեանց, որպէս արարին զնաստա երկոտասան զուարակս. երեքն հայէին ի հիւսիսոյ, և երեքն հայէին յարևմուտս, և երեքն հայէին ի հարաւ,

և երեքն հայելին յարևելս. և ծովն ի վերայ նոցա, և յետոյքն իւրեանց ի ներքոյ: Եւ թանձրութիւն ծովուն թզաւ և շուրթն նորա իբրև գշուրթն բաժակի, քանզաւկեալ բոյս շուշանի, և տանէր երիս հազարս չափ. և կատարեաց գնա: Եւ արար աւազանս տասն, և եդ զհինգն ընդ յաջմէ, և զհինգն ի ձախմէ լուանալ ի նոսա զգործ ողջակիզացն և ողողել ի նոսա. և ծովն՝ առ ի լուանալ ի նմա քահանայիցն զինքեանս: 6:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ ՑԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ: ԽԴ. 2:

Մի՛ երկնչիր ծառայ իմ Յակովբ և սիրեցեալդ իմ Իսրայէլ, զոր ընտրեցի. զի ես տայց ջուր ի ծարաւ՝ ոտոց գնան յանկղդուխ. եդից զոգի իմ ի վերայ զաւակի քո՝ և զօրհնութիւնս իմ ի վերայ սերունդ քոց: Եւ զուարճասցին իբրև զխոտ ջրաբղի, և որպէս զուռ ի մէջ ջրոց գնացից: Մին ասասցէ՝ Աստուծոյ եմ ես, և միւսն խրախոյս բարձցէ յանուն Աստուծոյ Յակովբայ, և միւսն գիր հանցէ ձեռամբ իւրով թէ Աստուծոյ եմ ես, և յանուն Իսրայելի խրախոյս բարձցէ: Այսպէս ասէ Աստուած թագաւորն Իսրայելի, և որ փրկեացն զնա Աստուած զօրութեանց: 6:

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ Ի ԿԱՑՈՒՂԻԿՆԱՑՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՑՆ Ի ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ: Գ. 17:

Չի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել՝ քան չարագործաց. զի և Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ մեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց. զի զմեզ մերձեցուսցէ առ Աստուած. զի թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով: Որով և ոգւոցն որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր. յորս նուազուկքն, այս ինքն ոգիք իբրև ութ սպրեցան ի ջրոյն: Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենուլ, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի. որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց: 22:

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՑՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ: Ժ. 1:

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքին ընդ ծովն անցին, և ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն և ի ծովն, և ամենեքին զնոյն զհոգևոր կերակուրն կերան, և ամենեքին զնոյն զհոգևոր ըմպելին արբին. զի ըմպէին ի հոգևոր վիմէն որ երթայր զհետ նոցա, և վէմն էր ինքն Քրիստոս: 4:

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ Ի ԿԱԹՈՒՂԻԿՆԱՑՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՑՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ: Գ. 7:

Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ, և ճանաչէ զԱստուած. և որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է: Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք: Ցայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ. և առաքեաց զՈրդին իւր ի քաւութիւն մեղացն մերոց: Սիրելիք, եթէ Աստուած այսպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել: ԶԱստուած ուրուք երբեք չէք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ, և սէր նորա ի մեզ կատարեալ է. այսուհետև գիտեմք եթէ մեք ի նա բնակեալ եմք և նա ի մեզ, զի ի Հոգւոյն իւրմէետ մեզ: Եւ մեք տեսաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի: Որ որ խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է որդի Աստուծոյ, Աստուած ի նմա բնակէ՝ և նա յԱստուած. և մեք հաւատացաք, և ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ: Աստուած սէր է, և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ի նմա բնակէ: Ցայսմիկ է կատարեալ սէրն նորա ընդ մեզ, զի համարձակութիւն ունիմք յաւուրն դատաստանի. զի որպէս և նայն է, նոյնպէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ: Երկիւղ ոչ գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանաց է. իսկ որ երկնչին, չէ կատարեալ ի սէրն: Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ: Եթէ որ ասիցէ՝ եթէ սիրեմ զԱ-

առած, և զեղբայր իւր առիցէ, ասա է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն նոտա՝ զիա՞րդ կարիցէ սիրել. և զայս պատուէր ունիմք առ ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր: 21:

Խբաբ ասացեալ ՚ճան պէրց:

Աստուած սէր է, ասէ որդին Որոտման՝ սիրելի աշակերտն Քրիստոսի Յովհաննէս. և որ կայ ի սէրն՝ յԱստուած բնակի, և Աստուած ի նմա: Եւ արդ եղբարք, լուսաբուք և ի միտս առէք զճառ սիրոյ: Զի ամենայն որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր: Զի սէրն Աստուծոյ՝ սիրով եղբօրն երևի: Զի թէ զեղբայրն՝ զոր տեսանէ՝ ոչ սիրէ, զԱստուած՝ զոր ոչն տեսանէ, զիա՞րդ կարիցէ սիրել: Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զԱստուած՝ յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ և ոչ ըստ մարմնոյ. զի այլ է սէր հոգւոյն, և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասացաւք յիւրում տեղւոջն: Բայց արդ՝ ամենայն որ սիրէ՝ ճանաչի յԱստուծոյ. և ինքն ճանաչէ զԱստուած. և ամենայն որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար՝ օտար է յԱստուծոյ, և զչնորհս աստուածայինն ոչ կարէ ընդունել: Ամենայն որ սիրէ զեղբայր իւր ի սուրբ սրտէ՝ բնակարան լինի Աստուծոյ, և Աստուած ի նա բնակէ: Զի ինքն Տէրն սիրեաց զմեզ, և առաքեաց զՀոգին ճշմարտութեան՝ բնակել ի մեզ: Զի իմանալի հոգիս մեր՝ ընդ անխմանալի Հոգւոյն Աստուծոյ սիրով կապակցի: Եւ որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս և ի մենջ կամի զսէր առ միմեանս: Տես թէ որչափ համարձակութիւն ունի սէրն առ Աստուած. որպէս թէ նման Աստուծոյ առնէ զմարդն. զի Աստուած սիրովն իւրով նման մարդկան եղև: Եւ հպցոյ՝ թէ մարդիկ իւրեանց սիրովն նման Աստուծոյ լինելոց են: Զի Աստուած այնչափ սիրեաց զաշխարհս՝ մինչև զՈրդին իւր միածին առաքեաց ի փրկութիւն աշխարհի: Եւ թէ մեք սիրեացուք զմիմեանս, որպէս և Աստուած սիրեաց զմեզ, ոչ ինչ է չար՝ որ խափանէ զսէրն մեր. ամենայն որ սիրէ՝ յայտնի է առաջի մարդկան, և համարձակ առաջի Աստուծոյ: Զի զերկիւղ ի մեզաց մահու ոչ ունի. այլ սիրովն Աստուծոյ զինեալ կայ, և անահ յամենայն երկիւղական վտանգից:

Որ սէր է՝ անգ երկիւղ ոչ է, որպէս Յովհաննէս ասէ. երկիւղ ոչ գոյ ի սէրն, այլ սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղ. զի երկիւղ ընդ տանջանաց է. և սէր ի հաստատութիւն. և զի երկիւղ հալածի ի սիրոյ. և որ սէր ոչ է, անգ է երկիւղ դատաստանին, և ահ կորըստեան աւուր մեծի ահեղ առնին: Իսկ սէրն աներկիւղ առնէ զմարդն յամենայն տանջանաց. սէր գայն ասեմ, որ ամենևին հեռի է յերկբայութենէ. զի երկբայութիւն և սէր ի միասին ոչ բնակին: Եւ գիտելի է, զի սէրն ոչ միայն ի կեանս յաւիտենականս պատրաստէ զպատուղ խաղաղութեան իւրոյ, այլ և յաշխարհիս յայսմիկ զամենայն թըշնամութիւն ի բաց հալածէ. զնախանձ և զամբոխութիւն, զոխակալութիւն և զչարակենութիւն, զչարախօսութիւն և զհայհոյութիւն, զարտասուկ և զբամբասանս, զհպարտութիւն և զամբարհաւաճութիւն: Եւ մանաւանդ՝ զմայրն ամենայն չարեաց զարծաթասիրութիւն, և զագահութիւն: Արդ՝ որ սէր ունի, յայս ամենայն չարեաց ի բաց հեռանայ, և յերկնային անթոյթ խաղաղական հանդիսան ժամանէ յամենևին բարին: Ջինչ խաղաղական քան զսէրն. ազատ լինել յամենայն խռովութենէ, և զատուածային հաճոյն կատարել: Սէրն բանալի է արքայութեան երկնից, և ճանապարհ կենացն յաւիտենից: Սէրն զմարդիկ որդիս Աստուծոյ առնէ, և երկնից արքայութեանն ժառանգորդ: Սէրն զապականացու բնութիւնս անապական գործէ, և զմահկանացուս յանմահութիւն վերափոխէ: Սէրն զերկրայինն երկնայինս առնէ. և զհողեղէնն հրեղէն կազմէ: Եւ արդ՝ ով կարէ պատմել զանչափ մեծութիւն սիրոյն. զի անճառ և անպատում է. քան որում և անհեղ բնութիւն աստուածութեան անքննելի է, այսպէս և բնութիւն սիրոյն: Եւ որպէս Աստուած անբաւ է, բայց յամենեսեան մերձ է և բնակեալ է ի հիզս և ի խոնարհս, և յայնոսիկ որք զոգան ի բանից նորա, այսպէս և սէրն յամենեսին մերձ է՝ որ կամին գնալ, և ինքն նկատ բնակեցեալ ի խնդրողս իւր. քանզի սէրն սիրէ զսիրելիս իւր, և առ ոչ՝ զառելիս իւր: Որք խնդրեն գնալ՝ մերձ է ի նոսա աստուածպէս. զի Աստուած սէր է, և կամեցող սիրոյ՝ ի սուրբ սրտէ, և յանկեզծաւոր հաւատոցն:

Ջ–ՅԻ– Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ ։

Կամ

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիմման նեղչաց իմոց ։ Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս ։

ՉԻՆԻ ՈՐՔԻ ։

Արբոյ Աբեսաղոմեայ որ ըստ Յովհաննու ։ ԺԳ. 1 ։

Տ�էՐՆ ՄԵՐ ՅԻսուս ՔՐիստոս

Յառաջագոյն քան զծնանն զաւակի գիտաց (Յիսուս) թէ հասեալ է ժամ նորա զի փոխեսցի յաշխարհէ սատի առ Հայր, սիրեաց զիւրան՝ որ յաշխարհի սատ են, խոպառ սիրեաց զնոսա ։ Եւ ի լինել ընթրեացն՝ սատանայի իակ արկեալ էր ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա՝ Յուդայ Սիմոնի Իսկարիովտացւոյ ։ Գիտաց Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, և թէ յԱստուծոյ ել՝ և առ Աստուած երթայ. յառնէ յընթրեացն անտի և դնէ զհանդերձեան, և առեալ զննջակ մի՝ սփածաւ. և ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր զննջակաւն զոր սփածեալ էր ։ Գայ առ Սիմոնի Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր, դո՞ւ զիմ զոտս լուանաս ։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասցիր ։ Ասէ ցնա Պետրոս. ոչ լուացես զոտս իմ յաւիտեան. պատասխանի ետ Յիսուս. եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս բնդ իս մաս ։ Ասէ ցնա Սիմոնի Պետրոս. Տէր, մի միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխ ։ Ասէ ցնա Յիսուս. լուացեալն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լուանասցէ. քանզի ամենեքին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան ։ Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա, վասն այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքեան սուրբ էք ։ 11 ։

ՉԻՆԻ ՀԱՆԴԵՍԻ ԿԱՄ ԱՐՁԱԹԱՓՈՒՂ ՀԱՐՈՒՑԱՆ ԵԼԱՆՈՒԿԱՆ ։

Ասաւած մե՛ծ եւ պանդխտացօղ զօրութի՛ւն. անեղանելի բնո՛ւթիւն. որ ծովամբեակ՝ մեր հայեցո՛ր առնել զարթօղած ամենայն յոչընչէ՝ ա՛ռ զնմանէ ։

Լո՛ւր Տէր եւ ձգո՛ղեա ։

Զգեցեր զվերնայարկս երկնից որպէս խարան ի վե՛-

բայ ջուրց. մանձեաճ համառատութեամբ ի բնակութիւն անպարագրելի ատտուածութեանդդ քո. եւ զամենայն՝ յն հրաշակերտս ի գովեստ անուանդդ քում սըրբոյ աղաչեմ՝ք։

Աբարեր քեզ սըրբասացս ըզսերովբէան եւ զքերովբէս՝ն. ըզհոգեղէնս և զհրեղէն անեւթեական բընութիւնս. ընդ նմա՝ն՝ և ի հոգեղինացս հաճեցար ընդունել փառաբանիչս և երկրբպագուս ամենազօր սէրութեանդդ քո՝ աղաչե՝մք։

Ե՛րբ մարդ ճըշմարի՛տ ա՛նհատելի ծագումն և ճառագայթ ա՛նհասանելի՝ ա՛նիմանալի էա՛ութեան Հօր. եւ եկի՛՞ր ի փըրկութի՛ւն մեզ մարդանա՛՞ր աղաչե՛մք։

Ե՛րբ լրումն ծրինաց և մարդամբիւ՝ն. և ե՛կեր կամաւ ի վերնատունըն խորհըրդո՝ն. լուացե՛՞ր զոտս աշակերտաց քոց անճառելի խոնարհութեամբդդ քո՛՞ աղաչե՛մք։

Ընկա՛՞ղ տէր և այժմ ըզլուացումնըս զոր ատանդեցեր մեզ ի մեզաց թո՛ղութի՛՞ւն. բարեխօսութեամբ սըրբուհւոյ մեր քո՛ և միշտ կուսին Մարիամու Ա՛ստուածածնի՛՞ն. ազաչանո՛՞ք երջանիկ և նախընթաց կապանաւորին քո և Մըկըրտչին Յովհաննո՛՞. ճըգնաւորաց՝ն հանդիսիւ հեղման արեան սըրբոյն Ստեփա՛նոսի նախատարակաւագին քո և առաջին վըկայի՛՞ն. մաղթանո՛՞ք ընտրելոց քոց առաքելոց և ամենայն մարքելոց անձանց մարտիրոսաց պըսակելոց ի քէ՛՞ն աղաչե՛մք։

Ցիշեա՛՞ տէր և ո՛՞ղորմեա՛՞,

Ե՛՞ւ ևս առաւե՛՞լ գյորդորումըն սիրոյ. և ըզգործըս բարեաց պարգեւել մեզ խընդրե՛՞մք։

Տո՛՞ւր մեզ տէ՛՞ր Ա՛՞ստըւա՛՞ծ մեր։

Ձա՛՞նձինըս մե՛՞ր և ըզմիմեանըս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն ա՛՞ռնացու՛՞ք։

Քեզ Տեա՛ռնդ յանձն եղիցե՛ք ։

Ո՛ղորմեա՛՛ մեզ Տէր Աստուա՛ծ մեր ըստ մեծի ողորմութեան քոմ. ասացուք ամենեքեան միաբանութեա՛մբ ։

Տէր ողորմեա՛՛, Տէ՛ր ո՛ղորմեա՛, լո՛ւր Տէ՛ր և ո՛ղորմեա՛ ։

Ե՛ր ասէն ղքահն ոռնալոցչին . Զահեղ զանգնին ։

Ե՛ր ղոռղ ոռնալոցչին ղասացեալն ի յԱ՛ստուածեղ վերջաւորեսն .

Աստուածն ամենի ։

Ե՛ր եպիսկոպոսն կամ քահանայն ասէ ղաղօթն ի ձեռայ Ղևտն .

Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած ոքանչելագործ , հզօր և փառաւորեալ . անհասանելի , անիմանալի , վեր բացեալ բարձրացեալ քան զամենայն փառս . որ նստիս ի քրովբէական կառս և մի ի սրբոյ երրորդութենէդ գաւանիս ի վերնական սրբասաց սերովբէից . վասն որոյ և զերկրպագութեան փառաբանութիւն ընդ Հօր և սուրբ Հոգւոյն՝ հրեղէն բերանօքն իւրեանց ասակալի ձայնիւ սարսափելով առաջի փառաց աթոռոյ աստուածութեանդ քո մատուցանէին քեզ , լի ասելով զամենայն երկիր փառաք քո ։ Դու Տէր յաղթեալ ի մարդասիրութենէդ քումմէ ոչ կարացեր անտես առնել զարարածս քո զ՚ի հողոյ ստեղծեալքս . այլ հաճեցար և ի մերմէ բնութենէս փառաւորիլ , խառնելով զհողեղէնն առաւել կացեալքս ընդ վերնական հոգեղէնն և հրեղէնն աննիւթական բնութիւնն ։ Եկիր յաշխարհս կամաւ Հօր և սուրբ Հոգւոյն . առեր զկերպարանս ծառայի ի սուրբ և յանշաղախ կուսէն Մարիամայ . և ճշմարիտ Բանդ Հօր մարմին եղեալ՝ անեղծ և անապական նոր և անճառելի խառնմամբ , և կատարելով զամենայն առաքելական օրէնսն , եղեր լրումն օրինաց և մարգարէից . ճշմարիտ օրէնսդիր Աստուած իմ Յիսուս Քրիստոս ։ Եւ ի լրման ամենայնի՝ եկիր ի վերնատունն խորհրդոյ , կատարեցեր և զայն ևս մեծախորհուրդ առաքելոցդ նորոյ փրկագործութեանս խորհուրդ , որ նախ ՅԵգիպտոս նկարեցաւ ։ Եւ դու ինքնին քահանայապետ սուրբ՝ կատարիչ խորհրդոյ , և գառն Աստուծոյ՝ որ մըշտընջենաւոր բառնաս զմեղս աշխարհի , միանգամ պատարագաւն հատեր զմարմինդ սիրով . բաշխելով քոյոց

ընտրեալ աշակերտացն. և հրամայեցեր նոցա զկամաւոր չարչարանս քո որ վասն մեր և զմահդ պատմել մինչև ի միւսանգամ քո յերկրորդ և ի փառաւոր գալուստն։ Բայց նախ քան զայսոսիկ անճառելի խոնարհութեամբ ի բաց եղեալ զհանդերձս, զգեցար զենջակ, որ զգեցեալ զլոյս որպէս զօթոց. և անօրինական ներմարդութեամբ խոնարհեցար ի ծունկս աշակերտացն՝ առ ի լուանալ զոտս հոգելինս. որում կրկնի ծունր երկնաւորացն և երկրաւորացն և անդաստամեռականացն. և զխորհուրդ սրբոյ աւազանին մանաւորապէս նկարելով զոտս միայն լուանալով ծանուցեր, իսկ զկատարեալ խոնարհութիւնդ յայտնապէս ուսուցեր և աւանդեցեր ասելով՝ թէ օրինակ մի ետու ձեզ՝ զի որպէս ես ձեզ արարի և դուք միմեանց առնիջիք։

Եւ արդ Տէր բարերար, մեք ծառայքս քո և խաչն արծաթի քո՝ ժողովեալք ի գաւիթ սրբոյ եկեղեցւոյ քո ըստ սահմանաժողովին օրէնսդրութեանդ, զոր աւանդեցեր մեզ ի ձեռն սուրբ առաքելոցն, ապաչեմք զքեզ առաքեա զէակիցդ քո և զփառակից Ծնողի քո՝ զՀոգիդ սուրբ յարքունական աթոռոյդ, որ եկեալ հանգչիցի ի ժողովարանս մեր. և սրբեսցէ զկնար զայս, որպէս զի եղիցի սա ի քաւութիւն մեզոյ մերոց, և չընթացս ամենայն բարեաց ճանապարհաց. վասն զի սովաւ զօրացուցեալ զգարշապարս մեր անխափան ընթացուք խաչագրեալ առեալք ի չարխոնական ճանապարհս պատուիրանաց քոց. և արժանի լիցուք հասանել ի միան ժառանգութեան սրբոցն ի լոյս. և գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դարձեալ երկիր պագանեմք, և ապաչեմք զամենագութ ողորմութիւնդ քո, քաւեա զպղտ և զանօրէնութիւն ոգւոց մերոց ի ձեռն չրոյս այսորիկ. որպէս և յաւուրն Նոյի զանօրէնութիւն ամենայն երկրի՝ չրովն հեղեղատ. և որպէս զրօթոտութիւն Ղեմեան ասուրց՝ ի ձեռն Յորդանանու, և որպէս զզանազան ապտան՝ ի ձեռն յուդման Ջուրցն Սելամայ, և որպէս զմեզս ամենայն աշխարհի ի ձեռն աւազանին վերստին ծննդեան։ Եւ որպէս յայնժամ հաստատեալ զհնչմարիտ մարդեղութիւնդ քո՝ անօրինաբար խոնարհեցար, և լուացեր զոտս երանելի առաքելոց քոց,

զօրացուցանելով զգարշապարս նոցա յընթացս աւետա-
րանի քո ընդ ամենայն տիեզերս, այլ և կոխել զզօրու-
թիւն թշնամւոյն անպարկիւղ համարձակութեամբ, այսպէս
ի մեզ հրաշագործեա մարդասէր Տէր՝ ի ձեռն անպարտ
զալստեան քո ի ժողովարանս մեր. որպէս զի և մեք զօ-
րացեալք ի չնորհաց քոց՝ անխափան ընթացուք ի շա-
փիղս պատուիրանաց քոց. որով և փրկութեան արժա-
նաւորեացուք հասանել ընդ ամենայն սուրբս քո. և զո-
հանալով փառաւորեացուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հո-
գին, այժմ և միշտ և :

Ե- յաւարտ ալօթիցս պետանուէրքին խուէ և աեխտրանոս գԼուսն
երիցս անգամ՝ ասելով .

Օրհնեսցի՛ եւ սրբեսցի՛ Լուսս այս նշանաւ սուրբ խաչին
և սուրբ աւետարանիս և աւուրցս չնորհի՛ւ. յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեան-
նս յաւիտենից :

Ե- ժողովուրդն ոխքան ասէն .

Ամի՛ն և ամէնայնի՛ւ. ամէնայնի՛ւ. ամէնայնի՛ւ :

Աղա գառաղ. Սուրբ խաչիս : Աղօթ. Պահպանեա :

Ե- ապա այնուհետեւ գբնեցուցանէն գնպիսկոպոսն կամ գսարգե-
ցեաց, և երիս ի բեմնէ երիցանցն և ի պատարագ ձեռոցն : Ե-
առնել գինեվիս, և նոսրանալ լուացքն կոթնս գոգս ամենեցուն ի
ձեռնադիցս գինեվիս ցխուռնս, և սրբեցին գինեվիսն զոր սխա-
ձեալն են :

Ե- այնգն պարտ առնել յայսկոյս և յայնկոյս անուշահոտ խնկով
և մոմեղինօք լուցելովք, երբեմն տաղս յայնիս շարականն 9Զ. վե-
բանգողն երկնից : 388 : 9-ումն շարականն ի լման ասէն : Ե-
գԱյսօր անճառն : 164 : Աւր և գնորոգողն : : 481 . և այլ
ասոսկ և կամն գնուրնդրեալ շարականն, գնալ վճարել ոսկ
լուացողն :

Ե- լուացեալն կոթն ըստ կոթնի երիցպետքին սուրբ խուէն . և
համբուրէն գառնեպարանն, և գալ եպիսկոպոսն կամ տեղապահն
լուացողն :

Ե- յորժամ ամենայնն կատարեսցի ասոսկ՝ երգն և լուացողն,
նորի եպիսկոպոսն գնբեմնէն յոտն, և ասէն. Որթի, և գնա-
ցուցէք առնեպարանն կոթնսն :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ ԺԴ. 12։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձան իւր և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. գիտէք զինչ արարի ձեզ։ Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր. և բարւոք առնէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք։ 15։

Աւտ սուխուտն խոլոխ.

Եւ ևս միաբան ամենեքեան զոհացարուք զանհատանելի և զանճառելի մարդասիրութիւնէն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ այսօր նորոգեաց ի մեզ զսահման պատուիրանի իւրոյ, տալով մեզ առհաւատչեայ պարգեւս թողութեան մեղաց՝ սրբոյ աւազանին մաքրութեանն։ Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի արժանաւորեսցէ զմեզ արիւնութեամբ և զգաստութեամբ՝ հաղորդ լինել չարչարանաց նորա, առ ի հանդիպումն լուսոյ փառաւոր յարութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ խոլովուրդն ասէ.

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Եւ եպիսկոպոսն կամ քահանայն ասէ ղաղղես.

Տէր Աստուած մեր, որ ըստ բազում պանչելագործ մարդասիրութեան քո ոչ անարժան համարեցար լուանալ զոտս աշակերտաց քոց. զի խոնարհութեամբ ուսուցեր բարձրանալ այնոցիկ՝ որք դան զհետ հրամանաց քոց Տէր. դու նոյն ինքն փրկիչ աշխարհի՝ և այժմ նորոգեա ի մեզ զսահման պատուիրանի քո, և երևելի ջրովս այսորիկ լուացմամբ շնորհեա մեզ զորբութիւն Հոգւոյդ սրբոյ. պարապեա զմեզ ի հոգի և ի մարմին՝ յամենայն աստանդական ներգործութենանց. զի դու ես թագաւոր մեր, և անուն քո կոչեցեալ է ի վերայ մեր։ Վասն որոյ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Համբուրեցէք զմիմեանս սուրբ համբոյրիւ և մարդասէր Տէր մեր Յի-

սուս Քրիստոս , որ կամաւորաբար յանձն առեր դնել զանձն քո ի վերայ բանաւոր հօտի քո. որ կամաւ Հօր և սուրբ Հոգւոյն եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարի քո. որ զմոլորեալքս գտեր , և զվիրաւորեալքս բժշկեցեր հոգւով և Յրով սուրբ աւազանին լուացմամբ. անապական մարմնով և արեան քո ճաշակմամբ : Վասն որոյ և այսօր անօրինական ներմարդութեամբ զերկուս փրկագործուԹիւնս մեր անճառելի խոնարհութեամբ սկիզբն արարեալ կատարեցեր ի սուրբ վերնատունն՝ լուանալով զոտս աշակերտաց քոց, բաշխելով ի նոսա զկենդանարար մարմինն քո և զարիւն. և զնոյն յիշատակ կամաւոր չարչարանաց քոց նոքօք առանդեցեր ամենայն հաւատացելոց քոց՝ կատարել մինչև յերկրորդ գալուստն քո : Եւ արդ Տէր բարերար՝ մեք մեղուցեալ ծառայքս քո ըստ կարի ակարութեան մերում՝ զօրինս քո յանդ հանեալ՝ ազաչեմք զչնորհս ողորմութեան քո: Հովուեա զբանաւոր հօտս քո յարօտս կենդանարար աւետարանական վարդապետութեան քո : Հանգո զմեզ ի Ջուրս աւազանի քո, առ ի յորդեգրութիւն երկնաւոր Հօր քո : Արբո զմեզ ի յուղիս փափկութեան անապական արեան քո՝ զոր վասն մեր հեղեր : Տուր մեզ զկենդանարար մարմինդ քո , որ է հաց կենաց իջեալ յերկնից . և աշխարհի կեանս պարգեւէ : Առաջնորդեա մեզ ի շաւիղս պատուիրանաց քոց՝ առաջնորդական Հոգւովդ քով սրբով : Տուր պահապան երկիւղածաց քոց զբանակս հրեշտակաց քոց, ամբացուցանելով չուրջանակի զհոգի և զմարմին մեր ի մեքենայից բանսարկուին : Տուր մեզ ի մաստութիւն ճառագայթեալ Հոգւով ելանել ընդ քեզ յաղօթս ի սուրբ լեառն ձիթենեաց, առ ի կցորդութիւն կամաւոր չարչարանաց քոց : Շնորհեա մեզ Տէր զղջումն արտասուաց ընդ երանելոյն Պետրոսի , առ ի լուացումն մեղաց մերոց: Արժանաւորեա զմեզ մաքուր Հոգւով հանդիպել քեզ ի փառաւոր և ի միւսանգամ գալստեանդ քո, և ընդ ամենայն սուրբս քո յարքայութիւն բերկրանաւք ուրախութեամբ օրհնել զոլիլ և փառաւորել զամենասուրբ գերրորդութիւնդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԶՆԴ պող . Հասեալ հրեղինացն : Փխ . Ընդ երեկոյս հասեալ ժամ : ԶՆԴ Քող. Խնդրեացուք : Կեցո. Յայնհ : Աջմխ . Թագաւոր խաղաղ : Հայր մեր : Եւ ողջոյն :

ԿԱՆՈՆ

ՎԱՍՆ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԹԱԶԻ

ՅՈՐԺԱՄ ԿԱՄԻՆ ԹԱԶՎԵՐԱՑ ԱՌՆԵԼ

Յաւուրն յայնմիկ ժամն պահն է սարկաւագապետին ասելոյ ակրեղբ ղաւրբ խաչն. որ առնէ մասն է խաչափայտին յինքեան, և ղբղխարբն առհասով և վարդիքբով, և ծածկին պատուական կտաւով: Եւ յինքնէրբղբ ժամս ժողովին է պատառն եկեղեցւոյն. և զքինոս եպիսկոպոսն հանդերձն փոհանայիւք և սարկաւագօք: Եւ երկոքեան բաւղվառով և լապտերօք և ջղոյօք՝ որ զխաչն պատրաստել են. և ինովք երկիր պագանեն երից և համբուրեն: Եւ երկու յաւագ փոհանայիցն առնուն զսաւրբ խաչն ակրեղբ բաղդատգոյն. և կղերիկոսքն շաւրջանակի սպասաւորեն: Եւ եպիսկոպոսն զինչ գայ, առնելով բաւղվառ է յինքեն. և պաշտէ

ՇԱՐԱԿԱՆ ԹԱԶԻ ԳԶ

Որ ծագեցեր մեզ լոյս մեծ գնչան յայրթաւթեան: 1029:

Եւ երկոքեան աւաջի խորանին և ասէ եպիսկոպոսն.

Տէր Աստուած մեր որ կարգեցեր յերկինս դասս և պինաւորաւթիւնս հրեշտակաց, ընկալ և զպինաւորաւթիւնս եկեղեցւոյ քումմ սրբոյ:

Եւ պաշտելով դառնայն է խորանն, և գնան զսաւրբ խաչն է վերայ սեղանոյն. և խոնկ ածիանին: Եւ սկսանի

ՍԱՂՄՈՍ Ղ.Ը

48. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Փս. Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստիս ի քերովբէս, սասանեցաւ երկիր:

Տէր ի Սիովն մեծ է, և բարձր է ի վերայ ամենայն ժողովրդոց:

Խոստովան եղիցուք անուան քումմ մեծի, զի ահաւոր և սուրբ է, և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ:

Դու պատրաստեցեր զուղղութիւն, զիրաւունս և զարդարաւթիւն Յակովբայ դու արարեր:

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Մովսէս և Ահարովն երիցունք նորա, Սամուէլ ընդ այնոսիկ որ կարդան զանուն նորա:

Կարդային առ Տէր և նա լսէր նոցա, և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա :

Պահէին վկայութիւն նորա, և հրամանս զոր ետ նոցա:

Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա . Աստուած դու քաւիչ լինէիր, վրէժխնդիր ի վերայ ամենայն գործոց նոցա:

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք ի լեառն սուրբ նորա, զի սուրբ է Տէր Աստուած մեր :

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՋԵԼՈՑՆ Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՑՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ : Ա 18:

Չի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն : 1011 :

Ջ–ԴԻ– Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա :

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և հառաւ ուրախութիւն սրտից մերոց :

ՈՐԹԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԺԲ. 28 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Հայր, փառաւորեա զանուն քո : Եկին բարբառ յերկինից. և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից : Եւ ժողովուրդն որ կայր և լսէր, ասէին՝ որոտումն լինել. կէսքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա : Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր : Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս. և ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան ձգեցից առ իս : Զայս ասէր, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց էր : 33 :

Ձեռ այսորիկ եպիսկոպոսն Խնկոլիէ. Ե ասես զնոսն է խորանին հանով, առնելով տոհոմայն ոխերգին է ներէոյ :

Եւ երկոսեան է կողն հարսոյ ասելով .

ՇԱՐԱԿԱՆ ԳԿ. Ամսոր երեւումն մեծի ճառս : 1034 :

ՈՐԹԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : Գ. 13 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Եւ ոչ ոք յերկինս ել, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս : Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ ընկալցի կեանսն յաւիտենական : Չի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ

հաւատայ ի նա մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։ Որ հաւատայ ի նա՝ ոչ դատապարտեսցի, և որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։ Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն՝ զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա. իսկ որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան։ 21։

Ե֊ սրբո֊ւթիւն ի֊րով բանիդ և ասէ.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն քրիստոնէից յերևելի և յաներևոյթ վտանգից փրկութեան, քաւութեան և թողութեան, և ամենեցուն հաստատելոյ ի հաւատս, ի յոյս, ի սէր և յամենայն գործս բարիս, և արժանաւոր լինելոյ արքայութեան երկնից և յաւիտենից կենաց զՏէր աղաչեսցուք։

Ե֊ տէր ո֊ղորմեա։

Ե֊ եպիսկոպոսն բանիւ ցուցանէ տեղեակ ընծայիցն՝ երիցս։ Սրբո֊ւթիւն նորին բանիւ Օրհնեա տէր։ Ե֊ եպիսկոպոսն պետանդրէ ընծային ասելով։ Օրհնեսցի և պահպանեսցի աշխարհս և թագաւորութիւնս, նշանաւ սուրբ խաչիս և սուրբ Աւետարանաւս փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, յանուն Հօր և Որդւոյ և։

Այս է հարս կոչի կարգի։ Ե֊ պնդ ղօ֊րբ խոչն է սկիզբն. և երգեան նոյն օրինակս յաբևելից կողմն, ասելով.

ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉի ԱՁ. Որ զանարատս բազուկս։ 1006։

Որթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ ԻԴ. 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից։ 326։

Զինի խօ֊րով սրբո֊ւթիւն։ Վասն հայրապետին մերոյ տեառն, այս անուն, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց և պաշտաւական քահանայից և սարկաւագաց, և ամենայն ուխտի մանկանց սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։

Ե֊ տէն ո֊ղորմեա։ Ե֊ սրբո֊ւթիւն ասէ Օրհնեա տէր

Ե՝ եպիսկոպոսն Բուլղարացոցեալ գլուխն՝ պետռնափրէ գլխոջն, ասելով : Օրհնեցի և պահպանեցի զաւառս և անդաստանս, նշանաւ սուրբ խաչիս և սուրբ Աւետարանաւս, առ ի պաղարիկել, և բառնալ զամենայն հարուածս և զամենայն բռնութիւնս չարեաց, յանուն Հօր և Որդւոյ և :

Ե՝ դնէ զսուրբ խաչն ի սկիհն և գնան ի նոյնջն հետևոյս, ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԳՁ. Փայտ կենաց որ փրկանակ : 1009 :

Որթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի : ԺԵ. 20 :

ՋՏէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ածին առ նա զի ի խաչ հանցեն զնա : Եւ ուր նէին պահակ զմիման կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր եկեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նորա : Եւ ածեն զնա ի Գողգոթա տեղի մի, որ Թարգմանի՝ տեղի կառափելոյ : Եւ տային նմա գինի զմռսեալ, և նա ոչ առ. և հանին զնա ի խաչ : Եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի վերայ՝ թէ ո զինչ առնուցու : Էր ժամ երրորդ, և հանին զնա ի խաչ : 25 :

Ջինի Ա-եոտրանին խոռնի սուլխոսքն :

Վասն բարեպաշտ Թագաւորին մերոյ, և զօրաց իւրոց, և վասն ամենայն Թագաւորաց քրիստոնէից կարգութեան և յաղթութեան ի վերայ թշնամեաց և զօրանալոյ յամենայն գործս բարեաց զՏէր աղաչեսցուք :

Ե՝ ասէն Ե. Տէր ողորմեա : Աւրխոսքն ասէ Օրհնեա տէր :

Ե՝ եպիսկոպոսն Բուլղարացոցեալն գլուխն, և պետռնափրէ գլխոջն ասելով : Օրհնեցի և պահպանեցի քաղաքս և բնակիսկ ժողովուրդս ի սմա նշանաւ սուրբ խաչիս և սուրբ Աւետարանաւս. փարատելով զամենայն հիւանդութիւնս և զամենայն խռովութիւնս ի մարդկանէ, յանուն Հօր և :

Ե՝ դնէ զսուրբ խաչն ի սկիհն և երիցն յարևմտից կողջն, ասելով

ՇԱՐԱԿԱՆ ԴԻ. Խաչի քո Քրիստոս երկրպագին : 1033 :

Որթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : ԺԴ. 1 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք : Ի տան Հօր իմոյ օթեվանք բազում են . ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի : Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում

զձեզ առ իս. զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք. և ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք: Ասէ ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՞վ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել: Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ: Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա: Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր ցոյց մեզ զՀայր՝ և չառ է մեզ: Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ տեսս զիս՝ տեսս զՀայրն. և դու զիա՞րդ ասես եթէ ցոյց մեզ զՀայր: Ո՞չ հաւատաս եթէ ես ի Հայր, և Հայր յիս է. բանն զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է նա գործէ զգործսն: Հաւատացէ՛ք ինձ՝ եթէ ես ի Հայր և Հայր յիս. ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ: Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան զնոսա գործեսցէ. զի ես առ Հայր երթամ: 12:

Զկնի աւետարանին տրոպէ սուլիտոքն: Վասն առ ի Քրիստոս հաւատացեալ ժողովրդականաց մերոց՝ արանց և կանանց՝ ծերոց և տղայոց, որք հաւատով ի սուրբ եկեղեցիս ժողովեալ են, զի պահպանեալ փրկեսցին սուրբ խաչիս յամենայն վտանգից, յերևելի և յաներևոյթ թշնամեաց, և վասն քաղաքիս մերոյ և գաւառի, և ամենայն քաղաքաց և գաւառաց. և որ հաւատով բնակեալ են ի նոսա, գՏէր աղաչեսցուք:

Ե՛ առն Ի. Տէր ողորմեա: Սուլիտոքն ասէ Օրհնեա մէր:

Ե՛ եպիսկոպոսն վերացուցանէ զխոյն, և պետռնոփրէն զկողմն առնէ. Օրհնեսցի և պահպանեսցի քահանայապետութիւնս, և քահանայքս, հանդերձ սարկաւագաւք, դպրօք, և ամենայն ուխտիս լրմամբ, նչանաւ սուրբ խաչիս, և սուրբ Աստուածածնիս, որոյ միջնորդեամբ պահեալ սուրբ եկեղեցւոյս, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ:

Ե՛ երգեն յոտեան տողքն եկեղեցւոյ և տողքն խորանին տեղով ՇԱՐԱԿԱՆ ԲԿ. Խաչի քո Քրիստոս երկիր: 497:

Ե՛ գնան ի վերայ խորանին գտողքն խոյն և գԱստուածածինն. և երկիր պատանին եպիսկոպոսն, և փոխանայգն, և ամենեքեան: Ե՛ ի խորանն Շարականին տրոպէ սուլիտոքն. Սուրբ խաչիս: եպիսկոպոսն ասէ գոլորն. Պահպանեա: Հայր մեր:

ՅԱՆԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԱԿԱՆԱՑ

Աւագ օրինութիւնք յարու-
թեան 3
Համբարձիք կիւրակէից
յարութեան և քաղ-
ւածք յութօրէս ջաւակի 28
Օրինութիւնք Մարտիրո-
սաց 50
Հարցք Մարտիրոսաց . 80
Մանկունք և համբարձիք
Մարտիրոսաց . . 105
Համբարձիք կիւրակամը-
տից 110
Օրինութիւնք պահոց . . 112
Մանկունք և համբարձիք
պահոց 126
Հարցք Հանգստեան . . 130
Մանկունք խաչի . . 156
Աչխօր սաշտո . . . 164
Աւետարանք խաչելութեան 169
Յարածիալ . . . 180

ՅԱՆԿ

ՏԻՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

Բուն բարեկենդան . . 185
Բ. կիւրակէ քառասնորդ . 202
Գ. կիւրակէ » » . 218
Դ. կիւրակէ » » . 234
Ե. կիւրակէ » » . 252
Զ. կիւրակէ » » . 273
Աւետումն Ս. Աստուածա-
ծնի 287
Յարութիւն Ղազարու . 299
Ծաղկազարդ . . . 309
Աւագ երկուշաբաթի . 337
» երեքշաբաթի . . 355
» չորեքշաբաթի . 375
» հինգշաբաթի . . 388
» Ուրբաթ . . . 436
» Շաբաթ . . . 503
Զատիկ 529
Նոր կիւրակէ . . . 565
Աչխարհամատրան կիւրա . 596
Տօն երեման Ս. խաչի . 654
Համբարձումն . . . 706
Բ. Ծաղկազարդ . . 729
Պենտեկոստէ . . . 763
Տօն ամենասուրբ երրոր-
դութեան . . . 819
Տօն Նկեղեցւոյ . . . 843
Տօն Տաղանդակի տեառն . 894
Պայծառակերպութիւն
Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. կամ վար-
դավառ 900
Տօն Շողակաթին . 945
Փոխումն Ս. Աստուածածնի 950
Ծնունդ Ս. Աստուածածնի. 990
Տօն Նաւակատեաց սրբոյ
խաչին . . . 1001
Խաչվերաց . . . 1006
Վարագայ խաչ. . . 1036
Գիւտ խաչ 1058
Ընծայումն Ս. Աստուա-
ծածնի 1076
Ամարաս Յուլիւս Ս. Աս-
տուածածնի . . . 1083
Ճրագալոյց Ծննդեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստո-
սի 1094
Ծնունդ Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի . . 1107
Տօն Տնօրէնութեան եւ Ա-
նուան Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի . . 1136
Ճրագալոյց Յայտնութեան
եւ Մկրտութեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի 1143
Յայտնութիւն եւ Մկրտու-
թիւն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի . . 1143
Տեառնընդառաջ . . 1207

ՅԱՆԿ

ՏՕՆԻՑ ՍՐԲՈՑ

Ա.

Աբգար 1093
Աբդիաս 1225
Աբդիու 932
Աբդլմսեհ 985
Աբէլ 931
Աբիթաս 1073
Աբիսողոմ 1195
Աբրահամ խոստովանող . 1093
Աբրահամ Նահապետ . 931
Ագապէ 933
Ադամ 931
Ադդէ 1093
Ադոկատս 1036
Ադրիանոս 987
Ա՛ծանուցիմ՛էս . 832 . 932
Ա՛ծանուս 1202
Այէքսիանոս . . . 1085
Ակակիոս 851
Ակիւլինէ 934
Ակիւղաս 1203
Ակիւսիմոս . . . 1064
Ահարոն 931
Ադեքսանդրոս . . . 1065
Ամբակում . . . 932
Ամովս 932
Ա՛յիւալաս . . . 1064
Անանիա 1054
Անաստասիոս . . . 1063
Անատոլա 987
Անգէոս 932
Անդրէաս առաքեալ . 1073
Անդրէաս զօրավար . 986
Անդրոնիկոս . . . 1056
Անթիմոս 1036
Անիկոտս 933
Աննա մայր Ս. Աստուածած 978
Աննա մայր Նիւրղի . 215
Անտոն անապատական . 1195
Անտոն ցգնաւոր . 1052
Անտոնինոս . . . 933
Աչխէն 878
Ապիտոն 1203
Առաքեալք հանօրէն . 1074
Աստուածատուր . . 1093
Աստվմանք . . . 1223
Արեւելեան վկայք . 1085
Արիստակէս . . . 879
Արսէն 1082
Արտեմիս 1057
Ա՛քսենտիոս . . . 1086

Բ

Բարեկաս զալիր . . 1063
Բարեկաս հայրապետ . 985
Բագարատ . . . 1080
Բագոս 853
Բառնաբաս . . . 1054
Բասիլիդէս . . . 1092
Բասիլիսկոս . . . 1057
Բատոս 1092
Բարսաղամ . . . 1064
Բարթուղիմէոս . . 1081
Բարսեղ 1138
Բենիամին . . . 1225

Գ.

Գաբրիէլ . . . 1065
Գայիանեանք . . . 832
Գեննաբիոս . . . 1082
Գէորգ 1036
Գղեմիկոս . . . 1093
Գորգիոս 1203
Գուրիաս 1073
Գրաբոս 1085
Գրիգորի Լուսաւորչի Մուտն ի վիրապն . 266
Գրիգորի Լուսաւորչի Ելն ի վիրապէն . . 837
Գրիգորի Լուսաւորչի Գիւտ Նշխարաց . . 861
Գրիգոր ակրակաղացի . 1080
Գրիգոր աստուածաբան . 1202
Գրիգոր Նարեկացի . 988
Գրիգոր Նիւսացի . 1138
Գրիգոր սքանչելագործ . 1079
Գրիգորիս ազգականից կաթուղիկոս . 879, 1052
Գրիգորիս վկայ. . . 1203

Գ

Գամիանոս . . . 1093
Գաւիէլ մարգարէ . . 869
Գաւիէլ եպիսկոպոս . . 879
Գաւիէլ երէց ճգնաւոր . 1082
Գաւիթ զվնեցի . . . 1043
Գաւիթ մարգարէ . . 1117
Գաւիթ անյաղթ . . 988
Գեմետրիոս . . . 1057
Գիոմիդէս 986
Գիոնեսիոս . . . 1055
Գոմեա 1093

Ե

Եզեկիէլ 988
Եզր 988
Ելպիս 933
Եղիազար նախահայր . 933
Եղիազար քահանայ . . 931
Եղիշէ վարդապետ . . 988
Եղիսե մարգարէ . . 881
Եմովս 931
Եմովք 931
Եպիփան . . . 855
Եսայի 922
Երանոս եպիսկոպոս . 1036
Երանոս հետեւող առաքելոցն 1051
Երեմիա 985
Երիք աշակերտք Բարեխայ 985
Երիք մանկունքն ի Բաբելոն 869
Երկնային զօրք . . . 1065
Երկոտասան առաքեալք Քրիստոսի . . . 887
Երկոտասան փուքր մարգարէք 932
Երկոտասան վարդապետք 1054
Երկու քիւրք . . . 1093
Երկու որդիք Եւստաքէոսի 1043
Երմոգինէս . . . 1085
Երմոդայոս . . . 1051
Երմոնէ 1043
Եւագր 1082
Եւգինէ 1203
Եւգենիոս վկայ քնդ Եւստաթիոսի . . . 1086
Եւգենիոս վկայ քնդ Մակարիոսի . . . 1203
Եւդոքսիոս . . . 1056
Եւստաթէոս . . . 1043
Եւստաթէուսի . . . 1043
Եւպրաքսիա . . . 1051
Եւսեբիոս 1092
Եւստաքէոս . . . 1043
Եւստաւատիոս . . . 1086
Եւտիգիոս 1092
Եւփիմիա 931
Եփեսոսի Ս. Ժողովն . 934
Եփոբա քահանայ . . 1071
Եփրեմ 1138
Եօթանասուն եւ երկու աշակերտք Քրիստոսի . 1045
Եօթն եղբարք Մակաբայեցիք 933
Եօթն խոտաժարակք . 1052
Եօթն կուսանք . . . 861
Եօթն մանկունք Եփեսոսի 1064

Զ

Զաքարիա մարգարէ 876, 932
Զաքարիա քահանայ . 988
Զենոն 1056

Թ

Թադէոս . . . 924
Թաթուլ 1052
Թալիլէոս 861
Թեկղ 1051
Թէոդիտէ 1063
Թէոդիտոն . . . 861
Թէոդոս 1200
Թէոդորիտոն . . . 1056
Թէոդորոս զինուոր . . 198
Թէոդորոս ստրատելատ . 987
Թէոպիստէ . . . 1043
Թէոպոմպոս . . . 1092
Թէոփիլոս . . . 1092
Թէոփիլոս 933
Թիւրսոս 987
Թովմաս առաքեալ . . 987
Թովմաս ճգնաւոր . . 1052

Ի

Իգնատիոս . . . 1092
Իդդոս 1093
Իրաւափառ . . . 1082
Իւղարեր կանայք . . 978

Խ

Խաղ 863
Խարեբեանք . . . 1057
Խոսրովիդուխտ . . . 878
Խորէն 1093

Կ

Կալիմիկէ . . . 934
Կալիմիկոս . . . 986
Կալիստրատոս . . 1051
Կանդիտոս . . . 1203
Կիպրիանոս . . . 930
Կիրակոս. . . . 1200
Կիւրեղ հայրապետ Աղեք-
սանդրիոյ . . . 1202
Կիւրեղ հայրապետ Երու-
սաղէմի . . . 215
Կիւրեղ եպիսկոպոս եւ մայր
նորա Ցննա . . . 215
Կիւրեղ սարկաւագ . . 1225
Կղիմէս 1080
Կղոդիէ 1203
Կոզրատիոս . . . 853
Կոզմաս 1093
Կոստանդիանոս . 855, 1203
Կոստանդնուպոլսոյ Ս. Ժո-
ղովն 1237
Կուռնելիոս . . . 1085
Կրոնիդէս . . . 1052

Հ

Համազասպ . . . 1045
Հեղինէ 855
Հինգ վկայք . . . 932
Հիպերիքիանք . . . 1063
Հիւսիքոս 1073
Հռիփսիմեանք . . . 823
Հրեշտակք եւ Հրեշտակա-
պետք 1074

Ղ

Ղազար 1056
Ղեւոնդեանք . . . 1225
Ղուկաս 1056
Ղուկիանոս քահանայ 1051, 1056
Ղուկիանոս Նարիւրապետ 1056

Մ

Մակար Ցգնաւոր . . 1082
Մակար վկայ . . . 1056
Մակարիոս աղեքսանդրա-
ցի 1082
Մակարիոս վկայ . . 1203
Մաղաքիաս . . . 932
Մամաս 1035
Մամէ 853
Մանուկն խոստովանող . 1073
Մանկունք Բեթղեհեմի . 851
Մանկունք Եփեսոսի . 1200
Մատաթիա . . . 1054
Մատթէոս . . . 1056
Մարգարէք համօրէն . 1074
Մարդարիոս . . . 1086
Մարթա 1056
Մարիամ մագդաղենացի . 1056
Մարիամէ . . . 1035
Մարկիանոս . . . 1065
Մարկոս աւետարանիչ . 1056
Մարկոս եպիսկոպոս . 1225
Մարուգէ . . . 1087
Մարութա . . . 1203
Մարտիրոն . . . 1065
Մարտիրոս . . . 1218
Մելի 1071
Մելիտոս. . . . 1071
Մելքիսեդեկ . . . 931
Մեռկիւռիոս . . . 1082
Մեսրովպ . . 870, 988
Մեսրոպիանոս . . . 1065
Միմաս եգիպտացի . . 1071
Միմաս վկայ . . . 1085
Միւռոն 1079
Միքայէլ 1065
Միքիաս 932
Մովկիմոս . . . 853
Մովսէս նախամարգարէ . 931
Մովսէս քերթող . . 988

Յ

Յակոբ նահապետ . . 931
Յակոբ Մծբնայ հայրապետ 1087
Յակոբոս առաքեալ եղբայր
Յովհաննու . . . 1130
Յակոբոս առաքեալ եղբայր
Տեառն. . . . 1117
Յակոբոս առաքեալ որդի
Ալփեայ . . . 1079
Յակովիկ. . . . 1082
Յեսու 931
Յովակիմ. . . . 978
Յովբ 989
Յովէլ 932
Յովհաննու Կարապետին
ծննդեան եւ մկրտութեան եւ
ծնունդ նորա յԵղիսա-
բեթէ 1188
Ցօն գլխատման նորա . 556
Փոխադրութիւն Ցշխա-
րաց նորա ի Հայաստան 832

Գիւտ գլխոյ նորա յԵրուսաղէմ . . . 989
Յովհաննէս առաքեալ 1056, 1130
Յովհաննէս գրիչի . . 1082
Յովհաննէս հայրապետ . 231
Յովհաննէս կաթուղիկոս աղքատ 1085
Յովհաննէս կարճահասակ 1082
Յովհաննէս ոսկերբերան . 1072
Յովհաննէս աշակերտ . 1054
Յովնան 932
Յիշատակ քարոզութեան նորա առնիմուէացիս 1216
Յովսէփ Արտուածահայր . 1056
Յովսէփ արիմաթացի . 1056
Յովսէփ նահապետ . . 931
Յովսէփ քահանայ . . 1064
Յովսէփ վկայ . . . 932
Յուդա 1081
Յուլիանէ . . . 1079
Յուղիտա . . . 1200
Յուսիկ 879
Յուստիանէ . . . 930

Ն

Նաւում 932
Նեղոս 1082
Ներսէս մեծ հայրապետ . 863
Ներսէս կլայեցի . . 988
Ներսէս լամբրոնացի . 988
Նիքոտոսիճէ . . . 1043
Նիկիոյ Ս. ժողովն . . 989
Նիկողայոս . . . 1082
Նոյ 931
Նուէ 853

Շ

Շամուէլ 933
Շիղա . . . 1054
Շիմու 1071
Շմաւոն 1079
Շմաւոն ազգական Քրիստոսի 1085
Շուշան 129

Ո

Ոնեսիմոս . . . 1203
Ոնոփրիոս . . . 876
Ոսկեանք . . 1224
Ոսկէ 932
Ովրեստէս . . . 1086
Որմզդաս . . . 1225

Չ

Չորեքտասան զինաւորք . 1218

Պ

Պանդալէոն . . . 1051
Պեղագիա . . . 1056
Պետրոս հայրապետ . . 1195
Պետրոս առաքեալ . 887. 1129
Պիմէն 1082
Պիոն . . . 985, 1225
Պիտոխ 933
Պղատոն 1064
Պրոբոս 1056
Պօղ 1082
Պօղիկարպոս . . . 1085
Պօղիկտոս . . . 1203
Պօղոս առաքեալ . 887, 1129
Պօղոս խոստովանօղ . 1065
Պօղոս անապատական . 1082

Ռ

Ռոմանոս միայնակեաց . 1073
Ռոմանոս երգիչօղ . . 1036
Ռոմիոս 1056

Ս

Սահակ Նահապետ . . 931
Սահակ պարթեւ հայրապետ . . . 870, 1225
Սահակ իշխան . . . 1045
Սահակ վկայ . . . 932
Սամոնաս . . . 1073
Սամուէլ 931
Սայիմ 1225
Սանդուխտ . . . 924
Սարգիս վկայ . . . 853
Սարգիս զօրավար . . 1218
Սեդրեստրոս . 1138, 1203
Սերգիոս 1203
Սեւերիանոս . . . 1063
Սէթ 931
Սիմէոն սիւնակեաց . . 1035
Սիսիանոս . . . 1082
Սիւղիանոս . . . 1054
Սուրբք ամենայն . . 1076
Սուքիասանք . . . 1223
Սոփիա 933
Սոփոնիա . . . 932
Ստեփանոս նախավկայ . 1122
Ստեփանոս հայրապետ . 1064

Ստեփանոս ուխտեցի . . 985
Սրապիոն . . . 1082

Վ

Վահան 1201
Վաղերիոս . . . 1203
Վառվառէ . . . 1051
Վասիլոսի . . . 1079
Վարդանանք . . . 1234
Վարոս . . . 1052
Վարոս զօրավար . . 1063
Վյաս 1203
Վրթանէս . . . 879

Տ

Տասն աշակերտք Աթանա-
գինեայ . . . 932
Տարագոս . . . 1056
Տիմոթէոս . . . 1055
Տիտոս 1055
Տրգատ 878
Տրիփոն 1202

Փ

Փերրոնիա . . . 1035
Փիլիկտիմոն . . . 1035
Փիլիպպոս առաքեալ . 1073
Փիլիպպոս մին յիսնից
սարկաւագաց . . 1054
Փիլիպպոս եպիսկոպոս . 1203
Փոկաս 1051
Փոտինոս . . . 933

Ք

Քառասուն մանկունք Սե-
բաստիոյ . . . 246
Քառասուն եւ ձիով վկայք 931
Քառասուն եւ իմն վկայք . 1051
Քրիստափոր . . . 934
Քրիստիմէ . . . 931